ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

1(122)2026

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

1(122)2026



ISSN 1829-1155

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ, Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Հ. ՆԱԶԱՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ, Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝
ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

«Սահմանադրական դատարան. Տեղեկագիր» պարբերականում տպագրվող գիտական հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և չեն նույնանում Սահմանադրական դատարանի պաշտոնական դիրքորոշումների հետ: Սահմանադրական դատարանը պատասխանատվություն չի կրում հոդվածների հեղինակների արտահայտած կարծիքների համար:

Տեղեկագիրը հրատարակվում է միայն էլեկտրոնային տարբերակով: Պարբերականի բոլոր համարները հասանելի են ՍԴ պաշտոնական կայքում՝ հետևյալ հղումով՝ https://concourt.am/constitutional-court/bulletin-of-the-constitutional-court

© ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՎ ՓԱՍՏԱՑԻ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ՀԱՐՈՒՑԵԼԸ (ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ) – ***Ա. ՂԱՄԲԱՐՅԱՆ***.....11

- ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՀԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՑԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ – ***Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ***.....40

- ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԱՐԳԵԼՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ – ***Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ***.....54

- ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ – ***Ա. ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ, Հ. ԿՈՒՐԵՂՅԱՆ, Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ***.....84

- ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ՍԱՀՄԱՆԱԴԱՀԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԻՏԱՆԿՅՈՒՆԻՑ. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ***Ս. ՂԱԶԻՆՅԱՆ***.....109

- ЮРИДИЧЕСКИЕ ЛИЦА КАК СУБЪЕКТЫ УГОЛОВНОГО ПРОЦЕССА: АРГУМЕНТЫ В ПОЛЬЗУ СПЕЦИАЛИЗИРОВАННЫХ СУДОВ – ***О. БАЯНДУРЯН***
(ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ. ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ – ***Հ. ԲԱՅԱՆԴՈՒՐՅԱՆ***).....125

- ՆՈՏԱՐԻԱՏԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ – ***Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***.....143

- JURISDICTION OVER PUBLIC SERVICE LABOUR DISPUTES - ***M. AZDARIDIS*** (ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ – ***Մ. ԱԶԴԱՐԻԴԻՍ***) 154

- ЗАПРЕТ ПОВТОРНОГО АДМИНИСТРИРОВАНИЯ В КОНТЕКСТЕ ПРИНЦИПА NON BIS IN IDEM – ***Л. АЛЕКСАНЯН*** (ԿՐԿՆԱԿԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԸ NON BIS IN IDEM ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ - ***Լ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ***) 191

- ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ – ***Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ***.....207

- ՍԱՀՄԱՆԱԴՐԻ ԿԱՄՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ՝ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՅԱՑՐԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ – ***Ս. ԲԵՐԲԵՐԱՆ***.....236

- ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՊԱՐՏԱՊԱՆԻ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՎ ԱՎԱՐՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՎՃԻՌՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ – ***Ա. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ***.....265

- ՔՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱՁԱՅՆԱԳՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ – ***Ա. ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ, Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***.....283

- ՈՉ ԻՐԱՎԱՉԱՓ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՈՉ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ – ***Ա. ԵԳԱՆՅԱՆ***.....301

II. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1802 - 1818)

- ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՍԳՐՔԻ 361-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ԴՐԱՆ ՏՐՎԱԾ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1802, 11 նոյեմբերի 2025 թվականի).....319

- 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1803, 14 նոյեմբերի 2025 թվականի).....340

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....348

- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆ - ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔ ԾՐԱԳԻՐ» ԿՋԵՀ + ՀԱՏՈՒԿ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՊԱՏՈՒՀԱՆ 1» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1804, 17 նոյեմբերի 2025 թվականի).....355

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....375

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԵՎ ՀԶՈՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ» (THRIVE) ԾՐԱԳՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1805, 5 դեկտեմբերի 2025 թվականի).....382

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....393

- 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ԱԲՈՒ ԴԱԲԻՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1806, 10 դեկտեմբերի 2025 թվականի).....403

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....408

- 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ ՄԻՆՍԿՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՄՈՆՂՈԼԻԱՅԻ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1807, 23 դեկտեմբերի 2025 թվականի).....415

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....423

- «ԿՇԻՌՆԵՐԻ ԵՎ ՉԱՓԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ (ԿՉՄԲ/BIPM)» ԱՍՈՑԱՑՎԱԾ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ (ՕՉՄԿ/OIML)» ԹՂԹԱԿՑԱՅԻՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱՄԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1808, 23 դեկտեմբերի 2025 թվականի).....430

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....435

- 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-ԻՆ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1809, 23 դեկտեմբերի 2025 թվականի).....442

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....449

- 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՓՇՏԱԿՈՒՄԸ, ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՊՕՐԻՆԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ, ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ԻՐԵՆՑ ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐ ՌԵՍՏԻՏՈՒՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1810, 23 դեկտեմբերի 2025 թվականի).....455

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....461

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1811, 16 հունվարի 2026 թվականի).....468

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....476

- 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ ՄԻՆՍԿՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1812, 3 փետրվարի 2026 թվականի).....483

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....501

- 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԽՈՇՈՐ ԿԱՏՎԱԶԳԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇԻՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1813, 3 փետրվարի 2026 թվականի).....508

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....515

- 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ՄԱԳԼԻՆԳԵՆ/ՄԱՔՈԼԻՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԵՔԵՆԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1814, 3 փետրվարի 2026 թվականի).....523

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....534

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋՐԻ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ. 1-ԻՆ ՓՈՒԼ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1815, 3 փետրվարի 2026 թվականի).....540

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....549

- 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԵՎ ԼՈԳԻՍՏԻԿ ԿԵՆՏՐՈՆ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1816, 24 փետրվարի 2026 թվականի).....556

- ՄԱԿ-Ի «ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ԿԻՑ «ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՕԳՈՒՏՆԵՐԻ ԱՐԴԱՐ ՈՒ ՀԱՎԱՍԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՄՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՆԱԳՈՅԱՅԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1817, 24 փետրվարի 2026 թվականի).....566

- «ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՕՄԱՆԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ, ԿԱՏԱՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ, ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ ԵՎ ՈՒԶԲԵԿՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱՆՑԻԿ ՄԻՋԱՆՑՔ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ ԿԱԶՄՈՂ «ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՕՄԱՆԻ

ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ, ԿԱՏԱՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ, ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ ԵՎ ՈՒԶԲԵԿՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱՆՑԻԿ ՄԻՋԱՆՑՔ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ (ԱՇԳԱԲԱԹԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ) ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1818, 24 փետրվարի 2026 թվականի).....578

III. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

<u>ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ</u>

▪ ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2025 Թ. ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ.....584

<u>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ</u>

• ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ.....585

• ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ ՍՏՐԱՍԲՈՒՐԳՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՄԻԵԴ ԴԱՏԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԲԱՑՄԱՆԸ.....587

• ՍՏՐԱՍԲՈՒՐԳՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ՀՀ ՍԴ ԵՎ ՄԻԵԴ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ.....588

• ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԵԽ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏՆՕՐԵՆԻ ՀԵՏ.....589

• ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ.....590

DOI: 10.59560/18291155-2026.1-11

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ
Հայ-ռուսական համալսարանի
իրավունքի տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի վարիչ,
ՀՀ կառավարման ակադեմիայի
իրավունքի ամբիոնի պրոֆեսոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՎ ՓԱՍՏԱՑԻ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ՀԱՐՈՒՑԵԼԸ (ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Ամփոփագիր

Սույն հոդվածում համակողմանիորեն վերլուծվում է քրեական հետապնդման հարուցման ինստիտուտի էվոլյուցիան, դրա տեսական հիմքերը և գործնական իրացման հարցերը: Հեղինակը տարանջատում է քրեական հետապնդման հարուցման սահմանադրական և դատավարական ընկալումները, մանրամասնում ֆորմալ (պաշտոնական) և փաստացի (բովանդակային) հետապնդման հայեցակարգերը:

Հատուկ ուշադրություն է դարձվում ձերբակալումը որպես ակնառու փաստացի հետապնդման ակտ դիտարկելու հարցին և դրանից բխող խնդրին, երբ ձերբակալված անձի նկատմամբ պաշտոնական հետապնդում չհարուցելու պայմաններում նա անորոշ ժամկետով թողնվում է «կասկածի տակ»: Որպես այս խնդրի լուծում, հոդվածում հիմնավորվում է այն տեսակետը, որ քրեական հետապնդման ժամկետների հաշվարկը պետք է սկսվի փաստացի հետապնդման, մասնավորապես՝ ձերբակալման պահից, ինչը կապահովի անձի իրավունքների պաշտպանությունը և կկանխի քրեական հետապնդման ժամկետի վերաբերյալ օրենքի դրույթների շրջանցումը:

Հիմնաբառեր. քրեական հետապնդում հարուցել, պաշտոնական հետապնդում, փաստացի (բովանդակային) հետապնդում, դատախազ, ակնառու փաստացի քրեական հետապնդում, ոչ ակնառու փաստացի քրեական հետապնդում, ձերբակալում, կասկածի տակ թողնել, քրեական հետապնդման ժամկետ, ժամկետի հաշվարկի սկիզբ:

1. Ընդհանուր դրույթներ

ՀՀ իրավական համակարգում քրեական հետապնդման հարուցման ինստիտուտն անցել է զարգացման փուլեր՝ արտացոլելով ինչպես տեղական իրավական մտածողության փոփոխությունները, այնպես էլ միջազգային ստանդարտների ներգործությունը: Քրեական հետապնդման հարուցման պահի (սկզբի) և բովանդակության վերաբերյալ դոկտրինում առկա են բազմաբնույթ մոտեցումներ, որոնք ազդել են օրենսդրական լուծումների վրա:

Այս հոդվածում կքննարկվեն քրեական հետապնդման հարուցման էությունը, պատմական զարգացումը և ժամանակակից ընկալումը, ներառյալ դրա սահմանադրական և դատավարական իմաստների տարանջատումը, ինչպես նաև պաշտոնական և փաստացի քրեական հետապնդման հարուցման հայեցակարգերի տարանջատումը, դրա գործնական նշանակությունը, քրեական հետապնդման ժամկետը փաստացի քրեական հետապնդում հարուցելու պահից մեկնարկելու հարցը:

2. Քրեական հետապնդման հարուցման վերաբերյալ դոկտրինալ մոտեցումները

Քրեական հետապնդման էությունը բացահայտելու համար սկզբունքային նշանակություն ունի, թե քրեական հետապնդումն ինչ ակտով է սկսվում կամ որն է համարվում դրա հարուցման սկիզբը: Այս հարցերի վերաբերյալ առկա են տարբեր գիտական մոտեցումներ:

Առաջին՝ նախահեղափոխական ժամանակաշրջանի օրենսդրության իմաստով քրեական հետապնդման հարուցումը կազմված էր երկու դատավարական ակտերից՝ մեղադրանքը դատարան ներկայացնելը և մեղադրանքը դատարանի կողմից ընդունելը: Իրավասու մեղադրողի կողմից դատարան ներկայացված յուրաքանչյուր մեղադրանք, որը բավարարում էր անհրաժեշտ իրավաբանական պայմաններին, ընդունվում էր դատարանի կողմից, որի արդյունքում ձևավորվում էր անձին որպես մեղադրյալ ներգրավելու դատական որոշումը[1]:

Երկրորդ՝ քրեական հետապնդումը հարուցվում է անձին որպես մեղադրյալ ներգրավելու պահից: Այս մոտեցման կողմնակիցները կարծում են, որ քրեական հետապնդումն անհատապես-որոշակիացված գործունեություն է: Այս հայեցակարգի հիմնադիրներից է Մ.Ս. Ստրոգովիչը, ով առաջ քաշեց մի քանի սկզբունքային դրույթներ: Նա տարանջատում էր «քրեական գործ հարուցել» և «քրեական հետապնդում հարուցել» հասկացությունները: Քրեական հետապնդումը հարուցվում է կոնկրետ անձի նկատմամբ

[1] **Фойницкий И.Я.** Курс уголовного судопроизводства. В 2-х т. Т. 2 / Общ. ред., послесл., прим.: Смирнова А.В. - СПб: Альфа, 1996. - С. 10.

(*in personam*), իսկ քրեական գործը հարուցվում է փաստի, հանցագործության դեպքի կապակցությամբ (*in rem*):

Անձին որպես մեղադրյալ ներգրավելուն նախորդող գործունեությունը հեղինակը դիտում էր քրեական հետապնդման նախապատրաստություն, որի նպատակն է պարզել և հիմնավորել անհատապես որոշակիացված անձի առնչությունը կատարված հանցագործությանը: Քրեական հետապնդման նախապատրաստության ընթացքում քրեական հետապնդման և պաշտպանության գործառույթներ չեն կարող իրականացվել[1]:

Երրորդ՝ քրեական հետապնդումը հարուցվում է ոչ թե անձին որպես մեղադրյալ ներգրավելու պահից, այլ ավելի վաղ՝ անձին ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու պահից, երբ անձը ձեռք է բերում կասկածյալի կարգավիճակ[2]: Երկրորդ և երրորդ մոտեցումների միջև մեծ հաշվով տարբերություն չկա, քանի որ երկու դեպքում էլ քրեական հետապնդման հարուցումը դիտվում է անհատապես-որոշակիացված գործունեություն և կապվում է կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ ձեռք բերելու հետ:

Չորրորդ՝ քրեական հետապնդումը հարուցվում է քրեական գործ հարուցելու պահից: Այս մոտեցման կողմնակիցները քրեական հետապնդումը չեն դիտում որպես անհատապես-որոշակիացված գործունեություն: Այս հայեցակարգի հիմնադիրներից է խորհրդային դատավարագետ Մ.Ա. Չելցովը, ով քրեական հետապնդման հարուցումը նույնացնում էր քրեական գործ հարուցելու հետ: Նրա կարծիքով քրեական հետապնդում կարելի է իրականացնել ոչ միայն կոնկրետ մեղադրյալի, այլև քրեական գործ հարուցելու պահին անհայտ անձի նկատմամբ: Դատավարության սկզբնական պահը քրեական հետապնդում հարուցելու պահն է[3]:

Հինգերորդ՝ քրեական հետապնդումը համարվում է հարուցված այն պահից, երբ անձի նկատմամբ ձեռնարկվել են այնպիսի միջոցներ, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն և էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա: Այս մոտեցումը ձևավորվել է Եվրոպական դատարանի կողմից, այնուհետև արտացոլվել է ՀՀ բարձր դատարանների իրավական դիրքորոշումներում:

[1] **Строгович М.С.** Уголовное преследование в советском уголовном процессе. - М.: Изд-во Академии наук СССР, 1951. - С. 65-66.

[2] **Кан М.П.** Процессуальные функции прокурора в досудебных стадиях уголовного судопроизводства: дисс. … канд. юрид. наук. - Ташкент, 1988. - С. 96.

[3] **Чельцов М.А.** Уголовный процесс. - М.: Юрид. изд-во МЮ СССР, 1948. - С. 348.

3. Քրեական հետապնդում հարուցելու ինստիտուտի էվոլյուցիան ՀՀ-ում

ՀՀ դատաիրավական բարեփոխումների բոլոր փուլերում քրեական հետապնդում հարուցելու բովանդակությունը և դրա սկիզբը հանդիսացել են քննարկումների կենտրոնական հարցերից: Դրա կարևորությունը պայմանավորված էր հատկապես երկու գործոնով: Նախ՝ քրեական հետապնդում հարուցելու պահից պետք է ի հայտ գա մինչդատական վարույթի կենտրոնական սուբյեկտը (կասկածյալ, մեղադրյալը), որի հետ կապվելու են քրեադատավարական բոլոր հարաբերությունները: Երկրորդ՝ քրեական հետապնդում հարուցելը սահմանադրական ձևակերպում է: ՀՀ Սահմանադրության բոլոր խմբագրություններում նշված է, որ ՀՀ դատախազությունը հարուցում է քրեական հետապնդում: Բարեփոխումների ժամանակ խնդիր էր դրված բացահայտել, թե ՀՀ դատախազության այս լիազորությունն ինչ բովանդակություն ունի, ո՞ր ակտը կամ ակտերը պետք է համարվեն քրեական հետապնդման հարուցում:

Այս տարիների ընթացքում քրեական հետապնդման հարուցման բովանդակության վերաբերյալ ներկայացվել են տարաբնույթ առաջարկներ, օրենսդիրը տարբեր ժամանակներում ընդունել է տարբեր մոտեցումներ: Այսպես.

1) քրեական հետապնդում հարուցելը ներառում է քրեական գործ հարուցելը (1995 թ. բարեփոխումների աշխատանքային խմբի առանձին անդամների առաջարկություն),

2) քրեական հետապնդում հարուցել ասելով պետք է հասկանալ Եվրոպական կոնվենցիայի իմաստով՝ քրեական մեղադրանք հարուցելը (2006-2010 թթ. բարեփոխումների ընթացքում ՝ ՀՀ դատախազության առաջարկություն),

3) քրեական հետապնդում հարուցելը հսկող դատախազի միանվագ դատավարական ակտն է, որով նա հաստատում է մեղադրական եզրակացությունը և գործը հանձնում է դատարան (2006-2010 թթ. բարեփոխումների ընթացքում ՀՀ ոստիկանության առաջարկություն),

4) քրեական հետապնդում հարուցելն անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին քննիչի կայացրած որոշումը դատախազի կողմից հաստատելն է (1995 թ. բարեփոխումների ընթացքում դատավարագետ Մ. Խաչատրյանի, հետագայում նաև՝ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի առաջարկություն),

5) քրեական հետապնդում հարուցելը դատախազի կողմից անձին որպես մեղադրյալ ներգրավելն է (2010 թ. ընթացքում ՀՀ դատախազության առաջարկություն):

Դատաիրավական բարեփոխումների առաջին փուլում մասնագետների շրջանակում ակտիվ քննարկվում էր քրեական գործ հարուցելու և քրեական հետապնդում հարուցելու հարաբերակցության հարցը, որի շուրջ կոնսենսուսի բացակայության հետևանքով, 01.07.1998 թ. ընդունված և 01.05.2007 թ. ուժը կորցրած

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածում թեև քրեական հետապնդումը հարուցելու բովանդակություն չսահմանվեց, սակայն տրվեց այնպիսի ձևակերպում, որից պարզ էր դառնում, որ քրեական հետապնդում հարուցելը նույնանում է քրեական գործ հարուցելու հետ: Այսպես՝ նշված օրենքի 24-րդ հոդվածում սահմանված էր, որ ՀՀ դատախազը հարուցում է քրեական հետապնդում՝ ներառյալ քրեական գործ:

Նույն ժամանակահատվածում ընդունված ՀՀ ՔրԴՕ-ում բացահայտվեց քրեական հետապնդում հարուցելու բովանդակությունը, որը, ի տարբերություն 1998 թ. «Դատախազության մասին» ՀՀ օրենքի, չկապվեց քրեական գործ հարուցելու հետ: Այսպես՝ 1998 թ. ՀՀ ՔրԴՕ 6-րդ հոդվածում քրեական հետապնդում հարուցելը բնորոշվեց որպես մեղադրանքի կողմի որոշում՝ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, ինչպես նաև մինչև այդ նրան ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին: Ընդ որում, նույն հոդվածում տրված էր նաև «քրեական հետապնդում» հասկացությունը, որը բնորոշվում էր հետևյալ կերպ.

> *« (...) այն բոլոր դատավարական գործողությունները, որոնք իրականացնում են քրեական հետապնդման մարմինները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում փուժողը՝ նպատակ ունենալով բացահայտել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարած անձին, վերջինիս մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի նկատմամբ պատժի և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելը (տե՛ս 1998 թ. ՀՀ ՔրԴՕ 6-րդ հոդվածի 17-րդ կետ)»:*

2006 թ.-ից սկսված դատահրավական բարեփոխումների երկրորդ փուլում քրեական հետապնդում հարուցելու հարցը կրկին դարձավ օրակարգային: Այդ ժամանակ լայն կոնսենսուսով ընդունվեց ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պատրաստած «Քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգային հիմնադրույթներ» (այսուհետ՝ 2007 թ. Հիմնադրույթներ) վերտառությամբ փաստաթղթում առկա այն մոտեցումը, ըստ որի՝ քրեական հետապնդում հարուցելը՝ որպես դատախազի բացառիկ լիազորություն, պետք է համարել անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին քննիչի որոշումը դատախազի կողմից հաստատելու ակտը[1]: Ի դեպ, դատավարագետ Մ. Խաչատրյանը դեռ 1995 թ. բարեփոխումների ընթացքում առաջարկել էր, որ ՀՀ դատախազության քրեական

[1] ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային հիմնադրույթները: Պետություն և իրավունք, 2007, № 1 (35), էջ 4-21:

հետապնդման հարուցման սահմանադրական լիազորության ներքո պետք է հասկանալ, որ «առանց դատախազի համաձայնության չի կարելի անձին մեղադրանք առաջադրել: Անձը պետք է հայտնվի մեղադրյալի վիճակում միայն դատախազի համաձայնությամբ»[1]:

2007 թ. Հիմնադրույթների հեղինակները ներկայացնում էին ստորև նշված թեզերը:

1) Քրեական հետապնդման հարուցումը պետք է դիտարկվի որպես մինչդատական վարույթում բեկումնային դատավարական ակտ կամ որոշում, որն իր բնույթով դուրս կլինի դատախազության հսկողական լիազորությունների շրջանակից[2], թեև իրականում որպես մեղադրյալ ներգրավելու որոշումը դատախազի կողմից հաստատելը դասական իմաստով հսկողական լիազորություն է (այս մասին՝ հաջորդիվ):

2) Որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելու իրավասությունից քննիչին զրկելը և այն բացառապես դատախազին վերապահելով էապես կսահմանափակվի քննիչի ինքնուրույնությունը և նա կվերածվի զուտ մեխանիկական գործառույթներ կատարողի, իսկ դատախազը տեխնիկական առումով, որպես կանոն, այդ որոշումն ինքը չի շարադրի[3]: Նման վտանգը չեզոքացնելու նպատակով 2021 թ. ՀՀ ՔրԴՕ-ի (որտեղ հիմք ընդունվեց «անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը դատախազի կողմից կայացնելու» մոդելը) 189-րդ հոդվածի 7-րդ մասում ուղիղ սահմանվեց, որ դատախազն իրավունք չունի քննիչին հանձնարարելու ներկայացնել անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշակի բովանդակությամբ միջնորդություն կամ կազմել այդպիսի որոշման նախագիծ, իսկ քննիչներին իրավունք վերապահվեց քրեական հետապնդում հարուցելու միջնորդություն ներկայացնել դատախազին: Ներկայումս հսկող դատախազները քրեական հետապնդում հարուցելու որոշումները կայացնում են ինքնուրույն՝ ծանոթանալով նաև քրեական վարույթի նյութերին, ինչը բարձրացնում է նաև դատարանում մեղադրանքի պաշտպանության արդյունավետությունը:

ՀՀ կառավարության 10.03.2011 թ. նիստի № 9 արձանագրային որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգում (2011 թ. Հայեցակարգում) դրվեց դեռևս 2007 թ. Հիմնադրույթներում առկա մոտեցումը՝ քրեական հետապնդում հարուցելը համարվեց

[1] **Խաչատրյան Մ.,** Քրեական գործի հարուցումը և քրեական հետապնդումը քրեական դատավարությունում (Հայաստանի Հանրապետություն, 31.07.1997 թ.): Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգիրքը: Երևան, Զանգակ-97, 1999, էջ 22:

[2] **Ղազինյան Գ., Մելքոնյան Դ.,** Քրեական հետապնդման հարուցում (Պետություն և իրավունք, 2007, № 1 (35), էջ 23-31): ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու: Երևան, 2014, էջ 110:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 116:

հսկող դատախազի կողմից անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին քննիչի որոշման հաստատումը:

Մեր մոտեցմամբ քրեական հետապնդման հարուցման՝ «հսկող դատախազի կողմից անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին քննիչի որոշման հաստատման» մոդելն ընդունելի չէր: Հիմնական փաստարկն այն էր, որ դատախազը, քննիչի որոշումը հաստատելով, իրականացնում է ոչ թե քրեական հետապնդման հարուցման առանձին գործառույթ է, այլ՝ իր բնույթով դատախազական հսկողության գործառույթ: Քննիչի որոշումը դատախազի կողմից հաստատելը հսկողական միջոց է, որն ուղղված է կանխելու քննիչի ապօրինի կամ անհիմն որոշումների ուժի մեջ մտնելը: Հետևաբար, դատախազի կողմից քննիչի՝ որպես մեղադրյալ ներգրավելու որոշման հաստատումը ոչ թե քրեական հետապնդում հարուցելու ինքնուրույն սահմանադրական գործառույթ է, այլ հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության սահմանադրական գործառույթից բխող լիազորություն: Այլ կերպ ասած՝ «հսկող դատախազի կողմից անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին քննիչի որոշման հաստատման» մոդելի պարագայում դատախազության հստակ տարանջատված երկու սահմանադրական գործառույթները (քրեական հետապնդում հարուցելը և հսկողությունը) միախառնվում են, ավելի ճիշտ՝ քրեական հետապնդում հարուցելու գործառույթը կլանվում է հսկողության գործառույթում: Այս իրավիճակից խուսափելու համար առաջարկվեց քրեական հետապնդման հարուցել ասելով հասկանալ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին դատախազի որոշման կայացումը[1]:

ՀՀ դատախազության մի շարք աշխատակիցներ դեմ էին քրեական հետապնդման հարուցումը դատախազի կողմից անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման կայացման առաջարկին զուտ այն պատճառաբանությամբ, որ դրա արդյունքում էապես կաճի դատախազների աշխատանքային ծանրաբեռնվածությունը: Այս փաստարկը թեև կարևոր էր, սակայն դատախազության համակարգում լայն տարածում ստացած «մեղադրանքի տերը դատախազն է» բանաձևը պահանջում էր, որ դատախազներն իրենց ծանրաբեռնվածության մեջ մեղադրանքի ձևակերպմանը հատկացնեն պատվավոր տեղ: «Քրեական հետապնդման հարուցումը դատախազի կողմից անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման կայացումն է» մոդելը համարվեց ՀՀ դատախազության պաշտոնական դիրքորոշումը և հետագայում արտացոլվեց 2021 թ. ՀՀ ՔրԴՕ-ում:

[1] **Ղամբարյան Ա.,** Քրեական հետապնդման հարուցումը: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային առանձին դրույթների և քրեական դատավարության օրենսգրքի նախագծի ընդհանուր մասի տեսագործնական վերլուծություն: Երևան, ՎարդՀրատ, 2012, էջ 19-27:

4. Քրեական հետապնդման հարուցման սահմանադրական և դատավարական ընկալումները

4.1. Սահմանադրական ընկալումը

Դատախազի կողմից քրեական հետապնդում հարուցելու էությունը ճիշտ հասկանալու համար պետք է տարբերակել, թե այդ հասկացությունն իրավունքի որ ճյուղի համատեքստում է օգտագործվում՝ սահմանադրական, թե քրեադատավարական: Իրավունքի ճյուղերի ինքնավարության սկզբունքի տեսանկյունից բնական է, որ քրեական հետապնդման հարուցումը սահմանադրական և քրեադատավարական իրավունքի ճյուղերում կարող է ունենալ տարբեր ընկալումներ[1]:

Ինչպես նշվեց, ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով հարուցում է քրեական հետապնդում:

Սահմանադրաիրավական իմաստով քրեական հետապնդում հարուցելը ոչ թե դատավարական միանվագ որոշում է կամ դատավարական լիազորություն, այլ դատախազության սահմանադրական գործառույթն է: ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածով նախատեսված են առավելապես դատախազության գործունեության ուղղությունները (դատախազության գործառույթները), քանի որ գործունեության այդ ոլորտներում, օրինակ՝ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում, դատախազը ՀՀ ՔրԴՕ-ով օժտված է ընդարձակ լիազորություններով[2]:

Քրեական հետապնդում հարուցելու դատախազության սահմանադրական գործառույթն իրականացվում է հետևյալ դատավարական լիազորությունների միջոցով՝

1) քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում կայացնելը,

2) քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշում կայացնելը,

3) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը,

---

[1] **Гамбарян А.С., Даллакян Л.Г.** Трансгрессия законодательных терминов и дефиниций в контексте отраслевой автономии // Государство и право. 2018. № 12. – С. 93-103.

[2] Թեև ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 4-րդ մասում նշվել է, որ ՀՀ դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված *լիազորությունների* (ընդգծումը՝ իմն է) շրջանակում՝ օրենքի հիման վրա, սակայն ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածում թվարկված հնարավորությունները երբեմն որակվում են որպես դատախազության սահմանադրական գործառույթներ: Միևնույն ժամանակ, նկատի ունենալով «գործառույթ» և «լիազորություն» հասկացությունների օգտագործման ոլորտում առկա անորոշ կարգավորումները՝ սույն աշխատանքում դրանք կարող են օգտագործվել համարժեք իմաստներով: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 16.04.2025 թ. ՍԴՈ-1776 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկվածները մի դեպքում անվանվում են դատախազության լիազորություն, մեկ այլ դեպքում՝ դատախազության գործառույթ:

4) քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին որոշում կայացնելը,

5) քրեական հետապնդման ժամկետը վերսկսելու մասին որոշում կայացնելը,

6) քրեական հետապնդման ժամկետը երկարաձգելու որոշում կայացնելը,

7) քրեական հետապնդումը նորոգելը:

Դատավարական այս լիազորությունները կազմում են քրեական հետապնդում հարուցելու սահմանադրական գործառույթի բովանդակությունը:

Ինչպես նկատում ենք, քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում կայացնելու *քրեադատավարական լիազորությունը* քրեական հետապնդում հարուցելու *սահմանադրական գործառույթի* իրականացման միջոցներից մեկն է:

Պետք է անդրադառնալ նաև այն հարցին, թե սահմանադրական տեսանկյունից քրեական հետապնդման հարուցումն արդյո՞ք դատախազության բացառիկ լիազորությունն է: Բանն այն է, որ հայկական դոկտրինում և պատմական որոշ ժամանակաշրջաններում նաև՝ օրենսդրության մեջ քրեական հետապնդման հարուցումը որակվել է որպես դատախազության «բացառիկ լիազորություն»: Այսպես՝ դատաիրավական բարեփոխումների հանձնաժողովը 23.05.2006 թ. նիստում նշել է, որ քրեական հետապնդում հարուցելը դատախազի բացառիկ լիազորությունն է[1]: ՀՀ կառավարության 10.03.2011 թ. նիստի № 9 արձանագրային որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգի 3.3-րդ կետում ևս նշված է, որ քրեական հետապնդման հարուցումը դատախազի բացառիկ լիազորությունն է: Ընդ որում, գիտնականների, հատկապես դատավարագետների շրջանում տարածված է հետապնդում հարուցելու գործառույթի համար «բացառիկ» տերմինաբանական-նորմատիվ ածականի օգտագործումը ներկայացնել որպես ՀՀ Սահմանադրության պահանջ՝ ստեղծելով այնպիսի տպավորություն, կարծես թե ՀՀ Սահմանադրության մեջ էքսպլիցիտ (բացահայտ) սահմանված է, որ քրեական հետապնդում հարուցելը դատախազի բացառիկ լիազորությունն է: Օրինակ՝ առանձին աղբյուրներում հանդիպում են այսպիսի ձևակերպումներ՝ «(…) հիմք ընդունելով դատախազությանը Սահմանադրությամբ վերապահված քրեական հետապնդում հարուցելու բացառիկ գործառույթը (…)[2]» կամ «(…) ինչ վերաբերում է քրեական հետապնդում հարուցելուն, որը ՀՀ Սահմանադրության

[1] **Ղամբարյան Ա.,** Որոշ նկատառումներ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային հիմնադրույթների վերաբերյալ: Օրենք և իրականություն, 2007, № 11, էջ 3-5:

[2] ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց: Երևան, Եվրոպայի խորհուրդ, 2022, էջ 287:

176-րդ հոդվածի համաձայն ՀՀ դատախազության բացառիկ լիազորությունն է (...)[1]»: Իրականում ՀՀ Սահմանադրության տեքստում քրեական հետապնդում հարուցելը երբեք չի որակվել որպես դատախազի բացառիկ լիազորություն: Նման գնահատականը կարող է համարվել կոնկրետ գիտնականի մեկնաբանում, նույնիսկ՝ օրենսդրի մոտեցում, բայց ոչ՝ սահմանադրի էքսպլիցիտ դիրքորոշում: Այսպես՝ 22.02.2007 թ. ընդունված և 09.04.2018 թ. ուժը կորցրած «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված էր, որ քրեական հետապնդման հարուցումը դատախազի բացառիկ լիազորությունն է[2]: Մինչդեռ 2017 թ. «Դատախազության մասին» ՀՀ օրենքով քրեական հետապնդում հարուցելն այլևս չի բնորոշվում որպես դատախազի բացառիկ լիազորություն:

Եթե դատախազության գործառույթների բացառիկության հարցը դիտարկենք պետականագիտական տեսանկյունից, ապա պետական մարմինների լիազորությունների կրկնօրինակման անթույլատրելիության սկզբունքը պահանջում է ձեռնպահ մնալ պետական մարմիններին համընկնող լիազորություններ վերապահելուց: Այս իմաստով, պետական ապարատի ներսում, մասնավորապես՝ քրեական վարույթի հանրային մասնակիցների միջև հարաբերություններում, դատախազի գործառույթները[3] չպետք է միաժամանակ վերապահել պետական այլ մարմնի: Այս իմաստով դատախազի չհամընկնող բոլոր լիազորությունները բացառիկ են:

4.2. Դատավարական ընկալումը

4.2.1. Պաշտոնական քրեական հետապնդում հարուցելը

Ի տարբերություն քրեական հետապնդման հարուցման սահմանադրական ընկալման, քրեական դատավարությունում այն հասկացվում է նեղ դատավարական

[1] **Բաղդասարյան Գ.,** Քրեական հետապնդման «գործառույթը»: Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, 2025, Vol. 16, № 2 (43), էջ 93:

[2] Քրեական հետապնդում հարուցելը՝ որպես դատախազի բացառիկ լիազորություն համարելու պաշտոնական մոտեցումն աղաղակող հակասության մեջ էր մտնում 1998 թ. ՀՀ ՔրԴՕ-ում քրեական հետապնդում հարուցելու բնորոշման հետ, քանի որ հետապնդում հարուցվում էր ոչ միայն որպես մեղադրյալ ներգրավելու, այլ նաև՝ անձին ձերբակալելու և խափանման միջոց կիրառելու եղանակով, այսինքն՝ այնպիսի գործողություններով, որոնք կատարում էր ոչ թե հսկող դատախազը, այլ հետաքննության մարմնի աշխատակիցը և քննիչը: Թերևս այս հանգամանքով էր պայմանավորված, որ 22.02.2007 թ. «Դատախազության մասին» օրենքի անցումային դրույթներում սահմանվեց, որ 24-րդ հոդվածի 2-րդ մասը, որն սահմանում էր, որ քրեական հետապնդում հարուցելը դատախազի բացառիկ լիազորությունն է, ուժի մեջ պետք է մտներ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունումից հետո:

[3] ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկվածներից դատախազության սահմանադրական լիազորություն (ավելի հստակ՝ դատավարական իրավունք) կարելի է համարել միայն դատական ակտերի բողոքարկումը:

իմաստով, այսինքն՝ քրեական հետապնդման հարուցումը միանվագ որոշում կայացնելու կամ գործողություն կատարելու լիազորություն է:

Քրեական դատավարությունում տարբերակվում են ձևական (ֆորմալ, պաշտոնական) և բովանդակային (փաստացի) քրեական հետապնդման (հարուցման) ինստիտուտները:

ՀՀ ՔրԴՕ-ում, մասնավորապես 26-րդ գլխում (Հանրային քրեական հետապնդումը) սահմանված են ֆորմալ քրեական հետապնդման հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմեր: Այսպես՝ ՀՀ ՔրԴՕ-ում տրված է ֆորմալ քրեական հետապնդման հարուցման հետևյալ բնորոշումը՝ այն դատախազի կողմից անձի ենթադրյալ հանցավոր արարքը նկարագրող և դրա իրավական գնահատականը պարունակող որոշում կայացնելն է կամ ենթադրյալ տուժողի կողմից դատարան քրեական հայց ներկայացնելն է (ՀՀ ՔրԴՕ 6-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետում): Օրենսդրական այս բնորոշման վերաբերյալ առկա են որոշ նկատառումներ:

Առաջին՝ ՀՀ ՔրԴՕ-ի տեսանկյունից միակ ֆորմալ-իրավաբանական ակտը, որով պաշտոնապես ազդարարվում է քրեական հետապնդում հարուցելը և անձին մեղադրյալի կարգավիճակ տալը, քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումն է (ֆորմալ քրեական հետապնդման հարուցումը): Ինչպես նշվեց, քրեադատավարական օրենսդրության առանձին դրույթներում, դոկտրինում և քրեադատավարական պրակտիկայում ճանաչված է նաև բովանդակային (փաստացի) քրեական հետապնդման հայեցակարգը (այս մասին՝ հաջորդիվ):

Երկրորդ՝ հանրային պաշտոնական քրեական հետապնդում հարուցելու որոշում կարող է կայացնել միայն դատախազը: Քննիչն իրավասու է միայն քրեական հետապնդում հարուցելու միջնորդություն ներկայացնել դատախազին:

Դատախազներից քրեական հետապնդում կարող է հարուցել միայն հսկող դատախազը, վերադաս դատախազը նման լիազորություն չունի: Վերադաս դատախազն իրավասու է միայն հսկող դատախազի առաջարկությամբ դիմել իրավասու մարմիններ՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն ստանալու միջնորդությունով (ՀՀ ՔրԴՕ 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ):

Եթե մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնում է դատախազների խումբը, ապա քրեական հետապնդում հարուցելու լիազորությունն իրականացնում է բացառապես դատախազների խմբի ղեկավարը (ՀՀ ՔրԴՕ 39.2-րդ հոդվածի 3-րդ մաս):

Մասնավոր մեղադրանքով վարույթներում քրեական հետապնդում հարուցվում է ենթադրյալ տուժողի կողմից դատարան քրեական հայց ներկայացնելով (ՀՀ ՔրԴՕ 451-րդ հոդված):

Երրորդ՝ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելը (անձին որպես մեղադրյալ ներգրավել) չի նշանակում հաստատել անձի մեղավորությունը: Ջ. Մաժինյանն առաջարկում է տարբերակել «անձին մեղավոր համարել» և «մեղավորությունն ապացուցել» հասկացությունները: Քրեական վարույթի հանրային մասնակիցները «ապացուցում են մեղադրյալի մեղավորությունը, այսինքն՝ հավաքում են բավարար ապացույցներ, որպեսզի գործը դատարան ուղարկեն, դրա հետ մեկտեղ քննիչի համոզմունքը մեղադրյալի մեղավորության մասին հիմք է քննությունն ավարտվելու համար»[1]:

Իրականում դատախազը քրեական հետապնդում հարուցելիս անձին համարում է մեղավոր, պարզապես նրա՝ ապացույցների վրա ձևավորված այդ համոզմունքը կրում է հավանական բնույթ[2]: Ասվածը հիմնավորվում է նաև նրանով, որ քրեական մեղադրանքն օրենսդրի կողմից որակվել է որպես որոշակի անձի կողմից ենթադրյալ հանցանք կատարելու մասին վարկած (ՀՀ ՔրԴՕ 6-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետ): Բացի այդ, դատախազը քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ չպետք է օգտագործի անձի մեղավորության մասին միանշանակ պնդումներ և ձևակերպումներ:

Չորրորդ՝ քրեական հետապնդում հարուցելը (որպես՝ որոշում) քրեական մեղադրանքի (որպես՝ վարկած), հետ գտնվում է «ձև և բովանդակություն» դիալեկտիկական միասնության մեջ: Քրեական հետապնդում հարուցելու որոշումը քրեական մեղադրանքի ամրագրման ձևերից մեկն է: Այս տեսանկյունից քրեական հետապնում հարուցելու օրենսդրական բնորոշումը պետք է դիտարկել ՀՀ ՔրԴՕ 6-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետում տրված մեղադրանքի օրենսդրական բնորոշման հետ անխզելի միասնության մեջ: Ընդ որում, քրեական հետապնդում հարուցելու և մեղադրանքի դիալեկտիկական միասնությունը հնարավորություն է տալիս օրենսդրական հարթությունում բացահայտել քրեական հետապնդում հարուցելու որոշման ներքին կառուցվածքային բոլոր տարրերը՝ հանցավոր արարքի նկարագրությունը և դրա իրավական գնահատականը, ինչպես նաև՝ փաստական և իրավական հիմնավորումները (այս մասին՝ հաջորդիվ):

[1] **Мажинян Дж.Р.** Презумпция невиновности и гарантии ее осуществления. – Ереван: Изд-во Ереван. ун-та. 1989. - С. 33.

[2] **Ղամբարյան Ա.,** Անմեղության կանխավարկածը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում: Երևան, ԿԱԻՍԱ, 2005, էջ 89:

Հինգերորդ՝ քրեական հետապնդում հարուցելու համատեքստում անթույլատրելի է օրենսդրության կամ իրավակիրառ ակտերում օգտագործել «քրեական պատասխանատվության ենթարկել» ձևակերպումը: Բանն այն է, որ խորհրդային ժամանակաշրջանում որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը նույնացվում էր անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հետ: Ներկայումս՝ քրեադատավարական տեսանկյունից նշված հարցադրումն ընդհանուր առմամբ լուծված է, քանի որ անմեղության կանխավարկածի գործողության պայմաններում հստակ է, որ անձին քրեական պատասխանատվության կարելի է ենթարկել ոչ թե անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու (անձին որպես մեղադրյալ ներգրավելու) որոշմամբ, այլ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Միևնույն ժամանակ, օրենսդրության մեջ դեռևս հանդիպում են դեպքեր, երբ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելը և անձին քրեական պատասխանատվության ենթարկելը նույնացվում են: Այսպես՝ ՀՀ ՔաղՕր 1064–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ ապօրինի դատապարտելու, **քրեական պատասխանատվության ենթարկելու**, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու հետևանքով պատճառված վնասը, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից: Ինչպես նկատում ենք, ՀՀ ՔաղՕր–ում անձին դատապարտելը և քրեական պատասխանատվության ենթարկելը տարանջատված են: Օրենսդրության մեջ քրեական հետապնդում հարուցելը և քրեական պատասխանատվության ենթարկելը նույնացնող եզակի դեպքերը պայմանավորված են խորհրդային քրեաիրավական մտածողության իներցիայով:

Վեցերորդ՝ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումը, մեղադրական եզրակացության համեմատությամբ, արտացոլում է նախնական (սկզբնական) մեղադրանքը, քանի որ քրեական հետապնդում հարուցելուց հետո նախաքննությունը շարունակվում է, և դրա ընթացքում հնարավոր է ձեռք բերել նոր ապացույցներ, որոնց հիման վրա սկզբնական մեղադրանքը կարող է փոփոխվել: Մինչդատական վարույթում, վերջնական մեղադրանքը ձևավորվում է դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելու (այն վերակազմելու) մասին որոշում կայացնելով և վարույթի նյութերը դատարան հանձնելով (դատարանում մեղադրանք հարուցելու հարցի լուծման փուլ): Այս առումով քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումն արտացոլում է նախնական մեղադրանքը:

4.2.2. Փաստացի քրեական հետապնդում հարուցելը

Փաստացի կամ բովանդակային իմաստով քրեական հետապնդման հայեցակարգի համաձայն՝ քրեական հետապնդում կարող է սկսվել մինչև անձի նկատմամբ ֆորմալ քրեական հետապնդում հարուցելը, այսինքն՝ մինչև նրան մեղադրյալի դատավարական կարգավիճակ տալը:

Դոկտրինալ հարթությունում փաստացի քրեական հետապնդման հարուցման հայեցակարգը լեգիտիմացվում է գերմանացի նշանավոր իրավաբան Գ. Ելինեկի «*փաստացիի նորմատիվ ուժը*» բանաձևով, ըստ որի՝ նորմի օրինական ուժի համար պահանջվում է վարքագծի շարունակական իրականացում (կայուն հաստատում կամ ճանաչում), որը համապատասխանում է նորմին, և դրա հետ միասին նորմն արդեն վերածվում է հասարակության հեղինակավոր պատվիրանի, այսինքն՝ իրավական նորմի[1]: Այս համատեքստում, եթե քրեական վարույթի հանրային մասնակիցներն իրենց դատավարական փաստացի վարքագծով փորձում են պարզել և հիմնավորել անհատապես որոշակիացված անձի առնչությունը կատարված հանցագործությանը, ապա այդ կայուն փաստացի հաստատումը պետք է ունենա նորմատիվ (իրավական) նշանակություն:

Գործնական հարթությունում փաստացի քրեական հետապնդման հարուցման հասկացությունը լեգիտիմացվում է Եվրոպական դատարանի՝ «ինքնավար քրեական մեղադրանք» հայեցակարգի միջոցով: Եվրոպական դատարանը Դեվեերն ընդդեմ Բելգիայի գործով (*Deweer v. Belgium*, 27.02.1980թ. վճիռ) նշել է, որ «քրեական մեղադրանք» հասկացությունը պետք է հասկացվի ոչ թե *ձևական* (փաստաթղթային), այլ *բովանդակային* (գործնական) իմաստով: Այսինքն՝ անձի նկատմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա:

Փաստացի քրեական հետապնդման իրականացման (հարուցման) մասին դրույթ նախատեսված է նաև ՀՀ ՔրԴՕ 97-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետում.

> «Օրենքի էական խախտմամբ ստացված են համարվում այն տվյալները, որոնք ձեռք են բերվել՝ քննչական գործողության կատարման ընթացքում մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձից, որի նկատմամբ

[1] **Еллинек Г.** Общее учение о государстве. СПб.: Изд. Юридический центр-Пресс, 2004. - С. 337-339.

փաստացի իրականացվել է քրեական հետապնդում՝ առանց այդ մասին նրան պատշաճ ծանուցելու» (ընդգծումը՝ իմն է):

Փաստացի քրեական հետապնդման իրականացման (հարուցման) ինստիտուտը ՀՀ ՔրԴՕ-ում ընդհանուր (համակարգային) կարգավորում չի ստացել, սակայն, այնուամենայնիվ, ՀՀ ՔրԴՕ 97-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետում դրա ամրագրումը վկայում է պետական ճանաչման մասին: ՀՀ Սահմանադրական և ՀՀ Վճռաբեկ դատարանները ևս ճանաչել են փաստացի քրեական հետապնդում հարուցելու հայեցակարգը:

ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից փաստացի քրեական հետապնդում հարուցելու ճանաչման զարգացումը սկսվել է «ինքնավար քրեական մեղադրանքի» հայեցակարգի վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի աստիճանական տեղայնացումից և անցել է զարգացման մի քանի փուլեր:

Առաջին փուլը՝ «ինքնավար քրեական մեղադրանքի» հայեցակարգը ՀՀ իրավական համակարգ ներմուծելու սկզբնավորման փուլն է: ՀՀ Վճռաբեկ դատարանը 2003 թ. առաջին անգամ քննարկեց Եվրոպական կոնվենցիայով սահմանված «քրեական մեղադրանքը» վարչական իրավախախտումների համար վարչական կալանքի ենթարկված անձանց նկատմամբ կիրառելու հարցը: Այս գործերով ՀՀ Վճռաբեկ դատարանը թեև որոշեց, որ վարչական կալանքն իր տևողությամբ և պայմաններով չի համարվում քրեական պատիժ, հետևապես ազատությունից զրկված անձինք չեն կարող օգտվել Եվրոպական կոնվենցիայով սահմանված արդար դատաքննության իրավունքից[1], սակայն ՀՀ Վճռաբեկ դատարանն առաջին անգամ քննարկեց քրեական մեղադրանքը քրեաիրավական ֆորմալ հարաբերություններից դուրս գտնվող և քրեադատավարական կարգավիճակ չունեցող անձանց նկատմամբ տարածելու հարցը:

Երկրորդ փուլը՝ փաստացի քրեական հետապնդման ինստիտուտի իմպլիցիտ ճանաչման փուլն է: ՀՀ Վճռաբեկ դատարանը 2009-2010 թվականներին առանց «փաստացի քրեական հետապնդում հարուցել» ձևակերպումն ուղիղ օգտագործելու, սակայն, հղում կատարելով Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին, սահմանել է, որ «քրեական մեղադրանք» հասկացությունը պետք է հասկանալ ոչ թե ձևական, այլ բովանդակային իմաստով (տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 գործով 18.12.2009 թ. և թիվ ՀՅՔՐԴ2/0153/01/08 գործով 26.03.2010 թ. որոշումները): Այսպես՝ Դատարանը թիվ ՀՅՔՐԴ2/0153/01/08 գործով 26.03.2010 թ.

[1] **Хачатрян М.** Понятие «уголовного обвинения» согласно Европейской конвенции о защите прав и основных свобод человека. - Ереван, 2003. - С. 32.

որոշմամբ նշել է, որ նախաքննության ընթացքում ապացույցների ձեռքբերման ժամանակ Ն. Պողոսյանը փաստացի եղել է կասկածյալ և պետք է օգտվեր այդ կարգավիճակից բխող իրավունքներից, քանի որ մինչդատական վարույթն իրականացնող մարմինը, տեղեկություններ ունենալով, որ Ն. Պողոսյանը ապօրինի թմրամիջոց է իրացրել, վերջինիս քրեական գործի վարույթին ներգրավել և հարցաքննել է որպես վկա, նախազգուշացրել ակնհայտ սուտ ցուցմունք տալու և ցուցմունք տալուց հրաժարվելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին և հարցաքննության ընթացքում առաջադրել է հանցագործության կատարման մեջ Ն. Պողոսյանին մերկացնող հարցեր:

Այս գործերով ՀՀ Վճռաբեկ դատարանը, ըստ էության հիմք ընդունելով անձի նկատմամբ փաստացի քրեական հետապնդում հարուցելու հայեցակարգը, ճանաչեց «բերվածի» և փաստացի կասկածյալի կարգավիճակները, այսինքն՝ ընդունեց, որ անձը կարող է փաստացի համարվել կասկածյալ, նույնիսկ եթե նրա նկատմամբ պաշտոնական քրեական հետապնդում հարուցված չէ:

Երրորդ փուլը փաստացի քրեական հետապնդման ինստիտուտի զարգացման փուլն է: ՀՀ Վճռաբեկ դատարանը, զարգացնելով 2009-2010 թթ. գործերով սկսված տրամաբանությունը, թիվ ԵԿԴ/0136/11/11 գործով 22.12.2011 թ. որոշմամբ նշել է.

> «Այն դեպքում, երբ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ տրվում են այնպիսի ձևակերպումներ, որոնցից հետևում է, որ կոնկրետ անձը կատարել է քրեորեն պատժելի արարք, քննարկվող որոշումն **իրավական հետևանքների առումով հավասարվում է անձին մեղադրանք առաջադրելու մասին որոշմանը**» (ընդգծումը՝ իմն է):

Այսինքն՝ դատարանը պաշտոնապես ճանաչեց, որ քրեական գործ հարուցելու որոշումը կարող է իրավական հետևանքներով հավասարազոր լինել ֆորմալ մեղադրանքի պաշտոնական առաջադրմանը, եթե քրեական գործ հարուցելու մասին որոշման նկարագրական-պատճառաբանական կամ եզրափակիչ մասերում առկա ձևակերպումներից ուղղակիորեն հետևում է, որ անձը կատարել է քրեորեն պատժելի արարք: Այս գործով անձի գործողությունների կապակցությամբ քրեական գործ հարուցելու մասին որոշումը հավասարեցվեց որպես մեղադրյալ ներգրավելու որոշմանը:

ՀՀ Վճռաբեկ դատարանը նշված գործով նաև նշել է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ անձին որպես հանցանք կատարողի մատնանշելու պարագայում, նա իրավունք է ձեռք բերում օգտվելու որոշակի դատավարական երաշխիքներից, այդ թվում՝ պաշտպանության իրավունքից:

Չորրորդ փուլը «փաստացի քրեական հետապնդում» հասկացության էքսպլիցիտ (բացահայտ) ճանաչման և տերմինաբանական հստակեցման փուլն է: Այս փուլը բաղկացած է երկու ենթափուլից. առաջինում ՀՀ Վճռաբեկ դատարանն ուղիղ օգտագործել է «փաստացի քրեական հետապնդում հարուցել» հասկացությունը, իսկ երկրորդում՝ հստակեցրել է տերմինաբանությունը:

Հասկացություն էքսպլիցիտ ճանաչման ենթափուլ: ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0201/11/17 գործով 12.06.2019 թ., որոշմամբ առաջին անգամ ուղիղ կերպով օգտագործել է «փաստացի քրեական հետապնդում հարուցել» արտահայտությունը.

> «(...) պետք է քննարկման առարկա դառնա այն հարցը, թե արդյոք նշված որոշման մեջ կոնկրետ անձին որպես հանցանք կատարող մատնանշած լինելու, այսինքն՝ **փաստացի քրեական հետապնդում հարուցելու** պարագայում պահպանվել են վերջինիս՝ որպես ենթադրյալ հանցանք կատարած անձի համար երաշխավորված դատավարական իրավունքները» (ընդգծումը՝ իմն է):

Դատարանը թեև այս գործով է առաջին անգամ էքսպլիցիտ օգտագործել է «փաստացի քրեական հետապնդում հարուցել» արտահայտությունը, սակայն դրանից չի կարելի եզրակացնել, որ նա այս գործով է առաջին անգամ ճանաչել «փաստացի քրեական հետապնդման» հայեցակարգը: Պարզապես «փաստացի քրեական հետապնդման հարուցում» տերմինի էքսպլիցիտ օգտագործումը նշանակում է, որ նախկինում իմպլիցիտ գոյություն ունեցող հայեցակարգը վերածվեց հստակ ձևակերպված իրավական հասկացության: Պատահական չէ, որ այս գործով Դատարանը հղում է տվել 2011 թ. թիվ ԵԿԴ/0136/11/11 գործով (Լևիկ Պողոսյանի գործով) սահմանված սկզբունքներին:

Տերմինաբանական հստակեցման ենթափուլ: ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ Դ/0455/01/20 գործով 12.06.2023 թ. որոշմամբ պաշտոնական և փաստացի քրեական հետապնդումների կապակցությամբ օգտագործեց «ձևական իմաստով քրեական հետապնդում» և «բովանդակային իմաստով քրեական հետապնդում» հասկացությունները: Այս գործով «փաստացի քրեական հետապնդումը» և «բովանդակային իմաստով քրեական հետապնդումը» օգտագործվում են որպես հոմանիշներ. դատարանն ուղղակիորեն կապում է երկու տերմինները՝ օգտագործելով բացատրական փակագծեր.

> «(...) անձի նկատմամբ բովանդակային իմաստով (փաստացի) քրեական հետապնդման առկայության դեպքում (...) »

Բովանդակային իմաստով (փաստացի) հետապնդումը հարուցվում է, երբ իրավասու մարմնի գործողություններից երևում է, որ անձին վերագրում է հանցագործություն (քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ անձին որպես հանցանք կատարողի մատնանշելու պարագայում): Այս դեպքում անձը ձեռք է բերում արդար դատաքննության իրավունքից բխող երաշխիքներ:

Այսպիսով, «փաստացի քրեական հետապնդում հարուցելու» հայեցակարգի էվոլյուցիան Հայաստանի իրավական համակարգում անցել է Եվրոպական դատարանի մշակած «ինքնավար քրեական մեղադրանքի» հայեցակարգի ընդունումից դեպի փաստացի հետապնդման հարուցման իմպլիցիտ ճանաչումն ու զարգացումը և, վերջապես, տերմինի էքսպլիցիտ ներմուծումն ու «ձևական» ու «բովանդակային (փաստացի)» հետապնդման տարանջատումը:

ՀՀ Սահմանադրական դատարանը 21.11.2023 թ. ՍԴՈ-1704 որոշմամբ ևս ճանաչել է «փաստացի քրեական հետապնդում հարուցելու» հայեցակարգը: Այսպես՝ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը (մինչև 25.03.2021 թ. փոփոխությունները) սահմանում էր, որ ազգային անվտանգության մարմինների ծառայողը թողնվում է կադրերի տրամադրության տակ հետևյալ դեպքերում՝ «ծառայողի նկատմամբ քրեական գործ հարուցվելիս՝ մինչև տվյալ գործով վերջնական որոշում կայացնելը»: ՀՀ Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1704 որոշմամբ այս օրենսդրական ձևակերպումը վերափոխեց ավելի կոնկրետ ձևակերպմամբ՝ օգտագործելով «քրեական գործ (փաստացի քրեական հետապնդում) հարուցված լինելու փաստ» արտահայտությունը: Օրենսդրական բնօրինակ տեքստի («քրեական գործ հարուցվելիս») վերաձևակերպումը («քրեական գործ (փաստացի քրեական հետապնդում) հարուցված լինելու փաստ») ՀՀ Սահմանադրական դատարանի գիտակցված որոշման արդյունքն է, քանի որ Դատարանը որոշման մեջ «փաստացի քրեական հետապնդում» տերմինն օգտագործել է չորս անգամ: Սա վկայում է ոչ թե պատահական արտահայտության կամ բառապաշարի ընտրության, այլ ընդունված իրավական դոկտրինի (կամ հասկացության) գիտակցված օգտագործման մասին:

Փաստացի քրեական հետապնդման հարուցման ինստիտուտը կոչված է պաշտպանել այն անձանց, ովքեր թեև չունեն մեղադրյալի ֆորմալ դատավարական կարգավիճակ, սակայն փաստացի կասկածվում են հանցանքի կատարման մեջ: Այս

ինստիտուտի մեջ մարմնավորվում է «մարդը բարձրագույն արժեք է» սահմանադրական գաղափարը, քանի որ փաստացի քրեական հետապնդման ճանաչումը հնարավորություն է տալիս ապահովել ձևական (դատավարական) կարգավիճակ չունեցող, սակայն հետապնդման ենթարկվող մարդու մի շարք դատավարական իրավունքներ: ՀՀ Վճռաբեկ դատարանը նշել է, որ թե՛ ձևական, թե՛ բովանդակային իմաստով քրեական հետապնդման առկայության դեպքում անձի պաշտպանության իրավունքի իրացման համար անհրաժեշտ դատավարական երաշխիքները, մասնավորապես՝ ներկայացված մեղադրանքի մասին տեղեկացվելու, լռելու, անձամբ կամ պաշտպանի միջոցով մեղադրանքից պաշտպանվելու իրավունքները, ապահովում են վերջինիս արդար դատաքննության իրավունքի իրացումը (ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ Դ/0455/01/20 գործով 12.06.2023 թ. որոշում):

Փաստացի քրեական հետապնդման վիճակում գտնվող անձը, եթե քննչական գործողություններին մասնակցում է վկայի կարգավիճակով, ապա վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է նրան պարզաբանել և ապահովել վերը նշված իրավունքները: Փաստացի քրեական հետապնդման վիճակում գտնվող անձի մասնակցությամբ քննչական գործողություններ կատարելիս նրան չպետք է նախազգուշացնել ակնհայտ սուտ ցուցմունք տալու և ցուցմունք տալուց հրաժարվելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Այս պարագայում խոսքը գնում է Ֆրանսիայի քրեական դատավարությունից փոխառնված՝ իրավաբանական աջակցություն ստացող վկայի (Témoin assisté) մասին, որն այժմ ճանաչվել է նաև Լիտվայում՝ «հատուկ վկա» կարգավիճակի, Լատվիայում՝ «անձ, որի դեմ սկսվել է քրեական վարույթ» կարգավիճակի, Ղազախստանում՝ «պաշտպանության իրավունք ունեցող վկա» կարգավիճակի ներմուծմամբ[1]:

Փաստացի քրեական հետապնդում հարուցելու հայեցակարգի կենտրոնական հարցն այն է, թե դատավարական որ ակտերը (վարութային գործողությունները) կարող են ազդարարել անձի նկատմամբ փաստացի հետապնդում հարուցելու գործընթացը: Այս հարցը կարևոր է, քանի որ քրեական հետապնդման ժամկետների ընթացքը սկսվում է այդ պահից:

Նախկին օրենսդրության պայմաններում նշել ենք, որ փաստացի քրեական հետապնդման վիճակում են գտնվում կասկածյալի կամ մեղադրյալի քրեադատավարական կարգավիճակ չունեցող հետևյալ անձինք.

[1] **Ахпанов А.Н., Хан А.Л.** Гарантии неприкосновенности свидетеля, имеющего право на защиту // Вестник Карагандинского университета. Серия «Право». 2024. Т. 29, № 3 (115). - С. 70.

1) անձը, ում ենթադրյալ հանցավոր արարքների վերաբերյալ ստացվել է հաղորդում, և դրա առթիվ նախապատրաստվել են նյութեր,

2) անձը, ում ենթադրյալ հանցավոր արարքները նկարագրվել են քրեական գործ հարուցելու մասին որոշման (քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության) մեջ,

3) վկան, ում հարցաքննության կամ առերեսման ժամանակ տրվում են իր՝ ենթադրյալ հանցավոր արարքներին վերաբերող հարցեր,

4) անձը, ում ենթադրյալ հանցավոր արարքների վերաբերյալ կատարվում են այլ քննչական գործողություններ՝ հեռախոսային խոսակցությունը լսելը, ճանաչման ներկայացնելը և այլն[1]:

Այս անձանց մասնակցությամբ կատարվող գործողություններն այնպիսի միջոցներ են, որոնք կարող են համարվել փաստացի քրեական հետապնդման հարուցման ակտ, բայց դրանք կարող են ունենալ նաև այլ բացատրություն (օրինակ՝ բառի բուն իմաստով վկայի բնակարանում խուզարկությունը): Այս գործողությունները in abstracto չեն կարող համարվել փաստացի քրեական հետապնդման հարուցման ակտեր, դրա համար պահանջվում է, որպեսզի յուրաքանչյուր կոնկրետ վարույթով այդ գործողությունները նույնականացվեն՝ որպես քրեական հետապնդման հարուցման ակտ, այսինքն՝ վարույթի հանրային իրավասու մասնակիցները, դատարանի հետագա ստուգման հեռանկարով, կոնկրետ գործով քննարկեն և գնահատեն այդ գործողությունների հետապնդման բնույթը: Այս գործողությունները կճանաչվեն որպես փաստացի քրեական հետապնդման հարուցման ակտեր, եթե տվյալ նյութերից պարզ է դառնում, որ դրանց կատարման նպատակն է եղել պարզել և հիմնավորել անհատապես որոշակիացված անձի առնչությունը կատարված հանցագործությանը:

Մինչդեռ կան իրավիճակներ, երբ վարութային գործողությունները, որոնք նույնիսկ in abstracto անվիճելիորեն համարվում են փաստացի քրեական հարուցման ակտեր, ուստի դրանց համար կոնկրետ նույնականացման գործընթաց չի պահանջվում, օրինակ՝ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով անձին ձերբակալելը փաստացի քրեական հետապնդման անհերքելի դրսևորումներից է: Ակնառու փաստացի քրեական հետապնդման դրսևորումներից է նաև փաստացի քրեական հետապնդման իրականացման մասին պատշաճ տեղեկացնելը (ՀՀ ՔրԴՕ 97-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետ):

Ակնառու և ոչ ակնառու փաստացի քրեական հետապնդման տարբերակումը խիստ պայմանական է, քանի որ ոչ ակնառու փաստացի քրեական հետապնդման ակտերը

[1] Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1, Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան: 2-րդ լրամշակված հրատ.: Երևան, Լուսաբաց, 2017, էջ 177:

կոնկրետ նույնականացման գործընթաց անցնելուց հետո նույնպես ճանաչվում են փաստացի հետապնդման ակտեր, որոնց կատարմամբ քրեական հետապնդման ժամկետները սկսում են հոսել: Այս պայմանական տարանջատումը պարզապես հնարավորություն է տալիս պարզեցնել փաստացի քրեական հետապնդման դեպքում հետապնդման ժամկետի հաշվարկման սկիզբը որոշելու հարցը: Ակնառու փաստացի քրեական հետապնդման դեպքում կարելի է in abstracto պնդել, որ քրեական հետապնդման ժամկետները հաշվարկվում են այդ գործողությունները կատարելու պահից, մինչդեռ ոչ ակնառու փաստացի քրեական հետապնդման դեպքում հետապնդման ժամկետները սկսում են հոսել, երբ այդ գործողությունները in concreto ճանաչվում են որպես փաստացի քրեական հետապնդման հարուցման ակտեր:

4.2.3. Ձերբակալումը՝ որպես ակնառու փաստացի քրեական հետապնդում հարուցելու ակտ

Ֆորմալ քրեական հետապնդման հարուցելն անձին մեղադրյալի կարգավիճակ վերապահող որոշման հետ կապելու պայմաններում հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով անձին ձերբակալելն այլևս ֆորմալ իմաստով պաշտոնական քրեական հետապնդման հարուցելու ակտ չէ: Այս իրավիճակում կարևոր նշանակություն է ձեռք բերում այն հարցը, թե այս տեսակի ձերբակալումն արդյո՞ք կարելի է համարել փաստացի քրեական հետապնդման հարուցման ակտ:

2007 թ. Հիմնադրույթներում ձերբակալումը ու դրան ուղեկցող գործողությունների կատարումը համարվեցին որպես քրեական հետապնդում հարուցելու նախապատրաստություն[1]: Քրեական հետապնդման նախապատրաստություն էին դիտվում նաև մինչև քրեական հետապնդման հարուցումը կատարվող քննչական և այլ դատավարական գործողությունները, քանի որ դրանք նույնպես ուղղված են քրեական հետապնդման հարուցման համար անհրաժեշտ հիմքերի հայտնաբերմանը[2]: Այս մոտեցման հիմքում ընկած էր Մ. Ստրոգովիչի այն մոտեցումը, ըստ որի անձին որպես մեղադրյալ ներգրավելուն նախորդող գործունեությունը քրեական հետապնդման նախապատրաստությունն է[3]:

[1] ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային հիմնադրույթները (Պետություն և իրավունք, 2007, № 1 (35)): ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու: Երևան, 2014, էջ 17:

[2] **Ղազինյան Գ., Մելքոնյան Դ.,** Քրեական հետապնդման հարուցում (Պետություն և իրավունք, 2007, № 1 (35), էջ 23-31): ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու: Երևան, 2014, էջ 113:

[3] **Строгович М.С.** Уголовное преследование в советском уголовном процессе. - М.: Изд-во Академии наук СССР, 1951. - С. 66.

2011 թ. Հայեցակարգում այս մոտեցումը փոխվեց. ձերբակալումը համարվեց ոչ թե քրեական հետապնդման հարուցման նախապատրաստություն, այլ դրանից անկախ ինստիտուտ: Հայեցակարգի 3.6-կետում ուղիղ նշվեց, որ մինչդատական վարույթի կենտրոնական ենթափուլն ու շարժիչ ուժը հանդիսացող քրեական հետապնդման հարուցումը չի կարելի կապել ձերբակալման հետ, առավել ևս հաշվի առնելով այն, որ այդ ժամկետը լրանալուց հետո հնարավոր է, որ բացակայեն անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմքերը:

Քննարկվող հարցը կարևոր է նաև այն տեսանկյունից, որ Օրենսդիրը հրաժարվել է 1998 թ. ՀՀ ՔրԴՕ-ի 63-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված այն դրույթից, ըստ որի՝ կասկածը չհաստատվելու դեպքում կասկածյալը ձեռք է բերում արդարացվածի կարգավիճակ: Այս արժեքավոր նորմն ըստ էության նշանակում էր, որ ձերբակալված անձին ազատ արձակելուց հետո, եթե նա որպես մեղադրյալ չի ներգրավվում, ապա նա օրենքի ուժով համարվում է արդարացված, ուստի պաշտպանվում է կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքով:

Ձերբակալման՝ որպես պաշտոնական քրեական հետապնդման հարուցման ակտի մերժման պայմաններում ստեղծվում է մի իրավիճակ, որ անձը կարող է հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով ձերբակալվել, սակայն նրա նկատմամբ պաշտոնական քրեական հետապնդում կարող է չհարուցվել: Այս իրավիճակում մարդը տևական ժամանակով հայտնվում է անորոշության վիճակում. մի կողմից՝ պետությունը նրան կասկածել է հանցանք կատարելու մեջ, նրան ձերբակալել է, որպես ձերբակալված անձ նրան հարցաքննել է, մյուս կողմից՝ հետագայում նրա նկատմամբ պաշտոնական քրեական հետապնդում չի հարուցել և մեղադրյալի կարգավիճակ չի տվել: Այլ կերպ ասած՝ թեև մարդու նկատմամբ հարուցվել է ակնառու փաստացի քրեական հետապնդում, սակայն նա թողնվում է կասկածի տակ: Այս իրավիճակը հիշեցնում է միջնադարյան Ֆրանսիայի ինկվիզիցիոն քրեական դատավարությունում նախատեսված՝ «մեղադրյալին կասկածի տակ թողնելու» դատավճռի տեսակը («*le plus ample informé*» բառացի՝ «առավել ամբողջական տեղեկացված», ինչը նշանակում էր կասկածի տակ թողնել՝ գործը վերսկսելու հնարավորությամբ): Օրինակ՝ 1670 թ. Ֆրանսիական քրեական օրդոնանսում «մեղադրյալին կասկածի տակ թողնելու» դատավճիռ կայացվում էր այն ժամանակ, երբ հավաքված ապացույցները բավարար չէին նրան մեղավոր կամ անմեղ ճանաչելու համար, ուստի գործը թողնվում էր չլուծված՝ երբեմն որոշակի ժամկետով, իսկ ավելի

ծանր մեղադրանքի դեպքում՝ անորոշ ժամկետով, և մեղադրյալը կարող էր նորից դատի տրվել նոր ապացույցների հայտնաբերման դեպքում[1]:

Միջնադարյան դատավարությունում «կասկածի տակ թողնելու» դատավճիռը ծառայում էր որպես իշխանության ցուցադրման և հասարակությանը վերահսկելու ինկվիզիցիոն միջոց: Ժամանակակից իրավական պետությունում մարդուն կասկածի տակ թողնելու անորոշ վիճակի որևէ դրսևորում հակասում է ժամանակակից քրեական դատավարության՝ որպես իշխանության ինքնասահմանափակման հայեցակարգին:

Առկա կարգավորումների շրջանակներում, անձին կասկածի տակ պահելուց բխող անորոշության ժամկետը կրճատելու և նրա իրավական կարգավիճակը հնարավորինս շուտ հստակեցնելու միակ գործնական մեխանիզմը հետևյալն է. քրեական հետապնդման ժամկետը պետք է հաշվարկվի ձերբակալման օրվանից՝ այն դիտարկելով որպես ակնառու փաստացի քրեական հետապնդման հարուցման ակտ:

5. Քրեական հետապնդման ժամկետի հաշվարկման սկիզբը

ՀՀ ՔրԴՕ 192-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ հանրային քրեական հետապնդման ժամկետի հաշվարկը սկսվում է քրեական հետապնդում հարուցելու պահից: Այս հոդվածում օգտագործվող «քրեական հետապնդում հարուցել» հասկացությունը կարելի է ընկալել մի քանի տարբերակով: Այն տառացի մեկնաբանելու պարագայում կստացվի, որ հետապնդման ժամկետները հոսում են պաշտոնական քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում կայացնելու պահից: Մեկնաբանման այս տարբերակն անընդունելի է:

Նախ՝ դրա արդյունքում ստեղծվում է աղաղակող անարդար իրավիճակ. հատկապես ակնառու փաստացի քրեական հետապնդման ենթարկվող անձը, ով չունի դատավարական կարգավիճակ, զրկվում է հետապնդման ժամկետներով պաշտպանվելու հնարավորությունից:

Երկրորդ՝ քրեական վարույթի հանրային մասնակիցների համար ստեղծվում է օրենքը շրջանցելու (*fraus legis*) հնարավորություն՝ անձի նկատմամբ պաշտոնական քրեական հետապնդումը ուշ, օրինակ՝ նախաքննության ավարտին հարուցելու եղանակով փաստացի շրջանցել քրեական հետապնդման ժամկետների սահմանափակումը՝ արժեզրկելով այդ ժամկետները նախատեսելու օրենսդրական նպատակները:

[1] **Чельцов-Бебутов М.А.** Курс уголовно-процессуального права. Очерки по истории суда и уголовного процесса в рабовладельческих, феодальных и буржуазных государствах: Печ. по изд. 1957 г. – СПб.: Равена; Альфа, 1995. - С. 432. **Ланг П.П.** Экзистенция правосудия: монография. - М.: Проспект, 2025. - С. 61.

Սակայն իրավիճակն այսքան պարզ չէ: ՀՀ ՔրԴՕ 6-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետում տրված՝ քրեական հետապնդման հարուցման օրենսդրական բնորոշումը հստակ ուրվագծում է այդ ձևակերպման օրենքի տեքստի իմաստային սահմանները՝ հետապնդում հարուցելը դատախազի կողմից անձի ենթադրյալ հանցավոր արարքը նկարագրող և դրա իրավական գնահատականը պարունակող որոշում կայացնելն է: Այս դեֆինիտիվ (սահմանումային) նորմի պարագայում «քրեական հետապնդում հարուցել» արտահայտության լեզվական սահմանները թույլ չեն տալիս օգտագործել տարածական մեկնաբանման մեթոդաբանությունը և դրանում ներառել փաստացի քրեական հետապնդման հարուցման դեպքերը:

Այս բարդ իրավիճակում փաստացի քրեական հետապնդման ենթարկվող անձին խիստ ձևական նկատառումներով հետապնդման ժամկետներից պաշտպանվելու հնարավորությունից զրկելու աղաղակող անարդարությունից խուսափելու և վարույթի հանրային մասնակիցներին՝ *fraus legis* վարքագիծ դրսևորելու հնարավորությունից զրկելու նպատակով «քրեական հետապնդում հարուցել» ձևակերպումը պետք է ենթարկել նպատակաբանական (տելեոլոգիական) ընդլայնման կամ էքստենսիայի (*teleological extension*), որի արդյունքում «քրեական հետապնդում հարուցել» օրենսդրական բնորոշման լեզվական սահմաններն ընդլայնվում են[1]: Դրա արդյունքում քրեական հետապնդում հարուցել ասելով հասկացվում են ոչ միայն պաշտոնական, այլ նաև փաստացի քրեական հետապնդման հարուցման (իրականացման) դեպքերը: Դատարանը, նման ստրատեգիա ընտրելով, քրեական հետապնդման ժամկետների համատեքստում փաստացի հակադրվում է քրեական հետապնդման հարուցման օրենսդրական բնորոշմանը, սակայն դատարանի իրավունքի զարգացմանն ուղղված վարքագիծը լեգիտիմացվում է *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինով կամ *contra legem* մեկնաբանման տեսությամբ:

Այսպիսով՝ ՀՀ ՔրԴՕ 192-րդ հոդվածի իմաստով քրեական հետապնդում հարուցել ասելով պետք է հասկանալ ինչպես պաշտոնական, այնպես էլ փաստացի քրեական հետապնդման հարուցման դեպքերը: Այս պարագայում քրեական հետապնդման ժամկետի ընթացքը սկսվում է պաշտոնական կամ փաստացի քրեական հետապնդում հարուցելու պահից[2]:

[1] Օրենքի տարածական մեկնաբանման և օրենքի նպատակաբանական էքստենսիայի տարբերությունների մասին տե՛ս **Ларенц К., Канарис К.-В.** Методология юриспруденции. Пер. с нем. - М.: М-Логос, 2024. - С. 204. **Аллахвердиев И.Г.** Толкование *contra legem*: место в системе видов толкования // Теория государства и права. 2022. № 4 (29). - С. 40-48.

[2] ՀՀ առաջին ատյանի դատարանը թիվ ԵԴ1/0361/01/24 գործով 12.04.2024 թ. որոշմամբ նշել է, որ մեղադրյալի նկատմամբ 2023 թվականի օգոստոսի 29-ից իրականացվել է փաստացի քրեական

Միևնույն ժամանակ, փաստացի քրեական հետապնդում հարուցելու պահից քրեական հետապնդման ժամկետի հաշվարկման հետ կապված մի շարք հարցեր պահանջում են հատուկ լուծումներ, օրինակ, փաստացի քրեական հետապնդման պարագայում դատախազը պետք է քրեական հետապնդման առավելագույն ժամկետի ընթացքում հարուցի պաշտոնական քրեական հետապնդում և մեղադրական եզրակացությունը վարույթի նյութերի հետ միասին հանձնի դատարան կամ կայացնի պաշտոնական քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշում: Փաստացի հետապնդման պարագայում հետապնդման ժամկետը կասեցնելու և այլ հարցերի նկատմամբ վերաբերելի մասով (mutatis mutandis) կիրառելի են պաշտոնական քրեական հետապնդման ժամկետների համար նախատեսված օրենսդրական դրույթները:

4. Եզրակացություններ

1) Քրեական հետապնդման հարուցումը ինստիտուտը Հայաստանում անցել է զարգացման փուլեր, որի ընթացքում այս հասկացությունն ընկալվել է տարբեր իմաստներով: Դրան զուգահեռ, դատական պրակտիկայի (Եվրոպական դատարանի, ՀՀ Վճռաբեկ և Սահմանադրական դատարանների) միջոցով ճանաչվել և զարգացել է փաստացի (բովանդակային) հետապնդման հայեցակարգը, երբ հանցագործության մեջ կասկածվող անձի նկատմամբ իրականացվում են էականորեն ներգործող միջոցներ՝ առանց պաշտոնական որոշման:

2) Քննարկվող ինստիտուտի բնույթի ճիշտ ըմբռնման համար կարևոր է տարբերակել քրեական հետապնդման հարուցման սահմանադրական և

հետապնդում, քանի որ այդ օրվանից սկսած նրա վիճակին էական միջամտություն է տեղի ունեցել, մասնավորապես՝ նա այդ օրը ձերբակալվել է, ենթարկվել անձնական խուզարկության, նրան բացատրվել են մեղադրյալի իրավունքները և պարտականությունները, նա հարցաքննվել է, որի ընթացքում նրան տրվել են մեղադրական բովանդակության հարցեր, և նրա մոտ անորոշության զգացում է առաջացել իր ապագայի վերաբերյալ՝ կապված քրեական հետապնդման առկայության հետ, ինչպես նաև չնայած նրա նկատմամբ դրանից հետո խափանման միջոց չի ընտրվել, այնուամենայնիվ նշված պատճառով չի մեկնել արտերկիր՝ մասնակցելու հորեղբոր հուղարկավորության արարողությանը: Ընդ որում, վերջին երկու հանգամանքների տեսանկյունից ոչ թե կարևոր է պարզել նրա իրավունքները փաստացի սահմանափակվել են, թե ոչ, այլ նշված առումներով վճռորոշ է մեղադրյալի ընկալումը:

Ընդ որում, մեղադրյալի նկատմամբ նման միջամտության պայմաններում, քննիչն իրավացիորեն նրան պարզաբանել է մեղադրյալի իրավունքները և պարտականությունները, որպեսզի ՀՀ ՔրԴՕ 97-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի հիման վրա հետագայում ձեռք բերված ապացույցներն անթույլատրելի չճանաչվեն: Դատարանը փաստել է, որ 2023 թվականի նոյեմբերի 29-ին լրացել է մեղադրյալի՝ քրեական հետապնդման առավելագույն՝ եռամսյա ժամկետը, և դատախազն այդ ժամկետի ընթացքում վարույթի նյութերը չի հանձնել դատարան: Դատարանը որոշել է քրեական հետապնդումը դադարեցնել՝ ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիմքով:

դատավարական ընկալումները: Այս տարանջատումը հստակեցնում է, որ քրեական հետապնդում հարուցելու սահմանադրական գործառույթն իրականացվում է դատավարական մի շարք լիազորությունների միջոցով:

3) ՀՀ-ում օրենսդրությամբ ստեղծվել է անձին անորոշ ժամկետով «կասկածի տակ թողնելու» հնարավորություն, երբ անձը ենթարկվում է ակնառու փաստացի հետապնդման (օրինակ՝ անմիջական կասկածով ձերբակալման), բայց նրա նկատմամբ պաշտոնական հետապնդում չի հարուցվում: Այս իրավիճակը, որը կարելի է համարել «le plus ample informé» (կասկածի տակ թողնել) միջնադարյան ինստիտուտի ժամանակակից արտացոլում:

4) Քրեական հետապնդման ժամկետների հաշվարկման սկիզբը պետք է ընդլայնվի՝ ներառելով ոչ միայն պաշտոնական, այլև փաստացի հետապնդում հարուցելու պահերը: ՀՀ ՔրԴՕ 192-րդ հոդվածի պարզաբանման համար անհրաժեշտ է կիրառել նպատակաբանական ընդլայնում (teleological extension), որպեսզի ձերբակալումը (որպես ակնառու փաստացի հետապնդում) ճանաչվի որպես քրեական հետապնդման ժամկետի հոսքի մեկնարկի պահ:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Բաղդասարյան Գ.,** Քրեական հետապնդման «գործառույթը»: Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, 2025, Vol. 16, № 2 (43):
2. **Խաչատրյան Մ.,** Քրեական գործի հարուցումը և քրեական հետապնդումը քրեական դատավարությունում (Հայաստանի Հանրապետություն, 31.07.1997 թ.): Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգիրքը: Երևան, Զանգակ-97, 1999, 80 էջ:
3. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1, Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան: 2-րդ լրամշակված հրատ.: Երևան, Լուսաբաց, 2017, 632 էջ:
4. ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց: Երևան, Եվրոպայի խորհուրդ, 2022, 613 էջ:
5. ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային հիմնադրույթները**:** Պետություն և իրավունք, 2007, № 1 (35):

6. **Ղազինյան Գ., Մելքոնյան Դ.,** Քրեական հետապնդման հարուցում (Պետություն և իրավունք, 2007, № 1 (35)): ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու: Երևան, 2014, 576 էջ:

7. **Ղամբարյան Ա.,** Անմեղության կանխավարկածը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում: Երևան, ԿԱԻՍԱ, 2005, 100 էջ:

8. **Ղամբարյան Ա.,** Որոշ նկատառումներ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային հիմնադրույթների վերաբերյալ: Օրենք և իրականություն, 2007, № 11,:

9. **Ղամբարյան Ա.,** Քրեական հետապնդման հարուցումը: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային առանձին դրույթների և քրեական դատավարության օրենսգրքի նախագծի ընդհանուր մասի տեսագործնական վերլուծություն: Երևան, Վարդհրատ, 2012:

10. **Ахпанов А.Н., Хан А.Л.** Гарантии неприкосновенности свидетеля, имеющего право на защиту // Вестник Карагандинского университета. Серия «Право». 2024. Т. 29, № 3 (115).

11. **Гамбарян А.С., Даллакян Л.Г.** Трансгрессия законодательных терминов и дефиниций в контексте отраслевой автономии // Государство и право. 2018. № 12.

12. **Еллинек Г.** Общее учение о государстве. - СПб.: Изд. Юридический центр-Пресс, 2004. 752 с.

13. **Кан М.П.** Процессуальные функции прокурора в досудебных стадиях уголовного судопроизводства: дисс. … канд. юрид. наук. - Ташкент, 1988. - 175 с.

14. **Ланг П.П.** Экзистенция правосудия: монография. - М.: Проспект, 2025. - 159 с.

15. **Ларенц К., Канарис К.-В.** Методология юриспруденции. Пер. с нем. - М.: М-Логос, 2024. - 357 с.

16. **Мажинян Дж. Р.** Презумпция невиновности и гарантии ее осуществления. – Ереван: Изд-во Ереван. ун-та. 1989. - 126 с.

17. **Строгович М.С.** Уголовное преследование в советском уголовном процессе. - М.: Изд-во Академии наук СССР, 1951. - 191 с.

18. **Фойницкий И.Я.** Курс уголовного судопроизводства. в 2-х т. Т. 2 / Общ. ред., послесл., прим.: Смирнова А.В. - СПб: Альфа, 1996. - 607 с.

19. **Хачатрян М.** Понятие «уголовного обвинения» согласно Европейской конвенции о защите прав и основных свобод человека. - Ереван, 2003. - 32 с.

20. **Чельцов М.А.** Уголовный процесс. - М.: Юрид. изд-во МЮ СССР, 1948.

21. **Чельцов-Бебутов М.А.** Курс уголовно-процессуального права. Очерки по истории суда и уголовного процесса в рабовладельческих, феодальных и буржуазных государствах: Печ. по изд. 1957 г. – СПб.: Равена; Альфа, 1995. - 846 с.

ОФИЦИАЛЬНОЕ И ФАКТИЧЕСКОЕ ВОЗБУЖДЕНИЕ УГОЛОВНОГО ПРЕСЛЕДОВАНИЯ (КОНСТИТУЦИОННЫЙ И УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНЫЙ АНАЛИЗ)

Аннотация

В данной статье всесторонне анализируется эволюция института возбуждения уголовного преследования, его теоретические основы и вопросы практической реализации. Автор разграничивает конституционное и процессуальное восприятие возбуждения уголовного преследования, детализирует концепции формального (официального) и фактического (содержательного) преследования.

Особое внимание уделяется вопросу рассмотрения задержания как акта очевидного фактического преследования и вытекающей из этого проблемы, когда при отсутствии официального возбуждения преследования в отношении задержанного лица оно на неопределенный срок остается “под подозрением”. В качестве решения этой проблемы в статье обосновывается точка зрения, что исчисление сроков уголовного преследования должно начинаться с момента фактического преследования, в частности с задержания, что обеспечит защиту прав личности и предотвратит обход положений закона о сроках уголовного преследования.

Ключевые слова: возбуждение уголовного преследования, официальное преследование, фактическое (содержательное) преследование, прокурор, очевидное фактическое уголовное преследование, неочевидное фактическое уголовное преследование, задержание, оставление под подозрением, срок уголовного преследования, начало исчисления срока.

FORMAL AND SUBSTANTIVE (DE FACTO) INITIATION OF CRIMINAL PROSECUTION (CONSTITUTIONAL AND CRIMINAL PROCEDURAL ANALYSIS)

Annotation

This article provides a comprehensive analysis of the evolution of the institution of initiating criminal prosecution, its theoretical foundations, and issues of practical implementation. The author distinguishes between the constitutional and procedural perceptions of initiating criminal prosecution, detailing the concepts of formal (official) and substantive (de facto) prosecution. Special attention is paid to the issue of considering detention as an act of overt substantive prosecution and the ensuing problem when, in the absence of official initiation

of prosecution against the detained person, they are left "under suspicion" indefinitely. As a solution to this problem, the article argues that the calculation of criminal prosecution time limits should begin from the moment of substantive prosecution, particularly from detention, which would ensure the protection of individual rights and prevent circumvention of legal provisions regarding prosecution time limits.

Keywords: initiation of criminal prosecution, formal prosecution, substantive (de facto) prosecution, prosecutor, overt substantive criminal prosecution, covert substantive criminal prosecution, detention, leaving under suspicion, criminal prosecution time limit, starting point for time limit calculation.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 26.01.2026 թ., տրվել է գրախոսության 26.01.2026 թ., ընդունվել է տպագրության 02.02.2026 թ.:

DOI: 10.59560/18291155-2026.1-40

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ, Հայաստանի եվրոպական համալսարանի հայցորդ

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՀԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվում են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների բաշխման հիմնահարցերը սահմանադրաիրավական կարգավորումների և Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի համատեքստում:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրության առարկա են դարձել պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների բաշխման հարցի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ ներկայացված տեսական մոտեցումները, ինչպես նաև Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայով սահմանված կարգավորումներն ու առանձին պետությունների սահմանադրաիրավական կարգավորումները:

Սույն հոդվածի նպատակը պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերություններում հանրային գործերի բաշխման համակարգի ուսումնասիրությունն է և այդ մարմինների միջև լիազորությունների բաշխման հիմնահարցերի վերհանումը:

Հոդվածում քննարկվում են այնպիսի հարցեր, որոնք այս կամ այն չափով իրենց արտացոլումն են ստացել տարբեր հեղինակների աշխատություններում, սակայն, դրան զուգահեռ, հոդվածի շրջանակներում անդրադարձ է կատարվում այնպիսի

հիմնահարցերի, որոնք առանձին համալիր գիտական քննարկման ու իրավական հետազոտության առարկա չեն հանդիսացել:

Կատարված իրավական վերլուծությունների հիման վրա, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև լիազորությունների բաշխման բնույթը և դրանց իրականացման սահմանները հստակեցնելու նպատակով հոդվածում հեղինակի կողմից տարբերակվում են լիազորությունների բացառիկության երկու տարբեր դրսևորումներ՝ առանձնացնելով «ինստիտուցիոնալ բացառիկությունը» և «գործառութային բացառիկությունը»:

Հիմնաբառեր. պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններ, լիազորություններ:

Ներածություն

Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների սահմանազատման խնդիրը բարդ և մինչ օրս չլուծված հարցերից մեկն է: Հանրային իշխանության այս մարմինների լիազորությունների շրջանակի սահմանազատման հետ կապված հիմնական խնդիրը պետական և տեղական գործառույթների տարանջատումն է: Այս խնդրի համակարգված լուծման բացակայությունը գործող օրենսդրության մեջ գործնականում բազմաթիվ խնդիրներ է առաջացնում և վեճերի հիմք է ստեղծում այն մասին, թե ում իրավասության ներքո է գտնվում որոշակի լիազորությունների իրականացումը[1]:

Մասնագիտական գրականության մեջ ներկայացված տեսական մոտեցումների համաձայն՝ երբեմն դժվար է տարբերակել, թե որոշակի լիազորություններ պետական, թե տեղական նշանակություն ունեն. բաժանումն ինքնին բավականին հարաբերական է[2]:

Միաժամանակ, այս առումով համաձայնելով պրոֆեսոր Ն.Ս. Տիմոֆեևի դիրքորոշման հետ՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պետական և տեղական նշանակության հարցերի տարբերակման անհնարինության ընդունումը հանգեցնում է տեղական ինքնակառավարման էության վերացմանը[3]:

[1] Տե՛ս **Сергеев А.А.** Система правовых основ местного самоуправления. - Воронеж, 1999. - С. 33:

[2] Տե՛ս **Пешин Н.Л.** Государственная власть и местное самоуправление в России: проблемы развития конституционно-правовой модели. - М.: Статут, 2007. - С. 149:

[3] Տե՛ս **Тимофеев Н.С.** Местное самоуправление в России: основы и пределы (конституционно-правовые аспекты) // Автореф. дисс. ... докт. юрид. наук. 2008. - С. 42:

Տեղական ինքնակառավարումն ունի գործունեության իր ոլորտը՝ սեփական «խաղադաշտը», որը տարբերվում է պետական կառավարման գործունեությունից: Թե՛ պետական իշխանության և թե՛ տեղական ինքնակառավարման մարմինները լուծում են հանրային գործեր, բայց ոչ նույն ծավալով և նույն սկզբունքով:

Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների հիմքում ընկած առանցքային և կարևոր սկզբունքներից մեկը սուբսիդիարության սկզբունքն է: Այս սկզբունքն իր համընդհանուր ճանաչումն է ստացել դեռևս 1931 թվականին՝ ամրագրվելով Հռոմի Պապ Պիոս XI-ի «Quadragesimo Anno» («Քառասուներորդ տարում») պապական կոնդակում, որտեղ նա, անդրադառնալով սուբսիդիարության սկզբունքին, նշել է, որ «սոցիալական իմաստության այս կարևոր սկզբունքը պետք է մնա անսասան. ինչպես հասարակությանը փոխանցելու նպատակով թույլատրելի չէ անհատներից խլել այն, ինչ վերջիններս կարող են իրականացնել իրենց սեփական ուժերով և միջոցներով, նույնքան էլ անարդարություն է և միաժամանակ լուրջ չարիք ու իրավական կարգի խախտում, երբ ավելի մեծ ու բարձր մակարդակի միավորին է վերապահվում այն, ինչ կարող են անել ավելի փոքր և ստորադաս միավորները»[1]:

Սուբսիդիարության սկզբունքի ներկայիս ընկալումը արտացոլված է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայում[2] (այսուհետ՝ Եվրոպական խարտիա), որը որպես ընդհանուր կանոն պարտադրում է լիազորությունների իրականացումը դնել քաղաքացիներին առավել մոտ կանգնած իշխանության մարմինների վրա, իսկ որևէ այլ մարմնի լիազորություն ընձեռելու դեպքում հաշվի առնել առաջադրված խնդրի ծավալն ու բնույթը, ինչպես նաև խնայողության և արդյունավետության պահանջները (4-րդ հոդված, 3-րդ մաս):

Սա պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև հանրային գործերի բաշխման և իրականացման սուբսիդիարության սկզբունքի իրավական արտահայտումն է, որը հանրային գործերը կառավարելու և կարգավորելու իրավունքը վերապահում է կառավարման տարբեր մակարդակների:

Եվրոպական խարտիան, ճանաչելով տեղական ինքնակառավարումը (3-րդ հոդված, 1-ին մաս), բացառում է պետական իշխանության մարմինների կողմից հանրային գործերի շրջանակի ամբողջական իրականացումը: Միաժամանակ, վերոնշյալ

[1] Տե՛ս **Pius XI Holy Father**. 1931. Quadragesimo Anno : Encyclical of Pope Pius XI on reconstruction of the social order to our venerable brethren, the patriarchs, primates, archbishops, bishops, and other ordinaries in peace and communion with the apostolic see, and likewise to all the faithful of the catholic world. point 79. https://www.vatican.va/content/pius-xi/en/encyclicals/documents/hf_p-xi_enc_19310515_quadragesimo-anno.html

[2] Տե՛ս Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, ընդունվել է 1985 թվականի հոկտեմբերի 15-ին, ուժի մեջ է մտել 2002 թվականի մայիսի 1-ից:

հոդվածը ոչ միայն կարևորում է, որ պետությունը չի կարող ամբողջությամբ վերցնել հանրային գործերի իրականացման պատասխանատվությունը, այլ նաև արտահայտում է այն գաղափարը, որ տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ունենան իրենց վերապահված հանրային գործերը իրականացնելու լիարժեք հնարավորություններ և իրական կարողություն:

Սուբսիդիարության սկզբունքի կիրառումը և տեղական ինքնակառավարման իրավունքի իրականացման ապահովումը ենթադրում է հանրային իշխանության մարմինների իրավասությունների սահմանազատում, այդ մարմիններին վերապահված լիազորությունների առկայություն, որոնց շրջանակը ոչ միայն փաստացի, այլև իրավական առումով պետք է լինի առանձնացված և հստակ սահմանված:

Անհրաժեշտ է նկատել, որ թեև Եվրոպական խարտիան կիրառում է «հանրային գործերի զգալի մաս» ձևակերպումը, այնուամենայնիվ, չի հստակեցնում, թե կոնկրետ որ հանրային գործերն են վերապահվում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը:

Եվրոպական խարտիայի դրույթներին ուղղված մեկնաբանություններում ընդգծվում է այն միտքը, որ դրանում հստակ ամրագրվել է այն գաղափարը, որ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը տարածվում է տեղական նշանակության հարցերի վրա, սակայն, դրանք միաժամանակ ունեն հանրային նշանակություն: Տվյալ դեպքում խոսքն այնպիսի հանրային նշանակության հարցերի մասին է, որոնք առավել արդյունավետությամբ կարող են լուծվել հենց տեղական ինքնակառավարման միջոցով[1]:

Միաժամանակ, հիշյալ փաստաթղթերում նշվում է, որ «հնարավոր չէ ճշգրիտ սահմանել, թե ինչ գործեր պետք է վերապահվեն տեղական իշխանություններին կանոնակարգելու և կառավարելու համար: (…) Անդամ պետությունների ավանդույթները տեղական իշխանությունների իրավասության մեջ գտնվող գործերի վերաբերյալ մեծապես տարբերվում են: Իրականում շատ գործեր ունեն թե՛ տեղական և թե՛ պետական նշանակություն և նրանց նկատմամբ պատասխանատվությունը կարող է տարբերվել երկրից երկիր և ըստ ժամանակի և նույնիսկ կարող է բաշխվել կառավարման տարբեր մակարդակների միջև»[2]:

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության մունիցիպալ իրավունք: Ընդհանուր խմբագրությամբ Գ. Դանիելյանի, Երևանի պետ. համալս., Հայրապետ, 2015, էջ 159:

[2] Տե՛ս CG-FORUM(2020)02-05final, Report, A contemporary commentary by the Congress on the explanatory report to the European Charter of Local Self-Government, էջ 11, https://rm.coe.int/contemporary-commentary-by-the-congress-on-the-explanatory-report-to-t/1680a06149

Բացի այդ, Եվրոպական խարտիային ուղղված մեկնաբանություններում նշվում է նաև, որ Եվրոպական խարտիան շեշտադրում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կառավարվող հանրային գործերի բաժինը պետք է «զգալի լինի», այլ ոչ թե «մնացորդային»[1]:

Վերոգրյալի համակարգային վերլուծությունից բխում է, որ Եվրոպական խարտիան չի սահմանում այն կոնկրետ հարցերի ցանկը, որոնք պետք է լուծեն տեղական ինքնակառավարման մարմինները, փոխարենը, դրանց սահմանումը թողնում է պետությունների հայեցողությանը՝ հաշվի առնելով պետական և տեղական կառավարման համակարգերի տարբերություններն ու Եվրոպական խարտիայով սահմանված պահանջները:

Սուբսիդիարության սկզբունքի բովանդակությունից ակնհայտ է դառնում, որ Եվրոպական խարտիան հանրային գործերը չի ամրագրում որպես «փակ» և անփոփոխ՝ բացառիկ հարցեր, այլ նախատեսում է լիազորությունների բաշխման ճկուն մեխանիզմ՝ շեշտը դնելով ոչ թե հարցերի լուծման կոնկրետ մակարդակին պատկանելիության վրա, այլ դրանց իրականացման արդյունավետության և նպատակահարմարության վրա:

Սակայն, ասվածն ամենևին չի ենթադրում, որ Եվրոպական խարտիան պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև լիազորությունների բաշխման հարցերի կարգավորման գործընթացում հիմնվում է «բացառիկության բացառման» գաղափարի վրա:

Տեղական նշանակության հանրային հարցերի շրջանակը հստակեցնելու տեսանկյունից էական նշանակություն ունի Եվրոպական խարտիայի 4-րդ հոդվածը: Այս հոդվածում, ի թիվս արդեն իսկ ներկայացված սուբսիդիարության սկզբունքի, ամրագրված են ուղենիշային նշանակություն ունեցող մի շարք նորմ-սկզբունքներ, որոնցով պետք է առաջնորդվեն պետությունները տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանելիս.

1) տեղական ինքնակառավարման մարմինների հիմնական լիազորությունները պետք է սահմանվեն Սահմանադրությամբ կամ օրենքով.

2) թեպետ, տեղական ինքնակառավարման մարմինների հիմնական լիազորություն-ները սահմանվում են Սահմանադրությամբ կամ օրենքով, տեղական ինքնակառավար-ման մարմիններին, օրենքին համապատասխան, որոշակի նպատակներով կարող են վե-րապահվել որոշակի լիազորություններ.

[1] Տե՛ս նույն տեղում, կետ 33:

3) օրենքով սահմանված շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմինները գործողությունների լիակատար ազատություն ունեն՝ իրականացնելու իրենց նախաձեռնությունները ցանկացած հարցի հետ կապված, որը դուրս չէ իրենց իրավասություններից և վերապահված չէ իշխանության այլ մարմնի.

4) տեղական ինքնակառավարման մարմիններին տրվող լիազորությունները պետք է լիակատար և բացառիկ լինեն: Դրանք չեն կարող վերացվել կամ սահմանափակվել իշխանության այլ (կենտրոնական կամ տարածաշրջանային) մարմնի կողմից, բացառությամբ օրենքով սահմանված շրջանակների:

Նշված կարգավորումներից պարզ է դառնում, որ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունները՝

- ներպետական իրավական համակարգում պետք է սահմանված լինեն Սահմանադրությամբ կամ օրենքներով,
- չպետք է լինեն ձևական կամ մասնակի, այլ պետք է ներառեն դրանց իրականացման համար անհրաժեշտ բաղադրիչները,
- չեն կարող կամայականորեն իրականացվել այլ մարմինների կողմից,
- չեն կարող վերացվել կամ սահմանափակվել իշխանության այլ մարմինների կողմից, բացառությամբ օրենքով սահմանված շրջանակների:

Վկայակոչված հոդվածների համակարգային վերլուծությունից բխում է նաև, որ իշխանության որևէ մարմնի գործունեություն չի կարող իրականացվել իշխանության այլ մակարդակի իրավասությունների դաշտ մտնելով, լինի դա պետական, թե տեղական ինքնակառավարման մարմին[1]: Սա ենթադրում է, որ իշխանության յուրաքանչյուր մակարդակի մարմինների լուծմանը վերապահված հարցերի շրջանակը և դրանց իրականացման նպատակով նրանց վերապահվող լիազորությունները պետք է լինեն հստակ և որոշակի:

Բարձրացված հարցերի համատեքստում կարևոր է նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից ընդունված «Տեղական և տարածքային հանրային ծառայությունների մասին» CM/Rec(2007)4 բանաձևը (այսուհետ՝ Բանաձև), որը շեշտադրում է կառավարման տարբեր մակարդակների մարմինների միջև պարտականությունների հստակ սահմանման և դերերի հավասարակշռված բաշխման ապահովման անհրաժեշտությունը: Ըստ Բանաձի՝ շահագրգիռ կողմերի

[1] Տե՛ս Ապակենտրոնացման տեսություն և տեղական ինքնակառավարում (ուսումնամեթոդական ձեռնարկ): **Կ. Ալթունյան**: Եր., ԵՊՀ հրատ., 2021, էջ 58:

համաձայնությամբ նման դերերի բաշխումը հնարավորություն կտա խուսափել ինչպես իշխանության «վակուումից», այնպես էլ լիազորությունների կրկնությունից[1]:

Բացի այդ, խնդրին բազմիցս անդրադարձել է նաև Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը՝ նշելով, որ ազգային իշխանությունները պետք է հստակեցնեն տարբեր մակարդակների մարմինների իրավասության ոլորտները և ապահովեն կենտրոնական, տարածաշրջանային և տեղական մակարդակներում լիազորությունների սահմանազատումը՝ խուսափելու համար երկիմաստությունից և պարտականությունների համընկնումից[2]:

Եվրոպական խարտիան, չսահմանելով տեղական նշանակության հանրային հարցերի կոնկրետ և սպառիչ ցանկ, անդամ երկրներին տալիս է հանրային իշխանության մարմինների լիազորությունների սահմանման հարցում իրավական կարգավորման ճկունություն: Այնուհանդերձ, նման ճկունությունը հանգեցնում է հարցի, թե ինչպես տարբեր պետություններ պետք է մեկնաբանեն և կիրառեն Եվրոպական խարտիայի սկզբունքները ազգային իրավական մակարդակում:

Քանի որ Եվրոպական խարտիան լիազորությունների սահմանման հարցում կոնկրետ սահմանադրական մոդել չի նախատեսում, տարբեր պետություններում այդ հարցը կարգավորվում է առանձին պետությունների ներպետական իրավական համակարգերի առանձնահատկություններին համապատասխան:

Պետությունների գերակշռող մասում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները և նրանց կողմից լուծվող հարցերն ամրագրված են մանրամասն ցանկի տեսքով: Դրան զուգահեռ, մի շարք երկրներ էլ ելնում են «մնացորդային» սկզբունքից, համաձայն որի՝ տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք ունեն լուծել այն հարցերը, որոնք փոխանցված չեն այլ մարմինների: Այսպես, օրինակ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենքի[3] 28-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ համայնքներին պետք է տրվի իրավունք՝ օրենքի շրջանակներում և իրենց պատասխանատվությամբ կարգավորելու տեղական համայնքի բոլոր գործերը:

[1] Տե՛ս Recommendation CM/Rec(2007)4 of the Committee of Ministers to member states on local and regional public services, adopted by the Committee of Ministers on 31 January 2007 at the 985th meeting of the Ministers' Deputies. https://rm.coe.int/cmrec-2007-4-on-local-and-regional-public-services/1680a43b5c

[2] Տե՛ս Monitoring Committee, Recurring issues based on assessments resulting from Congress monitoring and election observation missions (reference period 2010-2016), 32nd Session CG32(2017)19final, 28 March 2017. https://rm.coe.int/16806fb9a8

[3] Տե՛ս Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենք, ընդունվել է 1949 թվականի մայիսի 23-ին, https://www.gesetze-im-internet.de/englisch_gg/englisch_gg.html

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դաշնային սահմանադրական դատարանը, որոշում կայացնելով այս դրույթների մեկնաբանության վերաբերյալ, արձանագրել է, որ մունիցիպալ մարմիններին պետք է երաշխավորվի իրավունք՝ լուծելու տեղական նշանակության բոլոր այն հարցերը, որոնք օրենքով չեն փոխանցվել այլ մարմինների[1]: Գերմանիայի Դաշնային Հանրապետության առանձին երկրամասերի Սահմանադրությունները նույնպես սահմանում են այս դրույթը: Օրինակ՝ Հեսսենի երկրամասի Սահմանադրության 137-րդ հոդվածը նշում է, որ համայնքներն իրենց տարածքում և իրենց պատասխանատվությամբ իրավունք ունեն լուծելու հանրային իշխանության ցանկացած խնդիր, բացառությամբ այն դեպքերի, երբ հանրային շահերից ելնելով օրենքի հատուկ դրույթով դրա լուծումը վերապահված է այլ մարմիններին[2]:

Հարցի կարգավորման յուրահատուկ մոտեցմամբ ուշադրության է արժանի Իսպանիայի Սահմանադրությունը[3]: Այն պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև լիազորությունների բաշխման առումով ձևավորել է առանձնահատուկ մոդել՝ սահմանելով պետության և ինքնավար համայնքների բացառիկ իրավասությունները (148-րդ և 149-րդ հոդվածներ): Իսպանիայի Սահմանադրությունը սահմանում է նաև, որ յուրաքանչյուր հինգ տարին մեկ փոփոխություն կատարելով՝ ինքնավար համայնքները կարող են ընդլայնել իրենց լիազորությունները այն սահմաններում, որոնք չեն ազդում պետության բացառիկ իրավասության վրա (148-րդ հոդվածի 2-րդ մաս):

Ի տարբերություն Եվրոպական խարտիայի, համայնքի իրավասության շրջանակները նկարագրելիս Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը[4] (այսուհետ՝ Սահմանադրություն) օգտագործում է «համայնքային նշանակության հանրային հարցեր» ընդհանրական ձևակերպումը (179-րդ հոդված, 1-ին մաս):

Այսինքն, Սահմանադրությամբ տեղական ինքնակառավարումը դրսևորվում է համայնքային նշանակության հանրային հարցեր լուծելով: Քննարկվող դրույթով սահմանվել է տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության ոլորտը:

[1] Տե՛ս **Анисимов А.П.**, **Коростелева М.В.**, **Працко Г. С.** Полномочия органов местного самоуправления и особенности их реализации на уровне поселений // ЮП. 2014. №4 (65), - С. 8:

[2] Տե՛ս Հեսսենի երկրամասի Սահմանադրություն՝ ընդունված 1946 թվականի դեկտեմբերի 1-ին, https://beck-online.beck.de/Dokument?vpath=bibdata%2Fges%2Fhev%2Fcont%2Fhev.htm&anchor=Y-100-G-HEV

[3] Տե՛ս Իսպանիայի Սահմանադրություն, ընդունված 1978 թվականի դեկտեմբերի 6-ին, https://www.boe.es/buscar/act.php?id=BOE-A-1978-31229

[4] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թվականի փոփոխություններով)՝ ընդունված 06.12.2015 թ., ուժի մեջ է մտել 22.12.2015 թ., ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

Սակայն, ինչպես Եվրոպական խարտիան, այնպես էլ Սահմանադրությունը, չեն ամրագրում համայնքային նշանակության հանրային հարցերի սպառիչ ցանկ:

Սահմանադրության 179-190-րդ հոդվածներով նախատեսված են մի շարք հարցեր, որոնց կարգավորումը և կառավարումը Սահմանադրությամբ վերապահված է տեղական ինքնակառավարման մարմիններին: Դրանք առավելապես վերաբերում են համայնքային սեփականության կառավարմանը, համայնքային բյուջեի ձևավորմանը, հաստատմանը, կատարմանը, օրենքով նախատեսված սահմաններում տեղական հարկերի, տուրքերի, ինչպես նաև համայնքի մատուցած ծառայությունների համար վճարների սահմանմանը, միջհամայնքային միավորումների ստեղծմանը և այլն: Միևնույն ժամանակ, Սահմանադրության 182-րդ հոդվածը համայնքի պարտադիր խնդիրների սահմանումը թողնում է օրենքի կարգավորմանը՝ չառանձնացնելով այն հարցերի շրջանակը, որոնց լուծումը վերապահված է տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը:

Ինչպես նկատելի է, ներպետական իրավական համակարգերում պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների կարգավորման սահմանադրական մոդելները տարբերվում են:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ Եվրոպական խարտիան, չսահմանելով տեղական նշանակության հանրային հարցերի շրջանակը, հիմնվում է «բացառիկության բացառման» գաղափարի վրա՝ հանգեցնելով տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների բնույթի ու դրանց իրացման կոնկրետ հարաբերությունների շրջանակի անորոշության:

Սակայն, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների կարգավորման հիմքում ընկած միջազգային իրավական սկզբունքների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ նման եզրակացությունը հիմնավոր չէ: Անհրաժեշտ է նշել, որ Եվրոպական խարտիան մի կողմից չի հիմնվում «բացառիկության լիակատար բացառման» սկզբունքի վրա, մյուս կողմից էլ չի ամրագրում լիազորությունների «խիստ կենտրոնացված և փակ բացառիկության» մոդել: Այլ կերպ ասած՝ այն չի ընդունում «բացառիկության բացառման» մոտեցումը, բայց, միևնույն ժամանակ, չի սահմանում նաև լիազորությունների «խիստ և փակ բացառիկության» մոդել:

Վերոգրյալի համատեքստում հիմնավորված է տարբերակել լիազորությունների «ինստիտուցիոնալ բացառիկությունը» և «գործառութային բացառիկությունը». Այսպես՝

- մի կողմից անհրաժեշտ է առանձնացնել «ինստիտուցիոնալ բացառիկությունը», որի պարագայում որոշակի լիազորության իրականացումը վերապահվում է բացառապես կոնկրետ ինստիտուտի կամ մարմնի՝ պայմանավորված նրա սահմանադրաիրավական

կարգավիճակով, և այն չի կարող փոխանցվել կամ վերապահվել այլ մարմինների, անկախ այն հանգամանքից, թե որքան արդյունավետ կարող է լինել այդ լիազորության իրականացումը այլ մարմնի կողմից (օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացվում է Ազգային ժողովի կողմից, իսկ արդարադատությունը՝ միայն դատարանների կողմից և այլն).

- մյուս կողմից՝ «գործառութային բացառիկությունը», որի պարագայում լիազորության իրականացումը վերապահվում է համապատասխան մարմնին՝ ոչ թե պայմանավորված նրա ինստիտուցիոնալ կարգավիճակով, այլ՝ վերջինիս վերապահվող գործառույթի բնույթով՝ Եվրոպական խարտիայի 4-րդ հոդվածով սահմանված պահանջների պահպանմամբ, և այդ լիազորությունը չի կարող կամայականորեն իրականացվել, վերացվել կամ սահմանափակվել իշխանության այլ մարմինների կողմից, բացառությամբ օրենքով սահմանված շրջանակների:

Եվրոպական խարտիայով սահմանված կարգավորումների վերլուծությունից բխում է, որ լիազորությունների իրականացումը սկզբունքորեն չի պայմանավորվում կոնկրետ մարմնի իրավական կարգավիճակով, այլ որևէ մարմնի լիազորություն վերապահելիս հաշվի են առնվում գործառույթի բնույթն ու Եվրոպական խարտիայի 4-րդ հոդվածով սահմանված հիմնական պահանջները:

Նշվածի համատեքստում Եվրոպական խարտիայի կարգավորումների բովանդակային և համադրված վերլուծության արդյունքում պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերություններում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների «բացառիկությունը» պետք է ընկալել ոչ թե ինստիտուցիոնալ առումով լիազորությունների բացարձակ տարանջատում կամ մեկուցասում, այլ որպես օրենքով սահմանված շրջանակներում վերապահված լիազորությունների իրականացման իրավական պաշտպանության երաշխիք:

Միաժամանակ, նշված մոտեցումը չի բացառում ներպետական իրավական համակարգերում պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխհարաբերությունների և լիազորությունների իրավական կարգավորման հարցում ինստիտուցիոնալ բացառիկության առկայությունը:

Եզրակացություն

Այսպիսով, ընդհանրացնելով պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների բաշխման հիմնահարցերը սահմանադրական կարգավորումների և Եվրոպական խարտիայի համատեքստում՝ անհրաժեշտ է կատարել հետևյալ եզրահանգումները.

1) Հանրային գործերի բաշխման և իրականացման համակարգը Եվրոպական խարտիայով սահմանված կարգավորումների համատեքստում պետք է դիտարկել ոչ թե որպես ինստիտուցիոնալ մակարդակով տարանջատված բացառիկ լիազորությունների հիերարխիա, այլ որպես հանրային գործերի բազմամակարդակ կառավարման համակարգ, որտեղ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև լիազորությունների բաշխման ուղղությունը որոշվում է սուբսիդիարության սկզբունքով, իսկ գործառութային սահմանները՝ բացառիկության սկզբունքով:

2) Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև լիազորությունների բաշխման բնույթը և դրանց իրականացման սահմանները հստակեցնելու նպատակով անհրաժեշտ է տարբերակել լիազորությունների բացառիկության երկու դրսևորումներ՝ առանձնացնելով «ինստիտուցիոնալ բացառիկությունը» և «գործառութային բացառիկությունը:

3) Եվրոպական խարտիայի 4-րդ հոդվածով սահմանված դրույթների և դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված այլ կարգավորումների համադրված վերլուծության արդյունքում պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերություններում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների բացառիկությունը պետք է ընկալել ոչ թե որպես ինստիտուցիոնալ առումով լիազորությունների բացարձակ և բացառիկ պատկանելիություն, այլ որպես սուբսիդիարության սկզբունքին համապատասխան՝ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում գործառութային ինքնուրույնություն և իշխանության այլ մարմինների միջամտությունից պաշտպանվելու իրավական երաշխիք:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, Եվրոպայի խորհուրդ, Ստրասբուրգ, ընդունված 15.10.1985 թ.:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թվականի փոփոխություններով)՝ ընդունված 06.12.2015 թ., ուժի մեջ է մտել 22.12.2015 թ., ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

3. Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենք՝ ընդունված 1949 թվականի մայիսի 23-ին, https://www.gesetze-im-internet.de/englisch_gg/englisch_gg.html

4. Հեսսենի երկրամասի Սահմանադրություն՝ ընդունված 1946 թվականի դեկտեմբերի 1-ին, https://beckonline.beck.de/Dokument?vpath=bibdata%2Fges%2Fhev%2Fcont%2Fhev.htm&anchor=Y-100-G-HEV

5. Իսպանիայի Սահմանադրություն՝ ընդունված 1978 թվականի դեկտեմբերի 6-ին, https://www.boe.es/buscar/act.php?id=BOE-A-1978-31229

6. Ապակենտրոնացման տեսություն և տեղական ինքնակառավարում (ուսումնամեթոդական ձեռնարկ): **Կ. Ալթունյան**: Եր., ԵՊՀ հրատ., 2021, 160 էջ:

7. Հայաստանի Հանրապետության մունիցիպալ իրավունք: Ընդհանուր խմբագրությամբ **Գ. Դանիելյանի**: Երևանի պետ. համալս., Հայրապետ, 2015, 384 էջ:

8. **Анисимов А.П.**, **Коростелева М.В.**, **Працко Г. С.** Полномочия органов местного самоуправления и особенности их реализации на уровне поселений // ЮП. 2014. №4 (65).

9. **Пешин Н.Л.** Государственная власть и местное самоуправление в России: проблемы развития конституционно-правовой модели. - М.: Статут, 2007. - 454 с.

10. **Сергеев А.А.** Система правовых основ местного самоуправления. - Воронеж, 1999. - 174 с.

11. **Тимофеев Н.С.** Местное самоуправление в России: основы и пределы (конституционно-правовые аспекты) //Автореф. дисс. ... докт. юрид. наук. 2008. - 415 с.

12. **Pius XI Holy Father**. 1931. Quadragesimo Anno: Encyclical of Pope Pius XI on reconstruction of the social order to our venerable brethren, the patriarchs, primates, archbishops, bishops, and other ordinaries in peace and communion with the apostolic see, and likewise to all the faithful of the catholic world.

13. CG-FORUM(2020)02-05final, Report, A contemporary commentary by the Congress on the explanatory report to the European Charter of Local Self-Government https://rm.coe.int/contemporary-commentary-by-the-congress-on-the-explanatory-report-to-t/1680a06149

14. Recommendation CM/Rec(2007)4 of the Committee of Ministers to member states on local and regional public services, adopted by the Committee of Ministers on 31 January 2007 at the 985th meeting of the Ministers' Deputies. https://rm.coe.int/cmrec-2007-4-on-local-and-regional-public-services/1680a43b5c

15. Monitoring Committee, Recurring issues based on assessments resulting from Congress monitoring and election observation missions (reference period 2010-2016), 32nd Session CG32(2017)19final, 28 March 2017. https://rm.coe.int/16806fb9a8

ФУНДАМЕНТАЛЬНЫЕ ВОПРОСЫ РАСПРЕДЕЛЕНИЯ ПОЛНОМОЧИЙ МЕЖДУ ОРГАНАМИ ГОСУДАРСТВЕННОЙ ВЛАСТИ И ОРГАНАМИ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННЫХ НОРМ И ЕВРОПЕЙСКОЙ ХАРТИИ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ

Аннотация

В статье рассматриваются вопросы распределения полномочий между государственными органами и органами местного самоуправления в контексте конституционно-правовых норм и Европейской хартии местного самоуправления.

В рамках исследования предметом изучения стали теоретические подходы, представленные в профессиональной литературе по вопросу распределения полномочий между государственными органами и органами местного самоуправления, а также нормы, установленные Европейской хартией местного самоуправления, и конституционно-правовые нормы отдельных государств.

Цель данной статьи – изучение системы распределения публичных дел во взаимоотношениях между государственными органами и органами местного самоуправления и выявление проблем распределения полномочий между этими органами.

В статье рассматриваются вопросы, в той или иной степени отраженные в работах различных авторов, однако параллельно затрагиваются и вопросы, не являвшиеся предметом отдельного комплексного научного обсуждения и правового исследования.

На основе проведенного правового анализа, с целью уточнения характера распределения полномочий между государственными органами и органами местного самоуправления, а также пределов их осуществления, автор выделяет в статье два различных проявления исключительности полномочий: “институциональную исключительность” и “функциональную исключительность”.

Ключевые слова: органы государственной власти и органы местного самоуправления, полномочия.

FUNDAMENTAL ISSUES OF DISTRIBUTION OF POWERS BETWEEN STATE AUTHORITIES AND LOCAL GOVERNMENT BODIES IN THE CONTEXT OF CONSTITUTIONAL NORMS AND THE EUROPEAN CHARTER OF LOCAL SELF-GOVERNMENT

Annotation

This article examines the distribution of powers between state bodies and local governments in the context of constitutional and legal norms and the European Charter of Local Self-Government. This study examines theoretical approaches presented in the professional literature on the distribution of powers between state bodies and local governments, as well as the norms established by the European Charter of Local Self-Government and the constitutional and legal norms of individual states.

The purpose of this article is to study the system of distribution of public affairs in the relationship between state bodies and local governments and to identify problems in the distribution of powers between these bodies.

This article examines issues that have been addressed to varying degrees in the works of various authors, and also addresses issues that have not been the subject of separate, comprehensive academic discussion or legal research.

Based on the legal analysis conducted, in order to clarify the nature of the distribution of powers between state bodies and local governments, as well as the limits of their exercise, the author identifies two different manifestations of the exclusivity of powers: "institutional exclusivity" and "functional exclusivity".

Keywords: state authorities, local self-government authorities, powers.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 17.02.2026 թ., տրվել է գրախոսության 17.02.2026 թ., ընդունվել է տպագրության 17.03.2026 թ.:

DOI: 10.59560/18291155-2026.1-54

ՄԱՆՈՒԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
ՆԳՆ Կրթահամալիրի ռեկտոր,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԱՐԳԵԼՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Ամփոփագիր

Սույն հոդվածը նվիրված է իրավունքի տեսության և պրակտիկայի բարդագույն ու վիճահարույց ինստիտուտներից մեկի՝ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման իրավական բնույթի և ժամանակակից կարգավորումների համակարգային վերլուծությանը: Հետազոտության շրջանակներում հեղինակը քննարկում է իրավունքի չարաշահման և դասական իրավախախտման տարբերակման հիմնախնդիրը՝ շեշտադրելով իրավունքի իրականացման նպատակային և գործառութային կողմերը: Աշխատանքում առանձնակի ուշադրության են արժանանում սուբյեկտիվ իրավունքի չարաշահման արգելքի սահմանադրաիրավական հիմքերը և դրանց արտացոլումը ՀՀ մասնավոր ու հանրային իրավունքի առանձին ճյուղերում (քաղաքացիական, աշխատանքային, ընտանեկան և ընտրական իրավունք): Համեմատաիրավական մեթոդի կիրառմամբ վերլուծվում են այնպիսի յուրահատուկ իրավական կառուցակարգեր, ինչպիսիք են «շիկանան» և «օրենքի շրջանցումը»՝ վերջինիս որպես չարաշահման տեսակ դասակարգելու նպատակահարմարության համատեքստում: Հոդվածում հեղինակը հանգում է այն եզրակացությանը, որ իրավունքի չարաշահմանը հակազդելու արդյունավետությունը մեծապես կախված է դատական հայեցողության շրջանակներում «բարեխղճության» և «ողջամտության» սկզբունքների ճշգրիտ կիրառումից: Վերլուծվում են նաև չարաշահման համար նախատեսված իրավական հետևանքները՝ իրավունքի պաշտպանության մերժումից մինչև սուբյեկտիվ իրավունքից զրկում՝ ընդգծելով դրանց կանխարգելիչ և հավասարակշռող գործառույթը ժամանակակից իրավակարգում:

Հիմնաբառեր. սուբյեկտիվ իրավունք, իրավունքի չարաշահում, բարեխղճություն, օրենքի շրջանցում, շիկանա, իրավունքի պաշտպանության մերժում, դատական հայեցողություն

1. *Ընդհանուր դրույթներ*

Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման դեպքերի օրենսդրական ամրագրումը բարդ խնդիր է: Այն դրսևորվում է իրավունքի իրականացմամբ, և սկզբունքորեն հնարավոր չէ օրենքով նախատեսել դրանց շրջանակը, կամ դրանց տալ որոշակիության այն աստիճանը, ինչն ունենք իրավախախտումների պարագայում: Օրենսդրության մեջ կարելի է հանդիպել սուբյեկտիվ իրավունքի չարաշահման արգելքի կարգավորումների երկու իրավիճակի՝ առաջինը՝ երբ օրենսդիրն ամրագրում է իրավունքի չարաշահման ընդհանուր արգելքը (սկզբունք)՝ առանց նշելու, թե խոսքը որ իրավունքների մասին է, ինչ ձևով է դրսևորվում չարաշահումը, և երկրորդ՝ երբ օրենսդիրը հստակ ամրագրում է, թե կոնկրետ որ իրավունքները կարող են չարաշահվել, ինչ ձևով և իրավական կոնկրետ ինչ հետևանքներ են նախատեսված նշված իրավունքների չարաշահման համար: Այսինքն՝ օրենսդիրը հստակ նախատեսում է արգելված արարքի կազմը:

Ընդհանուր արգելքի ամրագրումը դրսևորվում է «չարաշահումն արգելված է», «աշխատանքային իրավունքների չարաշահումն արգելվում է» և համարժեք այլ ձևակերպումներով: Այն ունի *կանխարգելիչ գործառույթ*:

Այլ է իրավիճակը, երբ օրենսդիրն ամրագրում է չարաշահման արգելքը՝ զուգահեռ նշելով կոնկրետ իրավունքը(ները), որը կարող է չարաշահվել, չարաշահման օբյեկտիվ կողմը, նաև այն հասարակական հարաբերությունները, որոնք կարող են վնասվել չարաշահման արդյունքում: Օրինակ՝ իրավունքի չարաշահման արգելքի մասին է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետև՝ ՀՀ քր. դատ. օր.) 29-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ արգելվում է իրավունքների չարաշահումը, որը վնաս է հասցնում այլ անձանց կամ արդարադատության շահերին: Հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավունքների չարաշահում թույլ տված (…) անձի նկատմամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում կարող է կիրառվել նրա վարքագծին համաչափ դատավարական սանկցիա, եթե այն չկիրառելը կարող է վտանգել վարույթի բնականոն ընթացքը: ՀՀ քր. դատ. օրի 141-րդ հոդվածի համակարգային վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ եթե վարույթի մասնակիցը կամ այլ անձն իր իրավունքները չարաշահելու միջոցով խոչընդոտում է վարույթի բնականոն ընթացքը, դատարանը կարող է կիրառել բացառապես

«իրավունքի իրականացման սահմանափակում» դատավարական սանկցիան[1]: Կարծում ենք՝ այս դեպքերում խոսքը ոչ թե սուբյեկտիվ իրավունքի չարաշահման, այլ դատավարական խախտման մասին է, որի դեպքում խախտվում է կոնկրետ իրավական արգելքը: Օրինակ՝ եթե փորձենք նշված նորմերից վեր հանել դատավարական խախտման կազմ, ապա կարող ենք ունենալ հետևյալ իրավիճակը՝ վկայի կողմից միջնորդություն հարուցելու իրավունքը պարբերաբար չարաշահելը, որն ուղղված է այլ անձանց կամ արդարադատության շահերը վնասելուն (փաստակազմ), ենթակա է իրավունքի իրականացման սահմանափակման ձևով դատավարական սանկցիայի (իրավական հետևանք)[2]: Ըստ էության՝ նման իրավիճակների համար օրենսդրությամբ կարող է սահմանվել նաև տուգանքի ձևով դատավարական սանկցիա[3]: Դատավարական իրավունքների չարաշահման համար տուգանքի ձևով սանկցիաներ են նախատեսված Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Բելգիայում, Իտալիայում[4]:

Հարց է առաջանում՝ հնարավո՞ր է արդյոք ՀՀ քր. դատ. օր-ում գտնել որևէ սուբյեկտիվ իրավունք, որը նախատեսված չէ 143-րդ հոդվածի 2-րդ մասում, և որի չարամիտ իրականացումը կարող է խոչընդոտել վարույթի բնականոն ընթացքը: Օրինակ՝ երբ մեղադրյալն օգտվում է իր՝ ՀՀ քր. դատ. օր-ի 43-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված իրավունքից (մեղադրյալն իրավունք ունի (...) իր ընտրությամբ հրավիրելու բժիշկ և անարգել հաղորդակցվելու նրա հետ՝ առանց տեսողական կամ լսողական վերահսկման), սակայն դա իրականացնում է ոչ թե բժշկի խորհուրդները լսելու, այլ գործընթացները ձգձգելու նպատակով: Առնվազն այն տեսանկյունից, որ նշված իրավունքը նախատեսված չէ 143-րդ հոդվածի 2-րդ մասում, և մեղադրյալը չի խախտում կոնկրետ արգելքը, այլ իր սուբյեկտիվ իրավունքն իրականացնում է դրա գործառույթին հակառակ,

[1] ՀՀ քր. դատ. օր-ի 143-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավունքի իրականացման սահմանափակում դատավարական սանկցիան կարող է կիրառվել միայն որոշակի խումբ դատավարական իրավունքների պարբերաբար չարաշահելու դեպքում: Դրանք են՝ միջնորդություն հարուցելը, բացարկ հայտնելը, վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար ապացույցներ ներկայացնելը, վարույթի նյութերին ծանոթանալը և դրանցից ցանկացած տեղեկություն դուրս գրելը, բացման խոսքով, եզրափակիչ ելույթով կամ եզրափակիչ հայտարարությամբ հանդես գալը, պաշտպանից հրաժարվելը, պաշտպանի լիազորությունները դադարեցնելը:

[2] Նույն իրավիճակը կարող է լինել ՀՀ քր. դատ. օր-ի 143-րդ հոդվածի 2-րդ մասի 1-7-րդ կետերով նախատեսված իրավունքները պարբերաբար չարաշահելու դեպքերում:

[3] Դատավարական իրավունքների չարաշահման դեպքում տուգանքների ձևով իրավական հետևանքների առաջացման հնարավորության մասին նշվում է նաև Եվրոպական դատարանի դիրքորոշման շրջանակներում: Մանրամասն տե՛ս *«Шрайбер и Бетч против Франции [Schreiber and Boetsch – France]»* № 58751/00// Бюллетень Европейского суда по правам человека. Российское издание. 2004. № 4.

[4] **Шебанова Н.А.** Злоупотребление процессуальными правами // Арбитражная практика. 2002. №5 (14). - С.51.

թույլ է տալիս խոսել ոչ թե *դատավարական խախտման*, այլ *սուբյեկտիվ իրավունքի չարաշահման* մասին:

Մեկ այլ օրինակ մասնավոր իրավունքից: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քաղ. օր.) «Քաղաքացիների իրավունքների իրականացման սահմանները» վերտառությամբ 12-րդ հոդվածի համաձայն՝ «Քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողությունները, որոնք իրականացվում են բացառապես այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ, ինչպես նաև իրավունքն այլ ձևով չարաշահելը չի թույլատրվում: Մրցակցության սահմանափակման նպատակներով քաղաքացիական իրավունքներն օգտագործել, ինչպես նաև շուկայում գերիշխող դրությունը չարաշահել չի թույլատրվում»: Հոդվածի 2-րդ մասը սահմանում է նմանատիպ իրավիճակներում սուբյեկտիվ իրավունքը չարաշահողի՝ իրավունքի պաշտպանության մեջ մերժելու դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի դիսկրեցիոն (հայեցողական) լիազորությունը:

Արդեն նշված դիրքորոշման շրջանակներում կարելի է ընդգծել, որ ՀՀ քաղ. օր-ի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության դեպքում խոսքն իրավունքի չարաշահման ձևով իրավախախտման մասին է: Այսպես՝ մրցակցության սահմանափակման նպատակներով քաղաքացիական իրավունքներն օգտագործելը կամ շուկայում գերիշխող դրությունը չարաշահելը, որոնք օրենքի ուժով արգելված են (փաստակազմեր), կարող են առաջացնել դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի կողմից անձին՝ նրան պատկանող իրավունքի պաշտպանության հարցում մերժման ձևով իրավական հետևանք: Այստեղ մենք ունենք կոնկրետ արգելված արարքի ամբողջական կազմ: Իսկ ՀՀ քաղ. օր-ի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասության դեպքում տեքստուալ իմաստով անորոշ է արարքի կազմը: Այստեղ գործ ունենք իրավունքի չարաշահման ընդհանուր արգելքի հետ: Անորոշ է, թե ինչ պետք է հասկանալ «քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողությունները» կամ «իրավունքն այլ ձևով չարաշահելը» հասկացությունների տակ: Որոշակիության տեսանկյունից նույն խնդիրն ունենք ՀՀ աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ աշխ. օր.) 37-րդ հոդվածի պարագայում:

Այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ գործ ունենք սկզբունքի մակարդակով սուբյեկտիվ իրավունքի չարաշահման ընդհանուր արգելքի հետ, և օրենքում բացակայում է կոնկրետ արարքի նկարագրությունը (փաստակազմ), որի հետ հնարավոր կլիներ համապատասխանեցնել կատարված արարքը, ապա պետք է խոսել սուբյեկտիվ իրավունքի չարաշահման՝ նպատակին հակառակ սուբյեկտիվ իրավունքի իրականացման մասին: Իսկ այն դեպքերում, երբ օրենքի տեքստում թեև օգտագործվում է չարաշահում հասկացությունը, սակայն առկա է կոնկրետ արարքի նկարագրությունը, և անձը կարող է խախտել

օրենքով նախատեսված կոնկրետ արգելքը, պետք է խոսել իրավունքի չարաշահման ձևով իրավախախտման մասին:

2. Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման արգելքի հիմնահարցը սահմանադրական իրավունքում

Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման դեմ պայքարի մեխանիզմների մշակումը նաև սահմանադրական պահանջ է: Մասնավորաբար, նման մոտեցման համար կարող է հիմք հանդիսանալ ՀՀ Սահմանադրության 77-րդ հոդվածը: Սահմանադրի մոտեցումն այնպիսի է, որ ոչ թե նշվում են կոնկրետ իրավունքները, որոնք կարող են չարաշահվել, այլ այն հարաբերությունները, որոնք կարող են վնասվել չարաշահման արդյունքում (սահմանադրական կարգը, ազգային, ռասայական, կրոնական հարաբերությունների ոլորտը, ինչպես նաև իրավունքների այնպիսի օգտագործում, որոնք կարող են բռնություն կամ պատերազմ քարոզելու ձևով դրսևորվել): Նորմի բովանդակությունը նեղ է և չի վերաբերում իրավունքի չարաշահման արգելքին առհասարակ: Ավելին, օրենսդրության համակարգային վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ այդ հարաբերությունների դեմ ոտնձգություններն օրենսդիրն արդեն որակել է որպես իրավախախտումներ (հանցագործություն)[1]: Նման արարքները, անշուշտ, որևէ աղերս չունեն սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հետ:

Քննարկվող հիմնահարցի համատեքստում սահմանադրական մակարդակում կարևորվում է ՀՀ Սահմանադրության «Մարդու ազատ գործելու իրավունքը» վերտառությամբ 39-րդ հոդվածը, համաձայն որի՝ մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին:

Գ. Դանիելյանը նշում է, որ իրավունքի չարաշահման էությունն առավել ամբողջական բացահայտված է Սահմանադրության 39-րդ հոդվածով, թեպետ դրանում ուղղակի ակնարկ անգամ չկա բուն չարաշահման մասին[2]:

ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածը կարելի է բաժանել երկու մասի՝ բուն հիմնական իրավունք («մարդն ազատ է անելու այն ամենը») և հիմնական իրավունքի սահմանափակման հիմքեր («չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադ-

[1] Մասնավորապես, ՀՀ քր. օր-ը նախատեսում է այնպիսի հանցատեսակներ, ինչպիսիք են՝ **ագրեսիա իրականացնելու ուղղակի և հրապարակային կոչերը** (հոդված 151), **ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաև այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը** (հոդված 329**), սահմանադրական կարգը տապալելը** (հոդված 420), **իշխանությունը զավթելուն, տարածքային ամբողջականությունը խախտելուն կամ սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչերը** (հոդված 422):

[2] **Դանիելյան Գ.,** Իրավունքի չարաշահումը : Բանբեր Երևանի համալսարանի: 2021, № 2, էջեր 7-9:

րությանը և օրենքներին»): Ազատ գործելու իրավունքով անձը հանրային իշխանությունից պաշտպանում է ոչ թե կյանքի կոնկրետ ոլորտը (ինչպես ազատության կոնկրետ իրավունքների պարագայում է), այլ վարքագծի ընդհանուր ազատությունը: Այսպիսով՝ հիմնական իրավունքի բուն գործառույթը հանրային իշխանությունից պաշտպանվելն է և ուղիղ չի կարող վերաբերել սուբյեկտիվ իրավունքի չարաշահման արգելքին: Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման արգելքի հետ կապը կարելի է փնտրել նշված հիմնական իրավունքի սահմանափակման հիմքերի մեջ: Խնդիրն այն է, որ, ամեն դեպքում, օրենսդիրն այլոց իրավունքների պաշտպանության նպատակով պարտավոր է սահմանել ազատ գործելու իրավունքի սահմանափակումները՝ համաչափորեն հավասարակշռելով սուբյեկտիվ իրավունքների միջև կոնֆլիկտը: Ճի՛շտ է, նորմի սահմանափակման հիմքերին վերաբերող հատվածում օգտագործվում է «խախտում» հասկացությունը, սակայն կարծում ենք, որ սահմանադրական իմաստով «խախտում» տերմինը պետք է մեկնաբանել լայն, որի տակ առնվազն կարելի է հասկանալ օրենքով նաև սուբյեկտիվ իրավունքի չարաշահման ընդհանուր արգելքի վերաբերյալ կարգավորումներ նախատեսելու պահանջը:

Պետք է արձանագրել, որ բավականին քիչ են այն պետությունները, որոնց հիմնական օրենքները սահմանում են սուբյեկտիվ իրավունքի չարաշահման, մասնավորապես՝ դրա ընդհանուր արգելքի վերաբերյալ լուծումներ:

Այսպես, Բուլղարիայի Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

> «Իրավունքները չպետք է չարաշահվեն, դրանք չպետք է իրականացվեն ի վնաս այլոց իրավունքների և օրինական շահերի»[1]:

Համարժեք կարգավորում առկա է նաև Հունաստանի սահմանադրության 25-րդ հոդվածում[2]: Ճապոնիայի Սահմանադրության 12-րդ հոդվածի համաձայն՝

> «(…) Ժողովուրդը պետք է ձեռնպահ մնա իր իրավունքների և ազատությունների որևէ չարաշահումից և կրում է մշտական պատասխանատվություն՝ դրանք հանրային բարեկեցության շահերի դեմ օգտագործման համար (…)»[3]:

Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման արգելքի վերաբերյալ լուծումներ են առկա նաև Գերմանիայի սահմանադրության մեջ: Այսպես, 18-րդ հոդվածի իմաստով՝ յուրաքանչյուրի կողմից կարծիքի ազատության (հավաքների ազատություն, դասավանդման

[1] https://www.parliament.bg/en/const (վերջին մուտքը՝ 29.12.2023):
[2] https://ecnl.org/sites/default/files/files/2021/GreeceConstitution.pdf (վերջին մուտքը՝ 29.12.2023):
[3] http://surl.li/otbur (վերջին մուտքը՝ 29.12.2023):

ազատությունը գրագրության, նամակագրության, հեռահաղորդակցության գաղտնիությունը և այլն) օգտագործումն ազատ, ժողովրդավարական կարգերի դեմ պայքարի նպատակով չարաշահում է, և անձը զրկվում է այդ հիմնական իրավունքից: Զրկման փաստը հաստատվում է և ծավալները որոշվում են Ֆեդերալ սահմանադրական դատարանի կողմից:

Առանձին պետություններում սահմանադրական մակարդակով թեև բացակայում են ուղղակի կարգավորումներ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման անթույլատրելիության մասին, սակայն նման վարքագծի արգելքի վերաբերյալ ընդհանուր լուծումները շարադրված են «բարեխիղճ», «ողջամիտ», «գիտակից վարք», «արդարություն» ձևակերպումներով:

Այսպես, «Իրավունքների և ազատությունների կանադական խարտիայի» (1982 թվականի Սահմանադրական ակտի 1-ին մաս. «Canadian Charter of Rights and Freedoms», «Charte canadienne des droits et libertés») «Իրավունքների և ազատությունների երաշխիքները» վերտառությամբ 1-ին հոդվածի համաձայն՝

> «Իրավունքների և ազատությունների կանադական խարտիան երաշխավորում է դրանում թվարկված իրավունքների և ազատությունների այնպիսի ողջամիտ և օրենքով նախատեսված սահմաններում իրականացում, որոնք կարող են համոզիչ, հիմնավորված լինել ազատ, ժողովրդավարական հասարակությունում»[1]:

Նշված կարգավորման և սուբյեկտիվ իրավունքի չարաշահման արգելքի միջև կապի մասին է վկայում նաև Կանադայի դատական պրակտիկան: Հատկանշական է, որ Կանադայի Գերագույն Դատարանն իր որոշումներում, համակարգելով իրավունքի չարաշահման հակազդման դոկտրինը, իրավունքների իրականացման խելամտության տակ հասկանում է հասարակության կողմից ընդունված նպատակահարմարությունը, որն իր հերթին անձանց իրավունքների և հասարակության հետաքրքրությունների հավասարակշռման չափանիշ է[2]:

Մեկ այլ որոշման շրջանակներում Կանադայի Գերագույն Դատարանը նշում է, որ դատարաններն էական դերակատարում պետք է ունենան դատավարական իրավունքների չարաշահման դեմ պայքարում: Այդ համատեքստում Դատարանը նշում է, որ չարաշահում պետք է որակել այնպիսի իրավիճակները, որի պայմաններում դատավարության

[1] https://publications.gc.ca/collections/collection_2017/pch/CH37-4-1-2005-rus.pdf (վերջին մուտքը՝ 31.12.2023):

[2] *Canada (Attorney General) v. Bedford /* Supreme Court Judgments, Neutral citation 2013 SCC 72 / Case number 34788. https://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/13389/index.do (վերջին մուտքը՝ 31.12.2023):

մյուս կողմը հայտնվում է ակնհայտ անարդար վիճակում, կամ որևէ կերպ կասկածի տակ է դրվում արդարադատության իրականացումը[1]: Հատկանշական է, որ սուբյեկտիվ իրավունքի նպատակային իրականացման անհրաժեշտության տեսանկյունից Կանադայի Գերագույն Դատարանը ելակետային է համարում նաև բարեխղճության ընդհանուր սկզբունքի դերակատարությունը՝ կարևորելով իրավահարաբերության կողմերի միջև խելամիտ, բարեխիղճ ակնկալիքները: Դատարանն ընդգծում է, որ կողմերը պետք է խուսափեն միմյանց խաբելուց, նաև այնպիսի վարքագծից, որը միմյանց կդնի շփոթմունքի մեջ[2]: Կարևոր է հատկապես այն, որ չարաշահման դեմ պայքարի գործում էական դերակատարում է տրված Դատական համակարգին, և որ իրավունքի չարաշահումը դիտարկվում է որպես նեգատիվ, արդարադատության իրականացմանը խոչընդոտող երևույթ:

Կանադայի Գերագույն Դատարանը, զարգացնելով սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հիմնահարցի և դրա դեմ պայքարի վերաբերյալ իր պրակտիկան, նշում է, որ սուբյեկտիվ իրավունքի չարաշահումը չի կարող համարվել իրավախախտման հատուկ տեսակ (…), այն այնպիսի գործողությունների տեսակ է, որի դեպքում չարաշահվում է իրավական ազատությունը, արարքները իրականացվում են «չար» նպատակով՝ հակառակ այդ իրավունքի նշանակությանը և նրա ոգուն: Դատարանն ավելացնում է, որ այս տեսանկյունից չարաշահման հակազդման դոկտրինը պետք է լինի ճկուն, որպեսզի արդարադատության իրականացումը չդրվի կասկածի տակ[3]:

Մեթոդաբանական տեսանկյունից ճիշտ ենք համարում այն մոտեցումը, որ չարաշահման արգելքի պատասխանները պետք է փնտրել առաջին հերթին սահմանադրություններում, որտեղ որոշակիացված են անհատի, հասարակություն և պետություն հարաբերությունները, այդպիսի հարաբերությունների հավասարակշռվածության մասշտաբը, մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման սահմանները, իրավական պետության գաղափարը, ժողովրդավարական կարգերը, հանրային բարեկեցությունը: Եթե գործ ենք ունենում սուբյեկտիվ իրավունքի չարաշահման դեպքերի հետ, ա-

[1] *Toronto (City) v. C.U.P.E.,* Local 79 / Supreme Court Judgments, Neutral citation 2003 SCC 63 / Case number 28840. https://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/2097/index.do (վերջին մուտքը՝ 31.12.2023):

[2] *Bhasin v. Hrynew* / Supreme Court Judgments, Neutral citation 2014 SCC 71 / Case number 35380. https://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/14438/index.do (31.12.2023). Մանրամասն տե՛ս նաև՝ **Кабышев С.В.** Доктрина противодействия злоупотреблению правом в Канаде / противодействия злоупотреблению правом: теория, практика, техника: сборник статей по материалам Международной-практической конференции (Нижний Новгород, 23-24 мая 2019) / под ред. В.А. Толстика, В.М. Баранова, П.В. Васильева. – Н. Новгород: Нижегородская академия МВД. России, 2019. - С. 209-210.

[3] *Behn v. Moulton Contracting Ltd. /* Supreme Court Judgments, Neutral citation 2013 SCC 26 / Case number 34404. https://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/13038/index.do (վերջին մուտքը՝ 31.12.2023):

պա խարխլվում է նաև նշված շահերի միջև սահմանադրական բալանսը: Այս տեսանկյունից պետք է համաձայնել այն տեսակետի հետ, որ իրավունքի չարաշահման արգելքը սահմանադրական իրավունքի և առհասարակ իրավունքի ընդհանուր սկզբունք է[1]:

3. Հիմնահարցի օրենսդրական կարգավորումների համեմատական վերլուծություն

3.1. Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման ընդհանուր արգելքի վերաբերյալ կարգավորումների համեմատական վերլուծություն: Որքան էլ փորձենք խոսել սուբյեկտիվ իրավունքի չարաշահման՝ որպես իրավունքի ընդհանուր տեսական ֆենոմենի մասին, այն հանգամանքը, որ վերջինիս արմատները գալիս են մասնավոր հարաբերություններից, կասկածից վեր է: Հետագայում այն ընդունվել և զարգացել է իրավունքի այլ ճյուղերում:

Ինչ վերաբերում է ազգային օրենսդրությանը, ապա մասնավոր իրավունքի մակարդակում ևս առկա է սուբյեկտիվ իրավունքի չարաշահման ընդհանուր արգելքին վերաբերող կարգավորում:

ՀՀ քաղ. օր-ի «Քաղաքացիների իրավունքների իրականացման սահմանները» վերտառությամբ 12-րդ հոդվածի համաձայն՝

> «Քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողությունները, որոնք իրականացվում են բացառապես այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ, ինչպես նաև իրավունքն այլ ձևով չարաշահելը չի թույլատրվում: Մրցակցության սահմանափակման նպատակներով քաղաքացիական իրավունքներն օգտագործել, ինչպես նաև շուկայում գերիշխող դրությունը չարաշահել չի թույլատրվում»:

Ավելին, նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է նմանատիպ իրավիճակներում սուբյեկտիվ իրավունքը չարաշահողի՝ իրավունքի պաշտպանության մեջ մերժելու դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի դիսկրեցիոն (հայեցողական) լիազորությունը:

Այն տեսակետը, որ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման մասին կարելի է խոսել սուբյեկտիվ իրավունքի իրականացման համատեքստում (թեկուզ և ոչ նպատակային), կասկած չի հարուցում: Այս տեսանկյունից ինստիտուտը ճիշտ է դիտարկել իրավունքի կենսագործման ձևերի լույսի ներքո: Խոսքն այս պարագայում կարող է վերաբերել իրավունքի օգտագործմանը (իրականացմանը), երբ անձն օգտվում է իր սուբյեկտիվ իրա-

[1] **Василевич Г.А., Василевич С.Г.** Злоупотребление правом - правомерное поведение или правонарушение? // Экономика. право. общество. 2018, № (1). - С. 20.

վունքից[1]: Սակայն այն հանգամանքը, որ այդ օգտագործումը դրսևորվում է ոչ նպատակային իրականացմամբ, նաև ստիպում է մեզ խոսել իրավունքի կենսագործումից դուրս ֆենոմենի մասին, քանզի չի կարող, օրինակ, սուբյեկտիվ իրավունքի ոչ նպատակային իրականացումը համարվել իրավունքի կենսագործում: Այստեղ անհրաժեշտ է խոսել իրավունքի կողմից գնահատվող յուրահատուկ վարքագծի (ինստիտուտի) մասին:

Վերադառնալով ՀՀ քաղ. օր-ի նշված հոդվածի ընթերցմանը՝ պետք է նշել, որ այն լավագույնը հուսալու հնարավորություն չի ընձեռում ոլորտում սուբյեկտիվ իրավունքի չարաշահման և դրա արգելքի վերաբերյալ իրավակարգավորումներն ամբողջական համարելու համար:

Պայմանականորեն կարող ենք նշել, որ օրենսդիրը փորձել է առանձնացնել՝ (1) մեկ սուբյեկտիվ իրավունքի ոչ նպատակային իրականացման (չարաշահման) ինքնուրույն ձև՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց **այն գործողությունները**, որոնք իրականացվում են բացառապես այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ, և (2) մեկ հավաքական ձև՝ **իրավունքն այլ ձևով չարաշահելը:**

Նախ՝ պետք է նշել, որ չարաշահման ինքնուրույն ձևը բնութագրելիս օրենսդրի կողմից օգտագործվող «**այն գործողությունները**» ձևակերպման տակ պետք է հասկանալ սուբյեկտիվ իրավունքի իրականացումը: Արարքը չարաշահում որակելու համար անձի մոտ նաև պետք է առկա լինի **բացառապես այլ անձանց վնաս պատճառելու մտադրություն**:

Չարաշահման հավաքական ձևը բնութագրելիս օգտագործվող «**ինչպես նաև իրավունքն այլ ձևով չարաշահելը**» ձևակերպումն առնվազն հնարավորություն է տալիս արձանագրելու, որ օրենսդիրը նախապես խոսել է սուբյեկտիվ իրավունքի չարաշահման ինչ-որ ձևի մասին: Երբ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման 2 ձևերը համադրում ենք, հարց է առաջանում՝ 2-րդ կիսանախադասությունում առկա **«այլ ձևեր»** ձևակերպումն իմաստային ինչպիսի՞ բեռ ունի. մասնավորապես՝ 1-ին մոդելի հետ համադրության պարագայում քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց իրավունքները չարաշահում են **«գործողությա՞մբ»**, թե՞ «**այլ ձևեր**» հասկացությունը պետք է կապել «**այլ անձի վնաս պատճառելու մտադրություն**» հասկացության հետ: Հոդվածում առկա այս ներքին անորոշությունը բարդացնում է սուբյեկտիվ իրավունքի չարաշահման դրսևորումների որակումը: Այսինքն՝ անհասկանալի է՝ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման «այլ ձևերը» պետք է դրսևորվեն գործողությա՞մբ (իրավունքն իրականացվի ակտիվ ձևով)՝ հաշվի առնելով «ձև» հասկացության լեզվական նշանակությունը, թե՞ կարևոր է նաև այլ ան-

[1] Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ / Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան. 4 -րդ լրամշակված հրատ.: Եր., «Լուսաբաց հրատարակչատուն», 2023. Էջեր 338-339:

ձանց վնաս պատճառելու մտադրությունը, թե՝ երկուսը միասին: Կարծում ենք՝ առնվազն պոզիտիվ իրավունքի մակարդակում իրավունքն այլ ձևերով չարաշահելու էությունը հասկանալու համար էական է լինելու «սուբյեկտիվ իրավունքի իրականացում» և «այլ անձանց վնաս պատճառելու մտադրություն» փաստակազմերի գնահատումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայրենական քաղաքացիական օրենսդրությունն իր վրա կրում է ռուսական ոլորտային օրենսդրության, իսկ վերջինս էլ՝ գերմանական քաղաքացիական օրենսդրության կնիքը[1]՝ կարելի է պնդել, որ ՀՀ քաղ. օր-ի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կիսանախադասությունը (Քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողությունները, որոնք իրականացվում են բացառապես այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ) վերաբերում է շիկանայի ինստիտուտին: Եթե վերացարկվում ենք ՀՀ քաղ. օր-ի 12-րդ հոդվածով նախատեսված շիկանայի վերաբերյալ կարգավորումից, դժվար է ասել, թե սուբյեկտիվ իրավունքի չարաշահման այլ դեպքերում ինչ հատկանիշների հիման վրա պետք է իրավակիրառն արարքը որակի որպես այդպիսին: Հոդվածի բովանդակությունը հնարավորություն չի ընձեռում գոնե ընդհանուր գծերով որոշակիացնել սուբյեկտիվ իրավունքի չարաշահման ինստիտուտը: Խնդրի մի փոքր այլ տրամաբանությամբ անդրադարձ է կատարվել նաև հայրենական իրավաբանական գրականության մեջ[2]: Նման պայմաններում էական է լինելու հատկապես դատական պրակտիկան:

Ի տարբերություն ՀՀ–ի՝ ՌԴ-ն վերանայել է հիմնահարցի վերաբերյալ պոզիտիվ կարգավորումների ծավալը: Հատկանշական է, որ փոփոխությունների արդյունքում ՌԴ քաղ. օր-ի «Քաղաքացիական օրենսդրության հիմունքները» վերտառությամբ 1-ին հոդվածում, որպես ինքնուրույն սկզբունք, նախատեսվել է քաղաքացիական շրջանառության մասնակիցների բարեխղճությունը: Մինչ այդ բարեխղճության վերաբերյալ կանոնների կարելի էր հանդիպել ՌԴ քաղաքացիական օրենսգրքի առանձին հոդվածներում[3]: Չնայած բարեխղճության վերաբերյալ կարգավորումներին՝ ՌԴ քաղաքացիական օրենսդրու-

[1] **Доманжо В.** Ответственность за вред, причиненный путем злоупотребления правом. Ученые записки Казанского университета. - Казань, 1913. Т. 80, кн. 5. - С. 5.

[2] **Թորոսյան Գ., Թորոսյան Ս.,** Իրավունքի չարաշահում: Եր., «Հայրապետ» հրատ., 2019, էջ 68:

[3] "Гражданский кодекс Российской Федерации. Часть первая. Постатейный комментарий" Авторы: С.П. Гришаев, Т.В. Богачева, Ю.П. Свит, 2019 год, https://rulaws.ru/gk-rf-chast-1/Razdel-I/Glava-2/Statya-10/ (վերջին մուտքը՝ 04.01.2024): Օրինակ՝ ՌԴ քաղ. օր. 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կողմերի իրավունքները և պարտականությունները որոշակիացման պարագայում պետք է ելնել նաև բարեխղճության, բանականության և արդարության պահանջներից: Քաղաքացիական շրջանառության մասնակիցների բարեխղճության սկզբունքի համաձայն՝ (…) քաղաքացիական իրավունքների իրականացման ժամանակ քաղաքացիական իրավահարաբերության մասնակիցները պետք է գործեն բարեխղճորեն: Իսկ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ ոչ ոք իրավունք չունի ստանալ առավելություն (…) իր անբարեխիղճ վարքագծից:

թյունը չի տալիս բարեխղճության լեգալ բնորոշումը, որը գտնվում է դատարանի հայեցողության տիրույթում: Այստեղ կիրառելի է ՌԴ քաղ. օր-ի 10-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորումը՝ համաձայն որի քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների բարեխղճությունը և գործողությունների ողջամտությունը ենթադրվում է (բարեխղճության և գործողությունների ողջամտության կանխավարկած):

Իրավաբանական գրականության մեջ ընդգծվում է, որ դժվար թե հնարավոր լինի տալ բարեխղճության բնորոշումը: Սակայն պետք է ընդունել այն իրողությունը, որ եթե չարաշահումն օրենսդրի կողմից դիտարկվել է որպես իրավատիրոջ ակնհայտ անբարեխիղճ վարքագիծ, ապա բարեխղճության հնարավոր ծավալների որոշակիացումն այլընտրանք չունի: Ենթադրվում է, որ իրավահարաբերության մասնակիցը բարեխիղճ է, եթե իր իրավունքն իրականացնելիս նպատակ չունի վնասել այլ շահերի[1]:

ՌԴ քաղաքացիական օրենսդրության մեջ բարեխղճության սկզբունքի ամրագրումը նպատակ է հետապնդել որոշակիացնել սուբյեկտիվ իրավունքի չարաշահման էությունն ու տեսակները և ուղղված է քաղաքացիաիրավական հարաբերությունների բարոյական հիմքերի ամրապնդմանը: Տեսակետն արտացոլված է հատկապես ՌԴ քաղ. օր-ում փոփոխությունները և լրացումները կատարելու մասին օրենքի նախագծի տեղեկանք-հիմնավորման մեջ: Փաստաթղթում ասվում է, որ (…) բարեխղճության վերաբերյալ կանոնի ամրագրումը (…) թույլ կտա քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման համար սահմանելու վարքագծի կարևոր ուղենիշեր:

Ինչպես նշվել է, ՀՀ քաղ. օր-ը (հոդված 12, մաս 1) և ՌԴ քաղ. օր-ը (հոդված 10, մաս 1) ունեն կարգավորումներ, որոնք վերաբերում են շիկանայի ինստիտուտին: Ի տարբերություն սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հնարավոր այլ դեպքերի՝ այս պարագայում չարաշահողի դիտավորությունն ուղղված է այլ անձին վնաս պատճառելուն: Վնասի ինստիտուտի գործոնը հաշվի առնելով՝ շիկանան անհրաժեշտ է տարբերակել վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններից (դելիկտային հարաբերություններ): Գլխավոր տարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ շիկանայի դեպքում անձն օգտագործում է իր սուբյեկտիվ իրավունքը, իսկ դելիկտային պարտավորություն առաջանում է, երբ վնաս պատճառողն ու տուժողը պայմանագրային հարաբերություններով կապված չեն լինում: Հնարավոր է, որ վնաս պատճառողն ու տուժողը լինեն պայմանագրային հարաբերությունների մեջ, սակայն վնասը պատճառվի պայմանագրային պարտավորությունների հետ կապ չունեցող գործողությունների հետևանքով: Դելիկտային հարաբերություններում իրավախախտի կողմից կատարված արարքը նրա սուբյեկտիվ իրավունքից չի բխում, իսկ շիկանայի դեպքում, ինչպես նշել ենք, սուբյեկտիվ

[1] **Емельянов В.И.** Юридическая сущность доброй совести // ЭЖ-Юрист. 2002. № 18. - С. 18.

իրավունքն է այն միջոցը, որի իրականացման արդյունքում հնարավոր է վնաս հասցնել: Դելիկտային իրավահարաբերություններում վնասն սկզբունքորեն պետք է առկա լինի, իսկ շիկանայի դեպքում՝ բավարար է վնաս հասցնելու մտադրությունը[1]:

Գնահատելով սուբյեկտիվ իրավունքի չարաշահման և դրա արգելքի վերաբերյալ ՀՀ քաղ. օր-ի 12-րդ հոդվածի բովանդակությունը և այն համադրելով ՌԴ քաղ. օր-ի վերաբերելի հոդվածների հետ՝ պետք է արձանագրել, որ հիմնահարցին վերաբերելի հայրենական քաղաքացիական օրենսդրությունը, ավելի ճիշտ՝ եզակի կարգավորումները, ընդհանուր առմամբ, ի վիճակի չեն արդյունավետ պայքարել չարաշահումների դեմ:

3. 2. Սուբյեկտիվ իրավունքի չարաշահում և «օրենքի շրջանցում»: ՌԴ քաղաքացիական օրենսդրության նոր մոտեցումներից է այսպես կոչված «օրենքի շրջանցումը» որպես սուբյեկտիվ իրավունքի չարաշահման ինքնուրույն տեսակ դիտարկելը: Օրենքում բացահայտված չէ «օրենքի շրջանցում» արտահայտության բովանդակությունը:

«Օրենքի շրջանցման» մասին խոսել են դեռևս հռոմեացի իրավաբանները: Նրանք նշում էին.

> «Contra legem facit, qui id facit, quod lex prohibet; in fraudem vero, qui salvis verbis legis sententiam eius circumvenit"», որը թարգմանաբար նշանակում է՝ օրենքին հակառակ գործում է այն անձը, ով կատարում է արգելված արարքը, իսկ արարքը կարելի է որակել օրենքի շրջանցում, երբ օրենքի տառը պահպանվում է, սակայն շրջանցվում է օրենքի իմաստը[2]:

Մինչհեղափոխական և գերմանալեզու իրավաբանական գրականության մեջ նշվում է.

> «Օրենքի շրջանցումը» իրենից ներկայացնում է գործողություն, որը ոչ թե խախտում է օրենքի կարգադրագրերը, այլ վնասում է այն նպատակը, որին հասնելու համար ընդունվել է օրենքը»[3]:

[1] **Радченко С.Д**. Злоупотребление правом в гражданском праве России: дисс. ... канд. юрид. наук. - М., 2007. - С. 63. **Губарь А.С.** Шикана как особая форма злоупотребления гражданским правом // Вестник Пермского университета. Юридические науки. 2012. №4 (18). - С. 66.

[2] **Муранов А.И.** Попытка внедрения понятия «обход закона» в ГК РФ и международный коммерческий арбитраж в России // Вестник международного коммерческого арбитража. 2011. № 1. - С. 188–213. Дигесты Юстиниана. Избранные фрагменты в переводе и с примечаниями И.С. Перетерского. - М.: Наука, 1984. - С. 33

[3] **Егоров А.В.** Обход закона: использование дозволенной правом формы ради запрещенной правом цели // Вестник международного коммерческого арбитража. 2011. № 2 (4). - С. 169-170.. Zurich, 1917. S. 12.

Վ.Մ. Խվոստովը, «օրենքի շրջանցումը» կապելով գործարքների հետ (in fraudem legis), նշում է.

> «Փորձելով հասնել օրենքի բովանդակությանը հակառակ նպատակի՝ կողմերը կնքում են գործարքներ, որը տանում է այն պրակտիկ արդյունքին, որի դեմ պայքարում է օրենքը (…)»[1]:

ՌԴ քաղ. օր-ի ընդհանուր դրույթների կատարելագործմանն ուղղված ռազմավարության նախագծում քննարկվող ինստիտուտի վերաբերյալ տրվել է հետևյալ բացատրությունը՝

> «(…) «Օրենքի շրջանցման» տակ պետք է հասկանալ ձևական տեսանկյունից չարգելված մեխանիզմի օգտագործումն այն նպատակին հասնելու համար, որի նկատմամբ օրենսդրի բացասական վերաբերմունքը տեսանելի է իրավակարգավորման բովանդակությունից»:

Խնդրի վերաբերյալ այլ պետությունների պրակտիկան տարբերվում է: Օրինակ՝ Իտալիայի քաղ. օր-ի 1344-րդ հոդվածը ևս արգելում է «օրենքի շրջանցմամբ» պայմանագրեր կնքել, կամ, օրինակ, Իսպանիայի քաղ. օր-ի 6-րդ հոդվածի համաձայն՝ արարքները, որոնք իրականացվել են նորմի տեքստին համապատասխան և հետապնդում են իրավակարգի կողմից արգելված և իրավակարգին հակասող արդյունք, «օրենքի շրջանցում են»[2]:

Հատկանշական է, որ բերված օրինակներում չկա իրավունքի չարաշահման վերաբերյալ ուղիղ նշում: Այն պետություններում (Ավստրիա, Շվեյցարիա), որոնց օրենսդրության մեջ բացակայում է ուղիղ արգելքը, դրա անթույլատրելիության մասին եզրահանգում արվում է օրենքի իմաստի մեկնաբանման միջոցով[3]: Օրինակ՝ Շվեյցարիայի քաղ. օր-ի 2-րդ հոդվածը սահմանում է՝ «Իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս յուրաքանչյուրը պետք է վարվի բարեխղճությամբ: Իրավունքների ակնհայտ չարաշահումը չի կարող օգտվել պաշտպանությունից»[4]: Համարժեք իրավիճակ ունենք նաև Գերմանիայի քաղ. օր-ում, երբ օրենսդիրը հրաժարվել է «օրենքի շրջանցման» ուղիղ արգելքից: Նշվում է, որ նման արգելքի ամրագրումն էականորեն ազդելու էր իրավակիրառի (դատարանների) կողմից օրենքի մեկնաբանության վրա, և դատարանի՝

[1] **Хвостов В.М.** Система римского права: учебник. - М.: Спарк. 1996. - С. 154.

[2] **Захарова О.Е.** Запрет “обхода закона” в праве России и Германии. Проблемы экономики и юридической практики. 2018. - С. 111.

[3] **Егоров А.В.** Указ. соч. - С. 171.

[4] Швейцарское Гражданское Уложение 10 декабря 1907 года. Пер. К.М. Варшавского. Петрофад,1915. - С. 19. https://www.prlib.ru/item/699113 (վերջին մուտքը՝ 15.01.24):

բազմաթիվ թույլատրված գործարքներ կարող են անվավեր ճանաչվելու իրական վտանգի ենթարկվել[1]:

Մաքս Պլանկի անվան միջազգային մասնավոր իրավունքի ինստիտուտն իր եզրակացության մեջ նշում է.

> «(…) «օրենքի շրջանցումը» իրավունքի չարաշահումից տարբերվում է նրանով, որ չարաշահման դեպքում չարաշահողը դուրս է գալիս սուբյեկտիվ իրավունքի իրական բովանդակությունից և իմաստից, «օրենքի շրջանցման» դեպքում պահանջն ուղղված է գործող օբյեկտիվ իրավունքին, երբ մասնավոր ջանքերի միջոցով ստեղծվում են իրավասահմանող փաստեր: Իրավակարգի տեսանկյունից դրանք արհեստական են և չեն կարող ունենալ հետևանքներ: Այսպիսով՝ իրավակարգի հետ կոնֆլիկտի մեջ է մտնում ոչ թե սուբյեկտիվ իրավունքի ոչ նպատակային իրականացումը, այլ դրա ձևակերպումը»[2]:

Իրավաբանական գրականության մեջ որպես «օրենքի շրջանցման» օրինակ բերվում է այն, որ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձը, չունենալով իրավաբանական հնարավորություն անձամբ մասնակցելու, օրինակ, ռազմական արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհման գործընթացին, ռեզիդենտ իրավաբանական անձի հետ կնքում է կոմիսիայի պայմանագիր՝ հանձնարարելով վերջինիս մասնակցել աճուրդին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «օրենքի շրջանցումը» ռուսական օրենսդրությունը դիտարկում է որպես սուբյեկտիվ իրավունքի չարաշահման տեսակ, ապա այն պետք է դրսևորվի սուբյեկտիվ իրավունքի իրականացման ձևով: Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձի համար կոմիսիայի պայմանագիր կնքելն իրավունքի իրականացման դաշտում է: Եթե հաշվի առնենք, որ բերված օրինակում նշվում է ոչ ռեզիդենտ իրավաբանական անձի կողմից անձամբ ռազմական արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհման գործընթացին մասնակցելու անհնարինության մասին, ապա հարց է առաջանում՝ ինչպե՞ս կարող է նման պայմանագիրը քննարկման առարկա չդառնալ, օրինակ, գործարքների անվավերության շրջանակներում: Այդ պարագայում ոչ ռեզիդենտ իրավաբանական անձի սուբյեկտիվ իրավունքի իրականացման հարցը կբացառվի, և հարաբերությունը պետք է գնահատել գործարքների անվավերության հետևանքների, այլ ոչ թե սուբյեկտիվ իրավունքի չարաշահման շրջանակում, որի պարագայում նախատեսված են կոնկրետ իրավական հետևանքներ (ՀՀ քաղ. օր., 12-րդ հոդ-

[1] Гражданские и торговые кодексы зарубежных стран: сборник законодательства. Современное зарубежное частное право: учеб. пособие / Под ред. С.Н. Медведева, С.О. Звонок. - Ставрополь, 1999. - С. 366.

[2] Siehr, Gesetzesumgehung (Зир, «Обход закона»), в книге: Basedow/Hopt/Zimmermann (Hrsg), Handworterbuch des Europaischen Privatrechts (HWB) (Базедов/Хопт/Циммерманн (ред.), Справочник Европейского частного права) Т.1. 2009. - С. 742.

ված, մաս 2՝ «(…) դատարանը կամ արբիտրաժային տրիբունալը կարող է մերժել անձին՝ նրան պատկանող իրավունքի պաշտպանության հարցում»: Գրեթե համարժեք կարգավորումներ են առկա նաև ՌԴ քաղ. օր-ում՝ հոդված 10, մաս 2):

Իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ օրենքը շրջանցող ցանկացած գործողություն իրավունքի չարաշահում դիտարկելը կարող է այն դարձնել բավականին լայն: Այս դեպքում իրավունքի չարաշահման ինստիտուտը կարող է «ներխուժել» իրավախախտման դաշտ[1]:

«Օրենքի շրջանցման» արգելքի ամրագրման վերաբերությամբ դոկտրինում գերակշռում է այն կարծիքը, որ նման արգելքը ձևական, դեկլարատիվ բնույթ է կրում[2]:

Հատկանշական է, որ մինչև ՌԴ քաղ. օր-ում համարժեք լրացումներ նախատեսելը ՌԴ դատական պրակտիկայում օրենքի շրջանցումը նախկինում դիտարկվել է որպես իրավունքի չարաշահման տեսակ: Այսպես՝ ՌԴ Ֆեդերալ Արբիտրաժային Դատարանը 14.01.2009 թ. № 8207/08 որոշման շրջանակներում արձանագրել է վիճելի օբյեկտների ձեռքբերման համար գործարքի կնքման ժամանակ իրավունքի չարաշահման փաստը: Նշվում է, որ Դատարանն ունեցել է հիմքեր գործարքն անվավեր ճանաչելու համար, որոնք կատարվել են օրենքի շրջանցմամբ՝ հիմք ընդունելով ՌԴ քաղ. օր-ի 10-րդ հոդվածի 2-ր մասը (իրավունքի չարաշահման իրավական հետևանքներ) և 168-րդ հոդվածը (օրենքի կամ այլ իրավական ակտի պահանջները խախտող գործարքի անվավերությունը)[3]: Այսինքն՝ Դատարանը սուբյեկտիվ իրավունքի չարաշահման (իրավունքի իրականացման) փաստը գնահատել է գործարքի անվավերության շրջանակներում:

Իրավունքի չարաշահման ինստիտուտի մասին տեսական և գիտական մանիպուլիացիաներն ինքնին նպաստում են այնպիսի նոր ինստիտուտների «առաջացմանը» կամ «վերակենդանացմանը», որոնք գտնվում են իրավունքի իրականացման և իրավախախտման սահմանագծում: Դրանք սուբյեկտիվ իրավունքի չարաշահման տեսակ դիտարկելն էլ ավելի է խճճում առանց այն էլ բարդ և ոչ միանշանակ այս ինստիտուտի բովանդակությունը: «Օրենքի շրջանցումը» որպես սուբյեկտիվ իրավունքի չարաշահման տեսակ դիտարկելու մոտեցման դեմ հանդես եկող հեղինակներից մեկն արդարացիորեն ընդգծել է, որ այն բացերով լի և «չմտածված» օբյեկտիվ իրավունքի ախտանիշ է, այդ

[1] **Թորոսյան Գ., Թորոսյան Ս.,** Նշված աշխ., էջեր 73-74: Նույն աշխատանքում իրավունքի չարաշահումը գնահատվում է որպես յուրահատուկ իրավախախտում (տե՛ս նույն աշխ. էջ 25):

[2] **Захарова О.Е.** Указ. соч. - С. 112-114.

[3] "Гражданский кодекс Российской Федерации. Часть первая. Постатейный комментарий". Авторы: Гришаев С.П., Богачева Т.В., Свит Ю.П. Изд.: 2019 год. https://rulaws.ru/gk-rf-chast-1/Razdel-I/Glava-2/Statya-10/ (վերջին մուտքը՝ 10.01.2024):

հիվանդությունը պետք է բուժել միայն իրավունքը զարգացնելով[1], *այլ ոչ թե ազատության և բարեխղճության սահմանն էլ ավելի անորոշ դարձնելով* (ընդգծումը՝ Մ. Մ.):

Որոշ ռուս հեղինակներ նշում են, որ «օրենքի շրջանցման» ինստիտուտը՝ որպես չարաշահման տեսակ, սպառել է իրեն: Այժմ, երբ ռուս հասարակությունը կարիք ունի ոչ միայն տնտեսության, այլև իրավունքի վերակառուցման, անհասկանալի է, թե ինչու ոլորտի բարեփոխիչները փորձում են օգտագործել կառուցակարգեր, որոնք 20-րդ դարի 20-ականներին օգտագործվում էին բոլշևիկների կողմից «նէպմանների նկատմամբ հսկողություն» իրականացնելու համար: Ավելին՝ «օրենքի շրջանցում» ինստիտուտը քննադատության է ենթարկվել նաև անգլոամերիկյան դոկտրինի կողմից՝ որպես ազատությանն սպառնացող միավոր[2]:

4. Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հիմնահարցը ՀՀ իրավունքի համակարգի առանձին ճյուղերում

ՀՀ աշխ. օր-ի 37-րդ հոդվածի համաձայն՝

> «Գործատուները, աշխատողները և նրանց ներկայացուցիչներն իրենց իրավունքներն իրականացնելիս (…) պարտավոր են (…) գործել բարեխիղճ և ողջամիտ: Աշխատանքային իրավունքների չարաշահումն արգելվում է: Աշխատանքային իրավունքների իրականացմամբ չպետք է խախտվեն այլ անձանց՝ օրենքներով պաշտպանվող իրավունքներն ու շահերը»:

Կարելի է արձանագրել, որ բացի բարեխիղճ և ողջամիտ վարքագծի վերաբերյալ օրենսդրական ձևակերպումներից, որոնք առհասարակ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման գնահատման չափանիշներ են, հիմնախնդրի բովանդակային կողմը, ինչպես քաղաքացիական օրենսդրության պարագայում, բացահայտված չէ: Նախ՝ ՀՀ աշխ. օր-ի 37-րդ հոդվածը վերաբերում է ոչ միայն սուբյեկտիվ (աշխատանքային) իրավունքի չարաշահման ընդհանուր արգելքին, այլև՝ աշխատանքային իրավահարաբերության կողմերի՝ օրենքները պահպանելու պարտականությանը, ինչը չի կարելի դիտարկել իրավունքների ոչ նպատակային իրականացման շրջանակներում, քանզի պարտականությունը չկատարելու պարագայում գործ ենք ունենալու դասական իրավախախտման փաստի հետ: Այսպիսով՝ ակնհայտ է, որ աշխատանքային իրավահարաբերություննե-

[1] **Поротикова О.А.** Проблема злоупотребления субъективным гражданским правом. 3-е изд. - М.: Изд. Юрайт, 2023. - С. 228.

[2] **Муранов А.И.** Законодательство: ВАС идет в обход // Ведомости (газета), 29 апреля 2011, №77 (2843). http://surl.li/phhza (վերջին մուտքը՝ 14.01.2024):

րում ևս սուբյեկտիվ իրավունքի չարաշահման փաստն օրենսդիրը կապում է իրավունքների իրականացման հետ:

Իրավաբանական գրականության մեջ նշվում է՝

> «Աշխատանքային իրավունքի չարաշահման տակ կարելի է հասկանալ այս կամ այն իրավունքից հաճախակի օգտվելը՝ այն դեպքում, երբ օրենքում բացակայում է տվյալ իրավունքի իրականացման կարգի և պայմանների հստակ կանոնակարգումը կամ կարգավորող նորմի բովանդակությունը տարընկալման կամ հակասական մեկնաբանության տեղիք է տալիս»[1]:

Հայրենական իրավաբանական գրականության մեջ որպես սուբյեկտիվ իրավունքի չարաշահման օրինակ է բերվում այն, որ աշխատողը, հաստատապես տեղյակ լինելով իր հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու՝ գործատուի մտադրության մասին (օրինակ՝ գրավոր ծանուցում), չի ներկայանում աշխատանքի և պատճառաբանելով իր անաշխատունակության վիճակը՝ խնդրում է բացակայությունը համարել հարգելի: Նշվում է, որ նման իրավիճակում առկա է անաշխատունակության ընթացքում աշխատանքից ազատվելուց պաշտպանված լինելու իրավունքի չարաշահումը[2]: Կարծում ենք՝ այստեղ պետք է հստակեցնել մեկ հարց՝ անձն ինչպե՞ս է հիմնավորելու իր անաշխատունակության փաստը: Եթե աշխատողը կներկայացնի հիվանդության փաստը հաստատող բժշկական տեղեկանք, ապա սուբյեկտիվ իրավունքի չարաշահումը բացառվում է, թեկուզև նման մտադրությունը զուգադիպել է հիվանդության փաստի հետ: Իսկ եթե կպարզվի, որ բժշկի տեղեկանքը կեղծ է, ապա այստեղ հնարավոր է նաև քրեական պատասխանատվության հարց:

Աշխատանքային իրավահարաբերություններում սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հարցերին ազգային դատարանն անդրադարձել է նաև աշխատանքային պայմանագրի լուծման վեճերի շրջանակում[3]:

Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման և դրա արգելքի վերաբերյալ իրավական լուծումներ կարելի է հանդիպել նաև այլ ոլորտներում: Այդպիսիններից է ծնողական իրավունքների ոլորտը: ՀՀ ընտանեկան օրենսգրքում բացակայում է ծնողական իրավունքների չարաշահման վերաբերյալ էքսպլիցիտ արգելք: Արգելքը կարելի է բխեցնել ՀՀ ըն-

[1] **Պետրոսյան Գ.Վ.,** Աշխատանքային իրավունք: Ընդհանուր մաս, դասագիրք բուհերի համար: ԵՊՀ, Եր.: 2009, էջ 300, **Թորոսյան Գ., Թորոսյան Ս.,** Նույն աշխ.: 2019, էջ 220:

[2] **Պետրոսյան Գ.Վ.,** Նշված աշխ., էջ 303, **Թորոսյան Գ., Թորոսյան Ս.,** Նշված աշխ., էջեր 226-227:

[3] Դատական Գործ N:ԵԴ/21423/02/18
http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421203890633

տանեկան օրենսգրքի առանձին հոդվածների համակարգային վերլուծությունից: ՀՀ ընտանեկան օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝

> «Երեխան ունի իր ծնողների (օրինական ներկայացուցիչների) **չարաշահումներից պաշտպանվելու իրավունք**: **Երեխայի իրավունքների և շահերի խախտման դեպքում** (ընդ որում՝ ծնողների կամ նրանցից մեկի կողմից երեխային դաստիարակելու, կրթության տալու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ **ծնողական իրավունքները չարաշահելու դեպքերում**) երեխան իրավունք ունի պաշտպանության համար ինքնուրույն դիմելու խնամակալության և հոգաբարձության մարմին»:

Նախ՝ երկրորդ նախադասության՝ «երեխայի իրավունքների և շահերի խախտման դեպքում» ձևակերպումը պետք է ընթերցել «երեխայի իրավունքները և շահերը վնասելու դեպքում»: Հակառակ պարագայում՝ ծնողական իրավունքների չարաշահումը, ծնողների կամ նրանցից մեկի կողմից երեխային դաստիարակելու, կրթության տալու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետ կհամարվեն երեխայի իրավունքների և շահերի խախտման դեպքեր՝ ստեղծելով անհասկանալի իրավիճակ խախտումների և չարաշահումների տարբերակման հարցում: Երկրորդ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ երեխայի կենսական շահերն ապահովելու նպատակով ծնողները կամ նրանցից մեկը կարող են դատական կարգով զրկվել ծնողական իրավունքներից, նաև՝ ծնողական իրավունքների չարաշահումների դեպքում. ստացվում է, որ օրենքը ընդհանուր արգելք է նախատեսում ծնողական իրավունքների չարաշահման դեպքերի համար՝ սակայն անորոշ թողնելով, թե խոսքն ի՛նչ չարաշահումների մասին է: Այստեղ ևս գործ ունենք սուբյեկտիվ իրավունքի չարաշահման ընդհանուր արգելքի հետ: Չարաշահման փաստի գնահատումն ամբողջությամբ դատական հայեցողության տիրույթում է:

Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման արգելքի մասին խիստ ընդհանուր կարգավորում է նախատեսված նաև «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասում:

5. Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման իրավական հետևանքները

5.1. Ընդհանուր հարցեր: Իրավունքի խնդիրներից է մարդկային վարքագիծը հնարավորինս կանխատեսելի և հասկանալի դարձնելը՝ զուգահեռ ապահովելով գործողությունների փոխհամաձայնեցվածություն և համակարգվածություն: Պետության կողմից մարդու իրավունքների և ազատությունների հարգման և պաշտպանության սահմանադրական պահանջն ինքնանպատակ չէ: Պետությունը ևս ունի այն ակնկալիքը, որ հասա-

րակության անդամները միմյանց միջև և պետության հետ հարաբերություններում պետք է պահպանեն փոխադարձ, ներդաշնակ վստահության և բարեխղճության կանոնները: Բարեխղճությունն ընդհանուր իրավակարգի պահպանության տեսանկյունից ունի հիմնարար նշանակություն: Նման կանոններով գործելու պարտականությունը հավասարապես վերաբերելի է և՛ հանրային, և՛ մասնավոր իրավունքի սուբյեկտներին:

Անձանց՝ բարեխղճությունից շեղված վարքագիծը պետք է գտնվի պետության վերահսկողության տիրույթում: Այս տեսանկյունից կարևորվում է սուբյեկտիվ իրավունքի չարաշահման դեմ պայքարում օրենքի մակարդակով արդյունավետ, համաչափ նախականխման և արգելման գործուն մեխանիզմների՝ իրավական հետևանքների նախատեսումը, քանզի սուբյեկտիվ իրավունքի չարաշահման դեպքում չարաշահողն ունենում է չհիմնավորված առավելություն չարաշահվողի նկատմամբ:

Իրավական հետևանքի մասին խոսելիս պետք է հասկանալ, թե այն իրավահարաբերության կողմերի վրա ինչ ազդեցություն ունի: Ընդունված է, որ չարաշահման դեպքերի համար նախատեսված իրավական հետևանքները չունեն պատժիչ ազդեցություն, քանզի այն բնութագրական է իրավախախտմանը: Օրինակ՝ լայն տարածում գտած՝ անձին՝ նրան պատկանող իրավունքի պաշտպանության հարցում մերժելու ձևով իրավական հետևանքը չարաշահողի համար ունենալու է նեգատիվ հետևանք, իսկ այն սուբյեկտի համար, ում շահերը վնասվել են կամ կարող էին վնասվել իրավունքների ոչ բարեխիղճ, ոչ նպատակային իրականացման արդյունքում, հետևանքն ունի պաշտպանական ներուժ: Այսինքն՝ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման դեպքերի համար նախատեսված իրավական հետևանքները (սանկցիաները) նպատակ ունեն ապահովել իրավահարաբերության կողմերի շահերի հավասարակշռվածությունը: Այլ կերպ՝ դրանք իրենց բնույթով մի կողմից սուբյեկտիվ իրավունքները վերականգնող, մյուս կողմից՝ նախականխիչ, սուբյեկտիվ իրավունքի իրականացումն ընդհատող միջոցներ են (սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության հարցում մերժելը, գործողությունների կասեցումը, որոնց արդյունքում վնասվում են կամ կարող են վնասվել որոշակի շահեր), որոնք կոչված են վերականգնելու հասարակական հարաբերությունների բնականոն վիճակը:

5.2. Անձին՝ նրան պատկանող իրավունքի պաշտպանության հարցում մերժելը որպես սուբյեկտիվ իրավունքի չարաշահման իրավական հետևանք: ՌԴ և ՀՀ քաղ. օր-երում սուբյեկտիվ իրավունքի չարաշահման իրավական հետևանքները, եթե վերացարկվենք ձևակերպումների ոչ էական հատկանիշներից, հիմնականում նման են:

ՀՀ քաղ. օր-ում, անկախ այն հանգամանքից, թե սուբյեկտիվ իրավունքի չարաշահման որ տեսակի հետ գործ ունենք, միակ իրավական հետևանքը, որը կարող է առաջա-

նալ գործող օրենսդրության շրջանակներում, անձին՝ նրան պատկանող իրավունքի պաշտպանության հարցում մերժելն է: Նման հետևության համար հիմք է ՀՀ քաղ. օր. 12-րդ հոդվածի 2-րդ մասը:

ՌԴ պարագայում օրենսդիրը նշում է իրավունքի պաշտպանության հարցում ամբողջությամբ կամ մասամբ մերժելու, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ միջոցների կիրառության մասին: Ի տարբերություն ՌԴ քաղ. օր-ի, երբ դատարանն իրավասու է իրավունքի պաշտպանության հարցում **ամբողջությամբ կամ մասամբ** մերժել**,** ՀՀ քաղ. օր-ը ընդամենը սահմանում է, որ կարող է մերժել անձին՝ նրան պատկանող իրավունքի պաշտպանության հարցում՝ առանց որոշակիացնելու մերժման ծավալը: Կարծում ենք, որ նման կարգավորումների պարագայում դատարանն իրավունքի պաշտպանության հարցում կարող է մերժել նաև մասամբ՝ կիրառելով իրավունքի մեկնաբանման տրամաբանական հնարքներից a fortiori կանոնը: Այս կանոնի հիման վրա իրավակիրառը կարող է մի որոշակի ծանրակշիռ դատողությունից եզրակացնել ավելի թույլ դատողություն: Այսինքն, եթե դատարանը կարող է ամբողջությամբ մերժել իրավունքի պաշտպանության հարցում, ապա առավել ևս կարող է նաև մերժել մասամբ:

Պրակտիկայում ՀՀ քաղ. օր-ի 12-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառության հնարավոր իրավիճակ է, երբ հայցվորն իր իրավունքների պաշտպանության պահանջով դիմում է դատարան: Եթե յուրիսդիկցիոն դատական վարույթի շրջանակներում հայցվորը հիմնավորի, որ պատասխանողը չարաշահել է իր որևէ սուբյեկտիվ իրավունք, ապա Դատարանը, հայցը հիմնավորված համարելով, բավարարում է այն՝ դրանով իսկ երաշխավորելով (ապահովելով) հայցվորի իրավունքների պաշտպանությունը, և համապատասխանաբար մերժում է պատասխանողին (չարաշահողին) իր իրավունքների պաշտպանության հարցում: Հնարավոր է նաև հակառակ իրավիճակը, երբ հայցվորին է մերժվում իրավունքների պաշտպանության հարցում, եթե պատասխանողը, օրինակ, հակընդդեմ հայցի շրջանակներում հիմնավորում է սկզբնական հայցվորի կողմից սուբյեկտիվ իրավունքի չարաշահման փաստը: Այս պարագայում չարաշահման համար հնարավոր իրավական հետևանքը կիրառվում է վարույթը նախաձեռնողի նկատմամբ: Այսպիսով, սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության հարցում մերժելն ունի երկակի գործառույթ, այն անհրաժեշտ է դիտարկել նաև որպես իրավունքի չարաշահումից տուժած անձի իրավունքների պաշտպանության միջոց[1]:

[1] Հատկանշական է, որ գրեթե համարժեք ուղղությամբ է զարգանում նաև հիմնահարցի վերաբերյալ ՌԴ դատական պրակտիկան: Մանրամասն տե՛ս Обзор практики применения арбитражными судами ст. 10 ГК РФ. Информационное письмо Президиума ВАС РФ от 25.11.2008 № 127 // Вестник ВАС РФ. 2009. № 2. П. 5.

Առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում չարաշահման արդյունքում տուժած անձի իրավունքների վերականգնման հարցը: Այն ունի կարևոր նշանակություն, օրինակ, տուժող անձին պատճառված հնարավոր վնասի վերականգնման տեսանկյունից: ՌԴ քաղ. օր. 10-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ եթե իրավունքի չարաշահմամբ խախտվել են անձի իրավունքները, ապա անձն իրավունք ունի պահանջելու պատճառված վնասի հատուցում:

Գործերից մեկով ՌԴ Գերագույն Դատարանը, մերժելով հայցը, նշում է՝

> «(…) դատական պաշտպանության ենթակա չեն այն անձի իրավունքները, ով իր սուբյեկտիվ իրավունքն օգտագործել է այլ անձին վնաս պատճառելու մտադրությամբ, շրջանցել է օրենքը հակաօրինական նպատակներով, ինչպես նաև իրավունքն իրականացրել է այլ՝ դիտավորյալ անբարեխիղճ ձևով»[1]:

Ինչպես տեսնում ենք, Դատարանը, ըստ էության, թվարկել է սուբյեկտիվ իրավունքի չարաշահման բոլոր տեսակները՝ առանց կոնկրետացնելու, թե իրավունքների պաշտպանության հարցում չարաշահման ո՛ր տեսակի համար է անձին մերժել:

Իրավաբանական գրականության մեջ բերված օրինակի վերաբերությամբ նշվում է, որ Դատարանը, ըստ էության, չի տեսնում չարաշահողի վարքագիծը կոնկրետացնելու անհրաժեշտություն, և այդ տրամաբանությամբ հեղինակի մոտ օբյեկտիվ հարց է առաջանում. արդյո՞ք արդիական է մնում չարաշահման տեսակների հարցը[2]: Հեղինակը, ըստ այդմ, արտահայտում է տեսակետ այն մասին, որ բացակայում է օրենքով սուբյեկտիվ իրավունքի չարաշահման տեսակների դասակարգման անհրաժեշտությունը:

Սույն աշխատանքի շրջանակներում չփորձելով նշված հարցին առավել խորությամբ անդրադառնալ՝ առնվազն պետք է նշել, որ քննադատությունը ճիշտ ենք համարում առնվազն իրավական հետևանքների չտարբերակվածության մասով:

Հատկանշական է, որ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հետևանքների վերաբերությամբ ևս միասնական տեսակետը բացակայում է: Իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ միակ հնարավոր իրավական հետևանքն իրավունքների պաշտպանության հարցում մերժելն է[3]: Առանձին հեղինակներ նշում են նաև սուբյեկտիվ իրավունքից զրկելու մասին[4]:

[1] Определение Верховного Суда Российской Федерации по делу № 302-ЭС16-5440, 06 июня 2016 г. / https://vsrf.ru/stor_pdf_ec.php?id=1445318.

[2] **Поротикова О.А.** Указ. соч. - С. 224.

[3] **Садиков О.** Злоупотребление правом в Гражданском кодексе России // Хозяйство и право. 2002. № 2. - С. 46.

[4] **Григорян Г.В.** Правовые проблемы реализации принципа недопустимости злоупотребления правом в гражданских правоотношениях: дисс. … канд. юрид. наук. - Ер., 2018. - С. 129.

Եթե խնդիրը դիտարկում ենք, օրինակ, ՀՀ քաղ. օր. սուբյեկտիվ իրավունքի չարաշահման ընդհանուր արգելքի շրջանակներում, ապա միակ իրավական հետևանքը, ինչպես արդեն նշվել է, անձին իրավունքների պաշտպանության հարցում մերժելն է:

Զարգացած իրավական համակարգ ունեցող պետություններից, օրինակ, Գերմանիայում գոյություն ունի սուբյեկտիվ իրավունքը կորցնելու ինստիտուտը, որը բովանդակային իմաստով նշանակում է սուբյեկտիվ իրավունքի վերացում: Այս տեսանկյունից սուբյեկտիվ իրավունքի չարաշահման օրինակ է սուբյեկտիվ իրավունքի նկատմամբ իրավատիրոջ ակնհայտ անբարեխիղճ, անտնտեսվար վարքագիծը, ինչը պետք է հաշվի առնվի դատավարության ժամանակ: Այս դեպքում բովանդակային առումով կարող են վերացվել, դադարեցվել իրավատիրոջ իրավունքներն իր իսկ սուբյեկտիվ իրավունքի նկատմամբ, ինչի արդյունքում, ըստ էության, տեղի է ունենում սուբյեկտիվ իրավունքի կորուստ: Նշվում է, որ իրավատիրոջ կողմից երկար ժամանակով իր իրավունքը չիրականացնելը կամ դրա ապահովման ուղղությամբ միջոցներ չձեռնարկելն ստեղծում է այլ անձանց՝ պաշտպանության արժանի վստահություն, որի արդյունքում ստեղծվում է վստահություն այն մասին, որ իրավատերն այլևս չի իրականացնելու իր իրավունքը: Որպես հետևանք՝ իրավատիրոջն արգելվում է (դատական կարգով) իր իրավունքի հետագա իրականացումը, քանզի սուբյեկտիվ իրավունքի ուշացած իրականացումը կխախտի բարեխղճության սկզբունքը: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ իրավատիրոջ կողմից իր իրավունքը տևական չիրականացնելը և հետագայում իրականացման փորձերը, ըստ էության, խախտում են այն անձանց իրավունքները, որոնք ունեն, օրինակ, կոնկրետ իրավունքի (գույքի) նկատմամբ լեգիտիմ հավակնություններ[1]:

*5.3. Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման իրավական հետևանքները ՀՀ իրավունքի համակարգի առանձին ճյուղերում***:** Նախորդ պարագրաֆի շրջանակներում արդեն խոսել ենք սուբյեկտիվ իրավունքների չարաշահման արգելքի մասին նաև աշխատանքային իրավունքում: Նշվել է, որ ՀՀ աշխ. օր-ի 37-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է աշխատանքային իրավահարաբերությունների մասնակիցների՝ իրենց իրավունքներն իրականացնելիս բարեխիղճ և ողջամիտ գործելու պարտականության և աշխատանքային իրավունքների չարաշահման արգելքի մասին ընդհանուր կարգավորումներ: Սակայն, ի տարբերություն քաղաքացիական օրենսդրության, աշխատանքային օրենսգիրքը չարաշահման դեպքերի համար չի սահմանում կոնկրետ իրավական հետևանք: Հատկանշա-

[1] Այս մասին տե՛ս **Հովհաննիսյան Գ.,** Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն: Եր., 2020, էջեր 78-88:

կան է, որ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/18568/02/18 քաղաքացիական գործի շրջանակներում անդրադարձել է իրավունքի չարաշահման անթույլատրելիության համընդհանուր սկզբունքին՝ նշելով.

> «Իրավունքը չարաշահելու անթույլատրելիության համընդհանուր սկզբունքն օրենսգրքի քննարկվող 37-րդ հոդվածի ուժով ամբողջությամբ տարածվում է նաև աշխատանքային հարաբերությունների բնագավառի վրա՝ կանխորոշելով ընկերության սեփականատիրոջ հայեցողական լիազորությունների սահմանը: Աշխատանքային պայմանագիրն ընկերության տնօրենի հետ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքում վաղաժամկետ լուծելիս վերջինս զրկված չէ այն դատական կարգով վիճարկելու իրավունքից, եթե գտնում է, որ նման լուծումը պայմանավորված է այնպիսի հանգամանքներով, որոնք վկայում են խտրականության կամ **իրավունքի չարաշահման** մասին: Դատարանը, իր հերթին պարզելով, որ պայմանագրի վաղաժամկետ լուծումը պայմանավորված է եղել նշված հանգամանքներից որևէ մեկով, աշխատողին պետք է վերականգնի նախկին աշխատանքում»:

Վերացարկվելով գործի փաստական հանգամանքներից՝ պետք է արձանագրել, որ Բարձր Դատարանը ոչ միայն քննարկման առարկա է դարձրել աշխատանքային հարաբերություններում սուբյեկտիվ իրավունքի և (կամ) իրավական դիրքի, կոնկրետ դեպքում՝ գործատուի կողմից իր դիրքի չարաշահման հարցը, այլև՝ *դատարանի կողմից աշխատողի աշխատանքային իրավունքների վերականգնման ձևով իրավական հետևանքը,* որպիսի վճիռ պետք է կայացվի, եթե հիմնավորվի գործատուի կողմից իրավունքի չարաշահման փաստը: Բնականաբար, վճռի շրջանակներում քննարկման առարկա պետք է դառնա նաև աշխատանքային պայմանագրի լուծման համաձայնագիրը (աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու մասին անհատական իրավական ակտի իրավաչափությունը):

Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման դեպքում իրավական հետևանքների հարցը կախված է նաև իրավունքի ոլորտի առանձնահատկություններից: Օրինակ՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 59-րդ հոդված 1-ի մասի 5-րդ կետի համաձայն՝ *երեխայի կենսական շահերն ապահովելու նպատակով* ծնողները կամ նրանցից մեկը կարող են զրկվել ծնողական իրավունքներից, եթե նրանք չարաշահում են իրենց ծնողական իրավունքները, այդ թվում՝ իրենց վարքագծով վնասակար ազդեցություն են գործում երեխայի վրա:

Իրավունքի չարաշահման իրավական հետևանքների մասով հետաքրքրական է նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերության իրավակարգավորումը: Մասնավորապես՝

> «Դիմումատուի վերաբերյալ տվյալներ չներառող կամ կեղծ տվյալներ ներառող դիմումները, **իրավունքի չարաշահմամբ ներկայացված դիմումները** (…) չեն քննարկվում, դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում, և **ընտրական հանձնաժողովները որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին»:**

Պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ ընտրական գործընթացների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք մուտքագրում են տարբեր բովանդակություն ունեցող դիմումներ: Դիմումների որոշ մասը նույնաբովանդակ է և սկզբունքորեն հետապնդում է ժողովրդավարական գործընթացները վնասելու նպատակ: ՀՀ ընտրական օրենսգիրքը բացահայտում է, թե ինչ նկատի ունի «իրավունքի չարաշահմամբ ներկայացված դիմումներ» ասելով, սակայն դրա տակ կարելի է հասկանալ, օրինակ, այնպիսի իրավիճակները, երբ դիմողը, ստանալով իրեն հուզող հարցի պատասխանը, այնուամենայնիվ, շարունակում է որոշակի պարբերականությամբ մուտքագրել նույնաբովանդակ դիմումներ՝ ըստ էության չարաշահելով դիմում ներկայացնելու իր իրավունքը: Այս իմաստով անհրաժեշտ է դիտարկել նման իրավիճակներում դիմում ներկայացնելու իրավունքի չարաշահման դեպքում համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու հարցերը:

Այսպես՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթ հարուցելու հիմքերից է անձի դիմումը: Հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքերում վարչական վարույթը համարվում է հարուցված՝ համապատասխան դիմումը կամ բողոքը վարչական մարմնում ստանալու օրվանից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դիմումը կամ բողոքը, սույն օրենքի 33-րդ հոդվածի համաձայն, վերահասցեագրվել է՝ ըստ իրավասու վարչական մարմինների, կամ վերադարձվել է դիմողին (բողոք բերողին):

Ինչպես տեսնում ենք, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքն անձի դիմումի առկայության դեպքում չի *նախատեսում վարչական մարմնի կողմից վարչական վարույթ հարուցելու կամ հարուցումը մերժելու վերաբերյալ առանձին ակտի ձևով որոշման կայացման վերաբերյալ* իրավակարգավորումներ: Նշ-

վում է, որ վարչական վարույթն օրենքի ուժով համարվում է հարուցված՝ դիմումը վարչական մարմնում ստանալու օրվանից: Սակայն ՀՀ ընտրական օրենսգիրքն այս մասով ունի տարբերակված մոտեցում: Հաշվի առնելով ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերության իրավակարգավորումը (իրավունքի չարաշահմամբ ներկայացված դիմումների պարագայում (…) ընտրական հանձնաժողովները որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին)՝ դիմում ներկայացնելու իրավունքի չարաշահման դեպքում ձևական իմաստով որպես իրավական հետևանք է վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին ընտրական հանձնաժողովի որոշումը, բովանդակային իմաստով՝ գործ ունենք դիմումը փաստացի անհետևանք թողնելու հետ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ / Հեղ. խումբ: Գիտ. Խմբ.՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան. 4-րդ լրամշակված հրատ.: Եր., «Լուսաբաց հրատարակչատուն», 2023:
2. **Դանիելյան Գ.** Իրավունքի չարաշահումը: Բանբեր Երևանի համալսարանի: 2021, № 2:
3. **Թորոսյան Գ., Թորոսյան Ս.,** Իրավունքի չարաշահում: Եր., «Հայրապետ» հրատ., 2019:
4. **Պետրոսյան Գ.Վ.,** Աշխատանքային իրավունք: Ընդհանուր մաս, դասագիրք բուհերի համար: Եր., ԵՊՀ, 2009:
5. **Հովհաննիսյան Գ.,** Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն: Եր., 2020:
6. **Василевич Г.А., Василевич С.Г.** Злоупотребление правом - правомерное поведение или правонарушение? // Экономика. право. общество. 2018, № (1).
7. **Доманжо В.** Ответственность за вред, причиненный путем злоупотребления правом. // Ученые записки Казанского университета. - Казань, 1913. Т. 80, кн. 5.
8. Дигесты Юстиниана. Избранные фрагменты в переводе и с примечаниями И.С. Перетерского. - М.: Наука, 1984.
9. **Емельянов В.И.** Юридическая сущность доброй совести // ЭЖ-Юрист. 2002. № 18.
10. **Егоров А.В.** Обход закона: использование дозволенной правом формы ради запрещенной правом цели // Вестник международного коммерческого арбитража. 2011. № 2 (4).

11. **Шебанова Н.А.** Злоупотребление процессуальными правами // Арбитражная практика. 2002. №5 (14).

12. **Радченко С.Д.** Злоупотребление правом в гражданском праве России: дисс. ... канд. юрид. наук. - М., 2007.

13. **Губарь А.С.** Шикана как особая форма злоупотребления гражданским правом // Вестник Пермского университета. Юридические науки. 2012. №4 (18).

14. **Григорян Г.В.** Правовые проблемы реализации принципа недопустимости злоупотребления правом в гражданских правоотношениях: дисс. ... канд. юрид. наук. - Ер., 2018.

15. **Садиков О.** Злоупотребление правом в Гражданском кодексе России // Хозяйство и право. 2002. № 2.

16. **Поротикова О.А.** Проблема злоупотребления субъективным гражданским правом. 3-е изд. - М.: Изд. “Юрайт”, 2023.

17. **Кабышев С.В.** Доктрина противодействия злоупотреблению правом в Канаде / противодействия злоупотреблению правом: теория, практика, техника: сборник статей по материалам Международной-практической конференции (Нижний Новгород, 23-24 мая 2019) / Под ред. В.А. Толстика, В.М. Баранова, П.В. Васильева. – Н. Новгород: Нижегородская академия МВД России, 2019.

18. **Захарова О.Е.** Запрет «обхода закона» в праве России и Германии // Проблемы экономики и юридической практики, 2018.

19. **Хвостов В.М.** Система римского права. Учебник. - М.: Спарк, 1996.

20. **Муранов А.И.** Законодательство: ВАС идет в обход // Ведомости (газета) 29 апреля 2011, №77 (2843): http://surl.li/phhza

21. **Муранов А.И.** Попытка внедрения понятия «обход закона» в ГК РФ и международный коммерческий арбитраж в России // Вестник международного коммерческого арбитража. 2011. № 1.

22. "Гражданский кодекс Российской Федерации. Часть первая. Постатейный комментарий" Авторы: С.П. Гришаев, Т.В. Богачева, Ю.П. Свит, 2019 год, https://rulaws.ru/gk-rf-chast-1/Razdel-I/Glava-2/Statya-10/

23. Швейцарское Гражданское Уложение 10 декабря 1907 года // Пер. К.М. Варшавского. Петрофад,1915. https://www.prlib.ru/item/699113

24. Гражданские и торговые кодексы зарубежных стран: сборник законодательства. Современное зарубежное частное право: учеб, пособие / Под ред. С.Н. Медведева, С.О. Звонок. - Ставрополь, 1999.

25. Обзор практики применения арбитражными судами ст. 10 ГК РФ. Информационное письмо Президиума ВАС РФ от 25.11.2008 № 127 // Вестник ВАС РФ. 2009. № 2. П. 5.

26. Определение Верховного Суда Российской Федерации по делу № 302-ЭС16-5440, 06 июня 2016 г. / https://vsrf.ru/stor_pdf_ec.php?id=1445318.

27. **Vetsch J.** Die Umgehung des Gesetzes. Zurich, 1917. S. 12.

28. Siehr, Gesetzesumgehung (Зир, «Обход закона»), в книге: Basedow/Hopt/Zimmermann (Hrsg), Handworterbuch des Europaischen Privatrechts (HWB) (Базедов/Хопт/Циммерманн (ред.), Справочник Европейского частного права) Т.1. 2009. С. 742.

29. Դատական գործ N:ԵԴ/21423/02/18
http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421203890633

30. *«Шрайбер и Бетч против Франции [Schreiber and Boetsch – France]»* № 58751/00// Бюллетень Европейского суда по правам человека. Российское издание. 2004. № 4.

31. *Canada (Attorney General) v. Bedford* / Supreme Court Judgments, Neutral citation 2013 SCC 72 / Case number 34788. https://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/13389/index.do

32. *Toronto (City) v. C.U.P.E.,* Local 79 / / Supreme Court Judgments, Neutral citation 2003 SCC 63 / Case number 28840. https://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/2097/index.do

33. *Bhasin v. Hrynew* / Supreme Court Judgments, Neutral citation 2014 SCC 71 / Case number 35380. https://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/14438/index.do

34. *Behn v. Moulton Contracting Ltd.* / Supreme Court Judgments, Neutral citation 2013 SCC 26 / Case number 34404. https://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/13038/index.do

35. https://www.parliament.bg/en/const

36. https://ecnl.org/sites/default/files/files/2021/GreeceConstitution.pdf

37. http://surl.li/otbur

38. https://publications.gc.ca/collections/collection_2017/pch/CH37-4-1-2005-rus.pdf

СОВРЕМЕННЫЕ РЕГУЛИРОВАНИЯ ЗАПРЕТА ЗЛОУПОТРЕБЛЕНИЯ СУБЪЕКТИВНЫМ ПРАВОМ

Аннотация

Настоящая статья посвящена системному анализу правовой природы и современного нормативного регулирования злоупотребления субъективным правом – одного из самых сложных и дискуссионных институтов в теории права и правоприменительной практике. В рамках исследования автор рассматривает проблему разграничения злоупотребления правом и классического правонарушения, делая акцент на телеологических (целевых) и функциональных аспектах осуществления права. Особое внимание в работе уделяется конституционно-правовым основаниям запрета злоупотребления субъективным правом и их отражению в отдельных отраслях частного и публичного права Республики Армения (в гражданском, трудовом, семейном и избирательном правах). С применением сравнительно-правового метода анализируются такие специфические правовые конструкции, как “шикана” и “обход закона”, при этом последний рассматривается в контексте целесообразности его классификации как самостоятельного вида злоупотребления правом. В статье автор приходит к выводу, что эффективность противодействия злоупотреблению правом во многом зависит от точного применения принципов “добросовестности” и “разумности” в рамках судебного усмотрения. Также анализируются предусмотренные за подобное злоупотребление правовые последствия – от отказа в защите права до лишения субъективного права – с подчеркиванием их превентивной и балансирующей функции в современном правопорядке.

Ключевые слова: субъективное право, злоупотребление субъективным правом, добросовестность, обход закона, шикана, отказ в защите права, судебное усмотрение.

MODERN REGULATIONS ON THE PROHIBITION OF THE ABUSE OF SUBJECTIVE RIGHTS

Annotation

This article is devoted to a systematic analysis of the legal nature and contemporary regulations surrounding the abuse of subjective rights, as one of the most complex and controversial doctrines in the theory of law and practice. Within the framework of this study, the author examines the fundamental issues of distinguishing the abuse of rights from classical legal offenses, placing particular emphasis on the teleological and functional aspects of the exercise of rights. Special attention is given to the constitutional legal foundations of the prohibition of the abuse of subjective rights, as well as their manifestation across various branches of private and public law of the Republic of Armenia (specifically civil, labor, family, and electoral law). Through the application of the comparative legal method, the article analyzes specific legal constructs such as "chicane" and "circumvention of the law", examining the latter within the context of the appropriateness of classifying it as a distinct form of abuse of rights. The author concludes that the effectiveness of combating the abuse of rights largely depends on the precise application of the principles of "good faith" and "reasonableness" within the scope of judicial discretion. Furthermore, the legal consequences envisaged for such abuse are analyzed, ranging from the denial of protection of rights to the deprivation of subjective rights, thus highlighting their preventive and balancing functions within the modern legal order.

Keywords: subjective rights, abuse of rights, good faith, circumvention of law, chicane, denial of protection of rights, judicial discretion.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 22.02.2026 թ., տրվել է գրախոսության 22.02.2026 թ., ընդունվել է տպագրության 02.03.2026 թ.:



DOI: 10.59560/18291155-2026.1-84

ԱՐԱՄ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ
«ՋԵՅ-ՓԻ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ՍՊԸ հիմնադիր,
ՀՀ Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ՀԱԿՈԲ ԿՈՒՐԵՂՅԱՆ
«ՋԵՅ-ՓԻ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ՍՊԸ փաստաբան,
ՀՀ Փաստաբանների պալատի անդամ

ՎԱՀԱԳՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի
«Քրեական արդարադատություն և փաստաբանություն»
ծրագրի 2-րդ կուրսի մագիստրանտ

ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Ամփոփագիր

30.06.2021 թ. ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) առաջին անգամ նախատեսել է տնային կալանք և վարչական հսկողություն այլընտրանքային խափանման միջոցները: Չնայած Օրենսգրքում դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ առանձին կարգավորումներ, հոդվածներ նախատեսված լինելուն՝ այնուամենայնիվ, գործնականում դրանց հետ կապված առաջանում են

իրավիճակներ, որոնց պատասխանն Օրենսգիրքը չի սահմանել կամ սահմանել է ոչ միանշանակ:

Նշվածը պայմանավորված է առավելապես հենց այն հանգամանքով, որ տնային կալանք և վարչական հսկողություն խափանման միջոցներն Օրենսգրքում սահմանվել են առաջին անգամ. 01.07.1998 թ. ընդունված, 01.07.2022թ. ուժը կորցրած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք) նշված այլընտրանքային խափանման միջոցները նախատեսված չեն եղել: Առաջին անգամ նախատեսված խափանման միջոցների պայմաններում, բնական է, որ կարող են առաջանալ գործնականում կիրառության հետ կապված հարցեր, վեր հանվեն օրենսդրական բացեր, խնդիրներ:

Սույն աշխատության շրջանակներում վեր են հանվում նշված խափանման միջոցների հետ կապված, իրավակիրառ պրակտիկայում ի հայտ եկած որոշ հիմնահարցեր, և փորձ է արվում իրավունքի մեկնաբանման իրավահամեմատական, համակարգային, տրամաբանական եղանակների կիրառմամբ հնարավոր պատասխաններ, լուծումներ առաջարկելու նշված հարցերին: Քննարկվում են վարչական հսկողության՝ ժամկետներով սահմանափակված չլինելու, արդյունավետ վերահսկողության մեխանիզմների բացակայության հանգամանքները, ինչպես նաև տնային կալանքի և վարչական հսկողության իրավաչափության պայմանները վիճարկող նոր և էական փաստարկների առկայության հիմքով դատարան միջնորդություն ներկայացնելու հնարավորության օրենսդրական հիմքերը, այդ առնչությամբ գործնական մոտեցումները:

Հիմնաբառեր. խափանման միջոց, տնային կալանք, վարչական հսկողություն, դատական պաշտպանություն, արդյունավետ վերահսկողություն, համաչափության սկզբունք:

1) <u>Վարչական հսկողության և դրան զուգահեռ սահմանափակումների կիրառման նկատմամբ ժամկետային շեմի և արդյունավետ վերահսկողության մեխանիզմի բացակայությունը</u>

1.1) Վարչական հսկողության կիրառման ժամկետի առավելագույն շեմի բացակայությունը

Տնային կալանք և վարչական հսկողություն այլընտրանքային խափանման միջոցներն Օրենսգրքում նախատեսելն առաջին հերթին նպատակ է հետապնդել անձի անձնական ազատության և այլ հիմնական իրավունքների ինտենսիվ սահմանափակում ենթադրող կալանքը որպես խափանման միջոց կիրառելու դեպքերի նվազեցման,

կալանքի՝ որպես «բացառիկ դեպքերում կիրառվող» խափանման միջոցի կարգավիճակն ընդգծելու:

Իրավամբ, Նախկին օրենսգրքի կարգավորումների պայմաններում կա՛մ պետք է կիրառվեր հնարավոր ամենաինտենսիվ խափանման միջոց կալանքը, կա՛մ էլ շատ դեպքերում անձի իրավաչափ վարքագիծն ապահովելու տեսանկյունից ոչ բավարար, շատ ավելի մեղմ խափանման միջոցներից որևէ մեկը: Երկու իրավիճակում էլ գործ էինք ունենում ծայրահեղությունների հետ, մի դեպքում՝ անձի իրավունքների նկատմամբ անհամաչափ խիստ (ինտենսիվ) միջամտության, մյուս դեպքում՝ իրավաչափ վարքագծի երաշխավորման տեսանկյունից անհամաչափ մեղմ (ոչ պիտանի) միջամտության տեսքով: Օրենսգրքում օգնության եկան տնային կալանք և վարչական հսկողություն խափանման միջոցները, որոնք ներկայումս հաճախ «ոսկե միջին»-ի տրամաբանությամբ ապահովում են Օրենսգրքի 15-րդ հոդվածով սահմանված վարույթի հանրայնության սկզբունքից բխող հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանության, անձի իրավունքների կամ ազատությունների սահմանափակումը հակակշիռ հանրային շահերի պաշտպանության նպատակին համաչափ լինելու հրամայականների իրացումը:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական հսկողության և տնային կալանքի կիրառմամբ ևս սահմանափակվում են անձանց՝ ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված մի շարք իրավունքներ, Օրենսգիրքը սահմանել է անձի իրավունքների պաշտպանությանն ուղղված երաշխիքներ, որոնք ապահովում են նշված խափանման միջոցների կիրառման ու անձի իրավունքների սահմանափակման իրավաչափությունը:

Այսպես, տնային կալանքը մեղադրյալի ազատության այնպիսի սահմանափակում է, որի ընթացքում նա պարտավոր է չլքել դատարանի որոշման մեջ նշված բնակության տարածքը: Նշված արգելքի հետ համատեղ հնարավոր է կիրառել նաև անձի իրավունքների այլ սահմանափակումներ (հաղորդակցության և շփումների սահմանափակման տեսքով): Օրենսգիրքը տնային կալանքի վերաբերյալ 123-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերում նշել է նաև, որ տնային կալանքի կիրառման կարգի, ժամկետների և բողոքարկման վրա տարածվում են կալանքի համար Օրենսգրքով սահմանված դրույթները, ինչպես նաև որ տնային կալանքի մեկ օրը հավասար է կալանքի մեկ օրվան:

Նշված կարգավորումն իրավաչափ է, քանզի տնային կալանքի պայմանները կալանքի պայմաններից, ըստ էության, տարբերվում են բացառապես այն տարածքով, տեղանքով, որտեղ անձը ենթարկվում է անձնական ազատության իրավունքի և այլ հիմնական իրավունքների սահմանափակման: Ուստի, կալանքի և տնային կալանքի

կիրառման կարգի, ժամկետների և բողոքարկման կարգի (իրավական ռեժիմի) նույնացումը տրամաբանական է:

Անդրադառնալով վարչական հսկողություն խափանման միջոցի վերաբերյալ Օրենսգրքի կարգավորումներին՝ նշենք, որ վարչական հսկողությունը մեղադրյալի տեղաշարժման և գործողությունների ազատության սահմանափակումն է[1], որի պայմաններում նա պարտավոր է ոչ հաճախ, քան շաբաթը երեք անգամ գրանցվել դատարանի որոշման մեջ նշված վայրի իրավասու մարմնում: Վարչական հսկողությանը զուգահեռ կարող են կիրառվել հետևյալ սահմանափակումները՝ առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության փոխել մշտական կամ ժամանակավոր բնակության վայրը՝ համայնքը, իսկ Երևան քաղաքում՝ վարչական շրջանը, այցելել որոշման մեջ նշված որոշակի վայրեր, հաղորդակցվել որոշակի անձանց հետ, օրվա որոշակի ժամերի լքել բնակության տարածքը, սակայն ոչ ավելի, քան 12 ժամը:

Օրենսգրքի 124-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ վարչական հսկողության կիրառման կարգի և բողոքարկման վրա տարածվում են կալանքի համար Օրենսգրքով սահմանված դրույթները: Ստացվում է, որ կալանքի (տնային կալանքի) ժամկետների վերաբերյալ կարգավորումները կիրառելի չեն վարչական հսկողություն խափանման միջոցի նկատմամբ: Միևնույն ժամանակ, Օրենսգրքում բացակայում է վարչական հսկողության ժամկետային սահմանափակման վերաբերյալ որևէ նորմ:

Հիշեցնենք, որ մինչդատական վարույթում կալանքը (տնային կալանքը) կարող է կիրառվել, կամ դրա ժամկետը կարող է երկարաձգվել յուրաքանչյուր դեպքում երկու ամսից ոչ ավելի ժամկետով, իսկ դատական վարույթում՝ յուրաքանչյուր դեպքում երեք ամսից ոչ ավելի ժամկետով: Ընդ որում, մինչդատական վարույթում կալանքի (տնային կալանքի) տակ պահելու առավելագույն ժամկետն է՝ չորս ամիս՝ ոչ մեծ ծանրության, վեց ամիս՝ միջին ծանրության, տասը ամիս՝ ծանր և տասներկու ամիս՝ առանձնապես ծանր հանցագործության համար մեղադրվելու դեպքում: Միաժամանակ, կալանքի (տնային կալանքի) տակ պահելու ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել մեղադրյալին վերագրվող հանցանքի համար նախատեսված՝ ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը:

Օրենսգրքի նշված կարգավորումները կալանքը (տնային կալանքը) որպես խափանման միջոց կիրառվելու դեպքում անձի համար ապահովում են հետևյալ կարևոր երաշխիքները.

[1] Նշվածը հանդիսանում է օրենսդրական ձևակերպում, սակայն վարչական հսկողության կիրառմամբ սահմանափակվում է նաև, օրինակ, անձի ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը՝ իր մարմնի վրա էլեկտրոնային հսկողության միջոցները մշտապես կրելու պարտականության ուժով:

1) անգամ նախաքննության կամ դատաքննության՝ տևական ժամանակ շարունակվելու դեպքում սահմանված են նշված խափանման միջոցների առավելագույն ժամկետներ, որոնց սպառման դեպքում, նույնիսկ եթե շարունակվում են պահպանվել կալանքի (տնային կալանքի) իրավաչափության պայմանները (հիմնավոր կասկած, անհրաժեշտություն և այլն), նշված խափանման միջոցները պետք է վերացվեն,

2) նշված խափանման միջոցները կիրառվելուց հետո դրանց շարունակական պահպանման անհրաժեշտությունը ենթակա է դատական պարտադիր պարբերական վերահսկողության. մինչդատական վարույթում՝ առնվազն երկու ամիսը մեկ անգամ, իսկ դատական վարույթում՝ առնվազն երեք ամիսը մեկ անգամ:

Մինչդեռ, Օրենսգրքում վարչական հսկողության և կալանքի (տնային կալանքի) ժամկետների չնույնացման և վարչական հսկողության համար առանձին ժամկետային սահմանափակման բացակայության պայմաններում նշված երաշխիքներն ապահովված չեն, ինչը չի բխում ինչպես նմանատիպ խափանման միջոցների կիրառման վերաբերյալ միջազգային փորձից, այնպես էլ իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքի էությունից:

Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգիրքը (ՌԴ քր. դատ. օր.) ևս նախատեսում է վարչական հսկողությանը համարժեք խափանման միջոց՝ որոշակի վարքագծի արգելքը (ՌԴ քր. դատ. օր., հոդված 105.1): Քանի որ ՌԴ քր. դատ. օր.-ով նախատեսված որոշակի վարքագծի արգելք խափանման միջոցի շրջանակներում մեղադրյալի վրա դրվող պարտականությունները, հնարավոր սահմանափակումները գրեթե նույնական են Օրենսգրքում ամրագրված վարչական հսկողությամբ սահմանվող պարտականություններին և սահմանափակումներին, սույն բաժնի շրջանակներում «վարչական հսկողություն» եզրույթը կօգտագործվի «որոշակի վարքագծի արգելք» եզրույթի փոխարեն:

Այսպես, ինչպես և Օրենսգրքում, ՌԴ քր. դատ. օր.-ում վարչական հսկողությունը ևս հանդիսանում է դատարանի կողմից կիրառվող խափանման միջոց, որի շրջանակներում անձի հնարավոր վարքագծի նկատմամբ կիրառվում են սահմանափակումներ, որոնց պահպանումը ենթակա է վերահսկողության իրավասու պետական մարմինների կողմից: Կիրառվել կարող են թվով վեց սահմանափակումներ՝ ինչպես առանձին-առանձին, այնպես էլ համակցված: Դրանք են.

1) որոշակի ժամանակահատվածներում լքել բնակելի տարածքը, որտեղ անձը բնակվում է որպես սեփականատեր, վարձակալ կամ այլ օրինական հիմունքներով.

2) գտնվել որոշակի վայրերում, ինչպես նաև սահմանված հեռավորությունից ավելի մոտենալ որոշակի օբյեկտների, այցելել որոշակի միջոցառումների և մասնակցել դրանց.

3) հաղորդակցվել որոշակի անձանց հետ.

4) ուղարկել և ստանալ փոստային-տելեգրաֆային առաքումներ.

5) օգտագործել կապի միջոցներ և «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցը.

6) վարել ավտոմեքենա կամ այլ տրանսպորտային միջոց, եթե կատարված հանցագործությունը կապված է ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների խախտման հետ:

Ի տարբերություն Օրենսգրքի, ՌԴ քր. դատ. օր.-ը սահմանել է ժամկետային շեմ վերը նշված սահմանափակումների ցանկում նշվածներից առաջինի վերաբերյալ: Այսպես, որոշակի ժամանակահատվածներում բնակելի տարածքը լքելու արգելքը կարող է կիրառվել առավելագույնը 12 ամիս ժամկետով՝ ոչ մեծ և միջին ծանրության, 24 ամիս ժամկետով՝ ծանր, 36 ամիս ժամկետով՝ առանձնապես ծանր հանցագործություն կատարած անձանց նկատմամբ: Օրենսգիրքը, որը ևս վարչական հսկողության կիրառման դեպքում նախատեսում է, ի թիվս այլ սահմանափակումների, օրվա որոշակի ժամերի բնակության տարածքը լքելու արգելքի հնարավորություն, չի նախատեսում քրեական վարույթի ընթացքում այդ արգելքի պահպանման առավելագույն ժամկետ:

Ակնհայտ է, որ որոշակի ժամերի բնակության տարածքը լքելու արգելքը, չնայած՝ կալանքի և տնային կալանքի համեմատ նվազ աստիճանի (ասվածը վիճելի է, որի մասին կխոսենք հաջորդիվ), բայցևայնպես անձնական ազատության, ազատ տեղաշարժի սահմանադրական իրավունքների սահմանափակում է, որի պահպանումը պետք է ունենա ժամկետի առավելագույն շեմ: Դեռ ավելին, ՌԴ քր. դատ. օր.-ի համաձայն՝ եթե անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելուց առաջ անձի նկատմամբ կիրառված է եղել վարչական հսկողություն՝ բնակելի տարածքը լքելու արգելքի սահմանմամբ, ապա նման արգելքի կիրառման ժամանակահատվածը հաշվի է առնվում հետագա հնարավոր կալանքի առավելագույն ժամկետը հաշվարկելիս՝ բնակելի տարածքը լքելու արգելքի երկու օրը հավասարեցնելով կալանքի մեկ օրվա: Այսինքն, ՌԴ օրենսդրի գնահատմամբ՝ վարչական հսկողության շրջանակներում բնակելի տարածքը լքելու արգելքի երկու օրը անձի իրավունքներին միջամտելու ինտենսիվությամբ հավասարազոր է կալանքի մեկ օրվան:

Նման պայմաններում անխուսափելի է վարչական հսկողության և դրա շրջանակներում կիրառվող սահմանափակումների ժամկետային առավելագույն շեմի սահմանումը հիմնական իրավունքների սահմանափակման համաչափության, քրեական վարույթի հանրայնության սկզբունքների համատեքստում, ինչը սակայն չի նախատեսվել Օրենսգրքում:

Այս տեսանկյունից հատկանշական է, որ ճիշտ է՝ կալանքի և տնային կալանքի համեմատ վարչական հսկողության շրջանակներում կիրառվող սահմանափակումները հանգեցնում են անձնական ազատության իրավունքի նվազ ինտենսիվ սահմանափակման (կրկին, սահմանափակման նվազ լինելը որոշակի վերապահում ունի, որին կանդրադառնանք), սակայն բացի անձնական ազատության իրավունքից, նշված սահմանափակումները վերաբերում են մի շարք այլ հիմնական իրավունքներին: Նշվածի համատեքստում դժվար է ամբողջությամբ համաձայնել ռուսական դոկտրինում արտահայտված տեսակետին առ այն, որ վարչական հսկողության վերը ներկայացված այլ՝ 2-րդից 6-րդ կետերում նշված սահմանափակումները կրում են հոգեբանական-զսպողական հարկադրանքի բնույթ՝ թույլ չտալով կասկածյալին (մեղադրյալին) ազատ իրականացնել իր իրավունքները[1]: Նման ձևակերպումը չափազանց մեղմ է արտահայտում սահմանափակումների էությունը: Չժխտելով սահմանափակումների հոգեբանական-զսպողական ասպեկտը՝ այնուամենայնիվ արձանագրում ենք, որ սահմանափակումները ոչ թե թույլ չեն տալիս մեղադրյալին ազատ իրականացնել իր իրավունքները, այլ հանգեցնում են սահմանադրական իրավունքների իրացման տոտալ արգելքի և անհնարինության: Այսպես, վարչական հսկողության պայմաններում կարող են կիրառվել այնպիսի արգելքներ, որոնք ամբողջությամբ սահմանափակում են անձի հաղորդակցության ազատության սահմանադրական իրավունքը (տե՛ս Օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված՝ որոշակի անձանց հետ հաղորդակցվելու արգելքը և ՌԴ քր. դատ. օր.-ի 105.1-դր հոդվածի 6-րդ մասի համանման՝ 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերը), անձնական ազատության և ազատ տեղաշարժվելու սահմանադրական իրավունքները (տե՛ս Օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով սահմանված բնակության վայրի փոփոխության, որոշակի վայրեր այցելելու և որոշակի ժամերի բնակության տարածքը լքելու արգելքները և ՌԴ քր. դատ. օր.-ի 105.1-դր հոդվածի 6-րդ մասի համանման՝ 1-ին և 2-րդ կետերը):

Պատահական չէ, որ ռուսական դոկտրինում մասնագետների, գիտնականների գերակշռող մասը, անգամ բնակության տարածքը լքելու արգելքի պահպանումը ժամկետային առավելագույն շեմով սահմանափակված լինելու պայմաններում, խնդրահարույց է համարում բնակության տարածքը լքելու արգելքից զատ, այլ

[1] **Маликова Н.В.** Запрет определенных действий: новое в российском уголовно-процессуальном законодательстве. Вестник Калининградского филиала Санкт-Петербургского университета МВД России, Калининград, 2018, № 4 (54).

սահմանափակումների կիրառման ժամկետի առավելագույն շեմի սահմանման բացակայությունը[1]:

Արձանագրենք նաև, որ բնակության տարածքը լքելու արգելքը որոշ դեպքերում կարող է կիրառվել այնպես, որ վարչական հսկողությունը փաստացի «վերածվի» տնային կալանքի: Այսպես, վարչական հսկողության շրջանակներում բնակության տարածքը լքելու արգելքը չի կարող գերազանցել օրական 12 ժամը (Օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ), և եթե անձի նկատմամբ վարչական հսկողության պայմաններում կիրառվի, օրինակ, առավոտյան 9:00-ից մինչև երեկոյան 21:00-ն ընկած ժամանակահատվածում բնակության տարածքը լքելու արգելք, վարչական հսկողությունը գործնականում չի տարբերվի տնային կալանքից, հատկապես հաշվի առնելով, որ վարչական հսկողության շրջանակներում կիրառվող սահմանափակումները կարող են կիրառվել նաև համակցված՝ հանգեցնելով իրավունքների էլ ավելի ինտենսիվ սահմանափակման: Ուստի այն արձանագրումը, որ վարչական հսկողության պայմաններում անձնական ազատության իրավունքի սահմանափակումն էականորեն նվազ ինտենսիվ է տնային կալանքի համեմատ, խիստ հարաբերական է:

Անվիճելի է, որ վարչական հսկողության պայմաններում, հաշվի առնելով դրա շրջանակներում կիրառվող սահմանափակումների էությունը, տեղի է ունենում անձի հիմնական իրավունքների սահմանափակում: Հիմնական իրավունքների սահմանափակումն անվերապահորեն պետք է համապատասխանի համաչափության սկզբունքին, նշված պահանջը սահմանադրական բնույթ է կրում՝ ամրագրված է ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածում: Նշված սկզբունքը և դրանից բխող պահանջները վերլուծվել են ՀՀ Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում և ամփոփվել ՍԴՈ-1546 որոշման[2] տեքստում:

Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ համաչափության սկզբունքի էությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների **սահմանափակումների սահմանափակումն է** մասնավոր և հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռության ապահովման միջոցով, և հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներին ներկայացվող սահմանադրական պահանջների շարքում այն ունի առանձնահատուկ կարևորություն:

[1] **Михайлина Ю.В.** Запрет определенных действий как мера пресечения // Вестник экономической безопасности. 2019, № 4.

Чернова С.С. Новая мера пресечения в уголовно-процессуальном законодательстве Российской Федерации // Юридическая наука и правоохранительная практика. 2018, № 3 (45).

[2] ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 18.06.2020 թվականի ՍԴՈ-1546 որոշում, www.concourt.am/decision/decisions/sdv-1546.pdf

Նույն որոշմամբ անդրադառնալով նաև համաչափության սկզբունքի տարրերից համարժեքության պահանջին՝ Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ որևէ հիմնական իրավունքի կամ ազատությանը չմիջամտելը կամ այն երաշխավորելը, կախված դրանց էությունից, կանոն է, իսկ դրա սահմանափակումը՝ բացառություն, որը պետք է հիմնավորվի սահմանափակման յուրաքանչյուր դեպքում: Ընդսմին, որքան ավելի ինտենսիվ է սահմանափակումը, այնքան ավելի է մեծանում սահմանափակումը հիմնավորելու բեռը:

Սահմանադրական դատարանի վերը նշված դիտարկումները որպես ելակետ ընդունելով՝ կարող ենք արձանագրել, որ վարույթն իրականացնող մարմինն անձի իրավունքների և ազատությունների սահմանափակման «անսահմանափակ հնարավորություն» չպետք է ունենա: Եթե իրավական ներգործության միջոցը հանգեցնում է անձի հիմնական իրավունքների սահմանափակման, հատկապես եթե նշված սահմանափակումը կրում է ինտենսիվ բնույթ, ապա նման սահմանափակումը չի կարող կիրառվել անժամկետ: Անձի հիմնական իրավունքների անժամկետ սահմանափակումը հանգեցնում է Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման տրամաբանության խեղման, արդյունքում ստացվում է, որ վարչական հսկողության և դրան զուգահեռ սահմանափակումների կիրառման պահից հիմնական իրավունքների ու ազատությունների նկատմամբ միջամտությունը, սահմանափակումը բացառությունից վերածվում է կանոնի, քանզի քրեական վարույթի ամբողջ ընթացքում դրա պահպանումը, անձի հիմնական իրավունքների սահմանափակումը սահմանափակված չէ ժամկետներով, սահմանափակման տևականությունը պարբերաբար հիմնավորելու անհրաժեշտությամբ: Խնդրի արդիականությունն ընդգծվում է հատկապես տևական նախաքննության/դատաքննության դեպքերում, հանրային քրեական հետապնդման ժամկետների կասեցման պայմաններում:

Ամփոփելով փաստենք, որ հաշվի առնելով վարչական հսկողության կիրառման պայմաններում անձի սահմանադրական իրավունքների բավական ինտենսիվ սահմանափակման հնարավորությունները՝ անհրաժեշտ է սահմանել վարչական հսկողության և դրա շրջանակներում կիրառվող սահմանափակումների՝ քրեական վարույթի ընթացքում պահպանման ժամկետային առավելագույն շեմ, ինչպես նաև բնակության տարածքը լքելու արգելքի կիրառման ժամանակահատվածի հաշվանցման հնարավորություն հետագայում հնարավոր կիրառվելիք կալանքի կամ ազատազրկման ձևով պատժի դեպքում՝ բնակության տարածքը լքելու արգելքի երկու օրը հավասարեցնելով կալանքի/ազատազրկման մեկ օրվա, կամ հաշվարկը կատարել բնակության տարածքը լքելու արգելքի ժամերի համագումարը հաշվի առնելով:

Վերջին դատողության համատեքստում հատկանշական է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ թիվ ԵԴ1/4188/01/25 գործով 04.12.2025 թվականին կայացված դատավճռով արձանագրված խիստ կարևոր և առաջադիմական իրավական դիրքորոշումը: Այսպես, վկայակոչված դատական ակտում նշվում է. *«(…)Դատարանը ցանկանում է անդրադառնալ նաև վարչական հսկողության ժամկետը պատժի մեջ հաշվակցելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությանը: Այս կապակցությամբ Դատարանն արձանագրում է, որ չնայած ՀՀ քրեական օրենսգրքով վարչական հսկողության ժամկետը պատժի մեջ հաշվակցելու կանոն և հաշվարկ չի նախատեսում, սակայն հաշվի առնելով, որ մեղադրյալի նկատմամբ վարչական հսկողությամբ կիրառված է եղել նաև տնից որոշակի ժամերին բացակայելու արգելք, ինչն ուղղակիորեն նշանակում է, որ այդ ժամերին նրա ազատությունը փաստացի սահմանափակված է եղել՝ Դատարանը գտնում է, որ մեղադրյալի նկատմամբ կիրառված վարչական հսկողության ժամկետը (սահմանափակված ժամերի տևողությամբ) նույնպես առկա է հաշվակցման նրա պատժի ժամկետի մեջ»:* Այս դեպքում արձանագրում ենք իրապես առաջադեմ, իրավունքի շահից բխող մեկնաբանություն: Չնայած, որ կալանքի ժամկետների վերաբերյալ կարգավորումները չեն տարածվում վարչական հսկողության նկատմամբ (ի տարբերություն տնային կալանքի), սակայն Դատարանը, արձանագրելով վարչական հսկողության շրջանակներում ևս անձի անձնական ազատության սահմանափակման հանգամանքը, հանգել է իրավաչափ հետևության, որ նշված ժամանակահատվածը ենթակա է հաշվակցման նշանակված պատժին:

Վարչական հսկողության կիրառման նկատմամբ պարբերական վերահսկողության մեխանիզմի առկայությունը ևս մեկ երաշխիք է, որը ներկայումս Օրենսգիրքը չի նախատեսում (առնվազն ըստ իրավակիրառ պրակտիկայում Օրենսգրքի նորմերին տրված մեկնաբանությունների) և որը կքննարկենք հաջորդիվ:

1.2) Վարչական հսկողության պարբերաբար վերանայման արդյունավետ ընթացակարգերի բացակայությունը

Ֆրանսիայի քրեական դատավարության օրենսգիրքը (Ֆրանսիայի քր. դատ. օր.) ևս նախատեսում է վարչական հսկողությանը համարժեք խափանման միջոց՝ դատական հսկողությունը (contrôle judiciaire) (հոդվածի շրջանակներում կօգտագործվի վարչական հսկողություն եզրույթը): Ի տարբերություն ՌԴ քր. դատ. օր.-ի և Օրենսգրքի՝ Ֆրանսիայի քր. դատ. օր.-ի համաձայն՝ վարչական հսկողությունը նախաքննության փուլում կիրառվում է ոչ թե դատարանի (juge des libertés et de la détention), այլ քննիչի (juge d'instruction) որոշմամբ: Միաժամանակ, ՌԴ քր. դատ. օր.-ին հակառակ և Օրենսգրքի կարգավորումներին համահունչ՝ Ֆրանսիայի քր. դատ. օր.-ը չի նախատեսում վարչական

հսկողության և դրա շրջանակներում կիրառվող սահմանափակումների՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետային առավելագույն շեմ:

Դրա հետ մեկտեղ, Ֆրանսիայի վճռաբեկ դատարանի քրեական պալատը, անդրադառնալով վարչական հսկողություն խափանման միջոցի և դրան զուգահեռ սահմանափակումների համապատասխանությանը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային (ՄԻԵԿ) սահմանափակման համաչափության չափանիշի տեսանկյունից՝ 2023 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ[1] արձանագրել է սահմանափակումների համաչափ լինելը այն հիմքով, որ դրանք ժամանակավոր են, քանզի անձը կարող է ցանկացած ժամանակ օրենքով սահմանված կարգով դիմել խափանման միջոցի վերացման խնդրանքով:

Ստացվում է, որ Ֆրանսիայի քր. դատ. օր.-ը էքսպլիցիտ (բացահայտ, ուղիղ) կերպով չի նախատեսում վարչական հսկողության և դրան զուգահեռ սահմանափակումների ժամկետի առավելագույն շեմ, բայց Ֆրանսիայի վճռաբեկ դատարանի քրեական պալատի որոշումը վարչական հսկողության համաչափության հիմնավորում է դիտարկում դրա՝ ժամկետով սահմանափակված լինելը, որի երաշխիքն էլ իրավասու մարմնի կողմից վարչական հսկողությունը ցանկացած պահի վերացնելու լիազորությունն է: Այսինքն, չնայած որ Ֆրանսիայի քր. դատ. օր.-ը ուղղակիորեն չի նախատեսում վարչական հսկողության առավելագույն ժամկետներ, սակայն Ֆրանսիայի վճռաբեկ դատարանի որոշման համաձայն՝ անձի իրավունքների սահմանափակման «անսահմանափակ չլինելու», ժամանակավորության իմպլիցիտ (քողարկված, անուղղակի) երաշխիք է պարբերական վերահսկողության մեխանիզմի առկայությունը:

Այսպես, Ֆրանսիայի քր. դատ. օր.-ի 140-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական հսկողության վերացման որոշում քննիչի կողմից կարող է կայացվել ցանկացած ժամանակ կա՛մ սեփական նախաձեռնությամբ, կա՛մ դատախազի հանձնարարությամբ, կա՛մ անձի դիմումի հիման վրա՝ դատախազի համաձայնությունը ստանալուց հետո:

Նույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ անձի կողմից վարչական հսկողության վերացման դիմումի հիման վրա քննիչը 5-օրյա ժամկետում կայացնում է պատճառաբանված որոշում, իսկ նշված ժամկետում որոշում չկայացնելու դեպքում անձը կարող է դիմել արդեն դատարան (chambre de l'instruction)՝ վարչական հսկողությունը վերացնելու պահանջով: Դատարանը նման դիմումի հիման վրա որոշումը կայացնում է քսանօրյա ժամկետում:

[1] Cour de cassation - Chambre criminelle 21 février 2023 / n° 22-86.760.

Ըստ նույն Օրենսգրքի 186-րդ հոդվածի՝ 140-րդ հոդվածի հիման վրա կայացված քննիչի որոշումը ենթակա է դատական բողոքարկման (chambre de l'instruction), իսկ 194-րդ հոդվածի կարգավորումների համապատասխան՝ դատական բողոքարկման արդյունքում դատարանը պարտավոր է որոշում կայացնել երկու ամսվա ընթացքում:

Պարբերական վերանայման ընթացակարգեր նախատեսում է նաև ՌԴ օրենսդրությունը: Մասնավորապես, ՌԴ քր. դատ. օր.-ի 110-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի կարգավորումների համաձայն՝ խափանման միջոցը դրա հիմքերի փոփոխության կամ դրա անհրաժեշտության վերացման դեպքում կարող է վերացվել կամ փոփոխվել հետաքննիչի, քննիչի կամ դատարանի որոշմամբ: Խափանման միջոցի փոփոխությունը կամ վերացումը հնարավոր է ինչպես նշված սուբյեկտների նախաձեռնությամբ, այնպես էլ՝ ՌԴ քր. դատ. օր.-ի 119-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված այն սուբյեկտների միջնորդությամբ, ում իրավունքներին և օրինական շահերին վերաբերում է միջնորդությունը: Նույն օրենսգրքի 120-րդ հոդվածի համաձայն՝ միջնորդության մերժումը կողմին չի զրկում հետագայում կրկին միջնորդությամբ հանդես գալու հնարավորությունից: 121-րդ հոդվածն էլ սահմանում է, որ միջնորդությունները ենթակա են քննության և լուծման դրանց հարուցումից հետո՝ անմիջապես, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հարուցումից հետո եռօրյա ժամկետում: Միջնորդության քննության արդյունքում կայացված որոշումը ենթակա է բողոքարկման՝ ՌԴ քր. դատ. օր.-ով սահմանված կարգով:

Ուշադրության է արժանի ՌԴ Սահմանադրական դատարանի 17.06.2021 թվականի N 29-Պ որոշումը[1], որի շրջանակներում քննարկման առարկա են դարձել գրավը որպես խափանման միջոց կիրառելու, դրա վերանայման և բողոքարկման ընթացակարգերը: Գրավը, ինչպես և վարչական հսկողությունը, ՌԴ օրենսդրության համաձայն, հանդիսանում է դատարանի կողմից կիրառվող խափանման միջոց: Չնայած ՌԴ որոշ աղբյուրներում տեղ գտած առանձին մեկնաբանություններին առ այն, որ դատարանի կողմից կիրառված խափանման միջոցը կարող է վերանայվել բացառապես դատարանի կողմից, ՌԴ Սահմանադրական դատարանը նշված որոշմամբ արձանագրել է, որ ՌԴ քր. դատ. օր.-ի 110-րդ, 119-րդ և 121-րդ հոդվածների կարգավորումների հիման վրա այն անձը, ում իրավունքներին և օրինական շահերին վերաբերում է դատարանի կողմից կիրառված խափանման միջոցը, կարող է դրա փոփոխման կամ վերացման վերաբերյալ միջնորդություն ներկայացնել հետաքննիչին, քննիչին կամ դատարանին: Միևնույն ժամանակ, ՌԴ Սահմանադրական դատարանը նշված միջնորդությունների արդյունքում

[1] Постановление Конституционного Суда РФ от 17.06.2021 г., N 29-П "По делу о проверке конституционности положений статей 106, 110 и 389.2 Уголовно-процессуального кодекса Российской Федерации".

կայացվող որոշումների դատական բողոքարկման հնարավորությունը դիտարկել է որպես անձի իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի երաշխիք:

Հակիրճ ամփոփելով Ֆրանսիայի և ՌԴ իրավական համակարգերում սահմանված մոտեցումները՝ պետք է փաստել, որ դրանցում ամրագրված են վարչական հսկողության նկատմամբ պարբերական վերահսկողության ճկուն մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս անձին վարույթի ցանկացած փուլում դիմելու վարույթն իրականացնող մարմնին վարչական հսկողության վերացման կամ դրա պայմանների փոփոխման խնդրանքով: Ընդ որում, անձի դիմումի հիման վրա վարույթն իրականացնող մարմնի որոշումները ենթակա են բողոքարկման, այդ թվում՝ դատական կարգով:

Նշված մոտեցման որդեգրումը բխում է մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված միջազգային մի շարք փաստաթղթերից: Օրինակ, 1966 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է ձերբակալման կամ կալանավորման արդյունքում ազատությունից զրկված անձի իրավունքը՝ կանգնելու դատարանի առջև, որպեսզի վերջինիս կողմից անհապաղ գնահատվի ազատության սահմանափակման իրավաչափությունը: Նույն իրավունքն ամրագրված է նաև ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 4-րդ մասում:

Ընդ որում, իրավունքի զարգացմանը զուգընթաց արձանագրվել է, որ ազատությունից զրկված անձի՝ նշված իրավունքների կրողը ոչ միայն ձերբակալված կամ կալանավորված անձինք են, այլ նաև ցանկացած այլ եղանակով անձնական ազատության սահմանափակման ենթարկված անձինք: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ ազատությունից զրկելը չի սահմանափակվում դասական ձերբակալմանը հաջորդող կալանքի դեպքով, այլ կարող է ունենալ բազմաթիվ այլ դրսևորումներ (տե՛ս, օրինակ, Guzzardi v. Italy, 1980, § 95):

ՄԻԵԴ մի շարք որոշումներում առանձնացվում են այն չափանիշները, որոնց հիման վրա կարող ենք արձանագրել անձի անձնական ազատության իրավունքի նկատմամբ միջամտություն: Գնահատման օբյեկտիվ չափանիշներ են, օրինակ, սահմանափակ տարածքը լքելու հնարավորությունը, անձի տեղաշարժի նկատմամբ հսկողության մակարդակը, մեկուսացման աստիճանը և սոցիալական շփումների առկայությունը (տե՛ս, օրինակ, Guzzardi v. Italy, 1980, § 95; H.M. v. Switzerland, 2002, § 45; H.L. v. the United Kingdom, 2004, § 91; Storck v. Germany, 2005, § 73): Անձի՝ ձեռնաշղթայված, խցում փակված չլինելու հանգամանքները չեն հանդիսանում որոշիչ հանգամանքներ

անձի անձնական ազատության սահմանափակման առկայությունը գնահատելու տեսանկյունից (տե՛ս, օրինակ, M.A. v. Cyprus, 2013, § 193):

Վերը նշվածը հաշվի առնելով՝ ակնհայտ է, որ վարչական հսկողություն խափանման միջոցը և դրան զուգահեռ կիրառվող սահմանափակումները համապատասխանում են անձնական ազատության սահմանափակման օբյեկտիվ չափանիշներին: Վարչական հսկողության կիրառմամբ անձին կարող է արգելվել որոշակի ժամերի լքել բնակության վայրը, անձի տեղաշարժը, վարքագիծը վերահսկվում են հատուկ էլեկտրոնային միջոցներով, անձը պարտավոր է որոշակի պարբերականությամբ գրանցվել դատարանի որոշման մեջ նշված վայրի իրավասու մարմնում, ինչպես նաև անձի նկատմամբ կարող է կիրառվել որոշակի անձանց հետ հաղորդակցվելու արգելք: Ընդ որում, նշված սահմանափակումների պահպանումն ապահովվում է դրանց խախտման դեպքում ավելի պիտանի (խիստ) խափանման միջոցի կիրառման ռիսկով: Ուստի, ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ դատարանի կողմից ազատության սահմանափակման իրավաչափությունը ստուգելու երաշխիքը տարածվում է նաև անձնական ազատության իրավունքի սահմանափակման չափանիշներին համապատասխանող վարչական հսկողության վրա:

Այս համատեքստում կարևոր է արձանագրել, որ անձնական ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափության դատական ստուգումը պետք է լինի պրակտիկ և արդյունավետ, այլ ոչ թե տեսական և պատրանքային: Նշվածը բխում է նաև հենց արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից, որն իր ամրագրումն է ստացել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածում:

ՀՀ Սահմանադրական դատարանը նշված իրավունքի էությանն անդրադարձել է ՍԴՈ-1257 որոշման[1] շրջանակներում, ի թիվս այլնի նշելով, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ:

Ողջ վերոգրյալը հիմք ընդունելով հանդերձ՝ արձանագրում ենք, որ Օրենսգրքում վարչական հսկողության պարբերաբար վերանայման արդյունավետ ընթացակարգերը բացակայում են:

Նախ, ինչպես արդեն նշվել է, վարչական հսկողության կիրառումը սահմանափակված չէ ժամկետներով, ուստի վարույթն իրականացնող մարմինը

[1] ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 10.03.2016 թվականի ՍԴՈ-1257 որոշում, www.concourt.am/decision/decisions/sdv-1257.pdf

պարտավոր չէ կալանքի և տնային կալանքի նմանությամբ, առնվազն յուրաքանչյուր երկու կամ երեք ամիսը մեկ անգամ պարբերականությամբ, հիմնավորելու վարչական հսկողության և դրան զուգահեռ սահմանափակումների անհրաժեշտությունը: Միգուցե կալանքին և տնային կալանքին հավասար պարբերականությամբ վարչական հսկողության պարտադիր վերանայումը լիարժեք արդարացված չէ, սակայն, այնուամենայնիվ, դրա պարտադիր վերանայման որոշակի պարբերականություն սահմանելը (օրինակ՝ յուրաքանչյուր չորս կամ վեց ամիսը մեկ) ողջամիտ է և բխում է անձի իրավունքների շարունակական սահմանափակման անհրաժեշտության և համաչափության ապացուցման բեռը պետության վրա դրվելու կանոնից[1]:

Ավելին, անձի միջնորդությամբ վարչական հսկողությունը վերացնելու, այն մեկ այլ խափանման միջոցով փոխարինելու կամ դրա պայմանները փոփոխելու ընթացակարգ նախաձեռնելու հարցում Օրենսգրքով նախատեսված լծակները և դրանց գործնականում կիրառումը խիստ թերի է:

Եթե, ինչպես վերը ներկայացվել է, Ֆրանսիայի և ՌԴ օրենսդրական կարգավորումները թույլ են տալիս վարչական հսկողության վերացման կամ փոփոխման խնդրանքով դիմելու վարույթն իրականացնող մարմնին (մինչդատական վարույթում՝ հետաքննիչին, քննիչին, իսկ դատական վարույթում՝ դատարան), ինչպես նաև բողոքարկելու վարույթն իրականացնող մարմնի՝ ոչ իրենց օգտին կայացված որոշումները (հետաքննիչի, քննիչի որոշումը՝ դատական կարգով, իսկ դատարանի որոշումը՝ դատական վերանայման կարգով), ապա Օրենսգրքի կարգավորումները և իրավակիրառ պրակտիկայում դրանց իմպլեմենտացումն անհամաչափ սահմանափակում են անձի դիմումի հիման վրա վարչական հսկողության վերանայման և դրա արդյունքում կայացվող որոշումների բողոքարկման հնարավորությունը:

Այսպես, Օրենսգրքի 117-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչդատական վարույթում դատարանի կիրառած խափանման միջոցը կարող է փոխել կամ վերացնել հսկող դատախազը: Նշված կարգավորման նախատեսմամբ օրենսդիրը հսկող դատախազին հնարավորություն է ընձեռել սեփական նախաձեռնությամբ կամ շահագրգիռ անձի միջնորդությամբ փոխելու կամ վերացնելու մինչդատական վարույթում դատարանի կիրառած խափանման միջոցը, այդ թվում՝ վարչական հսկողությունը: Միևնույն ժամանակ, նշված կարգավորման հետ կապված հարկ ենք համարում վեր հանել որոշ խնդրահարույց ասպեկտներ, որոնք բխում են ինչպես Օրենսգրքից, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայից:

[1] **Bochorishvili T., Takalandze B., Prezanti A.** Preventive Measure Usage Standards, Georgian Young Lawyers' Association, Tbilisi, 2020.

Նախ, մինչդատական վարույթում դատարանի կիրառած խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու իրավասությունը վերապահված է վարույթի հանրային մասնակից հանդիսացող, հանրային շահը ներկայացնող հսկող դատախազին, ուստի կարծել, որ վերջինիս կողմից սեփական նախաձեռնությամբ կամ շահագրգիռ անձի միջնորդությամբ մինչդատական վարույթում դատարանի կիրառած խափանման միջոցը, այդ թվում՝ վարչական հսկողությունը վերացնելը իրատեսական բնույթ է կրում, մեղմ ասած, չի համապատասխանում գործնականում առկա իրավիճակին:

Շատերը կարող են պնդել, որ Օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթի ուժով դատախազական հսկողությունը, ինչպես և հանրային այլ գործունեությունը քրեական վարույթի շրջանակներում իրականացվում է բացառապես իրավունքի շահից ելնելով, ուստիև համապատասխան հիմքերի առկայության դեպքում մինչդատական վարույթում դատարանի կիրառած խափանման միջոցի փոփոխությունը կամ վերացումը հսկող դատախազի կողմից իրատեսական է: Մինչդեռ հարկ ենք համարում նշել, որ նախ՝ հսկող դատախազի կողմից նշված լիազորության իրականացման համար անհրաժեշտ «համապատասխան հիմքեր»-ը Օրենսգրքում նախատեսված չեն և ըստ էության գտնվում են հսկող դատախազի հայեցողության տիրույթում: Ավելին, դատավարական շահերի գնահատման տեսանկյունից դժվար է պատկերացնել այն սցենարը, որ հանրային շահ հետապնդող, մեղադրական դիրքորոշման հակվածությամբ հսկող դատախազն իր որոշմամբ կփոխի կամ կվերացնի դատարանի կողմից կիրառված խափանման միջոցը՝ վերացնելով մեղադրյալի իրավունքների սահմանափակումները:

Բացի վերը նշվածից, Օրենսգրքով նախատեսված չէ նաև հսկող դատախազի՝ Օրենսգրքի 117-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա կայացված որոշման բողոքարկման հնարավորություն: Եթե Ֆրանսիայի և ՌԴ քր. դատ. օր.-ը հնարավորություն են տալիս անձին վարչական հսկողության փոփոխման կամ վերացման վերաբերյալ հետաքննիչին/քննիչին միջնորդություն ներկայացնելուց հետո կայացված որոշումը բողոքարկելու դատական կարգով, ապա ՀՀ իրավակիրառ պրակտիկան զարգանում է այն ուղղությամբ, որ մինչդատական վարույթում դատարանի կիրառած խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու միջնորդության արդյունքով հսկող դատախազի կայացրած որոշումը դատական բողոքարկման ենթակա չէ:

Այսպես, Օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, ի թիվս այլի, որ հսկող դատախազի վարութային ակտը ենթակա է բողոքարկման վերադաս դատախազին, իսկ վարույթի հանրային մասնակցի վարութային ակտը դատական կարգով կարող է բողոքարկվել բացառապես Օրենսգրքում ուղղակիորեն նախատեսված դեպքերում: Հաշվի առնելով ՀՀ դատախազության՝ որպես միասնական համակարգ

գործելու հանգամանքը (տե՛ս Դատախազության մասին ՀՀ օրենքի 1-ին հոդվածը), ինչպես նաև դատավարական շահերի վերաբերյալ նախորդիվ ներկայացված հիմնավորումները, ի սկզբանե բացառում ենք անձի իրավունքների սահմանափակումը չվերացնելու վերաբերյալ հսկող դատախազի որոշման գերատեսչական բողոքարկման իրական արդյունավետությունը:

Միաժամանակ, Օրենսգրքի 299-րդ հոդվածի 1-ին մասով, որով սահմանվում է մինչդատական ակտերի իրավաչափության դատական երաշխիքների շրջանակը, նախատեսված չէ Օրենսգրքի 117-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով հսկող դատախազի կողմից կայացված որոշման դատական բողոքարկման հնարավորություն: Ավելին, դատական պրակտիկան, ըստ էության, ընթանում է նշված հոդվածի հիմքով հսկող դատախազի որոշումների դեմ բերվող դատական բողոքները վարույթ չընդունելու ուղղությամբ նաև այն հիմնավորմամբ, որ հսկող դատախազի նշված որոշումը ենթակա չէ բողոքարկման նաև նույն հոդվածի 2-րդ մասի հիմքով, քանզի հսկող դատախազի որոշման վիճարկումը դատաքննության ընթացքում անհնար չի լինելու և բողոքարկողին ակնհայտորեն չի զրկելու իր իրավաչափ շահերն արդյունավետ պաշտպանելու իրական հնարավորությունից:

Դժվար է համաձայնել իրավակիրառ պրակտիկայում ձևավորված նշված մոտեցման հետ, հաշվի առնելով, որ դատաքննության ընթացքում հսկող դատախազի նշված որոշման վիճարկումն, իրավամբ, հնարավոր չէ: Նախնական դատալսումների փուլում դատարանի կողմից քննարկման ենթակա հարցերից է մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառման հարցը (տե՛ս Օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը), սակայն խափանման միջոցի կիրառման հարցի քննարկումը չի հանդիսանում հսկող դատախազի՝ Օրենսգրքի 117-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով կայացված որոշման վիճարկում, չի հանգեցնում նշված որոշման ոչ իրավաչափ լինելու հաստատման: Բացի այդ, հսկող դատախազի կողմից մինչդատական վարույթում դատարանի կիրառած խափանման միջոցը չփոխելու կամ չվերացնելու վերաբերյալ ոչ իրավաչափ որոշումը, որը ենթակա չէ դատական բողոքարկման 299-րդ հոդվածով սահմանված կարգով, շարունակում է ուժի մեջ մնալ ամբողջ մինչդատական վարույթի ընթացքում՝ հանգեցնելով անձի իրավունքների շարունակական սահմանափակման, ուստի անգամ վարչական հսկողության հետագա վերացումը նախնական դատալսումների փուլում խափանման միջոցի հարցը քննարկելիս անձին ակնհայտորեն զրկում է իր իրավաչափ շահերն արդյունավետ պաշտպանելու իրական հնարավորությունից:

Մինչդատական վարույթում դատարանի կողմից կիրառված խափանման միջոց վարչական հսկողության փոփոխման կամ վերացման խնդրանքով անմիջապես դատարան դիմելու իրավունքից անձը ևս զրկված է (նորմի տառացի մեկնաբանման

կանոնի կիրառման դեպքում), ինչին առավել մանրամասն կանդրադառնանք սույն աշխատության երկրորդ բաժնում:

Ողջ վերոգրյալի լույսի ներքո արձանագրում ենք վարչական հսկողության պարբերաբար և արդյունավետ վերանայման, դրա նկատմամբ վերահսկողության լծակների բացակայությունը, ինչը հանգեցնում է անձի հիմնական իրավունքների սահմանափակման շարունակական պահպանման վիճարկման անհնարինության, այդ թվում՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման եղանակով: Իրավունքների պաշտպանության նպատակով անկախության և անկողմնակալության բարձր չափանիշներով օժտված մարմնին՝ դատարանին դիմելու իրավունքը և հնարավորությունը, բոլոր դեպքերում, պետք է ապահովվի:

Խնդրի լուծում կարող է հանդիսանալ իրավակիրառ պրակտիկայի զարգացումը, Օրենսգրքի 299-րդ հոդվածի կարգավորումների այնպիսի մեկնաբանումը, ըստ որի՝ Օրենսգրքի 117-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով հսկող դատախազի կողմից կայացված՝ մինչդատական վարույթում դատարանի կիրառած խափանման միջոցը չփոխելու կամ չվերացնելու մասին որոշումը ենթակա է բողոքարկման դատական կարգով: Մեկ այլ լուծում կարող է հանդիսանալ Օրենսգրքի 299-րդ հոդվածի 1-ին մասում հսկող դատախազի նշված որոշման բողոքարկման հնարավորության էքսպլիցիտ նախատեսումը:

Հաջորդիվ կանդրադառնանք սույն բաժնում քննարկված հարցերի հետ սերտորեն կապված ևս մեկ օրենսդրական կարգավորման, որի էության բացահայտումը և մեկնաբանումը կարող է լուծել ինչպես սույն բաժնում ներկայացված, այնպես էլ գործնականում հանդիպող այլ խնդիրներ:

2) <u>Օրենսգրքի 289-րդ հոդվածով սահմանված կարգով տնային կալանքը կամ վարչական հսկողությունը վերացնելու կամ դրանց փոխարեն այլ խափանման միջոց կիրառելու միջնորդություն ներկայացնելու իրավունքը</u>

Օրենսգրքի 37-րդ գլխի կարգավորումները նվիրված են մինչդատական վարույթում խափանման միջոցների կիրառման դատական երաշխիքներին: Օրենսգրքի 284-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանի կողմից քննության են ենթակա.

1) վարչական հսկողությունը, տնային կալանքը կամ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը,

2) տնային կալանքի կամ կալանքի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ միջնորդությունը,

3) կալանքը վերացնելու կամ կալանքի փոխարեն այլընտրանքային խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը:

Օրենսգրքի 289-րդ հոդվածը վերնագրված է «Կալանքը վերացնելու կամ կալանքի փոխարեն այլընտրանքային խափանման միջոց կիրառելու միջնորդությունը և դրա քննությունը»:

Ըստ նշված հոդվածի 1-ին մասի՝ կալանավորված մեղադրյալը, նրա պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչն իրավունք ունեն միջնորդություն ներկայացնելու դատարան կալանքը վերացնելու կամ կալանքի փոխարեն այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին կալանքի ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան յոթ օր առաջ:

Վերը նշված նորմերի տառացի մեկնաբանումը prima facie (առաջին հայացքից) թույլ է տալիս կարծելու, թե մինչդատական վարույթում դատարանի կողմից քննության է ենթակա դատարանի որոշմամբ կիրառվող խափանման միջոցներից բացառապես կալանքը վերացնելու կամ դրա փոխարեն այլընտրանքային խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը: Եթե օրենսդրի կամքը լիներ նաև տնային կալանքը կամ վարչական հսկողությունը վերացնելու կամ դրանց փոխարեն մեկ այլ այլընտրանքային խափանման միջոց կիրառելու միջնորդության քննության հնարավորությունը դատարանին վերապահելը, ապա ինչպես և Օրենսգրքի 284-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերում, հոդվածի 3-րդ կետում ևս հատուկ կնշվեր դրա մասին:

Մինչդեռ Օրենսգրքի համակարգային մեկնաբանման արդյունքում կարող ենք եզրակացնել, որ 289-րդ հոդվածով սահմանված կարգով քննության ենթակա է նաև մինչդատական վարույթում դատարանի կողմից կիրառված տնային կալանքը կամ վարչական հսկողությունը վերացնելու կամ փոփոխելու վերաբերյալ միջնորդությունը:

Այսպես, Օրենսգրքի 123-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տնային կալանքի կիրառման կարգի, ժամկետների և բողոքարկման վրա տարածվում են կալանքի համար սույն օրենսգրքով սահմանված դրույթները: Վարչական հսկողության վերաբերյալ Օրենսգրքի 124-րդ հոդվածի 7-րդ մասը ևս կալանքի կիրառման կարգի և բողոքարկման համար Օրենսգրքով սահմանված դրույթները տարածում է վարչական հսկողության վրա:

Անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել «կիրառման կարգ» եզրույթի սահմանները. Արդյո՞ք տվյալ դեպքում «կիրառման կարգ» ասելով հասկանում ենք մինչդատական վարույթում կալանքի, տնային կալանքի և վարչական հսկողության՝ քննիչի միջնորդության հիման վրա դատարանի որոշմամբ ընտրելու (կիրարկվելու) գործընթացը (նեղ մեկնաբանում), թե՞ խոսքը գնում է նշված խափանման միջոցների կիրարկման, դրանց վերանայման (չշփոթել բողոքարկման հետ) ընթացակարգերի մասին իրենց ամբողջության մեջ (լայն մեկնաբանում):

Հակված ենք «կիրառման կարգ» եզրույթի լայն մեկնաբանմանը, հետևյալ հիմնավորմամբ.

Նախ՝ Օրենսգրքի՝ մինչդատական վարույթի դատական երաշխիքների վերաբերյալ 9-րդ բաժնում զետեղված 37-րդ գլուխը կրում է «Խափանման միջոցների կիրառման դատական երաշխիքները» վերտառությունը: Ստացվում է, որ նշված գլխի կարգավորումներն ամբողջությամբ վերաբերում են մինչդատական վարույթում դատարանի որոշմամբ խափանման միջոցների կիրառմանը: 37-րդ գլխի դրույթներով կարգավորվում են ոչ միայն քննիչի միջնորդության հիման վրա դատարանի կողմից կալանքի, տնային կալանքի կամ վարչական հսկողության կիրարկման հարցերը, այլ նաև անձի միջնորդության հիման վրա խափանման միջոցի իրավչափության պայմանների փոփոխությանը հանգեցնող նոր էական փաստարկի ուժով խափանման միջոցի վերանայման (փոփոխման կամ վերացման) հարցերը:

Ավելին, օբյեկտիվ իրականության մեջ հնարավոր չէ պատկերացնել որևէ ողջամիտ մեկնաբանություն, որով կհիմնավորվի, որ անձը կարող է միջնորդությամբ դատարանի առջև վկայակոչել խափանման միջոցի փոփոխման կամ վերացման համար նոր էական հանգամանք բացառապես իր նկատմամբ կալանք կիրառված լինելու դեպքում:

Օրենսգրքի 289-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կալանքը վերացնելու կամ կալանքի փոխարեն այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին միջնորդության քննության արդյունքում դատարանը որոշում է կայացնում միջնորդությունը մասնակի կամ ամբողջությամբ բավարարելու մասին, եթե հաստատում է Օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով ամրագրված հանգամանքներից որևէ մեկի առկայությունը: Օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում սահմանված են այն դեպքերը, երբ կալանք, տնային կալանք կամ վարչական հսկողություն կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու քննիչի միջնորդության քննության արդյունքով դատարանը կայացնում է միջնորդությունը մերժելու կամ այն մասնակի բավարարելու մասին որոշում:

Այսինքն, դատարանը Օրենսգրքի 289-րդ հոդվածի հիման վրա անձի միջնորդությունը կարող է բավարարել և կիրառված խափանման միջոցը կարող է փոփոխվել կամ վերացվել, եթե ի հայտ են եկել խափանման միջոցի կիրառման միջնորդությունն ի սկզբանե մերժելու (օրինակ, անձի նկատմամբ քրեական հետապնդումը բացառող հանգամանքի առկայությունը, մեղադրյալի կյանքին սպառնացող վտանգը և այն չեզոքացնելու հնարավորությունը չհիմնավորվելը) կամ ոչ ամբողջությամբ բավարարելու (օրինակ՝ մեղադրյալի օրինական վարքագիծը հնարավոր է ապահովել առավել մեղմ խափանման միջոցի կամ խափանման միջոցների համակցության կիրառմամբ) հիմքեր:

Որևէ տրամաբանական հիմնավորում չի կարող ներկայացվել առ այն, որ կալանավորված անձը կարող է Օրենսգրքի 289-րդ հոդվածով սահմանված կարգով միջնորդություն ներկայացնել դատարան՝ միջնորդությամբ վկայակոչելով այնպիսի նոր և էական փաստարկ, որով, օրինակ, հերքվում է ի սկզբանե հաստատված հանցանքի հիմնավոր կասկածը, իսկ այն անձը, որի նկատմամբ նույն դատարանի կողմից տնային կալանք կամ վարչական հսկողություն է կիրառվել, նման միջնորդություն ներկայացնել չի կարող: Նշվածով անձը զրկվում է իր նկատմամբ դատարանի կողմից կիրառված խափանման միջոցի իրավաչափության պայմանները վիճարկող նոր և էական հանգամանքը անկախ և անկողմնակալ դատարանի առջև վկայակոչելու հնարավորությունից, իսկ դատարանը զրկվում է իր իսկ կողմից կիրառված խափանման միջոցի (որն, ի դեպ, քրեական վարույթի բոլոր փուլերում, դատարանի բացառիկ իրավասության տիրույթում է) շարունակական պահպանման իրավաչափության գնահատման հնարավորությունից:

Նման պայմաններում հարցի լուծումը հնարավոր է իրավակիրառման երկու եղանակներով.

1) Եթե ընդունելի ենք համարում «կիրառման կարգ» եզրույթի լայն մեկնաբանումը և դրա տակ ներառում ենք նաև Օրենսգրքի 289-րդ հոդվածի հիմքով ներկայացվող միջնորդությունը և դրա քննությունը, ապա Օրենսգրքի 289-րդ հոդվածը ենթակա է extra legem կիրառման՝ Օրենսգրքի 123-րդ հոդվածի 5-րդ մասի և 124-րդ հոդվածի 7-րդ մասի հաշվառմամբ (կալանքի կիրառման կարգը տնային կալանքի և վարչական հսկողության վրա տարածելով) 289-րդ հոդվածում առկա օրենսդրական բացը օրենքի անալոգիայով լրացնելու միջոցով համապատասխան հիմքերի առկայության դեպքում քննության առարկա դարձնելով ոչ միայն կալանքը, այլև տնային կալանքը և վարչական հսկողությունը փոփոխելու/վերացնելու միջնորդությունները:

2) Եթե «կիրառման կարգ» եզրույթը մեկնաբանում ենք նեղ, խափանման միջոցը քննիչի միջնորդության հիման վրա դատարանի որոշմամբ ընտրվելու (կիրարկվելու) իմաստով, ապա Օրենսգրքի 289-րդ հոդվածը (կամ դրա այնպիսի մեկնաբանումը), որով բացառվում է տնային կալանքը կամ վարչական հսկողությունը կրող անձի կողմից վերը նշված հանգամանքների վկայակոչմամբ խափանման միջոցի փոփոխման կամ վերացման միջնորդությունը դատարանի կողմից քննվելու հնարավորությունը, աղաղակող անտրամաբանական է և անարդար: Դատարանները պետք է հիմք ընդունեն contra legem իրավունքի զարգացման դասական դոկտրինը (օրինականության սկզբունքից թույլատրելի բացառությունը)՝ հակադրվելով Օրենսգրքի 289-րդ հոդվածի տառացի տեքստին և գործեն իրավունքի գերակայության, արդարության սկզբունքների հիման վրա՝ այդ սկզբունքներից բխեցնելով վերը նշված

հանգամանքներում տնային կալանքի կամ վարչական հսկողության վերացման կամ փոփոխման միջնորդության քննության հնարավորությունը[1]:

Նշվածը կարևորում ենք նաև հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման տեսանկյունից, քանզի եթե վարույթի հանրային մասնակիցը կարող է տնային կալանքի կամ վարչական հսկողության պայմանները խախտած մեղադրյալի նկատմամբ առավել պիտանի (խիստ) խափանման միջոցի կիրառման միջնորդություն ներկայացնել դատարան, ապա մեղադրյալն էլ պետք է իր նկատմամբ կիրառված տնային կալանքի կամ վարչական հսկողության իրավաչափության պայմանների փոփոխության, խափանման միջոցի վերացման կամ փոփոխման վերաբերյալ նոր և էական փաստարկների հիմքով դատարան միջնորդություն ներկայացնելու իրավունք ունենա:

Հավելենք, որ իրավակիրառ պրակտիկայում արդեն իսկ արձանագրվել են «կիրառման կարգ» եզրույթի լայն մեկնաբանման հիման վրա անձի նկատմամբ կիրառված տնային կալանքի վերացման կամ դրա փոխարեն մեկ այլ այլընտրանքային խափանման միջոց կիրառելու միջնորդության վարույթի հարցուցման դեպքեր:

Նշվածը պետք է իրացվի նաև վարչական հսկողության դեպքում, մինչդեռ սույն հոդվածի կազմման ժամանակահատվածում արձանագրվել է հակառակ մոտեցումը՝ միջնորդության հիման վրա վարույթի հարուցման մերժումը այն հիմնավորմամբ, որ նման միջնորդություն կարող է ներկայացվել միայն կալանավորված մեղադրյալի առկայության պայմաններում:

Ամփոփում

Ամփոփելով սույն աշխատության շրջանակներում կատարված վերլուծության արդյունքները՝ գտնում ենք, որ տնային կալանք և վարչական հսկողություն խափանման միջոցների վերաբերյալ անհրաժեշտ են մի շարք օրենսդրական բարեփոխումներ՝ ուղղված անձանց իրավունքների սահմանափակման հավելյալ երաշխիքների նախատեսմանը: Պետք է սահմանվեն վարչական հսկողության առավելագույն ժամկետներ, ազատության սահմանափակման ժամանակահատվածի՝ կալանքի/պատժի ժամկետին հաշվակցման կանոններ, վարչական հսկողության և տնային կալանքի իրավաչափության ստուգման արդյունավետ ընթացակարգեր: Նշվածը հնարավոր է ապահովել նաև առկա օրենսդրական կարգավորումների՝ իրավունքի շահից բխող մեկնաբանմամբ և գործնականում կիրառմամբ:

[1] **Ղամբարյան Ա.Ս.,** Իրավաընկալումը և contra legem իրավունքի զարգացումը: Սահմանադրական դատարանի տեղեկագիր 2(114)2024: Երևան, 2024, 38 էջ:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի, դատական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն, 22.12.2015 թ. ուժի մեջ մտած խմբագրությամբ:
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 01.07.1998 թ. ընդունված, 01.07.2022թ. ուժը կորցրած:
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 30.06.2021 թ. ընդունված:
4. Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենք, 21.03.2018 թ. ընդունված:
5. Ֆրանսիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, 2026 թվականի փետրվարի 28-ի դրությամբ խմբագրություն:
6. Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգիրք, 2026 թվականի փետրվարի 28-ի դրությամբ խմբագրություն:
7. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, ընդունված 1950 թվականի նոյեմբերի 4-ին:
8. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր, ընդունված 1966 թվականի դեկտեմբերի 16-ին:
9. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներ՝ *Guzzardi v. Italy, 1980; H.M. v. Switzerland*, 2002; *H.L. v. the United Kingdom*, 2004; *Storck v. Germany*, 2005; *M.A. v. Cyprus*, 2013:
10. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 10 մարտի 2016 թ. ՍԴՈ-1257 որոշում:
11. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 18 հունիսի 2020 թ. ՍԴՈ-1546 որոշում:
12. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ թիվ ԵԴ1/4188/01/25 գործով 04.12.2025 թվականին կայացված դատավճիռ:
13. Cour de cassation - Chambre criminelle 21 février 2023 / n° 22-86.760.
14. Постановление Конституционного Суда РФ от 17.06.2021 г. N 29-П “По делу о проверке конституционности положений статей 106, 110 и 389.2 Уголовно-процессуального кодекса Российской Федерации”.
15. **Ղամբարյան Ա.Ս.,** Իրավաընկալումը և contra legem իրավունքի զարգացումը: Սահմանադրական դատարան տեղեկագիր 2(114)2024: Երևան, 2024, 38 էջ:
16. **Маликова Н.В.** Запрет определенных действий: новое в российском уголовно-процессуальном законодательстве. // Вестник Калининградского филиала Санкт-Петербургского университета МВД России. 2018, № 4 (54).
17. **Михайлина Ю.В.** Запрет определенных действий как мера пресечения. Вестник экономической безопасности. 2019, № 4.

18. **Чернова С.С.** Новая мера пресечения в уголовно-процессуальном законодательстве Российской Федерации. Юридическая наука и правоохранительная практика. 2018, № 3 (45).

19. **Bochorishvili T., Takalandze B., Prezanti A.,** Preventive Measure Usage Standards. Georgian Young Lawyers' Association, Tbilisi, 2020, 76 p.

НЕКОТОРЫЕ АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ, СВЯЗАННЫЕ С МЕРАМИ ПРЕСЕЧЕНИЯ В ВИДЕ ДОМАШНЕГО АРЕСТА И ЗАПРЕТА ОПРЕДЕЛЕННЫХ ДЕЙСТВИЙ

Аннотация

Уголовно-процессуальный кодекс Республики Армения, принятый 30.06.2021 года (далее также – Кодекс), впервые предусмотрел домашний арест и запрет определенных действий в качестве альтернативных мер пресечения. Несмотря на то что Кодекс содержит отдельные положения и статьи, регулирующие каждую из указанных мер, на практике возникают ситуации, регулирование которых Кодекс не содержит либо устанавливает его неоднозначно.

Указанное обстоятельство обусловлено прежде всего тем, что меры пресечения в виде домашнего ареста и запрета определенных действий были закреплены в Кодексе впервые, тогда как Уголовно-процессуальный кодекс Республики Армения, принятый 01.07.1998 года и утративший силу 01.07.2022 года (далее – прежний Кодекс), не предусматривал указанных альтернативных мер пресечения. В условиях введенных впервые мер пресечения закономерно возникновение вопросов, связанных с их практическим применением, а также выявление законодательных пробелов и проблем.

В рамках настоящего исследования выявляются отдельные проблемы, связанные с указанными мерами пресечения, проявившиеся в правоприменительной практике, и предпринимается попытка предложить возможные ответы и решения посредством применения сравнительно-правового, системного и логического методов толкования права. Рассматриваются вопросы отсутствия ограниченности запрета определенных действий конкретными сроками, отсутствия эффективных механизмов контроля правомерности, а также законодательные основания и практические подходы к подаче ходатайства в суд при наличии новых и существенных доводов, оспаривающих законность применения домашнего ареста и запрета определенных действий.

Ключевые слова: мера пресечения, домашний арест, запрет определенных действий, судебная защита, эффективный контроль, принцип соразмерности.

CERTAIN CURRENT ISSUES CONCERNING PREVENTIVE MEASURES IN THE FORM OF HOUSE ARREST AND ADMINISTRATIVE (JUDICIAL) SUPERVISION

Annotation

The Criminal Procedure Code of the Republic of Armenia, adopted on 30 June 2021 (hereinafter also referred to as the Code), for the first time introduced house arrest and administrative/judicial supervision (contrôle judiciaire) as alternative preventive measures. Although the Code contains separate provisions and articles regulating each of these measures, in practice, situations arise for which the Code provides no regulation or regulates ambiguously.

This is primarily due to the fact that preventive measures in the form of house arrest and administrative/judicial supervision were introduced for the first time in the Code, whereas the Criminal Procedure Code of the Republic of Armenia, adopted on 1 July 1998 and repealed as of 1 July 2022 (hereinafter - the Former Code) did not provide for such alternative preventive measures. In the context of newly introduced preventive measures, it is natural that issues relating to their practical application may arise, as well as legislative gaps and deficiencies become apparent.

Within the framework of this study, certain issues related to the aforementioned preventive measures that have emerged in law-enforcement practice are identified, and an attempt is made to propose possible answers and solutions through the application of comparative-legal, systemic, and logical methods of legal interpretation. The study examines the absence of statutory time limits for administrative/judicial supervision, the lack of effective mechanisms for supervising the legality of the measures, as well as the legislative grounds and practical approaches for filing a motion with the court on the basis of new and substantial arguments challenging the lawfulness of house arrest and administrative/judicial supervision.

Keywords: preventive measure, house arrest, administrative/judicial supervision, judicial protection, effective supervision, principle of proportionality.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 03.02.2026 թ., տրվել է գրախոսության 03.02.2026 թ., ընդունվել է տպագրության 20.02.2026 թ.:

DOI: 10.59560/18291155-2026.1-109

ՍԵՐԳԵՅ ՂԱԶԻՆՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դասախոս,
Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի փորձագետ,
Հայաստանի ամերիկյան համալսարանի
Հումանիտար և հասարակական գիտությունների
ֆակուլտետի դասախոս

ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ՍԱՀՄԱՆԱԴԱՒՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԻՏԱՆԿՅՈՒՆԻՑ. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփագիր

Հոդվածը ներկայացնում է մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի սահմանադրաիրավական ընկալումը՝ դիտարկելով այն ոչ միայն որպես քրեական արդարադատության խնդիր, այլ որպես սահմանադրական կարգի արժեքային հիմքերին սպառնացող երևույթ: Վերլուծությունը կառուցված է երկու փոխկապակցված հարթությունների վրա՝ նյութական հիմքեր և ընթացակարգային պարտավորություններ: Առաջին մասում հիմնավորվում է, որ մարդկանց թրաֆիքինգն իր բնույթով խաթարում է մարդու իրավական սուբյեկտայնությունը՝ անձին դարձնելով վերահսկվող օբյեկտ, և այդ պատճառով այն պետք է գնահատվի սահմանադրական իրավունքների ամբողջական համակարգում՝ հատկապես անձի արժանապատվության, ազատության և հարկադիր աշխատանքի արգելքի տրամաբանության ներքո:

Երկրորդ մասում բացահայտվում է պետության պոզիտիվ պարտավորությունների բովանդակությունը՝ արդյունավետ քննության, արդարադատության իրական մատչելիության, զոհերի պաշտպանության, իրավաբանական աջակցության և փոխհատուցման գործուն մեխանիզմների ապահովման համատեքստում: Հոդվածը շեշտում է միջազգային և սահմանադրական իրավունքի փոխազդեցությունը՝ ցույց տալով, որ թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ քաղաքականությունը ձևավորվում է նաև Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների ձևավորած չափանիշների հաշվառմամբ: Արդյունքում առաջ է քաշվում մոտեցում, ըստ որի մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը պետք է ընկալվի որպես սահմանադրական

կառավարման որակի չափանիշ՝ արտացոլելով պետության գործնական կարողությունը կանխատեսելու ռիսկերը, կանխելու շահագործումը և ապահովելու արդյունավետ պաշտպանություն:

Հիմնաբառեր. մարդու իրավունքներ, մարդկանց թրաֆիքինգի սահմանադրաիրավական բնույթ, պետության պոզիտիվ պարտավորություններ, մարդու արժանապատվություն, ինստիտուցիոնալ խոցելիություն, շահագործման ռիսկ, իրավունքների պաշտպանություն, հարկադիր աշխատանք, խոցելի խմբերի պաշտպանություն, սահմանադրական պետություն:

I. Նյութական («substantive») երաշխիքներ

Մարդկանց թրաֆիքինգը միջազգային իրավունքում և սահմանադրաիրավական տեսությունում բնութագրվում է ոչ թե որպես մեկ առանձին իրավունքի խախտում, այլ որպես հիմնարար իրավունքների համակցված և համակարգային ոտնահարում, որն ուղղված է մարդու՝ որպես բարձրագույն արժեքի դեմ: Այն ոչ միայն վնասում է կոնկրետ իրավունքը, այլ քայքայում է մարդու՝ իրավունքի սուբյեկտ լինելու հիմքը՝ վերածելով նրան վերահսկվող ռեսուրսի և շահագործման օբյեկտի: Այդ պատճառով թրաֆիքինգը պետք է դիտարկել ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխի ամբողջ տրամաբանության մեջ՝ որպես սահմանադրական կարգի արժեքային հիմքերի խախտում:

Մարդու արժանապատվությունը կազմում է այս համակարգի առանցքը: ՀՀ Սահմանադրությունը հռչակում է, որ մարդու արժանապատվությունն անխախտելի է և չի կարող սահմանափակվել նույնիսկ արտակարգ դրության պայմաններում[1]: Ինչպես արդեն նշվեց նախորդիվ, մարդկանց թրաֆիքինգի էությունը հենց արժանապատվության ժխտումն է. զոհը դիտարկվում է որպես առուվաճառքի առարկա, ոչ թե որպես ինքնուրույն կամք ունեցող անձ: Մարդկանց թրաֆիքինգը ենթադրում է մարդու նկատմամբ սեփականության իրավունքին բնորոշ լիազորությունների իրացում, այսինքն՝ մարդուն վերաբերվում են որպես օբյեկտի, որը կարելի է վերահսկել, տեղափոխել և շահագործել: Այս մոտեցումն ուղղակիորեն հակասում է արժանապատվության սահմանադրական հասկացությանը, քանի որ մարդը դուրս է բերվում իրավական սուբյեկտայնությունից:

Կյանքի, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքները, որոնք երաշխավորվում են նաև ՀՀ Սահմանադրությամբ[2], ևս անմիջականորեն վտանգված են

[1] ՀՀ Սահմանադրություն, հոդված 23, https://www.arlis.am/hy/acts/143723/latest

[2] ՀՀ Սահմանադրություն, հոդվածներ 24 և 25, https://www.arlis.am/hy/acts/143723/latest

մարդկանց թրաֆիքինգի պայմաններում: Զոհերը հաճախ ենթարկվում են մահվան իրական վտանգի, ծեծի, սեռական բռնության, հոգեբանական ճնշման և մշտական վախի: Այս իրավիճակներում պետության պարտավորությունը սահմանափակված չէ միայն չվնասելու սկզբունքով: Այն կրում է պոզիտիվ պարտավորություն՝ պաշտպանելու անձին երրորդ անձանց ոտնձգություններից: ՄԻԵԴ-ը հաստատել է, որ պետությունը խախտում է կյանքի իրավունքը, եթե չի ձեռնարկում օպերատիվ միջոցներ իրական և անմիջական վտանգի պայմաններում, երբ իշխանությունները գիտեին կամ պարտավոր էին իմանալ վտանգի մասին[1]: Մարդկանց թրաֆիքինգի համատեքստում սա նշանակում է, որ պետությունը պատասխանատվություն է կրում ոչ միայն մահվան փաստի, այլ նաև այն համակարգային ռիսկերի համար, որոնք կարող էին կանխատեսելիորեն հանգեցնել զոհի ֆիզիկական կամ հոգեկան վնասին:

Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի բացարձակ արգելքը, պաշտպանված նաև ՀՀ Սահմանադրությամբ[2], մարդկանց թրաֆիքինգի համատեքստում ունի առանձնահատուկ նշանակություն, քանի որ շահագործումը հաճախ իրականացվում է այնպիսի պայմաններում, որոնք համակարգային կերպով քայքայում են անձի արժանապատվությունն ու ինքնավարությունը: Մարդկանց թրաֆիքինգի զոհերը կարող են պահվել վերահսկվող կամ փակ տարածքներում, զրկվել տարրական կենսապայմաններից, ենթարկվել սեռական շահագործման, ֆիզիկական բռնության կամ մշտական սպառնալիքների, ինչը ստեղծում է նվաստացման և վախի շարունակական միջավայր: ՄԻԵԴ-ն ընդունել է, որ նման իրավիճակները կարող են հասնել Կոնվենցիայի 3-րդ հոդվածով արգելված վերաբերմունքի շեմին. մասնավորապես *Յ.Ն.-ն և Վ.-ն ընդդեմ Ֆրանսիայի* գործով Դատարանը նշել է, որ շահագործման պայմաններում պահվող անձանց նկատմամբ վերաբերմունքը կարող է համարվել անմարդկային և նվաստացնող, եթե պետությունը չի ապահովում արդյունավետ պաշտպանություն և քննություն[3]: Քանի որ այս արգելքը բացարձակ բնույթ ունի, պետության անգործությունը կամ անարդյունավետ արձագանքը շահագործման պայմանները կանխելու կամ դադարեցնելու հարցում դիտարկվում է որպես հիմնարար իրավունքի խախտում:

[1] *«Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության»* գործ [ՄՊ], գանգատ թիվ 23452/94, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, 1998 թ. հոկտեմբերի 28, պարբ. 116, https://hudoc.echr.coe.int/eng?i=001-58257

[2] ՀՀ Սահմանադրություն, հոդված 26, https://www.arlis.am/hy/acts/143723/latest

[3] *«Յ.Ն.-ն և Վ.-ն ընդդեմ Ֆրանսիայի»* գործ, գանգատ թիվ 67724/09, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, 2012 թ. հոկտեմբերի 11, պարբ. 89–104, https://hudoc.echr.coe.int/eng?i=001-113245

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված **անձնական ազատությունը և ազատ տեղաշարժվելու իրավունքը**[1] ևս հանդիսանում են մարդկանց թրաֆիքինգի տեսանկյունից հանդիպող խախտումներից: Զոհերը հաճախ փաստացի զրկված են լինում ազատությունից՝ պահվում են փակ տարածքներում կամ վերահսկվում են փաստաթղթերի առգրավման, պարտքային կախվածության կամ սպառնալիքների միջոցով: Թեև ազատությունից զրկելը կարող է իրականացվել մասնավոր անձանց կողմից, պետությունը պատասխանատվություն է կրում, եթե չի միջամտում կամ, առավել ևս, նպաստում է այդ իրավիճակին: *Ռանցևն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի* գործով վճռում ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ ոստիկանության կողմից զոհին մարդկանց թրաֆիքինգի ենթարկող անձին հանձնելը փաստացի օժանդակել է ազատությունից զրկմանը, ինչը պետության պատասխանատվության դասական օրինակ է[2]:

Հարկադիր աշխատանքի արգելքը մարդկանց թրաֆիքինգի իրավական գնահատման առանցքային տարրերից է, քանի որ թրաֆիքինգը հենց կառուցվածքային առումով հիմնված է անձի կամքի ճնշման և շահագործման վրա: ՀՀ Սահմանադրությունը բացահայտ արգելում է հարկադիր աշխատանքը՝ ամրագրելով, որ «պարտադիր կամ հարկադիր աշխատանքն արգելվում է», ինչը սահմանադրական մակարդակով հաստատում է աշխատանքի ազատ ընտրության սկզբունքը և մարդու ինքնավարության պաշտպանությունը[3]: Այս արգելքը չի վերաբերում միայն դասական հարկադիր աշխատանքին, այլ ընդգրկում է շահագործման բոլոր այն ձևերը, որոնց դեպքում անձը զրկված է իրական ազատ ընտրությունից և գտնվում է վերահսկողության կամ կախվածության մեջ:

ՄԻԵԴ-ն իր *Ռանցևն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի* գործով վճռում հստակ ձևակերպել է, որ մարդկանց թրաֆիքինգն իր բնույթով ընկնում է Կոնվենցիայի 4-րդ հոդվածի՝ ստրկության, ծառայության և հարկադիր աշխատանքի արգելքի շրջանակում: Դատարանը նշեց, որ թրաֆիքինգը ստրկության ժամանակակից ձև է, քանի որ այն ներառում է անձի նկատմամբ սեփականությանը բնորոշ լիազորությունների իրականացում և նրա շահագործումը՝ վերահսկողության, հարկադրանքի և կախվածության միջոցով[4]:

[1] ՀՀ Սահմանադրություն, հոդվածներ 27 և 40, https://www.arlis.am/hy/acts/143723/latest

[2] *«Ռանցևն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի»* գործ, գանգատ թիվ 25965/04, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, 2010 թ. հունվարի 7, պարբ. 321–326, https://hudoc.echr.coe.int/eng?i=001-96549

[3] ՀՀ Սահմանադրություն, հոդված 32, https://www.arlis.am/hy/acts/143723/latest

[4] *«Ռանցևն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի»* գործ, գանգատ թիվ 25965/04, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, 2010 թ. հունվարի 7, պարբ. 282–283, https://hudoc.echr.coe.int/eng?i=001-96549

Նույն մոտեցումն արտացոլված է նաև միջազգային պայմանագրային իրավունքում: ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիան լրացնող՝ Մարդկանց թրաֆիքինգը, հատկապես կանանց և երեխաների դեմ, կանխելու, ճնշելու և պատժելու մասին արձանագրության («Պալերմոյի արձանագրություն») 3-րդ հոդվածը շահագործման մեջ ներառում է հարկադիր աշխատանքը, ստրկությունը և ստրկությանը նմանվող պրակտիկաները՝ հաստատելով, որ թրաֆիքինգն իրավական առումով անբաժանելիորեն կապված է հարկադիր աշխատանքի արգելքի հետ[1]:

Այսպիսով, հարկադիր աշխատանքի արգելքը թրաֆիքինգի դեմ պայքարում պարզապես առանձին նորմ չէ. այն հանդիսանում է այն իրավական հիմքը, որի վրա կառուցվում են պետության պոզիտիվ պարտավորությունները՝ պաշտպանելու անձին շահագործումից, վերականգնելու զոհերի իրավունքները և բացառելու ժամանակակից ստրկության ցանկացած ձև:

Հատկանշական է նաև, որ ՄԻԵԿ 4-րդ հոդվածով ամրագրված ստրկության և հարկադիր աշխատանքի արգելքն ունի **բացարձակ բնույթ**: Ի տարբերություն մի շարք այլ իրավունքների, այն չի նախատեսում որևէ բացառություն և չի կարող սահմանափակվել անգամ արտակարգ դրության պայմաններում: ՄԻԵԿ 15-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ ամրագրում է, որ այս արգելքից **չի թույլատրվում շեղում** նույնիսկ արտակարգ իրավիճակների դեպքում: Դատարանի մեկնաբանությամբ՝ սա վկայում է, որ մարդկանց թրաֆիքինգի, ստրկության և հարկադիր աշխատանքի արգելքը պատկանում է հիմնարար արժեքների այն նեղ շրջանակին, որոնք ձևավորում են ժողովրդավարական հասարակության հիմքը և արտահայտում են մարդու արժանապատվության անքակտելի պաշտպանությունը[2]: Հետևաբար, պետությունների պարտավորություններն այս ոլորտում կրում են ոչ միայն պոզիտիվ, այլև անվերապահ բնույթ:

Երեխայի իրավունքները, որոնք Հայաստանում պաշտպանվում են սահմանադրական մակարդակում[3], պահանջում են առավել խիստ և ակտիվ պաշտպանություն[4]: Երեխաների թրաֆիքինգի դեպքում միջազգային իրավունքը

[1] ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիան լրացնող՝ Մարդկանց թրաֆիքինգը, հատկապես կանանց և երեխաների դեմ, կանխելու, ճնշելու և պատժելու մասին արձանագրություն («Պալերմոյի արձանագրություն»), հոդված 3, https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/protocol-prevent-suppress-and-punish-trafficking-persons

[2] *«Ռանցևն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի»* գործ, գանգատ թիվ 25965/04, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, 2010 թ. հունվարի 7, պարբ. 283, https://hudoc.echr.coe.int/eng?i=001-96549

[3] ՀՀ Սահմանադրություն, հոդված 37, https://www.arlis.am/hy/acts/143723/latest

[4] «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա (1989 թ.), https://www.arlis.am/hy/acts/60503

ճանաչում է, որ շահագործման փաստը բավարար է թրաֆիքինգի համար՝ անկախ հարկադրանքի միջոցներից[1]: Սա նշանակում է, որ պետությունը պարտավոր է ստեղծել միջավայր, որտեղ երեխան զերծ կլինի շահագործումից, և ապահովել նրա ֆիզիկական, հոգեկան և սոցիալական անվտանգությունը:

Այսպիսով, մարդկանց թրաֆիքինգը չի կարելի դիտարկել որպես մեկ իրավունքի խախտում: Այն հանդիսանում է սահմանադրական իրավունքների ամբողջական համակարգի խաթարում՝ արժանապատվությունից մինչև ազատություն, կյանքից մինչև խտրականության արգելք: Այդ պատճառով թրաֆիքինգի դեմ պայքարը պետք է ընկալվի որպես սահմանադրական պարտականություն, այլ ոչ պարզապես քրեական քաղաքականության ուղղություն:

II. Ընթացակարգային («procedural») երաշխիքներ

Ժամանակակից սահմանադրական իրավունքի տեսանկյունից մարդու իրավունքների պաշտպանության համակարգը վաղուց հաղթահարել է այն ընկալումը, ըստ որի պետության դերը սահմանափակվում է միայն քաղաքացիների ազատություններին «չմիջամտելով» («negative obligations»): Մարդկանց թրաֆիքինգի՝ որպես մարդու արժանապատվության և ամբողջականության դեմ ուղղված հանցագործության դեմ պայքարը պահանջում է պետությունից գործուն և նախաձեռնողական քայլեր, որոնք իրավագիտության մեջ բնորոշվում են որպես պոզիտիվ պարտավորություններ («positive obligations»): «Մարդու իրավունքների խթանում» («promotion of human rights») եզրույթը, որը հաճախ օգտագործվում է, օրինակ, քաղաքական քննարկումներում, իրավական առումով թերի է և նույնիսկ վտանգավոր, քանի որ այն ենթադրում է պետության հայեցողական բարի կամք: Մինչդեռ, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի ուժով պետությունը ոչ թե «խթանում» է, այլ կրում է իմպերատիվ պարտականություն՝ երաշխավորելու, ապահովելու և պաշտպանելու մարդու անօտարելի իրավունքները:

Մարդկանց թրաֆիքինգի դեպքերի վերաբերյալ պետության ընթացակարգային («procedural») ապահովման տեսանկյունից կարևոր է արդար դատաքննության իրավունքի երաշխավորումը, արդյունավետ քննության իրականացումը և զոհերի իրավունքների խախտման դիմաց փոխհատուցման գործուն կառուցակարգերի

[1] **Ջեյսոն Հեյնս,** «Ոսկե ստանդարտից հետընթաց. Միացյալ Թագավորության ստրկության և մարդկանց թրաֆիքինգի կանոնակարգերը և զոհերի պաշտպանության նեղացումը» (**Jason Haynes**, "Regressing from the Gold Standard: The UK's Slavery and Human Trafficking Regulations and the Narrowing of Victim Protection"): Statute Law Review, հատոր 45, 2024, հոդված hmae059, առցանց հրապարակում՝ 17 դեկտեմբերի 2024, https://doi.org/10.1093/slr/hmae059

առկայությունը: Երբ իրավունքի խախտումն արդեն իսկ տեղի է ունեցել, պետությունը պարտավոր է ապահովել արդյունավետ քննություն: Սա պարզապես ձևական ընթացակարգ չէ, այլ սահմանադրական պահանջ, որը բխում է նաև ՀՀ Սահմանադրության 61-րդ (Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը) և 63-րդ (Արդար դատաքննության իրավունքը) հոդվածներից[1]:

Արդար դատաքննության իրավունքը մարդկանց թրաֆիքինգի զոհերի պաշտպանության առանցքային սահմանադրական երաշխիքներից է, քանի որ այն կապում է իրավունքի խախտման փաստը իրավական արձագանքի հետ: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը չի կարող սահմանափակվել միայն զոհերի հայտնաբերմամբ կամ սոցիալական աջակցությամբ. այն պահանջում է արդյունավետ քրեական արդարադատություն, որը միաժամանակ ապահովում է թե՛ զոհերի իրավունքների պաշտպանությունը, թե՛ մեղավորների պատասխանատվությունը: ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով ամրագրված դատական պաշտպանության իրավունքը և արդար դատաքննության իրավունքը պահանջում են, որ յուրաքանչյուր անձ, ներառյալ մարդկանց թրաֆիքինգի զոհերը, ունենան դատարանի իրական և արդյունավետ մատչելիություն, հավասար պայմաններ դատավարությունում և իրենց գործի անկախ ու անաչառ քննություն:

ՄԻԵԴ նախադեպային իրավունքում առայժմ ձևավորված չէ այնպիսի հստակ դիրքորոշում, ըստ որի՝ մարդկանց թրաֆիքինգի զոհերը ինքնին ունեն անվերապահ իրավունք անվճար իրավաբանական օգնության: Սակայն Դատարանը մի շարք գործերում ընդգծել է, որ խոցելի վիճակում գտնվող անձանց դեպքում պետության պոզիտիվ պարտավորությունները կարող են պահանջել ապահովել անվճար իրավաբանական օգնություն, եթե դրա բացակայությունը փաստացի խոչընդոտում է արդարադատության մատչելիությունը կամ զոհի արդյունավետ մասնակցությունը վարույթին[2]: Այս մոտեցումը բխում է ՄԻԵԿ 6-րդ հոդվածից՝ դատարան դիմելու իրական և արդյունավետ հնարավորության ապահովման համատեքստում, և կարող է զուգակցվել 4-րդ հոդվածով նախատեսված՝ մարդկանց թրաֆիքինգի զոհերին պաշտպանելու և արդյունավետ քննություն իրականացնելու պետության պարտականությունների հետ:

Ավելին, ԵԽ կոնվենցիան ուղղակիորեն ամրագրում է զոհերի իրավունքը իրավաբանական օգնության և ներկայացուցչության: Կոնվենցիայի մեկնաբանությամբ՝

[1] ՀՀ Սահմանադրություն, հոդվածներ 61 և 63, https://www.arlis.am/hy/acts/143723/latest

[2] *«Էյրին ընդդեմ Իռլանդիայի»* գործ, գանգատ թիվ 6289/73, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, 1979 թ. հոկտեմբերի 9, https://hudoc.echr.coe.int/eng?i=001-57420

իրավաբանական աջակցությունը պետք է լինի հասանելի, անվճար և մասնագիտացված, որպեսզի զոհը կարողանա մասնակցել քրեական և քաղաքացիական վարույթներին, պահանջել փոխհատուցում և պաշտպանել իր շահերը[1]: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (այսուհետ՝ ԵԽ կոնվենցիա) մշտադիտարկումն իրականացնող մարմինը՝ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի փորձագետների խումբն (ԳՐԵՏԱ) իր զեկույցներում բազմիցս ընդգծել է, որ անվճար իրավաբանական օգնության բացակայությունը կամ ձևական բնույթը հանգեցնում է նրան, որ զոհերը դուրս են մնում արդարադատության համակարգից և փաստացի չեն կարողանում օգտվել իրենց իրավունքներից[2]:

Ավելին, մարդկանց թրաֆիքինգի գործերով ապացույցների գնահատումը պահանջում է հատուկ, համատեքստային մոտեցում, որը պայմանավորված է շահագործման իրավիճակների բնույթով: Մարդկանց թրաֆիքինգի զոհերը հաճախ գտնվում են վախի, կախվածության և հոգեբանական ճնշման պայմաններում, ինչը կարող է անդրադառնալ նրանց վարքագծի և ցուցմունքների ձևավորման վրա: Այս հանգամանքը ենթադրում է, որ ապացույցների գնահատումը չի կարող կառուցվել քրեական դատավարության ընդհանուր չափանիշներով: Իրավական վերլուծությունը պահանջում է շահագործման ամբողջական միջավայրի դիտարկում՝ սոցիալական, տնտեսական և հոգեբանական գործոնների փոխկապակցվածության մեջ: Հակառակ դեպքում ձևական ապացուցողական պահանջները կարող են վերածվել գործնական խոչընդոտի՝ դարձնելով մարդկանց թրաֆիքինգի թաքնված մեխանիզմների բացահայտումն ու պատասխանատվության իրացումը գրեթե անհնար:

Ակադեմիական գրականությունը ևս հաստատում է, որ մարդկանց թրաֆիքինգի զոհերի արդարադատության հասանելիությունը հանդիսանում է իրավական սուբյեկտայնության ճանաչման կենտրոնական տարր: Պլանինցերի և Զաքսի

[1] Եվրոպայի խորհրդի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» կոնվենցիա (Council of Europe Convention on Action against Trafficking in Human Beings), 2005 թ., CETS No. 197, https://rm.coe.int/168008371d

«Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց» (Explanatory Report to the Council of Europe Convention on Action against Trafficking in Human Beings), պարբ. 195-196, https://rm.coe.int/16800d3812

[2] Եվրոպայի խորհրդի՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի փորձագիտական խումբ (ԳՐԵՏԱ), «ԵԽ «Մարդկանց թրաֆիքինգի դեմ գործողությունների մասին» կոնվենցիայի իրականացման երրորդ գնահատման փուլի ամփոփում. Արդարադատության հասանելիություն և արդյունավետ փոխհատուցման միջոցներ մարդկանց թրաֆիքինգի զոհերի համար» (Stock-taking of GRETA's third evaluation round of the implementation of the Convention on Action against Trafficking in Human Beings: Access to justice and effective remedies for victims of trafficking in human beings), Եվրոպայի խորհուրդ, https://rm.coe.int/booklet-stock-taking-of-greta-s-third-evaluation-round-on-the-conventi/1680aefdbc

մեկնաբանությամբ՝ արդյունավետ դատական պաշտպանությունը պահանջում է տուժածների ակտիվ մասնակցություն դատավարությանը, իրավաբանական օգնության հասանելիություն և փոխհատուցման պահանջ ներկայացնելու իրական հնարավորություն: Նրանք շեշտում են, որ արդար դատաքննությունը մարդկանց թրաֆիքինգի դեպքերում ունի վերականգնողական նշանակություն. այն վերականգնում է տուժածի արժանապատվությունը՝ ճանաչելով նրան որպես իրավունքի լիարժեք սուբյեկտ[1]:

Այսպիսով, արդար դատաքննության իրավունքը մարդկանց թրաֆիքինգի համատեքստում պետք է դիտարկել որպես համակցված երաշխիք, որը միավորում է անվճար իրավաբանական օգնությունը, զոհերի պաշտպանությունը, ապացույցների համատեքստային գնահատումը և մեղավորների պատասխանատվությունը:

Անդրադառնալով արդյունավետ քննության գաղափարին և հիմնվելով ՄԻԵԴ նախադեպային իրավունքի և ԵԽ կոնվենցիայի բացատրական զեկույցի վրա՝ այն պետք է բավարարի հետևյալ չափանիշները.

ա. Անկախություն և անաչառություն («Independence and Impartiality»)**.** քննությունը վարող մարմինները պետք է լինեն անկախ այն անձանցից, ովքեր ներգրավված են եղել դեպքերում[2]:

բ. Անհապաղություն («Promptness»). քննությունը պետք է նախաձեռնվի անհապաղ, այն պահին, երբ իշխանությունները տեղեկանում են մարդկանց թրաֆիքինգի առերևույթ դեպքի մասին: Պետությունը չպետք է կախված լինի զոհի կամ երրորդ անձի հաղորդումից: *Ռանցևն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի* գործով ՄԻԵԴ-ը շեշտել է, որ իշխանությունները պարտավոր են գործել սեփական նախաձեռնությամբ («*ex officio*»), երբ առկա է հավաստի կասկած[3]: Սա ամրագրված է նաև ԵԽ կոնվենցիայի 27-րդ հոդվածում, որը պահանջում է, որ քննությունը կախված չլինի զոհի բողոքից[4]:

[1] Ջուլիա Պլանինցեր, Հելմուտ Զաքս (խմբ.), «Մեկնաբանություն՝ Եվրոպայի խորհրդի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ գործողությունների մասին» կոնվենցիայի վերաբերյալ» (Julia Planitzer & Helmut Sax (eds.), Commentary on the Council of Europe Convention on Action against Trafficking in Human Beings), Edward Elgar Publishing, 2020, https://library.oapen.org/handle/20.500.12657/51308

[2] «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց», պարբ. 294, https://rm.coe.int/16800d3812

[3] *«Ռանցևն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի»* գործ, գանգատ թիվ 25965/04, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, 2010 թ. հունվարի 7, պարբ. 233, https://hudoc.echr.coe.int/eng?i=001-96549

[4] Եվրոպայի խորհրդի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» կոնվենցիա, հոդված 27 (2005 թ., CETS No. 197), https://rm.coe.int/168008371d

գ. Բազմակողմանիություն («Thorough»). քննությունը պետք է ունակ լինի բացահայտելու հանցագործությունը և այն կատարած անձին ենթարկելու պատասխանատվության: Սա նշանակում է, որ պետությունը պետք է ձեռնարկի բոլոր ողջամիտ քայլերը՝ ապացույցներ հավաքելու համար (օրինակ՝ վկաների հարցաքննություն, դատաբժշկական փորձաքննություն): *Ռանցևն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի* գործով ՄԻԵԴ-ն արձանագրել էր, որ Կիպրոսը խախտել էր այս պարտավորությունը՝ չհարցաքննելով առանցքային վկաներին (Ռանցևայի գործընկերուհիներին)[1]:

Մարդկանց թրաֆիքինգի դեպքում այս միջազգային իրավական փոխգործակցությունն ու օգնությունն ունի պարտադիր բնույթը: ԵԽ կոնվենցիան պարտավորեցնում է կողմերին համագործակցել «հնարավորինս լայն ծավալով»՝ մարդկանց թրաֆիքինգը կանխարգելելու և արդյունավետ քննություն իրականացնելու նպատակով:[2] Ավելին, *Ռանցևն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի* գործով ՄԻԵԴ-ը սահմանեց նոր իրավական ստանդարտ՝ հստակեցնելով, որ պետությունները (օրինակ՝ ծագման և նպատակակետ երկրները) պարտավոր են համագործակցել միմյանց հետ քրեական վարույթներով[3]:

ՀՀ Սահմանադրության համատեքստում սա նշանակում է, որ պետությունը չի կարող սահմանափակվել միայն իր տարածքում կատարված արարքների քննությամբ: Այն պետք է օգտագործի միջազգային իրավական փոխօգնության բոլոր լծակները (ինչպես նախատեսված է ԵԽ կոնվենցիայի 6-րդ գլխում)՝ մարդկանց թրաֆիքինգի շղթան ամբողջությամբ բացահայտելու համար:

Հատկանշական է նաև, որ ընթացակարգային պարտավորությունը ներառում է նաև զոհերի և վկաների պաշտպանությունը: ԵԽ կոնվենցիան պահանջում է արդյունավետ պաշտպանություն վրեժխնդրությունից կամ ահաբեկումից[4]: Սա հատկապես կարևոր է մարդկանց թրաֆիքինգի վարույթներով, որտեղ զոհերը հաճախ վախենում են համագործակցել իրավապահների հետ: Հետևաբար, արդյունավետ քննությունը պետք է

[1] *«Ռանցևն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի»* գործ, գանգատ թիվ 25965/04, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, 2010 թ. հունվարի 7, պարբ. 347, 381–382, https://hudoc.echr.coe.int/eng?i=001-96549

[2] Եվրոպայի խորհրդի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» կոնվենցիա, հոդված 32 (2005 թ., CETS No. 197), https://rm.coe.int/168008371d

[3] *«Ռանցևն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի»* գործ, գանգատ թիվ 25965/04, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, 2010 թ. հունվարի 7, պարբ. 285–289, https://hudoc.echr.coe.int/eng?i=001-96549

[4] Եվրոպայի խորհրդի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» կոնվենցիա, հոդված 27 (2005 թ., CETS No. 197), https://rm.coe.int/168008371d

զուգակցվի պաշտպանության միջոցներով (օրինակ՝ ինքնության գաղտնիություն, անվտանգ կացարան), ինչը կերաշխավորի զոհի՝ արդարադատության հասանելիության սահմանադրական իրավունքը: Առանց այս համապարփակ մոտեցման՝ զոհի իրավունքների պաշտպանությունը կլինի ոչ լիարժեք, իսկ պետության սահմանադրական պարտականությունը՝ չկատարված:

Ինչպես արդեն նշվեց, մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ժամանակակից իրավական մոտեցումն աստիճանաբար հեռացել է բացառապես քրեաիրավական պատժողական տրամաբանությունից և կենտրոնացել է տուժածների իրավունքների վերականգնման վրա՝ ձևավորելով այն, ինչ միջազգային իրավունքում բնորոշվում է որպես **վերականգնողական արդարադատություն**: Այս մոդելի հիմքում ընկած է այն գաղափարը, որ թրաֆիքինգը ոչ միայն հանրային բարձր վտանգավորություն ունեցող արարք է, այլ, նախևառաջ, մարդու արժանապատվության, իրավունքների և ինքնավարության խախտում, որի հետևանքները պահանջում են իրավական, սոցիալական և հոգեբանական ամբողջական վերականգնում:

ԵԽ կոնվենցիան մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձանց պաշտպանության հարցը դիտարկում է որպես համակարգային պարտավորություն՝ շեշտելով, որ պետությունների արձագանքը պետք է ուղղված լինի ոչ միայն հանցագործության բացահայտմանը, այլ նաև մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձի **իրավական կարգավիճակի, անվտանգության և սոցիալական վերականգնման ապահովմանը**[1]:

Կոնվենցիան պահանջում է, որ պետությունները ստեղծեն մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձանց **նույնացման, աջակցության և պաշտպանական միջոցների ինստիտուցիոնալ համակարգ**, որը կախված չէ քրեական վարույթի արդյունքից:[2] Համակարգը պետք է հստակ տարանջատի ներգրավված մարմինների գործառույթները և ապահովի զոհերի ուղղորդման հստակ մեխանիզմ[3]: Մարդկանց թրաֆիքինգի զոհի իրավունքները չեն կարող պայմանավորվել նրա համագործակցությամբ իրավապահ մարմինների հետ. սա հիմնարար սկզբունք է, որն ընդգծում է, որ մարդը նախևառաջ իրավունքների կրող է, այլ ոչ քրեական գործի ապացույցի աղբյուր: ԵԽ կոնվենցիայի

[1] Եվրոպայի խորհրդի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» կոնվենցիա, հոդվածներ 10-17 (2005թ., CETS No. 197), https://rm.coe.int/168008371d

[2] **Հիլի Ա.Է.,** «Մարդկանց թրաֆիքինգի զոհերի նույնացումը»: Journal of Human Trafficking, 2024 թ., https://journals.sagepub.com/doi/10.1177/17488958241252955

> (...) для административных органов должно быть предсказуемо, что в случае упущения в их действиях и отмены административного акта, принятого на основании нарушения закона (в том числе процессуального), в административном

или судебном порядке они будут лишены возможности принять акт аналогичного содержания в отношении одного и того же лица.

По оценке Кассационного суда, **принятие нового административного акта с целью обеспечения выполнения тех же налоговых обязательств в условиях признания административного акта о выдвижении налоговых обязательств недействительным (даже если при принятии нового акта были устранены нарушения, допущенные при принятии признанного недействительным административного акта) будет означать повторное администрирование административным органом за одно и то же нарушение, предоставление такой возможности может содержать риски злоупотребления правом административным органом, учитывая то обстоятельство, что в данном случае может возникнуть ситуация, когда административный орган будет издавать административные акты по одному и тому же деянию бесчисленное количество раз, пока, наконец, не будет принят административный акт в соответствии с законодательством.**

(...)

Следовательно, Кассационный Суд констатирует, что обязательства, налагаемые административным актом вмешательства, признанным недействительным (независимо от того, на каком основании он был признан недействительным), не могут быть повторно возложены в форме нового административного акта.

(...)

Кассационный суд считает, что, если законодатель на основании заявления лица исключил возможность второго административного производства при наличии административного или судебного акта в отношении того же лица, по тому же предмету и на том же основании, тем более исключена правовая возможность возбуждения такого производства административным органом, не наделенным полномочиями на возбуждение второго административного производства" (выделено автором – Л.А.).

Вышеуказанное прецедентное решение также зафиксировало, что административные органы не правомочны возбуждать административное производство по собственной инициативе и принимать административный акт вмешательства в отношении лица, в отношении которого по тому же предмету и по тем же основаниям ранее принятый административный акт был признан недействительным на том основании, что он был

принят с нарушением материальных и/или процессуальных норм[1]. Исключением являются только те случаи, когда административное производство, направленное на принятие административного акта, было осуществлено с соблюдением установленных Законом требований, в том числе процессуальных норм, однако в дальнейшем Конституционный Суд РА признал какую-либо из этих норм противоречащей Конституции РА и недействительной.

В дополнение ко всему вышеизложенному следует также отметить, что и из самого конституционного принципа правовой определенности (res judicata) следует, что **административный орган не должен иметь возможность "преодоления" судебного акта (или же акта вышестоящего административного органа) исключительно с целью повторного рассмотрения дела и принятия нового административного акта по делу[2].** При этом в тех случаях, когда административный акт признается недействительным административным органом на основании нарушения установленных законодательством требований процессуальных норм, которые повлияли на материальную законность решения и нарушили основные права заинтересованных лиц, административный орган не может провести повторное рассмотрение дела и, устранив нарушения, допущенные в рамках предыдущего производства по рассмотрению дела, принять административный акт аналогичного содержания.

Предусмотрение обратного законодательного регулирования по уполномочиванию административного органа на осуществление повторного администрирования и принятия нового административного акта напрямую способствовало бы периодическому игнорированию процессуальных правовых норм административным органом, создавая благоприятную среду, подрывающую правовую определенность и безопасность. Апелляционный административный суд РА по делу **ՎԴ/8884/05/18** в решении от 09.10.2020г. подобное поведение административного органа определил как "беспорядочное", отметив, что кажущаяся возможность административного органа

[1] *Подробнее см.* **Алексанян Л.** Последствия признания акта налогового органа недействительным и проведения повторного администриторования. Суденая власть. Октябрь-декабрь 2024 10-12 (304-306). С. 25-37.

[2] Например, в Постановлении пленума Верховного суда Республики Узбекистан от 20.02.2023 г. №4 ВС, принимая во внимание особенности рассмотрения налоговых споров в административных судах, в пункте 32 отмечено, что, например, при нарушении существенных условий процедуры рассмотрения материалов налоговой проверки необходимо возложить на налоговый орган обязанность повторно рассмотреть материалы налоговой проверки. А в пункте 33 Верховный Суд подчеркивает важность того, чтобы суды обращали внимание на то, что резолютивная часть судебного решения, принятого по налоговому спору, должна содержать подробные сведения о решении налогового органа, признанного недействительным, в том числе, его наименование, дату, номер, пункт решения, а также в чем конкретно выражено действие (бездействие) должностного лица (подробнее *см.* по ссылке https://lex.uz/uz/docs/6402539).

повторно выдвинуть налоговые обязательства, зафиксированные административным актом, признанным разрешающим дело по существу судебным актом недействительным, будет означать, что административный орган в любом случае может проявить “беспорядочное” поведение, осуществив ненадлежащее администрирование, а затем, после признания акта недействительным в судебном порядке, исправить нарушение и вновь возложить на лицо те же обязательства по тем же основаниям. Между тем Апелляционный суд считает, что **признание акта недействительным на основании ненадлежащего администрирования преследует цель исключить возможность совершения подобных нарушений административным органом в будущем на основании последнего[1].**

Более того, дальнейшее поведение административного органа, принявшего признанный недействительным административный акт, должно быть предсказуемым для адресата этого акта, поскольку у адресата этого административного акта возникает ***законное (легитимное) ожидание*** того, что требование о выполнении налоговых обязательств, наложенных признанным недействительным административным актом, больше не может быть предъявлено к исполнению новым административным актом. Одновременно считаем крайне важным отметить, что у лица не может быть легитимного ожидания уклонения от уплаты законно установленных налогов, т.е. невыполнения своей конституционно-правовой обязанности. Лицо может иметь легитимное ожидание лишь в отношении невозможности повторного привлечения последнего к налоговой ответственности (т.е. начисления пени и штрафов).

Следовательно, протоколированное по признанному недействительным (вне зависимости от оснований недействительности) административному акту налоговое обязательство не может быть вторично предъявлено одному и тому же лицу на основании проведения повторного администрирования, ибо подобная практика налогового органа противоречит не только конституционному принципу правовой определенности, принципу законности администрирования, но и общепризнанному и универсальному принципу запрета двойной ответственности, то бишь *non bis in idem*[2].

(а) Административное дело ՎԴ/5/0133/05/23. Мисак Маргарян (далее – Истец) в исковом заявлении, поданном в суд, попросил признать недействительным решение Комитета государственных доходов Республики Армения (далее – Ответчик) № 3282-U от 30.12.2022 г. (далее – решение).

[1] URL: https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071809925620

[2] Подробнее см. **Алексанян Л.** Действие принципа non bis in idem при привлечении лица к налоговой ответственности в зависимости от оснований возникновения налоговых обязательств // Вестник Конституционного Суда Республики Армения, 4 (116) 2024. - С. 131-145.

Суд своим решением от 17.07.2023 г. удовлетворил требование истца со следующим обоснованием:

> “(...) еще 20.08.2020 г. начальником Юридического управления Комитета государственных доходов Республики Армения был издан административный акт № 2037-Ա, которым было решено взыскать с истца 1.516.006 драмов РА, такое налоговое обязательство возникло в результате продажи недвижимости, расположенной по адресу (...). Указанное решение по административному делу ՎԴ5/0216/05/20 было признано недействительным принятым 04.03.2021 г. и вступившим в законную силу 22.09.2022 г. решением суда.
>
> Ответчик, основываясь на том факте, что решение № 2037-Ա было признано недействительным в результате нарушения процессуальных норм, а именно на основании нарушения права быть выслушанным, а не материальных норм, снова на том же основании, (...) произвел новое администрирование и принял решение, оспариваемое по данному административному делу.
>
> Учитывая все вышеизложенное, суд считает, что оспариваемый по данному делу административный акт был принят в результате осуществления повторного администрирования за одно и то же деяние, в результате чего лицо было обременено обязанностью принудительного исполнения налоговых обязательств неправомерным административным актом[1]”.

(b) Административное дело ՎԴ/6487/05/18. Представителями Вардана Петросяна (далее – Истец) 06.06.2018 г. был подан иск против Комитета государственных доходов при Правительстве Республики Армения (далее – Ответчик или Комитет) о признании недействительным (отмене) решения начальника Юридического управления Аппарата Комитета государственных доходов при Правительстве Республики Армения от 20.02.2018г. № 189-Ա “О взыскании неисполненных налоговых обязательств”, а также решения Комиссии по обжалованию решений налоговых и таможенных органов Комитета государственных доходов при Правительстве Республики Армения от 18.05.2018 г. № 27/1.

Суд своим решением от 29.03.2019 г. удовлетворил требование Истца со следующим обоснованием:

> “(...) принцип недопустимости повторного осуждения за одно и то же деяние (non bis in idem) занимает основополагающее место в системе защиты, гарантированной Конституцией Республики Армения и международными договорами, в основе которого лежит презумпция искупления вины, и он является

[1] https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071809981423

гарантией того, что одно и то же лицо не будет вновь привлечено к уголовной ответственности, не будет осуждено или наказано за одно и то же деяние. При этом формулировка “за одно и то же деяние” означает, что недопустимость повторного осуждения следует понимать не в смысле юридической квалификации преступления, а в смысле фактического описания.

(...)

Проще говоря, требование (принцип) недопустимости повторного судебного разбирательства по своему содержанию подразумевает обязанность государства исключить повторное наказание, осуждение и привлечение лица к уголовной ответственности за то же деяние. По своему конституционно-правовому содержанию этот принцип основан на том, что никто не может быть повторно привлечен к ответственности за одно и то же деяние.

Суд должен отметить, что Европейский суд в ряде дел зафиксировал, что процесс налогового производства /ответственности/ приравнивается к уголовному процессу /производству/ и уголовной ответственности с точки зрения статьи 4 Протокола № 7 Конвенции, поэтому связанные с этим гарантии также распространяются на дела о налоговых штрафах.

Решением Административного суда от 10.11.2017 г. по административному делу ՎԴ/2643/05/15 иск Вардана Петросяна был удовлетворен: решение № 1605 начальника Налоговой инспекции Маштоца Министерства финансов Республики Армения от 05.06.2015 г. “О взыскании с налогоплательщика суммы, подлежащей уплате по неуплаченным в срок налоговым обязательствам” было признано недействительным на основании нарушения права последнего быть выслушанным.

(...)

То есть налоговый орган, исключив нарушение, зафиксированное в административном деле ՎԴ/2643/05/15, обеспечив право Истца быть выслушанным, по тому же правонарушению, на тех же основаниях принял новый административный акт, выдвигая те же налоговые обязательства.

Иными словами, по тому же вопросу в отношении того же лица по инициативе административного органа было возбуждено новое административное производство, которое завершилось принятием нового административного акта, полностью воспроизводящего содержание признанного недействительным административного акта.

Фактически лицо было повторно привлечено к административной ответственности за одно и то же деяние путем принятия нового административного акта вмешательства в отношении того же деяния”[1].

Вышеприведенные административные дела свидетельствуют о развитии правоприменительной практики Республики Армения в пользу признания принципа *non bis in idem* в качестве основополагающего принципа административного (налогового) права, который направлен на защиту прав и законных интересов налогоплательщиков от неправомерных действий налоговых органов, а также предотвращения и пресечения возможных злоупотреблений налоговыми органами[2]. Другими словами, административные суды Республики Армения преодолели существующий в налоговом законодательстве пробел посредством расширительного и автономного толкования конституционного принципа запрета двойной ответственности, то бишь *non bis in idem.*

Заключение

Системный анализ Закона в совокупности с конституционным принципом законности дает основание утверждать, что законодатель не предусмотрел уполномочивающей нормы по осуществлению административным органом повторного (двойного) администрирования. Иными словами, законодатель установил прямой запрет на осуществление повторного (двойного) администрирования как по самому заявлению/жалобе лица, так и по инициативе административного органа.

На основании всего вышеизложенного, констатируем, что существующие законодательные регулирования запрещают проведение двойного (повторного) администрирования в отношении одного и того же субъекта, по тому же предмету и на том же основании **при наличии вступившего в силу административного или судебного акта.** Подобный подход законодателя, с одной стороны, призван гарантировать реализацию конституционного принципа надлежащего администрирования, а с другой стороны –

[1] https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071809923042

[2] *См. также* **ՎԴ/0077/05/23** (повторное производство) во взаимосвязи с **ՎԴ/6455/05/20** (первичное производство), **ՎԴ/6801/05/22** (повторное производство) во взаимосвязи с **ՎԴ/7354/05/21** (первичное производство), **ՎԴ/6228/05/22** (повторное производство) во взаимосвязи с **ՎԴ/9208/05/20** (первичное производство), **ՎԴ/2456/05/22** (повторное производство) во взаимосвязи с **ՎԴ/2619/05/20** (первичное производство), **ՎԴ/1423/05/22** (повторное производство) во взаимосвязи с **ՎԴ/3524/05/18** (первичное производство), **ՎԴ/1288/05/22** (повторное производство) во взаимосвязи с **ՎԴ/4731/05/21** (первичное производство), **ՎԴ/10516/05/21** (повторное производство) во взаимосвязи с **ՎԴ/8114/05/18** (первичное производство), **ՎԴ/6924/05/20** (повторное производство) во взаимосвязи с **ՎԴ/4920/05/19** (первичное производство).

является своеобразным проявлением принципа *non bis in idem* применительно к сфере административных процедур.

После признания акта административного органа недействительным у адресата данного административного акта возникает законное (легитимное) ожидание, что признанный недействительным административный акт не может быть предъявлен к исполнению новым административным актом. Иными словами, **признанный недействительным административный акт не может быть "реабилитирован",** а в отношении адресата данного административного акта не может быть возбуждено повторное административное производство, ибо это будет прямым нарушением принципа *non bis in idem.*

Список использованной литературы

Нормативно-правовые акты

1. Конституция Республики Армения 2005 г. (с изменениями 2015 г.).

2. Закон Республики Армения "Об основах администрирования и административном процессе" ЗР-41-Н от 18.02.2004 г. (первоисточник: ՀՀՊՏ 2004.04.14/21(320) Հոդ.413).

Материалы судебной практики

1. Սահմանադրական դատարանի 30.10.2012 թ. ՍԴՈ-1054 որոշում «Ասատրյանների Սախա Լենա» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով:

2. Գոհար Հակոբյանն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/8932/05/18 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 10.05.2022 թ. որոշում:

3. Постановление пленума Верховного суда Республики Узбекистан от 20.02.2023 г. №4.

Научная и учебная литература

1. Այվազյան Վ., Մարդու իրավունքներ և ազատություններ: Ուս. ձեռնարկ, Եր., «Տիգրան Մեծ», 2007:

2. Հակոբյան Կ., Պատշաճ վարչարարության արժեքը: Եր., ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, 2(2)2018, 2019:

3. Galligan D.J. Due Process and Fair Procedures: A Study of Administrative Procedures. Oxford. Clarendon Press. 1996.

4. Wakefield. J. The Right to Good Administration (European Monographs). Alphen aan den Rijn, Kluwer Law International. 2007.

ԿՐԿՆԱԿԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԸ NON BIS IN IDEM ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ամփոփագիր

Բարձրացված հարցի արդիականությունը պայմանավորված է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «անկարգ» վարքագծով, մասնավորապես, չնայած դատավարական իրավական նորմերի խախտման հիմքով հարկային մարմնի ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ Վարչական դատարանի արդեն օրինական ուժի մեջ մտած վճռի առկայությանը, վերջինս «կրկնօրինակում» է գործի հանգամանքները և նախաձեռնում նոր (կրկնակի) վարչարարություն՝ առաջնային վարույթում թույլ տրված սխալները «շտկելու» նպատակով: Վարչական մարմնի նման վարքագիծը վտանգում է պետության իրավական անվտանգությունը, քանզի վարչական մարմնի համար պետք է կանխատեսելի լինի, որ վարչարարության ընթացքում սխալներ (բացթողումներ) թույլ տալու և, համապատասխանաբար, օրենքի խախտման (այդ թվում՝ դատավարական) հիմքով ընդունված վարչական ակտի հետագա վերացման դեպքում՝ վերջինս այլևս հնարավորություն չունի նույնաբովանդակ ակտ ընդունել նույն անձի նկատմամբ, նույն առարկայի վերաբերյալ և նույն հիմքով:

Հեղինակի կողմից բարձրացված հարցը դիտարկվում է անձին կրկնակի պատասխանատվության ենթարկելու արգելքի սկզբունքի համատեքստում *(non bis in idem):*

Հիմնաբառեր. պատշաճ վարչարարություն, կրկնակի վարչարարություն, non bis in idem, իրավունքի սկզբունք, լեգիտիմ (օրինական) ակնկալիք:

THE PROHIBITION OF DOUBLE ADMINISTRATION IN THE CONTEXT OF THE NON BIS IN IDEM PRINCIPLE

Annotation

The relevance of the issue raised is due to the "disorderly" behavior of the State Revenue Committee of the Republic of Armenia. In particular, despite the existence of an Administrative Court decision that has already entered into force to invalidate an act of a tax authority on the basis of a violation of procedural legal norms, the latter "duplicates" the circumstances of the case and initiates a new (double) administration in order to "correct" the mistakes made in the primary production of errors. Such behavior by an administrative body endangers the legal security of the state, because it should be predictable for an administrative body that if mistakes (omissions) are made during administration and, consequently, the cancellation of an administrative act adopted on the basis of a violation of the law (including procedural), it no longer has the opportunity to adopt an act of similar content in relation to the same person, on the same subject and on the same basis.

The issue raised by the author is considered in the context of the principle of prohibiting the involvement of a person in dual responsibility *(non bis in idem).*

Keywords: good administration, repeated administration, non bis in idem, principle of law, legitimate expectation.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 14.02.2026 թ., տրվել է գրախոսության 16.02.2026 թ., ընդունվել է տպագրության 25.02.2026 թ.:

DOI: 10.59560/18291155-2026.1-207

ԱՆԱՀԻՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի հայցորդ

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Ամփոփագիր

Սույն հոդվածն ուսումնասիրում է արդար դատաքննության իրավունքի պատմական վերաիմաստավորումը՝ ներկայացնելով, որ յուրաքանչյուր ժամանակագրական փոփոխություն պայմանավորված է պատմական փորձով, իրավունքի հանրային ընկալման փոփոխությամբ, միջազգային իրավունքի զարգացմամբ, ինչպես նաև միջազգային վերահսկողական մարմինների ստեղծմամբ:

Միաժամանակ հոդվածը հիմնավորում է, որ արդար դատաքննության իրավունքը, լինելով դինամիկ և «բաց» ինստիտուտ, 21-րդ դարում բախվում է նոր մարտահրավերների՝ թվայնացում, վեճերի այլընտրանքային լուծման մեխանիզմների ներդրում, անձնական տվյալների պաշտպանություն և անվտանգության օրակարգի ուժեղացում: Հետազոտությունը ցույց է տալիս, որ արդար դատաքննության իրավունքի արդյունավետ պաշտպանության համար սահմանադրականացումը բավարար չէ: Արդար դատաքննության արդյունավետ պաշտպանությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ զուգահեռաբար զարգանում են այն երաշխավորող դատական և սահմանադրական մեխանիզմները՝ ներառյալ դատական անկախության ինստիտուցիոնալ կարգավորումները, հակակոռուպցիոն քաղաքականությունը, շահերի բախման կանխարգելումը և արդյունավետ դատական վերահսկողությունը, որոնք միասին ապահովում են սույն իրավունքի կենսունակությունն ու կենսագործումը:

Հիմնաբառեր. արդար դատաքննություն, մարդու իրավունքներ, դատական անկախություն, սահմանադրականություն, սահմանադրական վերահսկողություն, միջազգային իրավունք, սահմանադրություն:

Ներածություն

20-րդ դարի կեսերից սկսած արդար դատաքննության իրավունքի ընկալման մեջ տեղի ունեցավ որակական փոփոխություն: Արդար դատաքննությունը սկսեց դիտվել ոչ միայն որպես ընթացակարգային խնդիր, այլև որպես մարդու իրավունքների ապահովման հիմնարար բաղադրիչ: Այս փոփոխությունը պայմանավորված էր իրավական մտածողության զարգացմամբ և պատմական փորձով, որը ցույց տվեց, որ զուտ ընթացակարգային երաշխիքները չեն կարող ապահովել իրավունքների պաշտպանությունը, եթե դրանք չուղեկցվեն հանրության շրջանում իրավական գիտակցության փոփոխությամբ:

Արդար դատաքննության իրավունքի նման զարգացումը բացահայտում է դրա երկակի բնույթը, որը մինչ օրս շարունակում է մնալ դրա հայեցակարգային առանձնահատկությունը: Պատմականորեն այն ձևավորվել է որպես ընթացակարգային եզրույթ: Սակայն իր նշանակությամբ պայմանավորված՝ այն դարերի ընթացքում վերաիմաստավորվել է սահմանադրական կարևորության սկզբունքի: Այս գործընթացների ակունքները կարելի է գտնել դեռևս հին Հունաստանում, սակայն դրանց ժամանակակից ձևակերպման ելակետը համարվում է Ֆրանսիական հեղափոխության արդյունքում ձևավորված Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը:

Այս երկակիությունը էական է արդար դատաքննության իրավունքի ժամանակակից ընկալման համար և հիմք է ստեղծում այն դիտարկելու որպես ինքնուրույն սահմանադրական ինստիտուտ, որի բովանդակությունն ու գործառույթները ձևավորվում են ինչպես ազգային, այնպես էլ միջազգային իրավական փորձի ազդեցության ներքո:

Միաժամանակ, ելնելով իր կարևորությունից և ընթացակարգային բնույթից՝ արդար դատաքննության իրավունքը մնում է այն իրավունքներից, որոնք վերջնական ձևակերպում ստանալ չեն կարող: Եթե, օրինակ, խոշտանգումից և անմարդկային վերաբերմունքից ազատ լինելու իրավունքն իր էությամբ լիարժեք է և վերջնական, արդար դատաքննության իրավունքը, իր բնույթով պայմանավորված՝ մշտապես զարգացող ինստիտուտ է: Այն հանդես է գալիս որպես դինամիկ սահմանադրական ինստիտուտ, որի բովանդակությունը մշտապես հստակեցվում և լրացվում է՝ իրավական պրակտիկայի, տեխնոլոգիական փոփոխությունների և նոր հանրային ռիսկերի ազդեցությամբ:

Միաժամանակ անցյալի փորձը ցույց է տալիս, թե ինչքան հեշտությամբ կարող են կոռումպացվել դատական համակարգերը՝ դառնալով քաղաքական կամքի դահիճ: Այս պատճառով կարևոր է մշտապես ցուցաբերել զգոնություն արդար դատաքննության

հայեցակարգի յուրաքանչյուր զարգացման և հնարավոր փոփոխության նկատմամբ: Արդար դատաքննության իրավունքը չի կարող մնալ ստատիկ ժամանակի մեջ, այն պետք է զարգանա և քայլի հասարակության պահանջների հետ համահունչ, սակայն այդ փոփոխությունները պետք է մշտապես պահվեն ուշադրության կենտրոնում, որպեսզի թույլ չտրվեն իրավունքի խեղաթյուրում կամ չարաշահումներ:

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել արդար դատաքննության, որպես սահմանադրական իրավունքի, վերաիմաստավորումը, մասնավորապես՝ միջազգային մարդու իրավունքների ոլորտի զարգացման համատեքստում: Միաժամանակ նպատակ է դրվում ցույց տալ, թե ինչպես է միջազգային համակարգը գործնականում պայմանավորում ներպետական իրավակարգերի ձևավորումը և ինչ մարտահրավերներ են առաջանում աշխարհաքաղաքական ներկա փոփոխությունների համատեքստում:

<u>Հետազոտություն</u>

Միջազգային իրավունքի և վերահսկողական մեխանիզմների դերը արդար դատաքննության իրավունքի պաշտպանության հարցում

Պատմության ընթացքում արդար դատաքննության իրավունքը, դրա նշանակությունն ու դրա խախտման հետ կապված վտանգները բազմիցս դարձել են փիլիսոփայական և իրավագիտական ուսումնասիրությունների առարկա: Սակայն այդ գաղափարներն իրենց առավել ամբողջական և համակարգված արտահայտությունն ստացան այն փուլում, երբ միջազգային իրավունքը ձևավորվեց որպես ինքնուրույն իրավական ճյուղ՝ սեփական սկզբունքներով, նորմերով և ինստիտուտներով[1]:

Միջազգային իրավունքի զարգացումը ստեղծեց այն նորմատիվ միջավայրը, որի պայմաններում պետությունները աստիճանաբար ենթարկվեցին համընդհանուր ընդունված և իրավապարտադիր վարքագծի կանոնների[2]: Եթե նախկինում նման կանոնները հաճախ ընկալվում էին որպես սովորութային կամ ընդհանրապես գոյություն չունեցող, ապա միջազգային իրավունքի զարգացման արդյունքում պետությունները դարձան իրավունքի սուբյեկտներ, որոնք պարտավոր են իրենց ներքին իրավակարգերը համապատասխանեցնել միջազգային չափորոշիչներին[3]: Այս գործընթացը հիմնարար նշանակություն ունեցավ արդար դատաքննության իրավունքի համար, քանի որ այն առաջին անգամ ձևավորվեց որպես իրավունք, որի պաշտպանությունը կարող է

[1] **Hersch Lauterpacht**, International Law and Human Rights (London: Stevens & Sons, 1950).

[2] **Gleider Hernández**, International Law. Oxford University Press (2019).

[3] **Malcolm N. Shaw**, International Law. 8th ed. (Cambridge: Cambridge University Press, 2017).

պահանջվել ոչ միայն ներպետական, այլև միջազգային մակարդակում՝ անկախ պետության կամքից[1]:

Այս զարգացումների կարևոր հանգրվան դարձան մարդու իրավունքների ոլորտում ընդունված հիմնարար միջազգային փաստաթղթերը, որոնք համակարգված կերպով ձևակերպեցին արդար դատաքննության ժամանակակից հայեցակարգը: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան առաջին անգամ ամրագրեցին արդար դատաքննության իրավունքը որպես համընդհանուր չափորոշիչ՝ ներառելով անկախ և անաչառ դատարանի, հրապարակային դատաքննության, անմեղության կանխավարկածի և պաշտպանության հիմնական երաշխիքների գաղափարները: Նմանատիպ մոտեցումներ հետագայում ամրագրվեցին նաև տարածաշրջանային այլ փաստաթղթերում՝ Ամերիկյան մարդու իրավունքների կոնվենցիայում և Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիայում, ինչը վկայում է արդար դատաքննության իրավունքի գլոբալ ճանաչման և իրավականացման մասին:

Նշված փաստաթղթերի ընդունումը պայմանավորեց նաև համապատասխան միջազգային իրավական կառույցների ստեղծումը, որոնց հիմնական մանդատը մարդու իրավունքների պաշտպանության ապահովումն է: Միջազգային պայմանագրերի նորմերի գործնական կիրառումն այլևս չէր կարող սահմանափակվել միայն պետությունների կամքով կամ քաղաքական հայտարարություններով և անհրաժեշտ դարձավ վերահսկողական ու դատաքննական մեխանիզմների ձևավորումը: Այս համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան առանձնահատուկ նշանակություն ունի, քանի որ այն դարձավ ոլորտում առաջին պարտադիր իրավական ուժ ունեցող փաստաթուղթը, որը ոչ միայն սահմանեց իրավունքները, այլև ստեղծեց դրանց պաշտպանության գործնական մեխանիզմներ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Դատարան) կենտրոնական դեր է զբաղեցնում արդար դատաքննության իրավունքի միջազգային պաշտպանության համակարգում: Դատարանը կոչված է գնահատելու պետությունների կողմից կոնվենցիոն պարտավորությունների կատարումը և ձևավորելու իրավական պարտադիր նախադեպային պրակտիկա, որը ուղղակի ազդեցություն ունի

[1] United Nations Human Rights Committee, General Comment No. 32: Article 14 - Right to Equality before Courts and Tribunals and to a Fair Trial, CCPR/C/GC/32 (23 August 2007), para 4.

ներպետական դատական համակարգերի վրա[1]: Արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ Դատարանի իրավաբանությունը դարձել է չափորոշիչ ինչպես կոնվենցիայի անդամ պետությունների, այնպես էլ նրանց սահմանադրական և բարձրագույն դատարանների համար[2]: Այս համակարգում կարևոր դեր ունի նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, որը վերահսկում է Դատարանի վճիռների կատարումը և ապահովում է, որ կոնվենցիոն ստանդարտները իրական ազդեցություն ունենան ազգային իրավակարգերի վրա[3]:

Թեև մարդու իրավունքների պաշտպանության միջազգային դատարաններ և վերահսկողական մարմիններ գոյություն ունեն տարբեր տարածաշրջաններում, սույն աշխատանքի շրջանակում հիմնական ուշադրությունը կենտրոնանում է եվրոպական կառույցների վրա՝ հաշվի առնելով դրանց պրակտիկայի կիրառելիությունը Հայաստանի Հանրապետության նկատմամբ:

Միաժամանակ կարևոր է ընդգծել նաև Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ նաև՝ ՄԱԿ) Մարդու իրավունքների կոմիտեի (Human Rights Committee) դերը, որը, որպես Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ICCPR) վերահսկման մարմին, իրականացնում է պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների մշտադիտարկում[4]: Կոմիտեն այդ գործառույթն իրականացնում է մի քանի մեխանիզմների միջոցով՝ ուսումնասիրելով պետությունների պարբերական զեկույցները, ընդունելով եզրակացություններ և առաջարկություններ (Concluding Observations)[5], ինչպես նաև մշակելով Ընդհանուր մեկնաբանություններ (General Comments), որոնցում համակարգված կերպով բացահայտվում են դաշնագրի առանձին հոդվածների բովանդակությունն ու կիրառման շրջանակները:[6] Արդար դատաքննության իրավունքի առումով առանձնահատուկ նշանակություն ունի Կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն թիվ 32-ը (General Comment No. 32), որը մանրամասնորեն մեկնաբանում է ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածը՝ ընդգծելով դատարանների անկախության և

[1] Council of Europe, Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms. Rome, 4 November 1950, ETS No. 005, art. 46.

[2] **Steven Greer,** The European Convention on Human Rights: Achievements, Problems and Prospects (Cambridge: Cambridge University Press, 2006).

[3] Council of Europe, Supervision of the Execution of Judgments and Decisions of the European Court of Human Rights (Strasbourg: Council of Europe, 2018).

[4] International Covenant on Civil and Political Rights, 16 December 1966, 999 U.N.T.S. 171.

[5] United Nations Human Rights Committee, Rules of Procedure of the Human Rights Committee, CCPR/C/3/Rev.11 (2019)

[6] **Olivier De Schutter,** International Human Rights Law (Cambridge: Cambridge University Press, 2019).

անաչառության, դատավարության հրապարակայնության, պաշտպանության իրավունքի և դատական վերահսկողության արդյունավետության պահանջները[1]:

Թեև Մարդու իրավունքների կոմիտեի ընդունած որոշումները և անհատական հաղորդումների վերաբերյալ տեսակետները չունեն նույն իրավապարտադիր բնույթը, ինչ միջազգային դատարանների վճիռները, դրանք, միևնույն է, կարևոր նորմատիվ ազդեցություն են ունենում ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավական համակարգերում: Կոմիտեի մեկնաբանությունները լայնորեն օգտագործվում են ազգային դատարանների, սահմանադրական ատյանների և օրենսդիր մարմինների կողմից՝ որպես դաշնագրային պարտավորությունների բովանդակային բացատրություն[2]:

Մարդու իրավունքների ոլորտում հատկանշական զարգացում էր նաև միջազգային քրեական իրավունքի ձևավորումը: Այդ ոլորտի հետ զուգահեռ առաջ եկավ մի հիմնարար իրավաքաղաքական գիտակցություն, ըստ որի պետությունները չեն կարող իրենց քաղաքացիների նկատմամբ գործել անսահմանափակ հայեցողությամբ[3]: Այս ըմբռնումը 20-րդ դարի երկու մեծագույն ցեղասպանությունների հետևանք էր՝ նախ հայերի դեմ Օսմանյան կայսրությունում, ապա՝ հրեաների դեմ Նացիստական Գերմանիայում[4]: Երբ իրագործվեցին այս ցեղասպանությունները, դեռևս չկար այն միջազգային իրավական գիտակցությունը, որ մարդու իրավունքների դեմ ուղղված նման հանցագործությունների դեպքում միջազգային հանրությունն ունի իրավունք և պարտականություն միջամտելու[5]:

Նյուրնբերգյան և Տոկիոյի միջազգային ռազմական դատարանների ստեղծումը ոչ միայն հաստատեց անհատական քրեական պատասխանատվության սկզբունքը միջազգային հանցագործությունների համար, այլև փոխեց միջազգային իրավունքի սուբյեկտային կառուցվածքը[6]: Անհատն այլևս չէր դիտվում բացառապես որպես պետության իրավական ենթակայության սուբյեկտ, այլ ճանաչվեց որպես միջազգային մարդու հիմնարար իրավունքների և պարտականություններ կրող և շահառու[7]: Այս

[1] United Nations Human Rights Committee, General Comment No. 32: Article 14—Right to Equality before Courts and Tribunals and to a Fair Trial, CCPR/C/GC/32 (23 August 2007).

[2] United Nations Human Rights Committee, General Comment No. 33: The Obligations of States Parties under the Optional Protocol to the International Covenant on Civil and Political Rights, CCPR/C/GC/33 (5 November 2008).

[3] **Antonio Cassese,** International Criminal Law. 2nd ed. (Oxford: Oxford University Press, 2008), 3–12.

[4] **William A. Schabas,** Genocide in International Law. 2nd ed. (Cambridge: Cambridge University Press, 2009).

[5] United Nations, Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, 9 December 1948, Preamble.

[6] United Nations General Assembly, Principles of International Law Recognized in the Charter of the Nürnberg Tribunal and in the Judgment of the Tribunal, G.A. Res. 95 (I), 11 December 1946.

[7] **Hersch Lauterpacht,** International Law and Human Rights (London: Stevens & Sons, 1950), 35-40.

իրավունքները վեր դասվեցին հայեցողականությունից և սկսեցին ընկալվել որպես կարևորագույն պաշտպանական մեխանիզմներ անձանց կյանքի և արժանապատվության համար:

Միաժամանակ միջազգային քրեական դատարանի ստեղծումը վերջնականապես ամրագրեց այն մոտեցումը, որ միջազգային հանցագործությունների համար պատասխանատվությունը չի կարող մնալ բացառապես քաղաքական կամ ժամանակավոր մեխանիզմների շրջանակում: 1998 թվականին ընդունված Հռոմի կանոնադրությամբ հիմնադրված Միջազգային քրեական դատարանը (ICC) դարձավ առաջին մշտական միջազգային դատական մարմինը, որն իրավասու է քրեական պատասխանատվության ենթարկել անհատներին ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների, պատերազմական հանցագործությունների և ագրեսիայի հանցագործության համար[1]: Դատարանի ստեղծումը վերջնականապես ամրապնդեց այն սկզբունքը, որ մարդկային կյանքերի և իրավունքների պաշտպանությունը համամարդկային խնդիր է, որը գործելու է վերպետական հիմունքներով[2]:

Դատարանի ստեղծումը կարևոր քայլ էր նաև արդար դատաքննության իրավունքի տեսանկյունից, քանի որ Հռոմի կանոնադրությունը մանրամասնորեն ամրագրեց մեղադրյալների դատավարական իրավունքները՝ անմեղության կանխավարկածը, պաշտպանության իրավունքը, իրավաբանական օգնությունը, ապացույցների վիճարկման և բողոքարկման հնարավորությունները: Այսպիսով, միջազգային քրեական արդարադատությունը միաժամանակ հաստատեց երկու փոխկապակցված սկզբունք՝ պետությունների սահմանափակված իշխանությունը մարդու իրավունքների ոլորտում և այն պահանջը, որ նույնիսկ ամենածանր միջազգային հանցագործությունների քննությունը պետք է իրականացվի արդար դատաքննության նվազագույն, բայց պարտադիր երաշխիքների պահպանմամբ[3]:

Տվյալ զարգացումների հիշատակումը կարևոր է այնքանով, որ դրանց շրջանակում փոխվեց նաև մարդու իրավունքների, այդ թվում նաև՝ արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ իրավաընկալումը: Դրանք հանգեցրին այն գաղափարի ամրապնդմանը, որ մարդու հիմնարար իրավունքները չեն կարող կախված լինել պետության քաղաքական կամքից կամ ներքին իրավակարգից: Դրանք սկսեցին

[1] United Nations, Rome Statute of the International Criminal Court, 17 July 1998.

[2] **William A. Schabas,** An Introduction to the International Criminal Court, 5th ed. (Cambridge: Cambridge University Press, 2017)

[3] United Nations, Rome Statute of the International Criminal Court, 17 July 1998, arts. 55, 66, 67, and 81.

ընկալվել որպես վերազգային արժեքներ, որոնց պաշտպանությունը միջազգային հանրության համատեղ պատասխանատվությունն է:

Արդար դատաքննության իրավունքի սահմանադրականացումը և նրա էական նշանակությունը

Վերոգրյալից պարզ է, որ մարդու իրավունքների ոլորտում ընդունված միջազգային փաստաթղթերը կարևոր դեր ունեցան այս ոլորտի զարգացման համար՝ մարդու իրավունքները դարձնելով միջազգային հանրության ուշադրության առարկա: Սակայն այս գործընթացի իրական նշանակությունը դրսևորվեց, երբ տվյալ միջազգային ստանդարտները սկսեցին ինտեգրվել ազգային սահմանադրական համակարգերի մեջ՝ դառնալով ոչ միայն պետության արտաքին պարտավորություն, այլ հիմնասյուն, որի վրա կառուցվեցին ժամանակակից պետականությունները: Այսպիսով, մարդու իրավունքների վերաբերյալ իրավաընկալման փոփոխությունը հիմք հանդիսացավ նաև դրանց սահմանադրականացման համար[1]:

Սահմանադրության և հասարակական իրավաընկալման կապը նոր չի ձևավորվել: Դեռևս աթենական ժամանակներից արծարծվել է այն միտքը, որ «Սահմանադրությունը պետք է գրվի՝ նկատի ունենալով ժողովուրդը և ժամանակը»[2]:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է հստակ սահմանել, որ Սահմանադրությունը և սահմանադրականությունը նույնը չեն:

Սահմանադրությունը պետության հիմնարար մարմինների և ինստիտուտների փոխհարաբերությունները կարգավորող կանոնների խումբ է[3]: Եթե սահմանադրությունների ստեղծման և կիրառման գործընթացում առաջնորդվում են սահմանադրականության սկզբունքներով, ապա պետական մարմինների միջև ձևավորվում է փոխզսպման և սահմանափակման այնպիսի համակարգ, որը հնարավորություն է տալիս քաղաքացիական ազատություններին գերակայել քաղաքական իշխանության նկատմամբ[4]:

[1] **Anne Peters,** "The Globalization of State Constitutions," in New Perspectives on the Divide between National and International Law, ed. Janne E. Nijman and André Nollkaemper (Oxford: Oxford University Press, 2007).

[2] **Գագիկ Հարությունյան,** Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները (վերահրատարակություն՝ լրամշակումներով): Երևան, Նժար, 2016, էջ 23:

[3] **Michel Rosenfeld and András Sajó,** "Constitutionalism: Foundations for the New Millennium," in New Millennium Constitutionalism: Paradigms of Reality and Challenges, ed. G. G. Harutyunyan (Yerevan: NJHAR, 2013). p. 12.

[4] Տե՛ս նույն տեղում:

Այսպիսով, սահմանադրականությունը չի կարող նույնացվել պարզապես «սահմանադրություն» հասկացության հետ, թեև ժամանակակից իրավաընկալման մեջ այդ երկու երևույթները սերտորեն փոխկապակցված են:

Սահմանադրականությունը (constitutionalism) իրավաքաղաքական դոկտրին է, որի համաձայն պետական իշխանության իրականացումն ու սահմանները որոշվում են սահմանադրությամբ կամ բարձրագույն իրավական ուժ ունեցող նորմերի համակարգով[1]: Սահմանադրականության էությունը չի հանգում միայն «սահմանափակ կառավարության» գաղափարին, թեև վերջինս դրա կարևոր դրսևորումներից մեկն է: Պատմականորեն և տեսականորեն սահմանադրականությունն ավելի լայն իմաստ ունի և նախևառաջ ուղղված է կամայական իշխանության կանխարգելմանը՝ ապահովելով, որ իշխանությունը գործի իրավական, ինստիտուցիոնալ և արժեքային հստակ շրջանակներում[2]:

«Սահմանադրականությանը ծառայող սահմանադրությունները չեն ծնվում հեղափոխական ուտոպիաների պատրանքներ ստեղծելու կամ ապագա իդեալական հասարակություն նախագծելու նպատակով: Դրանք չեն խոստանում «լուսավոր ապագա» և չեն սահմանում հասարակության կառուցման վերջնական մոդել: Ընդհակառակը՝ նման սահմանադրությունները ձևավորվում են նախորդ քաղաքական ռեժիմից բխող վախերի, փորձառությունների և բացասական դասերի հիման վրա: Եթե սահմանադրությունն ընդհանրապես ունի որևէ տեսլական, ապա այդ տեսլականը վերաբերում է ոչ թե այն բանին, թե ինչպիսին պետք է լինի ապագա հասարակությունը, այլ այն բանին, թե ինչպես պետք է այլևս չկիրառվի իշխանությունը՝ խուսափելու համար անցյալի չարաշահումներից»[3]: Այս դիպուկ ձևակերպումը փաստում է հենց այն, ինչ նախորդիվ փորձեցինք ցուցադրել. մարդու իրավունքների ժամանակակից ձևակերպումները և դրանց սահմանադրականացումը պատմական դանդաղ փորձի արդյունք են:

Գ. Հարությունյանի ձևակերպմամբ՝ իսկական սահմանադրականությունը, որպես իրավական երևույթ, բնորոշ է այն հասարակություններին, որոնք հասել են զարգացման այնպիսի մակարդակի, որտեղ ճանաչվում և երաշխավորվում են հասարակական ազատությունները, և գոյություն ունի հանրային համաձայնություն՝ հիմնված ընդհանուր

[1] **Martin Loughlin,** Foundations of Public Law (Oxford: Oxford University Press, 2010), chpt. 10.

[2] **Mark Tushnet,** 1992, "Constitutional Interpretation, Character and Experience", Boston University Law Review, 72(4).

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 13:

սոցիալ-մշակութային արժեքների վրա[1]: Իրավական նորմերի համակարգը կարող է իրական ազդեցություն ունենալ միայն այն դեպքում, երբ այդ նորմերը «կենդանի» են հասարակության մեջ, այսինքն ընդունվում, կիրառվում և ընկալվում են որպես պարտադիր և արդիական[2]:

Մարդկությանը պահանջվեց մի քանի հազարամյակ այդ իրավունքների համակարգված ձևակերպման համար, իսկ դրանց իրական արժեքը լիովին գիտակցվեց միայն բազմադարյա բռնությունների և անարդարությունների միջոցով, որոնք իրենց գագաթնակետին հասան XX-րդ դարում մոտ 100 միլիոն մարդու կյանք արժեցած ողբերգություններով: Այդ փորձն է, որ ընդգծում է արդար դատաքննության իրավունքի պատմական զարգացման ըմբռնման կարևորությունը: Պատահական չէ, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընդունված սահմանադրությունները չեն սահմանափակվում պետական ինստիտուտների գործունեությունը կարգավորող ընթացակարգային դրույթներով, այլ հանդես են գալիս որպես հասարակության բարոյական հիմք: Դրանք արտահայտում են ժողովրդի հավաքական խոսքը այն մասին, թե ինչպես են նրանք ցանկանում, որ իրենց հասարակությունն ու իրենց կյանքը կառավարվեն՝ հիմնված իրավունքների, արժանապատվության և իշխանության սահմանափակման վրա:

Իրավունքների սահմանադրականացման հաջորդող քայլը սահմանադրությամբ դրանց ամրագրումն է: Այս գործընթացը բնութագրվում է իրավունքների պոզիտիվացմամբ՝ դրանց հստակ ամրագրմամբ սահմանադրական տեքստում, ինչպես նաև այդ իրավունքների օժտմամբ գերագույն նորմատիվ ուժով և հատուկ արժեքային նշանակությամբ: Արդյունքում հիմնարար իրավունքները տեղադրվում են իրավական համակարգի հիերարխիայի գագաթնակետում՝ պարտադիր լինելով պետական իշխանության բոլոր ճյուղերի համար և ծառայելով որպես չափանիշ թե՛ օրենսդրական, թե՛ գործադիր և թե՛ դատական գործունեության սահմանադրական վերահսկողության համար:

Իրավունքների սահմանադրական ամրագրումը էական նշանակություն ունի այն առումով, որ այն էապես բարձրացնում է դրանց փոփոխման, սահմանափակման կամ վերացման իրավական շեմը: Սահմանադրական մակարդակում ամրագրված իրավունքները դուրս են բերվում սովորական օրենսդրական հայեցողության տիրույթից

[1] **Gagik Harutyunyan,** "Constitution and Constitutionalism in the Context of Constitutional Culture of the New Millennium", in New Millennium Constitutionalism: Paradigms of Reality and Challenges, ed. G.G. Harutyunyan (Yerevan: NJHAR, 2013), p. 38.

[2] **Hans Kelsen,** Reine Rechtslehre, 2. Aufl. (Wien, 1960), 219; рուս. թարգմ.՝ Чистое учение о праве Ганса Кельзена, сб. переводов, вып. 2 (Москва, 1988), p. 91.

և ենթարկվում են հատուկ պաշտպանական ռեժիմի: Դրանք չեն կարող փոփոխվել կամ սահմանափակվել նույն ընթացակարգերով, ինչ ենթասահմանադրական նորմերը, և այդպիսով պաշտպանվում են քաղաքական կոնյուկտուրայից, ժամանակավոր մեծամասնությունների կամ գործադիր իշխանության կամայական որոշումներից:

Բացի այդ, սահմանադրական ամրագրումը պայմանավորում է նաև իրավունքների սահմանափակման նյութական սահմանների գոյությունը: Նույնիսկ այն դեպքերում, երբ սահմանադրությունը թույլ է տալիս որոշ իրավունքների սահմանափակում օրենքով, այդ սահմանափակումները ենթակա են խիստ չափանիշների՝ օրինականության, անհրաժեշտության, համաչափության և սահմանադրական նպատակին համապատասխանության: Այս առումով սահմանադրական իրավունքները դառնում են ոչ թե բացարձակապես անփոփոխելի, այլ իրավաբանորեն «կոշտ» նորմեր, որոնց փոփոխությունն ու սահմանափակումը հնարավոր է միայն բացառիկ պայմաններում և խիստ վերահսկողության ներքո:

Սահմանադրությունը որպես իրավունքների և դրանց երաշխավորման մեխանիզմների միասնություն

Իրավունքների սահմանադրականացման հետ մեկտեղ առաջացավ նաև այլ իրավակարգերի սահմանման անհրաժեշտություն: Մասնավորապես, կարևորվեց իշխանությունների տարանջատման սկզբունքի դերը ժողովրդավարական համակարգերում: Հաշվի առնելով մարդու իրավունքների դերը պետական կամայականության կանխարգելման հարցում՝ դրանց պատշաճ պաշտպանությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ դատական իշխանությունն իրականում տարանջատված է օրենսդիր և գործադիր իշխանություններից[1]:

Անհրաժեշտ է նշել, որ սահմանադրությունները չեն կարող դիտարկվել որպես առանձին տարրերից բաղկացած աշխատանքներ[2]: Սահմանադրությունը պետության իրավական կմախքն է, որում բոլոր մասերը փոխկապակցված են: Ժամանակակից իրավական պետություններում պետական կառույցները ձևավորվում են այնպես, որ մի կողմից ապահովեն մարդու իրավունքների պաշտպանությունը, իսկ մյուս կողմից այդ իրավունքներն ինքնին գործեն որպես վերահսկողության մեխանիզմ պետական մարմինների գործունեության նկատմամբ:

[1] **Charles de Secondat,** Baron de Montesquieu, The Spirit of the Laws. trans. Anne M. Cohler et al. (Cambridge: Cambridge University Press, 1989).

[2] **Martin Loughlin,** Foundations of Public Law (Oxford: Oxford University Press, 2010).

Այս համատեքստում արդար դատաքննության իրավունքը առանձնահատուկ նշանակություն ունի. այն միաժամանակ հանդիսանում է անհատի հիմնարար իրավունք և դատական իշխանության ինստիտուցիոնալ գործունեության չափանիշ, որով գնահատվում է ինչպես դատական համակարգի անկախությունը, այնպես էլ ամբողջ պետական համակարգի իրավական լեգիտիմությունը:

Սահմանադրական մակարդակում արդար դատաքննության երաշխիքները գործում են որպես զսպման և հակակշռման մեխանիզմ՝ կանխելով այնպիսի իրավիճակներ, երբ գործադիր կամ քաղաքական իշխանությունը կարող է միջամտել դատական գործընթացին կամ ազդել դատական արդյունքների վրա: Եվրոպական և հետխորհրդային պետությունների փորձը ցույց է տալիս, որ այնտեղ, որտեղ իշխանությունների տարանջատումը թուլանում է, առաջին հերթին տուժում է արդար դատաքննության իրավունքը:

Պատահական չէ, որ արդար դատաքննության իրավունքի բովանդակության հիմքում դրված է իշխանությունների տարանջատման սկզբունքը: Արդար դատաքննության տարրերին ավելի մանրամասն կանդրադառնանք հաջորդ գլուխներում, սակայն այս պահին հարկ է շեշտել, որ բոլոր ոլորտային փաստաթղթերը շեշտում են հենց դատական անկախության և անաչառության պահանջը, որպես այս իրավունքի գլխավոր բաղադրատարր:

Արդար դատաքննությունն իր հերթին հանդիսանում է դատական իշխանության ինստիտուցիոնալ հիմքը[1]: Դատական իշխանության լեգիտիմությունը չի բխում ընտրություններից կամ քաղաքական մանդատից, այլ հիմնված է հանրության վստահության վրա, որ դատարանները գործում են արդար, անկողմնակալ և օրենքի հիման վրա: Արդար դատաքննության սահմանադրական երաշխիքներն ապահովում են այդ վստահության իրավական հիմքը՝ պարտադրելով դատարաններին պահպանել արդարության նվազագույն չափանիշները նույնիսկ քաղաքական ճնշման կամ հանրային ճգնաժամերի պայմաններում[2]:

Այս հանգամանքը թույլ է տալիս դիտարկել արդար դատաքննության իրավունքը նաև որպես պետության լեգիտիմության հենք: Ժամանակակից սահմանադրական պետությունում իշխանության օրինականությունը կախված է ոչ միայն ընտրական գործընթացներից, այլև նրանից, թե ինչպես է պետությունը վերաբերվում անհատի իրավունքներին: Դատարանը այն ինստիտուտն է, որի միջոցով օրենքը «խոսում է»

[1] **Tom Bingham,** The Rule of Law (London: Allen Lane, 2010.

[2] **David Dyzenhaus,** The Constitution of Law: Legality in a Time of Emergency (Cambridge: Cambridge University Press, 2006).

անհատի հետ, և եթե այդ խոսքը ընկալվում է որպես անարդար կամ կամայական, ապա խաթարվում է ողջ պետական համակարգի վստահելիությունը:

Արդար դատաքննության իրավունքի նշանակությունը կայանում է նրանում, որ այն հանդես է գալիս որպես մյուս իրավունքների և ազատությունների իրականացման երաշխիք: Առանց արդար և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի քաղաքացիները, անկախ որևէ իրավական ակտում կամ իրավական համակարգում ամրագրված տեսական նորմերից ու սկզբունքներից, ի վիճակի չեն լինի իրացնել այդ իրավունքները գործնականում: Մարդու իրավունքների համակարգը հիմնականում ձևավորվել է անհատներին պետական իշխանության չարաշահումներից պաշտպանելու նպատակով: Հետևաբար, եթե այդ իրավունքների կիրառման և պաշտպանության մեխանիզմները անկախ չեն պետությունից, դրանք կորցնում են իրենց նշանակությունը և, պարզ ասած, դառնում են «անօգուտ»:

Հետխորհրդային պետությունների համար արդար դատաքննության իրավունքի սահմանադրականացումն ուներ առանձնահատուկ նշանակություն: Խորհրդային իրավակարգում դատարանները ենթարկվում էին գործադիր և կուսակցական վերահսկողության[1]: Անկախացումից հետո նոր սահմանադրությունների ընդունումը նպատակ ուներ ոչ միայն հռչակել հիմնարար իրավունքներ, այլև արմատապես փոխել դատական իշխանության բնույթը: Այս համատեքստում արդար դատաքննության իրավունքը դարձավ խորհրդանշական և գործնական խզում խորհրդային իրավական անցյալից[2]:

Հայաստանի Հանրապետության և մյուս այլ հետխորհրդային պետությունների համար անկախության ձեռքբերումը թույլ տվեց մշակել անկախ սահմանադրություններ, որոնք հիմնված էին հենց այս հասարակությունների մշակութային և արժեքային առանձնահատկությունների վրա[3]:

Խորհրդային իրավական համակարգի փլուզումից հետո նախկին միութենական հանրապետությունները կանգնեցին նույն հիմնարար խնդրի առաջ՝ ինչպե՞ս փոխակերպել դատական իշխանությունը վարչական-քաղաքական ենթակայությունից դեպի անկախ, իրավունքների պաշտպանությանը ուղղված ինստիտուտ:

[1] **Чиркин В.Е.** Общечеловеческие ценности и современное государство // Государство и право, № 2, 2002, - С. 5–13.

[2] Wojciech Sadurski, Rights Before Courts: A Study of Constitutional Courts in Postcommunist States of Central and Eastern Europe (Dordrecht: Springer, 2005).

[3] **Գագիկ Հարությունյան,** Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները (վերահրատարակություն՝ լրամշակումներով): Երևան, Նժար, 201), էջ 148:

Հայաստանի 1995 թվականի Սահմանադրության մեջ արդար դատաքննության իրավունքի ամրագրումը նման էր այն մոտեցմանը, որը որդեգրվել էր նաև Վրաստանում (1995 թ. Սահմանադրություն), Ուկրաինայում (1996 թ. Սահմանադրություն) և մի շարք այլ հետխորհրդային պետություններում[1]: Այս սահմանադրական նորմերը նախատեսում էին ոչ միայն դատարան դիմելու իրավունքը, այլև դատավարության արդարության, հրապարակայնության, անկախության և անաչառության պահանջները: Սահմանադրական մակարդակով այդ իրավունքի ամրագրումը թույլ տվեց արդար դատաքննության սկզբունքները տարածել ոչ միայն դատավարական օրենսդրության վրա, այլև դատական իշխանության կազմակերպման, դատավորների կարգավիճակի, նրանց անփոփոխելիության, կարգապահական պատասխանատվության և դատարանների ինստիտուցիոնալ անկախության հարցերի վրա:

Արդար դատաքննության սահմանադրական ուժը հատկապես ակնհայտ է դառնում արտակարգ իրավիճակներում: Պատմական և ժամանակակից փորձը ցույց է տալիս, որ ճգնաժամային պայմաններում պետությունները հակված են ընդլայնել գործադիր իշխանության լիազորությունները՝ սահմանափակելով իրավունքները ազգային անվտանգության, հանրային կարգի կամ պետական անհրաժեշտության հիմնավորումներով: Սակայն միջազգային և եվրոպական իրավունքը ձևավորել է այն մոտեցումը, ըստ որի՝ որոշ հիմնարար իրավունքներ ունեն նվազագույն, անքակտելի միջուկ: Թեև արդար դատաքննության իրավունքը ֆորմալ առումով կարող է ենթարկվել որոշ սահմանափակումների, դրա հիմնական տարրերը՝ անկախ դատարանը, պաշտպանության իրավունքը, դատավարական արդարությունը, չեն կարող վերացվել նույնիսկ արտակարգ դրության պայմաններում[2]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը ցույց է տալիս, որ արտակարգ դրությունը չի կարող արդարացնել դատարանների կախվածությունը, դատավարության գաղտնիացումը կամ պաշտպանական հնարավորությունների էական սահմանափակումը: Արդար դատաքննության սահմանադրական պաշտպանությունը հաճախ դառնում է վերջին արդյունավետ պատնեշը իշխանության չարաշահումների դեմ: Այն պետություններում, որտեղ գործում են սահմանադրական վերահսկողության իրական մեխանիզմներ և միջազգային պարտավորությունների ներպետական կիրառումը, արտակարգ միջոցառումները ենթարկվում են դատական վերահսկողության: Ընդհակառակը, այնտեղ, որտեղ արդար

[1] Տե՛ս նույն տեղում, 155-157.

[2] **Gross, Oren, and Fionnuala Ní Aoláin,** Law in Times of Crisis: Emergency Powers in Theory and Practice. Cambridge: Cambridge University Press, 2006.

դատաքննության իրավունքը մնում է միայն ձևական հռչակման մակարդակում, արտակարգ դրությունները հաճախ վերածվում են համակարգային խախտումների աղբյուրի:

Իրավունքների սահմանադրականացումը և միջազգային չափանիշների դերը

Իրավունքների սահմանադրականացման գործընթացը պարզ գործընթաց չէ: Թեև մինչև 20-րդ դարի ավարտը շատ պետություններ իրենց սահմանադրություններում ամրագրել էին մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների մասին դրույթներ, դրանց հետագա ձևավորումը և զարգացումը դրված էր այդ պետությունների վերին դատական ատյանների վրա: Դատարաններն իրենց հերթին այդ իրավունքները մեկնաբանելիս հենվել են միջազգային փորձի և դատական պրակտիկայի վրա: Այսպիսով ստեղծվել է մի շղթա, որը կապում է մարդու իրավունքների միջազգային համակարգը ներպետական սահմանադրական կարգերի հետ:

Հետաքրքիր այս սիմբիոզը պայմանավորված է 20-րդ դարի ոճրագործություններից հետո ձևավորված իրավական մտածելակերպով: Մարդկությունը վերջնականապես գիտակցեց, որ պետություններին անսահմանափակ լիազորությունների ընձեռումը և հատկապես մարդու իրավունքների ոլորտի մենաշնորհը կարող է հանգեցնել ողբերգալի հետևանքների ոչ միայն ներպետական մակարդակում, այլև մարդկության համար[1]:

Մարդու իրավունքների պաշտպանությունը աստիճանաբար դարձավ պետական կայունության առանցքային գործոններից մեկը[2]: Հասարակություններն այլևս պատրաստ չէին հանդուրժել իշխանության կամայականությունը՝ զրկված լինելով իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներից, և ամրապնդվեց այն ընկալումը, որ քաղաքացիների համախմբված պահանջները կարող են լրջորեն ազդել պետական կառավարման վրա: Այս իրողությունը փոխեց նաև պետությունների մոտեցումը. մարդու իրավունքների երաշխավորումը սկսեց դիտարկվել ոչ միայն որպես բարոյական կամ իրավական պարտավորություն, այլև որպես հանրային վստահության պահպանման և սոցիալական լարվածությունների կանխարգելման գործիք[3]:

Միաժամանակ, միջազգային իրավունքում պարտավորեցման մեխանիզմների բացակայությունը նշանակում էր, որ միջազգային կարգավորումներով բավարարվելը

[1] **Olivier De Schutter,** International Human Rights Law (Cambridge: Cambridge University Press, 2019).

[2] **Jack Donnelly,** Universal Human Rights in Theory and Practice, 3rd ed. (Ithaca, NY: Cornell University Press, 2013).

[3] **Samuel P. Huntington,** Political Order in Changing Societies (New Haven: Yale University Press, 1968).

հնարավոր չէր: Իրավունքների կիրարկումը և դրանց իրավական ընկալման փոփոխությունը պետք է իրականացվեին նաև ներպետական մակարդակում:

II համաշխարհային պատերազմի ավարտը յուրօրինակ հնարավորություն էր իրավունքների սահմանադրականացման համար: Պատերազմը հանգեցրել էր աշխարհաքաղաքական այնպիսի ցնցումների, որոնց հետևանքով պետությունները ստիպված էին վերաիմաստավորել իրենց պետականությունները և, հետևաբար, շատերը կարիք ունեին նոր սահմանադրությունների: Օրինակ՝ Գերմանիայում, Իտալիայում, Ճապոնիայում և Ֆրանսիայում ընդունված սահմանադրություններն արտացոլեցին պետական իշխանության սահմանափակման և մարդու հիմնարար իրավունքների առաջնայնության գաղափարի ինստիտուցիոնալացում: Գերմանիայի 1949 թվականի Հիմնական օրենքը (Grundgesetz) մարդու արժանապատվությունը հռչակեց որպես անխախտելի սկզբունք և հիմնարար իրավունքների պաշտպանությունը դարձրեց ամբողջ սահմանադրական կարգի առանցք՝ միաժամանակ ամրապնդելով սահմանադրական արդարադատության մեխանիզմները: Իտալիայի 1947 թվականի Սահմանադրությունը, ֆաշիստական անցյալի արձագանքով, ընդգծեց անհատի իրավունքների գերակայությունը և դատարանների անկախությունը՝ որպես ժողովրդավարական պետության հիմնարար պայման: Ճապոնիայի 1947 թվականի Սահմանադրությունը, հրաժարվելով կայսերական գերիշխանության մոդելից, սահմանեց մարդու հիմնարար իրավունքների լայն շրջանակ և դատական վերահսկողության համակարգ՝ նպատակ ունենալով կանխել իշխանության կենտրոնացումը: Ֆրանսիայի 1946 թվականի Սահմանադրությունը (Չորրորդ Հանրապետություն) իր նախաբանում ամրագրեց սոցիալական և քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը՝ զարգացնելով այն մոտեցումը, ըստ որի սահմանադրական իրավունքները հանդիսանում են հանրային իշխանության գործունեության պարտադիր չափանիշ:

Սահմանադրական դատարանների դերը արդար դատաքննության իրավունքի պաշտպանության և զարգացման գործում

Հիմնարար իրավունքների, մասնավորապես արդար դատաքննության իրավունքի սահմանադրականացումը անբաժանորեն կապված է սահմանադրական դատարանների ինստիտուտի զարգացման հետ: Սահմանադրական դատարանները, որոնք առաջին անգամ հայտնվեցին Ավստրիայում Հանս Կելզենի տեսական

աշխատանքի հիման վրա (1920), դարձան կենտրոնական մեխանիզմը սահմանադրական իրավունքների պաշտպանության համար[1]:

Սահմանադրական դատարաններն ապահովում են սահմանադրության և դրա մեջ պարունակվող դրույթների գերակայությունը՝ ստուգելով իրավական ակտերի համապատասխանությունը սահմանադրականությանը՝ լուծելով պետական մարմինների միջև սահմանադրական գործառույթների և պարտավորությունների վերաբերյալ վեճերը և այլն[2]: Այս լիազորությունների միջոցով սահմանադրական դատարաններն ապահովում են, որ բոլոր ստորադաս իրավական նորմերը և պետական գործողությունները համապատասխանեն սահմանադրորեն ամրագրված իրավունքներին:

Ինչպես նշվեց նախորդիվ, սահմանադրական իրավունքներն ինքնուրույն գործող ինստիտուտներ չեն: Սահմանադրությունը փոխկապակցված դրույթների ամբողջություն է և, հետևաբար, իր յուրաքանչյուր դրույթ պետք է մեկնաբանվի ողջ փաստաթղթի բովանդակությունից ելնելով[3]: Սա բավականին ծավալուն և բարդ գործընթաց է և հենց այս հանձնառությամբ են օժտված սահմանադրական դատարանները: Հենց դրանում է կայանում սահմանադրական դատարանների առաջնային հանձնառությունը:

Ավելին, շատ սահմանադրություններ պարունակում եմ միայն ընդհանրական ձևակերպումներ հիմնարար իրավունքների վերաբերյալ և սահմանադրական դատարաններն են օժտված դրանց զարգացման և հստակ սահմանման պարտավորությամբ[4]:

Սահմանադրական դատարանները մեկնաբանում են սահմանադրությունը՝ հենվելով բազմաթիվ աղբյուրների վրա, ինչպիսիք են, օրինակ, բառացի, պատմական, համակարգային և անգամ աստվածաբանական:

Հաճախ մեկնաբանության մեթոդը կախված է մեկնաբանվող եզրույթի բնույթից: Դատարանների մեծ մասը համաձայն են, որ մարդու հիմնարար իրավունքների վերաբերյալ դրույթները չեն կարող սահմանափակվել իրենց տառացի սահմանմամբ և ենթակա են ավելի հիմնավոր և համապարփակ մեկնաբանման, ելնելով իրավիճակի, իրավունքի և հասարակության պահանջների առանձնահատկություններից:

[1] **Hans Kelsen,** "Judicial Review of Legislation: A Comparative Study of the Austrian and the American Constitution". Journal of Politics 4, no. 2 (1942): 183–200.

[2] **Գագիկ Հարությունյան,** Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները (վերահրատարակություն՝ լրամշակումներով): Երևան, Նժար, 2016, 333:

[3] XVII Congress of the Conference of European Constitutional Courts, The Role of Constitutional Courts in Upholding and Applying Constitutional Principles, vol. 1 (2018), 24.

[4] Տե՛ս նույն տեղում, 25:

Այս լիազորությունների կիրառմամբ արդար դատաքննության համատեքստում սահմանադրական դատարանները զարգացրել են մանրամասն դատահիրավական պրակտիկա՝ մեկնաբանելով արդար դատաքննության բովանդակությունը և կիրառելիությունը տարբեր իրավիճակներում: Օրինակ, Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանը մեկնաբանել է rechtliches Gehör-ը որպես լայն երաշխիք, որը ներառում է ոչ միայն ձևական լսված լինելու իրավունքը, այլև էական իրավունք՝ ազդել դատական որոշման վրա և ստանալ պատճառաբանված վճիռ, որը կարելի է հասկանալ և գնահատել[1]:

Արդար դատաքննության իրավունքը և միջազգային չափանիշների դերը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում

1995 թվականի Սահմանադրության ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունում արդար դատաքննության իրավունքն ամրագրվեց որպես ինքնուրույն սահմանադրական իրավունք՝ դուրս բերելով այն զուտ դատավարական կարգավորման դաշտից և բարձրացնելով սահմանադրական ինստիտուտի մակարդակ: Սահմանադրության 39-րդ հոդվածը (հետագայում՝ վերաձևակերպված և զարգացված) ձևակերպում էր արդար դատաքննության իրավունքի հիմնական առանցքը՝ որպես յուրաքանչյուր անձի իրավունք՝ իր խախտված իրավունքների վերականգնման և իր նկատմամբ ներկայացված մեղադրանքի հիմնավորվածության պարզման համար անկախ և անկողմնակալ դատարանի կողմից գործի հրապարակային քննության: Այս դրույթը միաժամանակ ներառում էր ինչպես քաղաքացիական, այնպես էլ քրեական դատավարության համար կիրառելի սկզբունքներ՝ ձևավորելով միասնական սահմանադրական ստանդարտ:

1995 թվականի Սահմանադրության 39-րդ հոդվածի կառուցվածքային կարևորությունն այն էր, որ այն արդար դատաքննությունը դիտարկում էր ոչ միայն որպես դատավարական ընթացք, այլ որպես իրավական պաշտպանության միջոց: Այստեղ շեշտը դրված էր ոչ թե դատական գործողությունների ձևական հաջորդականության, այլ արդյունքի վրա՝ խախտված իրավունքի վերականգնում: Այդ մոտեցումը սահմանադրական մակարդակով հաստատում էր, որ արդար դատաքննության իրավունքն ուղղված է ոչ միայն ընթացակարգի արդար կազմակերպմանը, այլև արդյունավետ պաշտպանության ապահովմանը:

[1] Bundesverfassungsgericht, Beschluss des Ersten Senats, 19 May 1992, BVerfGE 86, 133.

Գործող Սահմանադրության 63-րդ հոդվածը սահմանում է արդար դատաքննության իրավունքը՝ շեշտադրելով դատական անկախության, անաչառության և դատական գործընթացների հրապարակայնության սկզբունքները:

Սահմանադրության 61-րդ հոդվածն ամրագրում է դատական պաշտպանության իրավունքը՝ որպես հիմնարար իրավունք, որը ենթադրում է դատարան դիմելու ոչ թե ձևական, այլ արդյունավետ հնարավորություն: Հոդվածի երկրորդ մասում նախատեսված է միջազգային մարմիններին դիմելու անձանց իրավունքը:

Այս դրույթի կարևորությունը նրանում է, որ այն ևս մեկ անգամ սահմանադրական մակարդակով վերահաստատում է, որ ներպետական արդարադատությունը և անձանց իրավունքները խաթարող պետական մարմինների գործողությունները կարող են ենթարկվել վերազգային վերահսկողության:

Արդար դատաքննության իրավունքի սահմանադրական կարգավորման առանցքային բաղադրիչներից է միջազգային պայմանագրերի և ներպետական իրավունքի հարաբերակցության հարցը: Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասը հստակ սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը: Այս դրույթը ստեղծում է հստակ իրավական մեխանիզմ՝ ապահովելու, որ արդար դատաքննության վերաբերյալ միջազգային ստանդարտներն ունենան գերակայություն ներպետական օրենսդրության նկատմամբ: Արդյունքում՝ դատարանները պարտավոր են իրենց գործունեության ընթացքում հաշվի առնել ոչ միայն ազգային օրենքները, այլև Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունները:

Սահմանադրության 81-րդ հոդվածը լրացնում է այս համակարգը՝ սահմանելով միջազգային իրավական պրակտիկայի դերակատարումը սահմանադրական մեկնաբանության մեջ: Այս հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սահմանադրական դրույթները մեկնաբանելիս պետք է հաշվի առնվի մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Այս դրույթի միջոցով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը ներառվում է ՀՀ սահմանադրական համակարգի մեջ՝ որպես իրավունքի մեկնաբանման պարտադիր գործիք:

Դատարանը, կիրառելով 81-րդ հոդվածը, փաստացիորեն գործում է որպես միջնորդ ազգային և միջազգային իրավական համակարգերի միջև՝ ապահովելով դրանց համահունչ զարգացումը ներպետական իրավական համակարգում: Միևնույն

ժամանակ, այս մեխանիզմը սահմանափակում է օրենսդրի և գործադիրի կամայականությունը՝ կանխելով միջազգային ստանդարտներից շեղումները:

Արդար դատաքննության սահմանադրական ինստիտուցիոնալացումը Հայաստանում ցույց է տալիս, որ այս իրավունքը ծառայում է ոչ միայն անհատի պաշտպանության նպատակին, այլ նաև հանդիսանում է դատական իշխանության ամբողջ կառուցվածքի կազմակերպման հիմք: Սահմանադրական մակարդակով ամրագրված արդար դատաքննության սկզբունքները պայմանավորում են դատավորների անկախության երաշխիքները, դատական իշխանության ինքնավարությունը և դատարանների նկատմամբ հանրային վստահության ձևավորումը: Այս իմաստով արդար դատաքննության իրավունքը հանդես է գալիս որպես սահմանադրական կարգի կայունության և պետության իրավական լեգիտիմության կարևոր բաղադրիչ:

Արդար դատաքննության իրավունքի իրավաընկալման ժամանակակից հիմնահարցերը

21-րդ դարում արդար դատաքննության իրավունքի սահմանադրականացումը տեղի է ունենում արմատապես փոխված իրավաքաղաքական և տեխնոլոգիական միջավայրում: Եթե 20-րդ դարի երկրորդ կեսին հիմնական խնդիրը հանդիսանում էր այս իրավունքի ճանաչումը և նորմատիվ ամրագրումը, ապա ժամանակակից փուլում հիմնական մարտահրավերը դրա բովանդակային վերաիմաստավորումն է՝ նոր սոցիալական հարաբերությունների, տեխնոլոգիական միջամտությունների և անվտանգային սպառնալիքների պայմաններում: Այս գործընթացը առաջ է բերում մի շարք իրավաընկալման հիմնախնդիրներ, որոնք վերաձևավորում են արդար դատաքննության դասական ընկալումը որպես բացառապես «դատարան–պետություն–քաղաքացի» ուղղահայաց հարաբերություն:

Արդար դատաքննության իրավունքի սահմանադրականացման ժամանակակից ամենակարևոր հարցերից մեկը դրա հորիզոնական կիրառելիությունն է՝ մասնավոր իրավահարաբերություններում: Ավանդաբար սահմանադրական իրավունքները դիտարկվում էին որպես ուղղահայաց պաշտպանություն պետության դեմ: Սակայն ժամանակակից սահմանադրական մտածողությունն աստիճանաբար ընդունում է, որ հիմնարար իրավունքները չեն կարող սահմանափակվել միայն պետության գործողություններով, այլ պետք է ազդեն նաև մասնավոր իրավունքի դաշտում ձևավորվող հարաբերությունների վրա:

Այս մոտեցման դասական ձևակերպումը տրվել է Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանի Lüth գործով (1958), որտեղ Դատարանը մշակեց Drittwirkung der Grundrechte դոկտրինը: Դատարանը հայտարարեց, որ հիմնարար իրավունքները հանդիսանում են ոչ միայն սուբյեկտիվ իրավունքներ, այլև օբյեկտիվ արժեքային կարգ (objektive Werteordnung), որը ճառագայթում է ողջ իրավական համակարգի վրա: Սա նշանակում է, որ քաղաքացիական, առևտրային և աշխատանքային իրավունքի նորմերը պետք է մեկնաբանվեն և կիրառվեն հիմնարար իրավունքների լույսի ներքո:

Արդար դատաքննության համատեքստում այս դոկտրինը ստանում է առանձնահատուկ նշանակություն: Մասնավոր արբիտրաժային մարմինները, մասնագիտական կարգապահական հանձնաժողովները, համալսարանական կամ կորպորատիվ «ներքին դատարանները» իրականացնում են գործառույթներ, որոնք էականորեն ազդում են անձանց իրավունքների վրա:

Երկրորդ խնդիրը կապված է թվային տեխնոլոգիաների ազդեցության հետ արդար դատաքննության իրականացման վրա: Արհեստական բանականության օգտագործումը դատական որոշումների կայացման գործում, պրեդիկտիվ արդարադատության ալգորիթմները և ավտոմատացված վարչական որոշումներն առաջացնում են հարցեր թափանցիկության, հաշվետվողականության և մարդկային դատողության անփոխարինելի դերի մասին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դեռևս չի մշակել համապարփակ դատահիրավական պրակտիկա այս հարցերի վերաբերյալ:

Երրորդ հիմնահարցը վերաբերում է արդար դատաքննության և այլ սահմանադրական արժեքների միջև հակասությունների կառավարմանը: Մասնավորապես, հրապարակային դատաքննության սկզբունքը կարող է բախվել անձնական տվյալների պաշտպանության իրավունքի հետ թվային դարաշրջանում, երբ դատական որոշումները հեշտությամբ հասանելի են առցանց և կարող են մշտապես հետապնդել անձանց:

Արդարադատության եվրոպական դատարանը Google Spain v. Agencia Española de Protección de Datos գործով (2014) առաջին անգամ ճանաչեց «մոռացվելու իրավունքը»՝ սահմանելով, որ որոշ պայմաններում անձը կարող է պահանջել իր վերաբերյալ տեղեկատվության հեռացումը որոնողական համակարգերից: Հետագա դատահիրավական պրակտիկան զարգացրել է այս մոտեցումը՝ փորձելով ապահովել հավասարակշռություն տեղեկատվության հրապարակայնության և անձնական կյանքի պաշտպանության միջև: Այս հավասարակշռումը հատկապես կարևոր է արդարադատության ոլորտում, որտեղ անհրաժեշտ է միաժամանակ պահպանել

դատական գործընթացների թափանցիկությունը և անձնական տվյալների պաշտպանությունը: Այդ նպատակով պետությունները սկսել են կիրառել այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են դատական ակտերի անանունացումը և անձնական տվյալների սահմանափակ ժամանակով հասանելիության ապահովումը՝ առանց խաթարելու դատարանների գործունեության հրապարակայնության և հաշվետվողականության հիմնարար սկզբունքները: Այս գործընթացը, սակայն, բավականին բարդ է և ոչ բոլոր պետություններն են կարողանում այն համապատասխան իրագործել:

Միաժամանակ, արդար դատաքննության իրավունքի միջազգայնացումը և սահմանադրական ամրագրումն ինքնին դեռևս չեն երաշխավորում դրա լիարժեք գործնական իրականացումը: Ժամանակակից պետությունների փորձը ցույց է տալիս, որ հատկապես արտակարգ իրավիճակներում՝ ահաբեկչության դեմ պայքարի, ազգային անվտանգության կամ հանրային անվտանգության ապահովման համատեքստում, պետությունները հաճախ դիմում են այնպիսի միջոցների, որոնք էականորեն սահմանափակում են արդար դատաքննության երաշխիքները: Հակաահաբեկչական գործողությունների շրջանակում լայնորեն կիրառվում են երկարատև նախնական կալանք, գաղտնի ապացույցների օգտագործում, դատավարական վերահսկողության թուլացում և պաշտպանական իրավունքների սահմանափակում, ինչը լուրջ մարտահրավեր է ներկայացնում արդար դատաքննության իրավունքի իրական պաշտպանության համար: Այս իրողությունը վկայում է, որ իրավունքի նորմատիվ ճանաչումն ու սահմանադրական ուժը պահանջում են շարունակական ինստիտուցիոնալ վերահսկողություն և դատական արդյունավետ մեխանիզմներ՝ հատկապես ճգնաժամային պայմաններում դրա էությունը պահպանելու նպատակով:

Սույն հիմնախնդիրների հաղթահարումը հնարավոր է միայն դրա բովանդակային հարմարեցման միջոցով: Հորիզոնական կիրառելիության հարցում առաջնահերթ է համակարգված ոլորտային իրավական կարգավորումների ներդրումը, որոնք կսահմանեն մասնավոր բնույթի վեճերում պարտադիր հաշտարարության և արբիտրաժի գործընթացներում անձանց իրավունքների պաշտպանության երաշխիքները՝ սահմանադրական և միջազգային ստանդարտներին համապատասխան: Գործնականում դա կարող է արտահայտվել արբիտրաժային վարույթներում արդար դատավարության երաշխիքների սահմանմամբ, ինչպես նաև սույն մասնավոր գործընթացների նկատմամբ համապատասխան դատական վերահսկողության ընդլայնմամբ:

Թվային տեխնոլոգիաների ազդեցության պայմաններում լուծումների առանցքային ուղղությունը մարդկային դատողության առաջնայնության պահպանումն է: Արհեստական բանականության և ավտոմատացված համակարգերի կիրառումը կարող է թույլատրելի լինել միայն որպես աջակցող գործիք, այլ ոչ՝ վերջնական որոշում կայացնող մեխանիզմ: Սահմանադրական և միջազգային չափորոշիչների լույսի ներքո անհրաժեշտ է ապահովել ալգորիթմների թափանցիկությունը, որոշումների պատճառաբանվածությունը և դրանց դատական վերահսկողության լիարժեք հնարավորությունը: Միաժամանակ օրենսդիրը և դատարանները պետք է մշակեն նոր չափանիշներ, որոնք կերաշխավորեն, որ թվայնացումը չի հանգեցնի կողմերի մասնակցության, լսված լինելու իրավունքի կամ «զենքերի հավասարության» սկզբունքի փաստացի թուլացմանը: Միաժամանակ, թվայնացման դարում անձնական տվյալների պաշտպանության հարցում կարևոր է համապատասխան վերահսկողական մեխանիզմների ներդրումը, որոնք կապահովեն դատավարական թափանցիկության և անձնական տվյալների պաշտպանության միջև հավասարակշռությունը: Օրինակ, դատական վճիռները կարող են հրապարակվել անունների և այլ անձնական տվյալների գաղտնագրմամբ: Սրա բարդությունը կայանում է նրանում, որ դատավարությունների պարագայում անձնական տվյալների պաշտպանության ապահովումն առավել բարդ է: Բաց դատավարությունների ինստիտուտն ունի բացառությունների խիստ սահմանափակ շրջանակ: Անձնական տվյալների պաշտպանության հիմքով սահմանափակումը կարող է հանգեցնել թափանցիկության ողջ հայեցակարգի խանգարման: Այսպիսով, հարկավոր է մշակել այնպիսի կարգավորումներ, որոնք հաշվի կառնեն գոնե ավելի զգայուն անձնական տվյալների պաշտպանությունը:

Արդար դատաքննության և այլ սահմանադրական արժեքների, ինչպես նաև անվտանգության պահանջների միջև հակասությունների լուծումը պահանջում է ոչ միայն համաչափության սկզբունքի խիստ կիրառություն և արդյունավետ դատական վերահսկողություն, այլև ինստիտուցիոնալ ամբողջականություն, որը նվազեցնում է չարաշահումների համակարգային ռիսկերը, հատկապես արտակարգ իրավիճակներում: Թեև պետությունները կարող են ժամանակավորապես սահմանափակել որոշ իրավունքներ՝ ազգային անվտանգության կամ հանրային կարգի ապահովման նպատակով, արդար դատաքննության հիմնական միջուկը՝ անկախ և անաչառ դատարանը, պաշտպանության իրավունքը և դատավարական արդարությունը, չի կարող զիջվել արդյունավետության կամ արագության նկատառումներից ելնելով: Այս սահմանների պահպանումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ դատական

իշխանությունը պաշտպանված է քաղաքական ազդեցություններից և գործում է թափանցիկ ու հաշվետու ինստիտուցիոնալ միջավայրում:

Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն ունեն հակակոռուպցիոն շահերի բախման կանխարգելման համապարփակ կարգավորումները: Կոռուպցիոն ռիսկերը՝ դատավորների նշանակման, առաջխաղացման, կարգապահական պատասխանատվության կամ գործերի բաշխման գործընթացներում, կարող են էականորեն խաթարել արդար դատաքննության իրավունքը՝ հատկապես ճգնաժամային իրավիճակներում, երբ վերահսկողության մեխանիզմները թուլանալու միտում ունեն: Արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականությունը ենթադրում է դատավորների և դատական պաշտոնյաների ֆինանսական թափանցիկություն, շահերի բախման դեպքերի հստակ սահմանում և բացարկի ինստիտուտի գործուն կարգավորումներ, ինչպես նաև անկախ մարմինների կողմից իրականացվող վերահսկողություն: Այս միջոցները նպաստում են ոչ միայն անհատական գործերի արդար քննությանը, այլև դատարանների նկատմամբ հանրային վստահության պահպանմանը:

Վճռորոշ դեր ունեն նաև դատական անկախության ինստիտուցիոնալ երաշխիքները՝ դատավորների անփոփոխելիությունը, նշանակման և ազատման գործընթացների քաղաքական ազդեցությունից պաշտպանվածությունը, ինչպես նաև կարգապահական վարույթների անկախությունն ու իրավական կանխատեսելիությունը: Սահմանադրական դատարանների և միջազգային դատական մարմինների ներգրավվածությունը՝ որպես վերահսկող և ուղղորդող ինստիտուտներ, լրացնում է այս համակարգը՝ ապահովելով, որ նույնիսկ արտակարգ իրավիճակներում հակակոռուպցիոն և անկախության երաշխիքները չզոհաբերվեն կարճաժամկետ քաղաքական նպատակներին: Այսպիսով, անվտանգության և արդյունավետության պահանջների պայմաններում արդար դատաքննության իրավունքի պաշտպանությունը դառնում է ոչ միայն նորմատիվ խնդիր, այլ նաև ինստիտուցիոնալ կայունության և հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետության չափանիշ:

Այս բոլոր մեխանիզմներն արդեն իսկ հայտնի են ժամանակակից հասարակություններում, սակայն դրանց շարունակական կիրառումը և զարգացումը մնում են դատական և օրենսդիր իշխանությունների արդի հանձնառությունը:

Եզրակացություն

Ամփոփելով՝ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 20-րդ դարի կեսերից արդար դատաքննության իրավունքը «դատավարական կանոնների» շրջանակից տեղափոխվել է սահմանադրական կարգի հիմքային հարթություն՝ դառնալով մարդու իրավունքների

իրականացման առանցքային նախապայման: Այս վերաիմաստավորումը պայմանավորվել է թե՛ պատմական փորձով և պետական կամայականության հետևանքների գիտակցմամբ, թե՛ միջազգային իրավունքի ինստիտուցիոնալ զարգացմամբ, որի արդյունքում պետությունները ենթարկվել են իրավապարտադիր չափորոշիչների՝ միջազգային և տարածաշրջանային պայմանագրերի միջոցով: Միջազգային վերահսկողության մեխանիզմները նպաստել են այն բանին, որ արդար դատաքննության չափանիշները դառնան ներպետական սահմանադրական համակարգերի ձևավորման և դատական իշխանության կազմակերպման առանցքային չափանիշներ:

Միևնույն ժամանակ, արդար դատաքննության իրավունքը, լինելով դինամիկ և «բաց» ինստիտուտ, շարունակաբար ենթարկվում է նոր փորձությունների՝ տեխնոլոգիական միջամտությունների, վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների կիրառման աճի, ինչպես նաև անվտանգության օրակարգերի ուժեղացման պայմաններում: Հետևաբար, դրա արդյունավետ պաշտպանությունը չի կարող սահմանափակվել միայն սահմանադրականացմամբ: Անհրաժեշտ են համաչափության հստակ կանոնակարգեր, իրական դատական վերահսկողություն և ինստիտուցիոնալ երաշխիքների ամրացում՝ դատարանների անկախության, շահերի բախման կանխարգելման, հակակոռուպցիոն մեխանիզմների, գործերի բաշխման թափանցիկության և կարգապահական վարույթների կանխատեսելիության միջոցով: Այս տրամաբանության մեջ արդար դատաքննության իրավունքը միաժամանակ հանդես է գալիս որպես անհատի պաշտպանության միջոց և որպես պետական իշխանության սահմանափակման համակարգային չափանիշ, որով գնահատվում է իրավական պետության և սահմանադրականության կենսունակությունը թե՛ «սովորական», թե՛ ճգնաժամային պայմաններում:

Օգտագործված գրականության ցանկ

Նորմատիվ իրավական ակտեր և միջազգային փաստաթղթեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն: Ընդունված՝ 5 հուլիսի 1995 թ., ուժի մեջ է մտել 13 հուլիսի 1995 թ.:

2. Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms. Adopted in Rome on 4 November 1950, entered into force on 3 September 1953. ETS No. 005.

3. International Covenant on Civil and Political Rights. Adopted on 16 December 1966, entered into force on 23 March 1976. 999 U.N.T.S. 171.

4. United Nations, Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide. Adopted on 9 December 1948, entered into force on 12 January 1951.

5. United Nations General Assembly, Principles of International Law Recognized in the Charter of the Nürnberg Tribunal and in the Judgment of the Tribunal. G.A. Res. 95 (I), adopted on 11 December 1946.

6. United Nations, Rome Statute of the International Criminal Court. Adopted on 17 July 1998, entered into force on 1 July 2002.

7. United Nations Human Rights Committee. Rules of Procedure of the Human Rights Committee. CCPR/C/3/Rev.11, 2019.

8. United Nations Human Rights Committee. General Comment No. 32: Article 14 - Right to Equality before Courts and Tribunals and to a Fair Trial. CCPR/C/GC/32, adopted on 23 August 2007.

9. United Nations Human Rights Committee. General Comment No. 33: The Obligations of States Parties under the Optional Protocol to the International Covenant on Civil and Political Rights. CCPR/C/GC/33, adopted on 5 November 2008.

Օգտագործված հայերեն գրականություն

10. **Հարությունյան Գ.Գ.,** «Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները (վերահրատարակություն՝ լրամշակումներով)»: Երևան, Նժար, 2016:

11. **Հարությունյան Գ.Գ.,** «Սահմանադրություն և սահմանադրականություն նոր հազարամյակի սահմանադրական մշակույթի համատեքստում: Նոր հազարամյակի սահմանադրականություն. իրականության պարադիգմներ և մարտահրավերներ» ժողովածուում: Խմբ.՝ Հարությունյան Գ.Գ.: Երևան, Նժար, 2013:

Օգտագործված օտարերկրյա գրականություն

12. **Алекси Р.** Понятие и действительность права (ответ юридическому позитивизму). - Москва, 2011.

13. **Кельзен Г.** Чистое учение о праве Ганса Кельзена. Сборник переводов. Выпуск 2. - Москва, 1988.

14. **Нерсесянц В.С.** Конституционализм как общегосударственная идеология. В кн.: Конституционно-правовая реформа в Российской Федерации. Сборник статей. // Под ред. Ю. С. Пивоварова. - Москва, 2000.

15. **Чиркин В.Е.** Общечеловеческие ценности и современное государство. Государство и право, № 2, 2002.

16. **Шайо А.** Самоограничение власти: краткий курс конституционализма. - Москва, 1999.

17. **Alexy R.A**. "Theory of Constitutional Rights". Oxford: Oxford University Press, 2002.

18. **Bingham T.** "The Rule of Law". London: Allen Lane, 2010.

19. **Cassese A.** "International Criminal Law". 2nd ed. Oxford: Oxford University Press, 2008.

20. **De Schutter O.** "International Human Rights Law". Cambridge: Cambridge University Press, 2019.

21. **Donnelly J.** "Universal Human Rights in Theory and Practice". 3rd ed. Ithaca, NY: Cornell University Press, 2013.

22. **Dyzenhaus D.** "The Constitution of Law: Legality in a Time of Emergency." Cambridge: Cambridge University Press, 2006.

23. **Gardbaum S.** The "Horizontal Effect" of Constitutional Rights. Michigan Law Review, Vol. 102, No. 3, 2003, pp. 387–459.

24. **Gross O., Ní Aoláin F.** "Law in Times of Crisis: Emergency Powers in Theory and Practice". Cambridge: Cambridge University Press, 2006.

25. **Hernández G.** "International Law". Oxford: Oxford University Press, 2019.

26. **Huntington S.P.** "Political Order in Changing Societies". New Haven: Yale University Press, 1968.

27. **Kelsen H.** "Reine Rechtslehre". 2. Auflage. Wien, 1960.

28. **Kelsen H.** "Judicial Review of Legislation: A Comparative Study of the Austrian and the American Constitution". Journal of Politics, Vol. 4, No. 2, 1942, pp. 183–200.

29. **Lauterpacht H.** "International Law and Human Rights". London: Stevens & Sons, 1950.

30. **Loughlin M.** "Foundations of Public Law". Oxford: Oxford University Press, 2010.

31. **Montesquieu C. de S.** "The Spirit of the Laws". Cambridge: Cambridge University Press, 1989.

32. **Rosenfeld M., Sajó A.** "Constitutionalism: Foundations for the New Millennium. In: New Millennium Constitutionalism: Paradigms of Reality and Challenges", ed. G. G. Harutyunyan. Yerevan: NJHAR, 2013.

33. **Sadurski W.** "Rights Before Courts: A Study of Constitutional Courts in Postcommunist States of Central and Eastern Europe". Dordrecht: Springer, 2005.

34. **Schabas W.A**. "Genocide in International Law". 2nd ed. Cambridge: Cambridge University Press, 2009.

35. **Schabas W.A.** “An Introduction to the International Criminal Court”. 5th ed. Cambridge: Cambridge University Press, 2017.

36. **Shaw M.N.** “International Law”. 8th ed. Cambridge: Cambridge University Press, 2017.

37. **Tushnet M.** “Constitutional Interpretation, Character and Experience”. Boston University Law Review, Vol. 72, No. 4, 1992.

КОНСТИТУЦИОНАЛИЗАЦИЯ ПРАВА НА СПРАВЕДЛИВОЕ СУДЕБНОЕ РАЗБИРАТЕЛЬСТВО: ОТ ИСТОРИЧЕСКОГО ПЕРЕОСМЫСЛЕНИЯ ДО ВЫЗОВОВ XXI ВЕКА

Аннотация

В статье анализируется переосмысление права на справедливое судебное разбирательство – от сугубо процессуального вопроса к самостоятельному конституционному принципу. Исследование показывает, что данная трансформация была обусловлена историческим опытом, изменениями в общественном восприятии данного права, развитием международного права, а также созданием международных надзорных органов.

В то же время в статье обосновывается, что право на справедливое судебное разбирательство, будучи динамичным и “открытым” институтом, в XXI веке сталкивается с новыми вызовами, включая цифровизацию, расширение применения альтернативных механизмов разрешения споров, защиту персональных данных и усиление повестки безопасности. Исследование демонстрирует, что одного лишь конституционного закрепления недостаточно для обеспечения эффективной защиты права на справедливое судебное разбирательство. Эффективная защита возможна только при параллельном развитии судебных и конституционных механизмов, обеспечивающих данное право, включая институциональные гарантии независимости судебной власти, антикоррупционную политику, предотвращение конфликта интересов и эффективный судебный контроль, которые в совокупности обеспечивают жизнеспособность и практическую реализуемость данного права.

Ключевые слова: справедливое судебное разбирательство, права человека, независимость судебной власти, конституционализм, конституционный контроль, международное право, конституция.

THE CONSTITUTIONALIZATION OF THE RIGHT TO A FAIR TRIAL: FROM HISTORICAL RECONCEPTION TO THE CHALLENGES OF THE 21ST CENTURY

Annotation

This article analyses the reconceptualisation of the right to a fair trial from a purely procedural matter into an independent constitutional principle. The study demonstrates that this transformation has been driven by historical experience, changes in the public perception of the right, the development of international law, and the establishment of international supervisory bodies.

At the same time, the article argues that, as a dynamic and "open" institution, the right to a fair trial faces new challenges in the 21st century, including digitalisation, the growing use of alternative dispute resolution mechanisms, the protection of personal data, and the strengthening of security agendas. The research shows that constitutional entrenchment alone is insufficient to ensure effective protection of the right to a fair trial. Effective protection is possible only if the judicial and constitutional mechanisms safeguarding this right are developed in parallel, including institutional guarantees of judicial independence, anti-corruption policies, conflict-of-interest prevention, and effective judicial oversight, which together ensure the vitality and practical enforcement of this right.

Keywords: fair trial, human rights, judicial independence, constitutionalism, constitutional review, international law, constitution.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 25.12.2025 թ., տրվել է գրախոսության 27.12.2025 թ., ընդունվել է տպագրության 22.01.2026 թ.:

DOI: 10.59560/18291155-2026.1-236

ՍԵՐԳԵՅ ԲԵՐԲԵՐՅԱՆ
Հայ-ռուսական համալսարանի
«Սահմանադրական իրավունք, պետության և իրավունքի տեսություն» մագիստրոսական կրթական ծրագրի մագիստրանտ

Գիտական ղեկավար՝ ՀՐԱՆՏ ՍԱՐԿԻՍՈՎ
Հայ-ռուսական համալսարանի
Իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս

ՍԱՀՄԱՆԱԴՐԻ ԿԱՄՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ՝ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՅԱՑՐԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ամփոփագիր

Սույն հետազոտության առարկան սահմանադիր կամքի և Սահմանադիր ուժի դոկտրինալ հիմքերի, դրանց պատմափիլիսոփայական զարգացման և ժամանակակից սահմանադրաիրավական համակարգում դրսևորման վերլուծությունն է: Հետազոտության նպատակը «կամք» հասկացության փիլիսոփայական մեկնաբանությունների, «Սահմանադիր ուժ» հասկացության բացահայտման և զարգացման էվոլյուցիայի, «անտեսանելի սահմանադրության» հայեցակարգի նկարագրության և գործնական կիրառման ուսումնասիրությունն է, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի՝ Հայաստանի Անկախության հռչակագրի վերաբերյալ ՍԴՈ-1590 և ՍԴՈ-1749 որոշումների, դրանց նշանակության ու մեկնաբանությունների տարբերությունների վերլուծությունը:

Հոդվածում ուսումնասիրվում են Հեգելի, Քելզենի և Ռուսոյի դոկտրինալ մոտեցումները՝ մատնանշելով, որ կամքը հանդես է գալիս որպես իրավունքի իմաստային, կառուցվածքային և լեգիտիմացնող հիմք: Սահմանադիր ուժի զարգացումը ներկայացվում է Սիյեսի, Ռուսոյի և Շմիդտի տեսությունների համատեքստում՝ որպես

ժողովրդի նախասահմանադրական, ինքնիշխան կարողություն: Հակիրճ վերլուծվում է սահմանադրական դատարանի դերը սահմանադրական արժեքների պահպանման գործում՝ դրա շրջանակներում անդրադարձ կատարելով «անտեսանելի սահմանադրության» հայեցակարգին և դրա գործնական կիրառությանը:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Հայաստանի Անկախության հռչակագրի և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախաբանի սահմանադրական նշանակությանը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1590 և ՍԴՈ-1749 որոշումների համեմատական վերլուծության համատեքստում: Եզրակացվում է, որ ՍԴՈ-1590 որոշումն արտահայտում է հայ ժողովրդի՝ որպես առաջին սահմանադրի կամքի համապարփակ, արժեքային ընկալումը, մինչդեռ ՍԴՈ-1749 որոշումը սահմանափակում է դրա մեկնաբանման դաշտը՝ հանգեցնելով սահմանադրի կամքի նեղացման:

Հիմնաբառեր. կամք, ընդհանուր կամք, Սահմանադիր ուժ, սահմանված ուժ, սահմանադիր կամք, «Անտեսանելի սահմանադրության հայեցակարգ», Անկախության հռչակագիր, պետականապահպանություն, սահմանադրաիրավական կարգ, անփոփոխելի դրույթ:

Ներածություն

Ժամանակակից սահմանադրական իրավունքի դոկտրինում կենտրոնական տեղ են գրավում «Սահմանադիր ուժ» և «սահմանադիր կամք» հասկացությունները, որոնք արտահայտում են ժողովրդի՝ որպես ինքնիշխան սուբյեկտի՝ սահմանադրաիրավական կարգ ստեղծելու, փոխելու բացառիկ կարողությունը: Այս հասկացություններն անբաժանելիորեն կապված են «կամք» կատեգորիայի հետ, որն իրավունքի փիլիսոփայության մեջ դիտարկվում է որպես իրավական նորմերի կենսունակության ներքին շարժիչ ուժ և իշխանության լեգիտիմության սուբստանցիա: Հեգելի, Քելզենի և Ռուսոյի դոկտրինալ մոտեցումները ցույց են տալիս, որ կամքը ոչ միայն անհատական ազատության դրսևորում է, այլև կարող է դրսևորվել կոլեկտիվ կերպով ՝ ձեռք բերելով հասարակական-նորմատիվ նշանակություն և դառնալով սահմանադրաիրավական կարգի ձևավորման հիմք:

Սահմանադիր ուժի դոկտրինը, որը կյանքի է կոչվել դեռևս Լուսավորության դարաշրջանից և հետագայում զարգացել է Սիյեսի, Ռուսոյի, Շմիդտի և այլոց գաղափարների ազդեցությամբ, ընդգծում է ժողովրդի նախասահմանադրական բնույթը: Այս համատեքստում առանցքային է Սիյեսի դոկտրինալ մոտեցումը, որը տարբերակում

է սահմանադիր և սահմանված ուժերը՝ հաստատելով, որ սահմանադրական կարգի ձևավորման առաջնային աղբյուրը ժողովուրդն է:

Ժամանակակից սահմանադրական իրավունքի դոկտրինում «Սահմանադիր ուժ» և «սահմանադիր կամք» հասկացություններն արտացոլվում են նաև «անտեսանելի սահմանադրության» հայեցակարգի միջոցով, որը դրսևորվում է գրավոր տեքստից դուրս գտնվող սկզբունքներին, սովորույթներին և արժեքներին սահմանադրաիրավական արժեք տալու միջոցով:

Հայաստանի Հանրապետության սահմանադրաիրավական զարգացման համատեքստում այս հասկացությունները ձեռք են բերում առանձնահատուկ նշանակություն: 1990 թվականի Հայաստանի Անկախության հռչակագիրը, որպես հայ ժողովրդի Սահմանադիր կամքի անմիջական դրսևորում, իր արտացոլումն է գտել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախաբանում: Այս առումով էական նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1590 և ՍԴՈ-1749 որոշումները, որոնցում առկա մեկնաբանական տարբերությունները բացահայտում են սահմանադրի կամքի ընկալման երկու մրցակցող մոտեցումներ՝ արժեքային-համակարգային և նեղ տեքստուալ:

1. «Կամք» և «Սահմանադիր ուժ» հասկացությունների նկարագրությունը և դոկտրինալ մոտեցումները

1.1 «Կամք» հասկացության բնորոշումն ու նշանակությունը: Հեգելի, Քելզենի և Ռուսոյի դոկտրինալ մոտեցումները

Հեգելի կարծիքով իրավունքի էությունը կայանում է նրանում, որ *«գոյությունն ընդհանուր առմամբ ազատ կամքի գոյություն է»*[1]: Հեգելյան ուսմունքը վկայակոչում է, որ կամքն օժտված է տարբեր բաղադրիչներով, որոնք պայմանավորում են նրա տարբեր տարրերը՝ համընդհանրություն, յուրահատկություն և եզակիություն: Այդ տարբեր բաղադրիչների փոխազդեցությունը բացահայտում է կամքի ներքին կառուցվածքը: Երբ կամքը ներկայացված է այնպիսի տարրով, ինչպիսին է «մաքուր անորոշությունը», ապա գործ ունենք համընդհանրության հետ: Դա «ես»-ի մաքուր անդրադարձն է իր ինքնության ներսում, բացարձակ աբստրակցիա՝ զերծ ցանկացած սահմանափակումից և կոնկրետ բովանդակությունից, որտեղ կամքի ազատությունը դրսևորվում է որպես բացասական երևույթ, պարուրված է «կործանման կատաղությամբ» և միայն կործանելով է զգում իր գոյությունը:

[1] Տե՛ս **Воронко О.** Учение Гегеля о государстве и праве. - Москва, 2020 год, էջ 8:

Սակայն կամքի ազատությունը չի սահմանափակվում միայն այս բացասական դրսևորումով: Կամքի այս աբստրակտ համընդհանրությունը հաղթահարվում է, երբ կամքն անցնում է անորոշությունից դեպի տարբերակում և որոշակիություն: Այդ կերպ կամքը մտնում է իրական գոյության վիճակ: Այս պարագայում կամքի կոնկրետ յուրահատկությունը դրսևորվում է սահմանափակման տեսքով. կամքը, որպես կանոն, պետք է սահմանափակվի կամք լինելու համար[1]:

Կամքի եզակիությունը համընդհանրության և մասնավորության միասնությունն ու սինթեզն է, այն կոնկրետ է և ճշմարիտ: Այդպիսով, եզակիությունը հանդես է գալիս որպես ազատության կոնկրետ հասկացություն, որը ո՛չ անորոշ է (կամքի համընդհանրություն), ո՛չ էլ որոշակի (կամքի յուրահատկություն), այլ ներկայացնում է դրանց միասնությունը (կամքի եզակիություն):

Այս առումով հեգելյան փիլիսոփայության համաձայն՝ իրավունքն արտահայտում է կամքի ազատությունը, որն իրացվում է ոչ թե աբստրակտ, այլ կոնկրետ գործողությունների և սահմանափակումների միջոցով: Ազատ կամքը նշանակություն է ձեռք բերում միայն ընդհանուր և մասնավոր ասպեկտների համադրությամբ, որում համընդհանրությունը որոշում է դրա ուղղությունը, իսկ կոնկրետ պայմանները՝ սահմանափակում և ձևավորում դրա գործողությունների շրջանակը: Հենց այս տարրերի միասնությունը՝ կամքի եզակիությունը, ներկայացնում է ազատության իրական բովանդակությունը:

Հետաքրքիր է նաև ուսումնասիրել, թե ինչպես է Քելզենը մեկնաբանում կամքի դրսևորումը իրավունքի կառուցվածքի ներսում: Համաձայն Քելզենի «Իրավունքի մասին մաքուր ուսմունքի»՝ իրավական ակտերը արտահայտվում են խորհրդանիշների, բանավոր խոսքի և գրավոր փաստաթղթերի միջոցով: Համապարտադիրությունը իմաստ է հաղորդում իրավական գործողությանը: Նորմի (համապարտադիրության) և գոյության (կամքի արտահայտման) միջև կապող օղակը «գործողությունն» է: Այդպիսով, իրավական գոյության ձևերը կազմում են «գործող» իրավանորմերը, իսկ իրավական գոյության բովանդակությունը սուբյեկտների վարքագիծն է (գործողություն կամ անգործություն), որոնց իրավական նորմերն օժտում են իրավական կարգավիճակով և նրանց գործողություններին վերագրում իրավական հատկություններ[2]:

Կարելի է եզրակացնել, որ կամքը իրավունքի ներքին շարժիչ ուժն է, որն իրավական նորմերին հաղորդում է կենսունակություն և գործնական նշանակություն: Կամքը հանդես

[1] Տե՛ս **Нерсесянц В.С.** Философия права Гегеля. - Москва, 1998, ISBN: 5-7975-0107-4, էջ 48–50:

[1] Տե՛ս **Reut Yael Paz,** Kelsen's Pure Theory of Law as "a Hole in Time". In Monde(s) 2015/1 N° 7, Presses universitaires de Rennes. ISSN 2261-6268, ISBN 9782753540484, DOI 10.3917/mond1.151.0075, էջ 82:

է գալիս որպես իմաստային հիմք՝ ապահովելով համապարտադիրության և գոյության միջև կապը: Այդպիսով, կամքը ոչ միայն արտահայտման ձև է, այլ նաև իրավունքի գոյության պայման և դրա իրականացման ներքին մեխանիզմ:

Կամքի գաղափարի զարգացման հաջորդ կարևոր փուլը դրսևորվում է Ռուսոյի «Հասարակական պայմանագրի» տեսության մեջ, որտեղ կամքը ձեռք է բերում հասարակական և կոլեկտիվ նշանակություն: Ընդհանուր կամքի գաղափարը կենտրոնական դեր է խաղում Ռուսոյի «Հասարակական պայմանագրի մասին» աշխատության մեջ: Ընդհանուր կամքը պայմանագրով ստեղծված սոցիալական մարմնի կամքն է, և այն որոշ չափով հիմք է հանդիսանում կոլեկտիվ գործունեության ծավալման համար: Ստացվում է, որ Ռուսոյի հասարակական պայմանագրի հայեցակարգը ենթադրում է բարձր աստիճանի համերաշխությամբ սոցիալական օրգանիզմի ստեղծում: Եթե Հոբսի համար «սոցիալական պայմանագիրը» պարզապես մտավոր կառուցվածք է, ապա Ռուսոյի համար հասարակության անդամների միջև «սկզբնական համաձայնությունը» օբյեկտիվորեն գոյություն ունեցող իրողություն է: Ռուսոյի համաձայն՝ սուվերենը ազգն է, որի անդամները, որպես մասնավոր սուբյեկտներ, ընդհանուր կամքի կրողներ են[1]:

Ռուսոն տարբերակում է բնական իրավունքի երկու հասկացություն՝ ռացիոնալ բնական իրավունք և բնազդային բնական իրավունք, որը հիմնված է բնական ազդակի վրա: Հենց սոցիալական պայմանագիրն է, որը ծնում է ռացիոնալ բնական իրավունքը: Գուրվիչը՝ իր «Ռուսոն և իրավունքների հռչակագիրը: Անհատի անօտարելի իրավունքների գաղափարը Ռուսոյի քաղաքական ուսմունքում» աշխատությունում նշել է. *«Հասարակական պայմանագրի կնքմամբ «մեզանից յուրաքանչյուրը իր անհատականությունն ու բոլոր լիազորությունները փոխանցում է ընդհանուր սեփականությանը և դնում ընդհանուր կամքի գերագույն ղեկավարության ներքո»*[2]:

Ռուսոյի համար ընդհանուր կամքը բանական բնական իրավունքների աղբյուրն է: Միայն ընդհանուր կամքին, այսինքն՝ սեփական բանական բնույթին ենթարկվելով, մարդը հրաժարվում է բնազդներից և ձեռք է բերում բնական իրավունքներ: Ռուսոն ընդհանուր կամքը հակադրում է ոչ թե անհատական կամքին, այլ մասնավոր կամքին: Ռուսոյի կարծիքով ընդհանուր կամքն ուղղված է բացառապես ընդհանուր շահին, մինչդեռ մասնավոր կամքը, ըստ էության, գործ ունի միայն մասնավոր շահերի հետ:

[1] Տե՛ս **Christopher McMahon**, Rousseau's General Will and the Will of All: A Present-Day Perspective. 28 March 2025, էջ 534–537:

[2] Տե՛ս **Гройсберг А.** Понятие «общей воли» в политическом учении Ж.-Ж. Руссо // Грамота, 2011. № 5 (11): в 4-х ч. Ч. II. - С. 72-75. ISSN 1997-292X, էջ 72:

Մասնավոր կամքերի մեխանիկական գումարումը ընդհանուր կամք չի ձևավորի, այլ, ըստ Ռուսոյի՝ հասարակությունը գործ կունենա ոչ թե ընդհանուր կամքի, այլ «բոլորի կամքի» հետ[1]:

Ռուսոյի կարծիքով՝ մեծամասնության քվեարկությունը կարող է արտահայտել ընդհանուր կամքը, երբ քաղաքացիները քվեարկում են ոչ թե իրենց անձնական շահերից, այլ ընդհանուր բարիքի հաստատման ընկալումից ելնելով: Երբ մեծամասնությունը ճիշտ է որոշում, թե որն է ընդհանուր կամքը, դրա իրականացումը դառնում է կոլեկտիվ ինքնակառավարման մի ձև:

Գիրք IV-ի II գլխում Ռուսոն նշում է. *«Կա միայն մեկ օրենք, որն իր բնույթով պահանջում է միասնական համաձայնություն: Դա հասարակական պայմանագիրն է, քանի որ քաղաքացիական միավորումն աշխարհում ամենաանկեղծ կամավոր գործողությունն է»*:

Այստեղ կարևոր է նշել, որ Ռուսոն սկզբնական պայմանագիրն անվանում է օրենք: Սա, հավանաբար, պետք է հասկանալ որպես հիմնարար օրենք կամ սահմանադրություն: Այն պարտադիր չէ, որ գրավոր ամրագրում ստացած փաստաթղթի ձև ունենա, քանզի խոսքը վերաբերում է ընդհանուր կամքի ձևին, որը սահմանում է բոլոր հետագա կամային դրսևորումների շրջանակը՝ սահմանելով ընդհանուր կամքի հետագա բոլոր դրսևորումների շրջանակը: Եթե որևէ փաստաթուղթ գոյություն ունի, այն միայն սկզբնական համաձայնության գրանցման ձևն է, սակայն ընդհանուր կամքը կարող է փոխել այս հիմնարար օրենքը, լրացնել կամ վերանայել ցանկացած տեքստ[2]:

Այսպիսով, վերլուծելով կամքի հասկացությունը Հեգելի, Կելզենի և Ռուսոյի փիլիսոփայությունում՝ կարելի է եզրակացնել, որ կամքի հասկացությունը իրավունքի բնույթը հասկանալու հիմնական տարրն է:

Հեգելյան փիլիսոփայությունում կամքը դիտվում է որպես ազատության դրսևորում, որը գոյություն չունի աբստրակտ ձևով, այլ իրականացվում է կոնկրետ ձևերի, սահմանափակումների և գործողությունների միջոցով: Իսկական ազատությունը, ըստ Հեգելի, ձեռք է բերվում ոչ թե սահմանափակումների ժխտման, այլ դրանց գիտակցված ընկալման միջոցով, որտեղ կամքը դառնում է հստակ և ամբողջական:

Քելզենը, իր հերթին, կամքին տալիս է ֆունկցիոնալ նշանակություն, որով կամքը դառնում է նորմի և գործողության միջև կապող օղակը: Քելզենյան տեսության մեջ կամքը հանդես է գալիս ոչ թե որպես ազատության փիլիսոփայական կատեգորիա, այլ որպես

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 73-74:

[2] Տե՛ս **Christopher McMahon,** Rousseau's General Will and the Will of All: A Present-Day Perspective. 28 March 2025, էջ 546–547:

իրավական մեխանիզմ, որը իմաստ է հաղորդում իրավական նորմին: Հետևաբար, կամքը ոչ միայն սուբյեկտիվ ընտրության տարր է, այլև կառուցակարգ, որն ապահովում է իրավունքի գոյությունը որպես ամբողջական համակարգ:

Ռուսոն, իր հերթին, կամքի գաղափարը բարձրացնում է իրավաքաղաքական փիլիսոփայության մակարդակ՝ այն վերածելով կոլեկտիվ գոյության հիմքի: Ընդհանուր կամքի նրա հայեցակարգն արտահայտում է ժողովրդի միասնությունը որպես ինքնիշխան և բոլոր իրավական ինստիտուտների աղբյուր: Ռուսոյի համար ընդհանուր կամքը անհատական շահերի հանրագումար չէ, այլ ընդհանուր բարօրությանն ուղղված բանական կամք: Այս գաղափարի միջոցով կամքը ստանում է հասարակական-նորմատիվ նշանակություն և դառնում է ոչ միայն անհատական ազատության նախապայման, այլև իշխանության և օրենքի լեգիտիմության սուբստանցիան:

Վերոնշյալ երեք մոտեցումներում էլ կամքը հանդես է գալիս ոչ միայն որպես սուբյեկտիվ ցանկության դրսևորում, այլև որպես ռացիոնալ սկզբունք, որը ձևավորում է իրավունքի իմաստը, կառուցվածքը և գործողությունը:

1.2 «Սահմանադրի ուժ» հասկացության բնորոշումը և զարգացման էվոլյուցիան

Սահմանադրական իրավունքի գիտության զարգացման համատեքստում արժեբանական նշանակություն ունի «Սահմանադիր ուժ» հասկացության նշանակության վերհանումն ու հստակեցումը:

Սոսկ բառակազմության տեսանկյունից «Սահմանադիր» բառը նշանակում է «սահման դնող»: Բառարանային ստուգաբանական շրջանակներում «Սահմանադիր» բառը նկարագրվում է որպես՝

- կարգ՝ օրէնք սահմանող[1],
- կարգ՝ կանոն՝ չափ՝ օրէնք դնող[2],
- որևէ բանի հիմնադրման՝ սահմանման՝ կազմակերպման ծառայող[3]:

Սահմանադիր ուժի դոկտրինը սահմանադրական իրավունքի գիտության մեջ ձևավորվեց և իր հիմնական նշանակությունը գտավ Լուսավորության դարաշրջանում, հատկապես՝ Ֆրանսիական հեղափոխության արդյունքում: Այն հիմնված է Լուսավորության երկու առանցքային գաղափարների վրա, ըստ որոնց՝ քաղաքական իշխանության գլխավոր աղբյուրը ժողովուրդն է, իսկ Սահմանադրությունը՝ որպես

[1] Տե՛ս **Ստեփան Մալխասեանց,** Հայերէն բացատրական բառարան: Երևան: Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչութիւն (1944), էջ 1937:

[2] Տե՛ս **Գնէլ արքեպիսկոպոս Ճէրէճեան, Փարամազ Կ. Տօնիկեան եւ Արտաշէս Տէր Խաչատուրեան**, Հայոց լեզուի նոր բառարան: Պէյրութ: Կ. Տօնիկեան եւ Որդիք Հրատարակչատուն (1992), էջ 2094:

[3] Տե՛ս **Էդուարդ Բագրատի Աղայան,** Արդի հայերենի բացատրական բառարան: Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976, հատոր 2, էջ 1271:

պետականաստեղծ փաստաթուղթ, բխում է ժողովրդական ինքնիշխանությունից: Այսինքն՝ Սահմանադրությունը հանդիսանում է Ժողովրդի Սահմանադիր ուժի իրացման դրսևորումը: 18-րդ դարի հեղափոխությունների ժամանակ, երբ ձևավորվեց «Սահմանադրի ուժ» հայեցակարգը, ի հայտ եկավ դրա վերաբերյալ երկու հիմնական մոտեցում: Առաջին մոտեցման համաձայն՝ Սահմանադիր ուժը համարվում է բացարձակ և գտնվում է օրենքի շրջանակներից դուրս: Այս ընկալմամբ Սահմանադիր ուժը ներկայացվում է որպես ժողովրդի կամ հավաքական սուբյեկտի գերագույն իշխանությունը, որը կարող է ստեղծել կամ փոխել պետական ամբողջ կարգը: Ժողովրդի իշխանությունը չի ենթարկվում գոյություն ունեցող իրավական սահմանափակումներին, քանի որ հենց ժողովուրդն է իրավական համակարգի ձևավորվման առաջնային աղբյուրը: Երկրորդ մոտեցման համաձայն՝ Սահմանադիր ուժը սահմանադրականացված է, այն ընկալվում է որպես սահմանված կարգով սահմանադրությունը փոխելու կարողություն: Այս մոտեցման համաձայն՝ Սահմանադիր ուժը բացարձակ չէ և իրականացվում է տեքստուալ ամրագրված ընթացակարգերի և նորմերի միջոցով[1]:

Ընդունված է համարել, որ «Սահմանադիր ուժ» հասկացությունը սահմանադրական իրավունքի դոկտրին ներմուծել է ֆրանսիացի հեղափոխական գործիչ Էմանուել Ժոզեֆ Սիյեսը: Սակայն, նրանից առաջ ևս «Սահմանադիր ուժ» հասկացությունն իր արտացոլումն է գտել դոկտրինալ աղբյուրներում: Այսպես, 1324 թվականի «Խաղաղության պաշտպան» աշխատության հեղինակ Մարսիլիուս Պադովացին համարվում է այն գաղափարի առաջին արտահայտողներից մեկը, որ ժողովուրդը բարձրագույն քաղաքական իշխանության կրողն է: Մարսիլիսուսը պնդում էր. *«Սահմանադիր ուժի հաստատումը կամ կառավարության կազմավորումը պատկանում է օրենսդիր մարմնին, այսինքն՝ քաղաքացիների սահմանադիր ժողովին և կառավարման ձևի ցանկացած փոփոխությունը կամ նույնիսկ դրա վերացումը, եթե դա պահանջում է համընդհանուր բարօրությունը, նույնպես գտնվում է նրա իրավասության տիրույթում»*[2]:

Հետագայում՝ 17-րդ դարում, Յոհան Ալթուսիուսը նկարագրել է գերիշխանության իրավունքը, որն Աստված ներդրել է ամբողջ հասարակական մարմնում, որպես իրավասություն՝ կարգավորելու, հրամայելու, սահմանելու, կառավարելու և հաստատելու այն ամենը, ինչն անհրաժեշտ և օգտակար է համընդհանուր միության համար: Ըստ նրա՝

[1] Տե՛ս **J. Colon-Rios,** Constituent Power and the Law, Oxford University Press. March 2020, էջ 4–5:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 30-32:

այս սահմանադիր ակտից հետո այն, ինչ համայնքը *«մեկ անգամ հաստատել է, պետք է պահպանվի, եթե միայն համընդհանուր կամքը այլ բան չի ցանկանում»*[1]:

Ժան-Ժակ Ռուսոն 18-րդ դարում նոր շունչ հաղորդեց «Սահմանադիր ուժ» հասկացությանը: Նրա նորարարությունը կայանում էր նրանում, որ նա հաստատակամորեն պաշտպանում էր այն գաղափարը, թե ժողովուրդը, նույնիսկ հասարակական պայմանագիր կնքելուց հետո, պահպանում է իր՝ սահմանադիր իշխանությունը վերաակտիվացնելու ունակությունը, երբ այն համարում է անհրաժեշտ, և գոյություն ունեցող պետությանը նոր սահմանադրություն շնորհելու կարողությունը: Ռուսոի տեսությունը ենթադրում էր մի սուբյեկտի գոյություն, որն ունի սահմանադրական կարգը նորից ստեղծելու իշխանություն, այսինքն՝ սահմանադիր սուբյեկտ, որն իրավասու է ձևավորել ցանկացած սահմանադրական փաստաթուղթ[2]:

Միևնույն ժամանակ, անգլիական իրավունքի դոկտրինում ևս առկա էին Սահմանադիր ուժի մեկնաբանման վերաբերյալ մոտեցումներ: Այսպես, 18-րդ դարի Մեծ Բրիտանիայի տեսաբանների շրջանում «Սահմանադիր ուժ» հասկացությունը գործածվում էր հոգնակի ձևով՝ Սահմանադիր ուժեր՝ նկատի ունենալով Բրիտանիայի ժողովրդի բոլոր ներկայացուցիչներին՝ որպես սահմանադիր իշխանության կրողներ: Այս մոտեցմամբ նրանք համարվում էին այն սուբյեկտները, ովքեր ունեն գերիշխանություն օրենսդիր մարմնի նկատմամբ: Ջունիուսը, իր հերթին, տարբերակում էր «Սահմանադիր» և «ներկայացուցիչ մարմին» հասկացությունները՝ ընդգծելով, որ վերջինս չի տիրապետում սկզբնական ուժին, այլ գործում է ժողովրդի կողմից իրեն վերապահված իշխանության հիման վրա[3]:

Այս գաղափարների ազդեցությամբ ձևավորվեց նաև Էմանուել Սիյեսի «Սահմանադիր ուժ» հայեցակարգը: Սիյեսի Սահմանադիր ուժի հայեցակարգը ձևավորվել է Աստծո՝ որպես գերագույն օրենսդիր իշխանության կրողի մասին աստվածաբանական գաղափարների ազդեցության ներքո: Սիյեսը ազգին համարում էր նորմաստեղծ, անսահմանափակ Սահմանադիր ուժ, այսինքն՝ սահմանադրական կարգ սահմանելու *ex nihilo* (ոչնչից) և այն սեփական նախաձեռնությամբ փոխելու ունակությունը: Այդպիսով, նա գերագույն իշխանության աղբյուրը Աստծուց և միապետից փոխանցեց ազգին՝ այն սահմանելով որպես ներկայացուցիչների միջոցով գործող համայնք: «Սահմանադիր ուժ» (ֆրանս.՝ pouvoir constituant) և «Սահմանված ուժ»

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 32-33:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 34-35:

[2] Տե՛ս **J. Colon-Rios,** Five Conceptions of Constituent Power. Volume 7, Issue No. 31, 2017, էջ 2–3:

(ֆրանս.՝ pouvoirs constitués) հասկացությունների տարբերակումը դարձավ նրա տեսության կենտրոնական տարրը:

Ըստ Սիյեսի՝ Սահմանադիր ուժի հայեցակարգն իրենից ներկայացնում է նախնական և անսահմանափակ ուժը, որը գործում է հաստատված իրավակարգից դուրս և դրանից առաջ, մինչդեռ Սահմանված ուժի հայեցակարգը գործում է Սահմանադրությամբ նախատեսված մարմիններին վերապահված լիազորությունների շրջանակում: Այսպես, Սիյեսի համար ազգը պարզապես անհատների համագումար չէր, այլ կոլեկտիվ մարմին, որը գոյություն ուներ ընդհանուր օրենքի ներքո և ներկայացված էր մեկ միասնական օրենսդիր մարմնի կողմից: Հենց այս մարմինն է տիրապետում սկզբնական Սահմանադրի ուժին, այսինքն՝ սահմանադրական կարգ սահմանելու կամ փոխելու կարողությանը: Դրա հիման վրա ստեղծված ինստիտուտները՝ խորհրդարանը, դատարանները, պարզապես ածանցյալ են և ենթարկվում են ազգի սկզբնական կամքին[1]:

Այս գաղափարական զարգացումների տրամաբանական շարունակությունը դարձան Կառլ Շմիդտի բնորոշումները: Ըստ Շմիդտի՝ Սահմանադիր ուժի իրացման սուբյեկտը ժողովուրդն է, որն ընկալվում է որպես Սահմանադրությանը նախորդող քաղաքական միավոր: Ժողովրդի կողմից Սահմանադիր ուժի իրացումը իրավական սահմանափակումներ չունի, ժողովուրդն ունի լիակատար ազատություն իր կողմից ստեղծվող սահմանադրության նորմերն ընտրելու հարցում[2]:

Վերոնշյալ տեսական զարգացումները ցույց են տալիս, որ «Սահմանադիր ուժ» հասկացությունը ձևավորվել է երկարատև ինտելեկտուալ էվոլյուցիայի արդյունքում: Այս հոլովույթը բացահայտում է մեկ հիմնարար սկզբունք՝ պետության իրավական և ինստիտուցիոնալ կառուցվածքի աղբյուրը ժողովուրդն է՝ որպես նախասահմանադրական, ինքնիշխան և ինքնավար միավոր:

Այս տրամաբանությունից հետևում է, որ «Սահմանադրի կամք» հասկացությունը Սահմանադրի ուժի ներքին և անբաժանելի տարրն է: Եթե Սահմանադիր ուժը բնութագրում է ժողովրդի պետականաստեղծ ներուժը, ապա Սահմանադրի կամքը այդ ներուժի իրացման մղումն է, որը հանդես է գալիս որպես սահմանադրի շարժիչ ուժ՝ ապահովելով նրա կարողությունը սահմանադրական կարգի հաստատման համատեքստում:

[1] Տե՛ս **J. Colon-Rios,** Constituent Power and the Law. Oxford University Press, March 2020, էջ 60-65:

[2] Տե՛ս **Raffael N. Fasel,** Constraining Constituent Conventions: Emmanuel Joseph Sieyès and the Limits of Pouvoir Constituant. Oxford University Press, 2022, էջ 1108:

2.Սահմանադրական դատարանի դերը և «Անտեսանելի սահմանադրության» հայեցակարգը ժամանակակից սահմանադրաիրավական համակարգում

2.1 Սահմանադրական դատարանի որոշումների տեղն ու նշանակությունը իրավական համակարգում

Սահմանադրական դատարանի հիմնական առաքելությունը օրենսդրական գործընթացում օրենսդիր մարմնի կողմից ընդունված օրենքների Սահմանադրությանը համապատասխանելու հարցը որոշելն է: Սա այսպես կոչված «վերացական նորմավերահսկողությունն է», այսինքն՝ «իրավական ակտի ստուգումը» կոնկրետ դատական գործի շրջանակից դուրս:

Սահմանադրական վերահսկողությունը դրսևորվում է օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի, պայմանագրերի սահմանադրականության ստուգման և գնահատման մեջ, որոնք ուժը կորցնում են հակասահմանադրական ճանաչվելու դեպքում, իրավասության վերաբերյալ վեճերի լուծման, Սահմանադրության մեկնաբանման մեջ, որը կոչված է ապահովելու Սահմանադրության իրավական պաշտպանությունը, իշխանության մարմինների միջև հավասարակշռումն ապահովելու համար[1]:

Ըստ մի շարք հեղինակների՝ սահմանադրական դատարանի որոշումները չեն կարող դիտվել որպես իրավունքի աղբյուր և չեն կրում նորմատիվ բնույթ: Այս մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ սահմանադրական դատարանը, օրենքի վիճարկվող դրույթները ճանաչելով Սահմանադրությանը հակասող և անվավեր, փաստացի գործում է որպես «նեգատիվ օրենսդիր», քանի որ նման դեպքերում չի ստեղծում նոր դրական նորմեր: Այդ պատճառով իրավահարաբերությունների կարգավորումը, թե՛ փաստական, թե՛ իրավական առումով, իրականացվում է Սահմանադրությամբ և նորմատիվ ակտերով:

Մյուս խումբ հեղինակների կարծիքով՝ սահմանադրական դատարանի որոշումները մեկնաբանողական բնույթ ունեն, և որպես իրավունքի մեկնաբանման դատական ակտեր հանդես են գալիս ոչ միայն Սահմանադրության պաշտոնական մեկնաբանությանը վերաբերող որոշումները, այլև սահմանադրական դատարանի բոլոր որոշումները: Այս համատեքստում իրավաբանական գրականությունում արտահայտվել է այն դիրքորոշումը, որ իրավունքի մեկնաբանություն իրականացնող դատարաններն իրավասու են միայն բացահայտել և մեկնաբանել կիրառվող նորմի բովանդակությունը,

[1] Տե՛ս **Безруков А.В.** Роль Конституционного Суда России в обеспечении конституционного правопорядка // Российское право: Образование, практика, наука, 2017, էջ 2:

սակայն չեն կարող ստեղծել նոր իրավական նորմեր: Ըստ այդ տեսակետի՝ դատական իշխանության ներթափանցումը նորմաստեղծ գործունեության ոլորտ կնշանակի իշխանության ճյուղերի միջև սահմանազատման խախտում և օրենսդրական իշխանության գործառույթների անցում դատական մարմիններին: Նույնը վերաբերում է նաև սահմանադրական դատարանին: Սահմանադրության մեկնաբանություն իրականացնելով և այլ որոշումներ ընդունելով՝ այն, միևնույն է, չի կարող այդ գործընթացում ձևավորել իրավունքի նոր նորմեր[1]:

Իրավաբանական գրականության մեջ շրջանառվում է նաև այն տեսակետը, որ թեև Սահմանադրական դատարանի որոշումները նորմատիվ ակտեր չեն, սակայն ունեն նորմատիվ բնույթի տարրեր: Որոշ հեղինակներ նշում են, որ Սահմանադրական դատարանը նորմաստեղծ գործառույթ չունի, և այս կարևոր պայմանի բացակայության պատճառով նրա որոշումները չեն կարող դիտարկվել որպես լիարժեք նորմատիվ ակտեր, ուստի դրանք բնութագրվում են որպես քվազինորմատիվ:

Մյուս խումբ հեղինակներն էլ գտնում են, որ չնայած Սահմանադրական դատարանի որոշումները նորմատիվ ակտեր չեն՝ դրանք փոփոխություններ են մտցնում գործող իրավական համակարգում՝ վերացնելով Սահմանադրությանը հակասող նորմերը: Հաշվի առնելով դրանց համապարտադիր բնույթը՝ այդ որոշումներն իրենց իրավաբանական ուժով հավասարեցվում են օրենքներին: Իրավաբանական գիտության մեջ գոյություն ունի նաև այն մոտեցումը, համաձայն որի՝ Սահմանադրական դատարանի որոշումները պետք է դիտարկել որպես պրեյուդիցիայի հատուկ դրսևորում, այլ ոչ որպես դատական նախադեպի ինքնուրույն տեսակ:

«Պրեյուդիցիա» իրավական տերմինը ենթադրում է, որ դատարանի կողմից իրավական ուժի մեջ մտած ակտով հաստատված փաստական հանգամանքն այլևս չի կարող վերստին ապացուցման առարկա դառնալ այլ դատական մարմնի կողմից: Այս տեսաննկյունից Սահմանադրական դատարանի կողմից հաստատված այն փաստը, որ տվյալ իրավական նորմը չի համապատասխանում Սահմանադրությանը, համապարտադիր է և ենթակա է համընդհանուր կիրառման[2]:

Ելնելով վերոնշյալից՝ կարելի է փաստել, որ Սահմանադրական դատարանի գործունեությունը չի սահմանափակվում «նեգատիվ օրենսդրի» դերով: Սահմանադրական դատարանը ոչ միայն վերացնում է Սահմանադրությանը հակասող

[1] Տե՛ս **Մանասյան Ա.,** Սահմանադրական դատարանի որոշումների տեղը ՀՀ իրավական համակարգում և դրանց դերը Սահմանադրության կայունության ապահովման գործում: ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ 57:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 58-59:

նորմերը, այլև հաստատում է օրենսդրի կողմից ընդունված օրենքների սահմանադրական օրինականությունը: Այսպիսով, դրա գործունեությունն ուղղված է ոչ թե իրավական նորմերի վերացմանը, այլ սահմանադրական սկզբունքների ամրապնդմանը:

2.2 «Անտեսանելի սահմանադրության» հայեցակարգի էությունն ու ազդեցության սահմանները

Ժամանակակից սահմանադրական իրավունքի դոկտրինում «սահմանադրական անտեսանելիություն» տերմինն օգտագործվում է երկու հիմնական փոխկապակցված իմաստներով:

Նախ և առաջ, անտեսանելիությունն առաջին հերթին կապված է չգրված սահմանադրական սովորույթների հետ, որոնք պարունակում են այն նորմերն ու սկզբունքները, որոնք չունեն տեքստուալ ամրագրում «սահմանադրական» որակվող փաստաթղթում: Այս դեպքում անտեսանելիությունը հիմնականում արտացոլում է համապատասխան նորմերի քաղաքական կամքի բնույթը, որը հիմնված է սովորույթների, ավանդույթների և ինստիտուցիոնալ պրակտիկայի վրա, այլ ոչ թե ֆորմալ իրավաբանական տեքստի վրա:

Մյուս կողմից «անտեսանելիության» երկրորդ մոտեցումը վերաբերում է գրավոր սահմանադրություններին և բխում է ցանկացած սահմանադրական տեքստի մեկնաբանման և գործնական կիրառման անխուսափելիությունից: Սահմանադրաիրավական կարգի իրական բովանդակությունը կախված է տեքստից դուրս գտնվող աղբյուրներից (այդ թվում՝ սահմանադրության մշակման և վավերացման հետ կապված փաստաթղթերից), որի արդյունքում ցանկացած երկրի սահմանադրական կառուցվածքը հիմնված է այնպիսի տարրերի վրա, որոնք միշտ չէ, որ էքսպլիցիտ արտացոլվում են գրավոր տեքստում:

Այսպիսով, ցանկացած սահմանադրություն տեսանելի և անտեսանելի բաղադրիչների համադրություն է: Ընդ որում, որոշ իրավակարգերում դատարանները ստիպված են վկայակոչել սահմանադրության տեքստից դուրս գտնվող (անգլ.՝ extra-textual) սկզբունքներ՝ սահմանադրական և օրենսդրական պահանջները հավասարակշռելու համար, մինչդեռ այլ իրավակարգերում սահմանադրական տեքստն ինքնին բավականաչափ մանրամասն է և պարունակում է նման հավասարակշռության հստակ շրջանակներ: Հետևաբար, Սահմանադրության «անտեսանելիության» աստիճանն ուղղակիորեն կախված է նրանից, թե որքան մանրակրկիտ է

սահմանադրությունը սահմանում պետության սահմանադրական ինքնությունը, դրա հիմնական արժեքները և մեկնաբանման մեթոդաբանական ուղեցույցները[1]:

Տարբեր տեսական մոտեցումներ տարաբնույթ կերպով են սահմանում «անտեսանելիության» սահմանները: Բնական իրավունքի հայեցակարգերի կողմնակիցներ Լարի Սոլումն ու Ջեֆրի Գոլդսվորտին համարում են, որ սահմանադրական կառուցվածքի ներքին տարրեր կարող են դիտարկվել միայն տեքստից դուրս գտնվող այն աղբյուրները, որոնք թույլ են տալիս պարզաբանել սահմանադրաիրավական դրույթների պատմական իմաստը և տեքստը մշակողների ստեղծարար կամքը: Հեղինակների կարծիքով մյուս տեսակի աղբյուրների մեծ մասն ուղղակիորեն կապված չէ սահմանադրական դրույթների հետ:

Ի հակադրություն սրա, սահմանադրական մեկնաբանության դինամիկ և կոնտեքստուալ տեսությունները ենթադրում են, որ մեկնաբանման գործընթացն անխուսափելիորեն ձևավորվում է այն սոցիալական, քաղաքական և պատմական շրջանակներում, որում գործում է սահմանադրությունը: Յոհաննես Չանը և Պատրիկ Էմորթոնը պնդում են, որ արտատեքստային աղբյուրների զգալի մասն իրականում մեկնաբանման ներքին բաղադրիչներ են, քանի որ դրանք ազդում են սահմանադրաիրավական նորմերի ընկալման և կիրառման ձևի վրա[2]:

«Անտեսանելի սահմանադրության» հայեցակարգը դրսևորվել է մի շարք երկրների սահմանադրական դատարանների պրակտիկայում: Այսպես, Հունգարիայի Սահմանադրական դատարանի նախկին նախագահ Շոլյոմը մահապատիժը հակասահմանադրական ճանաչելու գործով իր կարծիքում նշել է.

«Սահմանադրական դատարանը պետք է շարունակի իր գործունեությունը՝ սահմանելու Սահմանադրության հիմքերը և դրանում ներհատուկ իրավունքները: Նրա որոշումները կստեղծեն ամբողջական համակարգ, որը կծառայի որպես հուսալի սահմանադրականության չափանիշ, գործող Սահմանադրությունից վեր կանգնած անտեսանելի սահմանադրություն: Սահմանադրական դատարանն այս գործընթացում ունի ազատություն այնքան ժամանակ, քանի դեռ մնում է սահմանադրականության շրջանակներում»[3]:

Այսպիսի ոգով Հարավաֆրիկյան Հանրապետության դատարանի հիմնական և աննախադեպ խնդիրն էր հաստատել 1996 թվականի Սահմանադրության ավարտական

[1] Տե՛ս **Rosalind Dixon, Adrienne Stone,** The Invisible Constitution in Comparative Perspective. Cambridge University Press, էջ 3–4:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 5-6:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 184-186:

տեքստը՝ 34 համապարտադիր սահմանադրական սկզբունքներին համապատասխան, որոնք քաղաքական համաձայնություններ էին՝ ձեռք բերված ապարտեիդի վերացմանն ուղղված բանակցությունների ընթացքում և մեծ մասամբ վերացական ու անորոշ էին, իսկ ժամանակավոր Սահմանադրությունը չէր նախատեսում դրանց մեկնաբանման հստակ ընթացակարգեր: Այդ իսկ պատճառով, դատարանը լայն դիրքորոշում որդեգրեց՝ նշելով, որ Սահմանադրության վերջնական տեքստը պետք է դիտարկվի համապատասխան պատմական, քաղաքական և իրավական համատեքստում: Հետևաբար, դատարանը վերոնշյալ 34 սահմանադրական սկզբունքները մեկնաբանեց՝ «*որպես «նոր կարգի» և «պատմական կամուրջի» ստեղծում՝ խտրական անցյալից դեպի մարդու իրավունքների վրա հիմնված ապագա*»:

Բացի դրանից, *Մակվանյանեի* գործով դատարանը մահապատժի կիրառման սահմանադրականությունը քննարկել է Ժամանակավոր Սահմանադրության լույսի ներքո, որը հստակորեն չէր անդրադարձել քննարկվող հարցին: Սահմանադրական դատարանը միաձայն մահապատիժը հակասահմանադրական ճանաչեց, քանի որ այն խախտում էր կյանքի և արժանապատվության երաշխավորված իրավունքները և խտրականության, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելման իմպերատիվ պահանջը: Արդյունքում, դատարանը սահմանեց ոչ տեքստային սկզբունք, համաձայն որի՝ պետության կողմից բռնություն պարունակող ցանկացած գործողություն պետք է լինի ոչ միայն օրինական, այլև ռացիոնալության սահմաններում արդարացված և ոչ թե կամայական[1]:

Մեկ այլ օրինակ՝ Ինդոնեզիայի Սահմանադրական դատարանը կառուցում է անտեսանելի սահմանադրություն Սահմանադրության 1-ին հոդվածի 3-րդ մասում ամրագրված **Նեգարա Հուկում** (անգլ.՝ Negara Hukum) սկզբունքի վրա, որն ամրագրում է իրավունքի գերակայությունը, արդարադատության մատչելիությունը, արդար դատաքննությունն ու մարդու իրավունքների պաշտպանությունը, նույնիսկ եթե դրանք տեքստուալ ամրագրված չեն Սահմանադրությունում:

Օրինակ՝ Բալիի 2003 թվականի ռմբակոծության գործով դատարանը նշել է, որ *«Սահմանադրական դատարանի գոյության էությունը… Սահմանադրության պահպանությունն ու իրավունքի գերակայության սկզբունքի ապահովումն է Ինդոնեզիայի համակարգում Ռեֆորմասի դարաշրջանից հետո…»*:

«Փաստաբանների մասին» 2004 թվականի գործով դատարանը պարզեց, որ «*իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը պետք է համարվի քաղաքացիների*

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 180-183:

սահմանադրական իրավունք, չնայած Սահմանադրությունը այն էքսպլիցիտ չի կարգավորում: Հետևաբար, պետությունը պետք է երաշխավորի դրա իրականացումը»[1]:

Ի վերջո, Իտալիայի Սահմանադրական դատարանի պրակտիկան «անտեսանելի սահմանադրության» կիրառման հստակ օրինակ է, որն ակտիվորեն լրացնում է գրավոր սահմանադրական տեքստի բացերը: Այսպես կոչված լրացուցիչ որոշումները թույլ են տալիս Իտալիայի Սահմանադրական դատարանին ոչ միայն նորմը ճանաչել հակասահմանադրական (որպես «նեգատիվ օրենսդիր»), այլև դրան ավելացնել «սահմանադրական տեքստ»՝ դրանով իսկ վերացնելով օրենսդրական բացը և ձևավորելով ամբողջական սահմանադրաիրավական նորմ:

Այսպես, Իտալիայի Սահմանադրական դատարանն իր առաջին լրացուցիչ որոշումը կայացրել է 1967 թվականին: Թիվ 151 որոշմամբ դատարանն ամրագրեց, որ ոչ թե նորմն է բառացիորեն ճանաչվում հակասահմանադրական, այլ դրա բովանդակության «չգրված» մասը, որը բխում է դրա կիրառումից: Դատարանը հակասահմանադրական ճանաչեց 1889 թվականի Իտալիայի քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածը, որի համաձայն՝ մեղադրյալը չէր կարող արդարացվել ներման, ապացույցների բացակայության կամ համաներման միջոցով, եթե նա չէր հարցաքննվել կամ տեղեկացվել մեղադրանքի մասին: Այս ձևակերպումից հետևում էր, որ արդարացման մյուս բոլոր դեպքերում մեղադրյալի հարցաքննությունը պարտադիր չէր: Դատարանն արձանագրեց, որ *«ապացույցների բացակայությամբ պայմանավորված արդարացումները կարող են բացասաբար անդրադառնալ անձի հեղինակության վրա: Հետևաբար, այս դեպքերում պարտադիր հարցաքննության բացակայությունը պաշտպանությունը դարձնում է թերի և խախտում է Սահմանադրության 24-րդ հոդվածով երաշխավորված պաշտպանության սահմանադրական իրավունքը»*[2]: Այդպիսով, դատարանը օրենքի տեքստին «ավելացրեց» մեղադրյալի պարտադիր հարցաքննության կամ պատշաճ ծանուցման պահանջը՝ արդարացման որոշումները կայացնելուց առաջ:

Մեկ այլ օրինակ է Իտալիայի Սահմանադրական դատարանի 1995 թվականի թիվ 218 որոշումը: Այդ ժամանակ Իտալիայում գործող օրենքի համաձայն՝ անձը չէր կարող միաժամանակ ստանալ և՛ հաշմանդամության, և՛ գործազրկության նպաստներ, ինչը նշանակում էր, որ եթե անձը միաժամանակ և՛ հաշմանդամ էր, և՛ գործազուրկ, նա կարող էր օգտվել միայն մեկ նպաստից: Դատարանը գործող կանոնը համարեց «իր բնույթով ակնհայտ անհիմն», քանի որ համակարգը չափազանց կոշտ էր և նախատեսում էր բացարձակ արգելք՝ առանց բացառությունների: Դատարանն ընդգծեց, որ եթե անձը

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 298-320:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 464-466:

գտնվում է երկու դժվարին սոցիալական իրավիճակներում, ապա նրան կարող է անհրաժեշտ լինել կրկնակի աջակցություն: Հետևաբար, այս դեպքում Սահմանադրությունը պահանջում էր միակ հնարավոր լուծումը (լատ.՝ rime obligate)՝ բացառություն ավելացնելը: Սահմանադրական դատարանը լրացուցիչ որոշում կայացրեց՝ փոփոխելով օրենքը և թույլատրելով վճարումների միաժամանակյա ստացումը բացառիկ իրավիճակներում[1]:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից՝ կարելի է արձանագրել, որ «անտեսանելի սահմանադրության» հայեցակարգը գործիքակազմ է՝ ուղղված սահմանադրական կարգը արժեքային առումով կենսունակ պահելու, պատմական անցումները լեգիտիմացնելու և օրենքի բացերը կառուցողականորեն լրացնելու համար՝ դրանով իսկ հանդիսանալով գրավոր տեքստի և տեքստից դուրս գտնվող արժեքների միջև անհրաժեշտ կամուրջ:

3. ՀՀ Անկախության հռչակագրի դերը պետականության և ժողովրդի ինքնիշխանության պահպանման համատեքստում

3.1 ՀՀ Անկախության հռչակագրի սահմանադրական նշանակությունը

1989 թվականի նոյեմբերին «Ղարաբաղ կոմիտեի» նախաձեռնությամբ հիմնադրված Հայոց համազգային շարժումը՝ որպես քաղաքական ուժ, նպատակ դրեց մասնակցելու 1990 թվականի մայիսի 20-ին կայանալիք ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններին: Այս ընտրություններում Հայոց համազգային շարժումը հաղթանակ տարավ Հայաստանի կոմունիստական կուսակցության նկատմամբ:

Ընտրությունների արդյունքում ձևավորված նոր իշխանությունները լծվեցին ազգային անկախ պետականության ստեղծման աշխատանքին: 1990 թվականի օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը երկարատև քննարկումներից հետո ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթուղթը՝ դրանով իսկ դնելով երկրի անկախացման գործընթացի հիմքը[2]:

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արթուր Ղամբարյանը իր՝ «Հայաստանի անկախության մասին հռչակագիրը. պետականապահպանության անանց երաշխիք» վերտառութամբ հոդվածում նշել է. *«Հայաստանի անկախության մասին հռչակագրի (այսուհետ՝ Անկախության հռչակագիր) իրավաբանական բնույթի վրա մեծապես ազդել են այն ընդունելու կարգը և հասարակական-քաղաքական պայմանները: Նախ՝ Անկախության հռչակագիրն ընդունվել է հայ ժողովրդի կենսագոյի*

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 457-481:

[1] Տե՛ս **Ղամբարյան Ա.,** Հայաստանի անկախության մասին հռչակագիրը. պետականապահպանության անանց երաշխիք: Բանբեր Արդարադատության ակադեմիայի, 2020, 2(4), ISSN 2579-2806, էջ 1:

հիմնական արժեքների ու կողմնորոշումների շուրջ հասարակական համաձայնության պայմաններում: Պատահական չէ, որ Հռչակագիրն ընդունվեց մեծ խանդավառությամբ: Երկրորդ՝ Անկախության հռչակագիրն ընդունել է բացառիկ լեգիտիմությամբ օժտված պառլամենտը՝ Գերագույն խորհուրդը, որի կազմում ազատ ընտրությունների արդյունքում ընդգրկվել էին Հայաստանի անկախության համար պայքարող Հայոց համազգային շարժումը: Մեծ հաշվով Գերագույն խորհրդի ընտրություններին ժողովուրդը փաստացի ձայն փվեց ոչ թե այս կամ այն քաղաքական ուժին կամ շարժմանը, այլ անկախացման գործընթացին (այն նյութականացնող ուժին): Պատահական չէ, որ նոր ձևավորված Գերագույն խորհուրդն առաջնահերթ ձեռնամուխ եղավ Անկախության հռչակագրի ընդունմանը: Հռչակագիրը վերջնական խմբագրումից հետո ընդունվել է 192 կողմ, 2 ձեռնպահ ձայներով»[1]:

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Հարությունյանը նույնպես անդրադարձել է Անկախության հռչակագրի նշանակությանը, մասնավորապես, նշելով. *«Այն հիմնարար, հետևողականորեն համակարգված, պատմափրամաբանական խոր ընդհանրացումներ բովանդակող, ազգային ինքնության առաջնահերթությունները հաշվի առնող, միջազգային սահմանադրաիրավական զարգացումների ընդհանուր փրամաբանությունից ելնող նորմերի ու սկզբունքների համակարգային ամբողջականություն է, որը, ինչպես նշել եմ, ՀՀ Սահմանադրության ընդունման 15-ամյակի առիթով, երբեք չի կորցնի իր թե՛ պատմական և թե՛ իրավական արժեբանական նշանակությունը: Այն առաջին հերթին հանդես եկավ որպես «Հայաստանի ժողովրդի միասնական կամքի» արտահայտություն»*[2]:

Կարելի է եզրակացնել, որ Սահմանադիր ուժի դոկտրինի տեսանկյունից Անկախության հռչակագիրը ձեռք է բերել բացառիկ նշանակություն և հանդես է գալիս ոչ միայն որպես քաղաքական ակտ, այլև որպես ժողովրդի բացարձակ ինքնիշխանության՝ pouvoir constituant սկզբունքի անմիջական դրսևորում: Այն լիովին համապատասխանում է սահմանադրական ուժի դասական ընկալմանը, որի համաձայն՝ ժողովուրդն ունի բացարձակ իրավասություն ստեղծելու, փոփոխելու կամ վերափոխելու պետական կարգը՝ գործող իրավակարգի շրջանակներից դուրս: Հռչակագրի ընդունման փաստն ինքնին արտահայտում է ժողովրդի՝ որպես ինքնավար քաղաքական սուբյեկտի՝ իր ինքնիշխան կամքը վերաակտիվացնելու կարողությունը, որը Ռուսոն նկարագրել է

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 1-2:

[1] Տե՛ս **Հարությունյան Գ.,** Հայաստանի անկախության մասին Հռչակագրի պետականագիտական դերը և նշանակությունը նորանկախ Հայաստանի իրավական համակարգի ձևավորման գործում: Զեկույց Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունման 20-ամյակին նվիրված ընդունելության առիթով, 23 օգոստոսի 2010թ., էջ 3:

որպես ժողովրդի բացառիկ ունակություն՝ վերականգնելու իր իշխանությունը, երբ պատմական անհրաժեշտությունը դա անխուսափելի է դարձնում:

Առանցքային նշանակություն ունի հետևյալ հարցը՝ Անկախության հռչակագիրը ՀՀ Սահմանադրության բաղկացուցիչ մասն է, թե ոչ, կամ Հռչակագրի դրույթներն ունեն արդյոք սահմանադրական արժեք, թե ոչ: 1995 թ. Սահմանադրության նախագծի հիմնական հեղինակ Վ. Նազարյանը նշում է.

«1995 թ. ՀՀ Սահմանադրության ներածությունը, վկայակոչելով Հայաստանի անկախության մասին հռչակագիրը՝ դրանով իսկ Հանրապետության Հիմնական օրենքի մակարդակի է բարձրացնում այդ հռչակագրում ամրագրված դրույթները, այդ թվում հայերի ցեղասպանության պաշտոնական ճանաչման, դատապարտման և դրա հետևանքների վերացման պահանջը»[1]:

Վ. Նազարյանը դիմել է իրավական ֆիկցիայի կիրառմանը՝ Հռչակագրի դրույթներն ընդունելով որպես սահմանադրական նորմերին համարժեք և դրանով իսկ բովանդակային առումով Հռչակագիրը բարձրացնելով Հիմնական օրենքի մակարդակին:

17.10.2000 թվականին Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի Քրեական և զինվորական գործերով պալատը, անդրադառնալով ՀՀ Սահմանադրության նախաբանին, նշել է.

«ՀՀ Սահմանադրության ընդունման փաստն ամրապնդող ներածության համաձայն, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հիմքում դրված են նաև Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները: Դրանով իսկ Հայաստանի անկախության մասին հռչակագիրը դարձել է ՀՀ Սահմանադրության բաղկացուցիչ մասը»[2]:

Անկախության հռչակագրի նախաբանին է անդրադարձ կատարել նաև ՀՀ Սահմանադրական դատարանը՝ իր ՍԴՈ-1590 որոշման համատեքստում, որի մասին կխոսվի հաջորդիվ:

3.2 ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1590 որոշումը և ՀՀ Սահմանադրության նախաբանը անփոփոխելի դրույթ սահմանելու հիմքերը

ՀՀ Սահմանադրության 203-րդ հոդվածը նվիրված է անփոփոխելի համարվող դրույթներին, համաձայն որի՝

[1] Տե՛ս **Ղամբարյան Ա.,** Հայաստանի անկախության մասին հռչակագիրը. պետականապահպանության անանց երաշխիք,: Բանբեր Արդարադատության ակադեմիայի, 2020, 2(4), ISSN 2579-2806, էջ 6:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 7:

«Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ և 203-րդ հոդվածները փոփոխման ենթակա չեն»[1]*:*

Սա նշանակում է, որ թվով և պարունակությամբ միայն այս հոդվածներն են տեքստուալ կերպով ամրագրված որպես անփոփոխելի դրույթներ, և Սահմանադրությունը որևէ այլ հոդված ուղղակիորեն, որպես փոփոխման ոչ ենթակա, չի նշում: Այս համատեքստում ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1590 որոշումը ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն, որում Դատարանն ընդլայնեց անփոփոխ դրույթների շրջանակը: Մասնավորապես, Սահմանադրական դատարանը նշել է.

«Սահմանադրության կայունությունը ժամանակակից սահմանադրական համակարգերի կարևորագույն հատկանիշներից է, որը նաև սահմանադրականության ամրապնդման ու զարգացման կարևոր գրավական է: Ընդ որում, Սահմանադրության կայունությունն ապահովվում է Սահմանադրության հիմքում ընկած հիմնարար սկզբունքների ու արժեքների անփոփոխությունն ապահովող նորմերի կայունությամբ՝ անկախ Սահմանադրության տեքստում փոփոխությունների կատարման հաճախականությունից»:

Սահմանադրության հիմքում ընկած հիմնարար սկզբունքների ու արժեքների արդյունավետ պահպանության և պաշտպանության նկատառումներով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անկախ Սահմանադրության տեքստի փոփոխությունների ծավալից, փոփոխության իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակից, զարգացող հասարակական հարաբերությունների պայմաններում Սահմանադրության՝ որպես հիմնարար կարգավորչի, դինամիկ կայունությունը հնարավոր է ապահովել դրա նորմերի աստիճանակարգության կանոնների պահպանմամբ:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում Սահմանադրությամբ ամրագրված դրույթներն ըստ դրանց ընդունող սուբյեկտների իրավասության դասակարգել հետևյալ խմբերի.

«ա) Սահմանադրության նախաբանը, 1-3-րդ և 203-րդ հոդվածները՝ որպես Սահմանադրության անփոփոխելի դրույթներ

(...)

Սահմանադրական դրույթների փոփոխման կարգերի տարբերակման նպատակներն են ապահովել Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրի՝ հայ ժողովրդի սահմանած անփոփոխ դրույթներում ամրագրված արժեքների և սկզբունքների գերակայությունը, Սահմանադրության ներքին կայունությունը,

[3] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (2015 թվականի խմբագրությամբ), հոդված 203:

Սահմանադրության դրույթների մեկնաբանությունների կանխատեսելիությունը, հնարավոր ներքին կոլիզիաների կանխումը, իսկ դրանց բացահայտման դեպքում՝ լուծումը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության անփոփոխելի դրույթներն այն հիմնարար և կենտրոնական առանցքն են, որի հիման վրա և շուրջ ձևավորվել և զարգանալու է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը»[1]*:*

Այս համատեքստում, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախաբանի անփոփոխելիությունը կարելի է բնութագրել հետևյալ կերպ: Նախաբանը, որպես անփոփոխ նորմ, ոչ միայն խորհրդանշում է հայ ժողովրդի սահմանադիր կամքը և նրա պատմական ինքնությունը, այլև ծառայում է որպես Հայաստանի Հանրապետության սահմանադրաիրավական կարգի սուբստանցիա և կենտրոնական առանցք: Անփոփոխելիության մասին դրույթը նախատեսված է սահմանադրական նորմերում ամրագրված արժեքների և սկզբունքների առաջնահերթությունն ապահովելու, ներքին կոլիզիաները կանխելու և սահմանադրական կարգի փոփոխման ընթացակարգերի շրջանակը նախատեսելու համար: Սահմանադրական դատարանը շեշտում է, որ անփոփոխ դրույթներն ապահովում են Սահմանադրության ներքին կայունությունը, դրա մեկնաբանության կանխատեսելիությունը և ծառայում են որպես իրավունքի գերակայության, պետական անկախության և իրավական կարգի հենարան: Այս իմաստով նախաբանի անփոփոխելիությունը ծառայում է ոչ միայն որպես իրավունքի բարձրագույն արժեքների ամրագրման գործիք, այլև որպես միջնորդ Սահմանադրության տեքստային և արժեքային տարրերի համակարգված պահպանման, զարգացման համար, ինչը համապատասխանում է Սահմանադրության հիմնարար նպատակին, այն է՝ հայ ժողովրդի ընդհանուր կամքի պահպանմանը՝ որպես Սահմանադիր ուժի առաջնային դրսևորում:

Այս մասին իրավացիորեն արձանագրել է Սահմանադրական դատարանի պաշտոնաթող դատավոր, փոխնախագահ Վահե Գրիգորյանը՝ նշելով, որ.

*«Սահմանադրության նախաբանը Սահմանադրության անփոփոխելի դրույթների դասին պատկանելու որոշման արձանագրումը, իմ խորին համոզմամբ, **առաջին հերթին** Սահմանադրական դատարանի՝ որպես սահմանադրական արդարադատության միջոցով Սահմանադրության գերակայությունն ապահովող ատյանի, հավատարմության*

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2021 թ. ապրիլի 29-ի ՍԴՈ-1590 որոշում:

հավաստիքն է Սահմանադրության ընդունմամբ դրա նախաբանում Հայ ժողովրդի իղձերի, նպատակների և արժեհամակարգի նկատմամբ»[1]:

Այսպիսով, ելնելով վերոնշյալից՝ կարելի է փաստել, որ Սահմանադիր ուժի դոկտրինի տեսանկյունից, ՀՀ Սահմանադրության նախաբանը որպես անփոփոխելի դրույթ ամրագրելը ժողովրդի բացառիկ ինքնիշխանության արտահայտությունն է, որը համարվում է իշխանության առաջնային, ինքնավար աղբյուր (pouvoir constituant): Ի տարբերություն մյուս սահմանադրաիրավական դրույթների, որոնք ենթակա են փոփոխության սահմանված ընթացակարգերի համաձայն՝ նախաբանը գործում է սահմանված իրավակարգից դուրս՝ արտացոլելով ժողովրդի ունակությունը ստեղծելու կամ վերափոխելու սահմանադրական կարգը ex nihilo, ինչը համապատասխանում է Սիեյսի և Շմիդտի՝ Սահմանադիր ուժի վերաբերյալ դասական ընկալմանը:

Միաժամանակ, ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1590 որոշումը ցույց է տալիս, որ նախաբանը նաև «անտեսանելի» սահմանադրական նորմի դեր ունի: Այս իմաստով նախաբանը պարունակում է միաժամանակ սահմանադրական հստակ նորմեր և Սահմանադրության տեքստից դուրս գտնվող այնպիսի համազգային տարրեր, ինչպիսիք են պատմական ինքնությունը, ժողովրդի քաղաքական կամքը և ինստիտուցիոնալ զարգացման ավանդույթները: Այդպիսով, նախաբանի անփոփոխելիությունը ոչ միայն պահպանում է ժողովրդի պատմական ինքնությունը և կոլեկտիվ կամքը, այլև ծառայում է որպես կապող օղակ՝ ապահովելով տեքստային նորմերի և թաքնված արժեքների միջև փոխհարաբերությունը:

3.3 ՀՀ Սահմանադրության նախաբանի մեկնաբանության հակասությունները ՍԴՈ-1590 և ՍԴՈ-1749 որոշումների միջև

Իր ՍԴՈ-1749 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանը կրկին անդրադարձել է Սահմանադրության նախաբանին՝ այն համարելով ժողովրդի սահմանադրական կամքի արտահայտման հիմնական տարր և պարզաբանել, որ փոփոխության չենթարկվող դրույթները մեկնաբանելիս անհրաժեշտ է կիրառել միայն մեկնաբանման «նեղ» մեթոդ՝ հիմնվելով Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքների և նպատակների վրա: Այսպես, Սահմանադրական դատարանն արձանագրել է.

«Անփոփոխ դրույթների մեկնաբանության մեթոդաբանությունն ընտրելիս Սահմանադրական դատարանը պարտավոր է ընդգծված զգուշավորություն դրսևորել այդ դրույթների մեկնաբանության համար՝ կիրառելով բացառապես «նեղ» մեկնաբանության մեթոդը խնդրո առարկա դրույթի որոշիչ իմաստային ուղղորդիչների,

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2021 թ. ապրիլի 29-ի ՍԴՈ-1590 որոշման վերաբերյալ ՍԴ դատավոր Վ. Գրիգորյանի հատուկ (համընկնող) կարծիքը:

մասնավորապես՝ «Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները» սահմանադրական դրույթում համապատասխան «սկզբունքների» և «նպատակների» ցանկի որոշակիացման իմաստով՝ հաշվի առնելով, որ «նեղ» մեկնաբանության (ի հակադրություն՝ «լայն» կամ «տարածական» մեկնաբանության) մեթոդի շրջանակից դուրս գալու հետևանքային ազդեցությունը հանգեցնում է Սահմանադրի ինքնիշխան իրավազորությունը սահմանափակող դրույթների բովանդակային շրջանակի (Սահմանադրության մեջ ուղղակիորեն ամրագրված շրջանակից դուրս) ընդլայնմամբ Սահմանադրի իրավազորության շրջանակի սահմանափակմանը՝ հակառակ Սահմանադրության 1-ին հոդվածի («Հայաստանի Հանրապետությունն (. . .) ժողովրդավարական (…) պետություն է») և 2-րդ հոդվածի 1-ին մասի («Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին»)[1]*:*

Նախաբանը, ըստ ՍԴՈ-1590 որոշման, որպես անփոփոխ դրույթ, արտահայտում է ժողովրդի հիմնադիր կամքը, նրա պատմական ինքնությունը և ծառայում է որպես Հայաստանի սահմանադրական և իրավական կարգի կենտրոնական առանցք, մինչդեռ ՍԴՈ-1749 որոշումը, սահմանափակելով անփոփոխելի դրույթների իմաստը «նեղ» մեկնաբանությամբ՝ բացառապես Սահմանադրության տեքստի հիման վրա, իրականում հակասում է ՍԴՈ-1590 որոշման ավելի լայն, արժեքային մոտեցմանը:

Ավելին, սույն որոշման համատեքստում Սահմանադրական դատարանը նշել է. *«Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ Սահմանադրության նախաբանում «հիմք ընդունելով Անկախության հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները» դրույթը չի վերաբերում որևէ սկզբունքի կամ նպատակի, որն ամրագրված չէ Սահմանադրությամբ»* [2]:

Այս համատեքստում «անտեսանելի սահմանադրության» հայեցակարգի տարբերակված դոկտրինալ երկու մոտեցումները հստակ արտահայտվում են ՍԴՈ-1590 և ՍԴՈ-1749 որոշումներում:

Այսպես, ՍԴՈ-1590 որոշմամբ Սահմանադրական դատարանը փաստացի որդեգրել է «անտեսանելի սահմանադրության» հայեցակարգի առաջին մոտեցումը, որի համաձայն՝ սահմանադրական կարգի բովանդակությունը չի սահմանափակվում միայն Սահմանադրության տեքստում ուղղակիորեն ամրագրված նորմերով: Դատարանը

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2024 թ. սեպտեմբերի 26-ի ՍԴՈ-1746 որոշում , էջ 15:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 27:

նախաբանը ճանաչում է որպես անփոփոխ դրույթ, որն արտահայտում է ժողովրդի սահմանադիր կամքը, նրա պատմական ինքնությունը և պետականության ստեղծման հիմնարար արժեքները: Այդպիսով, ՍԴՈ-1590 որոշումն ընդունում է այնպիսի արժեքների գոյությունը, որոնք, թեև ամբողջությամբ չեն ձևակերպված Սահմանադրության տեքստում և որոշակիորեն գտնվում են Սահմանադրության տեքստից դուրս, այնուամենայնիվ կազմում են դրա իմաստային և արժեքային հիմքը: Սա հենց «անտեսանելի սահմանադրության» առաջին մոտեցման էությունն է՝ հիմնական փաստաթուղթը դիտարկել որպես տեքստի և սահմանադիր կամքի, պատմական հիշողության ու հիմնարար արժեքների ամբողջություն:

Ի հակադրություն այս մոտեցման՝ ՍԴՈ-1749 որոշմամբ Սահմանադրական դատարանը որդեգրում է «անտեսանելի սահմանադրության» հայեցակարգի երկրորդ մոտեցումը, համաձայն որի՝ մեկնաբանման գործընթացն անխուսափելիորեն ձևավորվում է այն սոցիալական, քաղաքական և պատմական շրջանակներում, որում գործում է սահմանադրությունը: Թեև դատարանը շարունակում է նախաբանը համարել անփոփոխելի և բնութագրել որպես ժողովրդի՝ սահմանադիր կամքի արտահայտման տարր, այնուամենայնիվ սահմանում է դրա մեկնաբանության խիստ սահմաններ՝ կիրառելով բացառապես «նեղ» մեկնաբանության մեթոդը և դրանով իսկ այն մեկնաբանել գործող Սահմանադրության տեքստուալ ամրագրված իրավանորմերի համատեքստում: Դատարանն էքսպլիցիտ շեշտում է, որ նախաբանի այնպիսի սկզբունքներ կամ նպատակներ չեն կարող կիրառվել սահմանադրական մեկնաբանության մեջ, որոնք ուղղակիորեն ամրագրված չեն Սահմանադրության տեքստում: Այս դիրքորոշումը էականորեն նվազեցնում է նախաբանի դերակատարությունը և սահմանադրական կարգի «անտեսանելի» բաղադրիչները ենթարկում է տեքստուալ վերահսկողության:

Հետևաբար, հավասարապես գործող ՍԴՈ-1590 և ՍԴՈ-1749 որոշումների միջև առաջանում է հակասություն: Առաջին որոշումը նախաբանը ճանաչում է որպես անփոփոխ և ինքնավար նորմ, որն արտացոլում է ժողովրդի կամքը և ապահովում Սահմանադրության կայունությունը, մինչդեռ երկրորդ որոշումը սահմանափակում է դրա իմաստը տեքստուալ մեկնաբանությունների սահմաններում:

Եզրակացություն

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ կամքն իրավունքի ներքին շարժիչ ուժն է: Հեգելյան ուսմունքում այն հանդես է գալիս որպես ազատության կոնկրետ իրացում՝ համընդհանրության, յուրահատկության և եզակիության համադրմամբ,

Քելզենի մոտ՝ որպես նորմի և գործողության միջև կապող իրավական մեխանիզմ, իսկ Ռուսոյի ուսմունքում կամքը վերածվում է կոլեկտիվ, բանական և ինքնիշխան ընդհանուր կամքի, որն ապահովում է իրավական և քաղաքական լեգիտիմությունը:

Սահմանադիր ուժի դոկտրինի վերլուծությունը ցույց տվեց, որ այն բնութագրվում է որպես ժողովրդի նախասահմանադրական, ինքնավար և բացարձակ իշխանություն, որը գործում է գործող իրավակարգից դուրս և կարող է սահմանել կամ վերափոխել սահմանադրական կարգը **ex nihilo**: Այս համատեքստում հիմնավորվեց, որ սահմանադրի կամքը Սահմանադիր ուժի ներքին շարժիչ տարրն է, առանց որի Սահմանադիր ուժը չի կարող դրսևորվել որպես պետականաստեղծ գործընթաց:

«Անտեսանելի սահմանադրության» հայեցակարգի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ սահմանադրաիրավական կարգը ներառում է ոչ միայն Սահմանադրության գրավոր տեքստը, այլև տեքստից դուրս գտնվող արժեքային, պատմական և ինստիտուցիոնալ արժեքները, որոնք դատարանների մեկնաբանության միջոցով վերածվում են գործող սահմանադրական նորմերի: «Անտեսանելի սահմանադրության» հայեցակարգը հանդիսանում է սահմանադրական կայունության, արժեքային շարունակականության և օրենսդրական բացերի լրացման կարևոր գործիք:

Հետազոտությամբ հիմնավորվում է, որ Հայաստանի Անկախության հռչակագիրը Սահմանադիր ուժի դասական դրսևորում է և արտահայտում է հայ ժողովրդի ինքնիշխան կամքը: Այն հանդես է գալիս ոչ միայն որպես պատմաիրավաքաղաքական փաստաթուղթ, այլև որպես սահմանադրական արժեքային հիմք՝ ամրագրվելով նաև ՀՀ Սահմանադրության նախաբանում: Այս համատեքստում էական նշանակություն են ձեռք բերում ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1590 և ՍԴՈ-1749 որոշումները: Այդ որոշումների համեմատությունը թույլ է տալիս վեր հանել ոչ միայն Սահմանադրական դատարանի մոտեցումների տարբերությունները, այլև բացահայտել սահմանադրական մեկնաբանությունների երկու մրցակցող մոտեցումները: ՍԴՈ-1590 որոշումն արտացոլում է առաջին սահմանադրի կամքի ըմբռնման համապարփակ մոտեցումը՝ նախաբանի անփոփոխելիության հիմքում դնելով պատմաիրավաքաղաքական իրողությունները և հաշվի առնելով Անկախության հռչակագրի դերը սահմանադրական կարգի ձևավորման և պետականապահպանության գործում: Այս որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ սահմանադրի կամքը չի սահմանափակվում միայն տեքստի ընդունմամբ, այլ շարունակում է արտահայտվել Սահմանադրության համակարգային մեկնաբանության միջոցով՝ արտացոլելով դրա արժեքային ուղեցույցներն ու նպատակները: Ի հակադրություն այս մոտեցման՝ ՍԴՈ-1749 որոշումը զգալիորեն սահմանափակում է առաջին սահմանադրի կամքի

արտահայտման շրջանակները՝ նախաբանը ներկայացնելով լոկ Սահմանադրության տեքստում ամրագրված նորմ-սկզբունքների և նորմ-նպատակների լույսի ներքո՝ դրանով իսկ անտեսելով պատմաիրավաքաղաքական համատեքստը, քաղաքական դինամիկան և հռչակագրի պետականապահպան նշանակությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն, 22.12.2015 թ. ուժի մեջ մտած խմբագրությամբ:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2021 թ. ապրիլի 29-ի ՍԴՈ-1590 որոշում:
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2024 թ. սեպտեմբերի 26-ի ՍԴՈ-1746 որոշում:
4. **Մալխասեանց Ստ.** Հայերէն բացատրական բառարան (չորս հատորով): Երևան, Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչութիւն, 1944-1945:
5. **Ճէրէճեան Գնէլ արքեպիսկոպոս, Տօնիկեան Փարամազ Կ., Տէր Խաչատուրեան Արտաշէս**, Հայոց լեզուի նոր բառարան (երկու հատորով): Պէյրութ, Հրատարակութիւն Կ. Տօնիկեան եւ Որդիք, 1992:
6. **Աղայան Է.Բ.** Արդի հայերենի բացատրական բառարան: Հատոր 2 (Գ-Ֆ), Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1976:
7. **Մանասյան Ա.** Սահմանադրական դատարանի որոշումների տեղը ՀՀ իրավական համակարգում և դրանց դերը Սահմանադրության կայունության ապահովման գործում: ԵՊՀ հրատարակչություն, 2013:
8. **Ղամբարյան Ա.** Հայաստանի անկախության մասին հռչակագիրը. պետականապահպանության անանց երաշխիք: Բանբեր Արդարադատության ակադեմիայի, 2020, 2(4), ISSN 2579-2806:
9. **Հարությունյան Գ.** Հայաստանի անկախության մասին Հռչակագրի պետականագիտական դերը և նշանակությունը նորանկախ Հայաստանի իրավական համակարգի ձևավորման գործում: Ձեկույց Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունման 20-ամյակին նվիրված ընդունելության առիթով, 23 օգոստոսի 2010 թ.:
10. **Воронко О.** Учение Гегеля о государстве и праве. - Москва, 2020 год.
11. **Нерсесянц В. С.** Философия права Гегеля. - Москва, 1998, ISBN: 5-7975-0107-4.

12. **Гройсберг А.** Понятие "общей воли" в политическом учении Ж.-Ж. Руссо. // Грамота, 2011. № 5 (11): в 4-х ч. Ч. II. - С. 72-75. ISSN 1997-292X.

13. **Безруков А.В.** Роль Конституционного Суда России в обеспечении конституционного правопорядка // Российское право: Образование, практика, наука, 2017.

14. **Reut Y.P.** Kelsen's Pure Theory of Law as "a Hole in Time". In Monde(s) 2015/1 N° 7, pages 75 to 94. Publisher: Presses universitaires de Rennes. ISSN 2261-6268, ISBN 9782753540484, DOI 10.3917/mond1.151.0075.

15. **McMahon Christopher**, Rousseau's General Will and the Will of All: A Present-Day Perspective. 28 March 2025.

16. **Colon-Rios J.** Constituent Power and the Law. Oxford University Press, 26 March 2020, ISBN: 9780198785989.

17. **Colon-Rios J.** Five Conceptions of Constituent Power. Volume 7, Issue No. 31, 2017.

18. **Raffael N. Fasel**. Constraining Constituent Conventions: Emmanuel Joseph Sieyès and the Limits of Pouvoir Constituant. International Journal of Constitutional Law, Volume 20, Issue 3, July 2022, https://doi.org/10.1093/icon/moac073 Oxford University Press, 2022.

19. **Rosalind Dixon, Adrienne Stone**. The Invisible Constitution in Comparative Perspective. Cambridge University Press, 2018, DOI: 10.1017/9781108277914.

РАЗВИТИЕ ВОЛИ УЧРЕДИТЕЛЯ В КОНТЕКСТЕ ПОСТАНОВЛЕНИЙ КОНСТИТУЦИОННОГО СУДА ОТНОСИТЕЛЬНО ДЕКЛАРАЦИИ О НЕЗАВИСИМОСТИ

Аннотация

Предметом настоящего исследования является анализ доктринальных основ учредительной воли и учредительной власти, их историко-философского развития и проявления в современной системе конституционного права. Цель исследования заключается в изучении философских интерпретаций понятия "воля", раскрытии содержания и эволюции понятия "учредительная власть", описании концепции "невидимой конституции" и ее практического применения, а также в анализе Постановлений Конституционного Суда Республики Армения ПКС-1590 и ПКС-1749, касающихся Декларации о независимости Армении, их значения и различий в толковании.

В статье рассматриваются доктринальные подходы Гегеля, Кельзена и Руссо, подчеркивающие, что воля выступает смысловой, структурной и легитимирующей основой права. Развитие учредительной власти представлено в контексте теорий Сийеса, Руссо и

Шмитта как проявление досуверенной и суверенной способности народа. В сжатом виде анализируется роль Конституционного Суда в обеспечении защиты конституционных ценностей, включая обращение к концепции “невидимой конституции” и ее практическому применению.

Особое внимание уделяется конституционному значению Декларации о независимости Армении и преамбулы Конституции Республики Армения в контексте сравнительного анализа Постановлений Конституционного Суда Республики Армения ПКС-1590 и ПКС-1749. Делается вывод о том, что Постановление ПКС-1590 отражает целостное, ценностно ориентированное понимание воли армянского народа как первого учредителя, тогда как Постановление ПКС-1749 ограничивает поле ее интерпретации, приводя к сужению понимания учредительной воли.

Ключевые слова: воля, общая воля, учредительная власть, установленная власть, учредительная воля, концепция “Невидимой конституции”, Декларация о независимости, охрана государственной целостности, конституционный правопорядок, непременное положение.

THE DEVELOPMENT OF THE CONSTITUENT’S WILL IN THE CONTEXT OF THE CONSTITUTIONAL COURT’S DECISIONS ON THE DECLARATION OF INDEPENDENCE

Annotation

The subject of this research is the analysis of the doctrinal foundations of constituent will and constituent power, their historical-philosophical development, and their manifestation within the contemporary constitutional law system. The aim of the study is to examine philosophical interpretations of the concept of “will,” to explicate the notion and evolutionary development of “constituent power,” to describe the concept of the “invisible constitution” and its practical application, as well as to analyze the decisions of the Constitutional Court of the Republic of Armenia DCC-1590 and DCC-1749 concerning the Declaration of Independence of Armenia, their significance, and differences in interpretation.

The article explores the doctrinal approaches of Hegel, Kelsen, and Rousseau, emphasizing that will functions as the semantic, structural, and legitimizing foundation of law. The development of constituent power is presented within the theoretical frameworks of Sieyès, Rousseau, and Schmitt, as an expression of the pre-constitutional and sovereign capacity of the people. The role of the constitutional court in safeguarding constitutional values is briefly analyzed, with particular reference to the concept of the “invisible constitution” and its practical implementation.

Special attention is given to the constitutional significance of the Declaration of Independence of Armenia and the Preamble of the Constitution of the Republic of Armenia, within the context of a comparative analysis of the Constitutional Court's decisions DCC-1590 and DCC- 1749. It is concluded that decision DCC-1590 reflects a comprehensive, value-oriented understanding of the will of the Armenian people as the original constituent power, whereas decision DCC-1749 restricts the scope of its interpretation, resulting in a narrowing of the constituent will.

Keywords: will, general will, constituent power, constituted authority, constituent will, concept of the "Invisible Constitution," Declaration of Independence, state preservation, constitutional legal order, immutable provision.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 17.02.2026 թ., փրվել է գրախոսության 23.02.2026 թ., ընդունվել է տպագրության 01.03.2026 թ.:

DOI: 10.59560/18291155-2026.1-265

ԱՆԻ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի իրավաբանական վարչության պայմանագրային բաժնի իրավաբան, գլխավոր մասնագետ, իրավագիտության մագիստրոս

ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՊԱՐՏԱՊԱՆԻ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՎ ԱՎԱՐՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՎՃԻՌՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Ամփոփագիր

Պարտավորությունների կատարումն այս կամ այն եղանակով ապահովելը եղել և շարունակում է տարածված և կիրառելի մնալ Հայաստանում: Վերջին շրջանում մեծ ծավալների են հասնում նաև ֆիզիկական անձանց սնանկության դեպքերը, որոնք՝ կախված դրանց ելքից, գործնական և իրավական բազմաթիվ հարցեր են առաջացնում: Սույն հոդվածում հեղինակն անդրադարձել է քաղաքացիաիրավական հարաբերություններում հաճախ հանդիպող մի երևույթի, երբ բանկի հանդեպ իր պարտավորության կատարումը երաշխավորությամբ ապահոված ֆիզիկական անձ վարկառուի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռ է կայացվում, որն ուժի մեջ մտնելուց հետո առաջ է գալիս երաշխավորության դադարեցման հարց:

Հոդվածում եզրահանգում է արվում, որ առկա է օրենսդրական բաց. ոլորտը կարգավորող օրենսդրությունը հստակ չի կարգավորում այն հարցը, թե վերը նկարագրված իրավիճակում երաշխավորությունը համարվելո՞ւ է դադարած, թե՞ բանկերը հիմնական պարտավորության կատարումը երաշխավորից պահանջելու իրավունք, այնուամենայնիվ, պետք է ունենան: Հեղինակի համոզմամբ՝ նշված իրավիճակում երաշխավորության պարտավորությունը չպետք է դադարեցվի: Փաստ է, որ առկա օրենսդրական բացը հակասական պրակտիկայի ձևավորման է հանգեցրել՝ իրավական անորոշ դաշտ ստեղծելով:

Հիմնաբառեր. երաշխավորություն, սնանկություն, սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռ, օրենսդրական բաց:

Հիմնական վերլուծություն

Սույն գիտական հոդվածում անդրադարձ ենք կատարել քաղաքացիաիրավական հարաբերություններում հաճախ հանդիպող մի երևույթի, երբ բանկի հանդեպ իր պարտավորության կատարումը երաշխավորությամբ ապահովված ֆիզիկական անձ վարկառուի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռ է կայացվում, որն ուժի մեջ մտնելուց հետո առաջ է գալիս երաշխավորության դադարեցման հարց:

Սույն գիտական աշխատանքի հիփոթեզն այն է, որ առկա է օրենսդրական բաց. ոլորտը կարգավորող օրենսդրությունը հստակ չի կարգավորում այն հարցը, թե վերը նկարագրված իրավիճակում երաշխավորությունը համարվելո՞ւ է դադարած, թե՞ բանկերը հիմնական պարտավորության կատարումը երաշխավորից պահանջելու իրավունք, այնուամենայնիվ, պետք է ունենան: ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ֆիզիկական անձ վարկառուի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում վարկառուի պարտավորությունների գծով առկա երաշխավորության դադարման հարցը ՀՀ դատական համակարգում այդ ինստիտուտի իմաստը խեղաթյուրող մեկնաբանություն է ստացել: Առկա է ռիսկ, որ հոդվածի հեղինակի համար անընդունելի այդ մոտեցումը կարող է տարածում գտնել ՀՀ իրավակիրառ պրակտիկայում, ինչը որևէ կերպ կանխելուն է ուղղված սույն գիտական աշխատանքը: Այսպես.

Առավել խորքային կերպով պատկերացնելու համար սույն հոդվածով վեր հանված խնդիրը՝ կարևոր ենք համարում նախ հակիրճ անդրադառնալ «Սնանկության մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) սահմանված՝ սնանկության գործընթացի հիմնական ու ամենաէական փուլերին և դրանցով վրա հասնող հետևանքներին: Մասնավորապես.

- *Մորատորիում*. երբ սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից սառեցվում է պարտատերերի պահանջների բավարարման գործընթացը: Մորատորիումի նպատակն է թույլ չտալ պարտապանի գույքի նվազեցում[1]: Այն չի տարածվում, օրինակ՝ ալիմենտների բռնագանձման, ապահովված իրավունք ունեցող պարտատիրոջ ապահովված իրավունքի առարկայի, ի ապահովումն սնանկության գործընթացում գտնվող պարտապանի պարտավորությունների կատարման՝ երաշխիք կամ երաշխավորություն տված անձանց կողմից այդ երաշխիքի կամ երաշխավորության գծով դրամական կամ այլ բավարարում տալու կամ դրա կատարմանն ուղղված ցանկացած գործողության կամ գործընթացի վրա:

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թ. թիվ ԵԿԴ/0469/02/14 գործով կայացված որոշումը:

- *Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռ*. դադարում է պարտապանի վճարային, ներառյալ՝ հարկերի, տուրքերի այլ վճարների գծով պարտավորությունների նկատմամբ տոկոսների հաշվարկումը, կարճվում է պարտապանի վերաբերյալ գույքային բռնագանձումներով կամ ոչ գույքային բնույթ ունեցող ցանկացած կատարողական վարույթ (...), վերանում են պարտապանի գույքի վրա դրված արգելանքներն ու սահմանափակումները և այլն.
- *Ֆինանսական առողջացում (երբ առկա է պարտապանին պատկանող բռնագանձման ենթակա գույք)*. անձի ֆինանսական առողջացումը նրան սնանկ ճանաչելու առաջնային նպատակն է: Պարտապանի ֆինանսական առողջացումը սնանկության վարույթի առանցքային տարրերից է, որը պայմանավորված է սնանկության վարույթի առանձնահատկությամբ, այն է՝ հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին հաղթահարել ֆինանսական դժվարությունները, վերականգնել իր բնականոն գործունեությունը՝ միևնույն ժամանակ ապահովելով պարտատերերի շահերի պաշտպանությունը[1]:
- *Սնանկության վերաբերյալ գործի ավարտ*. երբ պարտապանը չունի որևէ գույք կամ պարտապանի գույքի վրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չի կարող բռնագանձում տարածվել, պարտապանի գույքը հայտնաբերել հնարավոր չէ, պարտապանի գույքն այնքան փոքրարժեք է, որ ողջամիտ չէ սնանկության հետագա ընթացակարգերի իրականացումը, կամ երբ պարտապանի գույքի հայտնաբերման կամ ակտիվների հավաքման ուղղությամբ իրականացվելիք ծախսերը չեն արդարացնում սնանկության հետագա ընթացակարգերի իրականացումը:
- *Ֆիզիկական անձի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռ*. կայացվում է ֆիզիկական անձի սնանկության վերաբերյալ գործի ավարտից հետո, երբ առկա չէ անձին պատկանող բռնագանձման ենթակա գույք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) և «Սնանկության մասին» օրենքի ընդհանուր ուսումնասիրությունը թույլ է տալիս վստահաբար պնդել, որ ֆիզիկական անձ վարկառուի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում վարկառուի պարտավորությունների գծով առկա երաշխավորությունը դադարելու հարցը հստակ

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թ. թիվ ԱՐԱԴ/0043/04/13 սնանկության գործով կայացված որոշումը:

կարգավորված չէ, որպիսի հանգամանքը հնարավորություն է տալիս իրավակիրառ պրակտիկայում այդ հարցին երաշխավորության բուն էությանը խաթարող հանգուցալուծում տալ:

Հարցի առնչությամբ ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքները հանգում են հետևյալին:

Թիվ ԵԿԴ/2677/02/15 քաղաքացիական գործով 16.04.2019 թվականին կայացված որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը գտել է, որ ««Սնանկության մասին» ՀՀ օրենքի 97-րդ հոդվածի ուժով պարտապանին պարտատիրոջ հանդեպ պարտավորության կատարումից ազատելն անվերապահորեն հանգեցնում է պարտապանի և պարտատիրոջ միջև առկա պարտավորության դադարման: Երաշխավորության, որպես պարտավորության պատշաճ կատարումը ապահովող բնույթը արտահայտվում է նրանում, որ պարտատիրոջ և երաշխավորի միջև ձևավորվում է հիմնական (գլխավոր) պարտավորության նկատմամբ լրացուցիչ (ակցեսոր) պարտավորություն, որի ուժով հիմնական պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտատերը հնարավորություն է ստանում իր պահանջները ներկայացնելու երաշխավորին: Ընդ որում, երաշխավորության լրացուցիչ (ակցեսոր) բնույթը դրսևորվում է նրանով, որ այն չի կարող գոյատևել առանց հիմնական (գլխավոր) պարտավորության, ի տարբերություն, օրինակ՝ երաշխիքի: Հետևաբար, պարտապանին ազատելով պարտավորությունների կատարումից, այդ թվում՝ և վարկային, որպես հետևանք դադարել է նաև պարտապանի վարկային պարտավորությունը Բանկի հանդեպ՝ որպես հիմնական պարտավորություն, որպիսի պայմաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածի ուժով դադարել է նաև երաշխավորությունը՝ որպես լրացուցիչ (ակցեսոր) պարտավորություն: Ուստի նման պայմաններում Ա.Մ.-ն պարտապանի և Բանկի միջև վարկային պարտավորությունը դադարած լինելու պայմաններում չի կարող հանդիսանալ որպես երաշխավորություն ստանձնած երաշխավոր»:

Պարտապանի պարտավորությունների դադարման հիմքով դադարում են նաև երաշխավորի պարտավորությունները. այս միտքն է ընկած թիվ ԵԴ/19359/02/21 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.09.2022թ. կայացված որոշման հիմքում:

Ըստ էության, նույն տրամաբանությունն է ընկած նաև ՎԴ/1788/05/22 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 14.09.2023 թ. կայացված որոշման հիմքում, որում Վերաքննիչ դատարանի արտահայտած դիրքորոշման համաձայն՝ ի թիվս այլնի, պարտապան իրավաբանական անձի լուծարմամբ դադարում է և՛ իր ստանձնած

պարտավորությունը, և՛ որպես այդ պարտավորության կատարման ապահովում տրված երաշխավորության պարտավորությունը: Նույն հիմնավորումն է ընկած ՀՀ վարչական դատարանի 09.10.2025 թ. թիվ ՎԴ2/0297/05/24 վարչական գործով կայացված վճռի հիմքում: Այսինքն՝ հիմնական պարտավորության դադարման հիմքը (այն, թե պարտավորությունը կատարմա՞մբ է դադարել, թե՞ այլ հիմքով) կրկին որևէ կերպ չի կարևորվել: Ընդ որում, նշված գործերով դատարանները ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը պարտավորեցրել են կարճել երաշխավորի նկատմամբ հարուցված կատարողական վարույթները:

Դատական առնվազն նշված օրինակներն արդեն իսկ վկայում են սույն հոդվածով բարձրացված հարցի՝ ոչ միանշանակ ընկալման և հարցի առնչությամբ առկա օրենսդրական կարգավորումների, մեր գնահատմամբ, ոչ իրավաչափ մեկնաբանության և կիրառման մասին:

Առաջին հերթին մեր սկզբունքային անհամաձայնությունն ենք հայտնում ՀՀ դատարանների կողմից տրված այնպիսի մեկնաբանության հետ, ըստ որի՝ ֆիզիկական անձ վարկառուի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու փաստը բավարար է հիմնական պարտավորությունն այդ հիմքով դադարած համարելու համար: *Նման վճռով ընդամենը հիմնական պարտապանն է ազատվում պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորությունից, մինչդեռ այդ պարտավորությունը շարունակում է գոյություն ունենալ:* Հետևաբար՝ իրավաչափ չի կարող համարվել նաև այդ հիմքով որպես հիմնական պարտավորության ապահովման միջոց տրված երաշխավորության պարտավորությունը դադարեցնելը: Նկատենք, որ այս մոտեցումն ու հիմնավորումն է ընկած ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/0524/02/25 գործով 28.11.2025 թվականին կայացված որոշման հիմքում:

Ինչպես իրավաչափորեն նկատել է Գերարդ Գլեննը՝ սնանկ ճանաչված պարտապանին իր պարտավորությունների կատարումից ազատելը վերջինի համար *անձնական պաշտպանության միջոց է*[1]: Հետևաբար՝ այն հետևանքներ կարող է առաջացնել միայն պարտապանի համար և որևէ կերպ չի կարող ազդել հիմնական պարտավորության իրավական կարգավիճակի վրա:

[1] **Garrard Glenn,** The surety's right to indemnity-effect of principal's bankruptcy. The Yale Law Journal, Apr., 1922, Vol. 31, No. 6 (Apr., 1922), pp. 591. Published by: The Yale Law Journal Company, Inc. Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.jstor.org/stable/pdf/788526.pdf?refreqid=fastly-default%3Ac2b84997ace0acdbbad93d8ed822f7f4&ab_segments=0%2Fspellcheck_basic_search%2Ftest&initiator=&acceptTC=1 (մուտք 09.01.2026 թ.):

Հարցի առնչությամբ ՀՀ բանկերին ուղղված հարցումների պատասխանների ընդհանուր ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ որոշ բանկեր ֆիզիկական անձ վարկառուի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո վարկառուի պարտավորությունների գծով առկա երաշխավորությունը դադարեցնում են, ինչը, կարծում ենք, չի բխում երաշխավորության՝ որպես պարտավորության ապահովման միջոցի բուն էությունից:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված են պարտավորությունների կատարման ապահովման բազմաթիվ միջոցներ, որոնցից թերևս ամենատարածվածը երաշխավորությունն է: Երաշխավորության պայմանագրով երաշխավորն այլ անձի պարտատիրոջ առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել անձի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարկային կամ փոխառության պայմանագրով, որով որպես վարկատու կամ փոխատու է հանդես գալիս բանկը կամ վարկային կազմակերպությունը, պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարվելու կամ անպատշաճ կատարվելու դեպքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ երաշխավորը պարտատիրոջ առջև կրում է սուբսիդիար պատասխանատվություն, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով[1] նախատեսված դեպքերի:

ՀՀ վճռաբեկ դատարանի 18.11.2022 թվականի թիվ ԵԴ/12618/02/19 գործով կայացված որոշմամբ արտահայտված դիրքորոշման համաձայն՝ երաշխավորությամբ մի կողմը՝ երաշխավորողը, մյուս կողմի՝ հիմնական պարտավորության պարտատիրոջ հանդեպ ստանձնում է պարտավորություն, որի բովանդակությունն է կազմում երրորդ անձի կողմից հիմնական պարտավորությամբ պարտատիրոջ հանդեպ ստանձնած պարտավորության ոչ պատշաճ կատարման դեպքում պարտատիրոջը տոկոսներ վճարելը, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը և հիմնական պայմանագրով պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած պարտատիրոջ այլ վնասները հատուցելը, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով[2]:

[1] Սույն մասով նախատեսված են պարտատիրոջ առջև երաշխավորի համապարտ պատասխանատվություն կրելու դեպքերը, որոնք, սակայն, չեն առնչվում սույն հոդվածի առարկային, ուստի դրանց անդրադարձ չի կատարվում:

[2] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 18.11.2022 թ. թիվ ԵԴ/12618/02/19 գործով կայացված որոշումը:

Քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածով սահմանված են երաշխավորությունը դադարելու հիմքերը: Մասնավորապես, երաշխավորությունը դադարում է՝

1) դրանով ապահովված պարտավորությունը դադարելու դեպքում, ինչպես նաև առանց երաշխավորի գրավոր համաձայնության պարտավորությունը փոփոխելու դեպքում՝ միայն փոփոխված մասով, որը հանգեցրել է նրա պատասխանատվության մեծացմանը կամ նրա համար այլ անբարենպաստ հետևանքների:

2) երաշխավորությամբ ապահովված պարտավորությամբ պարտքն այլ անձի փոխանցելով, եթե երաշխավորը պարտատիրոջը համաձայնություն չի տվել պատասխանատվություն կրել նոր պարտապանի համար.

3) եթե պարտատերը հրաժարվել է ընդունել պարտապանի կամ երաշխավորի առաջարկած պատշաճ կատարումը.

4) երաշխավորության պայմանագրում նշված ժամկետի ավարտով, որով այն տրվել է:

Պարտապանի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելուն առնչվող հարաբերությունները կարգավորվում են «Սնանկության մասին» օրենքի 97-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն՝ ֆիզիկական անձի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո սնանկ ճանաչված ֆիզիկական անձն ազատվում է բոլոր դրամական պարտավորությունների կատարումից, բացառությամբ՝

ա) սույն օրենքի 90-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված պարտավորությունների.

բ) սնանկության դիմում ներկայացնելուն նախորդած 90 օրվա ընթացքում ստանձնած և 100.000 դրամը գերազանցող պարտավորությունների.

գ) ուսման վարկավորման գումարը վերադարձնելու պարտավորության.

դ) պարտատերերի պահանջներից սնանկության վարույթի ընթացքում գույք թաքցրած լինելու դեպքում՝ թաքցված գույքի արժեքի չափով:

Օրենսդիրը, փաստորեն, չի անդրադարձել ֆիզիկական անձի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո երաշխավորության պարտավորությունների իրավական ճակատագրին: Թեև Օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ պարտապանի սնանկության գործընթացը չի ազդում ի ապահովումն պարտապանի պարտավորությունների կատարման երաշխիք կամ երաշխավորություն տված անձի՝ երաշխիքով կամ երաշխավորությամբ ստանձնած պարտավորությունների կատարման

վրա, սակայն պետք է նկատի ունենալ, որ այս կարգավորումն Օրենքով սահմանված է որպես մորատորիումի գործողության տարածման բացառություն: Այսինքն՝ այն չի տարածվում ֆիզիկական անձի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռ կայացվելու դեպքերի վրա:

Համեմատության համար կարևոր ենք համարում անդրադառնալ նաև Օրենքի 43-րդ հոդվածին, որի 3-րդ մասի համաձայն՝ երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պարտատիրոջ պահանջները, այդ թվում՝ ապահովված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պայմանագրով սահմանված ***տուժանքները, տուգանքները և վճարման ենթակա տոկոսները*** կարող են բավարարվել երաշխիք կամ երաշխավորություն տված անձի միջոցների հաշվին: Նշվածը թեև ուղիղ կերպով չի առնչվում սույն հոդվածի առարկան կազմող իրավահարաբերությանը, սակայն այստեղ էլ, ըստ էության, Օրենսդիրը կարծես նախանշել է այն շրջանակը, որի սահմաններում հնարավոր է սնանկության վարույթի կոնկրետ փուլում երաշխավորի առջև որևէ պահանջ ներկայացնել. այն է՝ երաշխավորություն տված անձի միջոցների հաշվին կարող են բավարարվել միայն պայմանագրով սահմանված տուժանքները, տուգանքները և վճարման ենթակա տոկոսները:

Գտնում ենք, որ ի ապահովումն պարտապանի պարտավորությունների կատարման՝ երաշխավորություն տված անձի՝ երաշխավորությամբ ստանձնած պարտավորությունների կատարման վրա չպետք է ազդի նաև պարտապանի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռ կայացվելու հանգամանքը՝ հետևյալ հիմնավորմամբ.

Երբ ֆիզիկական անձի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռ է կայացվում, այդ դեպքում ֆիզիկական անձի առկա պարտավորությունները դադարում են՝ պայմանավորված միայն հենց տվյալ ֆիզիկական անձի՝ որպես պարտապանի անձով (սնանկ ճանաչվելուն հանգեցրած ֆինանսական դրությամբ): Երաշխավորության՝ որպես պարտավորությունների կատարման ապահովման միջոցի էությունը հենց այն է, որ այն սկսի գործել, այլ կերպ ասած՝ երաշխավորը սկսի փաստացի կրել իր կողմից ստանձնած պարտավորություններն այն դեպքում, երբ պարտապանն ինքն այլևս ի վիճակի չլինի դրանք կրել: Այսինքն՝ երաշխավորությամբ ապահովվում է պարտապանից իր պահանջի բավարարում ստանալու՝ պարտատիրոջ իրավունքը, քանի որ նման հնարավորության բացառման դեպքում պարտատերը գուցե և ֆինանսական միջոցներ (վարկ, փոխառություն) չտրամադրեր պարտապանին:

Օրենսդրական կարգավորումների (դրանց բացի) և դրանց հիման վրա իրավակիրառ այնպիսի պրակտիկայի զարգացումը, երբ ֆիզիկական անձ վարկառուի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո վարկառուի պարտավորությունների գծով առկա երաշխավորությունը դադարեցվում է, իրավաչափ չէ: Այն առնվազն հակասում է երաշխավորության բուն էությանը:

Իրավակիրառ պրակտիկայի նման զարգացումը ոչ իրավաչափ լինելուց բացի նաև անտրամաբանական է՝ հետևյալ հիմնավորմամբ. Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել, եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է: Այն դեպքում, երբ սնանկության հիմքեր առկա չեն, այսինքն՝ երբ պարտապանի անվիճելի վճարային պարտավորությունը 2.000.000 ՀՀ դրամ գումարից *պակաս է*, սակայն կրկին առկա է այդ պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և այն շարունակվում է, ապա այդ իրավիճակում պարտատեր ֆինանսական կազմակերպությունը, հիմնվելով երաշխավորի հետ կնքված պայմանագրային նորմերի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կարգավորումների (հոդված 377) վրա, կարող է պարտապանի՝ իր հանդեպ առկա պարտավորությունների կատարումը պահանջել և ստանալ երաշխավորից:

Մինչդեռ, իրավակիրառ պրակտիկայի՝ մեր դիտարկմամբ ոչ իրավաչափ զարգացման դեպքում պարտապանի անվիճելի վճարային պարտավորությունը 2.000.000 ՀՀ դրամ գումարից ավել լինելու, պարտապանի՝ սնանկ ճանաչվելու և սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռ կայացվելու դեպքում, երբ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող պարտատերերը դադարեցնում են երաշխավորության պայմանագրերի գործողությունը՝ այդպիսով իրենց հանդեպ առկա պարտավորությունների կատարումից ազատելով նաև երաշխավորներին, ստացվում է, որ **երաշխավորության պարտավորության դադարման հարցը կախվածության մեջ է դրվում պարտապանի անվիճելի վճարային պարտավորության չափից միայն**: **Անվիճելի է, որ երաշխավորությունը սոսկ գումարի չափով պայմանավորված ինստիտուտ չէ:** Ուստի, անթույլատրելի է երաշխավորությանն առնչվող օրենսդրական կարգավորումներին պարտավորության չափով պայմանավորված տարակերպ մեկնաբանություն տալը:

Այսպիսով, գտնում ենք, որ այս անտրամաբանական իրողության հաշվառմամբ ևս ֆիզիկական անձ վարկառուի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո վարկառուի պարտավորությունների գծով առկա երաշխավորությունը չպետք է դադարեցվի:

ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թ. թիվ ԵԱՔԴ/2796/02/13 որոշմամբ արտահայտված դիրքորոշման համաձայն՝ նախավճարը (ինչպես և գրավը, տուժանքը, պարտապանի գույքի պահումը, **երաշխավորությունը** և երաշխիքը) հանդիսանում է ակցեսորային պարտավորություն, այսինքն՝ հիմնական պարտավորության կատարումն ապահովելու համար լրացուցիչ պարտավորություն: Առանց հիմնական պարտավորության առկայության այն կորցնում է իր իմաստն ու նշանակությունը: Երաշխավորության լրացուցիչ (ակցեսոր) բնույթը դրսևորվում է նրանով, որ այն չի կարող գոյատևել առանց հիմնական (գլխավոր) պարտավորության, ի տարբերություն երաշխիքի: Այսինքն՝ պարտապանին պարտավորությունների կատարումից ազատելու հետևանքով դադարում է նաև երաշխավորությունը՝ որպես լրացուցիչ պարտավորություն[1]:

Շարունակելով մնալ մեր այն համոզմանը, որ ֆիզիկական անձի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռ կայացվելու դեպքում հիմնական պարտավորությունը չի դադարում՝ այնուամենայնիվ, ստորև երաշխավորության դադարման հարցը հիմնական պարտավորության դադարման համատեքստում ենք դիտարկում՝ կարևոր համարելով անդրադառնալ նաև հիմնական պարտավորության դադարման հիմքերի տարբերակման հարցին և տարանջատել այդ հիմքերը և դրանցով վրա հասնող հնարավոր հետևանքները միմյանցից:

Այսպես, կարծում ենք, որ հիմնական պարտավորության դադարման դեպքում երաշխավորությունը ևս դադարելու առնչությամբ պնդումները չպետք է բացարձակ բնույթ կրեն: Սույն հոդվածում ներկայացված հիմնավորումների հաշվառմամբ՝ գտնում ենք, որ հիմնական պարտավորության դադարման դեպքում երաշխավորության՝ որպես լրացուցիչ պարտավորության դադարեցման հարցը պետք է կախված լինի հիմնական պարտավորության ***դադարման հիմքից***: Մասնավորապես, եթե հիմնական պարտավորությունը դադարել է կատարմամբ (դիցուք՝ պարտապանն ամբողջությամբ մարել է վարկը), ապա երաշխավորությունը ևս, տրամաբանորեն, պետք է դադարի:

[1] Տե՛ս **Ավագյան Գ.Կ., Դադունց Տ.Կ., Հովհաննիսյան Հ.Ա., Մարկոսյան Տ.Ա., Սահակյան Տ.Գ., Փոլ Ջ. Օմար,** Սնանկության վարույթը Հայաստանի Հանրապետությունում: Գիտագործնական ձեռնարկ: Երևան, Արդարադատության ակադեմիա, 2022:

Սակայն, բոլոր այն դեպքերում, երբ հիմնական պարտավորության դադարման հիմքում ընկած է պարտապանի՝ պարտավորության կատարման համար բավարար գույք չունենալու հանգամանքը, ապա որևէ իրավաչափ հիմնավորում չի կարող ունենալ այդ հիմքով դադարած պարտավորության հետ մեկտեղ նաև երաշխավորության պարտավորության դադարեցումը: **Այս պնդումը հիմնված է այն իրողության վրա, որ երաշխավորության էությունը հենց պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարվելու կամ անպատշաճ կատարվելու դեպքում երաշխավորի կողմից պարտատիրոջ առջև պատասխանատվություն կրելն է:**

Հետևաբար՝ պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարվելու կամ անպատշաճ կատարվելու յուրաքանչյուր դեպքում երաշխավորի կողմից ստանձնած պարտավորությունը ենթակա չէ դադարեցման՝ անկախ հիմնական պարտավորության դադարման իրավական եղանակից (այդ թվում՝ ֆիզիկական անձի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռ կայացվելու դեպքում):

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է մեր կողմից առաջ քաշված մոտեցման հիմնավորվածության մասին: Մասնավորապես, միջազգայնորեն ընդունված մոտեցում է սնանկության վարույթի հետ կապված իրավահարաբերություններում երաշխավորի հանդեպ առկա պարտավորությունները չդադարեցնելը: Այսպես.

Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 2309-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտապանի պարտավորությունը մարելուց առաջ երաշխավորը կարող է փոխհատուցում ստանալու պահանջով հայց ներկայացնել պարտապանի դեմ, անգամ եթե նա անվճարունակ է[1]: Նույն կարգավորումն է նախատեսված նաև Ֆիլիպինների քաղաքացիական օրենսգրքի 2071-րդ հոդվածի 2-րդ կետով[2]:

«Սնանկության մասին» ԱՄՆ ակտի 16-րդ պարբերության համաձայն՝ համավարկառուի կամ երաշխավորի պատասխանատվությունը չի փոփոխվում պարտապանի սնանկ ճանաչվելու դեպքում[3]:

[1] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.fd.ulisboa.pt/wp-content/uploads/2014/12/Codigo-Civil-Frances-French-Civil-Code-english-version.pdf (մուտք՝ 09.01.2026 թ.):

[2] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.officialgazette.gov.ph/1949/06/18/republic-act-no-386/ (մուտք 09.01.2026 թ.):

[3] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://fraser.stlouisfed.org/title/bankruptcy-act-1898-nelson-act-5872?page=8 (մուտք՝ 09.01.2026 թ.):

«Անվճարունակության մասին» Մեծ Բրիտանիայի ակտի 285-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի կարգավորումների ուժով՝ պարտապանի սնանկությունը որևէ կերպ չի ազդում ապահովված պարտավորության այլ պարտապաններից *(այդ թվում՝ երաշխավորից[1])* իր պահանջի բավարարում ստանալու՝ պարտատիրոջ իրավունքի վրա[2]:

Սույն հոդվածով բարձրացված հարցին առնչվող օրենսդրական նախագծերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքում 11.04.2018-26.04.2018 թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ արդարադատության նախարարության կողմից հանրային քննարկման են ներկայացվել ««Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերը[3]: Հանրային քննարկման ներկայացված «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 53-րդ հոդվածով առաջարկվել է այդ օրենքում լրացնել «Պարտատերերի պահանջների բավարարումը երաշխավորի և երաշխիք տված անձի կողմից, պարտապանի դեբիտորական պարտավորությունների հավաքագրումը» վերտառությամբ նոր՝ 56.1 հոդված: Նշված հոդվածի էությունն այն է եղել, որ օրենսդրական մակարդակում կառավարչին իրավասություն է տրվել գրավոր դիմել երաշխավորին և առաջարկել պարտավորությունը մեկամսյա ժամկետում կատարել, եթե մինչ այդ պարտատերն ինքն այդ նույն պահանջով չի դիմել երաշխավորին:

Նախագծի հետագծի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ շահագրգիռ մարմինների դիտարկումների[4] հիման վրա Նախագծի՝ Կառավարության հաստատմանը ներկայացված տարբերակից[5] նշված հոդվածը թեև դուրս է եկել, սակայն օրենսդրական նման նախաձեռնության փաստն ինքնին ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ սնանկության վարույթի ողջ ընթացքում, այդ թվում՝ ֆիզիկական անձ

[1] Ընդգծումը՝ հեղինակի:

[2] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.legislation.gov.uk/ukpga/1986/45/section/285 (մուտք՝ 09.01.2026 թ.):

[3] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.e-draft.am/projects/874/about (մուտք՝ 09.01.2026 թ.):

[4] Ներկայացված դիտարկումը վերաբերել է նրան, որ ապահովված իրավունքից օգտվելը պարտատիրոջ իրավունքն է, ոչ թե պարտականությունը: Հետևաբար, նրանից բացի որևէ այլ անձ, այդ թվում՝ պարտապանը կամ կառավարիչը, չեն կարող որոշել, թե ինչպես է մարվելու պարտատիրոջ նկատմամբ ունեցած պարտավորությունը: *Այսինքն՝ դիտարկման հիմքում ընկած չէ այն գաղափարը, թե սնանկության վարույթի որևէ փուլում սնանկ ճանաչված պարտապանի՝ երաշխավորությամբ ապահովված պարտավորությունները ենթակա են դադարեցման:*

[5] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.e-gov.am/sessions_old/archive/2019/05/30/ (մուտք՝ 09.01.2026 թ.):

վարկառուի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռն ուժի մեջ մտնելու դեպքում սնանկ ճանաչված պարտապանի՝ երաշխավորությամբ ապահովված պարտավորությունները չպետք է դադարեն:

Այսպիսով, սույն հոդվածով բարձրացված հարցը կարգավորող օրենսդրական կարգավորումների և ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը բերում է հետևյալ միանշանակ հետևությունների.

1. ֆիզիկական անձ վարկառուի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռն ուժի մեջ մտնելուց հետո երաշխավորությամբ ապահովված պարտավորությունների գոյության հարցն օրենսդրական մակարդակով կարգավորված չէ,

2. ՀՀ դատական համակարգում զարգացվել է այն պրակտիկան, որ նախորդ կետով նշված իրավիճակում երաշխավորության պարտավորությունները պետք է դադարեն:

Համաձայն չլինելով ՀՀ դատական պրակտիկայում զարգացված ուղղությանը՝ գտնում ենք, որ սույն հոդվածով արդեն իսկ ներկայացված հիմնավորումների հաշվառմամբ՝ ֆիզիկական անձ վարկառուի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռն ուժի մեջ մտնելու դեպքում սնանկ ճանաչված պարտապանի՝ երաշխավորությամբ ապահովված պարտավորությունները չպետք է դադարեն:

Ելնելով իրավական ակտերի որոշակիության սահմանադրական սկզբունքի պահպանման անհրաժեշտությունից և հատկապես այն փաստի հաշվառմամբ, որ ՀՀ դատական պրակտիկան արդեն իսկ հակառակ ուղղությամբ է զարգացել՝ գտնում ենք, որ մեր կողմից առաջարկված լուծումն անհրաժեշտ է հստակ ամրագրել օրենսդրական մակարդակում: Մասնավորապես, այն անհրաժեշտ է առաջին հերթին տառացի կերպով արտացոլել «Սնանկության մասին» օրենքում:

Բացի այդ, գտնում ենք, որ անհրաժեշտ է համապատասխան լրացում կատարել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդվածի 1-ին մասում՝ երաշխավորության դադարման հիմքերում երաշխավորությամբ ապահովված պարտավորության՝ ***կատարմամբ*** դադարելու առնչությամբ համապատասխան վերապահում կատարելով: Սա ևս կարևոր քայլ է, քանի որ թերևս այս վերապահման բացակայությամբ է պայմանավորված դատական ակտերում տեղ գտած դիրքորոշումը պարտապանի սնանկ ճանաչվելու և սնանկության վարույթի՝ դրան հաջորդող փուլերում երաշխավորության պարտավորությունը ևս դադարելու առնչությամբ՝ հիմք ընդունելով օրենսդրական հենց այն կարգավորումը, ըստ որի՝ երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը դադարելու դեպքում դադարում է նաև երաշխավորությունը:

Նման կարգավորում նախատեսելու հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ երաշխավորության պարտավորության գոյությունն առարկայազուրկ է դառնում այն դեպքում, երբ պարտապանի կողմից հիմնական պարտավորությունն արդեն կատարվել է, որո՛վ պայմանավորված է երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը դադարել: Մինչդեռ, երբ հիմնական պարտավորությունը դադարում է պարտապանի կողմից իր պարտավորությունը չկատարվելու կամ անպատշաճ կատարվելու դեպքում՝ պայմանավորված վերջինի գույքային դրությամբ (ինչն էլ որոշակի իրավիճակներում կարող է հանգեցնել պարտապանի սնանկության, ընդհուպ մինչև՝ պարտավորությունների կատարումից ազատելու մասին վճռի կայացման), ապա ոչ միայն անտրամաբանական է, այլ նաև երաշխավորության բուն էությանը հակասող է նման իրավիճակներում երաշխավորության պարտավորությունը ևս դադարեցնելը: Չէ՞ որ երաշխավորության պայմանագիրը կնքվում է հենց այդ իրավիճակների համար՝ որպես հիմնական պարտավորության ապահովման միջոց: Այս մասին արձանագրել է նաև Վճռաբեկ դատարանը՝ նշելով, որ երաշխավորի պարտավորության առաջացումը պայմանավորվում է բացառապես այնպիսի իրավաբանական փաստի ի հայտ գալով, ինչպիսին է հիմնական պայմանագրով պարտապանի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը: Ըստ էության, երաշխավորության իրավահարաբերության պարագայում մինչև դրանով ապահովված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման պահը ո՛չ երաշխավորը, ո՛չ էլ պարտատերը միմյանց նկատմամբ չունեն որևէ իրավունք և պարտավորություն[1]:

Մեր կողմից առաջ քաշված այս մոտեցմանը կողմ են արտահայտվել նաև օտարերկրյա հեղինակներ: Մասնավորապես, «Պարտապանի սնանկության դեպքում երաշխավորի հատուցման իրավունքը» վերտառությամբ իր հոդվածում Գերարդ Գլեննը նշել է, որ եթե պարտապանը սնանկության վարույթում ազատվել է իր պարտավորություններից, ապա դա չի հանգեցնում երաշխավորությամբ ապահովված հիմնական պարտավորության դադարման, ըստ այդմ՝ *երաշխավորության պարտավորությունը պետք է շարունակի գոյություն ունենալ:* Սնանկ ճանաչված պարտապանին իր պարտավորությունների կատարումից ազատելը վերջինի համար անձնական պաշտպանության միջոց է: Նման իրավիճակներում՝ երաշխավորը պետք է

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 18.11.2022 թ. թիվ ԵԴ/12618/02/19 գործով կայացված որոշումը:

մարի պարտատիրոջ հանդեպ պարտապանի ունեցած պարտավորությունը, այնուհետև այն պահանջի պարտապանից[1]:

Ամփոփելով սույն հոդվածում քննարկման առարկա դարձած խնդրի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները՝ պետք է նշել, որ ֆիզիկական անձ վարկառուի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռն ուժի մեջ մտնելու դեպքում սնանկ ճանաչված պարտապանի՝ երաշխավորությամբ ապահովված պարտավորությունների դադարման հարցի առնչությամբ օրենսդրական բացի առկայությամբ պայմանավորված առաջացած խնդիրների լուծումը և իրավակիրառ հակասական պրակտիկայի կարգավորումն ու միասնականացումը, մեր համոզմամբ, պետք է տրվի օրենսդրական համապատասխան լրացումների կատարմամբ: Մասնավորապես, անհրաժեշտ է «Սնանկության մասին» օրենքում հստակ ամրագրել, որ ֆիզիկական անձ վարկառուի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռն ուժի մեջ մտնելու դեպքում սնանկ ճանաչված պարտապանի՝ երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չի դադարում: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում որպես երաշխավորության դադարման հիմք սահմանել երաշխավորությամբ ապահովված պարտավորության՝ <u>կատարմամբ</u> դադարելու հանգամանքը:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք: Ընդունվել է 05.05.1998 թ., ուժի մեջ է մտել 01.01.1999 թ.:

2. «Սնանկության մասին» օրենք: Ընդունվել է 25.12.2006 թ., ուժի մեջ է մտել 10.02.2007 թ.:

3. ՀՀ վճռաբեկ դատարանի 18.11.2022 թ. թիվ ԵԴ/12618/02/19 գործով կայացված որոշումը:

4. ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թ. թիվ ԵԱՔԴ/2796/02/13 գործով կայացված որոշումը:

[1] **Garrard Glenn,** "The surety's right to indemnity-effect of principal's bankruptcy". The Yale Law Journal, Apr., 1922, Vol. 31, No. 6 (Apr., 1922), pp. 590-592. Published by: The Yale Law Journal Company, Inc. Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.jstor.org/stable/pdf/788526.pdf?refreqid=fastly-default%3Ac2b84997ace0acdbbad93d8ed822f7f4&ab_segments=0%2Fspellcheck_basic_search%2Ftest&initiator=&acceptTC=1 (մուտք՝ 09.01.2026 թ.):

5. ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թ. թիվ ԵԿԴ/0469/02/14 գործով կայացված որոշումը:

6. ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թ. թիվ ԱՐԱԴ/0043/04/13 սնանկության գործով կայացված որոշումը:

7. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.04.2019 թ. թիվ ԵԿԴ/2677/02/15 գործով կայացված որոշումը:

8. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.09.2022 թ. թիվ ԵԴ/19359/02/21 գործով կայացված որոշումը:

9. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.11.2025 թ. թիվ ԵԴ2/0524/02/25 գործով կայացված որոշումը:

10. ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 14.09.2023 թ. թիվ ՎԴ/1788/05/22 գործով կայացված որոշումը:

11. ՀՀ վարչական դատարանի 09.10.2025 թ. թիվ ՎԴ2/0297/05/24 վարչական գործով կայացված վճիռը:

12. Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգիրք: Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.fd.ulisboa.pt/wp-content/uploads/2014/12/Codigo-Civil-Frances-French-Civil-Code-english-version.pdf

13. Ֆիլիպինների քաղաքացիական օրենսգիրք: Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.officialgazette.gov.ph/1949/06/18/republic-act-no-386/

14. «Սնանկության մասին» ԱՄՆ ակտ: Հասանելի է հետևյալ հղումով՝ https://fraser.stlouisfed.org/title/bankruptcy-act-1898-nelson-act-5872?page=8

15. «Անվճարունակության մասին» Մեծ Բրիտանիայի ակտ: Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.legislation.gov.uk/ukpga/1986/45/section/285

16. **Ավագյան Գ.Կ., Դադունց Տ.Կ., Հովհաննիսյան Հ.Ա., Մարկոսյան Տ.Ա., Սահակյան Տ.Գ., Փոլ Ջ. Օմար,** Սնանկության վարույթը Հայաստանի Հանրապետությունում: Գիտագործնական ձեռնարկ: Երևան, Արդարադատության ակադեմիա, 2022:

17. **Garrard Glenn,** The surety's right to indemnity-effect of principal's bankruptcy. The Yale Law Journal, Apr., 1922, Vol. 31, No. 6 (Apr., 1922), pp. 590-592. Published by: The Yale Law Journal Company, Inc. Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.jstor.org/stable/pdf/788526.pdf?refreqid=fastly-default%3Ac2b84997ace0acdbbad93d8ed822f7f4&ab_segments=0%2Fspellcheck_basic_search%2Ftest&initiator=&acceptTC=1

ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ ПОРУЧИТЕЛЬСТВА В СЛУЧАЕ ВСТУПЛЕНИЯ В ЗАКОННУЮ СИЛУ РЕШЕНИЯ ОБ ОКОНЧАНИИ ДЕЛА О БАНКРОТСТВЕ ДОЛЖНИКА С ОСВОБОЖДЕНИЕМ ОТ ИСПОЛНЕНИЯ ОБЯЗАТЕЛЬСТВ

Аннотация

Обеспечение исполнения обязательств тем или иным способом было и остается распространенным и применимым в Армении. В последнее время значительных масштабов достигают также случаи банкротства физических лиц, которые, в зависимости от их исхода, вызывают многочисленные практические и правовые вопросы.

В данной статье автор обратился к одному часто встречающемуся в гражданско-правовых отношениях явлению, когда в отношении физического лица, обеспечившего поручительством исполнение обязательства перед банком, выносится решение об окончании дела о банкротстве должника-заемщика с освобождением от исполнения обязательств, и после вступления этого решения в силу возникает вопрос о прекращении поручительства.

В статье делается вывод о наличии законодательного пробела: регулирующее данную сферу законодательство четко не определяет, будет ли считаться поручительство прекращенным в вышеописанной ситуации, или же банки все равно должны сохранить право требовать исполнения основного обязательства от поручителя. По убеждению автора, в указанной ситуации обязательство по поручительству не должно прекращаться. Очевидно, что существующий законодательный пробел привел к формированию противоречивой практики, создав поле правовой неопределенности.

Ключевые слова: поручительство, банкротство, решение об окончании дела о банкротстве с освобождением от исполнения обязательств, законодательный пробел.

LEGAL REGULATION OF GUARANTEE IN CASE OF ENTRY INTO FORCE OF THE JUDICIAL DECISION ON CONCLUDING THE DEBTOR'S BANKRUPTCY CASE BY DISCHARGING THE OBLIGATIONS

Annotation

Securing performance of obligations through various methods has been and remains a widespread and prevalent practice in Armenia. Recently, the number of individual bankruptcy cases has increased significantly which, depending on their outcome, give rise to numerous practical and legal issues. In this article, the author addresses a phenomenon frequently encountered in civil law relations about an individual borrower, the performance of whose obligations toward a bank is secured by a guarantee. Specifically, it addresses situations where a court renders a judgment terminating the bankruptcy proceedings concerning the borrower and discharging the borrower's obligations thereby raising the issue of whether upon the entry into force of such a judgment the underlying guarantee is consequently terminated.

The article concludes that there is a legislative gap; the current regulatory framework does not explicitly clarify whether, in the aforementioned circumstances, the guarantee shall be deemed terminated, or whether banks should nevertheless retain the right to demand the performance of the principal obligation from the guarantor. The author contends that the guarantee obligation should not be terminated in the aforementioned scenario. It is evident that the existing legislative gap has resulted in contradictory practices giving rise to legal uncertainty.

Keywords: guarantee, bankruptcy, judgment on concluding the debtor’s bankruptcy case by discharging the obligations, legislative gap.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 09.01.2026 թ., տրվել է գրախոսության 15.01.2026 թ., ընդունվել է տպագրության 02.02.2026 թ.:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◊ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◊ 1(122) 2026



DOI: 10.59560/18291155-2026.1-283

ԱՐԹՈՒՐ ՂԱՐԱԳՅՈՉՅԱՆ
Արդարադատության ակադեմիայի շրջանավարտ,
ՀՀ փաստաբանական ակադեմիայի ունկնդիր

ՏԱՐՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վանաձորի պետական համալսարանի
իրավագիտության բաժնի 4-րդ կուրսի ուսանող

Գիտական ղեկավար՝ ԱՐՍԵՆ ՍԱՐԴԱՐՅԱՆ
«ԷԼ ԷՍ Է3» փաստաբանական
գրասենյակի հիմնադիր, փաստաբան,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱՁԱՅՆԱԳՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ամփոփագիր

ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ նաև՝ ՔԴՕ) որոշակիորեն լուծելով քննչական գործողությունների ընթացքում տեխնիկական միջոցների իրավական կարգավորման հարցը, այնուամենայնիվ, իրավակիրառ գործունեության ընթացքում հանգեցրել է դրա կիրառման կարգի տարբեր դրսևորումների՝ ձևավորելով հակասական և քրեական դատավարության հիմնարար սկզբունքների էությանը ոչ համահունչ քննչական պրակտիկա:

Հոդվածի շրջանակներում քննարկման առարկա են դարձվում քննչական գործողությունների ընթացքում պարտադիր տեսաձայնագրման պահանջի

պայմաններում գործնականում հաճախ հանդիպող խնդիրներն ու դրանց լուծման կառուցակարգերը:

Գիտակցելով ՀՀ-ում քննիչների աշխատանքային ծանրաբեռնվածության աստիճանը՝ միևնույն ժամանակ անընդունելի ենք համարում տեսաձայնագրման ամբողջականության, տեսանելիության և լսելիության պահանջը բովանդակային առումով չպահպանելը և գտնում ենք, որ ոչ պատշաճ տեսաձայնագրված քննչական գործողությունը կարող է առաջացնել տարաբնույթ դատավարական բարդություններ՝ դատարանում հետազոտելու անհնարինությունից մինչև ապացույցի անթույլատրելիության:

Խնդրո առարկա իրավիճակին անդրադառնալու անհրաժեշտությունն ավելի է սրվում այն հանգամանքի հաշվառմամբ, որ ՀՀ օրենսդիրը, ըստ էության, հրաժարվելով պահպանողական քրեադատավարական մտածողությունից, ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքով առաջին փորձն է կատարել կարգավորելու դատավարության ընթացքում տեխնիկական միջոցների կիրառման հարցը:

Տվյալ հանգամանքով պայմանավորված՝ օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում քննարկման առարկա դարձնել քրեական դատավարությունում տեխնիկական միջոցների արդյունավետ կիրառման կարգն ու պայմանները:

Իրավունքի համեմատական, համակարգային և այլ մեթոդների կիրառմամբ հոդվածում հիմնավորվում է քրեական դատավարության ընթացքում քննչական գործողությունների պատշաճ տեսաձայնագրության առանձնահատուկ կարևորությունն ու նշանակությունը, ինչպես նաև բացահայտվում է դրա կրիմինալիստիկական բովանդակությունը:

Հիմնաբառեր. քննչական գործողություններ, քննչական գործողության արձանագրություն, տեսաձայնագրություն, տեխնիկական միջոցներ:

Նախաբան

Քննչական գործողությունների տեսաձայնագրումը նորույթ էր ՀՀ քրեադատավարական համակարգի համար: ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգիրքն ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին և այն շրջադարձային էր ՀՀ քրեական դատավարության մոդելի համար: Բացի այն հանգամանքից, որ փոխվեց նախնական քննության մոդելը, էական փոփոխության ենթարկվեց նաև ապացուցման քրեադատավարական ինստիտուտը, նախաքննական ապացուցումը ստացավ թվային արգասիք, մասնավորապես՝ ներդրվեց քննչական գործողության կատարման

ընթացքում պարտադիր տեսաձայնագրման դատավարական նորմը, որի իրավական վերլուծությունից պարզ է դառնում, որ քննչական գործողության ժամանակ տեսաձայնագրության օգտագործումը դարձել է ընդհանուր պարտադիր կանոն (բացառությունների մասին՝ հաջորդիվ):

Տեխնիկական միջոցների կիրառումը քննչական գործողություններին վերաբերող այն ընդհանուր կանոններից է, որը տարածվում է գրեթե բոլոր գործողությունների վրա: Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում քննչական գործողությունների պարտադիր տեսաձայնագրման պահանջը, ինչը, ինչպես նշվեց, ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի էական նորամուծություններից մեկն է: Այս կանոնից նախատեսված են միայն հազվադեպ հնարավոր բացառություններ, որոնք, ի տարբերություն նախկին կարգավորումների, այլևս չեն կարող կախված լինել քննիչի կամ քննչական գործողությանը մասնակցող այլ անձանց ցանկությունից կամ իրավիճակային նպատակահարմարությունից: Իր հերթին, դա նշանակում է, որ պահանջի պատշաճ կատարումն ապահովելու համար քննչական մարմինները պետք է հագեցած լինեն անհրաժեշտ քանակի և որակի տեխնիկական միջոցներով, ինչպես նաև դրանք բավականաչափ արհեստավարժ կերպով կիրառող քննիչներով:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ՀՀ քննչական պրակտիկայում հաճախ են հանդիպում ոչ պատշաճ տեսաձայնագրված քննչական գործողություններ, որոնք, որպես կանոն, բացահայտվում են դատաքննության ընթացքում և առաջացնում դատավարական հետևանքներ, ուստի, սույն հոդվածի նպատակը գիտական մակարդակում քննչական պրակտիկայում իրականացվող տեսաձայնագրությունների առնչությամբ առաջացող գործնական խնդիրների վերհանումն ու դրանց հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումն է:

Համոզված լինելով և ընդգծելով, որ քննարկվող խնդիրն առավելապես պրակտիկ է, ոչ թե օրենսդրական կարգավորումների մակարդակում, գտնում ենք, որ սույն հոդվածի շրջանակներում բարձրացված հարցի պատասխանն անհրաժեշտ է քննարկել առավել խորությամբ՝ դատաքննչական պրակտիկայում առաջացող խնդիրների վերհանման և դրանց հանգեցրած իրավական հետևանքների համակողմանի գնահատման տեսանկյունից:

1) <u>Քննչական գործողության տեսաձայնագրության ապացուցողական նշանակությունը ՀՀ քրեական դատավարությունում</u>

ՀՀ դատավարագետները նշում են, որ ապացույցների բնորոշումը քրեական դատավարության կենտրոնական, միաժամանակ, ամենաբարդ, հակասական և վիճելի

հարցերից է, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս ոլորտում խաչվում են փիլիսոփայությունը, տրամաբանությունը և իրավագիտությունը՝ յուրաքանչյուրն իր՝ միմյանցից էապես տարբերվող հասկացութային ապարատով[1]:

«Ապացույց» հասկացության օրենսդրական բնորոշումը հազվադեպ է հանդիպում. նման դեֆինիտիվ նորմեր նախատեսված են հիմնականում հետխորհրդային պետությունների դատավարական օրենքներում, իսկ եվրոպական երկրների դատավարական համակարգերը բավարարվում են միայն ապացույցի դոկտրինալ բնորոշմամբ (օրինակ՝ Գերմանիա, Ավստրիա)[2]:

ՀՀ քրեադատավարական համակարգում տրված են «ապացույց»-ի ինչպես դոկտրինալ, այնպես էլ օրենսդրական բնորոշումները: Դոկտրինում առավել ընդունված է այն տեսակետը, որ ապացույցը փաստական տվյալի (ինֆորմացիայի) և դրա աղբյուրի (նյութական կրիչի) միասնությունն է, ինչը թույլ է տալիս ապացույցը դիտարկել դրա ձևի և բովանդակության միասնության համատեքստում:

Այս մոտեցումն ընկած է նաև ապացույցի ներկայիս օրենսդրական բնորոշման հիմքում: Ի հակառակ ապացույցի մասին դոկտրինալ մակարդակում հակասական մեկնաբանությունների, ՔԴՕ 6-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետում հստակ սահմանվել է ապացույցի դեֆինիցիան:

ՔԴՕ 6-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետի համաձայն՝ *«39) ապացույց՝ փաստի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով ստացված տվյալ, որի հիման վրա քննիչը, դատախազը, դատարանը պարզում են ապացուցման ենթակա հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ»:*

ՔԴՕ 86-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ «*1. Քրեական վարույթում ապացույց են՝*

(…)

9) ապացուցողական և վարութային այլ գործողությունների արձանագրությունները.

(…)»:

ՔԴՕ 214-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քննչական գործողության ընթացքը և արդյունքներն ամրագրելու, հանցագործության հետքերը և իրեղեն ապացույցները հայտնաբերելու, ամրապնդելու և վերցնելու նպատակով կարող են կատարվել*

[1] Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1: Հեղ. խումբ, գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, 2-րդ լրամշակված հրատ.: Եր., «Լուսաբաց հրատարակչատուն», 2017, էջեր 357-360:

[2] **Трефилов А.А.** Уголовный процесс зарубежных стран. Том 1 (15). Уголовный процесс Швейцарии. - М.: Изд. НИПКЦ Восход-А, 2016. - С. 290.

ձայնագրում, լուսանկարում, պատրաստվել հետքերի ծեփապատճեններ և դրոշմվածքներ, կիրառվել այլ տեխնիկական միջոցներ:

2. Տեխնիկական միջոցներ կիրառելուց առաջ քննիչն այդ մասին տեղեկացնում է քննչական գործողության մասնակիցներին, ինչպես նաև միջոցներ է ձեռնարկում տեխնիկական միջոցների սարքինությունն ստուգելու ուղղությամբ:

3. Սույն օրենսգրքի 208-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քննչական գործողությունները (բացառությամբ փաստաթղթի զննության, տեղեկատվության պահանջի և առարկաներ կամ փաստաթղթեր վերցնելու) պարտադիր տեսաձայնագրվում են, բացառությամբ երբ դա օբյեկտիվորեն անհնար է:

(…)

5. Տեսաձայնագրման միջոցով կատարված քննչական գործողության արձանագրությունն ապացուցման գործընթացում չի կարող օգտագործվել առանց տվյալ քննչական գործողության տեսաձայնագրության հասանելիության կամ տեսաձայնագրության էլեկտրոնային կրիչի

(…)»:

ՔԴՕ 215-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«3. Տեսաձայնագրմամբ, այդ թվում՝ տեսակապի միջոցով կատարված քննչական գործողության արձանագրությունում միայն նշվում են տվյալ գործողության էությունը, հակիրճ բովանդակությունը և հիմնական արդյունքները»:*

ՔԴՕ 216-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *«1. Քննչական գործողության արձանագրությանը համարակալված կցվում են հետևյալ հավելվածները.*

(…)

2) քննչական գործողության ընթացքն ու արդյունքներն ամրագրած էլեկտրոնային կրիչները, տեսաերիզները, ձայնագրությունները, լուսանկարչական նեգատիվները և լուսանկարները.

(…)»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված նյութերը քննչական գործողության արձանագրության բաղկացուցիչ մաս են և չեն կարող օգտագործվել առանց արձանագրության, ինչպես նաև այն դեպքում, երբ դրանցում պարունակվող տվյալների ամբողջականությունը խախտված է»:*

Վերոնշյալ քրեադատավարական նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ ՀՀ օրենսդիրը, սահմանելով քննչական գործողությունների տեսաձայնագրման ընդհանուր կանոն (բացառությամբ փաստաթղթի զննության, տեղեկատվության

պահանջի և առարկաներ կամ փաստաթղթեր վերցնելու), միևնույն ժամանակ, պարտադիր է համարել համառոտ արձանագրութան կազմումը:

Ընդ որում, քննչական գործողության արձանագրությանը, որպես հավելված, ի թիվս այլնի, կցվում են տվյալ գործողության ընթացքն ու արդյունքներն ամրագրած էլեկտրոնային կրիչները, որոնց մեջ ներառված է նաև տեսաձայնագրման միջոցով կատարված քննչական գործողության տեսաձայնագրման էլեկտրոնային կրիչը: Հետևաբար, քննչական գործողության տեսաձայնագրման էլեկտրոնային կրիչը հանդիսանում է արձանագրության բաղկացուցիչ մասը և ինքնին ապացույցի ինքնուրույն տեսակ չէ:

Հեղինակների մի խումբ նշում է, որ տեսաձայնագրությունն, ըստ էության, քննչական գործողության արձանագրության բաղկացուցիչ մասն է, որի ապացուցողական նշանակությունն անբաժան է դրա նկարագրությունից[1]:

Ս. Շեյֆերն իրավացիորեն նշում է, որ չպետք է անտեսել քննչական գործողության արձանագրության և դրան կցված հավելվածների՝ տեղեկատվության փոխանցման ձևերի միջև առկա տարբերությունը: Օրինակ՝ տեսանկարահանումն արտացոլում է գործընթացների դինամիկ պատկերը, մինչդեռ արձանագրությունը գործողությունների նկարագրությունն է: Այս առումով խիստ վերապահումով պետք է պատկերը դիտել որպես նկարագրության բաղկացուցիչ մաս: Ըստ Շեյֆերի՝ քննչական գործողության արձանագրությունը և տեսաձայնագրությունը ձևավորում են համալիր ապացույց, որի տարրերը փոխլրացնում և հարստացնում են միմյանց[2]:

Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ ապացուցողական իրավունքի տեսանկյունից գործում է քննչական գործողության արձանագրության և տեսաձայնագրության օգտագործման անբաժանելիության սկզբունքը, որը ցույց է տալիս այս երկուսի փոխադարձ և անխզելի կապը, հետևաբար, **ինչպես քննչական գործողության արձանագրությունը չի կարող օգտագործվել առանց քննչական գործողության տեսաձայնագրության, այնպես էլ՝ հակառակը[3]:**

Թիվ ԵԴ1/1691/01/24 քրեական գործով, ըստ մեղադրանքի՝ Արմեն Հովհաննեսի Մանուկյանի, 03.07.2025 թ. դատավճռում, Դատարանն արձանագրել է.

[1] Теория доказательств в советском уголовном процессе // Отв. ред. Н.В. Жогин. изд. 2-е. - М.: Изд. Юридическая литература, 1973. - С. 677.

[2] **Шейфер С.А.** Следственные действия. Система и процессуальная форма. - М.: Юрлитинформ, 2001. - С. 195-196.

[3] **Ղամբարյան Ա., Հովհաննիսյան Ա.**, Ապացուցման միջոցները և ապացուցումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: Գիտաուսումնական ձեռնարկ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան. Եր., ՀՌՀ հրատ., 2025, էջ 472:

*«(…) խուզարկության ընթացքում կիրառվել է տեսանկարահանում (SPECTRE V7) մոդելի տեսախցիկով՝ դրա վերաբերյալ առկա է նշում արձանագրության մեջ, սակայն տեսագրությունը պարունակող որևէ կրիչ Դատարան չի ներկայացվել: Նշված հարցի հետ կապված հանրային մեղադրողը պարզաբանում է ներկայացրել առ այն, որ տեսագրությունը չի պահպանվել և հնարավոր չէ այն վերարտադրել: Նման պարագայում ստացվում է, որ խուզարկություն քննչական գործողության արձանագրության հետ չի ներկայացվել նշված գործողության բաղկացուցիչ մաս հանդիսացող տեսաձայնագրության հասանելիություն կամ տեսաձայնագրության էլեկտրոնային կրիչը, այլ կերպ ասած՝ տեսանկարահանմամբ կատարված գործողության տեսանկարահանման տեսագրությունն առկա չէ: **<u>Նման պարագայում պետք է արձանագրել, որ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավիճակ, հետևաբար, բնակարանի խուզարկություն քննչական գործողությունը և դրա արդյունքում ստացված տեղեկությունները չեն կարող օգտագործվել որպես թույլատրելի ապացույց՝ մեղադրյալի մեղքը հիմնավորելու համար»:**</u>***

Ստացվում է, որ թեև ապացուցողական գործողությունների արձանագրությունը որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, ուղղակիորեն ամրագրված է ապացույցների տեսակները թվարկող հոդվածում (ՔԴՕ 86-րդ հոդված, 1-ին մաս, 9-րդ կետ), այնուամենայնիվ, քննչական գործողության տեսաձայնագրման բացակայությունն ինքնին բացառում է քննչական գործողության արձանագրության օգտագործումը ապացուցման գործընթացում, այլ կերպ ասած՝ առկա է ապացուցման գործընթացում քննչական գործողության արձանագրության մեկուսի օգտագործման արգելք: Բնականաբար, խոսքը չի վերաբերում փաստաթղթի զննության, տեղեկատվության պահանջի և առարկաներ կամ փաստաթղթեր վերցնելու արձանագրություններին, քանի որ քննիչը չունի դրանց ընթացքի տեսաձայնագրման պարտականություն այն տրամաբանությամբ, որ դրանց բնօրինակները պահպանվում են քրեական վարույթի նյութերում և կարող են անխոչընդոտ հետազոտվել նաև դատարանում՝ հիմնական դատալսումների ընթացքում, ուստի դրանց ընթացքի տեսաձայնագրման անհրաժեշտությունը բացակայում է:

Նշվածից հետևում է, որ նախաքննության ընթացքում տեսաձայնագրման ենթակա քննչական բոլոր գործողությունները պետք է իրականացվեն պատշաճ կարգով՝ իրապես ապահովելով դրա ամբողջականությունը, տեսանելիությունը (ընդգրկվածությունը, լուսավորությունը և այլն) և լսելիությունը (այս մասին՝ հաջորդիվ), իսկ դրա արդյունքով

կազմված քննչական գործողության արձանագրության բովանդակությունը պետք է ամբողջությամբ համապատասխանի տեսաձայնագրության բովանդակությանը:

Քննչական գործողությունների արձանագրությունների և դրան որպես հավելված կցված տեսաձայնագրության բովանդակության փոխհարաբերակցության հարցը քննարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ տեսաձայնագրությունը a priori պետք է ավելի շատ տեղեկություն պարունակի, քան արձանագրությունը, քանի որ արձանագրության մեջ պետք է նշվի միայն տեսաձայնագրված քննչական գործողության հակիրճ նկարագիրը, հետևաբար, այս դեպքում ապացույցի գնահատման տեսանկյունից բարդություն չի առաջանում:

Այլ է իրավիճակը քննչական գործողության արձանագրության բովանդակության սահմանազանցման (էքսցեսի) դեպքում, երբ այն պարունակում է ավելի շատ տեղեկություն, քան տեսաձայնագրությունը: Այս դեպքում պետք է կիրառել ՔԴՕ 215-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված նորմը, ըստ որի տեսաձայնագրման միջոցով կատարված քննչական գործողության արձանագրությունն ապացուցման գործընթացում չի կարող օգտագործվել առանց տվյալ քննչական գործողության տեսաձայնագրության հասանելիության կամ տեսաձայնագրության էլեկտրոնային կրիչի: Եթե տեսաձայնագրությունն է հանդիսանում տվյալ քննչական գործողության արձանագրության որպես ապացույց օգտագործելու նախապայմանը, ապա դրանից բխում է, որ նաև այն դեպքերում, երբ քննչական գործողության արձանագրությունը, մեծամասամբ համապատասխանելով տեսաձայնագրության բովանդակությանը, այնուամենայնիվ պարունակում է այնպիսի տեղեկատվություն, որը չի ամրագրվել տեսաձայնագրմամբ, ապա a fortiori այն ևս չի կարող օգտագործվել ապացուցման գործընթացում:

Նույն տրամաբանության շրջանակներում պետք է մոտենալ նաև քննչական գործողության տեսաձայնագրության և արձանագրության հնարավոր հակասության հարցին, երբ միևնույն հանգամանքի վերաբերյալ քննչական գործողության արձանագրությունում և դրա ընթացքն ամրագրող էլեկտրոնային կրիչում առկա են միմյանց հակասող տեղեկություններ: Այս դեպքում անհրաժեշտ կլինի պարզել, թե արդյոք տեսաձայնագրությունը մոնտաժված (փոփոխված) է, այսինքն խախտված է վերջինիս ամբողջականությունը, որին ժխտական պատասխան տալու դեպքում կարելի

է ենթադրել, որ արձանագրությունում նշվել են իրականությանը չհամապատասխանող տվյալներ[1]:

Մեր կարծիքով, քննարկվող իրավիճակում, հակասության պատճառը չհայտնաբերելու դեպքում, առնվազն հակասող մասով այդ տվյալները չեն կարող օգտագործվել ապացուցման գործընթացում:

2) <u>Տեսաձայնագրման ամբողջականության, տեսանելիության և լսելիության օրենսդրական պահանջը</u>

ՔԴՕ 214-րդ հոդվածի 4 մասի համաձայն՝ *«(…) 4. Տեսաձայնագրումը պետք է իրականացվի քննչական գործողությունը սկսելու պահից մինչև դրա ավարտը, առանց ընդհատման, բացառությամբ անկանխատեսելի տեխնիկական անսարքության կամ օբյեկտիվ անհնարինության այլ դեպքերի: Տեսաձայնագրման ընդհատման դեպքում քննչական գործողության կատարումն ընդհատվում է, որի պատճառները նշվում են այդ նպատակով կազմվող առանձին արձանագրությունում: Քննչական գործողության կատարումը շարունակվում է տեսաձայնագրումը վերսկսելու պահից: Մինչ այդ քննիչը միջոցներ է ձեռնարկում քննչական գործողության բնականոն ընթացքը և արդյունավետությունն ապահովելու ուղղությամբ: Տեսաձայնագրման դեպքում ապահովվում են քննչական գործողության ընթացքի ամբողջականությունը, տեսանելիությունը (ընդգրկվածությունը, լուսավորությունը և այլն) և լսելիությունը: Տեսաձայնագրությունը չի կարող մոնտաժվել կամ այլ կերպ փոփոխվել:*

(…)»

Նշված նորմի իրավական վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ օրենսդիրը սույն կարգավորումն անմիջականորեն կապում է քննչական գործողության քրեագիտական հարթության հետ, նշելով, որ այն պետք է լինի տեսանելի, լսելի և ամբողջական: Նշված պահանջները համեմատելով քրեագիտական տակտիկայի հանրահայտ մեթոդների հետ՝ պարզ է դառնում, որ այն հանդիսանում է քննչական գործողության արդյունավետության, օբյեկտիվության, լրիվության երաշխիք, քանի որ ապացույցների ստուգման և գնահատման փուլում քննիչը, հսկող դատախազը կամ դատարանը հնարավորություն են ստանում ամբողջովին վերլուծության ենթարկել քննչական գործողության ընթացքը և դրա արդյունքում քննության համար նշանակություն ունեցող ապացույցները:

[1] **Ղամբարյան Ա., Հովհաննիսյան Ա.**, Ապացուցման միջոցները և ապացուցումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: Գիտաուսումնական ձեռնարկ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան: Եր., ՀՌՀ հրատ., 2025, 472-474 էջեր:

ՀՀ Կառավարության 2022 թվականի ապրիլի 7-ին ընդունված «Քննչական գործողության ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցների բնութագիրը և չափանիշները, տեխնիկական միջոցների օգտագործման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվականի ապրիլի 11-ի 401-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» վերտառությունը կրող N 457-Ն որոշման 2-րդ մասի 5-րդ կետը սահմանում է, որ «Տեխնիկական միջոցների օգտագործման արդյունքում ստացված տվյալները պետք է լինեն ամբողջական և ճշգրիտ (հավաստիության սկզբունք)»:

Հավաստիության սկզբունքի մեկնաբանությունը չդարձնելով մեկուսի իրավական տարր՝ պետք է արձանագրել, որ այն ուղղակի (էքսպլիցիտ) իրավական կապի մեջ է գտնվում ապացույցների արժանահավատության կոմպոնենտի հետ, քանի որ, եթե քննչական գործողության ժամանակ տեսաձայնագրության մեջ տեղի ունեցող ընթացքն ամբողջությամբ չի ֆիքսվում կամ ֆիքսվում է խաթարված, ապա քննության առարկա է դառնում ձեռք բերված ապացույցի արժանահավատության և թույլատրելիության հարցը:

Անդրադարձ կատարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 4-րդ մասին՝ ակնհայտ է, որ քննչական գործողությունը սկսելուն պես պետք է տեսախցիկը լինի միացված վիճակում և ամբողջ քննչական գործողության կատարման ընթացքում այն պետք է լինի միացված, որը, մեր կարծիքով, խնդրահարույց է: Կան քննչական գործողությունների տեսակներ, որտեղ տեսախցիկի օգտագործումը խնդիրներ չի առաջացնում, օրինակ՝ քննիչի առանձնասենյակում վկայի հարցաքննության ժամանակ, սակայն գործնական խնդիրներ կարող են առաջանալ բնակարանի խուզարկության ընթացքում, քանի որ հասկանալի չէ, թե քննիչը ինչպես պետք է մեկ ձեռքով պահի տեսախցիկը, մյուս ձեռքով կատարի խուզարկությունը և դրա ընթացքում կամ ավարտից անմիջապես հետո, տեսախցիկը միացված վիճակում բնակարանի խուզարկության արձանագրություն կազմի:

Խնդիրը ամբողջ համակցության մեջ քննարկելով՝ պետք է անդրադառնալ ՔԴՕ 42-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին՝

Հետաքննիչը՝

«(…)

օժանդակում է ապացուցողական և վարութային այլ գործողությունների կատարմանը.

(…)»

Նույն օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հետաքննությունը կատարվում է նախաձեռնված քրեական վարույթի մասին հետաքննության մարմնի*

կողմից պատշաճորեն տեղեկանալու հիմքով: Հետաքննությունն սկսվում է միայն նախաքննությունը սկսելուց հետո:

(…)»

Նշված երկու նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հետաքննության ինստիտուտն ուղղված է նախաքննությանը օժանդակելուն, իսկ ՔԴՕ 42-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը մասնավորեցնում է և նշում, որ այն կատարվում է ապացուցողական գործողությունների օժանդակությամբ: Նշվածը նշանակում է, որ հետաքննության մարմնի աշխատակիցները քննչական գործողության ժամանակ պետք է ցուցաբերեն բավարար ակտիվություն, ուշադիր մասնակցեն քննչական գործողությանը, լինեն զգոն, հասկանան ենթադրյալ հանցանքի կատարման հնարավոր մեխանիզմները և այլն:

Օժանդակում տերմինը չի կարող մեկնաբանվել այնքան լայն, որ դրա քրեադատավարական իմաստը մղվի հետին պլան: Բնակարանի խուզարկության կամ դեպքի վայրի զննության ժամանակ քննիչի մոտ պարտադիր պետք է ծագի այն հարցը, թե ով պետք է պահի տեսախցիկը: Անշուշտ, քննչական գործողության կատարման այս փուլում սկսվում են որոշակի անհարմարություններ:

1. Եթե տեսախցիկը պետք է պահի հետաքննիչը, ապա հետաքննիչը ինչպե՞ս պետք է կատարի իր բուն օժանդակման գործառույթը, օրինակ՝ բնակարանի խուզարկության ժամանակ հետաքննիչը, եթե պետք է տեսախցիկը պահի, ապա նա այլևս չի կարողանա ակտիվ մասնակցել խուզարկության բուն գործընթացին, նրա դերակատարությունը կդառնա պասիվ:

2. Եթե տեսախցիկը պետք է պահի հետաքննիչը, ստեղծվում է մի անցանկալի իրավիճակ, երբ քննչական մարմինը՝ ելնելով օրենսդրական պահանջից, ակամա հետաքննիչին վերապահում է տեխնիկական սպասարկում իրականացնող անձի դեր, որն անթույլատրելի է:

2.1. Եթե տեսախցիկը պահում է հետաքննիչը, ապա հարց է առաջանում, արդյո՞ք վերջինս անցել է հատուկ տեխնիկական պատրաստություն կամ եթե անցել է, արդյո՞ք նա տիրապետում է հենց այն տեսախցիկի մոդելի տեխնիկական կարգավորումներին, որոնք օգտագործում է ՀՀ քննչական կոմիտեն:

2.2. Եթե տեսախցիկը պահում է հետաքննիչը, ապա հարց է առաջանում, թե հետաքննիչը ինչպես պետք է կռահի կամ իմանա, թե տեսախցիկը կոնկրետ որ մասի կամ տեղանքի որ կետում պետք է պահի, որպեսզի հստակ ֆիքսվի քննիչի գործողությունների բովանդակությունը:

3. Եթե տեսախցիկը պետք է պահի քննիչը, ապա ինչպես պետք է նա մի ձեռքով կատարի բուն քննչական գործողությունը, օրինակ՝ բնակարանի խուզարկության

ժամանակ քննիչը չի կարող մեկ ձեռքով պահել տեսախցիկը, իսկ մյուս ձեռքով ինչ-որ իրեր կամ այլ հետքեր փնտրել, փաթեթավորել խուզարկության ընթացքում հայտնաբերված առարկաները, փաստաթղթերը և այլ նյութերը:

4. Եթե տեսախցիկը պահում է քննիչը, ապա հարց է առաջանում՝ ինչպե՞ս պետք է կազմվի արձանագրությունը: Ակնհայտ է, որ քննիչը չի կարող տեսախցիկը ձեռքին պահած կազմել արձանագրությունը, հետևաբար, այն ևս մեկ անգամ պետք է հանձնվի հետաքննիչին, որպեսզի վերջինս տեսախցիկը միացված վիճակում պահի, և քննիչը կազմի արձանագրություն՝ հաշվի առնելով տեսաձայնագրության անընդհատության պահանջը:

Այսպիսով, ստեղծվում է մի իրավիճակ, երբ քննչական գործողության մի մասն ամրագրում է քննիչը, իսկ մյուս մասը՝ հետաքննության մարմնի աշխատակիցը: Խուսափելով քրեադատավարական դուալիզմից, պետք է արձանագրենք, որ տպավորություն է ստեղծվում, թե քննչական գործողությունը կատարողը և՛ քննիչն է, և՛ հետաքննության մարմնի աշխատակիցը, որը անթույլատրելի է, քանի որ գործող քրեադատավարական դոկտրինի և օրենսգրքի համաձայն՝ քննչական գործողության հեղինակը և պատասխանատուն քննիչն է, այլ ոչ թե հետաքննության մարմնի աշխատակիցը:

Ինչ վերաբերում է այն մոտեցմանը, որ քննիչը կարող է տեսախցիկը ամրացնել իր հագուստից, ևս անտրամաբանական է, քանի որ ցանկացած պահի այն կարող է վայր ընկնել: Բացի այդ, տվյալ դեպքում քննիչը չի տեսնում, թե կոնկրետ ինչ է նկարահանում տեսախցիկը: Նշված հանգամանքն արդեն իսկ խնդրահարույց է տեսաձայնագրման ամբողջականության տեսանկյունից:

Անհրաժեշտ է քննարկել նաև այն իրավիճակները, երբ հարցաքննության կամ առերեսման ընթացքում տեսախցիկը տեղակայվում է քննիչի աշխատասենյակի այնպիսի հատվածում, որտեղից ամբողջությամբ տեսանելի չէ հարցաքննվող անձը կամ քննիչը (օրինակ՝ հարցաքննվողի կամ քննիչի մեջքի հետևում), քանի որ նշված դեպքում առաջանում է ողջամիտ կասկած, թե արդյոք քննիչը, օրինակ, մարմնական որևէ շարժումով չի հուշում հարցաքննվողին ու նրանից ստանում ակնկալվող պատասխանները: Այս հանգամանքի հաշվառմամբ, գտնում ենք, որ հարցաքննության կամ առերեսման նկարահանման ընթացքը պետք է իրականացվի քննիչի աշխատասենյակի այնպիսի հատվածից, որտեղից բավարար լուսավորությամբ և պարզությամբ երևում է, առաջին հերթին, հարցաքննվող անձը և նրա ժեստիկուլյացիան: Տեսախցիկը պետք է հնարավորինս նկարահանի քննիչի ամբողջ աշխատասենյակը,

որպեսզի նաև հնարավոր լինի պարզել, թե արդյոք բացի քննչական գործողության մասնակիցներից որևէ այլ անձ գտնվում է աշխատասենյակում, թե ոչ:

Անդրադառնալով տեսաձայնագրված քննչական գործողության լսելիության խնդրին՝ գտնում ենք, որ այն կախված է ինչպես տեսախցիկի տեխնիկական բնութագրից, այնպես էլ այն օգտագործելու կանոնների պահպանումից: Տեսաձայնագրության լսելիության տարրի պահպանումն ունի էական նշանակություն դատարանում այն հետազոտելիս, քանի որ դրանում արձանագրված բառերը կամ արտահայտությունները ընկալելի չլինելու դեպքում հնարավոր չի լինի այն պատշաճ հետազոտել ու գնահատել:

3) <u>Ոչ պատշաճ տեսաձայնագրված քննչական գործողության անթույլատրելիության հիմնավորումներն ու իրավական հետևանքները</u>

Ոչ պատշաճ տեսաձայնագրված քննչական գործողությունը որևէ դեպքում իրավաչափ համարվել չի կարող և առաջացնում է տարաբնույթ բացասական դատավարական հետևանքներ: Ընդհանրացնելով՝ այդ հետևանքները կարելի է դասակարգել երկու խմբի: Առաջին խմբում դատավարության բնականոն ընթացքի հետ կապված խնդիրներն են, իսկ երկրորդ խումբը կազմում են տվյալ քննչական գործողության արդյունքով ձեռք բերված ապացույցի հավաստիության և թույլատրելիության հետ կապված խնդիրները:

Ինչպես արդեն նշեցինք, նախաքննության ընթացքում կատարված քննչական գործողության տեսաձայնագրության ամբողջականության, տեսանելիության և լսելիության պահանջները չպահպանելը հիմնական դատալսումների ընթացքում առաջացնում է այն հետազոտելու դժվարություններ, որոնց արդյունքում անհրաժեշտություն է առաջանում առավել ճիշտ կարգավորել ձայնի բարձրությունը, տեսաձայնագրությունը դիտել մի քանի անգամ և այլն: Իսկ այն դեպքերում, երբ քննչական գործողության տեսաձանագրումն իրականացվել է դատավարական օրենքով նախատեսված ընթացակարգի (ՔԴՕ 97-րդ հոդված, 3-րդ մաս, 3-րդ կետ) կամ այլ պահանջների խախտմամբ, ապա պետք է արձանագրել, որ առաջանում են տվյալ քննչական գործողության ու դրա արդյունքով ձեռք բերված ապացույցների հավաստիության, թույլատրելիության և օգտագործման սահմանափակումների խնդիրներ[1], քանի որ հաճախ դրանք օբյեկտիվորեն հնարավոր չի լինում չեզոքացնել այլ

[1] ՔԴՕ 97-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ օրենքով սահմանված կարգով ձեռք բերված տվյալները չեն կարող որպես ապացույց օգտագործվել, եթե առկա է դրանք փոխարինած լինելու կամ դրանց հատկանիշները փոփոխած լինելու ողջամիտ կասկած:

ապացուցողական գործողությունների կատարմամբ: Նշվածի կարևորությունը պետք է գնահատել նաև այն համատեքստում, որ քրեական դատավարությունում ապացույցները հաճախ ածանցվում են քննչական գործողության արդյունքով ձեռք բերված ապացույցներից և քննչական գործողության անթույլատրելիության դեպքում ածանցյալ ապացույցները ևս պետք է ճանաչվեն անթույլատրելի:

Օրինակ՝ թիվ ԼԴ/0090/01/24 քրեական գործով, ըստ մեղադրանքի Կարեն Սարգսի Մխիթարյանի, Դատարանը, 11.04.2024 թ. «Ապացույցն անթույլատրելի ճանաչելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ մեղադրյալի բնակարանում կատարված խուզարկության անթույլատրելիության հիմքում, ի թիվս այլնի, դրել է հետևյալ եզրահանգումը.

«(…) Տեսաձայնագրումը պետք է իրականացվի քննչական գործողությունը սկսելու պահից մինչև դրա ավարտը՝ առանց ընդհատման, մինչդեռ սույն դեպքում տեսաձայնագրությունը չի ընդգրկում քննչական գործողության ամբողջ ընթացքը: *Սույն գործով քննիչի կատարած գործողությունները կասկածի տակ են դնում հայտնաբերված զանգվածի ամբողջականությունը և դրանք փոխարինած լինելու կամ դրանց հատկանիշները փոփոխած լինելու ողջամիտ կասկածը հնարավոր չէ չեզոքացնել ոչ քննիչի ցուցմունքով, ոչ սույն գործով կատարված որևէ այլ ապացուցողական գործողությամբ: Դատարանի համար ընդունելի չէ նաև քննիչի այն բացատրությունը, որ տեսախցիկի անսարքության պատճառով է, որ ննջասենյակից հայտնաբերված զանգվածը թղթի վրա տեղափոխելու դրվագը նկարահանված չէ: Դատարանը փաստում է, որ քրեադատավարական նորմերի համաձայն անկանխատեսելի տեխնիկական անսարքության, տեսաձայնագրառման ընդհատման դեպքում քննչական գործողության կատարումն ընդհատվում է, որի պատճառները նշվում են այդ նպատակով կազմվող առանձին արձանագրությունում և քննչական գործողության կատարումը շարունակվում է տեսաձայնագրումը վերսկսելու պահից, մինչդեռ տվյալ դեպքում քննիչը խուզարկությունը չի ընդհատել, շարունակել է իր գործողություններն առանց տեսաձայնագրության:*

(…) Այսպիսով, վերը շարադրված իրավանորմերի լույսի ներքո գնահատելով սույն քրեական գործով մեղադրանքի հիմքում դրված մյուս ապացույցները՝ դատաքիմիական փորձաքննության (…) եզրակացությունը, իրեղեն ապացույց (…) թմրամիջոցը, Դատարանը գտնում է, որ դրանք անթույլատրելի են, քանի որ հիմնված են օրենքի էական խախտմամբ կատարված խուզարկություն քննչական գործողության և դրա արդյունքում ձեռք բերված ապացույցի վրա»:

Սույն քրեական գործով 10.11.2024 թ. դատավճռի դեմ դատախազի վերաքննիչ բողոքը քննության առնելով՝ ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը 16.12.2024 թ. որոշմամբ արձանագրել է հետևյալը.

*«(…) Վերաքննիչ դատարանը համակարծիք է Առաջին ատյանի դատարանի այն պատճառաբանությունների հետ, որ չի պահպանվել խուզարկության կատարման, արձանագրություն կազմելու և տեսաձայնագրություն կատարելու պայմանները և կարգը: Քննիչը, խուզարկություն կատարելով մեղադրյալի բնակարանում, չի արձանագրել վերցված զանգվածի քաշը, չափը, չի փաթեթավորել, չի նշել փաթեթների քանակը, **<u>իսկ ննջասենյակից հայտնաբերված զանգվածը վերցնելն առհասարակ տեսագրությունով տեսանելի չէ (…):</u>***

*Գործով ձեռք բերված մյուս ապացույցի՝ դատաքիմիական փորձաքննության (…) եզրակացության մասով նույնպես Առաջին ատյանի դատարանն իրավացիորեն արձանագրել է, որ այն պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում օրենքի էական խախտմամբ կատարված խուզարկություն քննչական գործողության և դրա արդյունքում ձեռք բերված ապացույցի հետ, որպիսի պայմաններում, **<u>հաշվի առնելով «թունավոր ծառի պտուղների» կանոնը, նշված ապացույցի օգտագործումը նույնպես անթույլատրելի է»:</u>***

<u>Ամփոփում</u>

Ամփոփելով գտնում ենք, որ նախաքննության ընթացքում կատարված քննչական գործողության պատշաճ տեսաձայնագրությունը խիստ կարևոր է քրեական վարույթի հետագա ընթացքի համար և՛ դրա համակողմանիության, լրիվության, օբյեկտիվության ու արդարացիության, և՛ դատարանում պատշաճ ապացուցման քրեադատավարական սկզբունքի պահպանման տեսանկյունից: Քննիչը՝ որպես վարույթն իրականացնող մարմին, նախաքննության ընթացքում տեսաձանագրման ենթակա քննչական գործողությունները պետք է կատարի կամ հանձնարարի կատարել բարեխիղճ և արհեստավարժ կերպով՝ առավելագույնս պահպանելով տեսաձայնագրության ամբողջականությունը, տեսանելիությունն ու լսելիությունը, քանի որ, հակառակ դեպքում, ձեռք բերված ապացույցների ձևի ու բովանդակության խնդիրների պատճառով դատարանում հնարավոր չի լինի արդյունավետորեն պաշտպանել մեղադրանքն ու ապացույցների ամբողջ ծավալն օգտագործել հանցավորի մեղավորությունը հաստատելու համար, որը կարող է հանգեցնել մեղավոր անձի անպատիժ մնալուն, ինչպես նաև կիմաստազրկի նախաքննության ընթացքում կատարած քննիչի ամբողջ աշխատանքը:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի, դատական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 01.07.1998 թ. ընդունված, 01.07.2022 թ. ուժը կորցրած:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 30.06.2021 թ. ընդունված, 01.07.2022 թ. ուժի մեջ մտած:

3. «Քննչական գործողության ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցների բնութագիրը և չափանիշները, տեխնիկական միջոցների օգտագործման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվականի ապրիլի 11-ի 401-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2022 թվականի ապրիլի 7-ի N 457-Ն ՀՀ Կառավարության որոշում, 01.07.2022 թ. ուժի մեջ մտած:

4. Արմեն Հովհաննեսի Մանուկյանի վերաբերյալ թիվ ԵԴ1/1691/01/24 քրեական գործով 03.07.2025 թ. դատավճիռ:

5. Կարեն Սարգսի Մխիթարյանի վերաբերյալ թիվ ԼԴ/0090/01/24 քրեական գործով 11.04.2024 թ. «Ապացույցն անթույլատրելի ճանաչելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշում:

6. Կարեն Սարգսի Մխիթարյանի վերաբերյալ թիվ ԼԴ/0090/01/24 քրեական գործով Վերաքննիչ դատարանի 10.11.2024 թ. որոշում:

7. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1: Հեղ. խումբ, գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, 2-րդ լրամշակված հրատ., Եր., «Լուսաբաց հրատարակչատուն», 2017, 632 էջ:

8. **Ղամբարյան Ա., Հովհաննիսյան Ա.,** Ապացուցման միջոցները և ապացուցումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: Գիտաուսումնական ձեռնարկ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան. Եր., ՀՌՀ հրատ., 2025, 615 էջ:

9. Теория доказательств в советском уголовном процессе // Отв. ред. Н.В. Жогин. Изд. 2-е. - М.: Изд. Юридическая литература, 1973. - 736 с.

10. **Шейфер С.А.** Следственные действия. Система и процессуальная форма. - М.: Юрлитинформ, 2001. - 219 с.

11. **Трефилов А.А.** Уголовный процесс зарубежных стран. Том 1 (15). Уголовный процесс Швейцарии. - М.: Изд. НИПКЦ Восход-А, 2016. - 1012 с.

ПРОБЛЕМЫ АУДИОВИДЕОЗАПИСИ СЛЕДСТВЕННЫХ ДЕЙСТВИЙ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Аннотация

Действующий Уголовно-процессуальный кодекс Республики Армения (далее также – УПК), в определенной степени решая вопрос правового регулирования применения технических средств в ходе следственных действий, тем не менее в правоприменительной практике привел к различным подходам к порядку их использования, сформировав противоречивую следственную практику, которая не в полной мере соответствует сущности фундаментальных принципов уголовного судопроизводства.

В рамках статьи предметом обсуждения становятся проблемы, часто встречающиеся на практике в условиях требования обязательной аудиовидеозаписи следственных действий, а также конструкции их решения.

Осознавая высокую рабочую нагрузку следователей, мы в то же время считаем недопустимым несоблюдение в содержательном аспекте требований целостности, видимости и слышимости аудиовидеозаписи и полагаем, что ненадлежащим образом зафиксированное с помощью аудиовидеозаписи следственное действие может повлечь серьезные процессуальные осложнения – от невозможности его исследования в суде до признания доказательства недопустимым.

Необходимость обращения к рассматриваемой проблеме еще более усиливается в связи с тем, что законодатель Республики Армения, по сути, отказавшись от консервативного уголовно-процессуального подхода, впервые в действующем Уголовно-процессуальным кодексом Республики Армения предпринял попытку урегулировать вопрос применения технических средств в ходе уголовного судопроизводства.

Именно данным обстоятельством обусловлена объективная необходимость рассмотреть порядок и условия эффективного применения технических средств в уголовном судопроизводстве.

В статье с использованием методов сравнительного права, системного анализа и других научных методов обосновывается особая важность и значение надлежащей аудиовидеозаписи следственных действий в ходе уголовного судопроизводства, а также раскрывается ее криминалистическое содержание.

Ключевые слова: следственные действия, протокол следственного действия, аудиовидеозапись, технические средства.

ISSUES OF AUDIOVISUAL RECORDING OF INVESTIGATIVE ACTIONS IN THE CRIMINAL PROCEDURE OF THE REPUBLIC OF ARMENIA

Annotation

The current Criminal Procedure Code of the Republic of Armenia (hereinafter also referred to as the CPC), while to a certain extent resolving the issue of legal regulation of technical means during investigative actions, has, nevertheless, in law enforcement activity, led to various manifestations of its application, forming an investigative practice that is contradictory and not consistent with the essence of the fundamental principles of criminal procedure.

Within the framework of the article, the subject of discussion includes the problems frequently encountered in practice under the conditions of the mandatory audio-video recording requirement during investigative actions, as well as the mechanisms for their resolution. While recognizing the workload of investigators in Armenia, we consider it unacceptable not to maintain the requirements of integrity, visibility, and audibility of the recording in a substantive sense. We find that an improperly recorded investigative action can cause diverse procedural complications - from the impossibility of examination in court to the inadmissibility of evidence.

The necessity of addressing this situation is exacerbated by the fact that the Armenian legislator, essentially abandoning conservative criminal procedural thinking, has, with the current CPC, made the first attempt to regulate the application of technical means during proceedings. This gives rise to an objective necessity to discuss the conditions for the effective application of technical means in criminal proceedings. Using comparative, systemic, and other methods, the article substantiates the special importance of proper recording of investigative actions during criminal proceedings and reveals its forensic content.

Keywords: investigative actions, protocol of investigative action, audiovisual recording, technical means.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 15.01.2026 թ., տրվել է գրախոսության 20.01.2026 թ., ընդունվել է տպագրության 30.01.2026 թ.:

DOI: 10.59560/18291155-2026.1-301

ԱՐԱՐԱՏ ԵԳԱՆՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
Իրավագիտության ֆակուլտետի
երրորդ կուրսի ուսանող
ORCID ID: 0009-0002-7140-4574

Գիտական ղեկավար՝ ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
Իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ՈՉ ԻՐԱՎԱՉԱՓ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՈՉ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

Ամփոփագիր

Հոդվածում համակողմանի ուսումնասիրված են ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով հիմնարար իրավունքի խախտման դեպքում ոչ գույքային վնասին առնչվող մի շարք հիմնախնդիրներ: Ուսումնասիրության արդյունքում ներկայացված առաջարկների համար հետազոտվել են թե՛ ներպետական և թե՛ միջազգային դատական պրակտիկան, անդրադարձ է կատարվել տեսական իրավական ուսումնասիրությունների մեջ առաջ քաշված մի շարք պնդումների:

Ուսումնասիրության նպատակն է ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով հիմնարար իրավունքի խախտման դեպքում ոչ գույքային վնասի հատուցում ստանալու նախապայմանների, ոչ գույքային վնասի առկայության ապացուցման հետ կապված հիմնահարցերի բացահայտումը, ինչպես նաև ներողության միջոցով ոչ գույքային վնասի հատուցման, իրավաբանական անձի կողմից հատուցում ստանալու հնարավորությունների բացահայտումը:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ՝

- ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով հիմնարար իրավունքի խախտմամբ կարող է ոչ գույքային վնաս հասցվել նաև իրավաբանական անձանց,

- ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով հիմնարար իրավունքի խախտման փաստը կարող է հաստատվել թե՛ նախնական, թե՛ հետագա փուլում,

- վարչական վարույթի կամ դատավարության ընթացքում հիմնարար իրավունքի խախտման փաստի ապացուցման դեպքում պետք է գործի ոչ գույքային վնաս հասցված լինելու կանխավարկածը,

- որպես վարչական մարմնի կողմից ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի հատուցում կարող է պահանջվել ներողություն խնդրել:

Հիմնաբառեր. ոչ իրավաչափ վարչարարություն, ոչ գույքային վնաս, հիմնարար իրավունքներ, բարոյական վնաս, ոչ նյութական վնաս, վարչական իրավունք:

Ներածություն

Սույն գիտական հոդվածի նպատակն է ուսումնասիրել ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով հիմնարար իրավունքի խախտման դեպքում ոչ գույքային վնասի հատուցում ստանալու նախապայմանները: Այդ նախապայմանների մասով դատական պրակտիկայում առկա են մի շարք հակասական դատական ակտեր, որոնցով էլ պայմանավորվում է սույն ուսումնասիրության արդիականությունը: Ուսումնասիրության նպատակներից են նաև ոչ գույքային վնասի առկայության ապացուցման հետ կապված հիմնահարցերի բացահայտումը, ինչպես նաև ներողության միջոցով ոչ գույքային վնասի հատուցման, իրավաբանական անձի կողմից հատուցում ստանալու հնարավորությունների բացահայտումը: Նշենք նաև, որ վերոնշյալ հարցերից որոշները (օրինակ՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ վնաս հասցնելու դեպքում ներողության միջոցով վնասի հատուցման ինստիտուտը) ընդհանրապես ուսումնասիրված չեն հայ իրավագիտության մեջ:

Ուսումնասիրության խնդիրն է գիտական հոդվածի առարկա կազմող հարցերի վերաբերյալ դատական պրակտիկայում առկա հակասությունների վերացումը, ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով հիմնարար իրավունքի խախտման դեպքում ոչ գույքային վնասի հատուցում ստանալու նախապայմանների բացահայտումը, փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող սուբյեկտների կազմի բացահայտումը, վնաս հասցված լինելու փաստի ապացուցման որոշ հարցերի հստակեցումը:

Ոչ գույքային վնասի հասկացությունը

Վնասի ինստիտուտի կարգավորումը գլխավորապես կարգավորվում է Քաղաքացիական օրենսգրքով: Ըստ վերոնշյալ օրենսգրքի 17-րդ հոդվածի՝ վնասը

կարող է լինել նյութական և ոչ նյութական: Նյութական վնասն իր հերթին բաղկացած է իրական վնասից և բաց թողնված օգուտից: Մյուս տեսակը ոչ նյութական վնասն է, որը իրավաբանական համայնքին հայտնի է տարբեր եզրույթներով: Մի շարք իրավական ակտերի մեջ, դատական պրակտիկայում այս ինստիտուտը բնորոշվում է որպես *«բարոյական վնաս»*[1], *«ոչ գույքային վնաս»*[2], *«ոչ նյութական վնաս»*[3] անվանումներով[4]: Այս հասկացությունները մի շարք իրավական ակտերում իրավացիորեն նույնացվում են[5], ուստի՝ գտնում ենք, որ ելնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի պահանջներից, անհրաժեշտ է բոլոր իրավական ակտերում ապահովել եզրույթների միասնականությունը և ընտրել վերոնշյալ հասկացություններից մեկը՝ հետագա խառնաշփոթից խուսափելու համար:

2014 թվականին Քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում ավելացվել է 162[1]-րդ հոդվածը, որը սահմանում է «ոչ նյութական վնաս» հասկացությունը: Ըստ վերոնշյալ նորմի՝ *«Սույն օրենսգրքի իմաստով ոչ նյութական վնասը ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է, որն առաջացել է անձին ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող նյութական կամ ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգող կամ նրա անձնական գույքային կամ ոչ գույքային իրավունքները խախտող որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ»*: Մինչև վերոնշյալ հասկացության սահմանումը տարբեր նորմատիվ իրավական ակտերում առկա էր ոչ նյութական վնասի ինստիտուտ, որոնք, սակայն, չէին բացահայտում տվյալ եզրույթների բովանդակությունները (օրինակ՝ ՎԻՎ օրենսգիրք, հոդված 268, ՎՀՎՎ մասին օրենք, հոդված 104, Գովազդի մասին ՀՀ օրենք, հոդված 23, նախկին Քրեական օրենսգիրք և այլն): Հետաքրքրական է, որ թեև 1998 թվականին ընդունված Քաղաքացիական օրենսգիրքը չէր պարունակում ոչ նյութական վնասի ինստիտուտ, սակայն 1964 թվականին ընդունված Քաղաքացիական օրենսգրքի մեջ 1997 թվականին ավելացվել էր «Բարոյական վնաս» վերտառությամբ հոդված, որը, չսահմանելով այդ եզրույթի հստակ հասկացությունը, նախատեսել էր պաշտպանություն ոչ նյութական իրավունքները խախտող կամ քաղաքացուն պատկանող այլ ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգող գործողություններից:

[1] ՎԻՎ օրենսգիրք, 268-րդ հոդված:

[2] «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, 105-րդ հոդված:

[3] Քաղաքացիական օրենսգիրք, 17-րդ հոդվածի 3-րդ մաս:

[4] Հոդվածի հետագա շարադրանքում օգտագործված վերոնշյալ եզրույթներն ունեն նույնաբովանդակ իմաստ:

[5] ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը քաղաքացի Արթուր Խաչատրյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, ՍԴՈ-1121:

Ոչ գույքային վնասի ինստիտուտը շատ ավելի տարածված է անգլոսաքսոնական իրավական համակարգերում, որտեղ այն բավականին մեծ ազդեցություն է ունեցել իրավական պրակտիկայի զարգացման վրա: Ի հակադրումն դրա՝ բարոյական վնասի ինստիտուտը տասնամյակներ շարունակ սոցիալիստական երկրների իրավական համակարգերի կողմից համարվել է անընդունելի: 1953 թվականի «Իրավաբանական բառարանում» ասվում էր. *«Ոչ գույքային կամ այսպես կոչված բարոյական վնասի դրամական հատուցումը սովետական մարդու արժանապատվությունը նվաստացնում է և համաձայն գործող օրենսդրության՝ տեղ չի կարող ունենալ»,* այս մոտեցումը հետագայում դրվել է նաև խորհրդային այլ իրավաբանների մոտեցումների հիմքում: Վ. Սմիրնովը և Ա. Սոբչակը անժխտելիորեն պնդում էին, որ բարոյական վնասը զուրկ է տնտեսական բովանդակությունից և նյութական հատուցման ենթակա չէ[1]: Այսինքն՝ խորհրդային գիտնականները պնդում էին, որ նվաստացուցիչ է ի հատուցումն բարոյական վնասի պահանջել գումար:

Այնուամենայնիվ, Սահմանադրական դատարանի որոշումների արդյունքում ՀՀ-ի իրավական համակարգ մուտք գործեց ոչ գույքային վնասի ինստիտուտը, ապա նաև ընդլայնվեց դրա սահմանափակ կիրառման ոլորտը:

ՍԴՈ-1383 որոշման իրավական նշանակությունը ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով հիմնարար իրավունքի խախտմամբ պատճառված ոչ գույքային վնասի դեպքում

Մինչև ՍԴՈ-1383 որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 104-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում էր ոչ գույքային վնասի հատուցում ֆիզիկական անձի հիմնարար իրավունքների խախտման միայն հետևյալ դեպքերում՝

- ազատության սահմանափակում,
- անձեռնմխելիության խախտում,
- բնակարանի անձեռնմխելիության խախտում,
- անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիության խախտում,
- պատվի, բարի համբավի կամ արժանապատվության արատավորում:

Ուստի՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի հատուցման իրավունքը նախատեսված էր սահմանափակ թվով սահմանադրական

[1] **Հովհաննիսյան Կ.,** «Բարոյական վնասի հատուցման հիմնախնդիրները և նշված ինստիտուտի առավել վիճահարույց ասպեկտները»: «Արդարադատություն»:

իրավունքների՝ ՀՀ Սահմանադրության 23-րդ, 25-րդ, 27-րդ, 31-րդ և 32-րդ հոդվածների խախտման դեպքերում:

ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածը սահմանում է, որ «*յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք*», իսկ 75-րդ հոդվածը՝ *«հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր»*:

Սահմանադրական դատարանը, իր որոշման հիմքում դնելով այն հանգամանքը, որ մարդու հիմնարար իրավունքների սահմանումը առանց դրանց խախտմամբ հասցված ոչ գույքային վնասի դեպքում հատուցում ստանալու իրավունքի այդ հիմնարար իրավունքները դարձնում է հռչակագրային և ոչ արդյունավետ, քննության առավ Օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը և հակասահմանադրական ճանաչեց դրա մեջ առկա օրենսդրական բացը, սահմանելով, որ *«մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումների հստակեցումը և իրավակարգավորման բացի հաղթահարումը ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի հատուցման հնարավորությունը պետք է ապահովվի Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերում և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ <u>մարդու և քաղաքացու բոլոր հիմնական իրավունքների խախտման դեպքերում</u>»:*

Սահմանադրական դատարանի այս որոշման արդյունքում վարչական մարմինների վրա դրվեց պարտականություն փոխհատուցելու ոչ միայն օրենքով նախատեսված իրավունքների խախտումների, այլ նաև բոլոր հիմնարար իրավունքների խախտումների դեպքում պատճառված ոչ գույքային վնասը: Հիմնարար իրավունքները ներառում են թե՛ ներպետական, թե՛ միջազգային պայմանագրերով նախատեսված հիմնարար իրավունքները:

Թեև ՍԴՈ-1383 որոշմամբ անդրադարձ չի կատարվել այդ հանգամանքին, այնուամենայնիվ որոշման էությունից բխում է, որ հակասահմանադրական է նաև Օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի այն հատվածը, որի համաձայն ոչ գույքային վնասը ենթակա է փոխհատուցման միայն ֆիզիկական անձանց: ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածի համաձայն՝ «*Հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և*

ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ»: Սակայն ակնհայտ է, որ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում կարող է վնաս հասցվել նաև իրավաբանական անձանց:

Դիտարկենք մի օրինակ. ՊԵԿ-ի ոչ իրավաչափ ստուգումների արդյունքում ընդունվել է ստուգման ակտ, որով սահմանվել է, որ իրավաբանական անձը չի կատարում իր հարկային պարտավորությունները: Այս որոշման արդյունքում իրավաբանական անձի բարի համբավին հասցվել է վնաս, քանի որ վերջինս հասարակության շրջանում հայտնի է դարձել որպես ձեռնարկատիրական անբարեխիղճ գործունեություն իրականացնող սուբյեկտ: Ուստի՝ Օրենքի քննարկվող հոդվածի բառացի մեկնաբանությունից բխում է, որ այն հատուցման ենթակա է համարում միայն ֆիզիկական անձին պատճառված ոչ գույքային վնասը:

Կարծում ենք, որ ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածից և Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1383 որոշման էությունից և անուղղակի մեկնաբանությունից հետևում է նաև, որ սույն հոդվածը հակասահմանադրական է նաև այն մասով, որ չի նախատեսում իրավաբանական անձի ոչ գույքային վնասի հատուցում, երբ խախտվում են վերջինիս հիմնարար իրավունքները:

Հատկանշական է, որ ցանկացած իրավիճակում, երբ որևէ անձի նկատմամբ տեղի է ունեցել ոչ իրավաչափ վարչարարություն, վերջինիս հիմնարար իրավունքներից առնվազն մեկը միշտ խախտվում է. այն է ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածով երաշխավորված պատշաճ վարչարարության իրավունքը:

Ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի պահանջի նախապայմանները

Ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի ինստիտուտը սերտորեն առնչվում է քաղաքացիական իրավունքի վնասի ինստիտուտին և բխում է դրանից: Վնասի հատուցումը քաղաքացիական իրավունքում տեղի է ունենում միայն որոշակի նախապայմանների առկայության դեպքում. դրանք են իրավունքը խախտած անձի ոչ օրինաչափ վարքագծի, վնասի, վնասի ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը[1]:

Ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի դեպքում ևս Վճռաբեկ դատարանը մշակել է որոշակի նախապայմաններ՝ հաշվի առնելով այս ինստիտուտի առանձնահատկությունները վարչական իրավունքում: Վճռաբեկ դատարանը, քննության

[1] ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը քաղաքացիական գործ թիվ ՀՔԴ3/0016/02/08 մասին:

առնելով թիվ ՎԴ/1761/05/14 վարչական գործը, տվել է նախադեպային նշանակություն ունեցող մեկնաբանություն, որի համաձայն՝ «*(...) վարչական մարմինների վարչարարության արդյունքում պետության պատասխանատվությունը ծագում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում*՝

- իրականացվել է ոչ իրավաչափ (իսկ նույն օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև իրավաչափ) վարչարարություն,

- պատճառվել է վնաս,

- իրականացված վարչարարության և պատճառված վնասի միջև առկա է պատճառահետևանքային կապ»:

Նախ նշենք, որ առաջին նախապայմանը կարող է առկա լինել միայն այն դեպքում, երբ վարչական մարմնի վարչարարությունը, որով անձին վնաս է հասցվել, վարչական կամ դատական կարգով ճանաչվել է ոչ իրավաչափ: Նախապայմանների համակարգային ուսումնասիրությունը թույլ է տալիս ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում ստանալու գործընթացը պայմանականորեն բաժանել երկու փուլի՝ <u>*նախնական*</u> և <u>*հետագա*</u>: Նախնական փուլում անհրաժեշտ է վարչական կամ դատական կարգով վիճարկել վարչարարության իրավաչափությունը, վարչական ակտով կամ վճռով հաստատել, որ անձի նկատմամբ իրականացված վարչարարությունը անօրինական է: Հետագա փուլում անհրաժեշտ է վարչական կարգով պահանջ ներկայացնել վնաս հասցրած վարչական մարմնին տվյալ վնասի հատուցման համար, իսկ մերժում ստանալու դեպքում՝ հայց ներկայացնել դատարան. այս փուլում անհրաժեշտ է ապացուցել մյուս երկու նախապայմանների՝ վարչարարությամբ հասցված վնասի և վարչարարության ու պատճառված վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Վերոնշյալ նախապայմանների առկայությունը, համաձայն Վճռաբեկ դատարանի դիրքորոշման, ընդհանուր է թե՛ գույքային և թե՛ ոչ գույքային վնասի հատուցման պահանջ ներկայացնելու դեպքում: Այնուամենայնիվ որոշ գիտնականներ գտնում են, որ սույն նախապայմանները ենթակա են լրացման, եթե վարչական մարմնին կամ դատարանին ներկայացվում է ոչ գույքային վնասի հատուցման պահանջ: Ըստ վերջիններիս՝ ոչ գույքային վնասի հատուցման դեպքում վարչական կամ դատական կարգով ոչ միայն պետք է հաստատել վարչարարության ոչ իրավաչափ լինելը, այլ նաև ոչ իրավաչափ վարչարարությամբ հիմնարար իրավունքի խախտման փաստը[1]:

[1] **Գեղամյան Է., Հակոբջանյան Ա.,** Վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման նախապայմանների վերաբերյալ որոշ հիմնահարցեր: «Արդարադատություն», 2022 թ., 1 (56):

Այնուամենայնիվ, նման դիրքորոշման հետ համաձայնել չենք կարող: Օրենքի 96-րդ հոդվածը որպես վնասի հատուցման նախապայման սահմանում է միայն վարչարարության ոչ իրավաչափ ճանաչումը՝ որևէ նշում չպարունակելով այն պահանջի մասին, որ ոչ գույքային վնասի դեպքում անհրաժեշտ է հիմնարար իրավունքի խախտման փաստի հաստատումը: Դեռ ավելին, նման պահանջ չի բխում նաև Օրենքի 104-րդ հոդվածի բովանդակությունից, որը վերաբերում է ոչ գույքային վնասի հատուցմանը: Սույն հոդվածի բովանդակությունը որևէ կերպ չի սահմանափակում վարչական մարմնին և դատարանին հիմնարար իրավունքի խախտման փաստը հաստատել ոչ թե նախնական փուլում, այլ հետագա:

Նշված դիրքորոշման կողմնակիցները ի հավաստումն իրենց կարծիքի մատնանշում են Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, որը վերջինս հայտնել է թիվ ԵԿԴ/3296/02/14 քաղաքացիական գործի շրջանակներում: Այդ որոշման մեջ Վճռաբեկ դատարանը նշել է, որ *«Հայաստանի Հանրապետությունում հատուցման է ենթակա միայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից պատճառված ոչ նյութական վնասը: Ընդ որում, վերոնշյալ անձանց կողմից կատարված խախտումը չպետք է լինի ենթադրյալ խախտում: Այդ խախտումը պետք է հաստատված լինի դատարանի կամ քրեական հետապնդման մարմնի կողմից»*: Առաջին հայացքից թվում է, որ վերոնշյալ պահանջը վերաբերում է նաև ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով հիմնարար իրավունքի խախտմամբ պատճառված ոչ գույքային վնասին, սակայն անհրաժեշտ է էլ ավելի խորությամբ ուսումնասիրել վերոնշյալ որոշումը և Քաղաքացիական օրենսգրքի համապատասխան կարգավորումները:

Նախ նշենք, որ Օրենքի 3-րդ հոդվածը նախատեսում է *«վարչարարություն»* հասկացության բովանդակությունը, որի համաձայն՝ վարչարարությունը վարչական մարմինների՝ արտաքին ներգործություն ունեցող գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ: Ակնհայտ է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից կատարված ցանկացած գործողություն չէ, որը հանդիսանում է վարչարարություն: Նույն հոդվածի 1-ին մասով նախատեսվում են բոլոր այն մարմինները, որոնք հանդիսանում են վարչական մարմին: Դրանք են՝ ա) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության նախարարություններ, ինչպես նաև Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ

մարմիններ, բ) տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետներ, գ) տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար:

Ակնհայտ է, որ *«վարչական մարմիններ»* և Վճռաբեկ դատարանի կողմից օգտագործված «*պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ պաշտոնատար անձ*» հասկացությունների բովանդակությունը նույնական չէ և վերջինս ավելի լայն բովանդակություն ունի՝ ի համեմատություն վարչական մարմինների: Որպես օրինակ նշենք, որ դատարանների կողմից դատական ակտերի կայացումը ևս կարող ենք դիտարկել որպես պետական մարմինների կողմից իրականացվող գործունեություն, որի արդյունքում ևս կարող է պատճառվել վնաս: Նման իրավիճակի օրինակ կարող է հանդիսանալ թիվ ԵԴ/54146/02/22 քաղաքացիական գործը, որի շրջանակներում «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ն հայց էր ներկայացրել ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ պահանջելով հատուցել ոչ ողջամիտ ժամկետներում արդար դատաքննության իրավունքի խախտման հետևանքով առաջացած ոչ նյութական վնասը, ինչը գործի քննության արդյունքում բավարարվել էր: Ակնհայտ է, որ սույն գործով քննության է առնվել ոչ թե վարչական մարմնի, այլ դատարանի գործունեության հետևանքով առաջացած վնասին առնչվող գործ, որի վրա տարածվում էր Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/3296/02/14 քաղաքացիական գործի շրջանակներում հայտնած դիրքորոշումը: Ակնհայտ է նաև, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից վարչարարություն չի իրականացվում:

Սակայն անդրադառնանք այն հարցին, թե ինչու վերոնշյալ որոշման մեջ հայտնած դիրքորոշումը ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի գործերի վրա չի տարածվում: Վճռաբեկ դատարանի վերոնշյալ դիրքորոշումը հիմնված է Քաղաքացիական օրենսգրքի 162[1]-րդ հոդվածի վրա, որի 5-րդ մասը նախատեսում է, որ *«ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»*: Սա նշանակում է, որ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/3296/02/14 քաղաքացիական գործի շրջանակներում հայտնած դիրքորոշումը տարածվում է բոլոր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ պաշտոնատար անձանց այն գործողությունների վրա միայն, որոնք վարչարարություն չեն հանդիսանում: Տարբեր է նաև վերոնշյալ գործերի ենթակայությունը դատական համակարգում. բացառությամբ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի հատուցման հետ կապված գործերի, որոնք քննվում են վարչական դատավարության կարգով, մյուս՝ վարչարարություն չհանդիսացող գործողություններով պետական կամ տեղական

ինքնակառավարման մարմինների կողմից հասցված ոչ նյութական վնասի հատուցման գործերը քննվում են քաղաքացիական դատավարության կարգով: Հետևաբար՝ սխալ ենք համարում նաև դատարանի կողմից թիվ ՎԴ/2108/05/19 և թիվ ՎԴ/2308/05/18 վարչական գործերով կայացված վճիռները, որոնք մերժել են ոչ գույքային վնասի հատուցումը՝ հիմնվելով Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշման վրա:

Այնուամենայնիվ, չենք բացառում նաև, որ դատարանը ճանաչման հայցի շրջանակներում նաև նախնական փուլում ճանաչի հիմնարար իրավունքի խախտման փաստը, եթե նման պահանջ ներկայացվել է իրեն հայցադիմումով: Նման փաստը, հանդիսանալով նախադատելի, հետագա փուլում ապացուցման կարիք չի ունենա:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք փաստել, որ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով հիմնարար իրավունքի խախտմամբ պատճառված ոչ գույքային վնասը ենթակա է հատուցման հետևյալ նախապայմանների առկայության դեպքում՝

- իրականացվել է ոչ իրավաչափ վարչարարություն, ինչը ճանաչվել է վարչական կամ դատական կարգով (ապացուցման է ենթակա նախնական փուլում)
- խախտվել է մարդու հիմնարար իրավունքը (ապացուցման է ենթակա հետագա փուլում)
- պատճառվել է վնաս (ապացուցման է ենթակա հետագա փուլում),
- իրականացված վարչարարության և պատճառված վնասի միջև առկա է պատճառահետևանքային կապ (ապացուցման է ենթակա հետագա փուլում):

Հիմնարար իրավունքի խախտման արդյունքում ոչ գույքային վնաս կրելու փաստի ապացուցումը

Մի շարք վեճերի տեղիք է տալիս այն հարցը, թե ում վրա պետք է դրվի ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով հիմնարար իրավունքի խախտմամբ ոչ գույքային վնասի հասցված կամ չհասցված լինելու փաստի ապացուցման պարտականությունը՝ հատուցում պահանջող կողմի՞, թե՞ վարչական մարմնի:

Տեսության մեջ առկա է մոտեցում, որի համաձայն այդ պարտականությունը պետք է դրվի հատուցում պահանջող կողմի վրա, քանի որ ՄԻԵԴ պրակտիկան այս դեպքում կիրառելի չէ: Ի հիմնավորումն այս պնդման՝ նշվում է, որ անձը իրավունք ունի արդարացի փոխհատուցում ակնկալել միայն ՄԻԵԴ-ին դիմելու դեպքում, հետևաբար վերջինիս պրակտիկան այս հարցի լուծման համար էական նշանակություն ունենալ չի կարող: Այս տեսակետի կողմնակիցները նշում են նաև, որ *«օբյեկտիվ իրականության*

մեջ դժվար է պատկերացնել այնպիսի իրավիճակ, երբ վարչական մարմինը կարողանա ապացուցել փուժողին վնաս չպատճառած լինելու հանգամանքը»[1]:

Այնուամենայնիվ, այս մոտեցման հետ ևս համաձայնել չենք կարող:

Նախ անդրադառնանք ՄԻԵԴ պրակտիկայի կիրառելիության թույլատրելիության հարցին: ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածը սահմանում է, որ *«1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»*: ՄԻԵԴ-ը հանդիսանում է նմանատիպ մարմին, ուստի՝ դրա պրակտիկան պարտադիր է հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթները մեկնաբանելիս: ՄԻԵԴ նախագահի կողմից 2007 թվականի մարտի 28-ին տրված և 2022 թվականի հունիսի 9-ին փոփոխված գործնական ուղեցույցի մեջ նշված է, որ *«(…) ենթադրյալ խախտման և բարոյական վնասի միջև պատճառահետևանքային կապը հաճախ ողջամտորեն ենթադրելի է, ուստի դիմումատուները պարտավոր չեն ներկայացնել իրենց տառապանքի վերաբերյալ որևէ լրացուցիչ ապացույց»*[2]: Այս մեկնաբանությունից բխում է, որ ՄԻԵԴ-ը հիմնարար իրավունքի խախտումը բավարար է համարում ոչ նյութական վնասի հասցված լինելու փաստը ապացուցված համարելու համար: Գտնում ենք, որ այս մեկնաբանությունը չի վերաբերում ՄԻԵԴ-ի դատավարական նորմերի կիրառելիությանը, ուստի ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի ուժով պարտադիր է նաև ՀՀ դատական համակարգի համար:

Անդրադառնանք նաև վարչական վարույթի ընթացքում ապացուցման պարտականության բաշխման հարցին: Օրենքի 10-րդ հոդվածը վարչարարության հիմնարար սկզբունք է սահմանում հավաստիության կանխավարկածը: Այս սկզբունքի համաձայն՝ *«Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: // Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով: // Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի*

[1] **Գեղամյան Է., Հակոբջանյան Ա.,** Վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման նախապայմանների վերաբերյալ որոշ հիմնահարցեր: «Արդարադատություն», 2022 թ., 1 (56):

[2] Just satisfaction claims, Practice Directions, Guide.

անձանց ներկայացրած փվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար»: Այս սկզբունքի նպատակն է բարձրացնել վստահության մակարդակը վարչական մարմինների և անձանց միջև[1]: Սույն սկզբունքի նպատակահարմարության բարձրացման համար էական նշանակություն ունի նաև Քրեական նոր օրենսգրքի 504-րդ հոդվածը, որը քրեական պատասխանատվություն է սահմանում վարչական գործով կամ վարչական վարույթով սուտ բացատրություն, ցուցմունք տալու համար, եթե դա էական նշանակություն է ունեցել գործի լուծման համար կամ խաթարել է գործի կամ վարույթի ընթացքը:

Թիվ ՎԴ/7522/05/17 վարչական գործի շրջանակներում սույն սկզբունքի կիրառելիությանն անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանը: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե ինչ միջոցներով կարող է անձը վարչական մարմնի հետ փոխհարաբերություններում կատարել իր համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը և ինչ հետևանք կարող է ունենալ նրա կողմից այդ պարտականությունը չկատարելը: Վճռաբեկ դատարանն իր որոշման մեջ հանգել է այն եզրակացությանը, որ *«վարչական մարմնի հետ փոխհարաբերություններում իր համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունն անձը կարող է կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված ապացույցներ ներկայացնելու միջոցով, որոնցում պարունակվող փվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Միևնույն ժամանակ օրենսդիրը վարչական մարմնին պարտավորեցրել է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ անձանց ներկայացրած փվյալների, տեղեկությունների իսկության մեջ հավաստիանալու համար, եթե հիմնավոր կասկածներ ունի այդ փվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ: Ընդ որում, վարչական մարմնի կողմից անհրաժեշտ միջոցները պետք է ձեռնարկվեն օրենքին համապատասխան, իսկ ձեռք բերված ապացույցները պետք է համապատասխանեն օրենքի պահանջներին, որպեսզի դրանք համարվեն թույլատրելի, ենթակա լինեն հետազոտման և գնահատման»*[2]: Այս որոշումից բխում է, որ եթե անձը

[1] **Թովմասյան Հ., Մուրադյան Գ., Թորոսյան Հ., Գրիգորյան Վ., Պողոսյան Վ.,** «Հարցեր և պատասխաններ Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ: Երևան, Տիգրան Մեծ, 2015, էջ 42:

[2] ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը վարչական գործ թիվ ՎԴ/7522/05/17 մասին:

դիմում է ներկայացրել վարչական մարմնին իր հիմնարար իրավունքի խախտման հետևանքով պատճառված ոչ գույքային վնասի հատուցման վերաբերյալ բարենպաստ վարչական ակտ ընդունելու պահանջով և վարչական վարույթի ժամանակ ապացույցներ է ներկայացրել իր պահանջի հիմնավորման համար, ապա դրանք համարվում են հավաստի, քանի դեռ դրանք բավարար ապացույցներով չեն հերքվել վարչական մարմնի կողմից: Նշենք, որ Օրենքի 42-րդ հոդվածի համաձայն վարչական վարույթի ընթացքում ապացույցներ են հանդիսանում բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ վարչական մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար: Ուստի՝ անձը լրիվ ազատ է իր պահանջների հիմքում դրված փաստերն ապացուցելու բացատրությունների, ցուցմունքների միջոցով:

Ուստի՝ գտնում ենք, որ հիմնարար իրավունքի խախտման դեպքում պետք է գործի այն կանխավարկածը, որ անձը կրել է ոչ գույքային վնաս:

Հիմնական իրավունքի խախտման վերացումը ներողություն խնդրելով

Հետաքրքրական է՝ արդյո՞ք Օրենքը թույլ է տալիս վարչական մարմնի կողմից ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասը հատուցել ներողություն խնդրելով:

Օրենքի 97-րդ հոդվածը սահմանում է, թե ինչ եղանակներով կարող է հատուցվել վնասը: Այդ եղանակներն են վարչարարությամբ առաջացած հետևանքները վերացնելը կամ դրամական միջոցներով հատուցելը: Օրենքի 98-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ «*եթե վնասը որևէ փաստացի դրության՝ ի վնաս անձի փոփոխության մեջ է, ապա պատասխանատվություն կրողը պարտավոր է վերացնել դրա առաջացրած հետևանքները՝ նախկին դրության, իսկ եթե դա անհնար կամ անարդյունավետ է, ապա դրան համարժեք այլ դրության վերականգնման միջոցով*»: Իսկ Օրենքի 99-րդ հոդվածը նշում է, որ «*Պատասխանատվություն կրողը վնասը հատուցում է դրամական միջոցներով, եթե հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չէ, կամ հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատճառված գույքային վնասը*»:

Օրենքի իրավական վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ այն վնասի հատուցման եղանակների մեջ նախապատվությունը տալիս է նախ նախկին դրության վերականգնմանը, ապա եթե դա հնարավոր կամ արդյունավետ չէ՝ նախկին դրությանը համարժեք դրության վերականգնմանը: Եթե այս երկու եղանակներով հատուցումը

հնարավոր կամ բավարար չէ, ապա կիրառելի է արդեն դրամական հատուցման եղանակը:

Որպես կանոն՝ թե՛ ներպետական և թե՛ միջազգային իրավական պրակտիկայում ընդունված է ոչ գույքային վնասը հատուցել դրամական եղանակով, սակայն չի բացառվում դա անել նաև այլ՝ նախկին դրության կամ դրան համարժեք դրության վերականգնման եղանակով: Այդպիսի հնարավորություն տալիս է ներողություն խնդրել պարտավորեցնելու ինստիտուտը, որը բավականին արդյունավետորեն կիրառվում է քաղաքացիական իրավունքի շրջանակներում՝ որպես պատվի կամ արժանապատվությանը պատճառված ոչ նյութական վնասի հատուցման եղանակ:

Դատական պրակտիկայում առկա է առնվազն մեկ դատական գործ, որի շրջանակներում Վարչական դատարանը վարույթ է ընդունել Արա Զոհրաբյանի հայցն ընդդեմ ՀՀ ՆԳՆ Ոստիկանության[1]: Այդ դատական գործի շրջանակներում հայցվորը պահանջել է *պաշտոնապես ներողություն խնդրել Արա Գագիկի Զոհրաբյանից՝ ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից 26.11.2021 թվականին Արա Գագիկի Զոհրաբյանին Երևան քաղաքի Սախարովի հրապարակի մոտից ապօրինի ձերբակալելու գործողությամբ պատվի ու արժանապատվության իրավունքները խախտելու համար»*: Վարչական դատարանը սկզբում վերադարձրել է հայցադիմումը՝ նշելով, որ *«վերլուծելով հայցադիմումով ներկայացված փաստական հանգամանքները վերը նշված իրավական նորմերի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Դատարանն արձանագրում է, որ հայցվոր Արա Զոհրաբյանը չի պահպանել ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգը: (…) Այս համատեքստում, Դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ հայցվորի 1-ին պահանջն, ըստ էության, չի կարող քննարկվել Օրենսգրքի[2] շրջանակներում՝ հաշվի առնելով, որ այն ինքնին փոխկապակցված չէ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքից բխող վնասի հատուցման ինստիտուտի հետ և առավելապես վերաբերում է քաղաքացիահրավական հարաբերություններին»*:

Սույն որոշումը հայցվորի կողմից բողոքարկվել է Վերաքննիչ վարչական դատարան, ինչի արդյունքում վերաքննիչ բողոքը բավարարվել է, իսկ որոշումը՝ վերացվել: Վերաքննիչ բողոքը բավարարելու որոշման մեջ Վերաքննիչ վարչական դատարանը նշել է՝ *«Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ հայցվորը պահանջում*

[1] Թիվ ՎԴ/6004/05/23 վարչական գործ:

[2] Դատական ակտի իմաստով՝ Վարչական դատավարության օրենսգիրք:

է պատասխանող ՀՀ ՆԳՆ ոստիկանությանը ընդունելու ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված ոչ գույքային վնասը հատուցող վարչական ակտ: Ընդ որում, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, որպես պատվի ու արժանապատվության իրավունքները խախտելու արդյունքում առաջացած ոչ նյութական վնասի հատուցում, հայցվորը պահանջում է ներողություն խնդրել՝ հետևանքների վերացման՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված վնասի հատուցման եղանակով»: Ուստի՝ Վերաքննիչ վարչական դատարանը թույլատրելի է համարել ներողություն խնդրելու միջոցով վնասի հատուցում ստանալը՝ այն դիտարկելով որպես հետևանքների վերացման եղանակ:

Գտնում ենք, որ այս եղանակով վնասի հատուցումը հետխորհրդային երկրներում, որտեղ երկար տարիներ անընդունելի է համարվել բարոյական վնասի դիմաց դրամական հատուցում պահանջելը, կարող է բավականին արդյունավետ լինել:

Եզրակացություն

Հիմնվելով վերոնշյալ վերլուծությունների վրա՝ կարող ենք պնդել, որ՝

- *ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով հիմնարար իրավունքի խախտմամբ կարող է ոչ գույքային վնաս հասցվել նաև իրավաբանական անձանց,*
- *ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով հիմնարար իրավունքի խախտման փաստը կարող է հաստատվել թե՛ նախնական, թե՛ հետագա փուլում,*
- *վարչական վարույթի կամ դատավարության ընթացքում հիմնարար իրավունքի խախտման փաստի ապացուցման դեպքում պետք է գործի ոչ գույքային վնաս հասցված լինելու կանխավարկածը,*
- *Որպես վարչական մարմնի կողմից ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի հատուցում կարող է պահանջվել ներողություն խնդրել:*

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն: Ընդունվել է 06.12.2015 թ., ուժի մեջ է մտել 22.12.2015 թ.: Գործում է:
2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք: Ընդունվել է 18.02.2004 թ., ուժի մեջ է մտել 31.12.2004 թ., ՀՕ-41-Ն: Գործում է:
3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք: Ընդունվել է 06.12.1985 թ., ուժի մեջ է մտել 01.06.1986 թ.,: Գործում է:
4. Քաղաքացիական օրենսգիրք: Ընդունվել է 05.05.1998 թ., ուժի մեջ է մտել 01.01.1999 թ., ՀՕ-239: Գործում է:
5. **Թովմասյան Հ., Մուրադյան Գ., Թորոսյան Հ., Գրիգորյան Վ., Պողոսյան Վ.,** «Հարցեր և պատասխաններ Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ: Երևան, Տիգրան Մեծ, 2015, 364 էջ:
6. **Գեղամյան Է., Հակոբջանյան Ա.,** Վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման նախապայմանների վերաբերյալ որոշ հիմնահարցեր: «Արդարադատություն», 2022 թ., 1 (56), 9 էջ:
7. **Հովհաննիսյան Կ.,** «Բարոյական վնասի հատուցման հիմնախնդիրները և նշված ինստիտուտի առավել վիճահարույց ասպեկտները»: «Արդարադատություն», 9 էջ:

КОМПЕНСАЦИЯ НЕМАТЕРИАЛЬНОГО ВРЕДА В СЛУЧАЕ НАРУШЕНИЯ ОСНОВОПОЛАГАЮЩЕГО ПРАВА ВСЛЕДСТВИЕ НЕПРАВОМЕРНОГО АДМИНИСТРАТИВНОГО УПРАВЛЕНИЯ

Аннотация

В статье всесторонне исследуется ряд ключевых проблем, связанных с нематериальным вредом в случаях нарушения основополагающего права вследствие неправомерного административного управления. При формировании выводов и предложений были проанализированы как внутригосударственная, так и международная судебная практика, а также рассмотрен ряд положений, выдвинутых в теоретико-правовых исследованиях.

Целью исследования является выявление предпосылок получения компенсации нематериального вреда в случаях нарушения основополагающего права вследствие неправомерного административного управления, раскрытие ключевых проблем, связанных с доказыванием наличия нематериального вреда, а также анализ возможности компенсации

нематериального вреда посредством принесения извинений и возможности получения такой компенсации юридическими лицами.

Исследование показывает, что:

- вследствие нарушения основополагающего права, вызванного неправомерным административным управлением, нематериальный вред может быть причинен также юридическим лицам;
- факт нарушения основополагающего права вследствие неправомерного административного управления может быть установлен как на предварительной, так и на последующей стадии;
- при доказывании факта нарушения основополагающего права в ходе административного производства или судебного разбирательства должна действовать презумпция причинения нематериального вреда;
- в качестве формы компенсации нематериального вреда, причиненного неправомерным административным управлением со стороны административного органа, может быть заявлено требование о принесении извинений.

Ключевые слова: неправомерное административное управление, нематериальный вред, основополагающие права, моральный вред, нематериальный ущерб, административное право.

COMPENSATION FOR NON-PECUNIARY DAMAGE IN THE EVENT OF A VIOLATION OF A FUNDAMENTAL RIGHT RESULTING FROM UNLAWFUL ADMINISTRATIVE CONDUCT

Annotation

The article provides a comprehensive examination of a number of key issues relating to non-pecuniary damage in cases where a fundamental right is violated as a result of unlawful administrative conduct. In formulating the proposed conclusions, both domestic and international judicial practice have been analysed, alongside a review of several arguments advanced in theoretical legal scholarship.

The purpose of the study is to identify the prerequisites for obtaining compensation for non-pecuniary damage in cases of violation of a fundamental right caused by unlawful administrative conduct, to clarify the core issues related to proving the existence of non-pecuniary damage, as well as to examine the possibility of compensating non-pecuniary damage through an apology and the ability of legal persons to obtain such compensation.

The study demonstrates that:

- as a result of the violation of a fundamental right caused by unlawful administrative conduct, non-pecuniary damage may also be inflicted on legal persons;
- the fact of a violation of a fundamental right resulting from unlawful administrative conduct may be established both at a preliminary stage and at a subsequent stage;
- where the violation of a fundamental right is proven in the course of administrative proceedings or judicial review, a presumption of the existence of non-pecuniary damage should apply;
- an apology may be claimed as a form of compensation for non-pecuniary damage caused by unlawful administrative conduct on the part of an administrative authority.

Keywords: unlawful administrative conduct, non-pecuniary damage, fundamental rights, moral damage, non-material damage, administrative law.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 10.01.2026 թ., տրվել է գրախոսության 22.01.2026 թ., ընդունվել է տպագրության 26.01.2026 թ.:



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 361-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ԴՐԱՆ ՏՐՎԱԾ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 11 նոյեմբերի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի,

դատավորներ՝ Արտակ Զեյնալյանի,
Հրայր Թովմասյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի (զեկուցող),
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Ալեքսանդր Սահակյանի (այսուհետ նաև՝ Դիմող)

ներկայացուցիչ՝ փաստաբան Առնոլդ Վարդանյանի,

պատասխանող՝ Ազգային ժողովի (այսուհետ նաև՝ Պատասխանող)

ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ Էլեն Մնացականյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ալեքսանդր Սահակյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և իրավակիրառ պրակտիկայում դրaան տրված մեկնաբանության՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, Դիմողի և Պատասխանողի գրավոր բացատրությունները, ինչպես նաև վերլուծելով վիճարկվող և վերաբերելի այլ օրինադրույթներ՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 9-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 27-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ին:

2. Օրենսգրքի՝ **«Բողոքարկման ենթակա որոշումները»** վերտառությամբ 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանվում է.

«1. Վերաքննության կարգով բողոքարկման են ենթակա առաջին ատյանի դատարանի հետևյալ որոշումները՝

(...)

3) հայցի ապահովման միջոց կիրառելու, հակընդդեմ ապահովում կիրառելու վերաբերյալ միջնորդությունները մերժելու, հայցի ապահովումը վերացնելու մասին որոշումները.

(...)»:

3. Օրենսգրքի վերոնշյալ վիճարկվող դրույթը չի փոփոխվել/լրացվել:

4. Գործի քննության առիթը Դիմողի՝ 2025 թվականի օգոստոսի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

5. Սահմանադրական դատարանի 2025 թվականի նոյեմբերի 11-ի ՍԴԱՈ-152 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը մասամբ՝ Օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին մասի, 203-րդ հոդվածի, 372-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության մասով, կարճվել է:

Գործի դատավարական նախապատմությունը

6. 2023 թվականի ապրիլի 6-ին Դիմողի կողմից հայցադիմում է ներկայացվել ընդդեմ պատասխանողի՝ Կարինե Հակոբյանի, երրորդ անձ՝ իրավասու մարմնի՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Երևան

քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ Դատարան)՝ երեխային մշտական բնակության վայր վերադարձնելուն կարգադրելու/պարտավորեցնելու պահանջի մասին:

7. Դատարանի 2023 թվականի ապրիլի 11-ի թիվ ԵԴ/13854/02/23 որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և որոշվել գործի քննությունն իրականացնել հատուկ հայցային վարույթի կարգով: Միաժամանակ, նշյալ որոշմամբ Դատարանը կիրառել է հայցի ապահովման միջոց, մասնավորապես՝

«(...) Հայցվորի՝ Ալեքսանդր Բաբկենի Սահակյանի Հայաստանի Հանրապետությունում չգտնվելու ժամանակ սահմանել նրա և որդու՝ (...) միջև տեսակցության կարգ՝ պարտավորեցնելով պատասխանող Կարինե Վարուժանի Հակոբյանին ապահովել, որևէ եղանակով չխոչընդոտել երեխայի և հայցվորի միջև շփումները հեռավար կապի՝ տեսազանգի միջոցով՝ յուրաքանչյուր շաբաթվա յուրաքանչյուր օր՝ ՀՀ ժամանակով երեկոյան ժամը 18:00-ից մինչև ժամը 19:00-ն՝ Ալեքսանդր Բաբկենի Սահակյանի (...) հեռախոսահամարի միջոցով՝ օգտագործելով WhatsApp, Viber հավելվածները:

(...)

(...) Արգելել պատասխանող Կարինե Վարուժանի Հակոբյանին փոխել երեխայի (...) ՀՀ-ում բնակության վայրը, (...) և Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային տեղեկատվական (ՍԵԿՏ) համակարգում փակելով՝ արգելել (...) առանց Հայցվորի՝ Ալեքսանդր Բաբկենի Սահակյանի համաձայնության Հայաստանի Հանրապետության պետական սահմանի հատումը՝ մինչև սույն քաղաքացիական գործով կայացվելիք վճռի օրինական ուժի մեջ մտնելը»:

8. 2023 թվականի մայիսի 19-ի վճռով Դատարանը մերժել է Դիմողի՝ երեխային մշտական բնակության վայր վերադարձնելուն կարգադրելու/պարտավորեցնելուպահանջի մասին հայցադիմումը: Նշված վճռի դեմ Դիմողի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)՝ 2023 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ ներկայացված բողոքը բավարարվել է, Դատարանի 2023 թվականի մայիսի 19-ի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նույն դատարան ամբողջ ծավալով նոր քննության:

9. Վերոնշյալ որոշման դեմ Կարինե Հակոբյանի վճռաբեկ բողոքը Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)՝ 2024 թվականի մայիսի 2-ի որոշմամբ վարույթ ընդունելը մերժվել է:

10. Դատարանի 2024 թվականի հունիսի 21-ի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ:

11. 2024 թվականի սեպտեմբերի 3-ին Դիմողի ներկայացուցչի կողմից ներկայացվել է միջնորդություն՝ Դատարանի 2023 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը ձևափոխելու վերաբերյալ:

12. Դատարանի 2024 թվականի սեպտեմբերի 16-ի որոշմամբ ներկայացված միջնորդությունը մերժվել է: Նշյալ որոշման դեմ Դիմողի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք:

13. Վերաքննիչ դատարանի 2025 թվականի հունվարի 20-ի որոշմամբ Դատարանի 2024 թվականի սեպտեմբերի 16-ի «Հայցի ապահովման միջոցը ձևափոխելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին» որոշման դեմ Դիմողի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է հետևյալ պատճառաբանությամբ.

«Տվյալ դեպքում, Բողոքաբերը բողոքարկում է Դատարանի 16.09.2024 թվականի «Հայցի ապահովման միջոցը ձևափոխելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին» որոշումը, մինչդեռ, նշված որոշումն ինչպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածով, այնպես էլ որևէ օրենքով բողոքարկման ենթակա չէ, որպիսի պարագայում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Բողոքաբերի կողմից բողոքարկվել է Դատարանի «Հայցի ապահովման միջոցը ձևափոխելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին» որոշումը, որը ենթակա չէ բողոքարկման վերաքննության կարգով, ուստիև Վերաքննիչ դատարանը, վերը նշված նորմերի իրավակարգավորումների ներքո իրավասու չլինելով գնահատելու Դատարանի «Հայցի ապահովման միջոցը ձևափոխելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին» որոշման օրինականությունը և իրավաչափությունը և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի իրավակարգավորումները, գտնում է, որ Բողոքաբերի վերաքննիչ բողոքի ընդունումը ենթակա է մերժման, քանի որ հայցի ապահովման միջոցը ձևափոխելու միջնորդությունը մերժելու մասին որոշումը ՀՀ օրենսդրությամբ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չէ»:

14. Վերաքննիչ դատարանի 2025 թվականի հունվարի 20-ի որոշման դեմ 2025 թվականի ապրիլի 18-ին ներկայացվել է վճռաբեկ բողոք, որի վարույթ ընդունելը մերժվել է Վճռաբեկ դատարանի 2025 թվականի հունիսի 4-ի որոշմամբ:

15. Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշման կապակցությամբ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի երեք դատավորների հատուկ կարծիքով՝ *հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու դեպքում, ըստ էության, դատարանը կիրառում է հայցի ապահովման նոր միջոց, իսկ ձևափոխելու դեպքում՝ արդեն իսկ կիրառված հայցի ապահովման միջոցն է ձևափոխում՝ պայմանավորված, մի դեպքում, հայցի ապահովման նոր միջոց կիրառելու, իսկ մյուս*

դեպքում՝ կիրառված հայցի ապահովման միջոցը ձևափոխելու անհրաժեշտությամբ, ուստի՝ նույն իրավակարգավորումը, որը սահմանված է հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշման բողոքարկման համար, հավասարապես կիրառելի է նաև հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ ձևափոխելու մասին միջնորդությունը մերժելու մասին որոշումների համար:

Դիմողի դիրքորոշումները

16. Դիմողը Սահմանադրական դատարանի առջև բարձրացնում է հետևյալ իրավական հարցադրումը. *«(...) Արդյո՞ք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին մասը, 203-րդ հոդվածը, 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 372-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետն ու իրավակիրառ պրակտիկայում դրանց դատարանների կողմից տրված մեկնաբանությունը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածով, 36-րդ հոդվածի 1-ին մասով, 37-րդ հոդվածով, 61-րդ հոդվածի 1-ին մասով, 63-րդ հոդվածի 1-ին մասով, 75-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներով, 86-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված երաշխիքներին, այնքանով որքանով, որ ի հակադրումն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» 1980 թվականի հոկտեմբերի 25-ի Հաագայի կոնվենցիայի և դրա մեկնաբանությունների, Միավորված ազգերի կազմակերպության «Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի նոյեմբերի 20-ի կոնվենցիայի և Երեխայի իրավունքների մասին Միավորված ազգերի կազմակերպության հանձնաժողովի դիրքորոշումների, դատարաններն անհամաչափորեն սահմանափակել են Ալեքսանդր Սահակյանի՝ դատարանի մատչելիության, արդար դատաքննության և արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու իրավունքները՝ զրկելով Ալեքսանդր Սահակյանին իր երեխայի հետ կապ պահպանելու որևէ այլընտրանքային իրական հնարավորությունից, այդպիսով օրեցօր նպաստելով ծնողական օտարացմանը, երեխայի հետ հարաբերություններ պահպանելու հնարավորության աստիճանական նվազմանը և դրանց վերջնական խաթարմանը՝ իրավիճակը դարձնելով անդառնալի»:*

17. Դիմողը գտնում է. *«(...) նկատի ունենալով, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածում նախատեսել է հայցի ապահովման մեկ միջոցը մյուսով փոխարինելու, հայցի ապահովման միջոցը ձևափոխելու հնարավորություն, ապա նույն օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը չի կարող այն աստիճանի չափազանցված ձևական (excessive formalism)*

մեկնաբանության ենթարկվել, որ հայցի ապահովման միջոցի կիրառումը կամ վերացումը լինի վերաքննիչ բողոքարկման ենթակա, իսկ փոփոխությունը՝ ոչ»:

18. Դիմողը նշում է, որ *«(...) նույնիսկ խիստ ձևական մեկնաբանման պայմաններում ստացվում է, որ փվյալ պարագայում Հայցվորի ներկայացուցչի կողմից փաստացի ներկայացվել էր հայցի ապահովման նոր միջոցի կիրառման միջնորդություն՝ նոր վայրում, որի մերժումը չէր կարող բողոքարկման ենթակա չլինել վերաքննության կարգով, այն էլ ՀՀ միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված հարցով»:*

19. Ըստ Դիմողի՝ *«(...) սույն գործի անհիմն ձգձգումների, չպատճառաբանված, ՀՀ Սահմանադրությանը և միջազգային փաստաթղթերին հակասող դատական մեկնաբանությունների պատճառով ավելի քան երկու տարի Ալեքսանդր Սահակյանը զրկված է իր որդու հետ որևէ կերպ տեսակցելու իրավունքի իրացման հնարավորությունից: Ավելին, նշված հարցի իրավաչափությունը վերաքննության և վճռաբեկության կարգով քննության չառնելու հնարավորություն չընձեռելը հանգեցնում է Դիմողի՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով երաշխավորված՝ դատարանի մատչելիության, դատական պաշտպանության, արդար դատաքննության, արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու, ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի և անձեռնմխելիության, ծնողի և երեխայի իրավունքների պաշտպանության, հիմնական իրավունքների իրականացման կազմակերպական կառուցակարգեր նախատեսելու, համաչափության, որոշակիության, հիմնական իրավունքների էության անխախտելիության, միջազգային իրավական պրակտիկան հաշվի առնելու, երեխաների համար բարենպաստ պայմանների ստեղծման պետական քաղաքականության ապահովման խախտմանը»:*

20. Արդյունքում՝ Դիմողը եզրահանգում է, որ վիճարկվող՝ *«(...) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին մասը, 203-րդ հոդվածը, 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 372-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետն ու իրավակիրառ պրակտիկայում դրանց դատարանների կողմից տրված մեկնաբանությունը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածով, 36-րդ հոդվածի 1-ին մասով, 37-րդ հոդվածով, 61-րդ հոդվածի 1-ին մասով, 63-րդ հոդվածի 1-ին մասով, 75-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներով, 86-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված երաշխիքներին, այնքանով որքանով, որ ի հակադրումն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» 1980 թվականի հոկտեմբերի 25-ի Հաագայի կոնվենցիայի և դրա մեկնաբանությունների, Միավորված ազգերի*

կազմակերպության «Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի նոյեմբերի 20-ի կոնվենցիայի և Երեխայի իրավունքների մասին Միավորված ազգերի կազմակերպության հանձնաժողովի դիրքորոշումների, դատարաններն անհամաչափորեն սահմանափակել են Ալեքսանդր Սահակյանի՝ դատարանի մատչելիության, արդար դատաքննության և արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու իրավունքները՝ զրկելով Ալեքսանդր Սահակյանին իր երեխայի հետ կապ պահպանելու որևէ այլընտրանքային իրական հնարավորությունից, այդպիսով օրեցօր նպաստելով ծնողական օտարացմանը, երեխայի հետ հարաբերություններ պահպանելու հնարավորության աստիճանական նվազմանը և դրանց վերջնական խաթարմանը՝ իրավիճակը դարձնելով անդառնալի»:

Պատասխանողի դիրքորոշումները

21. Պատասխանողը, ներկայացնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների վերաբերելի իրավական դիրքորոշումները, ինչպես նաև Օրենսգրքի վիճարկվող դրույթները, նշում է. *«(…) նույն հայցի շրջանակներում կիրառված հայցի ապահովման միջոցի՝ անձի կողմից այն մեկ այլ միջոցով փոխարինելու կամ ձևափոխելու վերաբերյալ ներկայացված միջնորդությունը չպետք է մեկնաբանել, այնպես որի շրջանակներում անձը հնարավորություն չունենա ներկայացնելու հայցի ապահովման միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ ձևափոխելու միջնորդություն: Հիմքում ունենալով անձի սահմանադրական իրավունքների պաշտպանությանն ուղղված երաշխիքների ապահովումը՝ օրենսդրի կողմից նախատեսվել է Օրենսգրքի 361-րդ հոդվածը, որի ուժով վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են դառնում հայցի ապահովման միջոց կիրառելու, այդ թվում՝ հայցի ապահովման միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ ձևափոխելու վերաբերյալ միջնորդությունները մերժելու մասին որոշումները: Հակառակ մեկնաբանման պայմաններում՝ անձը կարող է զրկվել դատարանի մատչելիության իրավունքից»:*

22. Պատասխանողը նշում է, որ *«(…) Օրենսդրի կողմից սահմանվել է նաև հայցի ապահովման միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու, ինչպես նաև այն ձևափոխելու իրավական կառուցակարգ, որը նպատակ ունի ապահովելու հայցի ապահովման արդյունավետ միջոցի կիրառման արդյունքում կողմերի իրավունքների պաշտպանության արդյունավետ ընթացակարգերի և մեխանիզմների երաշխավորումը»:*

23. Ըստ Պատասխանողի՝ *«(…) Օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին մասը, 203-րդ հոդվածը և 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը խնդրահարույց չեն Սահմանադրության 31-րդ հոդվածի, 36-րդ հոդվածի 1-ին մասի, 37-րդ հոդվածի հետ և համապատասխանում են Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին»:*

24. Պատասխանողն արձանագրում է, որ «(...) անձը զրկված չէ հայցի ապահովման կիրառված միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ ձևափոխելու միջնորդությունը մերժելու մասին որոշման վերաքննության կարգով բողոքարկման հնարավորությունից, քանի որ Օրենսգրքի 131-րդ, 133-րդ, 203-րդ և 361-րդ հոդվածների համակարգային համատեքստում հայցի ապահովման կիրառված միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ ձևափոխելու միջնորդությունը մերժելու մասին որոշումը ենթակա է բողոքարկման վերաքննության կարգով և դուրս է Օրենսգրքի 372-րդ հոդվածի կարգավորման շրջանակից»:

25. Ամփոփելով՝ Պատասխանողը խնդրում է. ««Ալեքսանդր Սահակյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին մասի, 203-րդ հոդվածի, 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 372-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ընդունել որոշում՝ վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին»:

Սահմանադրական վեճի քննության շրջանակը

26. Սույն գործով սահմանադրական վեճը հանգում է Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության խնդրին, ըստ որի՝ *հայցի ապահովման միջոցը ձևափոխելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշումը ենթակա չէ վերաքննության կարգով բողոքարկման:*

27. Հաշվի առնելով հայցի ապահովման միջոցը ձևափոխելու և հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու ինստիտուտների դատավարական նպատակների միասնականությունն ու դրանց կիրառման արդյունքում վրա հասնող նույնաբովանդակ հետևանքային ազդեցությունը՝ սույն սահմանադրաիրավական վեճի բովանդակությունն անհրաժեշտաբար պայմանավորում է ***հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ այն ձևափոխելու միջնորդությունը մերժելու մասին որոշման***՝ *վերաքննության կարգով անբողոքարկելիության սահմանադրականության գնահատման անհրաժեշտությունը՝ խնդրո առարկա հարցադրումները դիտարկելով նույն սահմանադրաիրավական հարթության վրա:*

Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

28. Սույն դիմումով վիճարկվող դրույթի՝ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, սահմանադրականությունը գնահատելու նպատակով

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցադրմանը.

- արդյո՞ք հայցի ապահովման միջոցը ձևափոխելու (փոխարինելու) վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշման անբողոքարկելիության վերաբերյալ իրավակիրառի՝ Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին տրված մեկնաբանությունը համահունչ է Սահմանադրության՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող 61-րդ հոդվածի 1-ին մասին՝ 75-րդ հոդվածի համակցությամբ:

Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

29. Սահմանադրության՝ **«Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը»** վերտառությամբ 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:*

30. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը սահմանադրական հիմնարար երաշխիք է, որով կենսագործվում են իրավական պետության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքները: *Այն ներկայանում է իբրև մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման առանցքային մեխանիզմ, որը ոչ միայն ապահովում է այդ իրավունքների պաշտպանությունը, այլև հանրային իշխանության սահմանափակման և հավասարակշռման գործիք է: Ընդ որում՝ սույն սահմանադրական իրավունքը չի բնութագրվում լոկ դատական պաշտպանության ձևական հասանելիությամբ. այն ենթադրում է նաև դատարանի՝ իբրև անկախ և անաչառ դատական իշխանության կրող պետական մարմնի գործունեության արդյունավետությունը, որի առկայության պարագայում է միայն հնարավոր անձի իրավունքների լիարժեք պաշտպանության ապահովումը:*

31. Վերոգրյալը Սահմանադրական դատարանին հիմք է տալիս եզրահանգելու, որ սույն սահմանադրական իրավունքի սահմանադրաիրավական իմաստը պետք է վերհանվի ոչ թե նորմատիվ ձևականության, այլ դրա իրագործելիության և գործնական արդյունավետության տեսանկյունից:

32. Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում բազմիցս անդրադարձել է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանը, մասնավորապես, արձանագրելով.

- *«Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա*

ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից» (2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719),

- *«(...) դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը (...)»* (2015 թվականի դեկտեմբերի 22-ի ՍԴՈ-1249),

- *«Դատարան դիմելն անձի իրավունքն է, որի իրացումն օրենքով նախատեսված իրավական գործընթաց է, պայմանավորված չէ դատական կամ հանրային իշխանության այլ մարմնի հայեցողությամբ, և որի իրացմամբ առաջացած իրավական հետևանքները պարտադիր են ինչպես դիմող անձի, դատավարության մյուս մասնակիցների, այնպես էլ դատարանի համար (...):*

(...) Դատարան դիմելու՝ անձի իրավունքի իրացման երաշխավորումն իրավական առաջնահերթ նախապայման է անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու համար» (2016 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1257 որոշում):

33. *Վերոնշյալի համատեքստում Սահմանադրական դատարանն արժևորում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումն առ այն, որ* մարդու հիմնարար իրավունքները սահմանափակող միջոցները պետք է քննության առարկա դարձվեն անկախ մարմնում՝ մրցակցային դատավարության պայմաններում, որն իրավասու է քննել որոշման իրավաչափությունը և համապատասխան ապացույցները (Al-Nashif v. Bulgaria, Application no. 50963/99, 20.06.2022, Final 20.09.2002, §123), *իսկ* դատավարության մասնակիցները պետք է ունենան դատական պաշտպանության արդյունավետ միջոցներ (Běleš and others v. The Czech Republic, Application no. 47273/99, 12.11.2002, FINAL 12.02.2003, § 49):

34. Այսպիսով, Սահմանադրական դատարանը գտնում է՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի կենսագործմամբ է, որ երաշխավորվում է այլ սահմանադրական իրավունքների ու ազատությունների լիարժեք պաշտպանությունը՝ ապահովելով դրանց կենսունակությունը՝ թույլ չտալով, որ դրանք վերածվեն ձևական արժեքների:

35. Սահմանադրական դատարանը փաստում է, որ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության սահմանադրաիրավական որակը երաշխավորող բաղադրիչը, ի թիվս այլնի, նաև դատական ակտի բողոքարկման իրավունքն է, որը **մի կողմից՝** ապահովում է դատական սխալների բացահայտման և շտկման գործիքակազմի կիրառմամբ անձի իրավունքների լիարժեք դատական

պաշտպանությունը՝ իբրև խախտված իրավունքների վերականգնման գործնական միջոց, **մյուս կողմից՝** երաշխավորում է դատական իշխանության ներսում ինքնավերահսկման մեխանիզմի գործունակությունը:

36. Բացի դրանից, բողոքարկման իրավունքը պայմանավորում է դատական համակարգի հիերարխիկ կառուցվածքի տրամաբանական արդարացումը՝ նպաստելով դատական սխալների շտկմանը, դատական պրակտիկայի միասնականությանը՝ վերջնարդյունքում նպաստելով արդարադատության համակարգի հանդեպ հանրային վստահության աճին:

37. Վերահաստատելով դատական ակտի բողոքարկման իրավունքի սահմանադրաիրավական նշանակության վերաբերյալ Սահմանադրական դատարանի դիրքորոշումներն առ այն, որ.

- «(...) սահմանադրորեն նախատեսված է խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության (դրա արդյունավետության) երաշխավորման առանձնահատուկ այնպիսի ինստիտուտ, ինչպիսին վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման՝ անձի իրավունքն է (դատական բողոքարկումը (...)): Վերջինս նաև անձի իրավունքների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրականացման խնդրում պետության առաջնային պարտականություն է՝ որոշակի ընթացակարգի, այդ թվում՝ դատական հնարավոր սխալների ուղղման միջոցով արդարադատության նպատակների իրագործումը» (2011 թվականի փետրվարի 8-ի ՍԴՈ-936 որոշում),

- «(...) Դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է: Այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից» (2012 թվականի հուլիսի 18-ի ՍԴՈ-1037 որոշում),

- «(...) Դատական բողոքարկման ինստիտուտն այն առանցքային իրավական գործիքակազմն է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում

իրականացմանը, որպիսի պայմաններում դատավարության կողմը կարող է ակնկալել իր իրավունքներին և օրինական շահերին առնչվող դատական ակտի վերանայում վերադաս դատարանի անկախ դատավորի կամ դատավորների կազմի կողմից: Այս իմաստով՝ դատական բողոքարկման իրավունքի առանցքային գործառույթը հանգում է, ի թիվս այլնի, նաև նրան, որ դատական բողոքարկմամբ համապատասխան սխալները շտկելու հնարավորություն ընձեռելը նպաստում է նաև արդարադատության համակարգի նկատմամբ հանրության վստահության բարձրացմանն այն հաշվառմամբ, որ անձը ձեռք է բերում վերադաս դատարանում իր նկատմամբ կայացված դատական ակտի վերաքննության իրական հնարավորություն՝ վերջնարդյունքում ակնկալելով ստանալ օրինական և հիմնավորված դատական ակտ» (2024 թվականի ապրիլի 16-ի ՍԴՈ-1725 որոշում),

Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ դատական ակտի բողոքարկման հնարավորությունը, լինելով դատական համակարգի «ներքին վերահսկող» յուրօրինակ մեխանիզմ, ապահովում է իրավունքահեն արդարադատության նկատմամբ շարունակական վերահսկողություն, որի կենսագործմամբ խախտված իրավունքի վերականգնումը ստանում է իր ավարտուն սահմանադրաիրավական բովանդակությունը:

38. Այս համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բողոքարկման իրավունքի իրացումն ապահովելու նպատակով համապատասխան ճյուղային դատավարական օրենսդրությամբ սահմանվում են բողոքարկելիությամբ օժտված որոշումների շրջանակը, ինչպես նաև բողոքարկման սահմանները, կարգն ու դրանց վերաբերելի այլ դատավարական առանձնահատկություններ:

39. *Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ բողոքարկման իրավունքը գործում է օրենսդրի կողմից նախանշված ակտերի նկատմամբ՝ սահմանափակվելով վերջիններիս օրենսդրական շրջանակներով, ինչը, ի թիվս այլնի, ուղղված է իրավակարգում իրավական կայունությանն ու դատական պաշտպանության պատշաճ և արդյունավետ ապահովմանը:*

40. Վերոնշյալից ելնելով՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ **բողոքարկման ենթակա ակտերի շրջանակի օրենսդրական որոշակիացումը, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց մեկնաբանումն ու կիրառումը, մշտապես պետք է խարսխվեն մարդու իրավունքների պաշտպանության, դատական պաշտպանության արդյունավետության ապահովման և արդար դատաքննության իրավունքի կենսագործման վրա:** Հետևաբար՝ բողոքարկման իրավունքի սահմանափակումները (թե՛ օրենսդրական մակարդակում, և թե՛ իրավակիրառ պրակտիկայում), հետապնդելով իրավական պետության գաղափարաբանությանը համահունչ իրավաչափ նպատակներ, պետք է լինեն սահմանադրաչափ:

41. *Հաշվի առնելով սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակները՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել հայցի ապահովման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունը:*

42. Այսպես՝ Օրենսգրքի՝ **«Հայցի ապահովումը»** վերտառությամբ 13-րդ գլխի ներքո սահմանված են հայցի ապահովման միջոցների համակարգը, դրանց կիրառման հիմքերը, համապատասխան միջնորդության ներկայացման և քննության կարգը, *այդ թվում՝ հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու, հայցի ապահովման միջոցը ձևափոխելու, հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ իրավակարգավորումները:*

43. Սահմանադրական դատարանը փաստում է, որ քաղաքացիական դատավարությունում հայցի ապահովման ինստիտուտը հիմնարար երաշխիքային մեխանիզմներից մեկն է, որը կոչված է ապահովել դատարանի կողմից կայացվելիք դատական ակտի փաստացի իրագործելիությունը՝ երաշխավորելով դրա իրավական արդյունավետությունը:

44. Օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ օրենքով նախատեսված դեպքերում իր նախաձեռնությամբ կիրառում է հայցի ապահովման միջոցներ, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել, դժվարացնել դատական ակտի կատարումը, հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության կամ էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին:

45. Վերոնշյալ իրավակարգավորումից բխում է, որ *սույն ինստիտուտը դատարանի կողմից կիրառվող ժամանակավոր բնույթ ունեցող դատավարական միջամտություն է՝ ուղղված կայացվելիք դատական ակտի անխաթար կատարման նախադրյալների ստեղծմանը և գործին մասնակցող համապատասխան անձանց իրավունքների հնարավոր խախտման կանխարգելմանը:* Այն, ըստ էության, արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի գործնական դրսևորումներից մեկն է, որն ապահովում է **կողմերի շահերի միջև ողջամիտ հավասարակշռությունը,** ինչից ուղղակիորեն բխում է, որ հայցի ապահովման միջոցները պետք է կիրառվեն այնպես, որ **մի կողմից՝** *երաշխավորեն ներկայացված հայցապահանջների իրագործվելիությունը՝ համապատասխան դատական ակտ կայացվելու պարագայում,* **մյուս կողմից՝** *չվերածվեն պատժիչ կամ ճնշող մեխանիզմի՝ խարխլելով այն անձի դատավարական կարգավիճակի դիրքերը, որի նկատմամբ կիրառվել են:*

46. Այս առումով օրենսդիրը, ընտանեկան վեճերով գործերի առանձնահատկությունները հաշվի առնելով և երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով, նախատեսել է հատուկ կարգավորում, այն է՝ Օրենսգրքի 203-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով՝ դատարանն իր նախաձեռնությամբ

կամ կողմի միջնորդությամբ հայցի ապահովման կարգով կարող է գործին մասնակցող կամ այլ անձանց արգելել կամ պարտավորեցնել կատարելու որոշակի գործողություններ, *թեկուզև հայցի ապահովման կիրառված միջոցն առերևույթ հանգեցնում է ներկայացված պահանջի փաստացի կատարման:*

47. Սահմանադրական դատարանն իր՝ 2020 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ-1561 որոշման շրջանակներում անդրադարձել է հայցի ապահովման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը՝ նշելով.

«Հայցի ապահովման՝ որպես դատավարական ինստիտուտի նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն դիտարկվում է մի կողմից՝ օրենսդրությամբ նախատեսված՝ անձանց իրավունքների պաշտպանության երաշխիքներից մեկը, որով պաշտպանվում են հայցվորի օրինական շահերն այն դեպքերից, երբ պատասխանողը կարող է գործել անբարեխիղճ, կամ երբ այդպիսի միջոցները չկիրառելն անհնարին կարող է դարձնել դատական ակտի կատարումը, իսկ մյուս կողմից՝ որպես դատարանի կողմից կատարվող դատավարական գործողություն, այն հետապնդում է գործով կայացվելիք վճռի կատարման երաշխիքներ ապահովելու նպատակ»:

48. Այսպիսով, հայցի ապահովման միջոցների կիրառմամբ ապահովվում է ոչ միայն գործին մասնակցող անձանց դատավարական շահերի պաշտպանությունը, այլև արդարադատության արդյունավետ իրականացումը, քանզի առանց նման դատավարական երաշխիքների, արդարադատությունը մարմնավորող դատական ակտը կդառնա անիրագործելի:

49. Օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում են **հայցի ապահովման հետևյալ միջոցները.**

1) պատասխանողին պատկանող գույքի վրա հայցագնի չափով արգելանք դնելը.

2) պատասխանողին որոշակի գործողություններ կատարելն արգելելը.

3) այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը.

4) պատասխանողին կամ այլ անձանց վեճի առարկային վերաբերող որոշակի գործողություններ կատարել պարտավորեցնելը.

5) գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց ներկայացնելու դեպքում՝ գույքի իրացումը կասեցնելը.

6) պատասխանողի մոտ գտնվող՝ հայցվորին պատկանող գույքի վրա արգելանք դնելը.

7) օրենքով նախատեսված հայցի ապահովման այլ միջոցներ:

50. ***Սահմանադրական դատարանը փաստում է, որ օրենսդիրը դատավարական հավասարակշռության ու գործին մասնակցող անձանց դատավարական իրավահավասարության և մրցակցության սկզբունքի ապահովման նպատակով***

ամրագրել է հայցի ապահովման առնչությամբ գործին մասնակցող անձանց շահերի պաշտպանության մի շարք դատավարական մեխանիզմներ՝ նախատեսելով նաև հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու, հայցի ապահովման միջոցը ձևափոխելու, հայցի ապահովման միջոցը վերացնելու օրենսդրական կառուցակարգեր:

51. Մասնավորապես՝ Օրենսգրքի 134-րդ հոդվածը սահմանում է **հայցի ապահովման միջոցը վերացնելու հիմքերը և դատավարական կարգը,** այն է՝ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ Օրենսգրքով նախատեսված դեպքերում իր նախաձեռնությամբ կարող է վերացնել հայցի ապահովման միջոցը: Հայցի ապահովման միջոցը կարող է լրիվ կամ մասնակի վերացվել, եթե՝

1) բացակայում են կամ վերացել են Օրենսգրքի հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերը.

2) առկա է հայցի ապահովման միջոցը լրիվ կամ մասնակի վերացնելու վերաբերյալ գործին մասնակցող այն անձի գրավոր համաձայնությունը, որի միջնորդությամբ կիրառվել է հայցի ապահովման միջոց.

3) Օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

52. Հայցի ապահովման միջոց կիրառելուն, ինչպես նաև այն վերացնելուն զուգահեռ՝ Օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է ***գործին մասնակցող անձի միջնորդությամբ դատարանի որոշմամբ հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ այն ձևափոխելու դատավարական հնարավորությունը:***

53. ***Հայցի ապահովման միջոցի ձևափոխման պարագայում որոշակի փոփոխության է ենթարկվում արդեն իսկ*** Օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված և դատարանի կողմից ***կիրառված հայցի ապահովման կոնկրետ միջոցը, մասնավորապես՝ փոփոխվում է դրա, օրինակ՝ չափը, բովանդակությունը, բնույթը՝ համապատասխանեցվելով փոփոխվող հանգամանքներին:***

54. Հիշատակված երկու դատավարական գործողությունների շրջանակներում, ըստ էության, դատարանը՝

1) վերացնում է ի սկզբանե կիրառված հայցի ապահովման միջոցը և կիրառում մեկ այլ՝ նոր հայցի ապահովման միջոց (հայցի ապահովման մեկ միջոցի փոխարինումը մեկ այլ միջոցով),

2) վերացնում է ի սկզբանե կիրառված հայցի ապահովման միջոցի որևէ բաղադրիչը (չափը, բովանդակությունը, բնույթը) և փաստացի կիրառում նույն հայցի ապահովման միջոցը՝ այլ բաղադրիչով՝ այլ չափով, բովանդակությամբ, բնույթով (հայցի ապահովման ձևափոխում):

55. ***Սահմանադրական դատարանը գտնում է, որ հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ այն ձևափոխելու դատավարական***

գործողությունն ինքնին, հիշատակված առանձնահատկություններով հանդերձ, միավորում է և՛ հայցի ապահովումը վերացնելու, և՛ հայցի ապահովում կիրառելու դատավարական գործողությունները:

56. ***Վերոշարադրյալի լույսի ներքո՝ անդրադառնալով սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում բարձրացված հարցադրմանը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի 361-րդ հոդվածը՝ «Բողոքարկման ենթակա որոշումները» վերտառությամբ, սահմանում է վերաքննության կարգով բողոքարկման ենթակա առաջին ատյանի դատարանի որոշումների շրջանակը, որոնց շարքին, ի թիվս այլ որոշումների, դասվում են հայցի ապահովման միջոց կիրառելու, հակընդդեմ ապահովում կիրառելու վերաբերյալ միջնորդությունները մերժելու, հայցի ապահովումը վերացնելու մասին որոշումները***:

57. ***Սահմանադրական դատարանը փաստում է, որ օրենսդրի կողմից բողոքարկման ենթակա որոշումների շարքում հիշատակված որոշումների նախատեսումը, նկատի ունենալով հայցի ապահովման ինստիտուտի նպատակային նշանակությունն ու հետևանքային ազդեցությունը, կոչված է երաշխավորելու խնդրո առարկա որոշումների իրավաչափությունը՝ դատական սրուգման ընթացակարգերի շրջանակներում***:

58. Վերոհիշյալ դրույթների համադրումից պարզ է դառնում, որ հայցի ապահովման միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ այն ձևափոխելու միջնորդությունը մերժելու մասին որոշման բողոքարկումն ուղղակիորեն (բառացի) չի ներառվել Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորման առարկայում՝ չարտացոլվելով վերաքննության կարգով բողոքարկման ենթակա որոշումների շարքում:

59. ***Այս առումով Սահմանադրական դատարանը գտնում է՝ նկատի ունենալով, որ ինչպես արդեն իսկ շեշտադրվել է հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ այն ձևափոխելու դատավարական գործողությունը բովանդակում է և՛ հայցի ապահովումը վերացնելու, և՛ հայցի ապահովում կիրառելու դատավարական գործողությունները՝ օրենսդիրը, որպես այդպիսին, խնդրո առարկա որոշումներն Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորման փիրույթում բառացիորեն հիշատակելու անհրաժեշտություն չի ունեցել, մինչդեռ իրավակիրառ պրակտիկայում Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին դատարանների կողմից տրված տառացի մեկնաբանությունը ստեղծել է իրավիճակ, որի պայմաններում հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ այն ձևափոխելու մասին միջնորդությունը մերժելու մասին որոշման վերաքննության կարգով բողոքարկումը բացառվում է՝ հաշվի առնելով Օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով***

նախատեսված կարգավորումը, այն է՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման վերաքննության կարգով:

60. ***Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավակիրառ պրակտիկայում խնդրո առարկա դրույթին տրված մեկնաբանության արդյունքում անձը զրկվել է օրենսդրի կողմից արդեն իսկ բողոքարկման ենթակա դատական ակտը փաստացի բողոքարկելու իրավունքից, ինչը հանգեցրել է վերջինիս՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի սահմանափակման:***

61. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ *վիճարկվող դրույթով նախատեսված իրավակարգավորումը պետք է դատարանների կողմից մեկնաբանվի և կիրառվի նաև հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ ձևափոխելու մասին միջնորդությունը մերժելու մասին որոշումների նկատմամբ՝ խնդրո առարկա որոշումները դիտարկելով որպես վերաքննության կարգով բողոքարկելի:*

62. *Բացի դրանից, օրենսդրական կարգավորումների նման ճկուն ընկալումն ու կիրառումը հնարավորություն է ստեղծում այն անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար, որոնք, ակնկալելով նմանօրինակ նպատակ, ինչն ապահովվում է հայցի ապահովման միջոց կիրառելու/հայցի ապահովումը վերացնելու մասին միջնորդությամբ, դատարան են ներկայացրել կիրառված հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ այն ձևափոխելու մասին միջնորդություն*:

63. *Վերոնշյալ եզրահանգումների և Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը) համադրման արդյունքում պարզ է դառնում, որ վիճարկվող դրույթը դատարանի կողմից կիրառվել է նորմի սահմանադրաիրավական բովանդակությանը հակասող մեկնաբանությամբ, որի արդյունքում ոչ իրավաչափ միջամտություն է տեղի ունեցել կողմի՝ Սահմանադրությամբ երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի նկատմամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ խնդրո առարկա միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշման վերաքննության կարգով բողոքարկումը Վերաքննիչ դատարանի կողմից մերժվել է:*

64. ***Վերոշարադրյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ այն ձևափոխելու միջնորդությունը մերժելու մասին որոշումը ենթակա է բողոքարկման վերաքննության կարգով:***

65. Սահմանադրական դատարանն *անհրաժեշտ է համարում սույն գործով սահմանադրաիրավական վեճը դիտարկել նաև Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի ապահովման սահմանադրաիրավական պահանջի ապահովման լույսի ներքո՝ Սահմանադրության 75-րդ հոդվածի համատեքստում:*

66. Սահմանադրության՝ **«Հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը»** վերտառությամբ 75-րդ հոդվածն ամրագրում է, որ *հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր*:

67. Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում արտահայտել է, մասնավորապես, հետևյալ դիրքորոշումները.

«Սահմանադրության վերոնշյալ պահանջն ուղղված է Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ և իրական կենսագործմանը, քանի որ իրավունքի կամ ազատության միայն ամրագրումը բավարար չէ տրված իրավական հնարավորության լիարժեք իրացման համար, ուստի համապատասխան կառուցակարգերի և ընթացակարգերի օրենսդրական ամրագրումն անհրաժեշտ երաշխիք է հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացումն ապահովելու հարցում» (2021 թվականի նոյեմբերի 30-ի ՍԴՈ-1618 որոշում):

«(…) Սահմանադրության 75-րդ հոդվածի բովանդակությունից անմիջականորեն բխում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ օրենքով սահմանելու իրավունքի պաշտպանությանը միտված իրավական այնպիսի միջոցներ, որոնք կապահովեն անկախ, անաչառ և մատչելի արդարադատության միջոցով անձանց հիմնական իրավունքների ու ազատությունների արդյունավետ, արդար պաշտպանություն՝ ինչպես գործի ըստ էության քննության, այնպես էլ դատական ակտերի հետագա բողոքարկման շրջանակներում:

(…)

*Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջն է, որ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանեն այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Հետևաբար, այս տեսանկյունից Սահմանադրական դատարանը կարևորում է ոչ միայն իրավունքի իրացման կարգի օրենքով նախատեսման փաստը սոսկ, այլև նման կարգի **արդյունավետությունը**, այսինքն՝ օրենքի նորմերում բովանդակվող իրավակարգավորիչ այնպիսի միջոցների,*

ձևերի առկայությունը և դրանց գործադրման հնարավորությունը, որոնք կերաշխավորեն սահմանադրորեն կանխորոշված նպատակի լիարժեք իրացումը՝ կոնկրետ դեպքում հաշվի առնելով նաև Սահմանադրության 78, 79, 80 և 81-րդ հոդվածների պահանջները» (2018 թվականի հունիսի 19-ի ՍԴՈ-1420 որոշում):

«Պետությունը պետք է ստեղծի անհրաժեշտ երաշխիքներ մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման համար: Պետությունը պարտավորվում է ոչ միայն ճանաչել, պահպանել և պաշտպանել իրավունքները և ազատությունները, այլև ստեղծել պետական-իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձևով կարող են կանխել, վերացնել դրանց ցանկացած խախտումներ, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները» (2020 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴՈ-1571 որոշում):

68. Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական պետության կենսագործունեության հիմնարար բաղադրիչը *ոչ միայն* հիմնական իրավունքների և ազատությունների սահմանադրորեն ճանաչումն ու *ամրագրումն է*, այլև դրանց արդյունավետ իրականացման և պաշտպանությանը միտված մեխանիզմների ամբողջական համակարգի սահմանումը և իրագործումը, որը լիարժեք կարող է կյանքի կոչվել **մի կողմից՝** *օրենսդրի կողմից՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորող և դրանց արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանող օրենքներ ընդունելով,* **մյուս կողմից՝** *իրավակիրառի կողմից դրանք՝ սահմանադրաիրավական արժեբանությանը և դրան համահունչ՝ նաև օրենսդրի կամքին ներդաշնակ մեկնաբանելով և կիրառելով: Այս երկու բաղադրիչները միասնաբար կազմում են այն սահմանադրահեն միջավայրը, որի շրջանակներում սահմանադրական արժեքները տեղափոխվում են նորմատիվ իրականություն:*

69. ***Այս առումով Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն դրանց ամրագրման ինստիտուցիոնալ կառուցվածքով, այլև դրանց՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության և իրավակիրառման մշակույթի որակով:***

70. Վերոգրյալի համատեքստում Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 75-րդ հոդվածով ամրագրված սահմանադրաիրավական պատվիրանը կարող է լիարժեք կենսագործվել նաև իրավակիրառ պրակտիկայում հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորող և դրանց արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանող օրենքների՝ *սահմանադրաիրավական գաղափարներին և արժեքներին համահունչ՝ դրանց ոգուն և տառին ներդաշնակ մեկնաբանություն*

հաղորդելու պայմաններում, ընդ որում՝ իրավակիրառը պետք է ստեղծի այն ինտեգրատիվ հարթությունը, որտեղ օրենքի ոգին ու տառը ներդաշնակորեն հավասարակշռում են միմյանց՝ երաշխավորելով իրավական կանխատեսելիությունը և արժեքային զուգակշռությունը:

71. Այսպիսով, Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին իրավակիրառ պրակտիկայում հաղորդվել է նեղ մեկնաբանություն՝ այդպիսով խոչընդոտելով Սահմանադրության 75-րդ հոդվածով երաշխավորված սահմանադրաիրավական պահանջի լիարժեք իրացմանը. իրավակիրառը հաշվի չի առել հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու, այն ձևափոխելու դատավարական գործողությունների իրավական բովանդակությունը, դրանց սահմանման հիմքում օրենսդրի դրած նպատակային նշանակությունը:

72. Այս առումով Սահմանադրական դատարանը վերահաստատում է, որ օրենսդիրը խնդրո առարկա որոշումներն Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորման փիրույթում բառացիորեն հիշատակելու անհրաժեշտություն չի ունեցել՝ հաշվի առնելով, որ դրանք, ըստ էության, ներառում են և՛ հայցի ապահովումը վերացնելու, և՛ հայցի ապահովում կիրառելու դատավարական գործողությունները:

73. Վերոգրյալի համատեքստում Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառ պրակտիկան պետք է մշտապես խարսխվի այն ողջամիտ տրամաբանության վրա, որ նորմերի սահմանադրահեն մեկնաբանությունը կարող է իրականացվել այն պայմաններում, երբ այն սահմանափակված չէ նորմատիվ տեքստի բառացի իմաստով, այլ ընդգրկում է դրա արժեհամակարգային շերտը՝ երաշխավորելով իրավանորմերի իմաստի բացահայտումը՝ դրա օրենսդրական նպատակին և սահմանադրական արժեբանությանը համահունչ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 170-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ ***հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ այն ձևափոխելու միջնորդությունը մերժելու մասին որոշումը ենթակա է բողոքարկման վերաքննության կարգով:***

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով՝ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը Դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման մեջ նշված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

11 նոյեմբերի 2025 թվականի
ՍԴՈ-1802

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 14 նոյեմբերի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի (զեկուցող),

դատավորներ՝ Արտակ Զեյնալյանի,
Հրայր Թովմասյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահան Կոստանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2025 թվականի հունիսի 30-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Եվրոպական միության ճգնաժամային կառավարման գործողություններում Հայաստանի Հանրապետության մասնակցության շրջանակը սահմանելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի նոյեմբերի 6-ի N 1549-Ա որոշմամբ հավանություն է տվել 2025 թվականի հունիսի 30-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Եվրոպական միության ճգնաժամային կառավարման գործողություններում Հայաստանի Հանրապետության մասնակցության շրջանակը սահմանելու մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի նոյեմբերի 7-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Եվրոպական միության ճգնաժամային կառավարման գործողություններում Հայաստանի Հանրապետության մասնակցության շրջանակը սահմանելու մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2025 թվականի հունիսի 30-ին՝ Եվրոպական միության («Միություն» կամ «ԵՄ») ճգնաժամային կառավարման գործողություններին Հայաստանի Հանրապետության մասնակցության ընդհանուր պայմանները սահմանելու նպատակով:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

2.1. ԵՄ ճգնաժամային կառավարման գործողությանը մասնակցելու նպատակով Հայաստանին հրավիրելու վերաբերյալ Միության կողմից որոշում ընդունելուց հետո՝ Համաձայնագրի իրականացման շրջանակներում, Միությանը տեղեկացնել ՀՀ

մասնակցության, այդ թվում՝ առաջարկվող ներդրման մասին ՀՀ իրավասու մարմնի կայացրած որոշման վերաբերյալ (հոդված 1, կետ 1),

2.2. միանալ համապատասխան այնպիսի որոշման, որով Եվրոպական միության խորհուրդը (այսուհետ՝ «Խորհուրդ») որոշում է, որ Միությունը իրականացնելու է ճգնաժամային կառավարման գործողություն, և՝ ցանկացած այլ այնպիսի որոշման, որով Խորհուրդը որոշում է երկարաձգել ճգնաժամային կառավարման գործողության ժամկետը՝ Համաձայնագրին և կիրարկման ցանկացած անհրաժեշտ կարգավորումներին համապատասխան (հոդված 2, կետ 1),

2.3. կրել պատասխանատվություն ԵՄ ճգնաժամային կառավարման գործողությանը ՀՀ մասնակցության հետ կապված ցանկացած այնպիսի պահանջի արձագանքելու համար, որը ներկայացվում է ՀՀ անձնակազմի որևէ անդամի կողմից կամ վերաբերում է նրան, ինչպես նաև կրել պատասխանատվություն ՀՀ անձնակազմի ցանկացած անդամի նկատմամբ ցանկացած գործողություն ձեռնարկելու, մասնավորապես՝ իրավական կամ կարգապահական՝ ՀՀ օրենքներին և կարգավորումներին համապատասխան (հոդված 3, կետ 4),

2.4. փոխադարձության սկզբունքով հրաժարվել միմյանց ուղղված ցանկացած և բոլոր՝ պայմանագրային պահանջներ չհամարվող պահանջներից՝ կապված Կողմերից մեկին պատկանող կամ վերջինիս կողմից կառավարվող գույքին հասցված վնասի, կորստի կամ ոչնչացման, ինչպես նաև Կողմերից մեկի անձնակազմի անդամի ստացած վնասվածքի կամ մահվան դեպքի հետ, որն առաջացել է Համաձայնագրով նախատեսված գործողությունների հետ կապված իր պաշտոնեական պարտականությունների կատարման հետևանքով՝ բացառությամբ կոպիտ անփութության կամ դիտավորյալ ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման դեպքերի (հոդված 3, կետ 5),

2.5. ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ԵՄ գաղտնի տեղեկատվության պաշտպանությունն ապահովելու համար՝ ԵՄ գաղտնի տեղեկատվության պաշտպանության վերաբերյալ Խորհրդի անվտանգության այն կանոններին համապատասխան, որոնք ներառված են Խորհրդի թիվ 2013/488/ԵՄ[1] որոշման մեջ, ինչպես նաև իրավասու մարմինների, այդ թվում՝ ԵՄ ճգնաժամային կառավարման ռազմական գործողության վերաբերյալ ԵՄ գործողության հրամանատարի կամ ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողության վերաբերյալ ԵՄ առաքելության ղեկավարի կողմից տրված լրացուցիչ ցուցումներին համապատասխան (հոդված 4, կետ 1),

[1] «ԵՄ գաղտնի տեղեկատվության պաշտպանության վերաբերյալ անվտանգության կանոնների մասին» Խորհրդի 2013 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 2013/488/ԵՄ որոշում (ԵՄՊՏ Լ 274, 15.10.2013, էջ 1, http://data.europa.eu/eli/dec/2013/488/oj):

2.6. ապահովել, որ ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողության համար գործուղված ՀՀ անձնակազմը իր առաքելությունն իրականացնի՝ Խորհրդի համապատասխան որոշման և դրա հետագա փոփոխությունների համաձայն՝ 2-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված կարգով, գործողությունների պլանի համաձայն, ցանկացած կիրառելի կիրարկման կարգավորման համաձայն և ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողությունների ցանկացած կիրառելի քաղաքականության համաձայն (հոդված 5, կետ 1, ենթակետ a),

2.7. սահմանված ժամկետներում տեղեկացնել ԵՄ քաղաքացիական գործողության հրամանատարին ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողությանն ՀՀ ունեցած ներդրման ցանկացած փոփոխության մասին (հոդված 5, կետ 1, ենթակետ b),

2.8. ապահովել, որ ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողությանը մասնակցելու համար Հայաստանի կողմից գործուղված անձնակազմը անցնի բժշկական զննություն, լինի պատվաստված (ըստ կարգի), և Հայաստանի իրավասու մարմնի կողմից նրա առողջական վիճակը ճանաչվի պիտանի ծառայության համար, ինչպես նաև ներկայացնել պիտանի ճանաչելու մասին եզրակացության օրինակը (հոդված 5, կետ 2),

2.9. երաշխավորել, որ Հայաստանի կողմից գործուղված անձնակազմը կկատարի իր վրա դրված պարտականությունները և կդրսևորի բացառապես ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողության շահերին համապատասխանող վարքագիծ՝ պահպանելով վարքագծի ամենաբարձր այն չափանիշները, որոնք սահմանված են ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողությունների նկատմամբ կիրառելի քաղաքականությամբ (հոդված 5, կետ 3),

2.10. ապահովել, որ ՀՀ ազգային մարմինները օպերատիվ վերահսկողությունը և իրենց ուժերի և անձնակազմի օպերատիվ և մարտավարական հրամանատարությունը և (կամ) վերահսկողությունը հանձնեն ԵՄ քաղաքացիական գործողության հրամանատարին, որն իրավասու է պատվիրակել իր լիազորությունը (հոդված 6, կետ 2 և հոդված 10, կետ 2),

2.11. նշանակել ազգային զորախմբի համակարգող մարմին (ԱՀՄ)՝ ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողությունում ՀՀ զորախումբը ներկայացնելու համար. ԱՀՄ-ն հաշվետու է Ազգային հարցերով ԵՄ առաքելության ղեկավարին և պատասխանատու է Հայաստանի զորախմբի ամենօրյա կարգապահության համար (հոդված 6, կետ 7),

2.12. չհակասելով Համաձայնագրի 8-րդ հոդվածի դրույթներին՝ կրել ԵՄ ճգնաժամային կառավարման քաղաքացիական գործողությանը ՀՀ մասնակցության հետ կապված բոլոր ծախսերը՝ բացառությամբ ընթացիկ ծախսերի, ինչպես

սահմանված է գործողության համար նախատեսված ընթացիկ ծախսերի բյուջեով (հոդված 7, կետ 1),

2.13. Համաձայնագրի 8-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն և չնայած 1-ին հոդվածի 5-րդ կետի դրույթներին՝ ներդրում ունենալ ԵՄ ճգնաժամային կառավարման համապատասխան քաղաքացիական գործողության ընթացիկ ծախսերի բյուջեի ֆինանսավորման մեջ. ներդրումը հաշվարկվում է Համաձայնագրի 8-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված բանաձևերից որևէ մեկի հիման վրա՝ կախված այն հանգամանքից, թե որն է ավելի քիչ գումար ենթադրում (հոդված 8, կետեր 1 և 2),

2.14. ապահովել ԵՄ ճգնաժամային կառավարման ռազմական գործողությանը մասնակցող ՀՀ ուժերի և անձնակազմի կողմից իրենց առաքելության կատարումը Համաձայնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետի a ենթակետում սահմանված կարգով (հոդված 9, կետ 1, ենթակետ a),

2.15. սահմանված ժամկետներում տեղեկացնել ԵՄ գործողության հրամանատարին ԵՄ ճգնաժամային կառավարման ռազմական գործողությանը ՀՀ մասնակցության ցանկացած փոփոխության մասին (հոդված 9, կետ 1, ենթակետ b),

2.16. երաշխավորել, որ Հայաստանի կողմից գործուղված անձնակազմը կկատարի իր պարտականությունները և կդրսևորի բացառապես ԵՄ ճգնաժամային կառավարման ռազմական գործողության շահերին համապատասխանող վարքագիծ՝ պահպանելով վարքագծի այն ամենաբարձր չափանիշները, որոնք սահմանված են ԵՄ ճգնաժամային կառավարման ռազմական գործողությունների համար կիրառվող քաղաքականությամբ (հոդված 9, կետ 2),

2.17. նշանակել ռազմական ավագ ներկայացուցիչ (ՌԱՆ)՝ ԵՄ ճգնաժամային կառավարման ռազմական գործողության շրջանակներում ՀՀ զորախումբը ներկայացնելու համար և ապահովել, որ ՌԱՆ-ը գործողությանն առնչվող բոլոր հարցերի շուրջ խորհրդակցի ԵՄ ուժերի հրամանատարի հետ և պատասխանատվություն կրի Հայաստանի զորախմբի ամենօրյա կարգապահության համար (հոդված 10, կետ 5),

2.18. չհակասելով Համաձայնագրի 12-րդ հոդվածի դրույթներին՝ կրել ԵՄ ճգնաժամային կառավարման ռազմական գործողությանը ՀՀ մասնակցության հետ կապված բոլոր ծախսերը, եթե ծախսերը չեն ծածկվում ընդհանուր ֆինանսավորմամբ, ինչպես նախատեսված է Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավական փաստաթղթերով, ինչպես նաև Խորհրդի (ԸԱԱՔ) թիվ 2015/528 որոշմամբ[2] (հոդված 11, կետ 1),

2.19. Համաձայնագրի 12-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն և չնայած 1-ին հոդվածի 5-րդ կետի դրույթներին՝ ներդրում ունենալ համապատասխան ԵՄ ճգնա-

[2] «Եվրոպական միության ռազմական կամ պաշտպանական նշանակության գործողությունների ընդհանուր ծախսերի ֆինանսավորումը կառավարելու մեխանիզմը («Աթենա») սահմանելու և թիվ 2011/871/ԸԱԱՔ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Խորհրդի 2015 թվականի մարտի 27-ի թիվ 2015/528 որոշում (ԸԱԱՔ), (ԵՄՊՏ Լ 84, 28.03.2015, էջ 39, http://data.europa.eu/eli/dec/2015/528/oj):

ժամային կառավարման ռազմական գործողության ընթացիկ ծախսերի բյուջեի ֆինանսավորման մեջ. ներդրումը հաշվարկվում է Համաձայնագրի 12-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված բանաձևերից որևէ մեկի հիման վրա՝ կախված այն հանգամանքից, թե որն է ավելի քիչ գումար ենթադրում (հոդված 12, կետեր 1 և 2):

3. Համաձայնագրի 3-րդ հոդվածի 6-րդ կետը սահմանում է, որ Համաձայնագիրն ստորագրելիս Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է հայտարարություն անել Հայաստանի մասնակցությամբ ԵՄ ճգնաժամային կառավարման գործողությանը մասնակցող ցանկացած պետությանն ուղղված պահանջներից հրաժարվելու մասին:

Վերոհիշյալ պարտավորությունը Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագիրն ստորագրելիս կատարել է, հայտարարելով, որ «Հայաստանը, համաձայնելով մասնակցել ԵՄ ճգնաժամային կառավարման գործողությանը, կձգտի, այնքանով, որքանով թույլ է տալիս իր ներպետական իրավական համակարգը, հնարավորինս հրաժարվել ԵՄ ճգնաժամային կառավարման գործողությանը մասնակցող ցանկացած պետությանն ուղղված ցանկացած այնպիսի պահանջից, որը կապված է իր անձնակազմի անդամների ստացած վնասվածքի կամ մահվան դեպքերի կամ իրեն պատկանող կամ ԵՄ ճգնաժամային կառավարման գործողության շրջանակներում գործածվող գույքին հասցված վնասի կամ կորստի հետ, եթե այդպիսի վնասվածքը, մահվան դեպքը, վնասը կամ կորուստը՝

– պատճառվել է ԵՄ ճգնաժամային կառավարման գործողությանը մասնակցող ցանկացած պետության կողմից տրամադրված անձնակազմի անդամների կողմից՝ տվյալ գործողության առնչությամբ նրանց պարտականությունների կատարման ընթացքում՝ բացառությամբ կոպիտ անփութության կամ դիտավորյալ ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման դեպքերի, կամ

– առաջացել է ԵՄ ճգնաժամային կառավարման գործողությանը մասնակցող պետություններին պատկանող որևէ գույքի օգտագործման հետևանքով՝ պայմանով, որ այդ գույքն օգտագործվել է տվյալ գործողության առնչությամբ՝ բացառությամբ այդ գույքն օգտագործող՝ ԵՄ ճգնաժամային կառավարման գործողության մեջ ներգրավված անձնակազմի անդամների կոպիտ անփութության կամ դիտավորյալ ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման դեպքերի»:

4. Համաձայնագրի 3-րդ հոդվածի 7-րդ կետը սահմանում է, որ Համաձայնագիրն ստորագրելիս Միությունը պարտավորվում է ապահովել, որ իր անդամ պետությունները հայտարարություն անեն ԵՄ ճգնաժամային կառավարման գործողությանը Հայաստանի ցանկացած հետագա մասնակցության հետ կապված պահանջներից հրաժարվելու մասին:

Միությունը ևս Համաձայնագիրը ստորագրելիս կատարել է վերոհիշյալ պարտավորությունը, հայտարարելով, որ «Միության այն անդամ պետությունները, որոնք կիրառում են Հայաստանի մասնակցությամբ ԵՄ ճգնաժամային կառավարման գործողության վերաբերյալ Խորհրդի որոշումը, կձգտեն, այնքանով, որքանով թույլ են տալիս իրենց ներպետական իրավական համակարգերը, հնարավորինս հրաժարվել Հայաստանին ուղղված ցանկացած այնպիսի պահանջից, որը կապված է իրենց անձնակազմի անդամների ստացած վնասվածքի կամ մահվան դեպքերի կամ իրենց պատկանող կամ ԵՄ ճգնաժամային կառավարման գործողության շրջանակներում գործածվող գույքին հասցված վնասի կամ կորստի հետ, եթե այդպիսի վնասվածքը, մահվան դեպքը, վնասը կամ կորուստը՝

– պատճառվել է ԵՄ ճգնաժամային կառավարման գործողության շրջանակներում Հայաստանի տրամադրած անձնակազմի անդամների կողմից՝ տվյալ գործողության առնչությամբ նրանց պարտականությունների կատարման ընթացքում՝ բացառությամբ կոպիտ անփութության կամ դիտավորյալ ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման դեպքերի, կամ

– առաջացել է Հայաստանին պատկանող որևէ գույքի օգտագործման հետևանքով՝ պայմանով, որ այդ գույքն օգտագործվել է ԵՄ ճգնաժամային կառավարման գործողության առնչությամբ՝ բացառությամբ այդ գույքն օգտագործող՝ տվյալ գործողության շրջանակներում Հայաստանի տրամադրած անձնակազմի անդամների կոպիտ անփութության կամ դիտավորյալ ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման դեպքերի»:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2025 թվականի հունիսի 30-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Եվրոպական միության ճգնաժամային կառավարման գործողություններում Հայաստանի Հանրապետության մասնակցու-

թյան շրջանակը սահմանելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

14 նոյեմբերի 2025 թվականի

ՍԴՈ-1803

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1803 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2025 թվականի հունիսի 30-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Եվրոպական միության ճգնաժամային կառավարման գործողություններում Հայաստանի Հանրապետության մասնակցության շրջանակը սահմանելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2025 թվականի նոյեմբերի 14-ի ՍԴՈ-1803 որոշմամբ որոշել է, որ 2025 թվականի հունիսի 30-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Եվրոպական միության ճգնաժամային կառավարման գործողություններում Հայաստանի Հանրապետության մասնակցության շրջանակը սահմանելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2025 թվականի նոյեմբերի 14-ի ՍԴՈ-1803 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու

վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2025 թվականի նոյեմբերի 14-ի ՍԴՈ-1803 որոշմամբ 2025 թվականի հունիսի 30-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Եվրոպական միության ճգնաժամային կառավարման գործողություններում Հայաստանի Հանրապետության մասնակցության շրջանակը սահմանելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին

ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581,ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է

հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

<u>Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:</u>

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Ընդ որում, էլեկտրոնային ստորագրությունը կարող է էլեկտրոնային փաստաթղթին տալ իրավական նշանակություն այն դեպքում, երբ էլեկտրոնային ստորագրությունը տեսողական դիտման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով արտահայտվում է ցուցասարքի (դիսփլեյի) էկրանին, թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում

էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն

գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«14» նոյեմբերի 2025թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆ - ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔ ԾՐԱԳԻՐ» ԿԶԵՀ + ՀԱՏՈՒԿ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՊԱՏՈՒՀԱՆ 1» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան — 17 նոյեմբերի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի,

դատավորներ՝ Արտակ Զեյնալյանի (զեկուցող),
Հրայր Թովմասյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ՝

Կառավարության ներկայացուցիչներ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Քրիստինե Ղալեչյանի,
Արդարադատության նախարարի տեղակալ Տիգրան Դադունցի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց ««Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2025 թվականի հուլիսի 16-ին ստորագրված «Հայաստան - Դիմակայուն Սյունիք ծրագիր» ԿԶԵՀ + Հատուկ ներդրումային պատուհան 1» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի սեպտեմբերի 11-ի N 1294-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Հայաստան – Դիմակայուն Սյունիք ծրագիր» ԿԶԵՀ + Հատուկ ներդրումային պատուհան 1» ֆինանսական պայմանագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի սեպտեմբերի 18-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով սույն գործով զեկուցողի զեկույցը, Կառավարության ներկայացուցիչների բացատրությունները, հետազոտելով պայմանագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Հայաստան - Դիմակայուն Սյունիք ծրագիր» (այսուհետ՝ Ծրագիր) ԿԶԵՀ + Հատուկ ներդրումային պատուհան 1» ֆինանսական պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) ստորագրվել է 2025 թվականի հուլիսի 16-ին Լյուքսեմբուրգում՝ Սյունիքի մարզում բազմաոլորտային ներդրումներ կատարելու միջոցով հասցեական աջակցություն տրամադրելով՝ վերջին հակամարտությունների հետևանքները վերացնելու նպատակով:

2. Պայմանագրի Նախաբանի «ա» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (ՖՆ), նշել է, որ այն, հանդես գալով, ի թիվս այլնի, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջոցով (ՏԿԵՆ) **(Իրականացնող մարմին**՝ ստորև սահմանված կարգով), ստանձնում է կարևոր պետական ենթակառուցվածքներում ներդրումներ կատարելու միջոցով վերականգման համար խիստ անհրաժեշտ աջակցության տրա-

մադրման նախագծի իրականացումը՝ դրանում ներառելով տեղահանված բնակչության հիմնական ենթակառուցվածքային կարիքները, Հայաստանի հարավային մարզում, որը զգալի տուժել է Լեռնային Ղարաբաղի ճգնաժամի հետևանքով (յուրաքանչյուր գործողություն՝ **Նախաձեռնություն** կամ **Ենթանախագիծ**, և միասին՝ **Նախագիծ),** ինչն առավել մանրամասն ներկայացված է Պայմանագրի «Ա» հավելվածում սահմանված տեխնիկական նկարագրում **(Տեխնիկական նկարագիրը):** Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ) հանդես է գալիս որպես ծրագրերի իրականացման գրասենյակ (ԾԻԳ)՝ Իրականացնող մարմնի մակարդակում Նախագծի իրականացմանը և կառավարմանն աջակցելու համար:

Դիմումին կից ներկայացված Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Պայմանագրի կատարման համար պատասխանատու մարմինների վերաբերյալ տեղեկատվության համաձայն՝ «Դիմակայուն Սյունիք» (RESYP) ծրագրի՝ խմելու ջրամատակարարման բաղադրիչն իրականացնող մարմին(ներ)ը կլինի/կլինեն ՀՏԶՀ-ն և/կամ Ջրային կոմիտեն:

3. Պայմանագրի Նախաբանի «գ» կետով սահմանվում է, որ Պայմանագրով ֆինանսավորումը տրամադրվում է Կայուն զարգացման եվրոպական հիմնադրամին (ԿԶԵՀ+) համապատասխան, որն ինտեգրված ֆինանսական փաթեթ է, ապահովում է ֆինանսավորման ներուժ՝ դրամաշնորհների, բյուջետային երաշխիքների և ֆինանսական գործիքների տեսքով ամբողջ աշխարհում և մասնավորապես՝ սուվերեն գործընկերների և ոչ առևտրային ենթասուվերեն գործընկերների հետ գործառնությունների բացառիկ ներդրումային պատուհանի շրջանակներում՝ համաձայն ՀԶՄՀԳ-ԳԵ կանոնակարգի[1] 36.1 հոդվածի (ԿԶԵՀ+ՀՆՊ1[2]): ՀԶՄՀԳ-ԳԵ կանոնակարգի 36.8 հոդվածի համաձայն՝ 2022 թվականի ապրիլի 29-ին Բանկը և Եվրոպական միությունը՝ ի դեմս Եվրոպական հանձնաժողովի, կնքել են ԿԶԵՀ+ երաշխիքային համաձայնագիրը (**ԿԶԵՀ+ՀՆՊ1 երաշխիքային համաձայնագիր**), որով Եվրոպական միությունը Բանկին տրամադրել է համապարփակ երաշխիք Բանկի ֆինանսավորման թույլատրելի գործառնությունների համար՝ ՀԶՄՀԳ-ԳԵ կանոնակարգի (**ԿԶԵՀ+ՀՆՊ1 երաշխիք**) 4-րդ հոդվածի 2-րդ կետում նշված աշխարհագրական տարածքներում գտնվող երկրներում իրականացվող նախագծերի առնչությամբ: Հայաստանի Հանրապետությունն իրավասու երկիր է՝ համա-ձայն ՀԶՄՀԳ-ԳԵ կանոնակարգի:

4. Պայմանագիրն ունի հավելվածներ՝ Հավելված Ա **«Տեխնիկական նկարագիրը»,** Հավելված Բ **«ԵՎՐԻԲՈՐ-ը»,** Հավելված Գ **«Հատկացման առաջարկի/Ընդ-**

[1] Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական խորհրդի 2021 թվականի հունիսի 9-ի թիվ 2021/947 (ԵՄ) կանոնակարգը, որով սահմանվում է Հարևանության, զարգացման և միջազգային համագործակցության գործիքը՝ Գլոբալ Եվրոպա:

[2] Հատուկ ներդրումային պատուհան 1:

դունման ձևը (Հոդվածներ 1.2.Բ և 1.2.Գ)», Հավելված Դ **«Տոկոսադրույքի վերանայումը և փոխարկումը»,** Հավելված Ե **«Վարկառուի կողմից տրամադրվելիք հավաստագրերը»:**

5. Ըստ Պայմանագրի **Հավելված Ա**-ի՝ Նախագծի նպատակն է Հայաստանի Սյունիքի մարզում բազմաոլորտային ներդրումներ կատարելու միջոցով տրամադրել հասցեական աջակցություն՝ վերացնելով վերջին հակամարտությունների հետևանքները: Դրանում ընդգրկված կլինեն Սյունիքի մարզի տարբեր համայնքներ, որոնք էապես տուժել են պատերազմի հետևանքով՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն համայնքներին, որոնք կա՛մ ընդունում են տեղահանված անձանց, կա՛մ իրենք են վերականգնվում հակամարտության հետևանքով կրած վնասներից: Նախաձեռնության շրջանակներում ապահովվում է տեխնիկական աջակցության արդյունավետ օգտագործումը և վերահսկվում է տեղական ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված ենթագործողությունների իրականացումը և դիտանցումը, մասնավորապես՝ ջրային, առողջապահության և կրթության ոլորտներում համայնքի դիմակայունությունը և տնտեսության վերականգնումը խթանելու համար:

ԵՆԲ-ի գործողություն-միջամտություններն ապահովում են Սյունիքում Կառավարության առաջնահերթությունների, Կառավարության ոլորտային բարեփոխումների իրականացումը և համաձայնեցվում են Սյունիքի մարզում դիմակայունության բարձրացմանն ուղղված հարակից միջոցառումներ իրականացնող այլ համապատասխան զարգացման գործընկերների աշխատանքների հետ և փոխլրացնում այն: Կառավարության նախարարությունները և Սյունիքի մարզպետարանն ակտիվ գործունեություն են ծավալում այդ օրակարգն իրագործելու համար, որի հիմնական ներդրումային առաջնահերթություններն են՝ i) որակյալ առողջապահական և բժշկական ծառայությունների հասանելիությունը, ii) որակյալ տեխնիկական և մասնագիտական կրթական ծառայությունների հասանելիությունը և iii) ջրային ռեսուրսներին համայնքի և ընտանիքների հասանելիությունը:

Գործողություն-միջամտությունների արդյունքում կբարելավվեն լավարկված սոցիալական ծառայություններին (առողջապահություն, կրթություն և ջրամատակարարում) և կենսապահովման միջոցներին ընտանիքների և համայնքի հասանելիությունը, զբաղվածության և տնտեսական գործունեության հնարավորությունները: Տեղահանված ընտանիքների և փախստականների համար կբարելավվեն ծառայություններին հասանելիությունը, առողջական վիճակի ցուցանիշները, և կընդլայնվեն կենսապահովման հնարավորությունները:

Ըստ Պայմանագրի **Հավելված Ա**-ի՝ Հայաստանի Սյունիքի մարզում առաջարկվող Գործողությունը նախատեսված է խիստ կարևոր սոցիալական ենթակառուցվածքները հզորացնելու համար: Սա ներառում է հիմնական օբյեկտների վերականգնում և շինարարություն, ինչպիսիք են տեխնիկական և մասնագիտական

կրթության և ուսուցման քոլեջները, առողջապահական հաստատությունները, այդ թվում՝ կենսական նշանակության ջրային ենթակառուցվածքի վերականգնումը՝ հիմնականում Սյունիքի մարզի գյուղական տարածքներում տեղահանված անձանց և ընդունող համայնքների հիմնական կարիքները բարելավելու և արժանապատիվ կենսապայմաններ ապահովելու համար:

Ենթագործողությունների ցանկը սահմանվում է Իրականացնող մարմնի կողմից՝ Եվրոպական ներդրումային բանկի (այսուհետ՝ ԵՆԲ) կողմից հաստատված նախնական գնահատման մեթոդաբանության օգտագործմամբ: Իրականացնող մարմինը ենթագործողությունների վերջնական ցանկը ներկայացնում է Բանկի հաստատմանը՝ նախապես սահմանված ձևաչափով, որը կհամաձայնեցվի իրականացման փուլում: Ներկայացման ենթակա այս փաստաթղթերի կազմում կներառվի գնումների մանրամասն պլան: Կարևոր է նշել, որ ենթագործողությունների ցանկն ունի նախնական բնույթ, և դրանում կարող են կատարվել ճշգրտումներ գործողության իրականացման ընթացքում:

6. Պայմանագրով Բանկը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է, և Հայաստանի Հանրապետությունն ընդունում է 50,000,000.00 եվրոյի չափով (հիսուն միլիոն եվրո) վարկ (Վարկ) Նախագծի ֆինանսավորման համար: Վարկը հատկացվում է մինչև 15 (տասնհինգ) Տրանշով և ոչ ավելի, քան մեկ (1) Տրանշ՝ 30-օրյա (երեսուն) ժամկետում: Յուրաքանչյուր Տրանշի գումարը կազմում է նվազագույնը 1,000,000.00 եվրո (մեկ միլիոն եվրո) կամ (եթե ավելի քիչ) Վարկի չօգտագործված ամբողջ մնացորդը: Առաջին Տրանշի առավելագույն գումարը չի գերազանցում 5,000,000.00 եվրոն (հինգ միլիոն եվրո):

7. Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները՝

7.1. չհակասելով Պայմանագրի 5.2 հոդվածի «ե» կետին՝ ընդունել, որ Հայաստանի Հանրապետության կողմից ծանուցված Հատկացման հաշվին կատարված վճարումները Պայմանագրի համաձայն կատարվող հատկացումներ են այն-պես, ինչպես այն դեպքում, երբ դրանք կատարվեին Հայաստանի Հանրապետու-թյան սեփական բանկային հաշվին (հոդված 1.2.Դ),

7.2. մինչև Հատկացման առաջարկի առաջին պահանջը՝ Բանկի համար բավարար ձևով և բովանդակությամբ Բանկին տրամադրել ապացույց, որ Հայաստանի Հանրապետության կողմից Պայմանագրի ստորագրումը պատշաճ կերպով լիազորված է, Հայաստանի Հանրապետության անունից Պայմանագիրն ստորագրող անձը կամ անձինք պատշաճ կերպով լիազորված են դա անելու՝ յուրաքանչյուր այդպիսի անձի կամ անձանց ստորագրության նմուշով, Պայմանագրի առնվազն 2 (երկու) բնօրինակ պատշաճ կերպով ստորագրված է բոլոր Կողմերի կողմից, և Լիազորված

ստորագրող անձանց և հաշիվների ցանկը՝ նախքան Հայաստանի Հանրապետության կողմից Հատկացման առաջարկ հայցելը՝ համաձայն 1.2.Բ հոդվածի (հոդված 1.4.Ա),

7.3. Պայմանագրով սահմանված Տրանշների հատկացման համար բավարարել Պայմանագրի 1.4 հոդվածով սահմանված պահանջները (հոդված 1.4.),

7.4. Ընդունված տրանշի հատկացումը հետաձգելու գրավոր խնդրանքով Բանկին դիմելու դեպքում ապահովել, որ այդ խնդրանքը Բանկի կողմից ստացվի Ընդունված տրանշի Հատկացման պլանավորված ամսաթվից առնվազն 5 (հինգ) Աշխատանքային օր առաջ և դրանում նշված լինեն Պայմանագրի 1.5.Ա(1) հոդվածում շարադրված պահանջները (հոդված 1.5.Ա(1)),

7.5. Ընդունված տրանշի հատկացումը Պայմանագրի 1.5.Ա(1) կամ 1.5.Ա(2) կետերի համաձայն հետաձգվելու դեպքում վճարել Հետաձգման վճար, որը հաշվարկվում է Ընդունված տրանշի հետաձգված կամ կասեցված գումարի վրա՝ տարեկան 0.125%-ից (12.5 բազիսային կետ) բարձր տոկոսադրույքով, և այն տոկոսադրույքից բարձր տոկոսադրույքով, որով տոկոսադրույքը, որը կկիրառվեր այդպիսի Տրանշի նկատմամբ, եթե այն հատկացվեր Հայաստանի Հանրապետությանը Հատկացման պլանավորված ամսաթվին, գերազանցում է ԵՎՐԻԲՈՐԸ (մեկ ամսվա դրույքաչափ)՝ հանած 0,125% (12.5 բազիսային կետ), եթե այդպիսի դրույքաչափը զրոյից քիչ չէ, որի դեպքում այն սահմանվում է զրո (հոդված 1.5.Ա(3) և Նախաբանի «Սահմանումները» բաժին),

7.6. Բանկին վճարել Ընդունված տրանշի գումարի վրա հաշվարկված Հետաձգման վճարը, եթե Բանկը կասեցնում է Ընդունված տրանշը Փոխհատուցման ենթակա կանխավճարի դեպքի կամ Պարտավորությունների չկատարման դեպքի կամ այնպիսի դեպքի կամ հանգամանքի առկայության դեպքում, որը ժամանակի ընթացքում կամ Պայմանագրով նախատեսված ծանուցման կամ որևէ որոշման կայացման հետևանքով (կամ վերոշարադրյալ դեպքերի համակցության արդյունքում) Փոխհատուցման ենթակա կանխավճարի դեպք է կամ Պարտավորությունների չկատարման դեպք, կամ Էական բացասական փոփոխություն տեղի ունենալու դեպքում (հոդված 1.6.Գ(1)),

7.7. Ընդունված տրանշը, որը Ֆիքսված դրույքաչափով տրանշ է (Չեղարկված տրանշ), Հայաստանի Հանրապետության կողմից՝ համաձայն Պայմանագրի 1.6.Ա հոդվածի, կամ Բանկի կողմից՝ Փոխհատուցման ենթակա կանխավճարի դեպքի կամ այն հանգամանքի դեպքում, որը ժամանակի ընթացքում կամ սույն Պայմանագրով նախատեսված ծանուցման կամ որևէ որոշման կայացման հետևանքով (կամ վերոշարադրյալ դեպքերի որևէ համակցության դեպքում) Փոխհատուցման ենթակա կանխավճարի դեպք է, կամ Էական բացասական փոփոխություն տեղի ունենալու դեպքում կամ 1.5.Բ հոդվածի համաձայն չեղարկվելու դեպքում Բանկին վճարել փոխհատուցում այդ Չեղարկված տրանշի մասով (հոդված 1.6.Գ(2)(ա)),

7.8. Բանկին վճարել կամ ապահովել, որ վճարվի 50,000.00 (հիսուն հազար) եվրո գնահատման վճար Բանկի կողմից Նախագծի վերաբերյալ իրականացված գնահատման մասով և ապահովել, որ այդ գնահատման վճարը կատարվի Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող Աշխատանքային օրվանից սկսած 15 (տասնհինգ) Աշխատանքային օրվա ընթացքում, իսկ Պայմանագրի 1.6 հոդվածի համաձայն Վարկի չեղարկման դեպքում Բանկին այդ չեղարկման ամսաթվին վճարել գնահատման վճարը (հոդված 1.8),

7.9. Բանկին վճարել չօգտագործման միջնորդավճար, որը հաշվարկվում է Վարկի օրական չօգտագործված և չչեղարկված մնացորդի նկատմամբ՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո 36 (երեսունվեց) ամիս անց ընկած ամսաթվից մինչև Վերջնական հասանելիության ամսաթիվը, տարեկան 0.10% (տասը բազիսային կետ) տոկոսադրույքով (հոդված 1.9(ա)),

7.10. Հաշվեգրված չօգտագործման միջնորդավճարը վճարել յուրաքանչյուր Վճարման ամսաթվին[3] մինչև Վերջնական հասանելիության ամսաթիվը, և Վերջնական հասանելիության ամսաթվին կամ, եթե Վարկը 1.6 հոդվածի համաձայն ամբողջությամբ չեղարկվել է մինչև Վերջնական հասանելիության ամսաթիվը, ապա Պայմանագրի 1.9(բ) հոդվածի «i» ենթակետում նշված վճարման ամսաթվին՝ չեղարկման ամսաթվից անմիջապես հետո (հոդված 1.9(բ)),

7.11. Պայմանագրի 1.9 հոդվածի համաձայն՝ վճարման ենթակա գումարները (Չօգտագործման միջնորդավճար) վճարել Վարկի արժույթով (հոդված 1.9(դ), վերջին պարբերություն),

7.12. ապահովել, որ Պայմանագրի 1.5 և 1.6 հոդվածներով նախատեսված՝ վճարման ենթակա գումարները վճարվեն եվրոյով և Հայաստանի Հանրապետության կողմից Բանկի պահանջն ստանալուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում կամ Բանկի պահանջում սահմանված ցանկացած ավելի երկար ժամկետում (հոդված 1.10),

7.13. Բանկին տրամադրել Ենթանախագծերի վերաբերյալ ցանկացած լրացուցիչ տեղեկություն, որը Բանկն իր հայեցողությամբ կարող է պահանջել (Հոդված 1.11.Ա(զ)),

7.14. Բանկից փոխառության ֆինանսավորում ստանալու համար համապատասխան լինելու նպատակով ստուգել Ենթանախագծերի՝ Բանկի համապատասխան և կիրառելի քաղաքականություններին և ուղեցույցներին համապատասխանությունը և ապահովել, որ բոլոր Ենթանախագծերը լինեն տեխնիկապես, տնտեսապես և ֆինանսապես կենսունակ և կայուն, համապատասխանեն Բանկի բնապահպանական և սոցիալական չափանիշներին և իրականացվեն Բանկի գնումների ուղեցույցում նկարագրված ընթացակարգերին համապատասխան (հոդված 1.11.Ա(է)),

[3] «Վճարման ամսաթիվ» նշանակում է մարտի 20-ը և սեպտեմբերի 20-ը՝ Պայմանագրի Նախաբանի «Սահմանումները» բաժնում դրան տրված մեկնաբանությամբ:

7.15. յուրաքանչյուր Տրամադրման հայտի հետ ներկայացնել այդ Տրամադրման հայտում ընդգրկված Ենթանախագծի գնումների պլանը՝ Բանկի համար ընդունելի ձևով և բովանդակությամբ (հոդված 1.11.Ա(ը)),

7.16. վերատրամադրման անհնարինության կամ միայն մասամբ հնարավոր լինելու դեպքում Բանկից ծանուցումն ստանալուց հետո Պայմանագրի 4.3 հոդվածի համաձայն՝ Բանկին կանխավճարի տեսքով անհապաղ վճարել այն Չմարված փոխառության մասը, որը Բանկը հատկացրել է՝ հաշվի առնելով սկզբնական տրամադրումը (հոդված 1.12(գ)),

7.17. յուրաքանչյուր Տրանշի մասով տոկոսները, մայր գումարը և վճարման ենթակա այլ գանձումներ վճարել այն արժույթով, որով հատկացվել է այդ Տրանշը, իսկ այլ վճարումները, առկայության դեպքում, կատարել Բանկի կողմից սահմանված արժույթով՝ հաշվի առնելով այդ վճարման միջոցով փոխհատուցման ենթակա ծախսերի արժույթը (հոդված 2.2),

7.18. յուրաքանչյուր Ֆիքսված դրույքաչափով տրանշի չմարված մնացորդի նկատմամբ վճարել տոկոս Ֆիքսված դրույքաչափով յուրաքանչյուր եռամսյակ կամ յուրաքանչյուր կիսամյակ՝ ապառքներով՝ համապատասխան Վճարման ամսաթվերին, ինչպես նշված է Հատկացման առաջարկում՝ սկսած Տրանշի Հատկացման ամսաթվին հաջորդող առաջին այդպիսի Վճարման ամսաթվից, իսկ Հատկացման ամսաթվից մինչև առաջին Վճարման ամսաթիվն ընկած ժամանակահատվածը 15 (տասնհինգ) օր կամ ավելի քիչ լինելու դեպքում, այդ ժամանակահատվածում հաշվեգրված տոկոսի վճարումը հետաձգել մինչև հաջորդ Վճարման ամսաթիվը. Տոկոսը հաշվարկվում է 5.1 հոդվածի «ա» կետի հիման վրա (հոդված 3.1.Ա),

7.19. յուրաքանչյուր Լողացող դրույքաչափով տրանշի չմարված մնացորդի նկատմամբ վճարել տոկոս Լողացող դրույքաչափով յուրաքանչյուր եռամսյակ կամ յուրաքանչյուր կիսամյակ՝ ապառքներով՝ համապատասխան Վճարման ամսաթվերին, ինչպես նշված է Հատկացման առաջարկում՝ սկսած Տրանշի Հատկացման ամսաթվին հաջորդող առաջին այդպիսի Վճարման ամսաթվից, իսկ Հատկացման ամսաթվից մինչև առաջին Վճարման ամսաթիվն ընկած ժամանակահատվածը 15 (տասնհինգ) օր կամ ավելի քիչ լինելու դեպքում, այդ ժամանակահատվածում հաշվեգրված տոկոսի վճարումը հետաձգել մինչև հաջորդ Վճարման ամսաթիվը (հոդված 3.1.Բ, պարբերություն 1),

7.20. Տրանշի տոկոսադրույքի բազայի վերանայման կամ փոխարկման տարբերակն իրացնելու դեպքում Տոկոսի վերանայումը/փոխարկումն ուժի մեջ մտնելու ամսաթվից («Դ» հավելվածում սահմանված ընթացակարգին համապատասխան) վճարել տոկոս՝ Պայմանագրի «Դ» հավելվածում նախատեսված դրույթներին համապատասխան սահմանված դրույքաչափով (հոդված 3.1.Գ),

7.21. չսահմանափակելով Պայմանագրի 10-րդ հոդվածը և 3.1 հոդվածից բացառության կարգով, վճարել ժամկետանց գումարների նկատմամբ հաշվեգրված տոկոսը՝ Պայմանագրի 3.2 հոդվածով սահմանված կարգով և դրույքաչափով (հոդված 3.2),

7.22. յուրաքանչյուր Տրանշ հետ վճարել մաս-մաս վճարումներով՝ համապատասխան Հատկացման առաջարկում նշված Հետվճարման ամսաթվերին՝ Պայմանագրի 2.3 հոդվածի համաձայն տրամադրված ամորտիզացման աղյուսակի պայմաններին համապատասխան (հոդված 4.1.Ա(ա)),

7.23. Պայմանագրի 4.2.Բ(3) հոդվածին համապատասխան՝ Ֆիքսված դրույքաչափով տրանշի կանխավճար կատարելու դեպքում Կանխավճարի ամսաթվին Բանկին վճարել Կանխավճարի փոխհատուցում այն Ֆիքսված դրույքաչափով տրանշի համար, որով կանխավճար է կատարվում (հոդված 4.2.Բ(1)),

7.24. Կանխավճարի մասին ծանուցման մեջ նշված գումարը վճարել Կանխավճարի համապատասխան ամսաթվին (հոդված 4.2.Գ, պարբերություն 4),

7.25. Բանկի կողմից միանձնյա հայեցողությամբ Կանխավճարի մասին դիմումը բացառության կարգով 30 (երեսուն) օրացուցային օրվանից պակաս օր առաջ արված նախնական ծանուցմամբ ընդունելու դեպքում յուրաքանչյուր Տրանշի համար Բանկին վճարել 10,000.00 եվրոյի (տասը հազար եվրո) չափով վճար, որի մասով մասնակի կամ ամբողջական կանխավճար է պահանջվում՝ հաշվի առնելով այդ կամավոր կանխավճարի հետ կապված Բանկի կրած վարչական ծախսերը (հոդված 4.2.Դ),

7.26. Բանկին անհապաղ տեղեկացնել, եթե տեղի է ունենում կամ հավանական է, որ տեղի կունենա Նախագծի ծախսերի կրճատման դեպք, Ոչ ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորման կանխավճարի դեպք, Օրենքի փոփոխության դեպք, և Պայմանագրի 4.3.Ա(1) և 4.3.Ա(2) հոդվածներով պահանջված գումարի վճարումը կատարել Բանկի կողմից նշված ամսաթվին, որը պահանջը ներկայացվելու ամսաթվից ոչ պակաս, քան 30 (երեսուն) օր հետո է (հոդվածներ 4.3.Ա(1), 4.3.Ա(2) և 4.3.Ա(3)),

7.27. անհապաղ կանխավճարի տեսքով վճարել Չմարված վարկի այն մասը, որը չի տրամադրվել Պայմանագրի 1.11 հոդվածին համապատասխան կամ չի վերատրամադրվել Պայմանագրի 1.12 հոդվածին համապատասխան՝ հաշվեգրված տոկոսի և Պայմանագրի համաձայն հաշվեգրված կամ չմարված մյուս բոլոր գումարների հետ միասին՝ Բանկի կողմից նշված ամսաթվին, և այդ ամսաթիվը պահանջը ներկայացվելու ամսաթվից ոչ պակաս, քան 30 (երեսուն) օր հետո է (հոդված 4.3.Ա(5)),

7.28. Բանկի կողմից 4.3.Ա հոդվածի համաձայն պահանջված ցանկացած գումար Պայմանագրի համաձայն հաշվեգրված կամ վճարման ենթակա ցանկացած

տոկոսի կամ այլ գումարի հետ միասին, այդ թվում՝ առանց սահմանափակման, ցանկացած փոխհատուցում, որը 4.3.Գ հոդվածի համաձայն ենթակա է վճարման, վճարել Բանկի կողմից իր պահանջի մասին ծանուցման մեջ նշված Կանխավճարի ամսաթվին (հոդված 4.3.Բ),

7.29. Փոխհատուցման ենթակա կանխավճարի դեպքի պարագայում Ֆիքսված դրույքաչափով տրանշի կանխավճար կատարելու դեպքում Բանկին Կանխավճարի ամսաթվին վճարել Կանխավճարի փոխհատուցում այն Ֆիքսված դրույքաչափով տրանշի համար, որով կանխավճար է կատարվում (հոդված 4.3.Գ(1)),

7.30. երաշխավորել, որ հետ վճարված կամ կանխավճարի տեսքով վճարված գումարը վերափոխառությամբ չի տրամադրվի (հոդված 4.4.Բ),

7.31. Պայմանագրում կամ Բանկի պահանջով այլ բան սահմանված չլինելու դեպքում տոկոսագումարներից, փոխհատուցման և մայր գումարից բացի բոլոր այլ գումարները վճարել Բանկի պահանջն ստացվելուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում (հոդված 5.2(ա)),

7.32. Պայմանագրի համաձայն վճարման ենթակա յուրաքանչյուր գումար վճարել Բանկի կողմից ծանուցված համապատասխան հաշվին՝ վճարման ռեկվիզիտներում նշելով Պայմանագրի համարը (հոդված 5.2(բ) և (գ)),

7.33. Պայմանագրի համաձայն փոխառված բոլոր գումարներն օգտագործել Նախագծի իրականացման համար և ապահովել, որ Հայաստանի Հանրապետությանը հասանելի լինեն Նախաբանի «բ» կետում նշված մյուս ֆինանսական միջոցները, այդ ֆինանսական միջոցներն անհրաժեշտ չափով ծախսվեն Նախագծի ֆինանսավորման համար, ինչպես նաև ապահովել, որ Փոխառության միջոցները չօգտագործվեն ապրանքների և ծառայությունների վաճառքի և ապրանքների և ծառայությունների ներմուծման ավելացված արժեքի հարկը, մաքսատուրքերը և ներմուծման այլ տուրքեր, հարկեր և Նախագծի իրականացման ընթացքում առաջացող այլ գանձումներ վճարելու համար (հոդված 6.1),

7.34. Նախագիծն իրականացնել Տեխնիկական նկարագրին համապատասխան՝ Բանկի հաստատմամբ դրանում ժամանակ առ ժամանակ կատարվող փոփոխություններով և ավարտել մինչև դրանում նշված վերջնական ամսաթիվը (հոդված 6.2),

7.35. Նախագծի ընդհանուր ծախսը Նախաբանի «բ» կետում նշված գնահատված թիվը գերազանցելու դեպքում ձեռք բերել ֆինանսներ՝ առանց Բանկին դիմելու գերազանցող ծախսերը ֆինանսավորելու համար, որ հնարավոր դառնա Նախագծի ավարտը՝ Տեխնիկական նկարագրին համապատասխան, և գերազանցող ծախսերը ֆինանսավորելու պլանների մասին առանց ձգձգման հաղորդել Բանկին (հոդված 6.3),

7.36. ի բավարարումն Բանկի՝ դրա Գնումների ուղեցույցում նկարագրված՝ դրա քաղաքականությանը համապատասխանող ընդունելի գնումների ընթացակարգերով գնել սարքավորումներ, անվտանգ ծառայություններ և պատվիրել աշխատանքներ Նախագծի համար (հոդված 6.4),

7.37. կատարել, իսկ համապատասխան դեպքերում ապահովել, որ Սյունիքի մարզպետարանը կատարի Պայմանագրի 6.5 հոդվածով սահմանված աշխատանքները (հոդված 6.5),

7.38. ապահովել, որ տեղի չունենա Ենթանախագծի նույն բաղադրիչների կրկնակի ֆինանսավորում Բանկի կողմից տրամադրված այլ ֆինանսական միջոցներով՝ անկախ այն հանգամանքից՝ դրանք տրամադրվել են Պայմանագրի շրջանակներում, թե այլ կերպ, այլ նվիրատուների/ֆինանսավորողների կողմից (հոդված 6.6(ա)),

7.39. ապահովել, որ Բանկն անհապաղ ծանուցվի որևէ Ենթանախագծի իրականացման կասեցման կամ չեղարկման մասին (հոդված 6.6(բ)),

7.40. ապահովել, որ Իրականացնող մարմինը պահպանի Բանկի բոլոր կիրառելի քաղաքականությունները և ուղեցույցները, այդ թվում (առանց սահմանափակման)՝ Բնապահպանական և սոցիալական չափանիշները և Գնումների ուղեցույցը, ինչպես նաև ապահովել, որ աշխատանքի ընդունվեն և առկա լինեն բավարար թվով պատշաճ որակավորում ունեցող աշխատակիցներ՝ այդ պահանջի կատարումն ապահովելու համար (հոդված 6.6(գ)),

7.41. ապահովել վերահսկողական ծառայությունների համար անհրաժեշտ ցանկացած ազգային լիցենզիայի ձեռքբերումը, ինչպես նաև ապահովել, որ իրավական պաշտպանության միջոցներով վերանայման ընթացակարգերը հասանելի լինեն ցանկացած կողմի, որը շահագրգռված է եղել կոնկրետ պայմանագիր ձեռք բերելու հարցում, վնաս է կրել ենթադրյալ խախտման հետևանքով, կամ առկա է այդպիսի վտանգ (հոդվածներ 6.6(դ) և 6.6(ե)),

7.42. ապահովել, որ Իրականացնող մարմինը Ենթանախագծերի կամ որևէ Ենթանախագծի բոլոր պայմանագրերի մրցութային փաստաթղթերում հստակ հիշատակի առկա իրավական պաշտպանության ազգային մեխանիզմի հասանելիությունը (հոդված 6.6(զ)),

7.43. ապահովել, որ Բանկի կողմից ֆինանսավորման ենթակա պայմանագրերի մրցութային փաստաթղթերի՝ տեղական նախապատվությունների/տեղական արտադրանքի վերաբերյալ դրույթները չհակասեն Բանկի պահանջներին (այդ թվում՝ Գնումների ուղեցույցի պահանջներին) և գնումների գործընթացում տեղական նախապատվությունների/տեղական արտադրանքի վերաբերյալ պահանջներ պարունակող Ենթանախագծերը, որոնք հակասում են Գնումների ուղեցույցին, չեն համապատասխանում այս գործողության իրականացման համար (հոդված 6.6(է)),

7.44. ապահովել, որ Իրականացնող մարմինը յուրաքանչյուր տրամադրումից առաջ Բանկ ներկայացնի գնումների մանրամասն պլան և անհապաղ տեղեկացնի Բանկի գնումների սկզբնական պլանում (պլաններում) կատարված ցանկացած փոփոխության մասին (հոդված 6.6(ը)),

7.45. ապահովել, որ Իրականացնող մարմինը խորհրդակցի Բանկի հետ՝ Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագրերի փոփոխությունների առնչությամբ, և փորձի մինչև Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագրերում էական փոփոխություններ կատարելը ձեռք բերել Բանկի համաձայնությունը (համաձայն Գնումների ուղեցույցի) (հոդված 6.6(թ)),

7.46. ապահովել, որ յուրաքանչյուր Ենթանախագծի արտոնություններ հավասարապես հասանելի լինեն բոլորին՝ խտրականության բացառման, մասնակցության և թափանցիկության ապահովման սկզբունքների հիման վրա, ազդակիր անձանց տրամադրվեն Ենթանախագծերով և Հայաստանի օրենքներով սահմանված աջակցության մասին թափանցիկ և հասանելի տեղեկություններ և դյուրացվի տեղահանված անձանց ինտեգրումն իրենց ներկայիս բնակության վայրում (հոդված 6.6(ժ)),

7.47. Բանկի կողմից ֆինանսավորման ներկայացված ցանկացած Ենթանախագծի դեպքում ապահովել, որ այն չդառնա Հայաստանում նոր ակտիվ հակամարտության պատճառ, դրա իրականացման վայրը չլինի Հայաստանի կառավարության վերահսկողությունից դուրս գտնվող տարածքներում (հոդված 6.6(ժա)),

7.48. ներդնել և վարել որակի կառավարման համակարգ, որը երաշխավորում է, որ գործողության նպատակներն իրագործվեն, այդ թվում (առանց սահմանափակման)՝ շինարարական աշխատանքների որակը համապատասխանի միջազգային լավագույն գործելակերպերին, եթե կիրառելի են, և շինարարական աշխատանքների ընթացքն արձանագրվի շինարարական հրապարակի հաշվառման մատյաններում (հոդված 6.6(ժբ)),

7.49. Բանկին թույլատրել ստուգումներ իրականացնել Ենթանախագծի իրականացման գործընթացի տարբեր փուլերում՝ չսահմանափակվելով Պայմանագրի 6.6 հոդվածի «ժգ» կետում շարադրված բաղադրիչներով (հոդված 6.6(ժգ)),

7.50. ապահովել, որ իրենց պահանջով Բանկին և նրա աշխատակիցներին, գործակալներին, խորհրդականներին և խորհրդատուներին պատշաճ ձևով հասանելիություն տրվի ցանկացած տեղամասի և փաստաթղթի, որն անհրաժեշտ է Պայմանագրի 6.6 հոդվածի «ժգ» կետում նշված բաղադրիչներն ստուգելու համար (հոդված 6.6(ժդ)),

7.51. Բանկի համար ընդունելի ձևով և Բանկի կողմից ծանուցված ժամկետներում վերացնել Ենթանախագծի հետ կապված ցանկացած թերություն, սխալ, բացթողում կամ անօրինականություն, որոնք ի հայտ են բերել Պայմանագրի 6.6 հոդվածի «ժդ» կետում նշված անձինք (հոդված 6.6(ժե)),

7.52. ապահովել, որ ԾԻԳ-ի գործունեությունը պահպանվի մինչև գործողության իրականացման ժամկետի ավարտը՝ Բանկի համար ընդունելի աշխատակիցներով (հոդված 6.6(ժզ)),

7.53. ապահովել տեխնիկական աջակցության համապատասխան թիմի օպտիմալ աշխատանքը, կատարյալ դեպքում՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի տարածքներում՝ ԾԻԳ-ի աշխատակիցների հետ սերտ համագործակցությամբ, և կատարյալ դեպքում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատասխանատու տնօրենի, ինչպես նաև համապատասխան պատասխանատու նախարարի տեղակալի (տեղակալների) հետ հանդիպելու մշտական հնարավորությունը՝ տեխնիկական խորհրդատվության և ուղղիչ միջոցառումների իրականացման նպատակով (հոդված 6.6(ժէ)),

7.54. նպաստել տեխնիկական աջակցության հարցերով այլ խորհրդատուների առաքելության իրականացմանը, որոնց վարձել է Բանկը ոլորտային խորհրդատվություն տրամադրելու և Ենթանախագծի դիտանցում իրականացնելու համար (հոդված 6.6(ժը)),

7.55. կասեցնել Ենթանախագծի իրականացման թույլտվությունը և Տրանշի ցանկացած մասի վճարումն այն կողմին, որի նկատմամբ կամ որի ղեկավարության մասով իրականացվում է քննություն համապատասխան մարմնի կողմից՝ Արգելված վարքագիծ դրսևորելու առնչությամբ (հոդված 6.6(ժթ)),

7.56. ապահովել, որ Ենթանախագծի (Ենթանախագծեր) կամ այլ նպատակներով հողեր ձեռք չբերվեն Պայմանագրի շրջանակներում Բանկի կողմից տրամադրված ֆինանսական միջոցներով, և ցանկացած այլ՝ Բանկի համար անթույլատրելի ծախս չկատարվի դրա միջոցներից (ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) և այլ հարկեր ու տուրքեր, շենքերի գնում, սպասարկման և այլ գործառնական ծախսեր, գործառնական ծախքեր, օգտագործված գույքի ձեռքբերում, շինարարության ընթացքում տոկոսներ, հանրային բնական ռեսուրսների օգտագործման լիցենզիաների, արտոնագրերի, ապրանքանիշերի և ապրանքային նշանների գնում, բացառապես ֆինանսական գործարքներ) (հոդված 6.6(ի)),

7.57. ապահովել, որ Իրականացնող մարմինը, ցանկացած համապատասխան իրականացնող գերատեսչություն կամ պատվիրակված մարմին Բանկի համար ընդունելի ձևով մշակեն սակագնային ռազմավարություն, որով ապահովվում է ջրային ակտիվների ֆինանսական կայունությունը՝ գործառնական և սպասարկման ծախսերի (ԳՍ ծախսեր) և կապիտալ ծախքերի (CAPEX) ամորտիզացիան գոնե որոշ չափով ծածկելու համար՝ միաժամանակ նաև հաշվի առնելով ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններին հասանելիությունը (հոդված 6.6(իա)),

7.58. ապահովել, որ Իրականացնող մարմինը և ցանկացած համապատասխան իրականացնող գերատեսչություն կամ պատվիրակված մարմին ձեռնարկեն

անհրաժեշտ միջոցառումներ, որ Սյունիքի տեղական համայնքները և կոմունալ տնտեսությունները, որոնք օգտվում են Վարկային միջոցներից, կարողանան գանձել ԳՍ ծախսերի լիարժեք փոխհատուցման սակագներ՝ Բանկի կողմից ֆինանսավորվող Ենթանախագծերի մասով շինարարության իրականացման վերջին տարվանից սկսած՝ միաժամանակ ապահովելով ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների համար հասանելիությունը (հոդված 6.6(իբ)),

7.59. ապահովել, որ Իրականացնող մարմինն ավարտի գենդերային գնահատումը և կազմի գենդերային գործողությունների ծրագիր՝ իրականացման նպատակով, ինչպես նաև Ենթանախագծերի մեծամասնության մեջ ընդգրկվեն համապատասխան միջոցառումներ, որոնց արդյունքում դրանք կդառնան գենդերային արձագանքող և ներառական, ինչպես նաև ապահովել, որ Իրականացնող մարմինը տրամադրի շահառուների մասին տվյալներ՝ տարբերակված ըստ սեռերի, գործողության համապատասխան արդյունքների համար, ինչպես նաև գենդերային արձագանքման և ներառականության ապահովման գործընթացում առաջընթացի մասին թարմացված ընդհանուր տեղեկություններ՝ որպես գործողության իրականացման մասին տեղեկությունների մաս (հոդված 6.6(իգ)),

7.60. բոլոր առումներով պահպանել այն բոլոր օրենքները, որոնք տարածվում են Հայաստանի Հանրապետության կամ Նախագծի վրա, եթե դրանք չպահպանելն էականորեն կվնասի Հայաստանի Հանրապետության՝ Պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարելու կարողությունը (հոդված 6.7),

7.61. ապահովել Պայմանագրի 6.8 հոդվածում հաշվապահական մատյանների և գրառումների վարմանը ներկայացվող պահանջների կատարումը (հոդված 6.8),

7.62. ապահովել Պայմանագրի 6.9 հոդվածում շարադրված՝ բարեվարքությանը ներկայացվող պահանջների կատարումը (հոդված 6.9),

7.63. երաշխավորել տվյալների պաշտպանությունը՝ Պայմանագրի 6.10 հոդվածի պահանջներին համապատասխան (հոդված 6.10),

7.64. Բանկին երաշխավորել և հավաստիացնել Պայմանագրի 6.11 հոդվածի դրույթների կատարումը (հոդված 6.11),

7.65. Համաձայն Գնումների ուղեցույցում Հայաստանի Հանրապետության համար սահմանված՝ շահերի բախումն արդյունավետորեն կանխելու, բացահայտելու և վերացնելու ընդհանուր պարտավորության՝ անել և ապահովել, որ մինչև Նախագծի շրջանակներում ֆինանսավորվող պայմանագրի շնորհումն Իրականացնող մարմինն անի Պայմանագրի 6.12 հոդվածում նշված գործողությունները (հոդված 6.12),

7.66. ապահովել, որ դրա՝ Պայմանագրի դասակարգմամբ սահմանված վճարային պարտավորությունները դասակարգվեն և կդասակարգվեն ոչ պակաս, քան pari passu վճարման իրավունքի նկատմամբ՝ դրա պարտքային գործիքներից որևէ մեկով սահմանված բոլոր այլ ընթացիկ և հետագա չապահովված և չստորադասված

պարտավորությունների հետ՝ բացառությամբ ընդհանրապես ընկերությունների նկատմամբ կիրառվող օրենքով պարտադիր նախընտրված պարտավորությունների (հոդված 7.1),

7.67. որևէ երրորդ կողմի Ապահովում տրամադրելու կամ տրամադրելու պայմանավորվածության դեպքում որևէ ընթացիկ կամ հետագա չապահովված և չստորադասված պարտավորության կատարման համար, որը սահմանված է դրա որևէ պարտքային գործիքով կամ որևէ նախապատվությամբ կամ առաջնահերթությամբ՝ կապված դրա հետ, Բանկի կողմից պահանջվելու դեպքում Բանկին տրամադրել համարժեք Ապահովում Պայմանագրով սահմանված իր պարտավորությունների կատարման համար, կամ Բանկին տրամադրել համարժեք նախապատվություն կամ առաջնահերթություն (հոդված 7.2),

7.68. Հայաստանի Հանրապետության կամ Խմբի որևէ այլ անդամ որևէ այլ ֆինանսական վարկատուի հետ ֆինանսավորման համաձայնագիր կնքելու դեպքում, որը ներառում է վարկանիշի կորստի մասին դրույթ կամ դրա ֆինանսական ցուցանիշի վերաբերյալ պարտավորություն կամ այլ դրույթ, եթե կիրառելի է, որը Պայմանագրով նախատեսված չէ կամ ավելի բարենպաստ է համապատասխան ֆինանսական վարկատուի համար, քան Պայմանագրի որևէ համարժեք դրույթ՝ Բանկի համար, Բանկին անհապաղ տեղեկացնել և Բանկին տրամադրել առավել բարենպաստ դրույթի օրինակ (հոդված 7.3),

7.69. Բանկին տրամադրել Պայմանագրի 8.1 հոդվածում սահմանված՝ Նախագծի վերաբերյալ տեղեկությունները (հոդված 8.1),

7.70. պահանջի դեպքում և ողջամիտ ժամկետում Բանկ ներկայացնել Հայաստանի Հանրապետությանը ներկայացվող՝ Բանկի պատշաճ ուսումնասիրության պահանջների՝ ներառյալ «Ճանաչիր քո հաճախորդին» (ՃՔՀ) կամ նույնականացման և ստուգման համանման ընթացակարգերի կատարման վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ, ապացույց կամ փաստաթուղթ և անհապաղ տեղեկացնել Բանկին Պայմանագրի 8.2 հոդվածի «բ» կետով սահմանված դեպքերի ի հայտ գալու մասին (հոդված 8.2),

7.71. թույլ տալ, որ Բանկը, և երբ դա պահանջվում է ԵՄ օրենսդրության համապատասխան պարտադիր դրույթներով կամ համաձայն ՀՀՄՀԳ-ԳԵ կանոնակարգի կամ Ֆինանսական կանոնակարգի, եթե կիրառելի է, Աուդիտորների եվրոպական դատարանը, Եվրոպական հանձնաժողովը, Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակը և Եվրոպական դատախազությունը, ինչպես նաև վերը նշված անձանց կողմից նշանակված անձինք (յուրաքանչյուրը՝ Համապատասխան կողմ) այցելեն Նախագծի մաս կազմող վայրեր, կայանքներ և աշխատանքների իրականացման վայրեր, զրուցեն Հայաստանի Հանրապետության, ԾԻԳ-ի ներկայացուցիչների հետ և չխոչընդոտեն Նախագծում ընդգրկված կամ Նախագծի հետ

առնչություն ունեցող որևէ այլ անձի հետ շփումները, ըստ իրենց ցանկության՝ անցկացնեն քննություններ, զննություններ, տեղում իրականացվող աուդիտ և ստուգումներ, ինչպես նաև ստուգեն Հայաստանի Հանրապետության՝ Փոխառության, Պայմանագրի և Նախագծի կատարման վերաբերյալ վարվող մատյաններն ու արձանագրությունները և հնարավորություն ունենան պատճենելու համապատասխան փաստաթղթերն այնքանով, որքանով օրենքն է թույլատրում (հոդված 8.3(ա)),

7.72. Բանկին և ցանկացած Համապատասխան կողմի տրամադրել կամ ապահովել, որ Բանկին և Համապատասխան կողմերին տրամադրվի հասանելիություն տեղեկությունների, շինությունների և փաստաթղթերի նկատմամբ, ինչպես նաև Պայմանագրի 8.3 հոդվածում նկարագրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ ամբողջական աջակցություն (հոդված 8.3(բ)),

7.73. Եվրոպական հանձնաժողովին և Հայաստանի Հանրապետությունում ԵՄ պատվիրակությանը թույլ տալ մասնակցել Պայմանագրի, Փոխառության կամ Նախագծի առնչությամբ Բանկի կողմից կազմակերպվող դիտանցման ցանկացած առաքելության (հոդված 8.3(գ)),

7.74. ընդունել և համաձայնել, որ Բանկը կարող է ստիպված լինել Հայաստանի Հանրապետության, Փոխառության, Պայմանագրի և (կամ) Նախագծի վերաբերյալ տեղեկություններ և նյութեր փոխանցել Եվրոպական միության ցանկացած հաստատության կամ մարմնի, այդ թվում՝ Աուդիտորների եվրոպական դատարանին, Եվրոպական հանձնաժողովին, ԵՄ ցանկացած համապատասխան պատվիրակության, Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակին և Եվրոպական դատախազությանը, եթե դա նրանց անհրաժեշտ է իրենց առաջադրված խնդիրները ԵՄ օրենսդրությանը (այդ թվում՝ ՀԶՄՀԳ կանոնակարգին և Ֆինանսական կանոնակարգին) համապատասխան կատարելու համար, ինչպես նաև ընդունել և համաձայնել, որ Բանկը կարող է իր կայքում և (կամ) սոցիալական ցանցերում հրապարակել ԿԶԵՀ + ՀՆՊ1 Երաշխիքային համաձայնագրի շրջանակներում Պայմանագրի համաձայն տրամադրվող ֆինանսավորման վերաբերյալ տեղեկություններ հրապարակել և (կամ) մամուլի հաղորդագրություններ ներկայացնել, այդ թվում՝ Վարկառուի անվանումը, հասցեն և հիմնադրման երկիրը, ֆինանսավորման նպատակը, ինչպես նաև Պայմանագրով ստացվող ֆինանսական աջակցության տեսակն ու չափը (հոդված 8.4(ա)),

7.75. վճարել Պայմանագրի կամ դրա հետ կապված որևէ փաստաթղթի կատարումից կամ իրականացումից առաջացող և Փոխառության համար տրամադրված ցանկացած Ապահովման ստեղծման, կատարելագործման, գրանցման կամ կատարման հետ կապված բոլոր Հարկերը, տուրքերը, վճարները և ցանկացած տեսակի այլ վճարումներ, այդ թվում՝ դրոշմանիշային վճարը և գրանցման վճարները, որքանով դա կիրառելի է (հոդված 9.1, պարբերություն 1),

7.76. վճարել Պայմանագրով սահմանված ամբողջ մայր գումարը, տոկոսները, փոխհատուցումներն ու վճարման ենթակա այլ գումարներ համախառն՝ առանց որևէ պահումների կամ ազգային կամ տեղական ցանկացած տեսակի այլ վճարումներից նվազեցումների, իսկ որևէ այդպիսի պահում կամ նվազեցում կատարելու պարտավորության դեպքում մեծացնել Բանկին կատարվող վճարումն այնպես, որ այդ պահումից կամ նվազեցումից հետո Բանկի կողմից ստացվող զուտ գումարը հավասար լինի վճարման ենթակա գումարին (հոդված 9.1, պարբերություն 2),

7.77. կրել բոլոր գանձումներն ու ծախսերը, այդ թվում՝ մասնագիտական, բանկային կամ արտարժույթի փոխարկման հետ կապված ծախսերը, որոնք կրում են՝ կապված Պայմանագրի կամ դրա հետ կապված որևէ փաստաթղթի պատրաստման, կատարման, իրականացման, կիրարկման և գործողության դադարեցման, Պայմանագրում կամ դրա հետ կապված որևէ փաստաթղթում կատարվող որևէ փոփոխության, լրացման կամ չեղարկման, ինչպես նաև Փոխառության ցանկացած ապահովման փոփոխության, ստեղծման, կառավարման, կատարման և իրականացման հետ (հոդված 9.2),

7.78. Բանկին վճարել ցանկացած ծախս կամ ծախք, որը Բանկը կատարել է, կամ որը Բանկը կրել է որևէ օրենքի կամ կանոնակարգի ընդունման կամ դրանում որևէ փոփոխություն կատարելու (կամ մեկնաբանման, դրա նորմերի կիրառման կամ դրա կիրառման) կամ որևէ օրենքի կամ կանոնակարգի հետ համապատասխանությունն ապահովելու հետևանքով, որն առաջացել է Պայմանագիրն ստորագրելու ամսաթվից հետո, որի համաձայն կամ որի արդյունքում Բանկը պարտավոր է կրել լրացուցիչ ծախսեր Պայմանագրով նախատեսված ֆինանսավորումն ապահովելու կամ իր պարտականությունները կատարելու համար, կամ Պայմանագրով Բանկին պարտք ցանկացած գումար, կամ Բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը Վարկ կամ Փոխառություն տրամադրելու արդյունքում առաջացած ֆինանսական եկամուտը նվազեցվում է կամ վերացվում (հոդված 9.3(ա)),

7.79. չսահմանափակելով Բանկի՝ Պայմանագրով կամ որևէ կիրառելի օրենքով սահմանված որևէ այլ իրավունք՝ փոխհատուցել Բանկին և դրան զերծ պահել կորուստներից, որոնք առաջանում են որևէ ամբողջական կամ մասնակի մարման արդյունքում, որը կատարվում է Պայմանագրով հստակ սահմանված եղանակից բացի այլ եղանակով (հոդված 9.3(բ)),

7.80. անմիջապես վճարել Չմարված փոխառության ամբողջ գումարը կամ դրա մի մասը (ինչպես պահանջում է Բանկը) հաշվեգրված տոկոսների և Պայմանագրով սահմանված բոլոր այլ հաշվեգրված կամ չմարված գումարների հետ միասին՝ Բանկի կողմից Պայմանագրի 10.1.Ա և 10.1.Բ հոդվածների դրույթների համաձայն ներկայացված գրավոր պահանջի դեպքում (հոդված 10.1),

7.81. Ֆիքսված դրույքաչափով որևէ տրանշի մասով 10.1 հոդվածի համաձայն սահմանված պահանջ ներկայացվելու դեպքում Բանկին վճարել պահանջված գումարը՝ որպես կանխավճար վճարման ենթակա մայր գումարի ցանկացած չափի համար փոխհատուցման հետ միասին և այդ փոխհատուցումը հաշվեգրել Բանկի՝ պահանջի մասին ծանուցման մեջ նշված վճարման ժամկետից և հաշվարկել այն հիմքով, որ կանխավճարը կատարվի նշված օրը, և Բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը տեղեկացված գումարի համար՝ որպես 10.3.Ա հոդվածում նշված ավելցուկի գործող արժեք (հաշվարկված կանխավճարը կատարելու օրվա դրությամբ), եթե առկա են Պայմանագրի 10.3.Ա(ա) և 10.3.Ա(բ) հոդվածներով հաշվարկված տոկոսներ (հոդված 10.3.Ա),

7.82. Պայմանագրի 10.3 հոդվածի համաձայն վճարման ենթակա գումարները վճարել Բանկի կողմից ներկայացվող պահանջի մեջ նշված օրը (հոդված 10.3.Բ),

7.83. հիմնականում հրաժարվել ամբողջ անձեռնմխելիությունից, որը Հայաստանի Հանրապետությունը կամ նրա ակտիվները կամ եկամուտներն այլ կերպ կարող են ունենալ որևէ պետությունում, այդ թվում՝ դատարանի որոշման կամ կարգադրության միջոցով որևէ բավարարում տալը՝ պարտավորություններն իրապես կատարելու կամ ակտիվները կամ եկամուտները վերականգնելու համար և վճիռը կատարելու համար կամ գույքային հայցով Հայաստանի Հանրապետության ակտիվներից և եկամուտներից ցանկացածի նկատմամբ արգելանք, կալանք դնելու կամ դրանց վաճառքի համար Հայաստանի Հանրապետության ակտիվների կամ եկամուտների նկատմամբ որևէ գործընթացի հարուցումը (հոդված 11.3),

7.84. անհապաղ գրավոր տեղեկացնել Բանկին Հայաստանի Հանրապետության համապատասխան կոնտակտային տվյալներում կատարված ցանկացած փոփոխության մասին (հոդված 12.1.Գ),

7.85. ապահովել Ծրագրի իրականացումը Պայմանագրի Ա Հավելվածում սահմանված պահանջներին համապատասխան (Հավելված Ա),

7.86. Տոկոսի վերանայման/փոխարկման առաջարկի մասով Ֆիքսված դրույքաչափը կամ Սպրեդը պատշաճ կերպով գրավոր ընդունելու դեպքում՝ Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթվին և դրանից հետո սահմանված Վճարման ամսաթվերին վճարել հաշվեգրված տոկոս (Հավելված Դ, պարբերություն «Բ»),

7.87. Տոկոսի մասնակի վերանայման/փոխարկման դեպքում՝ Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթվին՝ առանց փոխհատուցման, հետ վճարել Տրանշի այն մասը, որի վրա Տոկոսի վերանայման/փոխակերպման մասին դիմումը չի տարածվում, և որը, հետևաբար, ենթակա է Տոկոսի վերանայման/փոխարկման (Հավելված Դ, պարբերություն «Գ», մաս 1),

Տոկոսի վերանայման/փոխակերպման մասին դիմում չներկայացնելու կամ Տրանշի համար Տոկոսի վերանայման/փոխակերպման առաջարկը գրավոր չընդու-

նելու դեպքում, կամ եթե կողմերը Բանկի կողմից Պայմանագրի Հավելված Դ-ի «Ա» պարբերության համաձայն պահանջված փոփոխությունը գործողության մեջ չեն դնում, ապա Տոկոսի վերանայման/փոխարկման ամսաթվին՝ առանց փոխհատուցման, հետ վճարել Տրանշն ամբողջությամբ (Հավելված Դ, պարբերություն «Գ», մաս 2):

8. Համաձայն Պայմանագրի 11.1 և 11.2 հոդվածների՝ Պայմանագիրը և դրանից ծագող կամ դրա հետ կապված ցանկացած ոչ պայմանագրային պարտավորություն կարգավորվում է Լյուքսեմբուրգի օրենքներով, իսկ Լյուքսեմբուրգ քաղաքի դատարաններն ունեն բացառիկ իրավազորություն՝ կարգավորելու Պայմանագրից ծագող կամ դրա հետ կապված ցանկացած վեճ (Վեճ) (այդ թվում՝ սույն Պայմանագրի առկայության, վավերության կամ լուծման կամ այն չեղյալ ճանաչելու հետևանքների հետ կապված վեճ) կամ Պայմանագրից ծագող կամ դրա հետ կապված ցանկացած ոչ պայմանագրային պարտավորություն:

Կողմերը համաձայնում են, որ Լյուքսեմբուրգ քաղաքի դատարաններն ամենահամապատասխան ու ամենահարմար դատարաններն են նրանց միջև Վեճերը կարգավորելու համար, ուստի՝ որևէ առարկություն չեն ներկայացնի:

9. Պայմանագրի 1.2.Բ հոդվածի վերջին պարբերությամբ սահմանվում է, որ Կողմերը համաձայնում են, որ Հատկացման առաջարկը կարող է Բանկի կողմից ներկայացվել չստորագրված փաստաթղթի ձևով, և այդ դեպքում այն համարվում է Բանկի անունից պատշաճ կերպով կատարված և տրամադրված՝ պայմանով, որ այդ Հատկացման առաջարկն ուղարկվել է էլեկտրոնային փոստով՝ հետևյալ էլեկտրոնային հասցեից՝ EIB-FirmDisbursementOffer@eib.org, Վարկառուի՝ Պայմանագրի 12.1.Բ հոդվածում նշված էլեկտրոնային հասցեին:

10. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Պայմանագրում հղում է կատարվում 2008 թվականի փետրվարի 29-ին Հայաստանի Հանրապետության և Բանկի միջև կնքված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում Բանկի գործունեությունը կարգավորող շրջանակային համաձայնագրին, որը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2008 թվականի փետրվարի 12-ին Լյուքսեմբուրգում և 2008 թվականի փետրվարի 29-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական ներդրումային բանկի գործունեության կառավարման համար» շրջանակային համաձայնագիր» վերտառությամբ՝ Ազգային Ժողովի 2008 թվականի հոկտեմբերի 1-ի Ն-099-4 որոշմամբ:

11. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ սույն գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում Պայմանագրի հայերեն պաշտոնական թարգմանության և դրա բնօրինակ տեքստերի միջև ի հայտ էին եկել տասնյակ անճշտություններ, թարգմանչական էական, բովանդակային

անհամապատասխանություններ, մտքի սխալներ: Գործով զեկուցող դատավորը սույն գործով դիմողից՝ 10.10.2025 թ., ապա դիմողի ներկայացուցչից՝ 20.10.2025 թ. պահանջել է մեկամսյա ժամկետում Սահմանադրական դատարանին ներկայացնել Պայմանագրի հայերեն՝ ամբողջովին նոր թարգմանությամբ տեքստը: 2025 թվականի նոյեմբերի 3-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Պայմանագրի հայերեն պաշտոնական թարգմանության ճշգրտված տարբերակը, որի ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ անհամապատասխանություններն ամբողջությամբ վերացված չեն:

Սահմանադրական դատարանը գտնում է՝ թեև թարգմանչական անհամապատասխանություններն ու անճշտությունները բովանդակային առումով խնդիր չեն հարուցում Պայմանագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության բացահայտման տեսանկյունից, այդուհանդերձ, կարող են որոշակի խնդիրներ առաջացնել Պայմանագրի մեկնաբանման և կիրառման ներպետական գործընթացներում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2025 թվականի հուլիսի 16-ին ստորագրված «Հայաստան - Դիմակայուն Սյունիք ծրագիր» ԿԶԵՀ + Հատուկ ներդրումային պատուհան 1» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

17 նոյեմբերի 2025 թվականի
ՍԴՈ-1804

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆ – ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔ ԾՐԱԳԻՐ» ԿԶԵՀ + ՀԱՏՈՒԿ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՊԱՏՈՒՀԱՆ 1» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1804 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննելով ««Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Հայաստան - Դիմակայուն Սյունիք ծրագիր» ԿԶԵՀ + Հատուկ ներդրումային պատուհան 1» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2025 թվականի նոյեմբերի 17-ի ՍԴՈ-1804 որոշմամբ որոշել է, որ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Հայաստան - Դիմակայուն Սյունիք ծրագիր» ԿԶԵՀ + Հատուկ ներդրումային պատուհան 1» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2025 թվականի նոյեմբերի 17-ի ՍԴՈ-1804 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես

նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2025 թվականի նոյեմբերի 17-ի ՍԴՈ-1804 որոշմամբ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Հայաստան - Դիմակայուն Սյունիք ծրագիր» ԿԶԵՀ + Հատուկ ներդրումային պատուհան 1» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան

դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան

էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

<u>Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:</u>

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին»

օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Ընդ որում, էլեկտրոնային ստորագրությունը կարող է էլեկտրոնային փաստաթղթին տալ իրավական նշանակություն այն դեպքում, երբ էլեկտրոնային ստորագրությունը տեսողական դիտման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով արտահայտվում է ցուցասարքի (դիսփլեյի) էկրանին, թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա

ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա

թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«19» նոյեմբերի 2025թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԵՎ ՀԶՈՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ» (THRIVE) ԾՐԱԳՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան — 5 դեկտեմբերի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի

դատավորներ՝ Արտակ Զեյնալյանի,
Հրայր Թովմասյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի (զեկուցող),
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Կենսունակության բարելավման և հզորացման համար բնակարանային բարեփոխումներ» (THRIVE) ծրագրի վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 1655-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Կենսունակության բարելավման և հզորացման համար բնակարանային բարեփոխումներ» (THRIVE) ծրագրի վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի նոյեմբերի 21-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված, ինչպես նաև գործում առկա այլ փաստաթղթերը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր և բանավոր բացատրությունները, պարզաբանումները, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Կենսունակության բարելավման և հզորացման համար բնակարանային բարեփոխումներ» (THRIVE) ծրագրի վարկային համաձայնագիրը (ստորև՝ Վարկային համաձայնագիր) ստորագրվել է 2025 թվականի հոկտեմբերի 30-ին՝ Հայաստանում կայուն, դիմացկուն և ներառական բնակարանային համակարգ զարգացնելու նպատակով՝ աջակցելով փախստականների սոցիալ-տնտեսական ինտեգրմանը և բարեկեցությանը:

2. Դիմումին կից ներկայացված Վարկային համաձայնագրի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ տեղեկանք-հիմնավորման համաձայն՝ ««THRIVE» ծրագրի շրջանակներում նախատեսվում է ապահովել շուրջ 109,000 էթնիկ հայ փախստականների համար երկարաժամկետ բնակարանային լուծումներ, ինչը համահունչ է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021–2026 թվականների ծրագրով նախատեսված միջոցառումներին»:

3. Վարկային համաձայնագրով սահմանված կարգով և բովանդակությամբ փոփոխություններ են կատարվում Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ)՝ 2022 թվականի հունվարի 1-ով թվագրված Սովորական գործառնությունների վարկավորման կանոններում (Վարկավորման կանոններ), որոնք կիրառելի են Վարկային համաձայնագրի նկատմամբ նույն ուժով և գործողությամբ այնպես, ինչպես դրանք ամբողջությամբ սահմանված կլինեին Վարկային համաձայնագրում:

4. Վարկային համաձայնագրի VII հոդվածի 7.01 բաժնի համաձայն՝ Վարկավորման կանոնների 12.02 բաժնի նպատակներով Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարը նշանակվում է որպես Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ:

5. Վարկային համաձայնագրով ԱԶԲ-ն համաձայնում է ԱԶԲ-ի սովորական կապիտալ միջոցներից Հայաստանի Հանրապետությանը տրամադրել երկու հարյուր հիսուն միլիոն ԱՄՆ դոլարի (250,000,000$) չափով վարկ. ընդ որում, նշված գումարը կարող է ըստ անհրաժեշտության փոփոխվել Արժույթի փոխարկման միջոցով՝ Վարկային համաձայնագրի 2.06 բաժնի դրույթներին համապատասխան:

Վարկային համաձայնագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության և ԱԶԲ միջև կնքված դրամաշնորհային համաձայնագրով Գլոբալ կոնցեսիոն ֆինանսավորման հիմնադրամից Հայաստանի Հանրապետությանը կտրամադրվի, ընդհանուր առմամբ, տասնվեց միլիոն չորս հարյուր հիսուն հազար ԱՄՆ դոլարի (16,450,000$) չափով դրամաշնորհ (Դրամաշնորհ)՝ Ծրագրի նպատակների համար:

6. Վարկի մայր գումարի մարման ժամկետը 17 տարի է, իսկ վճարման արտոնյալ ժամանակահատվածը մայր գումարի առաջին վճարման ամսաթվին՝ 2035 թվականի դեկտեմբերի 15-ին, նախորդող ժամանակահատվածն է:

Վարկի փակման ամսաթիվ է համարվում 2030 թվականի դեկտեմբերի 31-ը կամ այլ ամսաթիվ, որի վերաբերյալ ԱԶԲ-ն և Հայաստանի Հանրապետությունը կարող են ըստ անհրաժեշտության համաձայնության գալ:

Ծրագրի իրականացումը նախատեսվում է ավարտել մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը:

7. Վարկային համաձայնագիրն ունի չորս հավելվածներ՝ **Հավելված 1. «Ծրագրի նկարագրությունը», Հավելված 2. «Մարման ժամանակացույցը», Հավելված 3. «Վարկային միջոցների հատկացումը և առհանումը» և Հավելված 4. «Ծրագրի իրականացումը»:**

8. Ծրագրի նպատակը բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի (ԲՏԸԲԱԾ) իրականացումը խթանելն է՝ էթնիկ հայ փախստականների՝ երկարաժամկետ բնակարանային պայմաններ ստանալու և սոցիալական ու տնտեսական բարելավված պայմաններ ունենալու հնարավորություններն ընդլայնելու համար:

Ծրագիրը ներառում է հետևյալ բաղադրիչները.

ա) Բարելավված սոցիալական բնակարանային կառավարման քաղաքականության շրջանակի ձևավորում,

բ) Դիմացկուն և ներառական բնակարանային ֆինանսավորման համակարգերի ձևավորում,

գ) Շուկայի կարգավորման և ֆինանսավորման մեխանիզմների բարելավում,

դ) Հաստատությունների հզորացում և շահառուների իրազեկվածության բարձրացում:

9. Վարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու կարգը սահմանվում է VI հոդվածով՝

«Բաժին 6.01. Վարկավորման կանոնների 10.01 բաժնի «զ» ենթաբաժնի նպատակով հետևյալ պայմանները սահմանվում են որպես լրացուցիչ նախապայմաններ՝ սույն Վարկային համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար.

ա) Դրամաշնորհային համաձայնագիրը պետք է լինի պատշաճ կերպով կատարված և տրամադրված Վարկառուի անունից, և դա ուժի մեջ մտնելու համար սահմանված բոլոր նախապայմանները (բացառությամբ սույն Վարկային համաձայնագիրն ուժի մեջ մտնելը պահանջող նախապայմանի) պետք է լինեն կատարված, և

բ) Վարկառուն պարտավորվում է ապահովել, որ հիփոթեքային մարումների, տոկոսագումարների մարումների և դրամական աջակցությունների համար նախատեսված ծախսերը տարբերակելու համար սահմանվեն առանձին բյուջետային ծածկագրեր:

Բաժին 6.02. Վարկավորման կանոնների 10.02 բաժնի «դ» կետի նպատակով հետևյալը սահմանվում է որպես լրացուցիչ հարց, որը պետք է ընդգրկվի ԱԶԲ-ին տրամադրվելիք եզրակացության կամ եզրակացությունների մեջ, որ Դրամաշնորհի համաձայնագիրը պատշաճ հավանության է արժանացել կամ վավերացվել է Վարկառուի կողմից, կատարվել և հանձնվել է Վարկառուի անունից և համարվում է իրավաբանական ուժ ունեցող փաստաթուղթ Վարկառուի համար՝ ըստ դրա պայմանների բացառապես այն դեպքում, երբ սույն Վարկային համաձայնագիրը մտնում է ուժի մեջ:

Բաժին 6.03. Վարկավորման կանոնների 10.04 բաժնի նպատակներով սույն Վարկային համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ամսաթիվ է սահմանվում սույն Վարկային համաձայնագրի կնքման ամսաթվի 90-րդ օրվան հաջորդող օրը»:

10. Հայաստանի Հանրապետությունը Վարկային համաձայնագրով ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

10.1. կիսամյակային պարբերականությամբ՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 15-ին և հունիսի 15-ին, ԱԶԲ-ին վճարել տոկոսներ՝ Վարկի առհանված և չվճարված մայր գումարի նկատմամբ՝ տոկոսների հաշվեգրման յուրաքանչյուր

ժամանակահատվածի համար սահմանված տոկոսադրույքով, որը հավասար է հետևյալ գումարին՝ ապահովված օվերնայթ ֆոնդային տոկոսադրույք (SOFR), 0.60%՝ Վարկավորման կանոնների 3.02 բաժնով նախատեսված կարգով, հանած 0.10%՝ Վարկավորման կանոնների 3.03 բաժնով նախատեսված կարգով, և մարման ժամկետի ռիսկի համար հավելավճար՝ 0.30%-ի չափով՝ Վարկավորման կանոնների 3.03 բաժնով նախատեսված կարգով (հոդված II, բաժիններ 2.02, 2.04).

10.2. վճարել տարեկան 0.15%-ի չափով պարտավորավճար, որը հաշվեգրվում է վարկի ամբողջ գումարի նկատմամբ (հանած պարբերաբար առհանվող գումարները)՝ սկսած Վարկային համաձայնագրի կնքման 60-րդ օրվանից (հոդված II, բաժին 2.03).

10.3. սկսած 2035 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև 2051 թվականի դեկտեմբերի 15-ը՝ կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 15-ին և հունիսի 15-ին վերադարձնել Վարկային հաշվից առհանված Վարկի մայր գումարը՝ 2.941176 մասնաբաժնով, իսկ 2052 թվականի հունիսի 15-ին՝ 2.941192 մասնաբաժնով (հոդված II, բաժիններ 2.04, 2.05, Հավելված 2, պարբերություն 1).

10.4. Վարկային միջոցներն օգտագործել Ծրագրի իրականացման համար կատարված ծախսերը ֆինանսավորելու համար՝ Վարկային համաձայնագրի դրույթներին համապատասխան (հոդված III, բաժին 3.01).

10.5. Վարկային միջոցները բաշխել և առհանել Վարկային համաձայնագրի 3-րդ հավելվածի դրույթներին համապատասխան, որը կարող է ըստ անհրաժեշտության փոփոխվել Հայաստանի Հանրապետության և ԱԶԲ-ի միջև ձեռք բերված համաձայնությամբ (հոդված III, բաժին 3.02).

10.6. Ծրագիրն իրականացնելիս կատարել Վարկային համաձայնագրի 4-րդ հավելվածով և Դրամաշնորհային համաձայնագրով սահմանված բոլոր պարտավորությունները կամ ապահովել դրանց կատարումը (հոդված IV, բաժին 4.01).

10.7. Ծրագրի համար վարել առանձին հաշիվներ և գրանցամատյաններ, կազմել Ծրագրի տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ ԱԶԲ-ի համար ընդունելի ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներին համապատասխան, ապահովել նշված ֆինանսական հաշվետվությունների տարեկան աուդիտ անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումը, փորձառությունը և հանձնարարականներն ընդունելի են ԱԶԲ-ի համար՝ ըստ ԱԶԲ-ի համար ընդունելի աուդիտորական չափանիշների, յուրաքանչյուր այդպիսի աուդիտի շրջանակում ապահովել աուդիտորների կողմից հաշվետվության պատրաստումը, որն ընդգրկում է ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ նրանց եզրակացությունը (եզրակացությունները), ինչպես նաև նամակ ղեկավարությանը (որում ներկայացված են Ծրագրի ներքին վերահսկողության համակարգում աուդիտի ընթացքում հայտնաբերված թերությունները, եթե այդպիսիք առկա են) և յուրաքանչյուր դրամավարկային տարվա ավարտից ոչ ուշ, քան 6 ամիս հետո ԱԶԲ-ին

տրամադրել նշված աուդիտավորված ֆինանսական հաշվետվությունների, աուդիտորական հաշվետվության և ղեկավարությանն ուղղված նամակի օրինակները՝ բոլորն անգլերենով, ինչպես նաև այն տեղեկությունները, որոնք վերաբերում են այդ փաստաթղթերին և դրանց աուդիտին, որը ԱԶԲ-ն կարող է ժամանակ առ ժամանակ ողջամտորեն պահանջել (հոդված IV, բաժին 4.02, ենթաբաժին «ա»).

10.8. հնարավորություն տալ ԱԶԲ-ին ԱԶԲ-ի պահանջով քննարկելու Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները և Հայաստանի Հանրապետության ֆինանսական հարցերը, որքանով դրանք առնչվում են Ծրագրին, այն աուդիտորների հետ, որոնք նշանակվել են Վարկային համաձայնագրի հոդված IV-ի, բաժին 4.02-ի «ա» ենթաբաժնի (iii) ենթակետի համաձայն, ինչպես նաև այդ աուդիտորների ցանկացած ներկայացուցչի լիազորել և պարտավորեցնել մասնակցել ԱԶԲ-ի կողմից նախաձեռնված այդպիսի քննարկումներին (հոդված IV, բաժին 4.02, ենթաբաժին «գ»).

10.9. Վարկավորման կանոնների 7.01 և 7.04 բաժիններում նշված հաշվետվությունների և տեղեկատվության շրջանակներում ԱԶԲ-ին տրամադրել կամ ապահովել, որ տրամադրվեն՝ կիսամյակային հաշվետվություններ, որոնք վերաբերում են Ծրագրի իրականացմանը, այդ թվում՝ հատկացումների հետ կապված յուրաքանչյուր ցուցանիշի (ՀՀԿՑ) իրագործմանը, Ծրագրային գործողությունների իրականացմանն ու Ողջամիտ ծախսերին, և ԱԶԲ-ի ողջամիտ պահանջով՝ լրացուցիչ տեղեկություններ՝ Վարկային համաձայնագրի հոդված IV-ի 4.03 բաժնի «ա» ենթապարբերության մեջ նկարագրված գրանցամատյանների վերաբերյալ, և այլ տեղեկություններ՝ Ծրագրի իրականացման վերաբերյալ (հոդված IV, բաժին 4.03).

10.10. ԱԶԲ-ի ներկայացուցիչներին հնարավորություն տալ ուսումնասիրելու Ծրագիրը և ցանկացած համապատասխան գրանցամատյան ու փաստաթուղթ (հոդված IV, բաժին 4.04).

10.11. Վարկի մայր գումարի առաջին մարման օրվա դրությամբ վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված չլինելու դեպքում՝ վերադարձնել այդ օրվա դրությամբ առհանված և չվճարված գումարը՝ Վարկային համաձայնագրի 2-ի 1-ին պարբերությանը համապատասխան (Հավելված 2, պարբերություն 2, ենթապարբերություն «ա»).

10.12. Վարկի մայր գումարի առաջին մարման օրվա դրությամբ վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված չլինելու դեպքում՝ Վարկի մայր գումարի առաջին մարման օրվանից հետո ցանկացած առհանման դեպքում գումարները վերադարձնել այդ առհանմանը հաջորդող՝ Վարկի մայր գումարի մարման յուրաքանչյուր օր՝ ԱԶԲ-ի կողմից սահմանված գումարի չափով՝ այդպիսի յուրաքանչյուր առհանման գումարը բազմապատկելով կոտորակով, որի համարիչը Վարկային համաձայնագրի Հավելված 2-ի 1-ին պարբերության աղյուսակում նշված՝

մայր գումարի տվյալ մարման օրվա դրությամբ սկզբնական վճարման մասնաբաժինն է (Սկզբնական վճարման մասնաբաժին), իսկ հայտարարը՝ այդ օրը կամ դրանից հետո ընկնող մայր գումարի մարման օրերի մնացած բոլոր Սկզբնական վճարման մասնաբաժինների ընդհանուր գումարը. մարման ենթակա այդ գումարներն ըստ անհրաժեշտության ճշգրտվում են Վարկային համաձայնագրի Հավելված 2-ի 4-րդ պարբերության մեջ նշված ցանկացած այնպիսի գումար նվազեցնելու նպատակով, որի նկատմամբ կիրառվում է Արժույթի փոխարկումը (Հավելված 2, պարբերություն 2, ենթապարբերություն «բ»).

10.13. Մայր գումարի մարման յուրաքանչյուր օրվա դրությամբ միայն վճարման ենթակա մայր գումարները հաշվարկելու նպատակներով մայր գումարի մարման յուրաքանչյուր օրվա նախորդող 2 օրացուցային ամսվա ընթացքում կատարված առհանումները համարել որպես առհանված և չվճարված՝ առհանման օրվան հաջորդող՝ մայր գումարի մարման երկրորդ օրվա դրությամբ, և վճարել առհանման օրվան հաջորդող՝ մայր գումարի մարման երկրորդ օրվանից սկսած՝ մայր գումարի մարման յուրաքանչյուր օր (Հավելված 2, պարբերություն 3).

10.14. բացառությամբ Վարկային համաձայնագրի 3-րդ հավելվածում սահմանված ձևի կամ ԱԶԲ-ի հետ այլ համաձայնություն ձեռք բերելու դեպքերի՝ մասհանել Վարկային միջոցները Վարկային մասհանումների ձեռնարկին համապատասխան (Հավելված 3, պարբերություն 1).

10.15. Վարկային հաշվից առհանում կատարելու վերաբերյալ առաջին դիմումը ԱԶԲ ներկայացնելուց առաջ Պետական գանձապետարանում Ծրագրի համար որպես Դեպոզիտային հաշիվ նշել Ծրագրի իրականացման մարմնի անունով հաշիվ (Դեպոզիտային հաշիվ), որին մուտքագրվում են Հայաստանի Կենտրոնական բանկում Հայաստանի Հանրապետության՝ Գանձապետական միասնական հաշվի միջոցով Վարկային հաշվից կատարվող բոլոր առհանումները (որի վերաբերյալ մանրամասները Հայաստանի Հանրապետությունը պատշաճ կերպով ներկայացնում է ԱԶԲ առհանման պահանջի ժամանակ) (Հավելված 3, պարբերություն 2).

10.16. Դեպոզիտային հաշվի հետ կապված՝ վարել առանձին գրանցամատյաններ՝ ԱԶԲ-ի համար ընդունելի հաշվապահական սկզբունքներին համապատասխան (Հավելված 3, պարբերություն 3).

10.17. նախքան ՀՀԿՑ-ի մասով Վարկային հաշվից առհանում կատարելու որևէ հայտ ներկայացնելը ԱԶԲ ներկայացնել ՀՀԿՑ ստուգման արձանագրությանը համապատասխան բավարար ապացույցներ, որոնք վկայում են, որ տվյալ ՀՀԿՑ-ն ամբողջությամբ իրականացվել է, կամ այն ՀՀԿՑ-ի դեպքում, որի համար մասնակի առհանում է թույլատրվում (ինչպես նշված է ՀՀԿՑ մատրիցում), տվյալ ՀՀԿՑ-ն իրականացվել է այն ծավալով, որը պահանջվում է ՀՀԿՑ ստուգման

արձանագրությամբ սահմանված մասնակի առհանման համար (Հավելված 3, պարբերություն 5).

10.18. ապահովել, որ Վարկային համաձայնագրի Հավելված 3-ի 6-րդ պարբերության «ա» և «բ» ենթապարբերությունների՝ նախնական ֆինանսավորման չմարված գումարի և նախորդ արդյունքների ֆինանսավորման համար առհանված գումարների համախառն գումարը որևէ պահի չգերազանցի Վարկի ընդհանուր գումարի 30 տոկոսը (Հավելված 3, պարբերություն 6, ենթապարբերություն «գ»).

10.19. մինչև Ծրագրի ավարտի ամսաթիվը որևէ ՀՀԿՑ չիրականացվելու դեպքում, Ծրագրի ավարտի ամսաթվից ոչ ուշ, քան 6 ամսվա ընթացքում ԱԶԲ-ին վերադարձնել այդ ՀՀԿՑ-ի համար տրամադրված նախնական ֆինանսավորման չմարված գումարը կամ դրա համապատասխան մասը (Հավելված 3, պարբերություն 7).

10.20. Ողջամիտ ծախսերի ընդհանուր գումարը Վարկից առհանված գումարից պակաս լինելու դեպքում, Ծրագրի ավարտի ամսաթվից ոչ ուշ, քան 6 ամսվա ընթացքում ԱԶԲ-ին վերադարձնել այնքան գումար, որը համարժեք է առաջացած տարբերությանը (Հավելված 3, պարբերություն 8).

10.21. Ծրագիրն իրականացնող մարմնի հետ միասին ապահովել, որ Ծրագիրն իրականացվի համաձայն ԾԻՓ-ով (ծրագրի իրականացման փաստաթուղթ) սահմանված մանրամասն կարգավորումների (Հավելված 4, պարբերություն 1).

10.22. ապահովել, որ Ծրագրի շրջանակում Ողջամիտ ծախսերի գումարը համարժեք լինի Հայաստանի Հանրապետության կողմից Ծրագրի համար առհանված Վարկային և Դրամաշնորհային միջոցների ընդհանուր չափին կամ գերազանցի այն (Հավելված 4, պարբերություն 2).

10.23. ապահովել, որ Ծրագրի շրջանակներում արդեն իսկ իրագործված բոլոր ՀՀԿՑ-ներին համապատասխանությունը շարունակի պահպանվել Հայաստանի Հանրապետության Ծրագրի ամբողջ ընթացքում (Հավելված 4, պարբերություն 3).

10.24. ԱԶԲ-ին տեղեկացնել այն բազմակողմ կամ երկկողմ աջակցություն ցուցաբերող մարմինների հետ ընթացող քննարկումների մասին, որոնք կարող են ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ծրագրի և Ծրագրի իրականացման վրա, ինչպես նաև ԱԶԲ-ին ընձեռել դրանից բխող առաջարկների վերաբերյալ կարծիք հայտնելու հնարավորություն ու նախքան այդպիսի որևէ առաջարկի վերջնական տարբերակի մշակումը և իրականացումը հաշվի առնել ԱԶԲ-ի տեսակետները (Հավելված 4, պարբերություն 4).

10.25. ապահովել, որ Ծրագրի շրջանակում տեխնիկական և գործառնական պահանջներին (ներառյալ՝ **ԱՍՄ-ն, ԴԳ-ն**[1], հակակոռուպցիոն միջոցառումները) և

[1] Նշված հապավումների ամբողջական արտահայտությունները բացակայում են Վարկային համաձայնագրի տեքստում:

Ծրագրի ֆինանսական կառավարմանը վերաբերող բոլոր գործողություններն իրականացվեն ժամանակին և արդյունավետ (Հավելված 4, պարբերություններ 5, 6).

10.26. ապահովել, որ Ծրագրի շրջանակում յուրաքանչյուր պայմանագիր կնքվի Ծրագրի գնումների համակարգի համաձայն՝ պահպանելով մրցակցության, արդյունավետության, թափանցիկության, արդարության և հավասար հնարավորությունների ապահովման սկզբունքները, և Ծրագրի գնումներին, Ծրագրի բնապահպանական և սոցիալական երաշխիքներին վերաբերող բոլոր գործողություններն իրականացվեն ժամանակին և արդյունավետ (Հավելված 4, պարբերություններ 7-9).

10.27. ապահովել, որ Ծրագիրը չներառի որևէ բնապահպանական ռիսկեր կամ ազդեցություն՝ երաշխիքների քաղաքականության փաստաթղթի (ԵՔՓ) իմաստով, իսկ Ծրագրի՝ չնախատեսված հանգամանքներով պայմանավորված, այդպիսի ազդեցություններ պարունակելու դեպքում՝ ապահովել համապատասխանություն Հայաստանի Հանրապետության բոլոր կիրառելի օրենքներին և կանոնակարգերին, որոնք վերաբերում են շրջակա միջավայրին, առողջությանը և անվտանգությանը, բնապահպանական երաշխիքներին, և բոլոր միջոցառումներին ու պահանջներին, ներառյալ՝ Ծրագրի գործողությունների ծրագրում սահմանված մշտադիտարկման պահանջները (Հավելված 4, պարբերություն 10, ենթապարբերություն «ա»).

10.28. չհակասելով Վարկային համաձայնագրի Հավելված 4-ի 10-րդ պարբերության «ա» ենթապարբերությանը՝ ապահովել, որ Ծրագրի շրջանակում որևէ շինարարական կամ վերանորոգման աշխատանք էական բացասական ազդեցություն չունենա շրջակա միջավայրի վրա, որը կարող է դասակարգվել որպես Ա կատեգորիայի՝ ըստ ԵՔՓ-ի, իսկ Ծրագրի շրջանակներում որևէ շինարարական կամ վերանորոգման աշխատանքներ սկսելուց առաջ անցկացնել ստուգում՝ համոզվելու համար, որ ԵՔՓ-ի համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության առումով Ա կատեգորիայի դասակարգված ցանկացած աշխատանք բացառվում է Ծրագրից (Հավելված 4, պարբերություն 10, ենթապարբերություն «բ»).

10.29. ապահովել, որ Ծրագիրը չներառի վերաբնակեցման, բնիկ ժողովուրդներին սպառնացող որևէ ռիսկ կամ ազդեցություն՝ ԵՔՓ-ի իմաստով, իսկ Ծրագրի՝ չնախատեսված հանգամանքներով պայմանավորված, այդպիսի ազդեցություններ պարունակելու դեպքում ապահովել համապատասխանություն Հայաստանի Հանրապետության բոլոր կիրառելի օրենքներին և կանոնակարգերին, որոնք վերաբերում են վերաբնակեցմանը և բնիկ ժողովուրդներին, հարկադիր վերաբնակեցման և բնիկ ժողովուրդների երաշխիքներին, և բոլոր միջոցառումներին ու պահանջներին, ներառյալ՝ Ծրագրի գործողությունների ծրագրում սահմանված մշտադիտարկման պահանջները (Հավելված 4, պարբերություններ 11, 12).

10.30. ապահովել, որ Ծրագրի՝ գենդերային և սոցիալական հավասարությանը վերաբերող բոլոր գործողություններն իրականացվեն ժամանակին և արդյունավետ (Հավելված 4, պարբերություն 13).

10.31. ապահովել կամ Ծրագրի իրականացնող մարմնից պահանջել ապահովել Ծրագրի համապատասխանությունը Կոռուպցիայի դեմ պայքարի հարցերով ուղեցույցներին և իրականացնել անհրաժեշտ և ժամանակին իրականացվող բոլոր միջոցառումները՝ կանխելու, բացահայտելու համար բոլոր հնարավոր կոռուպցիոն կամ արգելված գործողությունները և արձագանքելու այդ գործողություններին (Հավելված 4, պարբերություն 14).

10.32. տեղեկացնել կամ պահանջել Ծրագիրն իրականացնող մարմնից և իրականացման հարցերով պատասխանատու մարմիններից՝ անհապաղ տեղեկացնել ԱԶԲ-ին Ծրագրին վերաբերող խարդախության, կոռուպցիայի կամ որևէ այլ արգելված գործունեության մասով ցանկացած մեղադրանքի մասին և լիովին համագործակցել կամ պահանջել Ծրագիրն իրականացնող մարմնից և իրականացման հարցերով պատասխանատու մարմիններից՝ լիովին համագործակցել ԱԶԲ-ի կողմից նման մեղադրանքների վերաբերյալ ցանկացած հետաքննության և տրամադրել անհրաժեշտ ողջ օգնությունը, ներառյալ՝ բոլոր համապատասխան գրանցամատյաններին հասանելիություն տրամադրելը՝ այդպիսի հետաքննությունը բավարար ձևով ավարտելու համար (Հավելված 4, պարբերություն 15).

10.33. ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո 90 օրվա ընթացքում թարմացնել Հայաստանի Հանրապետության հանրային կայքը կամ պարտավորեցնել Ծրագիրն իրականացնող մարմնին և իրականացման համար պատասխանատու մարմիններին թարմացնել այն, որ տեղեկություններ տրամադրի Ծրագրի առաջընթացի վերաբերյալ, հրապարակի Ծրագրի տարեկան աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները, հենց դրանք հասանելի դառնան, և տարածի Ծրագրի իրականացման վերաբերյալ այլ համապատասխան տեղեկություններ (Հավելված 4, պարբերություն 16):

11. Վարկային համաձայնագրի հայերեն պաշտոնական տեքստի և անգլերեն բնօրինակի միջև առկա են որոշ անհամապատասխանություններ և թերություններ, (մասնավորապես՝ Համաձայնագրի I հոդվածի 1.02 բաժնի «զ» կետում հղում է կատարվում Վարկային համաձայնագրի 4-րդ հավելվածի 2-րդ առդիրին, սակայն պետք է լինի 2-րդ պարբերություն, II հոդվածի 2.01 բաժնի «գ» ենթաբաժնում հղում է կատարվում նույն բաժնի «բ» ենթաբաժնին՝ նշելով «ներքոհիշյալ «բ» ենթաբաժնում» բառակապակցությունը, մինչդեռ պետք է լինի «վերոհիշյալ «բ» ենթաբաժնում» բառակապակցությունը, Հավելված 4-ը նշված է որպես «Ժամանակացույց 4»), որոնք թեև Վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության բացահայտման համատեքստում բովանդակային առումով

խնդիրներ չեն հարուցում, այդուհանդերձ, կարող են խնդրահարույց լինել Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման ընթացքում:

Սահմանադրական դատարանը նաև փաստում է, որ Վարկային համաձայնագրի վավերացման նպատակահարմարության հարցը Կառավարության և Ազգային ժողովի իրավասության տիրույթում է:

12. Սահմանադրական դատարանը կարևորում է վարկային միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործումը, ինչպես նաև այդ համատեքստում պատշաճ վերահսկողության անհրաժեշտությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Կենսունակության բարելավման և հզորացման համար բնակարանային բարեփոխումներ» (THRIVE) ծրագրի վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

5 դեկտեմբերի 2025 թվականի
ՍԴՈ - 1805

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԵՎ ՀԶՈՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ» (THRIVE) ԾՐԱԳՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1805 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Կենսունակության բարելավման և հզորացման համար բնակարանային բարեփոխումներ» (THRIVE) ծրագրի վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2025 թվականի դեկտեմբերի 5-ի ՍԴՈ-1805 որոշմամբ որոշել է, որ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Կենսունակության բարելավման և հզորացման համար բնակարանային բարեփոխումներ» (THRIVE) ծրագրի վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2025 թվականի դեկտեմբերի 5-ի ՍԴՈ-1805 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների)

նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1805 որոշմամբ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Կենսունակության բարելավման և հզորացման համար բնակարանային բարեփոխումներ» (THRIVE) ծրագրի վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության (152-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր, 168-րդ հոդվածի 3-րդ կետ, 169-րդ հոդվածի 3-րդ մաս) և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված: Ընդ որում, վերը նշված կարգավորումները հնարավոր են համարում այդ հարցով դիմումի ստորագրումը նաև վարչապետի բացակայության ժամանակ վերջինիս փոխարինող փոխվարչապետի կողմից: Միաժամանակ իմ գնահատմամբ, եթե դիմումը ստորագրվում է ոչ թե վարչապետի, այլ վերջինիս փոխարինող փոխվարչապետի կողմից, Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումին պետք է կցվի այդ փոխվարչապետի կողմից վարչապետին փոխարինելու հանգամանքը հավաստող փաստաթուղթը (դրա պատճենը), քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլինի փաստել նրա՝ որպես վարչապետին փոխարինող անձի՝ Սահմանադրական դատարանում Կառավարությանն ի պաշտոնե ներկայացնելու լիազորության առկայությունը.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է Հայաստանի Հանրապետության վարչապետի գրության ձևաթղթի վրա կազմված, Տիգրան Խաչատրյանի կողմից

Սահմանադրական դատարանին հասցեագրված գրություն[1], որով նա, ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասով, դիմել է Սահմանադրական դատարան՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Կենսունակության բարելավման և հզորացման համար բնակարանային բարեփոխումներ» (THRIVE) ծրագրի վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար:

Մինչդեռ սույն գործի նյութերը հնարավորություն չեն տալիս եզրահանգում կատարել այն մասին, որ Սահմանադրական դատարան դիմած անձն իրավասու էր միջազգային պայմանագրում ամրագված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով ՀՀ կառավարության (այսուհետ նաև՝ Կառավարություն) անունից դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Մասնավորապես՝ գործի նյութերից պարզ չէ, թե Սահմանադրական դատարան դիմած անձն ինչ կարգավիճակով է Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն դիմել Սահմանադրական դատարան, արդյոք նա եղել է վարչապետի բացակայության ժամանակ վերջինիս փոխարինող փոխվարչապետ, թե՝ ոչ, այն դեպքում, երբ ըստ սույն գործի նյութերի՝ նշված դիմումը ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Խաչատրյան»-ի կողմից:

Ավելին՝ սույն գործի քննության շրջանակում հրավիրված դռնբաց նիստի ընթացքում Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանի կողմից բարձրացված այն հարցին, թե արդյո՞ք առկա է որևէ իրավական ակտ, որ սույն գործի հարուցման հիմք հանդիսացող դիմումը ստորագրելիս Տիգրան Խաչատրյանը հանդիսացել է որպես ՀՀ վարչապետի պարտականությունները կատարող կամ ժամանակավոր պաշտոնակատար, Կառավարության ներկայացուցիչ՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյանի կողմից տրվել է հետևյալ բացատրությունը՝ «Ես չունեմ ձեռքիս տակ այդ ակտը, որով պարտականությունները դրվել է փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի վրա, բայց, որպես կանոն, դա այդպես է տեղի ունենում» (հիմք՝ 2025 թվականի դեկտեմբերի 5-ի բանավոր նիստի արձանագրություն):

Փաստորեն, ոչ միայն գործի նյութերում առկա չէ, այլ նաև դռնբաց նիստի ընթացքում Կառավարության ներկայացուցչի կողմից չներկայացվեց որևէ փաստաթուղթ առ այն, որ սույն գործով ներկայացված դիմումը ստորագրվել է իրավասու անձի, այն է՝ վարչապետի կամ վարչապետի պարտականությունները

[1] Ինչպես 2025 թվականի նոյեմբերի 21-ին Սահմանադրական դատարան մուտքագրված գրության, այնպես էլ դրան կից ներկայացված՝ Կառավարության 2025 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 1655-Ա որոշման վրա առկա չէ ստորագրություն:

կատարող անձի կողմից: Ավելին՝ Կառավարության ներկայացուցիչը նշված հանգամանքը փորձեց հաստատել բացառապես ենթադրությունների հիման վրա:

Բացի նշվածից, գործի նյութերից նաև հետևում է, որ «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Կենսունակության բարելավման և հզորացման համար բնակարանային բարեփոխումներ» (THRIVE) ծրագրի վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի նախագծին ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու և նշված միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով Սահմանադրական դատարան դիմելու մասին հարցով Կառավարության նիստը, հարցի քննարկումը և ըստ այդմ որոշման կայացումը տեղի է ունեցել 2025 թվականի նոյեմբերի 20-ին, մինչդեռ այդ հարցերի վերաբերյալ կայացված որոշման «ստորագրումը» տեղի է ունեցել ՀՀ փովարչապետ Տիգրան Խաչատրյանի կողմից նույն թվականի նոյեմբերի 21-ին:

Նշվածի առնչությամբ դռնբաց նիստի ընթացքում Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանի կողմից Կառավարության ներկայացուցչին տրվեց հարց առ այն, թե Սահմանադրական դատարան դիմելու համար հիմք հանդիսացող Կառավարության որոշումը ե՞րբ է ըստ էության կայացվել՝ 2025 թվականի նոյեմբերի 20-ին, թե՞ նույն թվականի նոյեմբերի 21-ին՝ նկատի ունենալով, որ Կառավարության որոշումը թվագրված է 2025 թվականի նոյեմբերի 20-ով, այնինչ՝ որոշման վրա առկա է նշում, թե իբր այն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվել է 2025 թվականի նոյեմբերի 21-ին: Եվ եթե, Կառավարության որոշումը ստորագրությամբ ստեղծվել է 2025 թվականի նոյեմբերի 21-ին, ապա 2025 թվականի նոյեմբերի 20-ի Կառավարության նիստը ո՞վ է վարել, Կառավարության ղեկավարը, թե՝ ոչ՝ նկատի ունենալով, որ Կառավարության որոշումն իբրև թե էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվել է 2025 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ փոխվարչապետ Տ. Խաչատրյանի կողմից:

Ըստ 2025 թվականի դեկտեմբերի 5-ի դռնբաց նիստի արձանագրության՝ վերոնշյալ հարցի առնչությամբ Կառավարության ներկայացուցչի կողմից տրված բացատրությամբ նշվել է հետևյալը. «2025 թվականի նոյեմբերի 20-ի Կառավարության նիստը վարել է Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ինչպես նշեցիք, ստորագրել է փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը: Ենթադրում եմ, որ այդ պահին վարչապետը չի գտնվել Հայաստանում, հետևաբար, իր գործառույթները այդ պահին իրականացրել է փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը, հետևաբար, ինքը պետք է ստորագրեր»:

Վերոնշյալի արդյունքում ստացվում է, որ ոչ միայն գործի նյութերից է հետևում, այլև հենց Կառավարության ներկայացուցչի կողմից տրված բացատրությամբ

հաստատվեց այն հանգամանքը, որ միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով Սահմանադրական դատարան դիմելու մասին Կառավարության որոշումը կայացվել է 2025 թվականի նոյեմբերի 20-ին՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից Կառավարության նիստի վարման արդյունքում, և թեև այդ որոշումը թվագրված է 2025 թվականի նոյեմբերի 20-ով, բայց այն չի ստեղծվել այդ օրը, այլ այդ հարցի վերաբերյալ կայացված որոշումը ստեղծվել է ՀՀ փովարչապետ Տիգրան Խաչատրյանի կողմից նույն թվականի նոյեմբերի 21-ին:

Ելնելով վերոնշյալ հանգամանքներից՝ գտնում եմ, որ նման պայմաններում դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ինչը հիմք էր «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքների առաջացման, այն է՝ եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին դիմողին տեղեկացնելու համար:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

<u>Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:</u>

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ նաև Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի

իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Ընդ որում, էլեկտրոնային ստորագրությունը կարող է էլեկտրոնային փաստաթղթին տալ իրավական նշանակություն այն դեպքում, երբ էլեկտրոնային ստորագրությունը տեսողական դիտման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով արտահայտվում է ցուցասարքի (դիսփլեյի) էկրանին, թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև

կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ողջ վերոգրյալից զատ գտնում եմ, որ անհրաժեշտ է ամփոփիչ արձանագրում կատարել հետևյալ հանգամանքների վերաբերյալ՝

- 2025 թվականի նոյեմբերի 21-ին թիվ ՄՊ-1338 համարով Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը ներկայացված է ոչ թե ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից, այլ «ՀՀ վարչապետ Տիգրան Խաչատրյան»-ի կողմից, որի ՀՀ վարչապետ հանդիսանալու հանգամանքը հաստատող որևէ ապացույց, այդ թվում նաև՝ դիմումը ներկայացնելու պահին ՀՀ վարչապետի պարտականությունների կատարող անձ հանդիսանալու հանգամանքը հաստատող որևէ ապացույց ոչ դիմումին կից և ոչ էլ գործի բանավոր դատաքննության ընթացքում չի ներկայացվել,

- 2025 թվականի նոյեմբերի 21-ին թիվ ՄՊ-1338 համարով Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումի թղթային օրինակի վրա առկա չէ որևէ ստորագրություն,

- սույն գործով դիմումին կից ներկայացված՝ Կառավարության 2025 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 1655-Ա որոշումը թեև թվագրված է 2025 թվականի նոյեմբերի 20-ով, թեև ըստ Կառավարության ներկայացուցիչ՝ Աշխատանքի և սոցիալական

հարցերի նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյանի բացատրության՝ այն ընդունվել է Կառավարության 2025 թվականի նոյեմբերի 20-ին հրավիրված նիստի ընթացքում, որը վարել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, սակայն այն ստորագրված չէ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից, այլ իբրև թե ստորագրված է ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի կողմից, այն էլ ոչ թե որոշման ընդունման ամսաթվով, այլ «2025 թվականի նոյեմբերի 21» ամսաթվով:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը (թեև Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի կողմից 2025 թվականի նոյեմբերի 21-ին ներկայացված դիմումի թերությունները շտկելու համար ժամանակ է տրամադրվել, բայց նշված գրության մեջ մատնանշվել են բոլորովին այլ թերություններ, և որևէ խոսք չի եղել սույն հատուկ կարծիքում արձանագրված խախտումների մասին)՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«9» դեկտեմբերի 2025թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ԱԲՈՒ ԴԱԲԻՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 10 դեկտեմբերի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի,

դատավորներ՝ Արտակ Զեյնալյանի,
Հրայր Թովմասյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի (զեկուցող),
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Ղազարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2025 թվականի սեպտեմբերի 30-ին Աբու Դաբիում ստորագրված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Արաբական Միացյալ Էմիրությունների ներքին գործերի նախարարության կողմից տրամադրվող վարորդական վկայականների փոխադարձ ճանաչման և փոխանակման մասին» փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի դեկտեմբերի 4-ի N 1755-Ա որոշմամբ հավանություն է տվել 2025 թվականի սեպտեմբերի 30-ին Աբու Դաբիում ստորագրված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Արաբական Միացյալ Էմիրությունների ներքին գործերի նախարարության կողմից տրամադրվող վարորդական վկայականների փոխադարձ ճանաչման և փոխանակման մասին» փոխըմբռնման հուշագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի դեկտեմբերի 5-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ փոխըմբռնման հուշագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Արաբական Միացյալ Էմիրությունների ներքին գործերի նախարարության կողմից տրամադրվող վարորդական վկայականների փոխադարձ ճանաչման և փոխանակման մասին» փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Փոխըմբռնման հուշագիր) ստորագրվել է 2025 թվականի սեպտեմբերի 30-ին Աբու Դաբիում՝ Հայաստանի Հանրապետության և Արաբական Միացյալ Էմիրությունների՝ (այսուհետ՝ Կողմ/Կողմեր) տարածք այցի կամ այնտեղ բնակության ընթացքում՝ քաղաքացիների, որոնք ունեն երկու պետությունների համապատասխան պաշտոնական մարմինների կողմից տրամադրված վարորդական վկայականներ, տեղաշարժը դյուրացնելու նպատակով:

2. Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար ազգային օրենսդրությամբ պահանջվող համապատասխան ընթացակարգերի իրակա-

նացման վերաբերյալ վերջին ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու ամսաթվից 30 օր հետո և գործում է անորոշ ժամկետով, քանի դեռ Կողմերից որևէ մեկը մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով գրավոր չի ծանուցում այն դադարեցնելու իր մտադրության մասին՝ այդպիսի դադարեցման ամսաթվից առնվազն երեք ամիս առաջ:

3. Փոխըմբռնման հուշագրի իրականացման համար պատասխանատու իրավասու մարմիններն են՝ Հայաստանի Հանրապետության կողմից՝ Ներքին գործերի նախարարությունը, Արաբական Միացյալ Էմիրությունների կողմից՝ Ներքին գործերի նախարարության Մեքենաների և վարորդների լիցենզավորման դաշնային գլխավոր տնօրինությունը:

4. Փոխըմբռնման հուշագիրն ունի կից հավելված, որում ներկայացված են Հայաստանի Հանրապետության և Արաբական Միացյալ Էմիրությունների կողմից տրամադրվող վարորդական վկայականի նմուշները:

5. Հայաստանի Հանրապետությունը՝ փոխադարձության հիման վրա, ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

5.1. Փոխըմբռնման հուշագրի իրականացման նպատակներով ճանաչել մյուս Կողմի կողմից այն քաղաքացիներին տրամադրված վավեր վարորդական վկայականը, որոնք ժամանում են ոչ բնակության նպատակով՝ պայմանով, որ վարորդական վկայականի տնօրինողը բավարարում է Փոխըմբռնման հուշագրի 2-րդ հոդվածում ներկայացված աղյուսակում նախատեսված՝ վարորդական վկայականների տարբեր կարգերի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կողմից սահմանված նվազագույն տարիքի հետ կապված պահանջները (հոդված 1).

5.2. բնակության նպատակով ժամանող քաղաքացիների դեպքում մյուս Կողմի տրամադրած վարորդական վկայականի փոխանակման համար դիմող անձին ազատել դրա հետ կապված տեսական և գործնական քննություններից. այդ ազատումը սահմանափակվում է Փոխըմբռնման հուշագրի 2-րդ հոդվածում ներկայացված աղյուսակում նշված ավտոմեքենաների համար տրամադրվող վարորդական վկայականների կարգերով (հոդված 2, պարբերություն 1).

5.3. դիմող անձանց վարորդական վկայականը փոխարինել վարորդական վկայականի համարժեք տեսակով, ինչպես սահմանված է Փոխըմբռնման հուշագրի 2-րդ հոդվածում ներկայացված աղյուսակում (հոդված 3, կետ 5).

5.4. Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով անհապաղ տեղեկացնել Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի ցանկացած փոփոխության մասին (հոդված 6, պարբերություն 2).

5.5. Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով տեղեկացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության հետ կապված ցանկացած փոփոխության կամ լրացման մասին (հոդված 7).

5.6. Կողմերի միջև վեճի առկայության ժամանակահատվածում կատարել Փոխըմբռնման հուշագրով սահմանված Հայաստանի Հանրապետության բոլոր նախկին պարտավորությունները (հոդված 8, կետ 3):

6. Փոխըմբռնման հուշագրի 2-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ հիշյալ հոդվածի աղյուսակում չնշված այլ կարգերի և ենթակարգերի դեպքում այդ անձինք պետք է տեսական և գործնական քննություններ հանձնեն՝ մյուս Կողմի պետության ազգային օրենսդրությանը համապատասխան:

7. Փոխըմբռնման հուշագրի 3-րդ հոդվածով սահմանվում են վարորդական վկայականների փոխանակման պայմանները, մասնավորապես՝ վարորդական վկայականները կարող են փոխանակվել, երբ վարորդական վկայականի փոխանակման համար դիմող անձն ունի կացության վավեր թույլտվություն, վարորդական վկայականը վավեր է, դիմող անձը բավարարում է Փոխըմբռնման հուշագրի 2-րդ հոդվածում ներկայացված աղյուսակի՝ վարորդական վկայականների տարբեր կարգերի համար երկու Կողմերի սահմանած նվազագույն տարիքային պահանջները՝ ազգային օրենսդրությանը և կարգավորումներին համապատասխան, վարորդական վկայականը, որը փոխանակվելու է, համապատասխանում է նմուշներին (ներկայացված է Փոխըմբռնման հուշագրին կից հավելվածով):

Վարորդական վկայականի փոխանակման համար դիմող անձը պետք է ներկայացնի իրավական թարգմանությունների հավաստագրված որևէ բյուրոյի կողմից տրամադրված՝ վարորդական վկայականի՝ մյուս Կողմի ազգային լեզվով իրավական թարգմանությունը, դիմող անձը պետք է անցնի պահանջվող բժշկական զննությունը, և վարորդական վկայականի փոխանակումը կատարվում է՝ պահպանելով Կողմերի պետությունների ազգային օրենսդրության համաձայն պահանջվող ցանկացած այլ պայման և դրույթ:

Դիմող անձը պահպանում է իր ազգային վարորդական վկայականը՝ պայմանով, որ Կողմերի համապատասխան իրավասու մարմինները մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով ներկայացնեն վարորդական վկայականի վերաբերյալ անհրաժեշտ տվյալները և տեղեկությունները:

8. Փոխըմբռնման հուշագրի 3-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ Փոխըմբռնման հուշագրի դրույթները չեն կիրառվում Կողմերի իրավասու մարմինների

կողմից տրամադրված վարորդական վկայականի՝ քաղաքացի չհանդիսացող տնօրինողի նկատմամբ:

9. Կողմերի միջև սույն Փոխըմբռնման հուշագրի իրականացման հետ կապված ցանկացած վեճ կարգավորվում է բարեկամաբար՝ Կողմերի միջև դիվանագիտական ուղիներով իրականացվող բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Փոխըմբռնման հուշագրից բխող վեճի վրա չի տարածվում որևէ միջազգային կամ ներպետական օրենսդրության գործողություն, ոչ էլ տարածվում է ներպետական, օտարերկրյա կամ միջազգային դատարանի, արբիտրաժային տրիբունալի կամ երրորդ կողմի իրավազորությունը:

10. Փոխըմբռնման հուշագրում հղում է կատարվում 1968 թվականի նոյեմբերի 8-ի «Ճանապարհային երթևեկության մասին» Վիեննայի կոնվենցիային, որը Հայաստանի Հանրապետությունը 2018 թվականի փետրվարի 27-ին վավերացրել է «Ճանապարհային նշանների և ազդանշանների մասին» կոնվենցիա վերտառությամբ՝ ՀՕ-123-Ն օրենքով (Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 21-ի ՍԴՈ-1390 որոշմամբ նշված կոնվենցիայում (կից առարկությամբ) ամրագրված պարտավորությունները ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2025 թվականի սեպտեմբերի 30-ին Աբու Դաբիում ստորագրված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Արաբական Միացյալ Էմիրությունների ներքին գործերի նախարարության կողմից տրամադրվող վարորդական վկայականների փոխադարձ ճանաչման և փոխանակման մասին» փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

10 դեկտեմբերի 2025 թվականի
ՍԴՈ-1806

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ԱԲՈՒ ԴԱԲԻՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1806 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննելով «2025 թվականի սեպտեմբերի 30-ին Աբու Դաբիում ստորագրված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Արաբական Միացյալ Էմիրությունների ներքին գործերի նախարարության կողմից տրամադրվող վարորդական վկայականների փոխադարձ ճանաչման և փոխանակման մասին» փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2025 թվականի դեկտեմբերի 10-ի ՍԴՈ-1806 որոշմամբ որոշել է, որ 2025 թվականի սեպտեմբերի 30-ին Աբու Դաբիում ստորագրված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Արաբական Միացյալ Էմիրությունների ներքին գործերի նախարարության կողմից տրամադրվող վարորդական վկայականների փոխադարձ ճանաչման և փոխանակման մասին» փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2025 թվականի դեկտեմբերի 10-ի ՍԴՈ-1806 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի

համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2025 թվականի դեկտեմբերի 10-ի ՍԴՈ-1806 որոշմամբ 2025 թվականի սեպտեմբերի 30-ին Աբու Դաբիում ստորագրված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Արաբական Միացյալ Էմիրությունների ներքին գործերի նախարարության կողմից տրամադրվող վարորդական վկայականների փոխադարձ ճանաչման և փոխանակման մասին» փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ

եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝

հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

<u>Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:</u>

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի

կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Ընդ որում, էլեկտրոնային ստորագրությունը կարող է էլեկտրոնային փաստաթղթին տալ իրավական նշանակություն այն դեպքում, երբ էլեկտրոնային ստորագրությունը տեսողական դիտման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով արտահայտվում է ցուցասարքի (դիսփլեյի) էկրանին, թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության

դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է պրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«10» դեկտեմբերի 2025թ.



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ ՄԻՆՍԿՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՄՈՆՂՈԼԻԱՅԻ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 23 դեկտեմբերի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի,

դատավորներ՝ Արտակ Զեյնալյանի,
Հրայր Թովմասյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի (զեկուցող),
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2025 թվականի հունիսի 27-ին Մինսկում ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Մոնղոլիայի՝ մյուս կողմից, միջև ժամանակավոր առևտրային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի սեպտեմբերի 11-ի N 1283-Ա որոշմամբ հավանություն է տվել 2025 թվականի հունիսի 27-ին Մինսկում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Մոնղոլիայի՝ մյուս կողմից, միջև ժամանակավոր առևտրային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի հոկտեմբերի 24-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Եվրասիական տնտեսական միության (այսուհետ նաև՝ ԵԱՏՄ), և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Մոնղոլիայի՝ մյուս կողմից (այսուհետ նաև՝ Կողմեր), միջև ժամանակավոր առևտրային համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2025 թվականի հունիսի 27-ին Մինսկում՝ սակագնային և ոչ սակագնային խոչընդոտները նվազեցնելու կամ վերացնելու միջոցով Կողմերի միջև տնտեսական և առևտրային համագործակցությանն աջակցելու, ինչպես նաև Կողմերի միջև առևտրի ընդլայնումը և բազմազանեցումը խրախուսելու նպատակով:

2. Համաձայնագրի կիրարկման արդյունքում նախատեսվում է ապահովել Համաձայնագրի կողմերի միջև առևտրի ընդլայնում և դիվերսիֆիկացում, ինչպես նաև բարձրացնել ԵԱՏՄ անդամ պետությունների ապրանքների մրցունակությունը մոնղոլական շուկայում՝ ավելացնելով արտահանման ծավալները:

3. Համաձայնագրի անբաժանելի մաս են կազմում 4 հավելվածներ՝ Հավելված 1. «Ժամանակացույց Եվրասիական տնտեսական միության սակագնային պարտավորությունների», Հավելված 2. «Ժամանակացույց Մոնղոլիայի սակագնային պարտավորությունների», Հավելված 3. «Ծագման կանոնները», Հավելված 4. «Վեճերի կարգավորումը»:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

4.1. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության սակագնային անվանացանկում արվող ցանկացած փոփոխություն կատարվի առանց խախտելու Համաձայնագրի 1-ին և 2-րդ հավելվածներին համապատասխան սահմանված սակագնային զիջումները (հոդված 4, կետ 2),

4.2. Կողմերից մեկի տարածքի ծագում ունեցող ապրանքների համար ապահովել Համաձայնագրի 1-ին և 2-րդ հավելվածներով նախատեսված Հայաստանի Հանրապետության՝ սակագնային պարտավորությունների ժամանակացույցով սահմանված ռեժիմից ոչ պակաս բարենպաստ ռեժիմ (հոդված 5, կետ 1),

4.3. ապահովել, որ ապրանքների ներմուծման կամ արտահանման նկատմամբ կամ դրանց կապակցությամբ կիրառվող բոլոր վճարները և գանձումները համապատասխանեն 1994 թվականի Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագրի (այսուհետ՝ ՍԱԳՀ) VIII հոդվածին (հոդված 7),

4.4. մյուս կողմի ապրանքների մասով տրամադրել ազգային ռեժիմ՝ ՍԱԳՀ-ի III հոդվածին համապատասխան (հոդված 9),

4.5. կիրառել Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքներն ու կարգավորումները տեխնիկական կարգավորման ոլորտում՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության «Առևտրի տեխնիկական խոչընդոտների վերաբերյալ» համաձայնագրի 1Ա հավելվածի դրույթներին համապատասխան (հոդված 10, կետ 1),

4.6. Համաձայնագրի դրույթների կատարման նպատակով խրախուսել ստանդարտացման, տեխնիկական կանոնակարգման, չափագիտության, շուկայի վերահսկողության և համապատասխանության գնահատման ընթացակարգերի, այդ թվում՝ հավատարմագրման, թեստավորման և սերտիֆիկացման համար պատասխանատու համապատասխան մարմինների միջև երկկողմ համագործակցությունը (հոդված 10, կետ 2),

4.7. ապահովել, որ պարտադիր պահանջներին ապրանքի համապատասխանության գնահատման պահանջները և մեթոդները սահմանվեն Հայաստանի Հանրապետության պատասխանատու մարմինների կողմից՝ ներմուծող՝ Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենքներին և կարգավորումներին, ինչպես նաև «Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրի դրույթներին համապատասխան, որոնք նշված են Առևտրի համաշխարհային կազմակերպության համաձայնագրի 1Ա հավելվածում (հոդված 10, կետ 4),

4.8. սանիտարական և բուսասանիտարական միջոցառումների ոլորտում կիրառել Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքներն ու կարգավորումները՝ «Սանիտարական և բուսասանիտարական միջոցների կիրառման

մասին» համաձայնագրին համապատասխան, որոնք նշված են Առևտրի համաշխարհային կազմակերպության համաձայնագրի 1Ա հավելվածում (հոդված 11, կետ 1),

4.9. մյուս կողմի գրավոր հարցմամբ ժամանակին տեղեկություններ տրամադրել սանիտարական և բուսասանիտարական միջոցներին առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ, որն առաջացել է կամ կարող է առաջանալ Կողմերի միջև երկկողմ առևտրի արդյունքում (հոդված 11, կետ 3),

4.10. ապահովել Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից կիրառվող մաքսային վարչարարության միջոցների կանխատեսելիությունը, հետևողականությունը և թափանցիկությունը (հոդված 13, կետ 2),

4.11. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային ընթացակարգերը, հնարավորության դեպքում և Հայաստանի Հանրապետության մաքսային օրենքներով և կարգավորումներով սահմանված դեպքերում, հիմնված լինեն Համաշխարհային մաքսային կազմակերպության ստանդարտների ու առաջարկվող գործելակերպերի վրա (հոդված 13, կետ 3),

4.12. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները ձգտեն վերանայել իրենց մաքսային վարչարարության միջոցները՝ առևտրի դյուրացման նպատակով այդ միջոցները պարզեցնելու համար (հոդված 13, կետ 4),

4.13. հնարավորության սահմաններում ընդհանուր կիրառության մաքսային օրենքները և կարգավորումները հրապարակել անգլերենով (հոդված 13, կետ 5),

4.14. սահմանել կամ շարունակել կիրառել ապրանքների արդյունավետ բացթողմանն ուղղված մաքսային ընթացակարգեր ու գործառնություններ՝ Կողմերի միջև առևտուրը դյուրացնելու նպատակով (հոդված 13, կետ 6),

4.15. Համաձայնագրի 13-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝

4.15.1. նախատեսել ապրանքների բացթողումը մաքսային հայտարարագիրը գրանցվելուց հետո ոչ ավելի, քան 48 ժամվա ընթացքում՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենքներով և կարգավորումներով նախատեսված հանգամանքների,

4.15.2. ընդունել կամ կիրառել մինչև ապրանքների ժամանումը մաքսային տեղեկատվության էլեկտրոնային ներկայացման և մշակման ապահովումը՝ ժամանումից հետո ապրանքների բացթողումն արագացնելու նպատակով,

4.15.3. կիրառել ռիսկերի կառավարման համակարգ՝ ռիսկերի կանոնավոր գնահատման միջոցով՝ ջանքերը կենտրոնացնելով բարձր ռիսկայնության ապրանքների զննումների վրա և պարզեցնելով ցածր ռիսկայնության ապրանքների հետ իրականացվող մաքսային գործառնությունների կիրառումը (հոդված 13, կետ 7),

4.16. վարել առևտրի դյուրացման գործընկերության ծրագիր այն օպերատորների համար, որոնք համապատասխանում են անվտանգության հատուկ չափանիշ-

ներին, համաձայն Համաշխարհային մաքսային կազմակերպության՝ Համաշխարհային առևտրի ապահովմանն ու դյուրացմանն ուղղված SAFE ստանդարտների շրջանակի (հոդված 13, կետ 8),

4.17. ապահովել, որ Համաձայնագրի արդյունավետ կիրարկումը դյուրացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները խթանեն մյուս Կողմերի մաքսային մարմինների հետ համագործակցությունը՝ Կողմերի միջև առևտրում ընդգրկված ապրանքների վրա ազդող առանցքային մաքսային հարցերի շուրջ (հոդված 14, կետ 1),

4.18. Համաձայնագրի 14-րդ հոդվածի 2-4-րդ կետերին համապատասխան տրամադրված բոլոր տեղեկությունները համարել գաղտնի և ապահովել, որ այդ տեղեկությունները չբացահայտվեն առանց այդ տեղեկությունները տրամադրող անձի կամ կողմի մարմնի թույլտվության՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք բացահայտելը կարող է անհրաժեշտ լինել դատական գործընթացների նպատակներից ելնելով (հոդված 14, կետ 5),

4.19. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները ձգտեն ստեղծել և կիրառել մաքսային համագործակցության համար կապուղիներ, այդ թվում՝ ստեղծեն կապի ապահովման կենտրոններ, որոնք կդյուրացնեն տեղեկությունների արագ ու անվտանգ փոխանակումը և կբարելավեն մաքսային հարցերի համակարգումը (հոդված 14, կետ 6),

4.20. ներդնել տեղեկությունների էլեկտրոնային փոխանակում՝ հիմնվելով ԵԱՏՄ-ի ինտեգրված տեղեկատվական համակարգի տեխնիկական ենթակառուցվածքի և Մոնղոլիայի համապատասխան ենթակառուցվածքի օգտագործման վրա (հոդված 14, կետ 10),

4.21. մյուս կողմին անմիջապես տեղեկացնել վճարային հաշվեկշռի ապահովման նպատակով Համաձայնագրի 18-րդ հոդվածի 1-ին կետում նշված միջոցներ ձեռնարկելու Հայաստանի Հանրապետության մտադրության, ինչպես նաև դրանց իրականացման ու չեղարկման ժամանակացույցի մասին (հոդված 18, կետ 2),

4.22. կիրառել համընդհանուր պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցներ՝ ՍԱԳՀ-ի XIX հոդվածի, ՍԱԳՀ-ի VI հոդվածի դրույթներին, Երաշխիքների մասին համաձայնագրին, ՍԱԳՀ-ի VI հոդվածի իրականացման մասին համաձայնագրին, Առևտրային համաշխարհային կազմակերպության համաձայնագրի 1Ա հավելվածի «Սուբսիդիաների և փոխհատուցման միջոցների մասին» համաձայնագրին համապատասխան (հոդված 19, կետ 1),

4.23. հակագնագցման կամ փոխհատուցման հետաքննություն սկսելու հնարավորությունը դիտարկելու դեպքում մյուս կողմին գրավոր ծանուցել քննություն սկսելու դիմում ստանալու մասին ոչ ուշ, քան քննությունն սկսելու օրվանից 15 (տասնհինգ) օր առաջ (հոդված 19, կետ 3),

4.24. համընդհանուր պաշտպանական միջոց կիրառելու մտադրություն ունենալու դեպքում մյուս կողմին անմիջապես տրամադրել հետաքննության սկզբի, ինչպես նաև նախնական և վերջնական եզրահանգումների վերաբերյալ համապատասխան տեղեկությունների մասին գրավոր ծանուցում (հոդված 19, կետ 4),

4.25. Կողմերի միջև Համաձայնագրի մեկնաբանությունից և (կամ) կիրառումից բխող ցանկացած վեճ կարգավորել Համաձայնագրի «Վեճերի կարգավորում» 4-րդ հավելվածով սահմանված կանոններին և ընթացակարգերին համապատասխան (հոդված 20),

4.26. Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքների կամ կարգավորումների համաձայն՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության ընդհանուր կիրառության օրենքները և կարգավորումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային համաձայնագրերը, որոնք առնչվում են Համաձայնագրով նախատեսված որևէ հարցի, անհապաղ հրապարակվեն ամենաուշը դրանք ուժի մեջ մտնելու օրվանից կամ որևէ այլ կերպ հանրությանը հասանելի դառնան, այդ թվում՝ հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային տարբերակով (հոդված 21, կետ 1),

4.27. հնարավոր առավելագույն չափով մյուս կողմին ծանուցել ցանկացած միջոցի մասին, որը Հայաստանի Հանրապետության կարծիքով կարող է էականորեն ազդել Համաձայնագրի գործողության վրա կամ այլ կերպ էականորեն ազդել մյուս կողմի՝ Համաձայնագրով սահմանված շահերի վրա (հոդված 21, կետ 2),

4.28. Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքների և կարգավորումների համաձայն՝ պահպանել մյուս կողմի՝ Համաձայնագրին համապատասխան գաղտնի տրամադրած տեղեկությունների գաղտնիությունը (հոդված 22, կետ 1),

4.29. ճանաչել էլեկտրոնային առևտրի միջոցով ապահովվող տնտեսական աճը և հնարավորությունները, էլեկտրոնային առևտրի դինամիկ և նորարարական բնույթը, որը դրական ազդեցություն է ունենում Կողմերի միջև փոխադարձ առևտրի աճի վրա, ինչպես նաև էլեկտրոնային առևտրի նկատմամբ սպառողների վստահության խթանման կարևորությունը (հոդված 23, կետ 2),

4.30. արդյունավետ միջսահմանային առևտուրը դյուրացնելու նպատակով ձգտել օպտիմալացնել և պարզեցնել մաքսազերծման գործընթացներն Ազատ առևտրի գոտիներում կամ էլեկտրոնային առևտրի սուբյեկտների պահեստներում, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային առևտրի գործունեության համար (հոդված 23, կետ 3),

4.31. ճանաչել էլեկտրոնային առևտրին առնչվող ցանկացած ոչ անհրաժեշտ կարգավորող բեռից խուսափելու կարևորությունը (հոդված 23, կետ 4),

4.32. չժխտել, որ էլեկտրոնային ստորագրություններն ունեն նույն իրավական ուժն ու վավերականությունը, ինչ ոչ էլեկտրոնային ստորագրությունները, եթե Հայաստանի Հանրապետության օրենքներով ու կանոնակարգերով այլ բան նախատեսված չէ (հոդված 23, կետ 5),

4.33. ձգտել փոխադարձաբար ճանաչել էլեկտրոնային ստորագրությունները, եթե կիրառելի է (հոդված 23, կետ 6),

4.34. ձգտել էլեկտրոնային եղանակով հանրամատչելի դարձնել Կողմերի միջև իրականացվող առևտրին առնչվող կարգավորող փաստաթղթերը (հոդված 23, կետ 7),

4.35. ճանաչել էլեկտրոնային առևտրից օգտվողների անձնական տվյալների պաշտպանության տնտեսական և սոցիալական առավելությունները և էլեկտրոնային առևտրի նկատմամբ սպառողների վստահության բարձրացման գործում դրա կատարած ներդրումը (հոդված 23, կետ 8),

4.36. ընդունել կամ պահպանել այնպիսի միջոցներ, որոնք ապահովում են անձնական տվյալների պաշտպանությունը, այդ թվում՝ անձնական տվյալների անդրսահմանային փոխանցումը և դրան առնչվող պայմաններն ու պահանջները՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին ու կանոնակարգերին համապատասխան (հոդված 23, կետ 9),

4.37. նշանակել համակարգող, որն, ընդհանուր առմամբ, պատասխանատու կլինի մյուս կողմի և Համատեղ կոմիտեի հետ հաղորդակցության համար՝ Համաձայնագրի 23-րդ հոդվածի կիրարկումից բխող ցանկացած հարցերի առնչությամբ (հոդված 23, կետ 10),

4.38. ճանաչել տնտեսական համագործակցության կարևորությունը և համաձայնել ընդլայնել համագործակցությունը փոխշահավետ ոլորտներում՝ հաշվի առնելով Կողմերի զարգացման և կարողությունների տարբեր մակարդակները (հոդված 24, կետ 1),

4.39. խրախուսել և հեշտացնել Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմերի համապատասխան պետական մարմինների միջև համագործակցությունը, տնտեսական համագործակցությունը և անհրաժեշտության դեպքում՝ Կողմերի ձեռնարկությունների միջև համագործակցությունը խթանելու և իրականացնելու նպատակով (հոդված 24, կետ 2),

4.40. ստեղծել յուրաքանչյուր կողմի ներկայացուցիչներից բաղկացած Համատեղ կոմիտե, որը համանախագահում են երկու ներկայացուցիչներ՝ մեկը՝ ԵԱՏՄ-ից և դրա անդամ պետությունների կողմից՝ ի դեմս Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամներից մեկի, իսկ մյուսը՝ Մոնղոլիայի էկոնոմիկայի և զարգացման նախարարության և (կամ) վերջինիս իրավահաջորդի կողմից (հոդված 26, կետ 1),

4.41. Համատեղ կոմիտեի իրենց համապատասխան ներկայացուցիչների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել ոչ ուշ, քան դրա նիստն անցկացնելուց 30 (երեսուն) օր առաջ (հոդված 26, կետ 2),

4.42. Համաձայնագրի արդյունավետ իրականացման, ինչպես նաև Համաձայնագրով նախատեսված ցանկացած հարցով Կողմերի միջև հաղորդակցությունը դյուրացնելու նպատակով Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ 1 (մեկ) ամսվա ընթացքում նշանակել համակարգողի կամ համակարգողների և մյուս կողմին տեղեկություն տրամադրել նրանց վերաբերյալ (հոդված 27, կետ 1):

5. Համաձայնագիրն ուժի մեջ է 3 (երեք) տարի, այն կարող է երկարաձգվել ևս 3 (երեք) տարի ժամկետով, եթե Կողմերն այլ բան չպայմանավորվեն (հոդված 28, կետ 1):

6. Առաջին եռամյա ժամկետի ավարտից հետո՝ 1 (մեկ) տարվա ընթացքում, Կողմերը պարտավորվում են վերանայել Համաձայնագիրը՝ առևտուրը դյուրացնելու և տուրքերը, ինչպես նաև Կողմերի միջև իրականացվող՝ ըստ էության, ողջ առևտրի վերաբերյալ առևտրային մյուս սահմանափակող կանոնակարգերը վերացնելու նպատակով (հոդված 28, կետ 2):

7. Համաձայնագրի գործողությունը դադարում է ԵԱՏՄ-ի մասին պայմանագրից դուրս եկող ԵԱՏՄ ցանկացած անդամ պետության համար ԵԱՏՄ-ի մասին պայմանագրից դուրս գալու մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից (հոդված 28, կետ 4):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2025 թվականի հունիսի 27-ին Մինսկում ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Մոնղոլիայի՝ մյուս կողմից, միջև ժամանակավոր առևտրային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

23 դեկտեմբերի 2025 թվականի
ՍԴՈ – 1807

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ ՄԻՆՍԿՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՄՈՆՂՈԼԻԱՅԻ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1807 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննելով «2025 թվականի հունիսի 27-ին Մինսկում ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Մոնղոլիայի՝ մյուս կողմից, միջև ժամանակավոր առևտրային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2025 թվականի դեկտեմբերի 23-ի ՍԴՈ-1807 որոշմամբ որոշել է, որ 2025 թվականի հունիսի 27-ին Մինսկում ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Մոնղոլիայի՝ մյուս կողմից, միջև ժամանակավոր առևտրային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2025 թվականի դեկտեմբերի 23-ի ՍԴՈ-1807 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես

նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2025 թվականի դեկտեմբերի 23-ի ՍԴՈ-1807 որոշմամբ 2025 թվականի հունիսի 27-ին Մինսկում ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Մոնղոլիայի՝ մյուս կողմից, միջև ժամանակավոր առևտրային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական

դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

<u>Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:</u>

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Ընդ որում, էլեկտրոնային ստորագրությունը կարող է էլեկտրոնային փաստաթղթին տալ իրավական նշանակություն այն դեպքում, երբ էլեկտրոնային ստորագրությունը տեսողական դիտման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով արտահայտվում է ցուցասարքի (դիսփլեյի) էկրանին, թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է

վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի

կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար։

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«23» դեկտեմբերի 2025թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ԿՇԻՌՆԵՐԻ ԵՎ ՉԱՓԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ (ԿՉՄԲ/BIPM)» ԱՍՈՑԱՑՎԱԾ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ (ՕՉՄԿ/OIML)» ԹՂԹԱԿՑԱՅԻՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱՄԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 23 դեկտեմբերի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի (զեկուցող),

դատավորներ՝ Արտակ Զեյնալյանի,
Հրայր Թովմասյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Նարեկ Հովակիմյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««Կշիռների և չափերի միջազգային բյուրոյին (ԿՉՄԲ/BIPM)» ասոցացված անդամ դառնալու մասին» և «Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպությանը (ՕՉՄԿ/OIML)» թղթակցային անդամ դառնալու մասին» նամակ-համաձայնագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի մայիսի 29-ի N 657-Ա որոշմամբ հավանություն է տվել «Կշիռների և չափերի միջազգային բյուրոյին (ԿՉՄԲ/BIPM)» ասոցացված անդամ դառնալու մասին» և «Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպությանը (ՕՉՄԿ/OIML)» թղթակցային անդամ դառնալու մասին» նամակ-համաձայնագրերը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նամակ-համաձայնագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի մայիսի 30-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանի 2025 թվականի հուլիսի 1-ի ՍԴԱՈ-103 աշխատակարգային որոշմամբ սույն գործով վարույթը կասեցվել է մինչև համապատասխան մարմիններից ապացույցներ և պարզաբանումներ ստանալը: Սահմանադրական դատարանի 2025 թվականի նոյեմբերի 11-ի ՍԴԱՈ-155 աշխատակարգային որոշմամբ սույն գործի վարույթը վերսկսվել է:

Ուսումնասիրելով «Կշիռների և չափերի միջազգային բյուրոյին (ԿՉՄԲ/BIPM)» ասոցացված անդամ դառնալու մասին» և «Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպությանը (ՕՉՄԿ/OIML)» թղթակցային անդամ դառնալու մասին» նամակ-համաձայնագրերը (այսուհետ նաև՝ համապատասխանաբար՝ ԿՉՄԲ/BIPM և ՕՉՄԿ/OIML նամակ-համաձայնագրեր), հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. ԿՉՄԲ/BIPM նամակ-համաձայնագիրն ստորագրվել է 2025 թվականի մարտի 18-ին՝ ԿՉՄԲ/BIPM ասոցացված անդամ դառնալու նպատակով, իսկ ՕՉՄԿ/OIML նամակ-համաձայնագիրը հաստատվել է 2025 թվականի ապրիլի 2-ին՝ 2025 թվականից ՕՉՄԿ/OIML-ի թղթակցային անդամ դառնալու նպատակով:

2. ԿՉՄԲ/BIPM նամակ-համաձայնագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանն առընթեր «Ստանդարտացման և

չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերությունը պատասխանատու կլինի առնչվող բոլոր հարցերում Հայաստանի Հանրապետությանը ներկայացնելու համար:

ՕՉՄԿ/OIML նամակ-համաձայնագրի համաձայն՝ Էկոնոմիկայի նախարարությունը պատասխանատու է օրենսդրական չափագիտության ոլորտում քաղաքականության մշակման համար, իսկ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն իրականացնում է օրենսդրական չափագիտության ոլորտի քաղաքականությունը:

ԿՉՄԲ/BIPM նամակ-համաձայնագիրն ունի առդիր, այն է՝ 2025 թվականի մարտի 17-ին կազմված հաշիվ ապրանքագիրը՝ Հայաստանի Հանրապետության՝ 2025 թվականի ասոցացված պետության կարգավիճակով առաջին անդամավճարը:

3. Նամակ-համաձայնագրերով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է պարտավորություն՝ վճարել տարեկան անդամավճարներ:

ԿՉՄԲ/BIPM նամակ-համաձայնագրի համաձայն՝ 2025 թվականի համար նախատեսված 13 359 (հաշիվ-ապրանքագիրը կցվում է) եվրոյի չափով առաջին տարեկան անդամավճարը ԿՉՄԲ կողմից ստացվելուց հետո՝ ասոցացված պետություն դառնալու գործընթացը կավարտվի և Հայաստանի Հանրապետությունը կդառնա ասոցացված պետություն:

Հաջորդ տարիների համար բաժանորդագրությունը ենթակա կլինի Կշիռների և չափերի գլխավոր համաժողովի ընդհանուր կոմիտեի (ԿՉԳՀ) 24-րդ նիստի (2011թ.) 4-րդ բանաձևի դրույթներին, ի լրումն ԿՉՄԲ-ի կողմից տրամադրվող դոտացիայի վերաբերյալ ԿՉԳՀ-ի հետագա որոշումների:

4. Համաձայն ԿՉԳՀ-ի 24-րդ նիստի (2011թ.) 4-րդ բանաձևի[1] դրույթների՝ ասոցացված անդամ հանդիսացող պետությունները պարտավոր են առաջին հինգ տարվա ընթացքում վճարել տարեկան անդամավճար, որի չափը հաշվարկվում է՝ ելնելով տվյալ պետության կողմից Միավորված ազգերի կազմակերպությանը վճարվող անդամավճարի չափից: Միևնույն ժամանակ, դիմումին կից ներկայացված Ֆինանսների նախարարության եզրակացության համաձայն՝ Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպությանը թղթակցային և Կշիռների և չափերի միջազգային բյուրոյին ասոցացված անդամակցության գործընթացի մեկնարկը նախատեսվում է 2025 թվականից, և անդամակցության առաջին տարվա անդամավճարի ամբողջական վճարումն իրականացվելու է ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության կողմից (...): Հետևաբար՝ հաշվի առնելով վերոնշյալը, 2025 թվականին՝ ասոցացված պետության կարգավիճակում,

[1] https://www.bipm.org/en/committees/cg/cgpm/24-2011/resolution-4

Հայաստանի Հանրապետության առաջին տարվա անդամավճարը կֆինանսավորվի ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության կողմից, իսկ հետագա տարիներին՝ սկսած 2026 թվականից, Հայաստանի Հանրապետությունը կվճարի անդամավճարներ:

5. «Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության հիմնադրման մասին» կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ Թղթակից անդամները չեն կարող ներկայացվել Համաժողովում, սակայն կարող են նշանակել դիտորդներ, որոնք գործում են զուտ խորհրդակցական ձայնի իրավունքով: Նրանք չեն վճարում անդամակցության վճարներ, ինչպես անդամ պետությունները, սակայն կրում են իրենց պահանջով այդպիսի ծառայություններ մատուցելու ծախսերը, ինչպես նաև Կազմակերպության հրատարակությունների բաժանորդագրության ծախսերը:

ՕՉՄԿ-ին որպես Թղթակից անդամ միանալու ընթացակարգի համաձայն՝ Թղթակից անդամ դառնալու համար անհրաժեշտ է ազգային օրենսդրական չափագիտության համար պատասխանատու անձի կամ համապատասխան նախարարի կողմից ստորագրված նամակ ուղարկել Օրենսդրական չափագիտության միջազգային բյուրո, որով, ի թիվս այլնի, ապագա Թղթակից անդամը պարտավորվում է վճարել Օրենսդրական չափագիտության միջազգային համաժողովի կողմից սահմանված տարեկան միանվագ անդամակցության վճարը:

Օրենսդրական չափագիտության տասնվեցերորդ միջազգային համաժողովի արձանագրության նախագծի 10.1. կետի համաձայն՝ Թղթակից անդամի ընթացիկ վճարը կազմում է 1 400 եվրո (այսինքն՝ 1-ին դասի անդամ պետության ներդրվող միջոցների բազային մասնաբաժնի 10%-ը)՝ անկախ Թղթակից անդամի բնակչության թվից կամ դրա տնտեսության բարգավաճման աստիճանից: Թղթակից անդամի տարեկան ներդրվող միջոցների չափը կավելանա 2024 թվականից սկսած և աստիճանաբար կաճի՝ նպատակ ունենալով մինչև 2028 թվականն այն հավասարեցնել անդամ պետության՝ վերջինիս դասի համար սահմանված տարեկան ներդրվող միջոցների 50%-ին (ենթակա է հաստատման 17-րդ համաժողովի ընթացքում): Թղթակից անդամի ներդրվող միջոցների բազային մասնաբաժնի առաջարկված ավելացումը տեղի կունենա հետևյալ եղանակով.

- 2022թ.՝ 1 420 եվրո,
- 2023թ.՝ 1 440 եվրո,
- 2024թ.՝ 2 010 եվրո,
- 2025թ.՝ 2 820 եվրո:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Կշիռների և չափերի միջազգային բյուրոյին (ԿՉՄԲ/BIPM)» ասոցացված անդամ դառնալու մասին» և «Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպությանը (ՕՉՄԿ/OIML)» թղթակցային անդամ դառնալու մասին» նամակ-համաձայնագրերում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

23 դեկտեմբերի 2025 թվականի
ՍԴՈ-1808

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ««ԿՇԻՌՆԵՐԻ ԵՎ ՉԱՓԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ (ԿՉՄԲ/ BIPM)» ԱՍՈՑԱՑՎԱԾ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ (ՕՉՄԿ/OIML)» ԹՂԹԱԿՑԱՅԻՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱՄԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1808 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննելով ««Կշիռների և չափերի միջազգային բյուրոյին (ԿՉՄԲ/BIPM)» ասոցացված անդամ դառնալու մասին» և «Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպությանը (ՕՉՄԿ/OIML)» թղթակցային անդամ դառնալու մասին» նամակ-համաձայնագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2025 թվականի դեկտեմբերի 23-ի ՍԴՈ-1808 որոշմամբ որոշել է, որ «Կշիռների և չափերի միջազգային բյուրոյին (ԿՉՄԲ/BIPM)» ասոցացված անդամ դառնալու մասին» և «Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպությանը (ՕՉՄԿ/OIML)» թղթակցային անդամ դառնալու մասին» նամակ-համաձայնագրերում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2025 թվականի դեկտեմբերի 23-ի ՍԴՈ-1808 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից

ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2025 թվականի դեկտեմբերի 23-ի ՍԴՈ-1808 որոշմամբ «Կշիռների և չափերի միջազգային բյուրոյին (ԿՉՄԲ/BIPM)» ասոցացված անդամ դառնալու մասին» և «Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպությանը (ՕՉՄԿ/OIML)» թղթակցային անդամ դառնալու մասին» նամակ-համաձայնագրերում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր

սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝

Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

<u>Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:</u>

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581,

ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Ընդ որում, էլեկտրոնային ստորագրությունը կարող է էլեկտրոնային փաստաթղթին տալ իրավական նշանակություն այն դեպքում, երբ էլեկտրոնային ստորագրությունը տեսողական դիտման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով արտահայտվում է ցուցասարքի (դիսփլեյի) էկրանին, թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ

ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն

ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«23» դեկտեմբերի 2025թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-ԻՆ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 23 դեկտեմբերի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.
նախագահող՝ Արման Դիլանյանի (զեկուցող),
դատավորներ՝ Արտակ Զեյնալյանի,
Հրայր Թովմասյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
Կառավարության ներկայացուցիչ՝ Ներքին գործերի նախարարի տեղակալ
Արմեն Ղազարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◊ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◊ 1(122) 2026

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2025 թվականի հուլիսի 21-ին Թբիլիսիում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի նոյեմբերի 14-ի N 1586-Ա որոշմամբ հավանություն է տվել 2025 թվականի հուլիսի 21-ին Թբիլիսիում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի նոյեմբերի 17-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2025 թվականի հուլիսի 21-ին Թբիլիսիում՝ Հայաստանի Հանրապետության կամ Վրաստանի տարածք մուտք գործելու, այնտեղ գտնվելու կամ բնակվելու համար սահմանված պահանջները չբավարարող կամ այլևս չբավարարող անձանց հայտնաբերման, անվտանգ և կանոնակարգված վերադարձի համար Համաձայնագրի միջոցով և փոխադարձության հիման վրա արագ և արդյունավետ ընթացակարգեր մշակելու և այդ անձանց տարանցումը համագործակցության ոգով դյուրացնելու նպատակով:

2. Համաձայնագիրն ունի անբաժանելի մաս կազմող 7 հավելվածներ՝ Հավելված 1. «Փաստաթղթերի ընդհանուր ցանկը, որոնց ներկայացումը համարվում է քաղաքացիության մասով ապացույց (3-րդ հոդվածի 1-ին կետ և 7-րդ հոդվածի 1-ին կետ)», Հավելված 2. «Փաստաթղթերի ընդհանուր ցանկը, որոնց ներկայացումը համարվում է քաղաքացիության մասով առերևույթ (*prima facie*) փաստարկ (3-րդ հոդվածի 1-ին կետ և 7-րդ հոդվածի 2-րդ կետ)», Հավելված 3. «Երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման համար պայմանների մասով

ապացույց համարվող փաստաթղթերի ընդհանուր ցանկ (4-րդ հոդվածի 1-ին կետ և 8-րդ հոդվածի 1-ին կետ)», Հավելված 4. «Երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման համար պայմանների մասով առերևույթ (***prima facie)*** փաստարկ համարվող փաստաթղթերի ընդհանուր ցանկ (4-րդ հոդվածի 1-ին կետ և 8-րդ հոդվածի 2-րդ կետ)», Հավելված 5. «Հարցազրույցի դիմում (7-րդ հոդվածի 3-րդ կետ), Հետընդունման դիմում», Հավելված 6. «Տարանցման դիմում», Հավելված 7. «Համաձայն «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի 11-րդ հոդվածի 1-ին կետի Հետընդունման մասին ծանուցում»:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

3.1. որպես Հայցվող պետություն՝ մասնավորապես ապահովել Հայաստանի Հանրապետության տարածք հետ ընդունված (ռեադմիսիայի ենթարկված) անձանց իրավունքների պաշտպանությունը՝ Համաձայնագրին և միջազգային այն փաստաթղթերով ստանձնած Հայաստանի Հանրապետության պարտավորություններին համապատասխան, որոնց կողմ է (հոդված 2, կետ 1),

3.2. որպես Հայցող պետություն՝ նախապատվություն տալ կամավոր, այլ ոչ հարկադիր վերադարձին, եթե պատճառներ չկան ենթադրելու, որ դա կխոչընդոտի անձի վերադարձը Հայցվող պետություն (հոդված 2, կետ 2),

3.3. որպես Հայցվող պետություն՝ Հայցող պետության դիմումի հիման վրա և առանց հետագա ձևական պահանջների, բացառությամբ նրանց, որոնք նախատեսված են Համաձայնագրով, հետ ընդունել բոլոր այն անձանց, որոնք չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում Հայցող պետության տարածք մուտք գործելու, այնտեղ գտնվելու կամ բնակվելու գործող պայմանները՝ պայմանով, որ ապացուցված է կամ ներկայացված առերևույթ (*prima facie*) փաստարկների հիման վրա կարող է հիմնավորված ձևով ենթադրվել, որ նրանք Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են, ինչպես նաև որպես Հայցվող պետություն հետ ընդունել վերոհիշյալ անձանց անչափահաս չամուսնացած երեխաներին՝ անկախ նրանց ծննդյան վայրից կամ քաղաքացիությունից՝ բացառությամբ այն դեպքերի, եթե նրանք ունեն Հայցող պետությունում բնակության անկախ իրավունք, և վերոհիշյալ անձանց ամուսիններին, որոնք ունեն այլ երկրի քաղաքացիություն կամ քաղաքացիություն չունեցող անձ են և ունեն վավեր ճամփորդական փաստաթուղթ՝ պայմանով, որ նրանք ունենան Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու և այնտեղ գտնվելու իրավունք կամ ունեն այդ իրավունքը հետագայում ստանալու հիմք՝ բացառությամբ այն դեպքերի, եթե նրանք ունեն Հայցող պետությունում բնակության անկախ իրավունք (հոդված 3, կետեր 1 և 2),

3.4. որպես Հայցվող պետություն՝ հետ ընդունել նաև Հայցող պետությունում անօրինականորեն գտնվող կամ բնակվող այն անձանց, որոնք Հայցող պետության տարածք մուտք գործելուց հետո, Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրության համաձայն, հրաժարվել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից՝ բացառությամբ այն դեպքերի, եթե այդ անձանց Հայցող պետությունն առնվազն խոստացել է հպատակագրում (նատուրալիզացիա) (հոդված 3, կետ 3),

3.5. որպես Հայցվող պետություն՝ հետընդունման դիմումին դրական պատասխան տալու դեպքում ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունը, անկախ հետ ընդունվող անձի ցանկությունից, ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրի հետ ընդունվող անձի վերադարձի համար պահանջվող ճամփորդական փաստաթուղթ՝ 90 օր վավերականության ժամկետով. վերոհիշյալ պարտավորությունը հինգ աշխատանքային օրվա ընթացքում չկատարելու դեպքում համարվում է, որ Հայաստանի Հանրապետությունն ընդունում է երկրից արտաքսման նպատակով տրվող՝ Հայցող պետության օրինակելի ձևի ճամփորդական փաստաթղթի օգտագործումը (հոդված 3, կետ 4),

3.6. նախապես տրամադրված ճամփորդական փաստաթղթի վավերականության ընթացքում իրավական կամ փաստացի պատճառներով համապատասխան անձի տեղափոխման անհնարինության դեպքում, որպես Հայցվող պետություն՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունը հինգ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրի նույն վավերականության ժամկետով նոր ճամփորդական փաստաթուղթ. վերոհիշյալ պարտավորությունը հինգ աշխատանքային օրվա ընթացքում չկատարելու դեպքում համարվում է, որ Հայաստանի Հանրապետությունն ընդունում է երկրից արտաքսման նպատակով տրվող՝ Հայցող պետության օրինակելի ձևի ճամփորդական փաստաթղթի օգտագործումը (հոդված 3, կետ 5),

3.7. որպես Հայցվող պետություն՝ Հայցող պետության դիմումի հիման վրա և առանց հետագա ձևական պահանջների, բացառությամբ այն պահանջների, որոնք նախատեսված են Համաձայնագրով, հետ ընդունել երրորդ երկրի քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող այն անձանց, որոնք չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում Հայցող պետության տարածք մուտք գործելու, այնտեղ գտնվելու կամ բնակվելու գործող պայմանները՝ պայմանով, որ ապացուցված է կամ տրամադրված առերևույթ (*prima facie*) ապացույցների հիման վրա կարող է հիմնավորված ձևով ենթադրվել, որ այդպիսի անձինք հետընդունման դիմումը ներկայացնելու պահին ունեն Հայաստանի Հանրապետության կողմից տրված վավեր վիզա կամ կացության թույլտվություն, կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելուց կամ այդ տարածքով տարանցելուց հետո անօրինական կերպով և ուղղակիորեն մուտք են գործել Հայցող պետության տարածք (հոդված 4, կետ 1),

3.8. Հայցվող պետության կողմից հետընդունման դիմումին դրական արձագանքելու դեպքում, որպես Հայցող պետություն, տրամադրել վերադարձի համար պահանջվող օրինակելի ձևի ճամփորդական փաստաթուղթ այն անձին, որին հետընդունման մասով դրական արձագանք է տրվել (հոդված 4, կետ 3),

3.9. բացառությամբ Համաձայնագրի 5-րդ հոդվածի 2-րդ կետում նշված պայմանների՝ Համաձայնագրի 3-րդ և 4-րդ հոդվածներով նախատեսված պարտավորություններից որևէ մեկի հիման վրա իրականացվող՝ հետընդունման ենթակա անձի տեղափոխման համար ապահովել հետընդունման դիմումի ներկայացում Հայցվող պետության իրավասու մարմին (հոդված 5, կետ 1),

3.10. ապահովել, որ հետընդունման դիմումը հնարավորության սահմաններում պարունակի Համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված տեղեկությունները (հոդված 6, կետեր 1 և 2),

3.11. Համաձայնագրի 1-ին և 2-րդ հավելվածներում թվարկված փաստաթղթերից որևէ մեկի ներկայացման անհնարինության կամ դրանք բավարար չլինելու դեպքում, որպես Հայցվող պետություն՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը կամ իրավասու դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունները հետընդունման դիմումում ներառված՝ Հայցող պետության կողմից ներկայացված՝ հարցազրույց անցկացնելու խնդրանքի հիման վրա, հետընդունման ենթակա անձի հետ առանց անհարկի ձգձգման, խնդրանքը ներկայացնելու օրվանից հետո ամենաուշը հինգ աշխատանքային օրվա ընթացքում անցկացնեն հարցազրույց վերջինիս քաղաքացիության փաստը հաստատելու համար՝ իրավասու դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության վարչական շենքում. վերոհիշյալ դեպքում՝ որպես Հայցող պետություն հանդես գալու պարագայում, եթե հարցազրույցը անց է կացվում իրավասու դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության վարչական շենքից դուրս, ապա կրել ճամփորդության և կեցության հետ կապված ծախսերը և հարցազրույցի ժամանակ ապահովել հարցազրույցն անցկացնող դիվանագիտական ծառայության աշխատակցի անվտանգությունը (հոդված 7, կետ 3),

3.12. ապահովել Համաձայնագրի 8-րդ հոդվածով սահմանված՝ երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասով ապացուցման միջոցներին ներկայացվող պահանջների կատարումը (հոդված 8),

3.13. ապահովել Համաձայնագրի 9-րդ հոդվածով սահմանված հետընդունման դիմումի ներկայացման ժամկետների պահպանումը (հոդված 9),

3.14. որպես Հայցող պետություն՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները մինչև անձին վերադարձնելը՝ առնվազն երեք աշխատանքային օր առաջ, Հայցվող պետության իրավասու մարմիններին նախապես գրավոր ծանուցում ուղարկեն (հավելված 7) տեղափոխման վերաբերյալ, որը պարունակում է տեղափոխման ամսաթվի, պետական սահմանի անցման կետի, հնարավոր

ուղեկցողների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև տեղափոխմանը վերաբերող այլ տեղեկություններ (հոդված 11, կետ 1),

3.15. որպես Հայցող պետություն՝ հետ ընդունել Հայցվող պետության կողմից հետ ընդունված ցանկացած անձի, եթե անձի տեղափոխումից հետո՝ վեց ամսվա ընթացքում, իսկ երրորդ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց տեղափոխումից հետո՝ 12 ամսվա ընթացքում հաստատվում է, որ Համաձայնագրի 3-րդ և 4-րդ հոդվածներով սահմանված պահանջները չեն կատարվել, նման դեպքերում Համաձայնագրի ընթացակարգային դրույթները կիրառվում են համապատասխան փոփոխություններով (mutatis mutandis), և տրամադրվում է հետ ընդունվող անձի իրական ինքնությանը և քաղաքացիությանը վերաբերող հասանելի ողջ տեղեկատվությունը (հոդված 12),

3.16. սահմանափակել երրորդ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց տարանցումն այն դեպքերում, երբ այդ անձինք չեն կարող ուղղակիորեն վերադարձվել նպատակակետ հանդիսացող պետություն (հոդված 13, կետ 1),

3.17. որպես Հայցվող պետություն՝ թույլատրել երրորդ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց տարանցումը, եթե հետագա ճամփորդությունը հնարավոր այլ տարանցման պետություններով և նպատակակետ հանդիսացող պետության կողմից հետընդունումն ապահովված են (հոդված 13, կետ 2),

3.18. ապահովել, որ տարանցման գործողությունների վերաբերյալ դիմումը և դրա պատասխանը Հայցվող պետության իրավասու մարմին ներկայացվեն հաղորդակցության էլեկտրոնային միջոցներով, այդ թվում՝ ՌՀԿԷՀ-ի (ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգ), և պարունակեն Համաձայնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված տեղեկությունները (հոդված 14, կետ 1),

3.19. որպես Հայցվող պետություն՝ դիմումը ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր տեղեկացնել Հայցող պետությանը դիմումի ընդունման մասին՝ հաստատելով ընդունման սահմանային անցակետը և նախատեսված ժամը, կամ տեղեկացնել ընդունումը մերժելու և մերժման հիմքերի մասին (հոդված 14, կետ 2),

3.20. օդային ճանապարհով տարանցում իրականացնելու դեպքում հետընդունման ենթակա անձին և նրա հնարավոր ուղեկցողներին ազատել օդանավակայանով տարանցման վիզա ձեռք բերելու պահանջից (հոդված 14, կետ 3),

3.21. որպես Հայցվող պետություն՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները, փոխադարձ խորհրդակցությունների համաձայն, աջակցեն տարանցման գործողությունների իրականացմանը, մասնավորապես, համապատասխան անձանց նկատմամբ իրականացվող վերահսկողության, ինչպես նաև այդ նպատակով անհրաժեշտ հարմարությունների ապահովման միջոցով (հոդված 14, կետ 4),

3.22. հետընդունման կամ տարանցման ենթակա անձի ուղեկցումն իրականացնել Համաձայնագրի 15-րդ հոդվածով սահմանված կարգով (հոդված 15),

3.23. որպես Հայցող պետություն՝ կրել մինչև Հայցվող պետության սահմանը կամ նպատակակետ հանդիսացող պետության սահմանն իրականացվող հետընդունման և տարանցման գործողությունների հետ կապված տրանսպորտային և վարչական բոլոր ծախսերը (հոդված 16, կետ 1),

3.24. որպես Հայցող պետություն՝ հաշիվ-ապրանքագիրն ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, վճարել կատարված ծախսերի դիմաց՝ գումարը փոխանցելով Հայցվող պետության իրավասու մարմնի բանկային հաշվին (հոդված 16, կետ 2),

3.25. տվյալների պաշտպանությունն իրականացնել Համաձայնագրի 17-րդ հոդվածով սահմանված կարգով (հոդված 17),

3.26. Համաձայնագրի կիրառման և մեկնաբանման առնչությամբ մյուս Պայմանավորվող կողմի հետ միմյանց տրամադրել փոխադարձ օգնություն և այդ նպատակով ստեղծել համատեղ կոմիտե, որը, մասնավորապես, ունենալու է Համաձայնագրի 19-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված խնդիրները (հոդված 19, կետ 1),

3.27. Համաձայնագիրը ստորագրելուց հետո՝ 60 (վաթսուն) օրացուցային օրվա ընթացքում, դիվանագիտական ուղիներով վրացական կողմին տեղեկացնել Համաձայնագրի կիրարկման համար պատասխանատու իրավասու մարմինների, նրանց կոնտակտային տվյալների և սահմանային անցակետերի, ինչպես նաև այդ իրավասու մարմինների, նրանց կոնտակտային տվյալների և սահմանային անցակետերի ցանկացած փոփոխության մասին (հոդված 20):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 2025 թվականի հուլիսի 21-ին Թբիլիսիում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

23 դեկտեմբերի 2025 թվականի
ՍԴՈ-1809

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-ԻՆ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1809 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննելով «2025 թվականի հուլիսի 21-ին Թբիլիսիում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2025 թվականի դեկտեմբերի 23-ի ՍԴՈ-1809 որոշմամբ որոշել է, որ 2025 թվականի հուլիսի 21-ին Թբիլիսիում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2025 թվականի դեկտեմբերի 23-ի ՍԴՈ-1809 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների)

նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2025 թվականի դեկտեմբերի 23-ի ՍԴՈ-1809 որոշմամբ 2025 թվականի հուլիսի 21-ին Թբիլիսիում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու

համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

<u>Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:</u>

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել,

որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Ընդ որում, էլեկտրոնային ստորագրությունը կարող է էլեկտրոնային փաստաթղթին տալ իրավական նշանակություն այն դեպքում, երբ էլեկտրոնային ստորագրությունը տեսողական դիտման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով արտահայտվում է ցուցասարքի (դիսփլեյի) էկրանին, թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«23» դեկտեմբերի 2025թ.



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՓՇՏԱԿՈՒՄԸ, ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՊՕՐԻՆԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ, ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ԻՐԵՆՑ ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐ ՌԵՍՏԻՏՈՒՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 23 դեկտեմբերի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի,

դատավորներ՝ Արտակ Զեյնալյանի,
Հրայր Թովմասյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի (զեկուցող),
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2025 թվականի հուլիսի 22-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև մշակութային արժեքների հափշտակումը, անօրինական պեղումները և ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը կանխելու և դրանք իրենց ծագման երկիր ռեստիտուցիայի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 1630-Ա որոշմամբ հավանություն է տվել 2025 թվականի հուլիսի 22-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև մշակութային արժեքների հափշտակումը, անօրինական պեղումները և ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը կանխելու և դրանք իրենց ծագման երկիր ռեստիտուցիայի մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի նոյեմբերի 24-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև մշակութային արժեքների հափշտակումը, անօրինական պեղումները և ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը կանխելու և դրանք իրենց ծագման երկիր ռեստիտուցիայի մասին» համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2025 թվականի հուլիսի 22-ին Աթենքում:

2. Համաձայնագիրը կազմված է նախաբանից, յոթ հոդվածից և դրա անբաժանելի մասը կազմող երկու Հավելվածից՝ Հավելված 1. «Հունաստանի

օրենսդրությամբ սահմանված մշակութային օբյեկտների տեղեկատվական ցանկ» և Հավելված 2. «Հայաստանի օրենսդրությամբ սահմանված մշակութային օբյեկտների տեղեկատվական ցանկ»:

3. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վերջին գրավոր ծանուցումն ստանալու ամսաթվից, որով Հայաստանի Հանրապետությունը և Հունաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ Կողմեր) դիվանագիտական ուղիներով միմյանց ծանուցում են Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ իրենց բոլոր ներքին իրավական ընթացակարգերի ավարտի մասին: 2025 թվականի հոկտեմբերի 2-ի դրությամբ հունական կողմից չի ստացվել ծանուցում՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

4. Համաձայնագրի իրականացման համար պատասխանատու մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է:

5. Արտաքին գործերի նախարարությունը՝ Համաձայնագրի վավերացման կամ հաստատման արտաքին քաղաքական նպատակահարմարության վերաբերյալ տվել է դրական եզրակացություն:

6. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը՝ փոխադարձության հիման վրա, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

6.1. անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել մշակութային արժեքների հափշտակման, անօրինական պեղումների և ապօրինի ներմուծման, արտահանման, տարանցման կամ դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման դեմ պայքարելու համար՝ Մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն արգելելու և կանխելու միջոցների մասին ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1970 թվականի կոնվենցիայի, այն միջազգային կոնվենցիաների, որոնց կողմ է Հայաստանի Հանրապետությունը, և Հայաստանի Հանրապետության համապատասխան ազգային օրենսդրության համաձայն (Հոդված 1),

6.2. փոխանակել տեղեկություններ Հունաստանի Հանրապետության համար հետաքրքրություն ներկայացնող մշակութային արժեքների հափշտակման, անօրինական պեղումների և ապօրինի ներմուծման, արտահանման, տարանցման կամ դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման, ինչպես նաև առգրավման, աճուրդների և վաճառքի իրականացման դեպքերի ու միջադեպերի վերաբերյալ (Հոդված 3, կետ 1),

6.3. Հայաստանի Հանրապետության ազգային ընթացակարգերի գաղտնիության թույլատրելի կանոններով, մշակութային արժեքների ապօրինի շրջանառության վերաբերյալ փոխանակել տեղեկություններ, որոնք հասանելի են Հայաստանի Հանրապետության ծառայությունների և վարչակազմերի, այդ թվում՝ ոստիկանության և մաքսային մարմինների համար (Հոդված 3, կետ 2),

6.4. գողացված կամ ապօրինի շրջանառված մշակութային արժեքների վերաբերյալ ամբողջ տեղեկությունը փոխանցել նավահանգիստներում, օդանավակայաններում և պետական սահմաններին գտնվող Հայաստանի Հանրապետության համապատասխան մաքսային և ոստիկանության մարմիններին՝ դրանց վաղ հայտնաբերմանը նպաստելու, ինչպես նաև համապատասխան կանխարգելիչ և ուղղիչ միջոցառումների բացահայտումն ու իրականացումը դյուրացնելու նպատակով (Հոդված 3, կետ 3),

6.5. հետամուտ լինել և զարգացնել անձնակազմի փոխանակումն ու վերապատրաստումը կանոնավոր հիմունքներով՝ մշակութային արժեքների ապօրինի տեղաշարժի կանխման, Հայաստանի Հանրապետություն ծագման երկրներ ռեստիտուցիայի և վերադարձնելու ոլորտում (Հոդված 3, կետ 4),

6.6. աջակցել Հունաստանի Հանրապետության տարածքից ապօրինաբար հեռացված մշակութային արժեքների հայտնաբերման և վերադարձի հարցում՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը, միջազգային կոնվենցիաներին և համաձայնագրերին համապատասխան (Հոդված 4, կետ 1),

6.7. ապահովել, որ ապօրինի կերպով դուրս բերված մշակութային արժեքները վերականգնելու և վերադարձնելու հարցումը կատարվի դիվանագիտական ուղիներով և ներառի պահանջը հիմնավորող փաստաթղթերը (Հոդված 4, կետ 2),

6.8. կանխել առանց Հունաստանի Հանրապետության իրավասու մշակութային մարմնի կողմից տրված համապատասխան արտահանման մասին թույլտվության Հայաստանի Հանրապետության տարածք մշակութային արժեքների ներմուծումը և նման թույլտվություն չունեցող իրերը բռնագրավել, ինչի մասին ծանուցել Հունաստանի Հանրապետությանը դիվանագիտական ուղիներով, ինչպես նաև փորձել պարզել Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության (ՔՈՄԿ-ԻՆՏԵՐՊՈԼ) գողացված արվեստի գործերի տվյալների բազայում՝ արդյոք կազմակերպության անդամ երկրներից որևէ մեկի խնդրանքով նման գույքը ենթակա է բռնագրավման (Հոդված 4, կետ 3),

6.9. Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան՝ Համաձայնագրի համաձայն վերականգնված և վերադարձված բոլոր մշակութային արժեքներն ազատել մաքսատուրքերից և այլ հարկերից (Հոդված 4, կետ 4),

6.10. Հարցում ներկայացնող Կողմ հանդես գալու դեպքում կրել Համաձայնագրի շրջանակներում իրականացվող մշակութային արժեքների վերականգնման և ռեստիտուցիայի հետ կապված ծախսերը (Հոդված 4, կետ 5):

7. Համաձայնագրի համաձայն՝ վերապատրաստման ծրագիրը ներառում է, սակայն չի սահմանափակվում մշակութային արժեքների շուկաների բնագավառով, մշակութային արժեքների ներմուծման և արտահանման, օրենսդրության և օրենքների նախագծման, միջազգային հարաբերություններում տեղեկությունների հավաքագրման և համակարգմանն առնչվող հարցերով: Անձնակազմի փոխանակման և վերապատրաստման այս գործողություններն իրականացվում են մասնակից հաստատությունների ռեսուրսների առկայության դեպքում:

8. Համաձայնագրի մեկնաբանությունից կամ իրականացումից բխող ցանկացած վեճ Կողմերի միջև կարգավորվում է բարեկամաբար՝ դիվանագիտական ուղիներով անցկացվող խորհրդակցությունների միջոցով:

9. Համաձայնագրում հղում է կատարվում «Մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն արգելելու և կանխելու միջոցների մասին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1970 թվականի կոնվենցիային, որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 1993 թվականի հունիսի 22-ին «Մշակութային արժեքների ապօրինի ներմուծման, արտահանման և սեփականության իրավունքի փոխանցման արգելմանն ու կանխմանն ուղղված միջոցառումների մասին» վերտառությամբ՝ Գերագույն խորհրդի N ՀՆ-0869-Ի որոշմամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2025 թվականի հուլիսի 22-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև մշակութային արժեքների հափշտակումը, անօրինական պեղումները և ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը կանխելու և դրանք իրենց ծագման երկիր ռեստիտուցիայի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

23 դեկտեմբերի 2025 թվականի
ՍԴՈ-1810

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՓՇՏԱԿՈՒՄԸ, ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՊՕՐԻՆԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ, ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ԻՐԵՆՑ ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐ ՌԵՍՏԻՏՈՒՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1810 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննելով «2025 թվականի հուլիսի 22-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև մշակութային արժեքների հափշտակումը, անօրինական պեղումները և ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը կանխելու և դրանք իրենց ծագման երկիր ռեստիտուցիայի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2025 թվականի դեկտեմբերի 23-ի ՍԴՈ-1810 որոշմամբ որոշել է, որ 2025 թվականի հուլիսի 22-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև մշակութային արժեքների հափշտակումը, անօրինական պեղումները և ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը կանխելու և դրանք իրենց ծագման երկիր ռեստիտուցիայի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2025 թվականի դեկտեմբերի 23-ի ՍԴՈ-1810 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում

է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2025 թվականի դեկտեմբերի 23-ի ՍԴՈ-1810 որոշմամբ 2025 թվականի հուլիսի 22-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև մշակութային արժեքների հափշտակումը, անօրինական պեղումները և ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց

նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը կանխելու և դրանք իրենց ծագման երկիր ռեստիտուցիայի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու

վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Ընդ որում, էլեկտրոնային ստորագրությունը կարող է էլեկտրոնային փաստաթղթին տալ իրավական նշանակություն այն դեպքում, երբ էլեկտրոնային ստորագրությունը տեսողական դիտման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով արտահայտվում է ցուցասարքի (դիսփլեյի) էկրանին, թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին

կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր

ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«23» դեկտեմբերի 2025թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 16 հունվարի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի,

դատավորներ՝ Արտակ Զեյնալյանի,
Հրայր Թովմասյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի (զեկուցող),
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◊ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◊ 1(122) 2026

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի նոյեմբերի 27-ի N 1673-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի դեկտեմբերի 1-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (այսուհետ նաև՝ Բանկ) միջև «Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիր» (այսուհետ նաև՝ Ծրագիր) վարկային համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2025 թվականի հուլիսի 23-ին:

2. Համաձայնագրով նախատեսվում է Բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրել իննսունվեց միլիոն չորս հարյուր հազար եվրո (96,400,000 եվրո) գումար՝ Ծրագրի ֆինանսավորմանն աջակցելու նպատակով:

3. Համաձայնագիրն ունի երեք առդիր և մեկ հավելված՝ **Առդիր 1.** «Ծրագրի նկարագրությունը», **Առդիր 2**. «Ծրագրի կատարումը», **Առդիր 3.** «Պարտավորության հետ կապված մարումների ժամանակացույց» և **Հավելված:**

4. Ծրագիրը կազմված է չորս մասերից՝ **Մաս 1.** «Կլաստերների ինտեգրված և կայուն զարգացման խթանում», **Մաս 2.** «Կլիմայակայուն ենթակառուցվածքներին աջակցում և մասնավոր հատվածի մասնակցության խթանում», **Մաս 3.** «Ծրագրի

կառավարումը և գործառական աջակցությունը» և **Մաս 4.** «Պայմանական արտակարգ իրավիճակներին արձագանքելու բաղադրիչը»:

5. Ծրագրի նպատակներն են կլիմայակայուն ենթակառուցվածքների հասանելիության բարելավումը և Հայաստանում Ծրագրի կողմից աջակցվող կլաստերների տեղական տնտեսությունում զբոսաշրջության ունեցած ներդրման ավելացումը (Առդիր 1):

6. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

6.1. ստեղծել և այնուհետև Ծրագրի իրականացման ողջ ընթացքում պահել Ծրագրի ղեկավարման կոմիտե, որը նախագահում է Հայաստանի Հանրապետության փոխվարչապետը, և որը կազմված է Էկոնոմիկայի նախարարության, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ինչպես նաև այլ համապատասխան ճյուղային նախարարությունների, պետական կառույցների և տեղական ու տարածաշրջանային մարմինների ներկայացուցիչներից՝ ըստ անհրաժեշտության, և որը պատասխանատու է բարձր մակարդակով ռազմավարական որոշումների կայացման համար (Առդիր 2, Բաժին I, Մաս Ա, կետ 2),

6.2. ստեղծել և այնուհետև Ծրագրի իրականացման ողջ ընթացքում պահել Ծրագրի աշխատանքային խումբ, որը ղեկավարում է Էկոնոմիկայի նախարարը և որը կազմված է Էկոնոմիկայի նախարարության և Ծրագրի իրականացման կազմակերպության ներկայացուցիչներից, և որը պատասխանատու է ծագող մարտահրավերների համալիր իրականացումը քննարկելու և հասցեագրելու, ինչպես նաև աշխատանքային մակարդակով հաղորդակցության և որոշումների կայացման գործընթացը խթանելու համար (Առդիր 2, Բաժին I, Մաս Ա, կետ 3),

6.3. Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների միջոցով Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո՝ վեց ամիսը չգերազանցող ժամկետում, համայնքի մակարդակով ստեղծել և Ծրագրի իրականացման ողջ ընթացքում պահել Տեղական աշխատանքային խմբեր, որոնք կազմված են համայնքների ղեկավարներից, համայնքային իշխանության ներկայացուցիչներից, տեղական ոչ պետական կազմակերպությունների ներկայացուցիչներից, ակտիվ ռեզիդենտներից և մասնավոր հատվածից, և որոնք պատասխանատու են Կլաստերային զարգացման ծրագրերի մշակման համար խորհրդատվության և ուղղորդման համար, հանդես են գալիս որպես տեղական համայնքների՝ հետադարձ կապի ապահովման և/կամ այն մտահոգությունների վերհանման հարցերով կոնտակտային մարմիններ, որոնք

առնչվում են Ծրագրի 2-րդ մասով սահմանված Տեղանքին առնչվող միջոցառումների նախապատրաստմանը, տեխնիկական նախագծմանը և իրականացմանը, ինչպես նաև այն հարցերի բարձրաձայնմանը, որոնք վերաբերում են Ծրագրի իրականացման կազմակերպության, կապալառուների և շահագրգիռ այլ կողմերի հետ համագործակցությամբ կատարվող աշխատանքի որակին, և համայնքին կանոնավոր կերպով տեղեկացնում են Ծրագրով աջակցվող կլաստերների շրջանակներում իրականացվող միջոցառումների առաջընթացի մասին և տեղական մակարդակով համակարգում են բողոքներին արձագանքելու գործընթացը (Առդիր 2, Բաժին I, Մաս Ա, կետ 4),

6.4. Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից Ծրագրի համապատասխան մասի իրականացումը դյուրացնելու նպատակով վարկային միջոցները Ծրագրի իրականացման կազմակերպությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության բյուջետավորման գործընթացների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության և Ծրագրի իրականացման կազմակերպության միջև կնքված լրացուցիչ համաձայնագրի (այսուհետ՝ Ենթահամաձայնագիր) հիման վրա՝ Բանկի կողմից հաստատված պայմաններով (Առդիր 2, Բաժին I, Մաս Բ, կետ 1),

6.5. Ենթահամաձայնագրով սահմանված Հայաստանի Հանրապետության իրավունքներն իրացնել այնպես, որ պաշտպանվի Հայաստանի Հանրապետության և Բանկի շահերը և ապահովվի Վարկի նպատակների իրագործումը, ինչպես նաև՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն այլ համաձայնության է գալիս, չզիջել, չփոփոխել, չչեղարկել Ենթահամաձայնագիրը կամ դրա որևէ դրույթ կամ չհրաժարվել դրանցից (Առդիր 2, Բաժին I, Մաս Բ, կետ 2),

6.6. ապահովել, որ Ծրագրի իրականացման կազմակերպությունը՝ Ծրագիրն ընդունի, այնուհետև իրականացնի Բանկի համար ընդունելի ձևով, բովանդակությամբ և կարգով՝ Ծրագրի գործառնական ձեռնարկին համաձայն (Առդիր 2, Բաժին I, Մաս Գ, կետ 1, ենթակետ «ա»),

6.7. ապահովել, որ Ծրագրի իրականացման կազմակերպությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը գրավոր այլ համաձայնության է գալիս, չփոփոխի, չչեղարկի Ծրագրի գործառնական ձեռնարկի որևէ դրույթ կամ չհրաժարվի դրանից, ինչպես նաև չթույլատրի Ծրագրի գործառնական ձեռնարկի որևէ դրույթի փոփոխումը, չեղարկումը կամ կասեցումը (Առդիր 2, Բաժին I, Մաս Գ, կետ 1, ենթակետ «բ»),

6.8. մշակել և հաստատել Բանկի համար ընդունելի ձևով և բովանդակությամբ ձեռնարկ, որում սահմանվեն պայմանական արտակարգ իրավիճակին արձագանքելու մասի իրականացման մանրամասն մեխանիզմները, ներառյալ՝

6.8.1. պայմանական արտակարգ իրավիճակին արձագանքելու մասի համակարգման և իրականացման ցանկացած կառուցվածք կամ ինստիտուցիոնալ մեխանիզմ,

6.8.2. հատուկ միջոցառումներ, որոնք կարող են ներառվել պայմանական արտակարգ իրավիճակին արձագանքելու մասում, դրա համար պահանջվող թույլատրելի ծախսեր և դրանք ներառելու ցանկացած այլ ընթացակարգեր,

6.8.3. պայմանական արտակարգ իրավիճակին արձագանքելու մասի ֆինանսական կառավարման մեխանիզմներ,

6.8.4. պայմանական արտակարգ իրավիճակներին արձագանքելու մասին առնչվող գնումների մեթոդներ և ընթացակարգեր,

6.8.5. արտակարգ իրավիճակների ծախսերի ֆինանսավորման նպատակով գումարների առհանման համար պահանջվող փաստաթղթեր,

6.8.6. պայմանական արտակարգ իրավիճակին արձագանքելու մասի համար բնապահպանական և սոցիալական գնահատման և կառավարման մեխանիզմների նկարագիր,

6.8.7. արտակարգ իրավիճակների գործողությունների պլանի ձևանմուշ (Առդիր 2, Բաժին I, Մաս Դ, կետ «ա»),

6.9. ապահովել, որ Բանկի համար ընդունելի ձևով և բովանդակությամբ մշակված ձեռնարկում նշված կառույցներն ու մեխանիզմները պահպանվեն պայմանական արտակարգ իրավիճակին արձագանքելու մասի իրականացման ողջ ընթացքում՝ Բանկի համար ընդունելի բավարար անձնակազմով և ռեսուրսներով (Առդիր 2, Բաժին I, Մաս Դ, կետ 2),

6.10. ապահովել, որ պայմանական արտակարգ իրավիճակին արձագանքելու մասի համար պահանջվող բնապահպանական և սոցիալական փաստաթղթերը մշակվեն, հրապարակվեն և ընդունվեն Բանկի համար ընդունելի ձևով և բովանդակությամբ մշակված ձեռնարկի և Բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանի համաձայն՝ Բանկի համար ընդունելի ձևով և բովանդակությամբ, ինչպես նաև ապահովել, որ պայմանական արտակարգ իրավիճակին արձագանքելու մասն իրականացվի բնապահպանական և սոցիալական փաստաթղթերի համաձայն՝ Բանկի համար ընդունելի ձևով (Առդիր 2, Բաժին I, Մաս Դ, կետ 3),

6.11. ապահովել, որ Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից Ծրագիրն իրականացվի Բնապահպանական և սոցիալական ստանդարտների համաձայն՝ Բանկի համար ընդունելի ձևով (Առդիր 2, Բաժին I, Մաս Ե, կետ 1),

6.12. ապահովել, որ Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից Ծրագիրն իրականացվի Բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանի համաձայն՝ Բանկի համար ընդունելի ձևով: Այս նպատակով Ծրագրի իրականացման կազմակերպությունը պետք է ապահովի, որ՝

6.12.1. բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանում նշված միջոցառումներն ու գործողություններն իրականացվեն պատշաճ և արդյու-

նավետ կերպով, ինչպես նախատեսված է բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանում,

6.12.2. բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանի իրականացման հետ կապած ծախսերը կատարելու համար բավարար միջոցներ հասանելի լինեն,

6.12.3. բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանի իրականացման համար պահպանվեն քաղաքականություններ և ընթացակարգեր, և ներգրավվի համարժեք թվով որակավորված ու փորձառու անձնակազմ, ինչպես նախատեսված է բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանում,

6.12.4. բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանը կամ դրա որևէ դրույթ չփոխվի, չչեղարկվի, չկասեցվի կամ դրանից հրաժարում տեղի չունենա՝ բացառությամբ այն դեպքի, երբ բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանում սահմանված կարգով Բանկն այլ գրավոր համաձայնության է գալիս, և ապահովի, որ լրամշակված բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանը հրապարակվի դրանից անմիջապես հետո (Առդիր 2, Բաժին I, Մաս Ե, կետ 2),

6.13. ապահովել, որ Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից՝

6.13.1. ձեռնարկվեն անհրաժեշտ բոլոր միջոցները՝ հավաքելու, կազմելու և բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանում սահմանված պարբերականությամբ, կանոնավոր հաշվետվությունների միջոցով, իսկ Բանկի կողմից պահանջվելու դեպքում՝ անմիջապես առանձին հաշվետվությամբ կամ հաշվետվությունների միջոցով Բանկին կանոնավոր կերպով ներկայացնելու բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանին և դրանում նշված բնապահպանական և սոցիալական փաստաթղթերին համապատասխանության կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները. Բանկի համար ընդունելի ձևով բովանդակությամբ բոլոր այդ հաշվետվություններում, ի թիվս այլնի, նշվում են՝ բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանի իրականացման կարգավիճակը, պայմանները, որոնք խոչընդոտում են կամ կարող են խոչընդոտել բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանի իրականացումը, եթե այդպիսիք կան, և ուղղիչ ու կանխարգելիչ միջոցառումները, որոնք ձեռնարկվում են, կամ որոնք անհրաժեշտ է ձեռնարկել այդ պայմաններին արձագանքելու համար,

6.13.2. Բանկին անհապաղ տեղեկացնել Ծրագրին առնչվող կամ Ծրագրի վրա ազդեցություն ունեցող ցանկացած միջադեպի կամ պատահարի մասին, որն ունեցել է կամ հավանական է, որ ունենա էական անբարենպաստ ազդեցություն շրջակա միջավայրի, ազդակիր համայնքների, հանրության կամ աշխատողների վրա՝ բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանի, դրա մեջ նշված

բնապահպանական և սոցիալական փաստաթղթերի և բնապահպանական և սոցիալական ստանդարտների համաձայն (Առդիր 2, Բաժին I, Մաս Ե, կետ 4),

6.14. ապահովել, որ Ծրագրի իրականացման կազմակերպությունն ստեղծի, հանրայնացնի, պահպանի և գործարկի բողոքների արձագանքման հասանելի մեխանիզմ՝ Ծրագրի ազդակիր անձանցից վերջիններիս մտահոգությունները և բողոքներն ստանալու ու դրանց կարգավորումը դյուրացնելու համար, ու ձեռնարկի անհրաժեշտ և պատշաճ բոլոր միջոցները՝ այդ մտահոգությունները և բողոքները կարգավորելու կամ դրանց կարգավորումը դյուրացնելու համար՝ Բանկի համար ընդունելի ձևով (Առդիր 2, Բաժին I, Մաս Ե, կետ 5),

6.15. ապահովել, որ Ծրագրի իրականացման կազմակերպությունը Ծրագրով նախատեսված բոլոր մրցութային փաստաթղթերում և շինարարական կապալի պայմանագրերում ներառի կապալառուների, ենթակապալառուների և վերահսկող կազմակերպությունների պարտավորությունը՝ պահպանելով բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանի և այդտեղ նշված բնապահպանական ու սոցիալական փաստաթղթերի համապատասխան դրույթները, ինչպես նաև ընդունել և գործողության մեջ դնել վարքագծի կանոնագրքեր, որոնք պետք է տրամադրվեն բոլոր աշխատակիցներին և ստորագրվեն նրանց կողմից՝ մանրամասն ներկայացնելով միջոցներ՝ բնապահպանական, սոցիալական, առողջապահական և անվտանգության ռիսկերին, ինչպես նաև սեռական շահագործման և բռնության, սեռական ոտնձգությունների և երեխաների նկատմամբ բռնության ռիսկերին հակազդելու համար, բոլոր այն հարցերը, որոնք կիրառելի են նշված պայմանագրերի համաձայն ձեռնարկված կամ իրականացված շինարարական կապալի այդ աշխատանքների առնչությամբ (Առդիր 2, Բաժին I, Մաս Ե, կետ 6),

6.16. Ծրագրի վերաբերյալ յուրաքանչյուր հաշվետվություն Բանկին ներկայացնել օրացուցային յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո՝ ոչ ուշ, քան քառասունհինգ օրվա ընթացքում, որն ընդգրկում է օրացուցային կիսամյակը (Առդիր 2, Բաժին II):

7. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը՝

7.1. Ծրագրի ընդհանուր համակարգման և քաղաքականության աջակցման պարտականությունները վերապահում է Էկոնոմիկայի նախարարությանը (Առդիր 2, Բաժին I, Մաս Ա, կետ 1),

7.2. Վարկի մայր գումարի համահավասար մարումներն իրականացնելու է յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ին և դեկտեմբերի 1-ին, ընդ որում՝ առաջին մարումը 2034 թվականի հունիսի 1-ին, իսկ վերջինը՝ 2045 թվականի դեկտեմբերի 1-ին (Առդիր 3):

8. Համաձայնագրի 4-րդ հոդվածի 4.02-րդ մասի համաձայն՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը Համաձայնագրի ստորագրման ամսաթվից հետո հարյուր ութսուն (180) օր է:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

16 հունվարի 2026 թվականի
ՍԴՈ-1811

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1811 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2026 թվականի հունվարի 16-ի ՍԴՈ-1811 որոշմամբ որոշել է, որ Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2026 թվականի հունվարի 16-ի ՍԴՈ-1811 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է

հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2026 թվականի հունվարի 16-ի ՍԴՈ-1811 որոշմամբ Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական

դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

<u>Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:</u>

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Ընդ որում, էլեկտրոնային ստորագրությունը կարող է էլեկտրոնային փաստաթղթին տալ իրավական նշանակություն այն դեպքում, երբ էլեկտրոնային ստորագրությունը տեսողական դիտման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով արտահայտվում է ցուցասարքի (դիսփլեյի) էկրանին, թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է

վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի

կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«21» հունվարի 2026թ.



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ ՄԻՆՍԿՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 3 փետրվարի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի,

դատավորներ՝ Արտակ Զեյնալյանի,
Հրայր Թովմասյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի (զեկուցող),
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◊ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◊ 1(122) 2026

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2025 թվականի հունիսի 27-ին Մինսկում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Արաբական Միացյալ Էմիրությունների՝ մյուս կողմից, միջև տնտեսական գործընկերության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի նոյեմբերի 14-ի N 1603-Ա որոշմամբ հավանություն է տվել 2025 թվականի հունիսի 27-ին Մինսկում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Արաբական Միացյալ Էմիրությունների՝ մյուս կողմից, միջև տնտեսական գործընկերության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի նոյեմբերի 17-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Եվրասիական տնտեսական միության (այսուհետ նաև՝ ԵԱՏՄ) և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Արաբական Միացյալ Էմիրությունների՝ մյուս կողմից (այսուհետ նաև՝ առանձին՝ Կողմ, իսկ միասին՝ Կողմեր), միջև տնտեսական գործընկերության մասին համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2025 թվականի հունիսի 27-ին Մինսկում՝ սակագնային և ոչ սակագնային խոչընդոտները նվազեցնելու միջոցով Կողմերի միջև տնտեսական և առևտրային փոխգործակցությանն աջակցելու, ինչպես նաև Կողմերի միջև առևտրի ընդլայնումը խրախուսելու նպատակով:

2. Համաձայնագրով նախատեսվում են Կողմերի հորիզոնական պարտավորությունների, ազգային ռեժիմի, ապրանքների արտահանման և ներմուծման գործընթացների ժամանակ կիրառվող կանոնակարգերի թափանցիկություն, ինչպես նաև ընդհանուր առևտրում պաշտպանիչ միջոցների կիրառման ժամանակ Առևտրի համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) նորմերի ապահովում:

3. Համաձայնագրի անբաժանելի մաս են հանդիսանում Համաձայնագրի հավելվածները, ինչպես նաև կից ցանկերը, որոնց մեջ ներառված ապրանքատեսակներով Կողմերը տրամադրելու են սակագնային արտոնություններ:

4. Կողմերը Համաձայնագրով ստեղծում են ազատ առևտրի գոտի՝ 1994 թվականի Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագրի (այսուհետ՝ ՍԱԳՀ 1994) XXIV հոդվածին համապատասխան (հոդված 1.1):

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

5.1. հաստատել մյուս Կողմերի նկատմամբ առկա իրավունքներն ու պարտավորությունները՝ ԱՀԿ համաձայնագրի և այլ համաձայնագրերի համաձայն, որոնց կողմ է Հայաստանի Հանրապետությունը (հոդված 1.4, պարբերություն 1),

5.2. ձեռնարկել այնպիսի ողջամիտ միջոցներ, որոնք կարող են հասանելի լինել Հայաստանի Հանրապետությանը՝ իր տարածքներում կենտրոնական, տարածաշրջանային և տեղական կառավարման մարմինների և իշխանությունների կողմից պատվիրակված պետական լիազորություններն իրականացնելիս տարածաշրջանային և տեղական կառավարությունների ու մարմինների և ոչ պետական մարմինների կողմից սույն Համաձայնագրի դրույթների կատարումն ապահովելու համար (հոդված 1.5, պարբերություն 1),

5.3. մյուս Կողմի ապրանքների համար տրամադրել ազգային ռեժիմ՝ ՍԱԳՀ 1994-ի III հոդվածին համապատասխան (հոդված 2.3),

5.4. ներմուծման կամ արտահանման համար կիրառվող կամ դրանց հետ կապված կամ ներմուծման օբյեկտների և արտահանման օբյեկտների համար վճարումների միջազգային փոխանցման համար կամ դրանց հետ կապված մաքսատուրքերի և ցանկացած տեսակի գանձումների առնչությամբ, տուրքերը և գանձումները գանձելու մեթոդի առնչությամբ և ներմուծման ու արտահանման հետ կապված բոլոր կանոնների և ձևակերպումների առնչությամբ, ինչպես նաև ՍԱԳՀ 1994-ի III հոդվածի 2-րդ և 4-րդ պարբերություններում նշված բոլոր հարցերի առնչությամբ ցանկացած երրորդ երկրի տարածքի ծագում ունեցող կամ այդ երրորդ երկրի տարածքի համար նախատեսված ապրանքի համար տրամադրված ցանկացած առավելություն, բարենպաստ պայման, արտոնություն կամ անձեռնմխելիություն անհապաղ և անվերապահորեն տրամադրել մյուս Կողմի համանման ապրանքի համար կամ այդ Կողմի տարածքի համար նախատեսված համանման ապրանքի համար (հոդված 2.4, պարբերություն 1),

5.5. եթե Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, մյուս Կողմի ծագում ունեցող ապրանքի համար չավելացնել գործող մաքսատուրքը կամ չընդունել նոր մաքսատուրք, որը գերազանցում է Համաձայնագրի 2Ա (Սակագնային պարտավորությունների ժամանակացույց), 2Բ (ԱՄԷ սակագնային պարտավորությունների ժամանակացույց) և 2Գ (ԵԱՏՄ սակագնային պարտավորությունների ժամանակացույց) հավելվածներում նշված սակագնային պարտավորությունների Հայաստանի Հանրապետության ժամանակացույցում սահմանված մաքսատուրքերի չափերը (հոդված 2.5, պարբերություն 1),

5.6. մյուս Կողմի ծագում ունեցող ապրանքների համար նվազեցնել կամ վերացնել մաքսատուրքերը Համաձայնագրի 2Ա (Սակագնային պարտավորությունների ժամանակացույց), 2Բ (ԱՄԷ սակագնային պարտավորությունների ժամանակացույց) և 2Գ (ԵԱՏՄ սակագնային պարտավորությունների ժամանակացույց) հավելվածներում նշված սակագնային պարտավորությունների Հայաստանի Հանրապետության ժամանակացույցին համապատասխան (հոդված 2.5, պարբերություն 2),

5.7. խորհրդակցել պահանջ ներկայացնող Կողմի հետ՝ Համաձայնագրի 2Ա (Սակագնային պարտավորությունների ժամանակացույց), 2Բ (ԱՄԷ սակագնային պարտավորությունների ժամանակացույց) և 2Գ (ԵԱՏՄ սակագնային պարտավորությունների ժամանակացույց) հավելվածներում նշված սակագնային պարտավորությունների իրենց ժամանակացույցում սահմանված մաքսատուրքերի վերացման գործընթացն արագացնելու, դրա շրջանակը բարելավելու կամ ընդլայնելու համար (հոդված 2.6, պարբերություն 1),

5.8. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության սակագնային պարտավորությունների ժամանակացույցի փոխատեղմամբ մյուս Կողմի ծագում ունեցող ապրանքների համար չսահմանվի պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որը սահմանված է Համաձայնագրի 2Ա (Սակագնային պարտավորությունների ժամանակացույց), 2Բ (ԱՄԷ սակագնային պարտավորությունների ժամանակացույց) և 2Գ (ԵԱՏՄ սակագնային պարտավորությունների ժամանակացույց) հավելվածներում նշված սակագնային պարտավորությունների Հայաստանի Հանրապետության ժամանակացույցով (հոդված 2.7, պարբերություն 2),

5.9. չընդունել կամ չպահպանել մյուս Կողմի ապրանքի ներմուծման կամ մյուս Կողմի տարածքի համար նախատեսված ապրանքի արտահանման կամ արտահանման նպատակով վաճառքի որևէ արգելք կամ սահմանափակումներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Համաձայնագրով և ՍԱԳՀ 1994-ի XI հոդվածով և դրա բացատրական ծանոթագրություններով այլ բան է նախատեսված (հոդված 2.8),

5.10. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության՝ «Ներմուծման լիցենզավորման մասին» համաձայնագրի 1-3-րդ հոդվածներով սահմանված ներմուծման

լիցենզավորման ընթացակարգերն իրականացվեն թափանցիկ և կանխատեսելի ձևով և կիրառվեն «Ներմուծման լիցենզավորման մասին» համաձայնագրին համապատասխան (հոդված 2.9, պարբերություն 1),

5.11. ներմուծման լիցենզավորման նոր կամ փոփոխված ընթացակարգ կիրառելուց առաջ այն հրապարակել այնպիսի եղանակով, որով հնարավորություն է ընձեռվում պետական մարմիններին և առևտուր իրականացնողներին ծանոթանալ դրան, այդ թվում՝ հրապարակելով կառավարության պաշտոնական կայքում, ինչպես նաև հնարավորության դեպքում այն հրապարակել ուժի մեջ մտնելուց առնվազն 21 օր առաջ (հոդված 2.9, պարբերություն 2),

5.12. ապահովել թափանցիկությունը Համաձայնագրի 2.11-րդ հոդվածով կարգավորվող սուբսիդիաների ոլորտում և Կողմի պահանջով ողջամիտ ժամկետում «Սուբսիդիաների և փոխհատուցման միջոցների մասին» համաձայնագրով (այսուհետ՝ ՍՓՄ համաձայնագիր) սահմանված կարգով ծանուցել Հայաստանի Հանրապետության տրամադրած կամ ունեցած կոնկրետ սուբսիդիայի վերաբերյալ, ընդ որում այդ ծանուցումը պարունակում է ՍՓՄ համաձայնագրի 25.3-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները (հոդված 2.11, պարբերություն 4),

5.13. ձգտել վճարային հաշվեկշռի նպատակով խուսափել սահմանափակող միջոցառումների կիրառումից և ապրանքների առևտրի նպատակով ձեռնարկվող ցանկացած այդպիսի միջոցառում համապատասխանեցնել ՍԱԳՀ 1994-ի XII հոդվածին, դրա բացատրական ծանոթագրություններին և ՍԱԳՀ 1994-ի՝ Վճարային հաշվեկշռի դրույթների մասին փոխհամաձայնությանը, որի դրույթները ներառվում են Համաձայնագրում և կազմում են դրա մասը (հոդված 2.12),

5.14. ՍԱԳՀ 1994-ի VIII:1 հոդվածին և դրա բացատրական ծանոթագրություններին համապատասխան՝ ապահովել, որ ցանկացած բնույթի բոլոր վճարները և գանձումները, որոնք կիրառվում են ապրանքների ներմուծման կամ արտահանման նկատմամբ կամ դրանց հետ կապված, սահմանափակվեն մատուցվող ծառայությունների մոտավոր արժեքի չափով, որը չի հաշվարկվում ադվալորային սկզբունքով և չի կազմում հայրենական արտադրանքի համար անուղղակի պաշտպանություն կամ ֆիսկալ նպատակներով ներմուծման կամ արտահանման հարկում (հոդված 2.13, պարբերություն 1),

5.15. տրամադրել մյուս Կողմին այն վճարների և գանձումների ընթացիկ ցանկը, որոնք կիրառվում են ներմուծման կամ արտահանման առնչությամբ (հոդված 2.13, պարբերություն 2),

5.16. Կողմերի միջև հաղորդակցությունը դյուրացնելու համար նշանակել համակարգող և այդ մասին ծանուցել մյուս Կողմի համակարգողին: Անհապաղ

տեղեկացնել մյուս Կողմին իր համակարգողի ցանկացած փոփոխության մասին (հոդված 2.14, պարբերություն 1),

5.17. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության օրենքները, կարգավորումները, ընթացակարգերը և վարչական որոշումները, որոնք վերաբերում են ոչ սակագնային միջոցներին, չկազմվեն, չընդունվեն կամ չկիրառվեն մյուս Կողմի հետ առևտրում անհարկի խոչընդոտներ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմի միջև առևտրի վրա բացասաբար ազդելու դիտավորությամբ կամ նպատակով (հոդված 2.14, պարբերություն 2),

5.18. որպես պահանջ ստացող Կողմ պատասխանել պահանջ ներկայացնող Կողմին և այլ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում անցկացնել տեխնիկական խորհրդակցություններ գրավոր պահանջը ստանալուց հետո 20 օրվա ընթացքում՝ փոխադարձաբար գոհացուցիչ լուծման հանգելու նպատակով (հոդված 2.14, պարբերություն 4),

5.19. Հայաստանի Հանրապետության մաքսային մարմնի միջոցով ձգտել ընդունել և պահպանել Համաձայնագրի 2.16-րդ հոդվածի համաձայն ընդունված ապրանքների արագ բացթողում նախատեսող ընթացակարգեր. հնարավորության դեպքում, այս ընթացակարգերով նախատեսել, որ եթե այդ ապրանքներն ուղեկցվում են մյուս Կողմի քաղաքացու կամ ռեզիդենտի կողմից, որը ցանկանում է ստանալ ժամանակավոր մուտքի թույլտվություն, ապա ապրանքները բաց թողնվեն այդ քաղաքացու կամ ռեզիդենտի մուտքին զուգահեռ (հոդված 2.16, պարբերություն 6),

5.20. Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքների, կանոնների և կարգավորումների համաձայն՝ թույլատրել մյուս Կողմի տարածքից ներմուծվող առևտրային նմուշների, տպագիր գովազդային նյութերի և ոչ մեծ արժեքով այլ ապրանքների՝ առանց մաքսատուրքի մուտքը՝ անկախ դրանց ծագումից (հոդված 2.17, պարբերություն 1),

5.21. չկիրառել մաքսատուրք այն ապրանքների նկատմամբ, անկախ դրանց ծագումից, որոնք կրկին մուտք են գործում Հայաստանի Հանրապետություն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենքներին համապատասխան նշված ժամկետում այն բանից հետո, երբ այդ ապրանքները Հայաստանի Հանրապետությունից արտահանվել են մյուս Կողմի տարածք վերանորոգման կամ փոփոխման նպատակով՝ անկախ այն հանգամանքից՝ այդ վերանորոգումը կամ փոփոխումը կարող էր կատարվել Հայաստանի Հանրապետությունում, թե՝ ոչ, բացառությամբ այն դեպքերի, երբ մաքսատուրքը կարող է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենքների համաձայն կիրառվել մյուս Կողմի տարածքում կատարված վերանորոգման կամ

փոփոխման արդյունքում ավելացված արժեքի նկատմամբ (հոդված 2.18, պարբերություն 1),

5.22. չկիրառել մաքսատուրք այն ապրանքների նկատմամբ, անկախ դրանց ծագումից, որոնք ժամանակավոր ներմուծվել են մյուս Կողմի տարածքից վերանորոգման կամ փոփոխման նպատակով՝ պայմանով, որ այդ ապրանքներն արտահանվեն Հայաստանի Հանրապետությունից՝ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենքներին համապատասխան նշված ժամկետում (հոդված 2.18, պարբերություն 2),

5.23. նախատեսել, որ ապրանքների տեղափոխման համար նախատեսված փաթեթավորման նյութերը և տարաները հաշվի չառնվեն ապրանքների ծագումը որոշելիս (հոդված 3.13),

5.24. նախատեսել, որ ծագում ունեցող ապրանքները պահպանում են իրենց ծագումը, եթե ապրանքները փոխադրվում են անմիջապես ներմուծող Կողմ՝ առանց Կողմ չհանդիսացող պետության տարածքով (հոդված 3.17, պարբերություններ 1),

5.25. ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար, որ ծագման ապացույցի օգտագործմամբ վաճառվող՝ ծագում ունեցող ապրանքները, որոնց փոխադրման ընթացքում օգտագործվում է Հայաստանի Հանրապետությունում գտնվող ազատ գոտին, չփոխարինվեն այլ ապրանքներով և չենթարկվեն անվնաս պահելու համար նախատեսված բնականոն գործողություններից բացի այլ մշակման (հոդված 3.18, պարբերություն 1),

5.26. որպես ներմուծող Կողմ չմերժել ծագում ունեցող ապրանքների համար սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի կիրառումն այն դեպքերում, երբ հաշիվ-վավերագիրը տրվում է Կողմ չհանդիսացող պետության տարածքում՝ պայմանով, որ այդ ապրանքները համապատասխանում են Համաձայնագրի 3-րդ գլխի պահանջներին (հոդված 3.19, պարբերություն 1),

5.27. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենքներն ու ընթացակարգերը լինեն թափանցիկ, ոչ խտրական, հետևողական և խուսափեն առևտրի համար անհարկի ընթացակարգային խոչընդոտներից (հոդված 4.3, պարբերություն 1),

5.28. պարբերաբար վերանայել Հայաստանի Հանրապետության մաքսային օրենքներն ու ընթացակարգերը՝ Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմի միջև առևտուրը դյուրացնելու համար դրանց հետագա պարզեցման և զարգացման նպատակով (հոդված 4.3, պարբերություն 4),

5.29. նշանակել, ստեղծել և շարունակել կիրառել մեկ կամ մի քանի տեղեկատվական կետեր՝ մաքսային հարցերի առնչությամբ շահագրգիռ անձանց հարցումները կարգավորելու նպատակով, և էլեկտրոնային միջոցներով հրապարակել

նշանակված տեղեկատվական կետերի և այդպիսի հարցումներ կատարելու ընթացակարգերի վերաբերյալ տեղեկությունները (հոդված 4.4, պարբերություն 2),

5.30. ընդունել կամ շարունակել կիրառել ռիսկերի կառավարման մոտեցում մաքսային հսկողության համար՝ հիմնվելով ռիսկերի գնահատման վրա՝ դյուրացնելու համար ցածր ռիսկային ապրանքների մաքսազերծումը՝ միաժամանակ մաքսային հսկողությունը կենտրոնացնելով բարձր ռիսկային ապրանքների վրա (հոդված 4.5),

5.31. շարունակել կիրառել միջոցներ, որոնցով Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրության խախտման համար սահմանվում են ինչպես առանձին, այնպես էլ համակցված քրեական կամ վարչական տույժեր (հոդված 4.8, պարբերություն 1),

5.32. ապահովել, որ մաքսային օրենքների խախտման համար տույժերը նշանակվեն միայն Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված՝ խախտման համար պատասխանատու անձի (անձանց) նկատմամբ (հոդված 4.8, պարբերություն 2),

5.33. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմնի կողմից նշանակվող տույժը կախված լինի տվյալ գործի փաստերից ու հանգամանքներից և համաչափ լինի խախտման աստիճանին և ծանրությանը (հոդված 4.8, պարբերություն 3),

5.34. ապահովել, որ եթե Հայաստանի Հանրապետության մաքսային մարմնի կողմից նշանակվում է տույժ մաքսային օրենքի խախտման համար, ապա գրավոր պարզաբանում տրվի այն անձին (անձանց), որի նկատմամբ կիրառվել է տույժը՝ նշելով խախտման բնույթը և տույժի չափը որոշելու համար կիրառված օրենքները (հոդված 4.8, պարբերություն 5),

5.35. մաքսային ընթացակարգերը կիրառել և մաքսային գործողությունները կատարել արդյունավետ կերպով՝ արագացնելու համար ապրանքների բացթողումը և դյուրացնելու համար Կողմերի միջև առևտուրը (հոդված 4.9, պարբերություն 1),

5.36. որքանով գործնականում հնարավոր է և Հայաստանի Հանրապետության մաքսային օրենքներին համապատասխան՝ թույլ տալ ներմուծման համար նախատեսված ապրանքները Հայաստանի Հանրապետություն տեղափոխել մաքսային հսկողության ներքո Կողմի տարածք մուտքի կետից դեպի Հայաստանի Հանրապետությունում գտնվող մեկ այլ մաքսատուն, որտեղից ապրանքները նախատեսվում են բաց թողնվել՝ պայմանով, որ կիրառելի կարգավորող պահանջները կատարվեն (հոդված 4.9, պարբերություն 3),

5.37. ապահովել, որ սահմանին հսկողության գործառույթների և ապրանքների ներմուծմանը, արտահանմանը և տարանցիկ փոխադրմանն առնչվող ընթացակարգերի իրականացման համար պատասխանատու Հայաստանի Հանրապետության մարմինները և գերատեսչությունները համագործակցեն միմյանց հետ և

համակարգեն իրենց գործողությունները՝ առևտուրը դյուրացնելու նպատակով (հոդված 4.11),

5.38. ընդունել կամ շարունակել կիրառել արագացված մաքսային ընթացակարգեր այն ապրանքների համար, որոնք պարունակվում են առնվազն այն ապրանքների էքսպրես առաքանիներում, որոնք մուտք են գործել օդային բեռնափոխադրումների օբյեկտների միջոցով՝ պահպանելով համապատասխան մաքսային հսկողությունը (հոդված 4.12),

5.39. Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքներին, կանոններին և կարգավորումներին համապատասխան՝ ապահովել, որ ցանկացած անձ, որի վերաբերյալ կայացվել է մաքսային հարցի վերաբերյալ որոշում, կամ որի նկատմամբ իրականացվել են որոշակի մաքսային գործողություններ, մատչելիություն ունենա՝

5.39.1. Հայաստանի Հանրապետության մաքսային մարմնի կողմից ընդունված որոշման և (կամ) իրականացված գործողությունների վարչական վերանայմանն առնվազն մեկ մակարդակում՝ անկախ վերանայման ենթակա որոշման և (կամ) գործողության համար պատասխանատու պաշտոնատար անձից կամ գրասենյակից,

5.39.2. վարչական վերանայման վերջնական մակարդակում ընդունված որոշումների դատական վերանայմանը (հոդված 4.13, պարբերություն 1),

5.40. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության վերանայման և բողոքարկման ընթացակարգերն իրականացվեն ոչ խտրական եղանակով և ժամանակին (հոդված 4.13, պարբերություն 2),

5.41. ապահովել, որ վերանայում կամ բողոքարկում իրականացնող մարմինը գրավոր տեղեկացնի անձին վերանայման կամ բողոքարկման մասով իր որոշման և որոշման պատճառների մասին (հոդված 4.13, պարբերություն 3),

5.42. Համաձայնագրի 4-րդ գլխում պարունակվող որևէ դրույթ չմեկնաբանել որպես Հայաստանի Հանրապետության կողմից այնպիսի գաղտնի տեղեկություններ տրամադրել կամ դրանց հասանելիությունը թույլատրել պահանջող, որոնց բացահայտումը կխոչընդոտի օրենքի կիրարկումը կամ այլ կերպ կհակասի հանրային շահին, կամ որը կսահմանափակի հանրային կամ մասնավոր իրավունքի առանձին ձեռնարկությունների իրավաչափ առևտրային շահերը, և Համաձայնագրի 4-րդ գլխի համաձայն ստացված ցանկացած տեղեկություն համարել գաղտնի՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքներին համապատասխան (հոդված 4.15, պարբերություն 1),

5.43. Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքների համաձայն ապահովել Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից Համաձայնագրի 4-րդ գլխի համաձայն ձեռք բերված տեղեկությունների գաղտնիությունը և պաշտպանել այդ տեղեկությունները բացահայտումից, որը կարող է վտանգել տեղեկությունները տրամադրող անձանց մրցակցային դիրքը, ընդ որում այդ

տեղեկություններն առանց դրանք տրամադրող Կողմի մարմնի գրավոր թույլտվության չեն բացահայտվում մաքսային մարմինների շրջանակներից դուրս (հոդված 4.15, պարբերություն 2),

5.44. ճանաչել հակագնագցման, փոխհատուցման միջոցներ և համընդհանուր պաշտպանական միջոցառումներ կիրառելու մյուս Կողմի իրավունքը և հակագնագցման, փոխհատուցման տուրքի և պաշտպանության մասով քննությունների գործընթացում թափանցիկության խթանման կարևորությունը՝ ԱՀԿ-ի համապատասխան կանոններին և կանոնակարգերին համապատասխան (հոդված 5.1),

5.45. Համաձայնագրի 5.3-րդ հոդվածով այլ բան նախատեսված չլինելու դեպքում կիրառել հակագնագցման և փոխհատուցման միջոցներ՝ ՍԱԳՀ 1994-ի VI հոդվածի, Հակագնագցման մասին համաձայնագրի և ՍՓՄ համաձայնագրի դրույթների համաձայն (հոդված 5.3, պարբերություն 1),

5.46. Համաձայնագրի 5.4-րդ հոդվածով այլ բան նախատեսված չլինելու դեպքում կիրառել համընդհանուր պաշտպանական միջոցառումներ՝ համաձայն ՍԱԳՀ 1994-ի XIX հոդվածի և «Պաշտպանական միջոցառումների մասին» համաձայնագրի (հոդված 5.4, պարբերություն 1),

5.47. որպես համընդհանուր պաշտպանական միջոցառումների մասով քննություն իրականացնող Կողմ՝ մյուս Կողմին տրամադրել «Պաշտպանական միջոցառումների մասին» համաձայնագրի 12-րդ հոդվածի 1-ին կետի և 4-րդ կետի համաձայն տրվող ծանուցման օրինակը (հոդված 5.4, պարբերություն 5),

5.48. մյուս Կողմին ըստ պահանջի տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածք արտադրանքի ներմուծման հետ կապված սանիտարական և բուսասանիտարական միջոցառումների օրինակները (հոդված 6.6, պարբերություն 4),

5.49. մյուս Կողմի համար սահմանել առնվազն 60 օր ժամկետ՝ առաջարկվող սանիտարական կամ բուսասանիտարական միջոցառումների վերաբերյալ դիտողություններ ներկայացնելու համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առաջանում են առողջության պահպանման հետ կապված հրատապ խնդիրներ, կամ առկա է դրանց առաջացման վտանգ (հոդված 6.6, պարբերություն 5),

5.50. մշտապես թարմացնել Հայաստանի Հանրապետության համակարգողների և իրավասու մարմինների մասին տեղեկությունները (հոդված 6.8, պարբերություն 3),

5.51. Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերը մշակելիս առաջնորդվել միջազգային չափանիշներով, եթե այդ միջազգային չափանիշները չեն համարվում օրինական նպատակներն իրագործելու համար ոչ արդյունավետ կամ ոչ նպատակահարմար: Մյուս Կողմի պահանջով պարզաբանել, թե ինչու Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերը մշակելու համար

որպես հիմք չի օգտագործել միջազգային չափանիշները (հոդված 7.6, պարբերություն 1),

5.52. հատկացնել տեխնիկական կանոնակարգի և (կամ) համապատասխանության գնահատման ընթացակարգի ընդունման և դա (դրանք) ուժի մեջ մտնելու օրվանից հետո առնվազն 180-օրյա ժամկետ՝ բացառությամբ այնպիսի իրավիճակների, երբ անվտանգության, առողջության, շրջակա միջավայրի պաշտպանության կամ ազգային անվտանգության հետ կապված հրատապ խնդիրներ են առաջանում Կողմերի համար, կամ կա այդպիսի վտանգ (հոդված 7.8, պարբերություն 3),

5.53. անհապաղ տեղեկացնել մյուս Կողմին Հայաստանի Հանրապետության համակարգողի ցանկացած փոփոխության մասին (հոդված 7.11, պարբերություն 2),

5.54. Համաձայնագրի 8-րդ գլուխը կիրառել էլեկտրոնային առևտրի վրա ազդող՝ Հայաստանի Հանրապետության կողմից ընդունված կամ պահպանվող միջոցառումների նկատմամբ, բացառությամբ պետական գնումների և պահվող կամ մշակվող տեղեկությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կողմից կամ անունից հավաքված կամ փոխանցված տեղեկությունների կամ այդ տեղեկությունների հետ կապված միջոցառումների, այդ թվում՝ դրանց հավաքման, պահման, մշակման կամ փոխանցման հետ կապված միջոցառումների (հոդված 8.3),

5.55. ապրանքների առևտրի համար ոչ թղթային սահմանային միջավայր ստեղծելու նպատակով ճանաչել ապրանքների ներմուծման, արտահանման կամ տարանցիկ փոխադրման համար անհրաժեշտ թղթային ձևերը և փաստաթղթերը վերացնելու կարևորությունը (հոդված 8.7, պարբերություն 1),

5.56. ընդունել կամ պահպանել սպառողների իրավունքների պաշտպանությունն ապահովող միջոցներ՝ արգելելով մոլորեցնող, խարդախ և խաբեությամբ իրականացվող առևտրային գործունեությունը, որը վնաս կամ հնարավոր վնաս է պատճառում էլեկտրոնային առևտրում ներգրավված սպառողներին (հոդված 8.8, պարբերություն 2),

5.57. ճանաչել սպառողների պաշտպանության՝ Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմի միջև համապատասխան գերատեսչությունների միջև համագործակցության, այդ թվում՝ տեղեկությունների և լավագույն գործելակերպերի փոխանակման, ինչպես նաև Էլեկտրոնային առևտրի մասով սպառողների իրավունքների խախտման՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող համապատասխան դեպքերի շուրջ համագործակցության կարևորությունը (հոդված 8.8, պարբերություն 6),

5.58. ճանաչել էլեկտրոնային առևտուր իրականացնող կամ էլեկտրոնային առևտրում ներգրավված անձանց անձնական տվյալների պաշտպանության տնտեսական և սոցիալական առավելությունները և էլեկտրոնային առևտրի նկատմամբ

սպառողների վստահության բարձրացման գործում դրա ունեցած ներդրումը (հոդված 8.9, պարբերություն 1),

5.59. ձգտել ընդունել կամ պահպանել այն միջոցառումները, որոնք ապահովում են անձնական տվյալների պաշտպանությունը, այդ թվում՝ անձնական տվյալների միջսահմանային փոխանցումը և մշակումը, ինչպես նաև դրանց առնչվող պայմաններն ու պահանջները՝ իրենց օրենքներին և կարգավորումներին համապատասխան (հոդված 8.9, պարբերություն 2),

5.60. անձնական տվյալների պաշտպանության ցանկացած իրավական համակարգ մշակելիս ձգտել նկատի առնել համապատասխան միջազգային կազմակերպությունների սկզբունքները և ուղեցույցները (հոդված 8.9, պարբերություն 3),

5.61. ձգտել ապահովել անհատի՝ իր անձնական տվյալների միջսահմանային փոխանցման համար համաձայնություն ձեռք բերելը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով և կարգավորումներով սահմանված դեպքերի (հոդված 8.9, պարբերություն 5),

5.62. ձգտել տրամադրել իրավական պաշտպանության միջոցներ անցանկալի առևտրային էլեկտրոնային հաղորդագրություններ ուղարկողի նկատմամբ, որը չի կատարել Համաձայնագրի 8.11-րդ հոդվածի 1-ին կետում նշված մոտեցման համաձայն ընդունված կամ պահպանված միջոցը (հոդված 8.11, պարբերություն 2),

5.63. ճանաչել, որ տեխնոլոգիաները կարող են Կառավարության գործունեությունը դարձնել ավելի արդյունավետ և ճկուն, բարելավել պետական ծառայությունների որակը և հուսալիությունը և հնարավորություն ընձեռել պետական մարմիններին ապահովելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և այլ շահագրգիռ անձանց կարիքների սպասարկման առավել բարձր մակարդակ, և այս նպատակով ձգտել մշակել և կիրարկել Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության և ծառայությունների թվայնացման ազգային ռազմավարությունները (հոդված 8.14, պարբերություններ 1 և 2),

5.64. ձգտել խթանել էլեկտրոնային առևտրի ոլորտում ներգրավված՝ Կողմերի մասնավոր հատվածի ներկայացուցիչների միջև երկխոսությունը և համագործակցությունը, այդ թվում՝ համաժողովներ, սեմինարներ և փորձագիտական երկխոսություններ կազմակերպելով (հոդված 8.16, պարբերություն 3),

5.65. ընդունել «ԹՐԻՓՍ համաձայնագրի և հանրային առողջապահության մասին» ԱՀԿ-ի նախարարական համաժողովի կողմից 2001 թվականի նոյեմբերի 14-ին կատարված հռչակագրում սահմանված սկզբունքները (հոդված 9.6),

5.66. ձգտել, որ ապրանքային նշանների, աշխարհագրական նշումների կամ ապրանքների ծագման տեղանունների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների, արդյունաբերական նմուշների, գյուտերի, օգտակար մոդելների արտոնագրերի, ինչպես նաև բույսերի սորտերի իրավունքների կիրառման և գրանցման

վերաբերյալ տեղեկությունները հասանելի դառնան Կողմերի շահագրգիռ անձանց (հոդված 9.7, պարբերություն 1),

5.67. ապահովել ապրանքների և ծառայությունների ապրանքային նշանների համարժեք ու արդյունավետ պաշտպանություն՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքների և կարգավորումների, այն միջազգային համաձայնագրերի համաձայն, որոնց կողմ է Հայաստանի Հանրապետությունը, ինչպես նաև ԹՐԻՓՍ համաձայնագրի 15-ից 21-րդ հոդվածներին համապատասխան (հոդված 9.10),

5.68. ապահովել համապատասխան միջոցներ հայտը մերժելու կամ գրանցումը չեղյալ հայտարարելու և նույնական կամ նման ապրանքների կամ ծառայությունների համար այնպիսի ապրանքային նշանի օգտագործումն արգելելու համար, որը նույնական կամ նման է հայտնի ապրանքային նշանին, եթե այդ ապրանքային նշանի օգտագործումը հավանական է, որ առաջացնի շփոթություն մինչ այդ հայտնի ապրանքային նշանի հետ (հոդված 9.12, պարբերություն 4),

5.69. ստեղծել և շարունակել կիրառել ապրանքային նշանների գրանցման համակարգ, որը ներառում է՝

5.69.1. ապրանքային նշանի գրանցումը մերժելու պատճառների վերաբերյալ հայտ ներկայացնողի համար գրավոր հաղորդակցություն ապահովելու պահանջ (այդ հաղորդակցությունը կարող է ապահովվել էլեկտրոնային եղանակով),

5.69.2. չեղյալ հայտարարելու մասով վարույթի վերաբերյալ որոշումների՝ հիմնավորված լինելու և գրավոր ներկայացվելու պահանջ (այդ գրավոր որոշումները կարող են տրամադրվել էլեկտրոնային եղանակով),

5.69.3. շահագրգիռ անձանց համար ապրանքային նշանի չեղյալ հայտարարելը կամ անվավեր ճանաչելը հայցելու հնարավորություն՝ դրա գրանցումից հետո (հոդված 9.13),

5.70. ձգտել ստեղծել և շարունակել կիրառել ապրանքային նշանների համար էլեկտրոնային եղանակով հայտ ներկայացնելու և դրանք պահպանելու համակարգ և գրանցված ապրանքային նշանների հանրամատչելի էլեկտրոնային տեղեկատվական համակարգ, այդ թվում՝ առցանց տվյալների շտեմարան (հոդված 9.14),

5.71. ընդունել կամ շարունակել կիրառել ապրանքային նշանների դասակարգման համակարգ, որը համահունչ է «Նշանների գրանցման նպատակներով ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման վերաբերյալ» 1957 թվականի հունիսի 15-ին կատարված Նիցցայի վերանայված և փոփոխված համաձայնագրին (հոդված 9.15),

5.72. ապահովել, որ ապրանքային նշանի նախնական գրանցումը և գրանցման յուրաքանչյուր երկարաձգում լինեն 10 տարուց ոչ պակաս ժամկետով (հոդված 9.16),

5.73. օրինական միջոցներ տրամադրել մյուս Կողմերի շահագրգիռ անձանց՝ կանխելու համար Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմերի երկրների անվանումների առևտրային նպատակով օգտագործումն ապրանքի առնչությամբ այնպես, որ սպառողներին մոլորության մեջ չգցեն այդ ապրանքի ծագման հարցում (հոդված 9.17),

5.74. ապահովել, որ աշխարհագրական նշումների կամ ապրանքների ծագման տեղանունների պաշտպանությունը կամ ճանաչումը վավեր լինի 10 տարուց ոչ պակաս ժամկետով (հոդված 9.19),

5.75. Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքների և կարգավորումների համաձայն՝ ապահովել օգտակար մոդելների պատշաճ և արդյունավետ իրավական պաշտպանություն (հոդված 9.21, պարբերություն 2),

5.76. ապահովել գյուտերի, օգտակար մոդելների կամ արդյունաբերական նմուշների արտոնագրերի ուսումնասիրության և գրանցման համակարգ, որն, ի թիվս այլնի, ներառում է՝

5.76.1. հայտատուին գրավոր հայտնել, որը կարող է լինել էլեկտրոնային եղանակով, գյուտերի, օգտակար մոդելների կամ արդյունաբերական նմուշների արտոնագրերի գրանցումը մերժելու պատճառների մասին,

5.76.2. հայտատուին տալ հնարավորություն՝ արձագանքելու իրավասու մարմիններից ստացված հաղորդակցություններին, վիճարկելու ցանկացած նախնական մերժում և դատական կարգով բողոքարկելու գյուտերի, օգտակար մոդելների կամ արդյունաբերական նմուշների արտոնագրերի գրանցման ցանկացած վերջնական մերժում,

5.76.3. շահագրգիռ անձանց տալ հնարավորություն՝ չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու գյուտերի, օգտակար մոդելների կամ արդյունաբերական նմուշների գրանցված արտոնագրերը, և բացի այդ, կարող է հնարավորություն ընձեռել շահագրգիռ անձանց առարկություն ներկայացնելու գյուտերի, օգտակար մոդելների կամ արդյունաբերական նմուշների արտոնագրերի գրանցման դեմ,

5.76.4. կայացնել հիմնավորված և գրավոր որոշումներ՝ առարկություններ ներկայացնելու, չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու մասով վարույթի շրջանակում, որոնք կարող են ներկայացվել էլեկտրոնային միջոցներով (հոդված 9.24, պարբերություն 1),

5.77. ապահովել, որ գրանցված արդյունաբերական նմուշի պահպանության ապահովման կամ կիրառման մասով պահանջներն անհիմն կերպով չխաթարեն այդպիսի պահպանություն ստանալու կամ կիրառելու հնարավորությունը (հոդված 9.26, պարբերություն 1),

5.78. ապահովել, որ ստեղծագործության, կատարման կամ հնչյունագրի պահպանության ժամկետը հաշվարկվի այն միջազգային պայմանագրերի համաձայն,

որոնց կողմ է Հայաստանի Հանրապետությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքների ու կարգավորումների համաձայն (հոդված 9.29),

5.79. ընդունել հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասով կոլեկտիվ կառավարման ընկերությունների դերը ռոյալթիների հավաքագրման և բաշխման գործում՝ հիմնված արդար, արդյունավետ, թափանցիկ և հաշվետու գործելակերպերի վրա, որոնք կարող են ներառել տվյալների պահպանման և հաշվետվությունների ներկայացման համապատասխան կառուցակարգեր՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին և կարգավորումներին համապատասխան (հոդված 9.33),

5.80. Հայաստանի Հանրապետության օրենքների և կարգավորումների, ինչպես նաև ԹՐԻՓՍ համաձայնագրի 4-րդ բաժնի III մասի դրույթների համաձայն՝ ընդունել կամ շարունակել կիրառել ընթացակարգեր, որոնք իրավատիրոջը, որն օրինական հիմքեր ունի կասկածելու, որ կարող է տեղի ունենալ կեղծ ապրանքային նշան ունեցող ապրանքների կամ հեղինակային իրավունքի խախտմամբ ստացված ապրանքների ներմուծում, հնարավորություն տալ գրավոր դիմում ներկայացնելու Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններ, եթե Հայաստանի Հանրապետությունում են կիրառվում սահմանային միջոցառումների ընթացակարգերը, որպեսզի Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները կասեցնեն այդպիսի ապրանքներն ազատ շրջանառություն բաց թողնելը (հոդված 9.35, պարբերություն 1),

5.81. ընդունել Հայաստանի Հանրապետության արտոնագրերի գրանցման համապատասխան համակարգերի որակի և արդյունավետության բարելավման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համապատասխան արտոնագրային գրասենյակների կամ այլ հաստատությունների ընթացակարգերն ու գործընթացները՝ պարզեցնելու և օպտիմալացնելու կարևորությունը՝ Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմերի կողմից որոշված կարգով՝ ի շահ արտոնագրային համակարգի բոլոր օգտագործողների և ամբողջ հանրության (հոդված 9.37, պարբերություն 1),

5.82. հրապարակել Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքներն ու կարգավորումները, ինչպես նաև պետական գնումների վերաբերյալ տեղեկությունները Համաձայնագրի 10Ա (Օրենքների և կարգավորումների ու պետական գնումների մասին տեղեկությունների հրապարակում) հավելվածում թվարկված աղբյուրներում, իսկ ավելի մեծ թափանցիկություն ապահովելու նպատակով ապահովել այդ տեղեկությունների աղբյուրների հանրային հասանելիությունը (հոդված 10.3, պարբերություն 1),

5.83. ձգտել էլեկտրոնային եղանակով հրապարակել պետական գնումների վերաբերյալ հասանելի տեղեկությունները (գնման հայտ ներկայացնելու հայտարարությունը, գնումների փաստաթղթերը, այդ ծանուցումների և փաստաթղթերի փո-

փոխությունները, գնումների փաստաթղթերի պարզաբանումները, գնումների գործընթացի ընթացքում կազմված արձանագրությունները, գնումների արդյունքների վերաբերյալ տեղեկությունները) (հոդված 10.3, պարբերություն 2),

5.84. ձգտել ընդլայնել պետական գնումների վերաբերյալ էլեկտրոնային եղանակով հրապարակված տեղեկությունների բովանդակության ծավալը (հոդված 10.3, պարբերություն 4),

5.85. ընդունելով փոքր և միջին ձեռնարկությունների (այսուհետ՝ ՓՄՁ) հիմնարար դերը Հայաստանի Հանրապետության համապատասխան տնտեսությունների դինամիկայի պահպանման և մրցունակության բարձրացման գործում՝ նպաստել Հայաստանի Հանրապետության ՓՄՁ-ների միջև սերտ համագործակցության զարգացմանը և համագործակցել ՓՄՁ-ներում աշխատատեղերի խթանման և ՓՄՁ-ների աճի, ինչպես նաև միջազգային առևտրին վերջիններիս մասնակցության հարցում (հոդված 11.1),

5.86. ստեղծել կամ շարունակել օգտագործել Հայաստանի Հանրապետության սեփական անվճար, հանրամատչելի կայքը, որը պարունակում է 11.3-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունները սույն Համաձայնագրի վերաբերյալ (հոդված 11.3, պարբերություն 1),

5.87. մյուս Կողմերի հետ համատեղ ստեղծել ՓՄՁ հարցերով ենթակոմիտե՝ բաղկացած յուրաքանչյուր Կողմի ներկայացուցիչներից (հոդված 11.4, պարբերություն 1),

5.88. համաձայնել խթանել համագործակցությունը փոխշահավետ հիմունքներով՝ Կողմերի միջև առևտուրը զարգացնելու, դյուրացնելու և տնտեսական աճ ապահովելու համար (հոդված 12.1, պարբերություն 1),

5.89. ճանաչել Հայաստանի Հանրապետության և մյուս Կողմի համապատասխան հակամենաշնորհային մարմինների միջև համագործակցության հաստատման կարևորությունը՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքների, կարգավորումների համաձայն, և հասանելի ռեսուրսների կիրառմամբ մրցակցության ոլորտում իրավակիրառ գործունեության արդյունավետ իրականացումը խթանելու համար (հոդված 12.3, պարբերություն 5),

5.90. ձգտել մյուս Կողմի հետ համաձայնություն ձեռք բերել Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման վերաբերյալ, և համագործակցության միջոցով գործադրել հնարավոր բոլոր ջանքերը՝ իրենց գործունեության վրա հնարավոր ազդեցություն ունեցող ցանկացած հարցում փոխադարձ բավարարող լուծման հասնելու համար (հոդված 13.3),

5.91. պահպանել մյուս Կողմի կողմից որպես գաղտնի սահմանված տեղեկությունների գաղտնիությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենքների և կանոնակարգերի համաձայն (հոդված 14.2, պարբերություն 1),

5.92. մյուս Կողմի կողմից Համաձայնագրի համաձայն տեղեկություններ տրամադրելու և այդ տեղեկությունները որպես գաղտնի սահմանված լինելու պարագայում՝ պահպանել դրանց գաղտնիությունը. այդ տեղեկություններն օգտագործել միայն նշված նպատակներով և որևէ պարագայում չհրապարակել՝ առանց տեղեկությունները տրամադրող Կողմի հատուկ թույլտվության (հոդված 14.2, պարբերություն 3),

5.93. առավելագույն հնարավոր չափով մյուս Կողմին ծանուցել ցանկացած միջոցառման մասին, որը կարող է էականորեն ազդել Համաձայնագրի գործողության վրա կամ այլ կերպ էականորեն ազդել մյուս Կողմի՝ Համաձայնագրով սահմանված շահերի վրա (հոդված 14.3, պարբերություն 1),

5.94. մյուս Կողմի պահանջով օպերատիվ կերպով տրամադրել տեղեկություններ և պատասխանել Համաձայնագրի գործողության ոլորտում ընդգրկված ցանկացած խնդրի առնչվող միջոցառումների վերաբերյալ հարցերին՝ անկախ այն հանգամանքից, թե հարցում կատարող Կողմը նախապես ծանուցվել է այդ միջոցառման մասին, թե՝ ոչ (հոդված 14.3, պարբերություն 2),

5.95. Հայաստանի Հանրապետության ներքին ընթացակարգերի համաձայն՝ նշանակել համակարգող՝ Կողմերի միջև սույն Համաձայնագրի հետ կապված ցանկացած հարցի առնչությամբ պաշտոնական հաղորդակցությունն ապահովելու և դյուրացնելու համար, և այդ նշանակման մասին ծանուցել մյուս Կողմին Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրվա ընթացքում, իսկ համակարգողի ցանկացած փոփոխության դեպքում ծանուցել մյուս Կողմին 30 օրվա ընթացքում (հոդված 16.2, պարբերություն 1):

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2025 թվականի հունիսի 27-ին Մինսկում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Արաբական

Միացյալ Էմիրությունների՝ մյուս կողմից, միջև տնտեսական գործընկերության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

3 փետրվարի 2026 թվականի
ՍԴՈ-1812

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ ՄԻՆՍԿՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1812 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննելով «2025 թվականի հունիսի 27-ին Մինսկում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Արաբական Միացյալ Էմիրությունների՝ մյուս կողմից, միջև տնտեսական գործընկերության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2026 թվականի փետրվարի 3-ի ՍԴՈ-1812 որոշմամբ որոշել է, որ 2025 թվականի հունիսի 27-ին Մինսկում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Արաբական Միացյալ Էմիրությունների՝ մյուս կողմից, միջև տնտեսական գործընկերության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2026 թվականի փետրվարի 3-ի ՍԴՈ-1812 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու

վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2026 թվականի փետրվարի 3-ի ՍԴՈ-1812 որոշմամբ 2025 թվականի հունիսի 27-ին Մինսկում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Արաբական Միացյալ Էմիրությունների՝ մյուս կողմից, միջև տնտեսական գործընկերության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը,

որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է

հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

<u>Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:</u>

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Ընդ որում, էլեկտրոնային ստորագրությունը կարող է էլեկտրոնային փաստաթղթին տալ իրավական նշանակություն այն դեպքում, երբ էլեկտրոնային ստորագրությունը տեսողական դիտման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով արտահայտվում է ցուցասարքի (դիսփլեյի) էկրանին, թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում

էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն

գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«3» փետրվարի 2026թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԽՈՇՈՐ ԿԱՏՎԱԶԳԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇԻՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՇՐՋԱ-ՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 3 փետրվարի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի,

դատավորներ՝ Արտակ Զեյնալյանի (զեկուցող),
Հրայր Թովմասյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Արամ Մեյմարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2025 թվականի հունիսի 30-ին ստորագրված «Խոշոր կատվազգիների հարցերով միջազգային դաշինքի

հիմնադրման վերաբերյալ» շրջանակային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 1628-Ա որոշմամբ հավանություն է տվել «2025 թվականի հունիսի 30-ին ստորագրված «Խոշոր կատվազգիների հարցերով միջազգային դաշինքի հիմնադրման վերաբերյալ» շրջանակային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի նոյեմբերի 21-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Խոշոր կատվազգիների հարցերով միջազգային դաշինքի հիմնադրման վերաբերյալ» շրջանակային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2025 թվականի հունիսի 30-ին Երևանում՝ Հայաստանի և Հնդկաստանի միջև հարաբերությունների հետագա ընդլայնման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ երկու երկրների միջև շրջակա միջավայրի ոլորտում համագործակցության զարգացմանն ու խորացմանը նպաստելու, համատեղ հետազոտությունների ու մոնիթորինգի իրականացման, ինչպես նաև կատվազգիների պաշտպանությանն ուղղված միջոցառումների կատարելագործման նպատակով**:**

2. Համաձայնագրով հիմնադրվում է Խոշոր կատվազգիների հարցերով միջազգային դաշինք (այսուհետ՝ ԽԿՄԴ/կազմակերպություն), որը Համաձայնագրի դրույթներին համապատասխան՝ հիմնվում է որպես միջկառավարական կազմակերպություն, և որի միջոցով Կողմերը համատեղ կարգավորում են աշխարհի՝ յոթ (7) հիմնական խոշոր կատվազգիների՝ վագրերի, առյուծների, հովազների, ձյունահովազների, պումաների, յագուարների և չիտաների պաշտպանության և պահպանության, ինչպես նաև սոցիալ-բնապահպանական ապագայի ապահովման ընդհանուր մարտահրավերները և աջակցում են կլիմայական տարատեսակ փոփոխությունների անբարենպաստ ազդեցությունները մեղմելու գործընթացին:

3. Համաձայնագրով սահմանվում է, որ կազմակերպությունը պետք է օժտված

լինի իրավասուբյեկտությամբ, ինչպես նաև պետք է ունենա այնպիսի իրավունակություն, որը կարող է անհրաժեշտ լինել իր գործառույթների և նպատակների իրագործման համար, մասնավորապես՝ համաձայնագրեր և պայմանագրեր կնքելու, շարժական և անշարժ գույք ձեռք բերելու և օտարելու, ինչպես նաև դատական վարույթ հարուցելու և այդ վարույթի ընթացքում պաշտպանության համար:

4. Համաձայնագրով սահմանվում է, որ կազմակերպության հիմնական կառույցներն են Վեհաժողովը և Քարտուղարությունը, ինչպես նաև Համաձայնագրի VII հոդվածին համապատասխան՝ կարող են ստեղծվել օժանդակ մարմիններ Վեհաժողովի կողմից հավանության արժանանալու դեպքում:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը՝ փոխադարձության հիման վրա, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

5.1. Հայաստանի Հանրապետության գործողությունները համակարգել այնպիսի ծրագրերի և գործողությունների միջոցով, որոնք ուղղված կլինեն բնակավայրերի, որսի և խոշոր կատվազգիների վիճակի բարելավմանը, այդ թվում՝ խոշոր կատվազգիների պաշտպանությանը և պահպանությանը, նորարարություններին, հետազոտություններին, զարգացմանը, ինչպես նաև կարողությունների զարգացմանը և նշված ջանքերը գործադրելով՝ սերտորեն համագործակցել և ձգտել փոխշահավետ հարաբերություններ հաստատել համապատասխան հաստատությունների, կազմակերպությունների, պետական և մասնավոր շահագրգիռ Կողմերի և անդամ չհանդիսացող երկրների հետ (հոդված IV, կետեր 1 և 2),

5.2. ներկայացնել և թարմացնել խոշոր կատվազգիների պաշտպանության և պահպանության ծրագրերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը, և այդ նպատակներով ձգտել, որ ԽԿՄԴ համատեղ գործողությունները լինեն շահավետ, ինչպես նաև իրականացնել ծրագրի՝ փոխադարձաբար համաձայնեցված վերլուծական, ներառյալ՝ դրա կարիքների և նպատակների, ներպետական միջոցների և ձեռնարկված կամ ձեռնարկվելիք գործողությունների քարտեզագրում՝ արժեշղթայի և տարածման գործընթացում նշված նպատակներն իրագործելու համար (հոդված IV, կետ 3),

5.3. նշանակել ԽԿՄԴ ազգային համակարգող մարմին, որը Կողմերի միջև հանդես կգա որպես ԽԿՄԴ թղթակիցների մշտական ցանց (հոդված IV, կետ 4),

5.4. Վեհաժողովում նշանակել Հայաստանի Հանրապետության մեկ (1) ներկայացուցիչ մեկ ձայնի իրավունքով (հոդված VII, կետեր 2 և 9),

5.5. ջանքեր գործադրել ԽԿՄԴ-ի կողմից տրամադրվող ֆինանսական կամ օժանդակության այլ տեսակների առավել արդյունավետ օգտագործման համար և այդ օժանդակությունն օգտագործել միայն նախատեսված նպատակներն իրագործելու

համար (հոդված IX, կետ 5),

5.6. ԽԿՄԴ-ին տեղեկություն տրամադրել նաև այն դեպքում, եթե Հայաստանի Հանրապետությունն աշխատում է անդամ չհանդիսացող որևէ այլ կազմակերպության/երկրի/անդամ չհանդիսացող պետության հետ, կամ եթե բացի ԽԿՄԴ-ի կողմից տրամադրվող աջակցությունից՝ խոշոր կատվազգիների պաշտպանության և պահպանության նպատակով որևէ այլ աղբյուրից ստացվում է աջակցություն որևէ այլ ձևով (հոդված XVI, կետ 2):

6. Համաձայնագրի համաձայն՝ ԽԿՄԴ ծրագիրն այնպիսի գործողությունների, նախագծերի և գործունեության ամբողջություն է, որոնք Կողմերը համակարգված եղանակով իրականացնում են Քարտուղարության աջակցությամբ՝ Համաձայնագրի III և IV հոդվածներում սահմանված նպատակներին հասնելու և ուղղորդող սկզբունքները պահպանելու նպատակով: Ծրագրերը կազմված են այնպես, որ ապահովեն առավելագույն մասշտաբի ազդեցություն և հնարավորինս մեծ թվով Կողմերի մասնակցություն: Դրանք ներառում են պարզ, չափելի, իրագործելի, համապատասխան և ժամկետներով պայմանավորված նպատակներ:

Ծրագրի հետ կապված առաջարկները մշակվում են Կողմերի ազգային համակարգող բոլոր մարմինների միջև բաց խորհրդակցությունների միջոցով՝ Քարտուղարության աջակցությամբ, և հիմնված են Կողմերի կողմից տրամադրվող տեղեկությունների վրա: Ծրագրի առաջարկը կարող է ներկայացվել առնվազն երկու Կողմերի կամ Կողմերի խմբերի միջև, կամ Քարտուղարությունը կարող է համալիր գործողությունների ծրագիր (ԳԾ) ներկայացնել, որը ներառում է այն նպատակները, որոնց վերջինս ակնկալում է հասնել՝ ԽԿՄԴ նպատակներին համապատասխան: Քարտուղարությունն ապահովում է, որ ԽԿՄԴ բոլոր ծրագրերը համաձայնեցված լինեն:

7. Կազմակերպության գլխամասային գրասենյակները, այդ թվում՝ Քարտուղարությունը, գտնվում են Հնդկաստանի Հանրապետությունում: Կազմակերպության պաշտոնական լեզուն անգլերենն է, և Կազմակերպությունն ունի դրոշ և խորհրդանշան:

8. Քարտուղարության և Վեհաժողովի գործառական ծախսերը, ինչպես նաև օժանդակ գործառույթների և միջոլորտային գործունեության հետ կապված մյուս բոլոր ծախսերը կազմում են ԽԿՄԴ բյուջեն: Ծախսերը ծածկվում են Կողմերից, ՄԱԿ-ից և դրա ներկայացուցիչներից, ինչպես նաև շահագրգիռ այլ երկրներից և կազմակերպություններից ստացված կամավոր ներդրումների հաշվին, պետական (մասնավոր) ոլորտների նախաձեռնություններից ստացվող կամավոր ներդրումների

հաշվին, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության և հնարավոր այլ աղբյուրների հաշվին, Վեհաժողովի կողմից հաստատված կոնկրետ գործունեությունից գոյացող եկամուտների հաշվին:

Հնդկաստանի Հանրապետության կառավարությունը 5 տարվա ընթացքում 18 միլիոն ԱՄՆ դոլարի (մոտավոր) չափով ներդրում է հատկացնելու ԽԿՄԴ-ին՝ հիմնական ֆոնդի ստեղծման, ենթակառուցվածքների կառուցման և շարունակական ծախսերի համար:

9. Համաձայնագրի XVI հոդվածը սահմանում է մտավոր սեփականության իրավունքներին առնչվող կարգավորումները, համաձայն որի՝ մտավոր սեփականության իրավունքները՝ կապված հետազոտական և տեխնոլոգիական որևէ զարգացման կամ ապրանքների մշակման կամ ծառայությունների մատուցման հետ, որոնք Կողմերի կողմից իրականացվում են համատեղ, կամ հետազոտության արդյունքները, որոնք ստացվել են Կողմերի կողմից համատեղ գործունեություն իրականացնելու ընթացքում գործադրված ջանքերի արդյունքում, պետք է լինեն Կողմերի ընդհանուր սեփականությունը՝ յուրաքանչյուր դեպքում փոխադարձաբար համաձայնեցված պայմաններով:

Մտավոր սեփականության իրավունքները՝ կապված հետազոտական և տեխնոլոգիական որևէ զարգացման կամ ապրանքների մշակման կամ ծառայությունների մատուցման հետ, որոնք մեկ Կողմն իրականացնում է միայնակ և ինքնուրույն, կամ առանձին հանդես եկող Կողմի միայնակ և ինքնուրույն ջանքերի արդյունքում ստացված հետազոտության արդյունքները պետք է լինեն համապատասխան Կողմի սեփականությունը:

Համաձայնագրին համապատասխան՝ ԽԿՄԴ-ի աջակցությամբ իրականացվող ցանկացած տեսակի հայտնագործությունների կամ աշխատանքի նկատմամբ արտոնագրային իրավունքները, հեղինակային իրավունքները կամ նմանատիպ այլ իրավունքներ պատկանում են ԽԿՄԴ-ին, եթե որևէ կոնկրետ դեպքում այլ համաձայնություն առկա չէ:

Կազմակերպության անվան, պատկերանշանի և (կամ) պաշտոնական խորհրդանշանի կիրառումը կազմակերպությանը չառնչվող որևէ հրատարակության, փաստաթղթի և (կամ) ամսագրի վրա՝ առանց Վեհաժողովի նախնական հաստատման, արգելվում է:

10. Համաձայնագրով սահմանվում է, որ Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման կամ հաստատման ենթակա հինգերորդ (5-րդ) փաստաթուղթը, այդ թվում՝ Հնդկաստանի Հանրապետության փաստաթուղթն ի պահ հանձնելու ամսաթվից հետո՝ տասնհինգերորդ (15-րդ) օրը: Անդամակցությունը բաց է

ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունների համար:

Դիմումին կից ներկայացված՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու կարգի վերաբերյալ Արտաքին գործերի նախարարության տեղեկանքի համաձայն՝ 2025 թ. հոկտեմբերի 10-ի դրությամբ հնդկական կողմից չի ստացվել ծանուցում՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

11. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Համաձայնագրի XVI հոդվածում ամրագրված ***«հեղինակային իրավունքներ»*** եզրույթը Հայաստանի Հանրապետության օրինաստեղծ ու իրավակիրառական պրակտիկայում, ինչպես նաև միջպետական հարաբերություններում պետք է մեկնաբանվի ու կիրառվի բացառապես հեղինակային իրավունքի մաս կազմող ***բացառիկ գույքային իրավունքների*** համատեքստում՝ ապահովելով Սահմանադրությամբ նախատեսված **կարծիքի արտահայտման և ստեղծագործության ազատության, մտավոր սեփականության իրավունքի** (Սահմանադրության 42, 43-րդ հոդվածներ և 60-րդ հոդվածի 7-րդ մաս) ու **դրանցից բխող**, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով («Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 8 և 10-րդ հոդվածներով, «Գրական և գեղարվեստական երկերի պահպանության մասին» 1886 թվականի սեպտեմբերի 9-ին Բեռնում ստորագրված կոնվենցիայով, 1996 թվականի դեկտեմբերի 20-ին Ժնևում ստորագրված՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության հեղինակային իրավունքի պայմանագրով և այլն), ինչպես նաև ներպետական օրենսդրությամբ երաշխավորվող այնպիսի **բացառիկ անձնական ոչ գույքային իրավունքների պաշտպանությունը**, ինչպիսիք են հեղինակության, հեղինակի անվան, հեղինակի համբավի և արժանապատվության, հրապարակման և հետկանչի իրավունքները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2025 թվականի հունիսի 30-ին ստորագրված «Խոշոր կատվազգիների հարցերով միջազգային դաշինքի հիմնադրման վերաբերյալ» շրջանակային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

3 փետրվարի 2026 թվականի
ՍԴՈ-1813

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԽՈՇՈՐ ԿԱՏՎԱԶԳԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇԻՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1813 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2025 թվականի հունիսի 30-ին ստորագրված «Խոշոր կատվազգիների հարցերով միջազգային դաշինքի վերաբերյալ» շրջանակային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2026 թվականի փետրվարի 3-ի ՍԴՈ-1813 որոշմամբ որոշել է, որ 2025 թվականի հունիսի 30-ին ստորագրված «Խոշոր կատվազգիների հարցերով միջազգային դաշինքի վերաբերյալ» շրջանակային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2026 թվականի փետրվարի 3-ի ՍԴՈ-1813 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական

դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1813 որոշմամբ 2025 թվականի հունիսի 30-ին ստորագրված «Խոշոր կատվազգիների հարցերով միջազգային դաշինքի վերաբերյալ» շրջանակային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված

իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության (152-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր, 168-րդ հոդվածի 3-րդ կետ, 169-րդ հոդվածի 3-րդ մաս) և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված: Ընդ որում, վերը նշված կարգավորումները հնարավոր են համարում այդ հարցով դիմումի ստորագրումը նաև վարչապետի բացակայության ժամանակ վերջինիս փոխարինող փոխվարչապետի կողմից: Միաժամանակ իմ գնահատմամբ, եթե դիմումը ստորագրվում է ոչ թե վարչապետի, այլ վերջինիս փոխարինող փոխվարչապետի կողմից, Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումին պետք է կցվի այդ փոխվարչապետի կողմից վարչապետին փոխարինելու հանգամանքը հավաստող փաստաթուղթը (դրա պատճենը), քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլինի փաստել նրա՝ որպես վարչապետին փոխարինող անձի՝ Սահմանադրական դատարանում Կառավարությանն ի պաշտոնե ներկայացնելու լիազորության առկայությունը.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է Հայաստանի Հանրապետության վարչապետի գրության ձևաթղթի վրա կազմված, Տիգրան Խաչատրյանի կողմից

Սահմանադրական դատարանին հասցեագրված գրություն[1], որով նա, ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասով, դիմել է Սահմանադրական դատարան՝ 2025 թվականի նոյեմբերի 20-ին ստորագրված «Խոշոր կատվազգիների հարցերով միջազգային դաշինքի վերաբերյալ» շրջանակային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար:

Մինչդեռ սույն գործի նյութերը հնարավորություն չեն տալիս եզրահանգում կատարել այն մասին, որ Սահմանադրական դատարան դիմած անձն իրավասու էր միջազգային պայմանագրում ամրագված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով Կառավարության անունից դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Մասնավորապես՝ գործի նյութերից պարզ չէ, թե Սահմանադրական դատարան դիմած անձն ինչ կարգավիճակով է Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն դիմել Սահմանադրական դատարան, արդյոք նա եղել է վարչապետի բացակայության ժամանակ վերջինիս փոխարինող փոխվարչապետ, թե՝ ոչ, այն դեպքում, երբ ըստ սույն գործի նյութերի՝ նշված դիմումը ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Խաչատրյան»-ի կողմից:

Գտնում եմ, որ դիմողի կողմից ներկայացված՝ գործի նյութերի հիման վրա նշված հարցերը պարզելու հնարավորության բացակայության պայմաններում դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ինչը հիմք էր «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքների առաջացման, այն է՝ եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին դիմողին տեղեկացնելու համար:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման

[1] Ինչպես 2025 թվականի նոյեմբերի 21-ին Սահմանադրական դատարան մուտքագրված գրության, այնպես էլ դրան կից ներկայացված՝ Կառավարության 2025 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 1628-Ա որոշման վրա առկա չէ ստորագրություն:

վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

<u>Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:</u>

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Ընդ որում, էլեկտրոնային ստորագրությունը կարող է էլեկտրոնային փաստաթղթին տալ իրավական նշանակություն այն դեպքում, երբ էլեկտրոնային ստորագրությունը տեսողական դիտման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով արտահայտվում է ցուցասարքի (դիսփլեյի) էկրանին, թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում

էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն

գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«3» փետրվարի 2026թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ՄԱԳԼԻՆԳԵՆ/ՄԱՔՈԼԻՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԵՔԵՆԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 3 փետրվարի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի,

դատավորներ՝ Արտակ Զեյնալյանի,
Հրայր Թովմասյանի,
Դավիթ Խաչատուրյանի (զեկուցող),
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2014 թվականի սեպտեմբերի 18-ին Մագլինգեն/Մաքոլինում ստորագրված «Մարզական մրցումների մեքենայությունների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պար-

տավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վրաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 1637-Ա որոշմամբ հավանություն է տվել 2014 թվականի սեպտեմբերի 18-ին Մագլինգեն/Մաքոլինում ստորագրված «Մարզական մրցումների մեքենայությունների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի նոյեմբերի 27-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ կոնվենցիան, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Մարզական մրցումների մեքենայությունների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրվել է 2014 թվականի սեպտեմբերի 18-ին Շվեյցարիայի Համադաշնության Մաքոլին քաղաքում և ուժի մեջ է մտել 2019 թվականի սեպտեմբերի 1-ին: 2026 թվականի հունվարի 22-ի դրությամբ Կոնվենցիան ստորագրել է 43 պետություն, սակայն ուժի մեջ է մտել 15 պետության համար:

2. Կոնվենցիայի նպատակն է պայքարել մարզական մրցումների մեքենայությունների դեմ սպորտում բարեվարքությունը և մարզական էթիկայի կանոնները պահպանելու համար՝ սպորտի ինքնավարության սկզբունքին համապատասխան, իսկ հիմնական խնդիրներն են՝ կանխարգելել, հայտնաբերել ազգային և միջազգային մարզական մրցումների ազգային կամ անդրազգային մեքենայությունները և կիրառել պատժամիջոցներ, նպաստել մարզական մրցումների մեքենայությունների դեմ պետական իշխանության մարմինների, ինչպես նաև սպորտում և մարզական խաղադրույքներում ներգրավված կազմակերպությունների միջև ազգային և միջազգային մակարդակում համագործակցությանը:

3. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

3.1. համակարգել պետական իշխանության բոլոր մարմինների՝ մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարի հետ կապված քաղաքականություններն ու գործողությունները (հոդված 4, կետ 1),

3.2. Հայաստանի Հանրապետության իրավազորության սահմաններում խրա-

խուսել մարզական կազմակերպություններին, մրցումների կազմակերպիչներին և մարզական խաղադրույքների օպերատորներին համագործակցելու մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարում և անհրաժեշտության դեպքում հանձնարարել նրանց իրականացնել Կոնվենցիայի համապատասխան դրույթները (հոդված 4, կետ 2),

3.3. անհրաժեշտության դեպքում համագործակցելով համապատասխան մարզական կազմակերպությունների, մարզական խաղադրույքների օպերատորների, մրցումների կազմակերպիչների և այլ համապատասխան կազմակերպությունների հետ՝ բացահայտել, վերլուծել և գնահատել մարզական մրցումների մեքենայությունների հետ կապված ռիսկերը (հոդված 5, կետ 1),

3.4. մարզական կազմակերպություններին, մարզական խաղադրույքների օպերատորներին, մրցումների կազմակերպիչներին և յուրաքանչյուր այլ համապատասխան կազմակերպությանը խրախուսել մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարելու համար ընթացակարգեր և կանոններ սահմանելը, և անհրաժեշտության դեպքում ձեռնարկել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են այս նպատակին հասնելու համար (հոդված 5, կետ 2),

3.5. խրախուսել իրազեկվածության մակարդակի բարձրացումը, կրթությունը, վերապատրաստումը և հետազոտությունները՝ մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարն ուժեղացնելու համար (հոդված 5, կետ 31),

3.6. խրախուսել մարզական կազմակերպություններին և մրցումների կազմակերպիչներին ընդունելու և իրականացնելու մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարի կանոնները, ինչպես նաև արդյունավետ կառավարման սկզբունքները՝ կապված, inter alia՝ շահերի բախման կանխարգելման, այդ թվում՝ մարզական մրցումներում ներգրավված մրցումների շահառուների համար մարզական մրցումների խաղադրույքներն արգելելու հետ, ներքին տեղեկությունների չարաշահումը կամ տարածումն արգելելու հետ, մարզական կազմակերպությունների և դրանց հետ փոխկապակցված անդամների կողմից իրենց պայմանագրային կամ այլ պարտավորություններ կատարելու հետ, մրցույթի շահագրգիռ կողմերին ներկայացվող՝ ցանկացած այնպիսի կասկածելի գործունեության, միջադեպի, դրդապատճառի կամ մոտեցման մասին անհապաղ զեկուցելու պահանջի հետ, որը կարող է համարվել մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարի կանոնների խախտում (հոդված 7, կետ 1),

3.7. խրախուսել մարզական կազմակերպություններին ընդունելու և իրականացնելու համապատասխան միջոցներ Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 2-րդ կետով

[1] Կոնվենցիայի II գլխի 5-րդ հոդվածում առկա է տեխնիկական սխալ, մասնավորապես՝ Կոնվենցիայի անգլերեն բնօրինակում Կոնվենցիայի II գլխի 5-րդ հոդվածն ունի 2 կետ, մինչդեռ հայերեն պաշտոնական տեքստում 5-րդ հոդվածն ունի 3 կետ, այնինչ 3-րդ կետը համապատասխանում է անգլերեն բնօրինակի 6-րդ հոդվածին: **Պարտավորությունը ներկայացված է՝ ըստ հայերեն պաշտոնական թարգմանության:**

թվարկված պայմաններն ապահովելու նպատակով (հոդված 7, կետ 2),

3.8. խրախուսել Հայաստանի Հանրապետության մարզական կազմակերպություններին և նրանց միջոցով միջազգային մարզական կազմակերպություններին կիրառելու հատուկ, արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ կարգապահական պատիժներ և միջոցներ՝ Հայաստանի Հանրապետության մարզական մրցումների, մասնավորապես՝ Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետում նշված մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարի իրենց ներքին կանոնների խախտման մասով, ինչպես նաև ապահովել այլ մարզական կազմակերպությունների, հատկապես այլ երկրներում կիրառվող պատժամիջոցների փոխադարձ ճանաչումը և կատարումը (հոդված 7, կետ 3),

3.9. ընդունել այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել այն մարզական կազմակերպությունների ֆինանսավորման պատշաճ թափանցիկությունն ապահովելու համար, որոնց ֆինանսապես աջակցում է Հայաստանի Հանրապետությունը (հոդված 8, կետ 1),

3.10. դիտարկել մարզական կազմակերպություններին օգնելու հնարավորությունը՝ մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարելու համար, այդ թվում՝ համապատասխան մեխանիզմները ֆինանսավորելու միջոցով (հոդված 8, կետ 2),

3.11. անհրաժեշտության դեպքում դիտարկել ֆինանսական աջակցության դադարեցման հարցը կամ մարզական կազմակերպություններին մարզական մրցումների մեքենայությունների համար պատժի ենթարկված՝ մրցումների շահագրգիռ կողմերից ստացվող ֆինանսական աջակցությունը պատժամիջոցի տևողության ընթացքում դադարեցնելու առաջարկություն ներկայացնելու հարցը (հոդված 8, կետ 3),

3.12. անհրաժեշտության դեպքում ձեռնարկել քայլեր ցանկացած այնպիսի մարզական կազմակերպությունից ստացված որոշակի կամ ամբողջ ֆինանսական կամ սպորտին առնչվող աջակցությունը դադարեցնելու համար, որոնք արդյունավետորեն չեն կիրառում մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարի կանոնակարգերը (հոդված 8, կետ 4),

3.13. սահմանել մեկ կամ ավելի պատասխանատու մարմիններ, որոնց, ըստ Հայաստանի Հանրապետության իրավակարգի, վերապահվել են մարզային խաղադրույքների կարգավորման իրականացումը և մարզական խաղադրույքների հետ կապված մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարին ուղղված համապատասխան միջոցների կիրառումը, այդ թվում, անհրաժեշտության դեպքում՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավասություններով (հոդված 9, կետ 1),

3.14. ընդունել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք կարող են

անհրաժեշտ լինել կանխելու համար շահերի բախումն ու ներքին տեղեկությունների չարաշահումն այն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից, որոնք ներգրավված են ապահովելու մարզական խաղադրույքների արտադրանքի տրամադրումը, մասնավորապես՝ որոշակի սահմանափակումներ կիրառելու միջոցով, ինչպես թվարկված է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետում (հոդված 10, կետ 1),

3.15. խրախուսել Հայաստանի Հանրապետության մարզական խաղադրույքների օպերատորներին և նրանց միջոցով մարզական խաղադրույքների օպերատորների միջազգային կազմակերպություններին բարձրացնելու իրազեկության մակարդակն իրենց սեփականատերերի և աշխատակիցների շրջանում՝ մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարի և դրա հետևանքների վերաբերյալ կրթության, վերապատրաստման և տեղեկությունների տարածման միջոցով (հոդված 10, կետ 2),

3.16. ընդունել այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել մարզական խաղադրույքների օպերատորներին պարտավորեցնելու համար, որ նրանք անհապաղ տեղեկացնեն անկանոն կամ կասկածելի խաղադրույքների մասին խաղադրույքները կարգավորող մարմնին, այլ պատասխանատու մարմնի կամ մարմինների կամ ազգային հարթակին (հոդված 10, կետ 3),

3.17. նպատակ ունենալով պայքարել մարզական մրցումների մեքենայությունների դեմ՝ ուսումնասիրել անօրինական մարզական խաղադրույքների օպերատորների դեմ պայքարելու առավել համապատասխան միջոցներ և դիտարկել միջոցներ ձեռնարկելու հարցը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենքի, ինչպես սահմանված է Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին կետում (հոդված 11, կետ 1),

3.18. չհակասելով Կոնվենցիայի 14-րդ հոդվածին՝ ազգային և միջազգային մակարդակներում և Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությանը համապատասխան, նպաստել տեղեկությունների փոխանակմանը պետական իշխանության համապատասխան մարմինների, մարզական կազմակերպությունների, մրցման կազմակերպիչների, մարզական խաղադրույքների օպերատորների և ազգային հարթակների միջև, մասնավորապես՝ ստեղծել մեխանիզմներ համապատասխան տեղեկությունների փոխանակման համար այն դեպքում, երբ այդ տեղեկությունները կարող են օգնել իրականացնելու Կոնվենցիայի 5-րդ հոդվածում նշված ռիսկերի գնահատումը և մասնավորապես՝ մրցման կազմակերպիչներին խաղադրույքների արտադրանքի տեսակների և օբյեկտների վերաբերյալ տեղեկությունների ընդլայնված տրամադրումը, ինչպես նաև նախաձեռնելու կամ իրականացնելու քննություն կամ վարույթ՝ կապված մարզական մրցումների մեքենայությունների հետ (հոդված 12, կետ 1),

3.19. ուսումնասիրել համագործակցության և տեղեկությունների փոխանակ-

ման, զարգացման և կատարելագործման հնարավոր եղանակներն անօրինական մարզական խաղադրույքների դեմ պայքարի համատեքստում, ինչպես սահմանված է Կոնվենցիայի 11-րդ հոդվածում (հոդված 12, կետ 3),

3.20. ներդնել ազգային հարթակ՝ ուղղված մարզական մրցումների մեքենայություններին՝ համաձայն Կոնվենցիայի 13-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավունքների և պարտականությունների (հոդված 13, կետ 1),

3.21. ընդունել այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել երաշխավորելու համար, որ մարզական մրցումների մեքենայությունների դեմ ուղղված բոլոր գործողությունները համապատասխանեն անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ համապատասխան Հայաստանի Հանրապետության և միջազգային օրենքներին և չափանիշներին, մասնավորապես՝ Կոնվենցիայով կարգավորվող տեղեկությունների փոխանակման հարցում (հոդված 14, կետ 1),

3.22. ընդունել այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել երաշխավորելու համար, որ Կոնվենցիայով կարգավորվող պետական իշխանության մարմինները և կազմակերպությունները ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ անձնական տվյալների հավաքագրման, մշակման և փոխանակման ժամանակ, անկախ այդ փոխանակումների բնույթից, պատշաճ ուշադրություն դարձվի օրինականության, համարժեքության, համապատասխանության և հավաստիության սկզբունքներին, ինչպես նաև տվյալների անվտանգությանը և տվյալների սուբյեկտների իրավունքներին (հոդված 14, կետ 2),

3.23. օրենսդրորեն նախատեսել, որ Կոնվենցիայով կարգավորվող պետական իշխանության մարմինները և կազմակերպություններն ապահովեն, որ Կոնվենցիայի նպատակների համար տվյալների փոխանակումը չանցնի փոխանակման նշված նպատակների իրականացման համար անհրաժեշտ նվազագույն շեմից (հոդված 14, կետ 3),

3.24. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությունը հնարավորություն տա քրեական պատասխանատվության ենթարկել մարզական մրցումների մեքենայությունները, երբ այն ներառում է հարկադրանքի, կոռուպցիայի կամ խարդախության գործողություններ, ինչպես սահմանված է Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ (հոդված 15),

3.25. ընդունել այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք, Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրության համաձայն, կարող են անհրաժեշտ լինել ճանաչվելու որպես քրեական իրավախախտումներ, ինչպես նշված է «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման մասին»

Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (2005թ. ԵԽՊԾ թիվ 198) 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում, «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի (2000թ.) 6-րդ հոդվածի 1-ին կետում, Միավորված ազգերի կազմակերպության՝ «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի (2003թ.) 23-րդ հոդվածի 1-ին կետում, ըստ դրանցում նշված պայմանների, երբ եկամուտ ստանալու համար կատարված է Կոնվենցիայի 15 և 17-րդ հոդվածներում նշված իրավախախտում, և ցանկացած դեպքում, երբ առկա է շորթում, կաշառակերություն և խարդախություն (հոդված 16, կետ 1),

3.26. դիտարկել փողերի լվացման կանխարգելման ՀՀ շրջանակում մարզական մրցումների մեքենայությունները ներառելու հարցը՝ պահանջելով, որ մարզական խաղադրույքների օպերատորները կիրառեն հաճախորդների պատշաճ ուսումնասիրության, հաշվառման և հաշվետվություններ ներկայացնելու պահանջները (հոդված 16, կետ 3),

3.27. ընդունել այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք, Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրության համաձայն, կարող են անհրաժեշտ լինել որպես քրեական իրավախախտումներ սահմանելու դիտավորությամբ կատարված՝ Կոնվենցիայի 15-րդ հոդվածում նշված քրեական իրավախախտումներից որևէ մեկի կատարմանն օգնելը և օժանդակելը (հոդված 17),

3.28. ընդունել այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել ապահովելու համար, որ իրավաբանական անձինք պատասխանատվության ենթարկվեն Կոնվենցիայի 15-17-րդ հոդվածներում նշված այն իրավախախտումների համար, որոնք կատարվել են նրանց օգտին ցանկացած ֆիզիկական անձի կողմից, որը գործել է կա՛մ անհատապես, կա՛մ որպես իրավաբանական անձին պատկանող մարմնի անդամ, որը զբաղեցնում է առաջատար պաշտոն իրավաբանական անձի կազմում՝ իրավաբանական անձին ներկայացնելու լիազորության, իրավաբանական անձի անունից որոշումներ կայացնելու լիազորության, իրավաբանական անձի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորության հիման վրա. Հայաստանի Հանրապետության իրավական սկզբունքներին համապատասխան՝ իրավաբանական անձի պատասխանատվությունը կարող է լինել քրեական, քաղաքացիական կամ վարչական (հոդված 18, կետեր 1 և 2),

3.29. Կոնվենցիայի 18-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դեպքերից բացի՝ ձեռնարկել իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ միջոցներ, եթե Կոնվենցիայի 18-րդ հոդվածի 1-ին կետում նշված ֆիզիկական անձի կողմից վերահսկողության կամ հսկողության բացակայությունը հնարավոր է դարձրել Կոնվենցիայի 15-17-րդ հոդվածներում նշված իրավախախտման կատարումը Հայաստանի Հանրապետության իրավասության տակ գտնվող ֆիզիկական անձի կողմից՝ ի շահ այդ իրավաբանական անձի (հոդված

18, կետ 3),

3.30. ընդունել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են Կոնվենցիայի 15-17-րդ հոդվածներում նշված իրավախախտումներից որևէ մեկի նկատմամբ իրավազորություն սահմանելու համար, եթե այդ իրավախախտումը կատարվել է Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ Հայաստանի Հանրապետության դրոշի ներքո գտնվող նավի վրա, կամ Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրության համաձայն գրանցված օդանավի վրա, կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից մեկի կողմից, կամ Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող անձի կողմից (հոդված 19, կետ 1),

3.31. ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են Կոնվենցիայի 15-17-րդ հոդվածներում նշված իրավախախտումների նկատմամբ իրավազորություն սահմանելու համար այն դեպքերում, երբ կասկածյալը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում և չի կարող հանձնվել մյուս Կողմին իր քաղաքացիության հիմքով (հոդված 19, կետ 3),

3.32. Կոնվենցիայի 15-17-րդ հոդվածներում նշված՝ ենթադրաբար կատարված որևէ իրավախախտման նկատմամբ Հայաստանի Հանրապետության իրավազորության առկայության մասին մեկից ավելի Կողմերի պնդման դեպքում՝ անհրաժեշտության պարագայում, խորհրդակցել միմյանց հետ քրեական հետապնդման նպատակով առավել համապատասխան իրավազորություն որոշելու համար (հոդված 19, կետ 4),

3.33. ընդունել օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու էլեկտրոնային ապացույցները Կոնվենցիայի 15-17-րդ հոդվածներում նշված իրավախախտումները քննելիս, inter alia, պահպանված համակարգչային տվյալների արագ պահպանման, տրաֆիկի տվյալների արագ պահպանման և բացահայտման, արտադրության պատվերների, պահպանված համակարգչային տվյալների որոնման և առգրավման, տրաֆիկի տվյալներն իրական ժամանակում հավաքագրելու և բովանդակության տվյալների գաղտնալսման միջոցով՝ Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությանը համապատասխան (հոդված 20),

3.34. դիտարկել այնպիսի իրավական միջոցներ ձեռնարկելու հարցը, որոնք կարող են անհրաժեշտ լինել Կոնվենցիայի 21-րդ հոդվածով սահմանված անձանց արդյունավետ պաշտպանությունն ապահովելու համար (հոդված 21),

3.35. ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ, որ Կոնվենցիայի 15-17-րդ հոդվածներում նշված իրավախախտումները ֆիզիկական անձի կողմից իրականացվելու դեպքում պատժվեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցներով, այդ թվում՝ դրամական պատժամիջոցներով՝ հաշվի առնելով իրավախախտումների ծանրությունը. պատժամիջոցները ներառում են

ազատությունից զրկելու ձևով պատիժները, որոնք կարող են հանգեցնել հանձնման, ինչպես սահմանված է ներպետական օրենսդրությամբ (հոդված 22),

3.36. ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ Կոնվենցիայի 18-րդ հոդվածին համապատասխան պատասխանատվություն կրող այդ իրավաբանական անձը ենթարկվի արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցների, այդ թվում՝ դրամական պատժամիջոցների և հնարավոր այլ միջոցների, ինչպիսիք են Կոնվենցիայի 23-րդ հոդվածով սահմանված օրինակները (հոդված 23),

3.37. անհրաժեշտության դեպքում ընդունել Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ պատժելի արարքների հետ կապված այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցներով և միջոցներով Կոնվենցիային համապատասխան սահմանված խախտումները պատժելու համար՝ վարչական մարմինների կողմից ներկայացված վարույթից հետո, որտեղ որոշումը կարող է հանգեցնել իրավազորություն ունեցող դատարանում վարույթ հարուցելու (հոդված 24, կետ 1),

3.38. Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությանը համապատասխան՝ ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ Կոնվենցիայի 15-17-րդ հոդվածներում նշված իրավախախտումները կատարելու համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված ապրանքների, փաստաթղթերի և այլ գործիքների, ինչպես նաև այդ իրավախախտումներից ստացված եկամուտների կամ այդ եկամուտներին համարժեք արժեք ունեցող գույքի առգրավումը և բռնագրավումը թույլատրելու համար (հոդված 25),

3.39. Կոնվենցիայի դրույթներին և կիրառելի համապատասխան միջազգային ու տարածաշրջանային փաստաթղթերի և միասնական կամ փոխադարձության օրենսդրության ու ներպետական օրենսդրության հիման վրա համաձայնեցված պայմանավորվածություններին համապատասխան՝ հնարավորինս համագործակցել մյուս Կողմի հետ Կոնվենցիայի 15-17-րդ հոդվածներում նշված իրավախախտումների հետ կապված քննության, քրեական հետապնդման և դատական վարույթի իրականացման, այդ թվում՝ բռնագրավման կամ առգրավման նպատակով (հոդված 26, կետ 1),

3.40. հանձնման և քրեական գործերով փոխադարձ օգնության մասին կիրառելի միջազգային, տարածաշրջանային և երկկողմ պայմանագրերին և Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությանը համապատասխան՝ հնարավորության սահմաններում համագործակցել միմյանց հետ՝ կապված Կոնվենցիայի 15-17-րդ հոդվածներում նշված իրավախախտումների հետ (հոդված 26, կետ 2),

3.41. անհրաժեշտության դեպքում ձգտել ինտեգրել մարզական մրցումների մեքենայությունների կանխարգելումը և պայքարը աջակցության ծրագրերում՝ ի շահ երրորդ պետությունների (հոդված 27),

3.42. Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությանը համապատասխան՝ մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարում համագործակցել միջազգային մարզական կազմակերպությունների հետ (հոդված 28),

3.43. ապահովել, որ Կոնվենցիայի II-VII գլուխներով նախատեսված լիազորությունների և ընթացակարգերի սահմանումը, իրականացումը և կիրառումը ենթակա լինեն Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ նախատեսված պայմաններին և երաշխիքներին, որոնք նախատեսում են մարդու իրավունքների և ազատությունների համարժեք պաշտպանություն, այդ թվում՝ այն իրավունքների, որոնք բխում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966 թվականի միջազգային դաշնագրի և մարդու իրավունքների վերաբերյալ կիրառելի այլ միջազգային փաստաթղթերի համաձայն ստանձնած պարտավորություններից, և որոնցով Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրության մեջ կներառվի համաչափության սկզբունքը (հոդված 34, կետ 1):

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին, ինչպես նաև Սահմանադրության 1-ին հոդվածով երաշխավորված՝ Հայաստանի Հանրապետության՝ իրավական պետություն լինելու պահանջին և Սահմանադրության 3, 31, 33, 34, 61 և 63-րդ հոդվածներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2014 թվականի սեպտեմբերի 18-ին Մագլինգեն/Մաքոլինում ստորագրված «Մարզական մրցումների մեքենայությունների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

3 փետրվարի 2026 թվականի
ՍԴՈ-1814

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ՄԱԳԼԻՆԳԵՆ/ՄԱՔՈԼԻՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԵՔԵՆԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1814 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննելով «2014 թվականի սեպտեմբերի 18-ին Մագլինգեն/Մաքոլինում ստորագրված «Մարզական մրցումների մեքենայությունների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2026 թվականի փետրվարի 3-ի ՍԴՈ-1814 որոշմամբ որոշել է, որ 2014 թվականի սեպտեմբերի 18-ին Մագլինգեն/Մաքոլինում ստորագրված «Մարզական մրցումների մեքենայությունների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2026 թվականի փետրվարի 3-ի ՍԴՈ-1814 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդ-կարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական

դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2026 թվականի փետրվարի 3-ի ՍԴՈ-1814 որոշմամբ 2014 թվականի սեպտեմբերի 18-ին Մագլինգեն/Մաքոլինում ստորագրված «Մարզական մրցումների մեքենայությունների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված

իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու

է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

<u>Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:</u>

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել,

որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Ընդ որում, էլեկտրոնային ստորագրությունը կարող է էլեկտրոնային փաստաթղթին տալ իրավական նշանակություն այն դեպքում, երբ էլեկտրոնային ստորագրությունը տեսողական դիտման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով արտահայտվում է ցուցասարքի (դիսփլեյի) էկրանին, թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին»

սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«3» փետրվարի 2026թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◊ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◊ 1(122) 2026



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋՐԻ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ. 1-ԻՆ ՓՈՒԼ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ-ՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 3 փետրվարի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.
նախագահող՝ Արման Դիլանյանի (զեկուցող),
դատավորներ՝ Արտակ Զեյնալյանի,
Հրայր Թովմասյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
Կառավարության ներկայացուցիչ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի նախագահ Արամազդ Ղալամքարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի դեկտեմբերի 11-ի N 1770-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի դեկտեմբերի 23-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Տ .**

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2025 թվականի սեպտեմբերի 11-ին և սեպտեմբերի 18-ին՝ Համաձայնագրի 1-ին հավելվածով սահմանված նախագծին (այսուհետ՝ Նախագիծ) աջակցելու համար ֆինանսավորում տրամադրելու նպատակով:

Համաձայն Համաձայնագրի 1-ին հավելվածի՝ Նախագիծը MPA (բազմափուլ ծրագրային մոտեցմամբ ծրագիր, որը նախատեսված է Հայաստանի ընտրված տարածքներում ապահովելու բարելավված ոռոգման ծառայությունների և անվտանգ կառավարվող գյուղական ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների հասանելիություն) ծրագրի փուլ է:

2. Համաձայնագրով Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ Բանկ) համաձայնում է Նախագծի ֆինանսավորմանն աջակցելու նպատակով Հայաստանի Հանրապետությանը տրամադրել յոթանասուն միլիոն չորս

հարյուր հազար (70,400,000) եվրոյի չափով գումար, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով (Վարկ): Վարկային միջոցների մասհանումների վերջնաժամկետը 2031 թվականի հունիսի 30-ն է:

Նախագծի նպատակն է ապահովել արդյունավետ և ֆինանսապես կայուն ոռոգման և անվտանգ կառավարվող գյուղական ջրամատակարարման ծառայությունների բարելավված հասանելիություն Հայաստանի ընտրված տարածքներում:

3. Համաձայնագիրն ունի դրա անբաժանելի մասը կազմող երեք հավելված և մեկ առդիր՝ Հավելված 1. «Նախագծի նկարագրությունը», Հավելված 2. «Նախագծի իրականացում», Հավելված 3. «Պարտավորությունների հետ կապված մայր գումարի հերթական մարման ժամանակացույց» և Առդիր:

Նախագիծը կազմված է չորս մասերից. Մաս 1. «Ջրային ոլորտի բարեփոխումներ և ինստիտուցիոնալ ամրապնդում», Մաս 2. «Գյուղական ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում», Մաս 3. «Ոռոգման ենթակառուցվածքների և համակարգի կառավարման արդիականացում» և Մաս 4. «Նախագծի կառավարում»:

4. Համաձայնագրով սահմանվում է, որ 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «ՎԶՄԲ ֆինանսավորման, ներդրումային նախագծի ֆինանսավորման համար Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի ընդհանուր պայմանները» (Ընդհանուր պայմաններ, վերջին անգամ վերանայվել է 2023 թվականի հուլիսի 15-ին) վերաբերում են Համաձայնագրին և դրա մասն են կազմում:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

5.1. բացառությամբ այն դեպքերի, երբ այլ բան նախատեսված չէ Ընդհանուր պայմանների 2.07(բ) բաժնում՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո ոչ ուշ, քան վաթսուն (60) օրվա ընթացքում, Բանկին վճարել Վարկի գումարի առաջնային վճար՝ Վարկի գումարի մեկ քառորդ տոկոս (0.25%) դրույքաչափով (հոդված II, բաժին 2.03 և Առդիր, բաժին II, կետ 1, փոփոխված 3.01(ա) բաժին),

5.2. Բանկին վճարել Վարկի չելքագրված մնացորդի տարեկան մեկ քառորդ տոկոսի (0.25%) չափով պարտավորության վճար, որն հաշվարկում է Վարկային համաձայնագրի կնքման ամսաթվից կամ Բանկի կողմից Վարկի հաստատման օրվանից չորս տարին լրանալու օրվանից, որն ավելի ուշ ամսաթիվ է, մինչև համապատասխան ամսաթվերը, երբ Հայաստանի Հանրապետության կողմից գումարները ելքագրվում են Վարկային հաշվից կամ չեղարկվում. և Ընդհանուր պայմանների 2.07(գ) բաժնում այլ բան նախատեսված չլինելու դեպքում՝ Պարտավորության վճարը

վճարել կես տարին մեկ անգամ՝ յուրաքանչյուր վճարման օրը (հոդված II, բաժին 2.04 և Առդիր, բաժին II, կետ 1, փոփոխված 3.01(բ) բաժին),

5.3. Բանկին վճարել տոկոսադրույք, որը բազային տոկոսադրույքն է՝ գումարած փոփոխական սպրեդը կամ այնպիսի դրույք, որը կարող է կիրառվել փոխարկումից հետո. ենթակա է Ընդհանուր պայմանների 3.02 (ե) բաժնին (հոդված II, բաժին 2.05),

5.4. յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ին և հուլիսի 15-ին՝ սկսած 2035 թվականի հուլիսի 15-ից մինչև 2045 թվականի հունվարի 15-ը, մարել Վարկի մայր գումարը 5% վճարաչափով (հոդված II, բաժիններ 2.06, 2.07 և հավելված 3),

5.5. հայտարարել Նախագծի և MPA ծրագրի նպատակներին հավատարիմ մնալու Հայաստանի Հանրապետության հանձնառությունը, և այդ նպատակին հասնելու համար Նախագիծն իրականացնել Համաձայնագրի Ընդհանուր պայմանների V հոդվածի և 2-րդ հավելվածի դրույթների համաձայն (հոդված III, բաժին 3.01),

5.6. Նախագծի իրականացման ընդհանուր պարտականությունները վերապահել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը (ՏԿԵՆ) կից ՋԿ-ին, ներառյալ՝ ՋԿ-ի ենթակայության ներքո գործող լիազոր մարմնի նշանակումը՝ Հայաստանի Հանրապետության անունից պայմանագրեր կնքելու նպատակով (հավելված 2, բաժին I, մաս Ա, կետ 1),

5.7. ստեղծել և Նախագծի իրականացման ողջ ընթացքում պահպանել Նախագծի Ղեկավար կոմիտե, որը նախագահում է Հայաստանի Հանրապետության փոխվարչապետը, և որն անհրաժեշտության դեպքում ներառում է Ֆինանսների նախարարության, ՏԿԵՆ-ի, ՋԿ-ի, Էկոնոմիկայի նախարարության, Շրջակա միջավայրի նախարարության և այլ համապատասխան ոլորտային նախարարությունների, գերատեսչությունների և տեղական և տարածաշրջանային մարմինների ներկայացուցիչների և որը պատասխանատու է բարձր մակարդակի ռազմավարական որոշումների կայացման, միջգերատեսչական համագործակցության և համակարգման աջակցման, ինչպես նաև Նախագծի ընդհանուր առաջընթացի վերահսկման և մշտադիտարկման համար (հավելված 2, բաժին I, մաս Ա, կետ 2),

5.8. ՋԿ-ի ենթակայության ներքո ստեղծել և Նախագծի իրականացման ողջ ընթացքում պահպանել Նախագծի իրականացման խումբ (ՆԻԽ), որը պատասխանատու է Նախագծի իրականացման և հաշվետվությունների ներկայացման, ինչպես նաև Տարեկան աշխատանքային պլանը նախապատրաստելու համար, որը ղեկավարում է ծրագրի ղեկավարը, և որը ներառում է Նախագծի Մասերի համակարգողների, ոռոգման ինժեներների, ջրամատակարարման և ջրահեռացման ինժեներների, բնապահպանության և սոցիալական ոլորտի մասնագետների, այդ թվում՝ առնվազն բնապահպանության մասնագետի, սոցիալական ոլորտի մասնագետի, աշխատանքի առողջության և անվտանգության մասնագետի, գենդերային ոլորտի մասնագետի և համայնքի իրազեկման մասնագետի, ֆինանսական կառավարման մասնա-

գետների, գնումների մասնագետների, և ԱՏՀ և հեռազննման մասնագետի և Նախագծի գործառնական ձեռնարկով նախատեսված այլ մասնագետների (հավելված 2, բաժին I, մաս Ա, կետ 3),

5.9. ընդունել և պահպանել Նախագծի գործառնական ձեռնարկ (ՆԳՁ)՝ Բանկի համար ընդունելի ձևով, բովանդակությամբ և եղանակով, այնուհետև Նախագծի իրականացման ողջ ընթացքում Նախագիծն իրականացնել նշված ձեռնարկի համաձայն, որը ներառում է Համաձայնագրի 2-րդ հավելվածի I բաժնի Բ մասի 1-ին կետով նախատեսված ընթացակարգերը (հավելված 2, բաժին I, մաս Բ, կետ 1),

5.10. բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը գրավոր այլ համաձայնություն է տալիս չփոփոխել, չեղյալ չհայտարարել ՆԳՁ-ի որևէ դրույթ կամ չհրաժարվել դրանից կամ չթույլատրել փոփոխել, չեղյալ հայտարարել ՆԳՁ-ի որևէ դրույթ կամ հրաժարվել դրանից (հավելված 2, բաժին I, մաս Բ, կետ 2),

5.11. ոչ ուշ, քան յուրաքանչյուր օրացուցային տարվա հոկտեմբերի 30-ը, Բանկի քննարկմանը ներկայացնելու համար պատրաստել և Բանկին տրամադրել գործողությունների աշխատանքային պլանի նախագիծը, որը հաջորդ օրացուցային տարվա ընթացքում առաջարկվում է ընդգրկել Նախագծում, որը ներառում է Նախագծի բոլոր գործողությունները և ծախսերը, որոնք հաջորդ օրացուցային տարում առաջարկվում են ընդգրկել Նախագծում, ներառյալ՝ բոլոր ծախսերի ֆինանսավորման աղբյուրների և Հավելված 2-ի 1.Ջ բաժնի դրույթների համաձայն ձեռնարկված կամ նախատեսված բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցության կառավարման միջոցառումների հստակեցումը (հավելված 2, բաժին I, մաս Գ, կետ 1),

5.12. Բանկին ողջամիտ հնարավորություն ընձեռել վերանայելու առաջարկված յուրաքանչյուր պլան և բյուջե, այնուհետև ապահովել, որ Նախագիծն իրականացվի պատշաճ ջանասիրությամբ և արդյունավետությամբ՝ համաձայն Բանկի կողմից հաստատված աշխատանքային պլանի (Տարեկան աշխատանքային պլան) (հավելված 2, բաժին I, մաս Գ, կետ 4),

5.13. Նախագծի 2.2(բ) մասն իրականացնելիս ապահովել, որ Վարկի միջոցներից ֆինանսավորվող ենթակառուցվածքների և ծառայությունների բարելավումները համապատասխանեն ՆԳՁ-ում նշված չափանիշներին, որոնք ներառում են 2-րդ հավելվածի I բաժնի Դ մասի 1-ին կետով սահմանված չափանիշները (հավելված 2, բաժին I, մաս Դ, կետ 1),

5.14. ընտրված ոռոգման համակարգերի վերականգնում կամ արդիականացում Նախագծի 3.1(բ) մասն իրականացնելիս ապահովել, որ Վարկի միջոցներից ֆինանսավորվող ընտրված ոռոգման համակարգերի վերականգնումը կամ արդիականացումը համապատասխանի ՆԳՁ-ում նշված չափանիշներին, որոնք սահմանված են 2-րդ հավելվածի I բաժնի Դ մասի 2-րդ կետով (հավելված 2, բաժին I, մաս Դ, կետ 2),

5.15. Նախագծի 1.2(գ) մասի իրականացման նպատակով ոչ ուշ, քան 2030 թվականի հունիսի 30-ը, ներգրավել և դրանից հետո Նախագծի իրականացման ընթացքում մշտապես պահել Անկախ Ստուգման Գործակալ՝ որակավորումներով և փորձով և Բանկի համար ընդունելի տեխնիկական առաջադրանքով՝ տվյալներն ու այլ ապացույցներ ստուգելու նպատակով, որոնք հաստատում են մեկ կամ մի քանի ԱՀՊ-ների ձեռքբերումը, ինչպես նշված է 2-րդ հավելվածի հավելումի աղյուսակում, և Հայաստանի Հանրապետությանը առաջարկում է համապատասխան վճարումներ կատարել յուրաքանչյուր ԱՀՊ-ի համար՝ համաձայն ՆԳՁ-ում սահմանված ստուգման արձանագրության, ինչպես նաև պահանջել Անկախ Ստուգման Գործակալից, համաձայն ստուգման արձանագրության, իրականացնելու ԱՀՊ-ների ձեռքբերման մակարդակի ստուգում և պատրաստել և Հայաստանի Հանրապետությանը տրամադրել համապատասխան ԱՀՊ-ների ձեռքբերումների կարգավիճակի վերաբերյալ հաշվետվությունները (հավելված 2, բաժին I, մաս Ե, կետ 1),

5.16. 2-րդ ավելվածի I բաժնի Ե մասի 1(ա) պարբերության համաձայն՝ մինչև Անկախ Ստուգման Գործակալի նշանակումը ստուգման ծառայությունների անհրաժեշտություն դեպքում, հաստատել համապատասխան միջանկյալ պայմանավորվածություն, որն ընդունելի է Բանկի համար և Բանկի կողմից գրավոր հաստատվել է ԱՀՊ-ների ձեռքբերումը ստուգելու համար (հավելված 2, բաժին I, մաս Ե, կետ 2),

5.17. ապահովել, որ Նախագիծն իրականացվի Բնապահպանական և սոցիալական չափանիշներին համապատասխան՝ Բանկի համար ընդունելի ձևով (հավելված 2, բաժին I, մաս Զ, կետ 1),

5.18. չսահմանափակելով 2-րդ հավելվածի I բաժնի Զ մասի 1-ին պարբերությունը՝ ապահովել, որ Նախագիծն իրականացվի Բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանի (ԲՍՀՊ) համաձայն՝ Բանկի համար ընդունելի ձևով, այդ նպատակով ապահովել, որ ԲՍՀՊ-ում նշված միջոցառումներն ու գործողություններն իրականացվեն պատշաճ ջանասիրությամբ և արդյունավետությամբ, ինչպես նախատեսված է ԲՍՀՊ- ում, առկա լինեն բավարար միջոցներ՝ ԲՍՀՊ-ի իրականացման ծախսերը հոգալու համար, պահպանվեն քաղաքականություններն ու ընթացակարգերը և համապատասխան թվով որակավորված և փորձառու անձնակազմը՝ ԲՍՀՊ-ի իրականացման համար, ինչպես նախատեսված է ԲՍՀՊ-ում և ԲՍՀՊ-ն կամ դրա որևէ դրույթ չփոփոխվի, ուժը կորցրած չճանաչվի, չկասեցվի կամ չեղարկվի՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը գրավոր այլ համաձայնություն է տալիս, ինչպես նշված է ԲՍՀՊ-ում, և ապահովի, որ ԲՍՀՊ-ն վերանայումից հետո անհապաղ հրապարակվի (հավելված 2, բաժին I, մաս Զ, կետ 2),

5.19. ապահովել, որ ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ԲՍՀՊ-ում նշված հաճախականությամբ, ինչպես նաև առանձին հաշվետվությունում կամ հաշվետվություններում, եթե դա պահանջվում է Բանկի կողմից, հավաքագրելու,

կազմելու և Բանկին տրամադրելու համար տեղեկություններ ԲՍՀՊ-ի և դրանում նշված բնապահպանական և սոցիալական գործիքների համապատասխանության կարգավիճակի մասին, բոլոր այդպիսի հաշվետվությունները՝ Բանկի համար ընդունելի ձևով և բովանդակությամբ, ի թիվս այլնի՝ ԲՍՀՊ-ի իրականացման կարգավիճակը, պայմանները, եթե այդպիսիք կան, որոնք խոչընդոտում կամ սպառնում են խոչընդոտել ԲՍՀՊ-ի իրականացումը, և ուղղիչ և կանխարգելիչ միջոցառումներ, որոնք ձեռնարկվել են, կամ պահանջվում է ձեռնարկել նման պայմանները հասցեագրելու համար, ինչպես նաև ապահովել, որ Բանկն անհապաղ ծանուցվի Նախագծի հետ կապված ցանկացած միջադեպի կամ արտակարգ իրավիճակի մասին, որն ունի կամ կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի, ազդակիր համայնքների, հասարակության կամ աշխատողների վրա՝ համաձայն ԲՍՀՊ-ի, դրանում նշված բնապահպանական և սոցիալական գործիքների և Բնապահպանական և սոցիալական ստանդարտների (հավելված 2, բաժին I, մաս Զ, կետ 4),

5.20. ստեղծել, հրապարակել, պահպանել և գործարկել բողոքարկման մատչելի մեխանիզմ՝ ստանալու և հեշտացնելու Նախագծի ազդակիր մարդկանց մտահոգությունների և բողոքների լուծումը և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ և նպատակահարմար միջոցները՝ Բանկի համար ընդունելի ձևով՝ հասցեագրելու կամ հեշտացնելու համար այդպիսի մտահոգությունները և բողոքները (հավելված 2, բաժին I, մաս Զ, կետ 5),

5.21. ապահովել, որ Նախագծի շրջանակներում քաղաքացիական աշխատանքների համար նախատեսված բոլոր մրցութային փաստաթղթերը և պայմանագրերը ներառեն կապալառուների, ենթակապալառուների և վերահսկող մարմինների պարտավորությունը՝ համապատասխանեցնելու ԲՍՀՊ-ի համապատասխան ասպեկտներին և դրանում նշված բնապահպանական և սոցիալական գործիքներին և ընդունելու և կիրառելու վարքագծի կանոններ, որոնք պետք է տրամադրվեն և ստորագրվեն բոլոր աշխատողների կողմից՝ մանրամասնելով բնապահպանական, սոցիալական, առողջության և անվտանգության ռիսկերը, ինչպես նաև սեռական շահագործման և բռնության, երեխաների նկատմամբ սեռական ոտնձգությունների և բռնության ռիսկերը, որոնք կիրառելի են նշված պայմանագրերի համաձայն պատվիրված կամ իրականացվող քաղաքացիական աշխատանքների համար (հավելված 2, բաժին I, մաս Զ, կետ 6),

5.22. Բանկին ներկայացնել Նախագծի յուրաքանչյուր հաշվետվություն յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից ոչ ուշ, քան քառասունհինգ (45) օր հետո՝ ընդգրկելով օրացուցային կիսամյակը (հավելված 2, բաժին II, մաս Ա),

5.23. մինչև Բանկի և Հայաստանի Հանրապետության միջև գրավոր համաձայնեցված ամսաթիվը պատրաստել և Բանկին ներկայացնել միջնաժամկետ հաշ-

վետվություն այն մանրամասնությամբ, ինչպես ողջամտորեն պահանջում է Բանկը՝ փաստաթղթավորելով Նախագծի իրականացման առաջընթացը նման հաշվետվության ամսաթվին նախորդող ժամանակաշրջանում, հաշվի առնելով Համաձայնագրի հիման վրա իրականացված մշտադիտարկման և գնահատման գործողությունների իրականացումը, այդ օրվան հաջորդող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության նպատակներին հասնելու նպատակով, ինչպես նաև Բանկի հետ միասին ուսումնասիրել այդ միջնաժամկետ հաշվետվությունը՝ ոչ ուշ, քան այն ներկայացնելուց իննսուն (90) օր հետո, և այնուհետև ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ Նախագծի շարունակական արդյունավետ իրականացումն ու նպատակին հասնելն ապահովելու համար՝ հիմնվելով միջնաժամկետ հաշվետվության եզրակացությունների և առաջարկությունների վրա և տվյալ հարցի վերաբերյալ Բանկի տեսակետի վրա (հավելված 2, բաժին II, մաս Բ),

5.24. 2-րդ հավելվածի III բաժնի Ա մասի դրույթներից անկախ՝ չկատարել ելքագրում մինչև ստորագրության ամսաթիվը կատարված վճարումների համար, կամ Կատեգորիա 2-ի համաձայն՝ 2-րդ հավելվածի հավելումում նշված յուրաքանչյուր ԱՀՊ-ի նկատմամբ, որի համար Հայաստանի Հանրապետությունը ներկայացրել է ելքագրման հայտ՝ բացառությամբ այն դեպքերի, քանի դեռ և մինչև Հայաստանի Հանրապետությունը Բանկին չի ներկայացրել 2-րդ հավելվածի III բաժնի Բ մասի 1-ին կետի «բ» ենթակետում նշված փաստաթղթերը (հավելված 2, բաժին III, մաս Բ, կետ 1),

5.25. մինչև հատկացման վերջնաժամկետը կամ դրանից առաջ Բանկին բավարար ապացույց չտրամադրելու դեպքում այն մասին, որ Կատեգորիա 2-ի հետ կապված ԱՀՊ-ները կատարվել են, Բանկի ծանուցմամբ անհապաղ Բանկին վերադարձնել այդ Կատեգորիա 2-ի հետ կապված ելքագրված Վարկի մնացորդը (հավելված 2, բաժին III, մաս Բ, կետ 3):

6. Համաձայնագրի 2-րդ հավելվածի III բաժնի Ա մասի աղյուսակում սահմանվում է Վարկի միջոցների ելքագրման յուրաքանչյուր կատեգորիա (Կատեգորիա), այդ թվում՝ Հատկացման Վարկի գումարը (արտահայտված եվրոյով), ինչպես նաև Ֆինանսավորվող ծախսերի տոկոսը (բացառությամբ հարկերի):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

3 փետրվարի 2026 թվականի
ՍԴՈ-1815

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋՐԻ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ. 1-ԻՆ ՓՈՒԼ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1815 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2026 թվականի փետրվարի 3-ի ՍԴՈ-1815 որոշմամբ որոշել է, որ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2026 թվականի փետրվարի 3-ի ՍԴՈ-1815 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է

հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2026 թվականի փետրվարի 3-ի ՍԴՈ-1815 որոշմամբ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական

դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

<u>Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:</u>

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Ընդ որում, էլեկտրոնային ստորագրությունը կարող է էլեկտրոնային փաստաթղթին տալ իրավական նշանակություն այն դեպքում, երբ էլեկտրոնային ստորագրությունը տեսողական դիտման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով արտահայտվում է ցուցասարքի (դիսփլեյի) էկրանին, թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է

վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի

կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«3» փետրվարի 2026թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԵՎ ԼՈԳԻՍՏԻԿ ԿԵՆՏՐՈՆ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 24 փետրվարի 2026թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

դատավորներ՝ Արման Դիլանյանի (նախագահող),
Արտակ Զեյնալյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի (զեկուցող),
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ռաֆայել Գևորգյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2025 թվականի սեպտեմբերի 19-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոն» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 1774-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոն» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի դեկտեմբերի 17-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի միջև «Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոն» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2025 թվականի սեպտեմբերի 19-ին՝ Հայաստանի Երևան քաղաքի մոտ մաքսային և լոգիստիկ կենտրոնի («ՄԼԿ») կառուցման հարցում Հայաստանի Հանրապետությանն օժանդակելու նպատակով:

2. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (այսուհետ նաև՝ Բանկ) համաձայնել է Հայաստանի Հանրապետության համար հասանելի դարձնել ԵՄ Հարևանության ներդրումային հարթակի (ԵՄ ՀՆՀ) շրջանակներում Եվրոպական միության կողմից տրամադրված ներդրումային դրամաշնորհային ֆինանսավորում՝ 6.000.000 եվրոյի չափով՝ աջակցելու Ծրագրի ֆինանսավորման հարցում՝ Բանկի և Հայաստանի Հանրապետության միջև կնքվելիք դրամաշնորհային համաձայնագրի (Դրամաշնորհային համաձայնագիր) պայմաններին համապատասխան:

3. Ըստ դիմումին կից ներկայացված տեղեկանքի՝ Դրամաշնորհային համաձայնագիրը կնքվել է Համաձայնագրի կնքման օրը:

Վարկային և դրամաշնորհային համաձայնագրերի ֆինանսական միջոցներում ներառված չէ Կառավարության համաֆինանսավորման մասը, որն ուղղվելու է Հայաստանի Հանրապետությունում ԱԱՀ-ի գծով պարտավորությունների վճարմանը: Կառավարության կողմից վարկային ու դրամաշնորհային միջոցների համաֆինանսավորման չափը կկազմի 9.0 մլն եվրո, որից 7.8 մլն եվրոն վարկային միջոցների գծով (Տրանշ 1 – 6.0 մլն և Տրանշ 2 – 1.8 մլն), իսկ 1.2 մլն եվրոն՝ դրամաշնորհային միջոցների գծով:

Ծրագրի իրականացման շրջանակում նախատեսվում է կառուցել արտաքին տնտեսական գործունեության կենտրոն (ԱՏԳ) և Պետական եկամուտների կոմիտեի վարչական շենք (վարչական շենքի կառուցման ծախսերն իրականացվելու են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ներքին աղբյուրների հաշվին), որի ընդհանուր մակերեսը կազմում է 19.1 հա: 13.5 հա-ն նախատեսվում է ԱՏԳ կենտրոնի և դրա ենթակառուցվածքների համար, իսկ 5.6 հա-ն՝ վարչական շենքերի և դրանց ենթակառուցվածքների համար:

Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոնի ստեղծումը հանդիսանում է ներկայումս որդեգրված՝ ԱՏԳ կենտրոնների ստեղծման ծրագրի բաղկացուցիչ մասը:

4. Համաձայնագրի կատարման համար պատասխանատու մարմին է հանդիսանում Պետական եկամուտների կոմիտեն:

Պետական եկամուտների կոմիտեն հանդիսանում է նաև Ծրագիրն իրականացնող գործակալություն, իսկ լիազորված ներկայացուցիչ հանդիսանում է Ֆինանսների նախարարը:

5. Ըստ Համաձայնագրի՝ Բանկի՝ 2021 թվականի նոյեմբերի 5-ով թվագրված «Ստանդարտ պայմաններ և դրույթներ»-ի բոլոր դրույթները ներառվում ու դառնում են կիրառելի Համաձայնագրի նկատմամբ նույն ուժով ու գործողությամբ, որը դրանք կունենային, եթե ամբողջությամբ սահմանված լինեին այստեղ (այդ դրույթները՝ համապատասխան փոփոխություններով, այսուհետ կոչվում են «Ստանդարտ պայմաններ և դրույթներ»):

6. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Համաձայնագրի VI հոդվածով սահմանված կարգով: «Ստանդարտ պայմաններ և դրույթներ»-ի 9.02-րդ բաժնի «գ» կետի նպատակներով՝ որպես Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար լրացուցիչ պայման, ի թիվս այլնի, սահմանված է նաև Ծրագիրն իրականացնող գործակալության կողմից՝ համապատասխան ռեսուրսներով և որակավորում ունեցող

կադրերով՝ Բանկի համար ընդունելի տեխնիկական առաջադրանքներին համապատասխան Ծրագրի իրականացման գրասենյակի ստեղծումը:

7. Ըստ Համաձայնագրի՝ Բանկը համաձայնում է Համաձայնագրում սահմանված կամ նշված պայմաններով Հայաստանի Հանրապետությանը տրամադրել մինչև 39.000.000 (երեսունինը միլիոն) եվրոյի չափով վարկ (այսուհետ՝ Վարկ):

Վարկը բաղկացած է երկու Տրանշից՝ Տրանշ 1՝ 30 միլիոն (երեսուն միլիոն) եվրոյի չափով (Տրանշ 1-ով տրամադրվող վարկ), և Տրանշ 2՝ 9 միլիոն (ինը միլիոն) եվրոյի չափով (Տրանշ 2-ով տրամադրվող վարկ):

Համաձայնագրի II հոդվածի 2.02-րդ բաժնի համաձայն՝ Մասհանման նվազագույն գումարի չափը կազմում է 50.000 եվրո, կանխավճարի նվազագույն գումարի չափը՝ 1.000.000 եվրո, չեղարկման նվազագույն գումարի չափը՝ 2.000.000 եվրո:

Տոկոսագումարների վճարման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա հունվարի 21-ը և հուլիսի 21-ը:

Տրանշ 1-ով տրամադրվող վարկի Հասանելիության վերջին ամսաթիվը ստորագրման ամսաթվից 5 (հինգ) տարի է կամ այնպիսի հետագա ժամկետ, որը Բանկն իր հայեցողությամբ կարող է սահմանել և այդ մասին ծանուցել Հայաստանի Հանրապետությանը: Տրանշ 2-ով տրամադրվող վարկի Հասանելիության վերջին ամսաթիվը Տրանշ 2-ի հասանելիության ամսաթվից հինգ տարի է կամ այնպիսի հետագա ժամկետ, որը Բանկն իր հայեցողությամբ կարող է սահմանել և այդ մասին ծանուցել Հայաստանի Հանրապետությանը:

8. Համաձայնագիրն ունի 5 հավելված. Հավելված 1. *«Ծրագրի նկարագրությունը»*, Հավելված 2. *«Կատեգորիաները և Մասհանումները»*, Հավելված 3. *«Հատուկ հաշիվը»*, Հավելված 4. *«Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիրը»*, Հավելված 5. *««Կանաչ» նախագծի մշտադիտարկման ծրագիր»*:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից, որոնք ենթակա են այնպիսի փոփոխությունների, որոնց շուրջ Բանկը և Հայաստանի Հանրապետությունը կարող են ժամանակ առ ժամանակ համաձայնության գալ՝ **Մաս Ա**. Կապիտալ ծախսերը, **Մաս Բ**. Խորհրդատվական ծառայություններ «Ա» մասի համար, **Մաս Գ**. Հատուկ հաշվի աուդիտորական ծառայությունները, **Մաս Դ**. Տեխնիկական համագործակցությունը:

9. Համաձայնագրի V հոդվածի 5.03-րդ բաժնի համաձայն՝ եթե ցանկացած պահի Բանկը որոշի, որ Հատուկ հաշվից վճարումը կամ դրա որևէ օգտագործում

կատարվել է 3-րդ հավելվածի պահանջներին անհամապատասխան և սահմանում է Վարկի չափը, որի համար կիրառվում է այդպիսի չարաշահումը, ապա Բանկը կարող է Հայաստանի Հանրապետությանը ծանուցելու միջոցով դադարեցնել Հայաստանի Հանրապետության՝ այդպիսի գումարի մասով Մասհանումներ կատարելու իրավունքը: Այդպիսի ծանուցումից հետո Վարկի գումարը չեղարկվում է:

10. Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագրով ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

10.1. Տրանշ 1-ով տրամադրվող վարկը մարել 22 (քսաներկու) հավասարաչափ (կամ հնարավորինս հավասարաչափ) կիսամյակային վճարումներով՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 21-ին և հուլիսի 21-ին՝ լողացող դրույքաչափով. ընդ որում, Վարկի առաջին մարման ամսաթիվը համարվում է Համաձայնագիրը ստորագրելու չորրորդ տարին կամ դրանից հետո, իսկ Տրանշ 2-ով տրամադրվող վարկը՝ 22 (քսաներկու) հավասարաչափ (կամ հնարավորինս հավասարաչափ) կիսամյակային վճարումներով՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 21-ին և հուլիսի 21-ին՝ լողացող դրույքաչափով. ընդ որում, Վարկի առաջին մարման ամսաթիվը համարվում է Տոկոսագումարների վճարման ամսաթիվը, որն անմիջապես Տրանշ 2-ի Հասանելիության ամսաթվի չորրորդ տարին է կամ դրանից հետո, իսկ Վարկի վերջին մարման ամսաթիվը համարվում է Տոկոսագումարների վճարման ամսաթիվը, որն անմիջապես Տրանշ 1-ի մասով Համաձայնագիրը ստորագրելու տասնհինգերորդ տարվանից հետո է և Տրանշ 2-ի Հասանելիության ամսաթվի տասնհինգերորդ տարին է (հոդված II, բաժին 2.02, կետեր «ե(1)» և «թ»).

10.2. Տոկոսագումարների վճարման յուրաքանչյուր ամսաթվին (եթե նույնիսկ այդ ժամկետում որևէ տոկոսագումար ենթակա չէ վճարման) վճարել տարեկան 0,5% դրույքաչափով Պարտավորավճար՝ հաշվարկված համապատասխանաբար Տրանշ 1-ով տրամադրվող վարկի և Տրանշ 2-ով տրամադրվող վարկի Հասանելի գումարի նկատմամբ՝ Տրանշ 1-ով տրամադրվող վարկի համար՝ սկսած Ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո Տոկոսագումարների վճարման առաջին ամսաթվին, իսկ Տրանշ 2-ով տրամադրվող վարկի համար՝ Տրանշ 2-ի Հասանելիության ամսաթվից հետո Տոկոսագումարների վճարման առաջին ամսաթվին (հոդված II, բաժին 2.02, կետ «ը»).

10.3. Բանկին վճարել Միանվագ միջնորդավճար համապատասխանաբար Տրանշ 1-ով տրամադրվող վարկի և Տրանշ 2-ով տրամադրվող վարկի առավելագույն մայր գումարի մեկ տոկոսի (1 %) չափով (հոդված II, բաժին 2.02, կետ «ժ»).

10.4. Բանկի պահանջով և Բանկի համար բավարար պայմաններով, Ծրագրի նպատակների համար Հայաստանի Հանրապետության գանձապետարանում բացել և վարել Վարկի արժույթով արտահայտված հատուկ դեպոզիտային հաշիվ (հոդված II, բաժին 2.03, կետ «գ»).

10.5. բացի «Ստանդարտ պայմաններ և դրույթներ»-ի IV հոդվածով սահմանված ընդհանուր հանձնառություններից, եթե Բանկի հետ այլ համաձայնություն ձեռք չի բերվել, ձեռնարկել բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ ապահովելու բավարար միջոցներ և այլ ռեսուրսներ, այդ թվում՝ մարդկային ռեսուրսներ, Ծրագիրն ավարտելու համար, ինչպես նաև ձեռնարկել բոլոր գործողությունները և մասնավորապես՝ ընդունել կամ ապահովել, որ ընդունվեն Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի իրականացման համար անհրաժեշտ բոլոր կարգավորումները (հոդված III, բաժին 3.01, կետեր «ա», «զ»).

10.6. բացի «Ստանդարտ պայմաններ և դրույթներ»-ի IV հոդվածով սահմանված ընդհանուր հանձնառություններից, եթե Բանկի հետ այլ համաձայնություն ձեռք չի բերվել, Վարկից ստացված միջոցներն օգտագործել բացառապես Ծրագրի իրականացման համար՝ համաձայն Համաձայնագրի 1-ին հավելվածի և ապահովել, որ Ծրագիրն իրականացվի բարեխղճորեն և արդյունավետ կերպով՝ ողջամիտ ինժեներական, ֆինանսական և գործարար գործելակերպերին համապատասխան, բոլոր կիրառելի օրենքներին համապատասխան՝ պատշաճ կերպով հաշվի առնելով շրջակա միջավայրի, առողջության և անվտանգության պահանջները, ինչպես նաև ընդունելի միջազգային ստանդարտներին և գործելակերպերին համապատասխան (հոդված III, բաժին 3.01, կետեր «բ», «գ»).

10.7. բացի «Ստանդարտ պայմաններ և դրույթներ»-ի IV հոդվածով սահմանված ընդհանուր հանձնառություններից, եթե Բանկի հետ այլ համաձայնություն ձեռք չի բերվել, սերտորեն աշխատել Ծրագրի իրականացման աջակցության գծով խորհրդատուի և ԾԻԳ-ին աջակցելու նպատակով նշանակված այլ խորհրդատուների հետ, նաև պահպանել և իրականացնել, ինչպես նաև ապահովել, որ Ծրագիրն իրականացնող գործակալության կապալառուները պահպանեն և իրականացնեն Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիրը (հոդված III, բաժին 3.01, կետեր «դ», «է»).

10.8. բացի «Ստանդարտ պայմաններ և դրույթներ»-ի IV հոդվածով սահմանված ընդհանուր հանձնառություններից, եթե Բանկի հետ այլ համաձայնություն ձեռք չի բերվել, ձեռք բերել, պահպանել, երկարաձգել բոլոր անհրաժեշտ լիցենզիաները, հաստատումները և գրանցումները և պահպանել դրանց պահանջները, ինչպես նաև ապահովել, որ շինարարությունն ավարտելուց հետո 12 ամսվա ընթացքում ՄԼԿ-ն ձեռք բերի Էկոշինարարության հավաստագիր, ընդ որում՝ ապահովել, որ այդ հավաստագիրը համապատասխանի «Էներգաարդյունավետ և բնապահպանական նախագծման ուղեցույցի» (LEED) առնվազն արծաթե կամ համարժեք մակարդակին (հոդված III, բաժին 3.01, կետեր «ե», «ը»).

10.9. բացի «Ստանդարտ պայմաններ և դրույթներ»-ի IV հոդվածով սահմանված ընդհանուր հանձնառություններից, եթե Բանկի հետ այլ համաձայնություն չեռք չի

բերվել, ապահովել Ծրագիրն իրականացնող գործակալության կողմից Համաձայնագրի 3.01-րդ բաժնի «թ» կետով սահմանված պարտավորությունների կատարումը՝ Ծրագրի համար ընտրված տարածքում հողի մաքրման աշխատանքներն սկսելուց առնվազն երեք (3) ամիս առաջ և ցանկացած դեպքում մինչև Վարկի հատկացումը՝ ֆինանսավորելու համար Համաձայնագրի 1-ին հավելվածի «Կապիտալ ծախսեր» վերտառությամբ «Ա» մասի 2-րդ բաժնում նշված ցանկացած ծախս (հոդված III, բաժին 3.01, կետ «թ»).

10.10. Ծրագրի իրականացման բոլոր հայեցակետերը, այդ թվում՝ Ծրագրի համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման գործընթացը համակարգելու, կառավարելու, դիտանցելու և գնահատելու համար, եթե Բանկի հետ այլ համաձայնություն ձեռք չի բերվել, ապահովել, որ Ծրագիրն իրականացնող գործակալությունը ստեղծի բավարար ռեսուրսներ և համապատասխան որակավորմամբ անձնակազմ ունեցող Ծրագրի իրականացման գրասենյակ և Ծրագրի իրականացման ամբողջ ժամանակահատվածում մշտապես շահագործի այն՝ Բանկի համար ընդունելի տեխնիկական առաջադրանքին համապատասխան (հոդված III, բաժին 3.02).

10.11. «Ստանդարտ պայմաններ և դրույթներ»-ի 4.03-րդ բաժնի նպատակներով Ծրագրի համար անհրաժեշտ և Վարկից ստացված միջոցներով ֆինանսավորման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների, ինչպես նաև խորհրդատվական ծառայությունների գնման գործընթացը կարգավորվում է Համաձայնագրի III հոդվածի 3.03-րդ բաժնի դրույթներով՝ բացառությամբ Բանկի կողմից այլ համաձայնություն ձեռք բերելու դեպքի (հոդված III, բաժին 3.03).

10.12. ապահովել Համաձայնագրի III հոդվածի 3.04-րդ բաժնում սահմանված բնապահպանական և սոցիալական նորմերի պահպանման մասով պարտավորությունների կատարումը (հոդված III, բաժին 3.04).

10.13. Ծրագրի իրականացման հարցում աջակցություն ցուցաբերելու համար Բանկի հետ այլ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, ըստ անհրաժեշտության, ներգրավել կամ ապահովել, որ ներգրավվեն խորհրդատուներ, և օգտվել վերջիններիս ծառայություններից, որոնց որակավորումները, փորձը և տեխնիկական առաջադրանքները բավարար են Բանկի համար, այդ թվում՝ Ծրագրի իրականացման աջակցության գծով խորհրդատու՝ ներգրավված Համաձայնագրի 3.03-րդ բաժնի «ա» կետի համաձայն, և Կանաչ հավաստագրման խորհրդատվական աջակցություն՝ Էկոշինարարության հավաստագիր ստանալու հարցում Իրականացնող գործակալությանն աջակցելու նպատակով (հոդված III, բաժին 3.05, կետ «ա»).

10.14. Ծրագրին առնչվող հարցերում կամ Հայաստանի Հանրապետության գործողություններին աջակցելու համար ներգրավված ցանկացած խորհրդատուի (այդ թվում՝ անմիջապես Բանկի կողմից նշանակված՝ տեխնիկական

համագործակցության («ՏՀ») շրջանակում ֆինանսավորվող խորհրդատուների) անվճար տրամադրել իրենց գործառույթների իրականացման համար անհրաժեշտ բոլոր միջոցները և աջակցությունը, այդ թվում՝ բոլոր փաստաթղթերը, նյութերը և այլ տեղեկություններ, որոնք կարող են վերաբերել նրանց աշխատանքին (հոդված III, բաժին 3.05, կետ «բ»).

10.15. ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած մինչև Վարկի ամբողջ գումարը մարվելը կամ չեղարկվելը ապահովել, որ Ծրագիրն իրականացնող գործակալությունը հաշվետու տարվա ավարտից հետո 120 օրվա ընթացքում Բանկ ներկայացնի տարեկան հաշվետվություններ Հայաստանի Հանրապետության (այդ թվում՝ Ծրագիրն իրականացնող գործակալության) և Ծրագրի հետ կապված Բնապահպանական և սոցիալական հարցերի վերաբերյալ՝ «Ստանդարտ պայմաններ և դրույթներ»-ի 5.02-րդ բաժնի «գ» կետի «iii» ենթակետում նշված կարգով. այդ հաշվետվությունները ներառում են տեղեկություններ Համաձայնագրի III հոդվածի 3.07-րդ «ա» բաժնով նախատեսված կոնկրետ հարցերի վերաբերյալ (հոդված III, բաժին 3.07, կետ «ա»).

10.16. անմիջապես Հայաստանի Հանրապետության (այդ թվում՝ Ծրագիրն իրա-կանացնող գործակալության) հետ կապված որևէ միջադեպից կամ պատահարից հետո, որն էական բացասական ազդեցություն ունի կամ հավանական է, որ ունենա շրջակա միջավայրի, աշխատողների կամ հանրային կամ աշխատանքային առողջության կամ անվտանգության վրա, տեղեկացնել Բանկին և դրանից հետո անմիջապես ծանուցել Բանկին այդ մասին՝ նշելով այդպիսի միջադեպի կամ պատահարի բնույթը և այն շտկելու համար Հայաստանի Հանրապետության ձեռնարկած ցանկացած քայլ (հոդված III, բաժին 3.07, կետ «գ»).

10.17. անհապաղ Բանկին ծանուցել աշխատողների կամ հանրության անդամների ցանկացած էական բողոքի կամ խնդրագրի մասին, որն ուղղված է կամ առնչվում է Հայաստանի Հանրապետությանը (այդ թվում՝ Ծրագիրն իրականացնող գործակալությանը) կամ Ծրագրին, որը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության (այդ թվում՝ Ծրագիրն իրականացնող գործակալության) կամ Ծրագրի վրա, կամ որը հայտնի է դարձել կամ հավանական է, որ հայտնի դառնա հանրությանը լրատվամիջոցների կողմից լուսաբանման միջոցով կամ այլ կերպ, և ցանկացած այդպիսի ծանուցումից հետո տասն օրվա ընթացքում ներկայացնել Բանկի համար բավարար հաշվետվություն՝ նշելով Հայաստանի Հանրապետության կողմից այդպիսի բողոքի քննության արդյունքը և Հայաստանի Հանրապետության կողմից ձեռնարկված կամ ձեռնարկվել առաջարկվող ցանկացած քայլ՝ բողոքով կամ միջնորդությամբ բարձրացված հարցերը լուծելու համար (հոդված III, բաժին 3.07, կետ «դ»).

10.18. ապահովել, որ Ծրագիրն իրականացնող գործակալությունը ՎԶԵԲ-ին անհապաղ (սակայն ոչ ուշ, քան այդպիսի ծրագրված կոլեկտիվ ազատման առնչությամբ կայացված ցանկացած որոշումից 60 օր առաջ) ծանուցի ցանկացած ծրագրված կոլեկտիվ ազատման մասին, որը 30-օրյա ժամկետի կտրվածքով ազդում է Հայաստանի Հանրապետության ընդհանուր աշխատակիցների առնվազն 10%-ի կամ 30 աշխատակցի վրա (որ թիվն ավելի քիչ է), և ցանկացած ծրագրված կոլեկտիվ ազատման դեպքում, որը 30-օրյա ժամկետի կտրվածքով ազդում է Հայաստանի Հանրապետության ընդհանուր աշխատակիցների առնվազն 25%-ի կամ 500 աշխատակցի վրա (որ թիվն ավելի քիչ է), ՎԶԵԲ-ին այդպիսի ծանուցում ուղարկելիս նաև ապահովել, որ Ծրագիրն իրականացնող գործակալությունը ՎԶԵԲ-ին տրամադրի գործընթացի կառավարման կիրառելի պլան՝ Կատարողականի սահմանված պահանջներին համապատասխան (հոդված III, բաժին 3.07, կետ «ե»).

10.19. Հայաստանի Հանրապետության գերատեսչությունների կամ գործակալությունների (այդ թվում՝ Ծրագիրն իրականացնող գործակալության) մասով, որոնք պատասխանատու են Ծրագրի կամ դրա որևէ մասի իրականացման համար, վարել ընթացակարգեր, փաստաթղթեր և հաշվետվություններ, որոնք բավարար են միջազգայնորեն ընդունված, հետևողականորեն կիրառվող հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան Ծրագրի հետ կապված կիրառելի գործառնությունները, ռեսուրսները և ծախսերն արտացոլելու, ինչպես նաև Ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած մինչև Ծրագրի ավարտը Ծրագրի առաջընթացը (այդ թվում՝ դրա ծախսերը և այն օգուտները, որոնք ստացվելու են դրանից) դիտանցելու և արձանագրելու համար (հոդված IV, բաժին 4.01, կետ «ա»).

10.20. ապահովել Համաձայնագրի VI հոդվածի 6.02-րդ բաժնով սահմանված Վարկի առաջին մասհանման նախապայմանների կատարումը (հոդված VI, բաժին 6.02).

10.21. չհակասելով Համաձայնագրի 2-րդ հավելվածի 1-ին կետի դրույթներին՝ որևէ մասհանում չկատարել Համաձայնագրի ամսաթվից առաջ ի հայտ եկած ծախսերի նկատմամբ՝ բացառությամբ Վարկի 20 (քսան) տոկոսը չգերազանցող ընդհանուր գումարի չափով մասհանումների, որոնք կարող են կատարվել 1-ին կատեգորիայի մասով՝ Համաձայնագրի ամսաթվից առաջ, սակայն Բանկի նշանակած հաստատող անձանց կողմից Բանկային գործառնության հաստատումից հետո ի հայտ եկած ծախսերի հաշվին (Հավելված 2, կետ 2).

10.22. հատուկ հաշվից կատարվող վճարումները կատարել բացառապես Թույլատրելի ծախսերի համար՝ համաձայն Համաձայնագրի 3-րդ հավելված դրույթների (Հավելված 3, կետ 2).

10.23. չհակասելով Համաձայնագրի 3-րդ հավելվածի 4-րդ կետի դրույթներին՝ Բանկի հետ այլ բան չհամաձայնեցնելու դեպքում, Հասանելի գումարից միջոցներ

չմասհանել Հատուկ հաշվին մուտքագրելու համար, եթե Բանկը որևէ պահի որոշի, որ հետագա բոլոր մասհանումները պետք է կատարվեն 2.03-րդ բաժնի «ա» կետի դրույթներին համապատասխան, կամ հենց որ Թույլատրելի կատեգորիաներին հատկացված Հասանելի գումարը հավասար է Հատուկ հաշվի առավելագույն մնացորդի գումարի կրկնապատիկին, որից հետո Թույլատրելի կատեգորիաներին հատկացված մասհանումները իրականացնել այնպիսի ընթացակարգերի համաձայն, որոնք Բանկը կարող է սահմանել՝ ծանուցելով Հայաստանի Հանրապետությանը, և այդպիսի հետագա մասհանումները կատարել միայն այն բանից հետո և այնքանով, երբ և որքանով Բանկը համոզվի, որ այդպիսի ծանուցման ամսաթվին Հատուկ հաշվին մնացած բոլոր գումարները կօգտագործվեն Թույլատրելի ծախսերի համար վճարումներ կատարելու համար (Հավելված 3, կետ 6).

10.24. իրականացնել Ծրագիրը Համաձայնագրի 4-րդ հավելվածով սահմանված՝ Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրին և Համաձայնագրի 5-րդ հավելվածով սահմանված՝ «Կանաչ» նախագծի մշտադիտարկման ծրագրին համապատասխան (Հավելվածներ 4, 5):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2025 թվականի սեպտեմբերի 19-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոն» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

24 փետրվարի 2026 թվականի
ՍԴՈ - 1816



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ

ՄԱԿ-Ի «ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ԿԻՑ «ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՕԳՈՒՏՆԵՐԻ ԱՐԴԱՐ ՈՒ ՀԱՎԱՍԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՄՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՆԱԳՈՅԱՅԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 24 փետրվարի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

դատավորներ՝ Արման Դիլանյանի (նախագահող),
Արտակ Զեյնալյանի,
Դավիթ Խաչատուրյանի
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի (զեկուցող),
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Արամ Մեյմարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◊ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◊ 1(122) 2026

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիային կից «Գենետիկական պաշարների հասանելիության և դրանց օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործման մասին» Նագոյայի արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի դեկտեմբերի 18-ի N 1834-Ա որոշմամբ հավանություն է տվել ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիային կից «Գենետիկական պաշարների հասանելիության և դրանց օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործման մասին» Նագոյայի արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի դեկտեմբերի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ կոնվենցիան և արձանագրությունը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Տ .**

1. ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիային (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) կից «Գենետիկական պաշարների հասանելիության և դրանց օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործման մասին» արձանագրությունը (այսուհետ նաև՝ Արձանագրություն) ընդունվել է 2010 թվականի հոկտեմբերի 29-ին Նագոյա քաղաքում՝ գենետիկական պաշարների օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործման նպատակով, այդ թվում՝ հաշվի առնելով բոլոր իրավունքներն այդ պաշարների և տեխնոլոգիաների նկատմամբ՝ գենետիկական պաշարների պատշաճ հասանելիության և համապատասխան տեխնոլոգիաների պատշաճ փոխանցման միջոցով, ինչպես նաև պատշաճ ֆինանսավորման միջոցով՝ նպաստելով կենսաբանական բազմազանության պահպանմանը և դրա բաղադրիչների կայուն օգտագործմանը:

«Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիան ստորագրման համար բացվել է 1992 թվականի հունիսի 5-ին՝ Միավորված ազգերի կազմակերպության Շրջակա միջավայրի և զարգացման համաժողովում (Ռիո դե Ժանեյրոյում կայացած «Երկրի գագաթնաժողով») և ուժի մեջ է մտել 1993 թվականի

դեկտեմբերի 29-ին: Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է Գերագույն խորհրդի 1993 թվականի մարտի 31-ի հ.ն-0781-1 որոշմամբ:

Արձանագրությունն ուժի մեջ է մտել 2014 թվականի հոկտեմբերի 12-ին: Ներկայումս այն վավերացրել է 142 պետություն, ստորագրել, սակայն դեռևս չեն վավերացրել 14 պետություն:

2. Կոնվենցիան միակ միջազգային փաստաթուղթն է, որտեղ համակողմանիորեն դիտարկվում է կենսաբանական բազմազանությունը: Կոնվենցիայի երեք նպատակներն են կենսաբանական բազմազանության պահպանությունը, դրա բաղադրիչների կայուն օգտագործումը և գենետիկական պաշարների օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործումը:

3. Արձանագրությունը նպատակաուղղված է Կոնվենցիայի երեք հիմնական նպատակներից մեկի՝ գենետիկական պաշարների օգտագործումից ստացվող օգուտների արդար և հավասար հիմունքներով բախշման գործնական իրականացմանը, որի արդյունքում ակնկալվում են հետևյալ օգուտները՝ ազգային ռեսուրսների նկատմամբ ինքնիշխանություն և իրավական պաշտպանություն, տնտեսական օգուտներ, տեղական և բնիկ համայնքների ավանդական գիտելիքներին աջակցություն, միջազգային հեղինակության բարձրացում և գլոբալ մեխանիզմներին մասնակցություն, հավելյալ միջազգային ֆինանսական աղբյուրների հասանելիություն, գիտատեխնիկական համագործակցության խթանում:

4. Ըստ դիմումին կից ներկայացված՝ «Պատասխանատու մարմինների վերաբերյալ տեղեկատվության»՝ պատասխանատու մարմինն է ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը, իսկ համակատարող մարմիններն են ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան:

5. Արձանագրությունը բաղկացած է ներածությունից, 36 հոդվածից և «Դրամական և ոչ դրամական օգուտները» խորագրով հավելվածից:

Արձանագրության մասով վերապահումներ չեն կարող արվել (հոդված 34):

6. Արձանագրությունն իրականացվում է Արձանագրությանն առնչվող այլ միջազգային փաստաթղթերի հետ փոխադարձ նպաստավորության հիման վրա: Արձանագրությունը Կոնվենցիայի՝ հասանելիությանը և համօգտագործմանն առնչվող դրույթների իրականացման փաստաթուղթն է: Այն դեպքերում, երբ կիրառվում է հասանելիությանը և համօգտագործմանն առնչվող հատուկ միջազգային փաստաթուղթ, որը համապատասխանում է Կոնվենցիայի և Արձանագրության նպատակներին և չի հակասում դրանց, Արձանագրությունը չի կիրառվում հատուկ փաստաթղթի Կողմի կամ Կողմերի նկատմամբ՝ հատուկ փաստաթղթում ընդգրկված հատուկ գենետիկական պաշարների և հատուկ փաստաթղթի նպատակների մասով:

7. Արձանագրության նպատակն է գենետիկական պաշարների օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործումը, այդ թվում՝ գենետիկական պաշարների պատշաճ հասանելիության և համապատասխան տեխնոլոգիաների պատշաճ փոխանցման միջոցով՝ հաշվի առնելով բոլոր իրավունքներն այդ պաշարների և տեխնոլոգիաների նկատմամբ, ինչպես նաև պատշաճ ֆինանսավորման միջոցով՝ դրանով իսկ նպաստելով կենսաբանական բազմազանության պահպանմանը և դրա բաղադրիչների կայուն օգտագործմանը (հոդված 1):

8. Կոնվենցիայի 2-րդ հոդվածում սահմանված եզրույթները կիրառվում են Արձանագրության նկատմամբ (հոդված 2):

9. Արձանագրությունը կիրառվում է Կոնվենցիայի 15-րդ հոդվածի շրջանակներում գենետիկական պաշարների նկատմամբ և այդ պաշարների օգտագործումից ստացվող օգուտների նկատմամբ, ինչպես նաև Կոնվենցիայի շրջանակներում գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների և այդ գիտելիքների օգտագործումից ստացվող օգուտների նկատմամբ (հոդված 3):

10. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

10.1. Արձանագրության դրույթները չեն ազդում Կողմի՝ ցանկացած գործող միջազգային համաձայնագրից բխող իրավունքների և պարտավորությունների վրա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ իրավունքների և պարտավորությունների իրականացումը կարող է լուրջ վնաս պատճառել կենսաբանական բազմազանությանը կամ սպառնալիք առաջացնել դրա համար, ինչպես նաև

նախատեսված չեն Արձանագրության և այլ միջազգային փաստաթղթերի միջև հիերարխիա սահմանելու համար (հոդված 4, կետ 1),

10.2. գենետիկական պաշարների օգտագործումից, ինչպես նաև դրանց հետագա կիրառումից և առևտրայնացումից ստացվող օգուտներն արդար ու հավասար հիմունքներով համօգտագործել այդ պաշարները տրամադրող Կողմի հետ, որն այդ պաշարների ծագման երկիրն է, կամ այն Կողմի հետ, որը ձեռք է բերել գենետիկական պաշարները Կոնվենցիային համապատասխան՝ համօգտագործումն իրականացնելով փոխհամաձայնեցված պայմաններով (հոդված 5, կետ 1),

10.3. ըստ անհրաժեշտության՝ ձեռնարկել օրենսդրական, վարչական կամ քաղաքական միջոցներ՝ նպատակ ունենալով ապահովել բնիկ և տեղական համայնքներին պատկանող գենետիկական պաշարների օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործումը շահագրգիռ համայնքների հետ՝ այդ գենետիկական պաշարների նկատմամբ այդ բնիկ և տեղական համայնքների սահմանված իրավունքներին առնչվող ներպետական օրենսդրությանը համապատասխան՝ հիմնված փոխհամաձայնեցված պայմանների վրա (հոդված 5, կետ 2),

10.4. ըստ անհրաժեշտության ձեռնարկել օրենսդրական, վարչական կամ քաղաքական միջոցներ, որպեսզի գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների օգտագործումից ստացվող օգուտներն արդար ու հավասար հիմունքներով համօգտագործվեն այդ գիտելիքներին տիրապետող բնիկ և տեղական համայնքների հետ՝ համօգտագործումն իրականացնելով փոխհամաձայնեցված պայմաններով (հոդված 5, կետ 5),

10.5. բնական պաշարների նկատմամբ ինքնիշխան իրավունքներն իրականացնելիս և հասանելիության և օգուտների համօգտագործման մասին ներպետական օրենսդրության կամ նորմատիվ պահանջների համաձայն՝ գենետիկական պաշարների հասանելիությունը դրանց օգտագործման նպատակով ապահովել այդ պաշարները տրամադրող Կողմի նախնական հիմնավորված համաձայնության առկայության դեպքում, որն այդ պաշարների ծագման երկիրն է, կամ այն Կողմի նախնական հիմնավորված համաձայնության առկայության դեպքում, որը ձեռք է բերել գենետիկական պաշարները Կոնվենցիային համապատասխան, եթե այդ Կողմն այլ որոշում չի կայացնում (հոդված 6, կետ 1),

10.6. ՀՀ ներպետական օրենսդրության համաձայն՝ ըստ անհրաժեշտության՝ համապատասխան միջոցներ ձեռնարկել գենետիկական պաշարների հասանելիության համար բնիկ և տեղական համայնքների նախնական հիմնավորված համաձայնությունը կամ հավանությունն ստանալու և ներգրավվածությունն ապահովելու նպատակով, երբ նրանք ունեն այդ պաշարներին հասանելիություն տրամադրելու սահմանված իրավունք (հոդված 6, կետ 2),

10.7. Արձանագրության 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նախնական հիմնավորված համաձայնություն պահանջելու դեպքում ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական, վարչական կամ քաղաքական միջոցներ՝ Արձանագրության 6-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված գործողությունների համար (հոդված 6, կետ 3),

10.8. ՀՀ ներպետական օրենսդրության համաձայն՝ ըստ անհրաժեշտության՝ համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ նպատակ ունենալով ապահովել, որ գենետիկական պաշարներին առնչվող այն ավանդական գիտելիքների հասանելիությունը, որոնց տիրապետում են բնիկ և տեղական համայնքները, ապահովվի այդ բնիկ և տեղական համայնքների նախնական հիմնավորված համաձայնությամբ կամ հավանությամբ և ներգրավվածությամբ, և որ փոխհամաձայնեցված պայմանները սահմանված լինեն (հոդված 7),

10.9. հասանելիության և օգուտների համօգտագործման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը կամ նորմատիվ պահանջները մշակելիս և իրականացնելիս ստեղծել պայմաններ այն գիտական հետազոտությունները խթանելու և խրախուսելու համար, որոնք նպաստում են կենսաբանական բազմազանության պահպանմանը և կայուն օգտագործմանը, հատկապես զարգացող երկրներում, այդ թվում՝ ոչ առևտրային հետազոտական նպատակներով հասանելիության ապահովման պարզեցված միջոցառումների միջոցով՝ հաշվի առնելով այդ հետազոտությունների նպատակների փոփոխմանն արձագանքելու անհրաժեշտությունը (հոդված 8, ենթակետ ա),

10.10. հասանելիության և օգուտների համօգտագործման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը կամ նորմատիվ պահանջները մշակելիս և իրականացնելիս պատշաճ ուշադրություն դարձնել առկա կամ մոտալուտ արտակարգ իրավիճակների դեպքերին, որոնք սպառնում կամ վնասում են մարդկանց, կենդանիների կամ բույսերի առողջությանը, ինչպես սահմանված է ազգային կամ միջազգային մակարդակներում՝ հաշվի առնելով գենետիկական պաշարների արագ հասանելիության և այդ գենետիկական պաշարների օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով արագ համօգտագործման անհրաժեշտությունը, այդ թվում՝ մատչելի օգտագործման հասանելիությունը կարիքավորների համար, հատկապես զարգացող երկրներում (հոդված 8, ենթակետ բ),

10.11. հասանելիության և օգուտների համօգտագործման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը կամ նորմատիվ պահանջները մշակելիս և իրականացնելիս հաշվի առնել պարենի արտադրության և գյուղատնտեսության համար գենետիկական պաշարների կարևորությունը և դրանց հատուկ դերը սննդի անվտանգության համար (հոդված 8, ենթակետ գ),

10.12. խրախուսել, որպեսզի օգտվողները և մատակարարները գենետիկական պաշարների օգտագործումից ստացվող օգուտներն ուղղեն կենսաբանական բազմազանության պահպանմանը և դրա բաղադրիչների կայուն օգտագործմանը (հոդված 9),

10.13. դիտարկել օգուտների համօգտագործման գլոբալ բազմակողմանի մեխանիզմի անհրաժեշտությունն ու ձևերը՝ ապահովելու այն գենետիկական պաշարների և գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործումը, որոնք հանդիպում են անդրսահմանային իրավիճակներում, կամ որոնց համար հնարավոր չէ տրամադրել կամ ստանալ նախնական հիմնավորված համաձայնություն, ինչպես նաև ապահովել, որ այն օգուտները, որոնք համօգտագործվում են գենետիկական պաշարներից և գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքներից օգտվողների կողմից սույն մեխանիզմի միջոցով, օգտագործվեն գլոբալ առումով կենսաբանական բազմազանության պահպանմանը և դրա բաղադրիչների կայուն օգտագործմանն աջակցելու նպատակով (հոդված 10),

10.14. նույն գենետիկական պաշարները մեկից ավելի Կողմերի տարածքում հայտնաբերելիս ձգտել անհրաժեշտության դեպքում համագործակցել՝ ներգրավելով համապատասխան շահագրգիռ բնիկ և տեղական համայնքները՝ Արձանագրությունն իրականացնելու նպատակով (հոդված 11, կետ 1),

10.15. գենետիկական պաշարներին առնչվող նույն ավանդական գիտելիքները մի քանի Կողմերի մեկ կամ մի քանի բնիկ և տեղական համայնքների կողմից համօգտագործվելու պարագայում ձգտել անհրաժեշտության դեպքում համագործակցել՝ ներգրավելով շահագրգիռ բնիկ և տեղական համայնքները (հոդված 11, կետ 2),

10.16. Արձանագրությամբ սահմանված պարտավորությունները կատարելիս ՀՀ ներպետական օրենսդրության համաձայն՝ հաշվի առնել բնիկ և տեղական համայնքների սովորութային իրավունքները, համայնքային աշխատակարգերը և ընթացակարգերը գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների վերաբերյալ (հոդված 12, կետ 1),

10.17. շահագրգիռ բնիկ և տեղական համայնքների արդյունավետ մասնակցությամբ մեխանիզմներ ստեղծել գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների պոտենցիալ օգտագործողներին ՀՀ պարտավորությունների մասին տեղեկացնելու համար, այդ թվում՝ այն միջոցների մասին, որոնք Հասանելիության և օգուտների համօգտագործման հարցերով տեղեկատվական կենտրոնի միջոցով մատչելի են դարձրել այդ գիտելիքների հասանելիությունը և դրանց օգտագործումից

ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործումը (հոդված 12, կետ 2),

10.18. ըստ անհրաժեշտության՝ աջակցել բնիկ և տեղական համայնքների, այդ թվում՝ այդ համայնքներում կանանց կողմից համայնքային աշխատակարգերի մշակմանը, որոնք վերաբերում են գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների հասանելիությանը և այդ գիտելիքների օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար համօգտագործմանը (հոդված 12, կետ 3, ենթակետ ա),

10.19. ըստ անհրաժեշտության՝ աջակցել բնիկ և տեղական համայնքների, այդ թվում՝ այդ համայնքներում կանանց կողմից գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար համօգտագործումն ապահովելու համար փոխհամաձայնեցված պայմաններին ներկայացվող նվազագույն պահանջների և գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների օգտագործումից ստացվող օգուտների համօգտագործման վերաբերյալ պայմանագրի տիպային դրույթների մշակմանը (հոդված 12, կետ 3, ենթակետեր բ, գ),

10.20. Արձանագրությունն իրականացնելիս հնարավորինս չսահմանափակել գենետիկական պաշարների և դրանց առնչվող ավանդական գիտելիքների սովորութային օգտագործումը և դրանց փոխանակումը բնիկ ու տեղական համայնքների շրջանակներում և միմյանց միջև՝ Կոնվենցիայի նպատակներին համապատասխան (հոդված 12, կետ 4),

10.21. նշանակել հասանելիության և օգուտների համօգտագործման ազգային համակարգող կենտրոն, որը պատասխանատու է քարտուղարության հետ փոխգործակցության համար, և որը կտրամադրի գենետիկական պաշարների հասանելիության թույլտվության համար դիմողներին՝ նախնական հիմնավորված համաձայնություն ստանալու և փոխհամաձայնեցված պայմաններ սահմանելու ընթացակարգերի, այդ թվում՝ օգուտների համօգտագործման վերաբերյալ տեղեկատվություն, գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների հասանելիության թույլտվության համար դիմողներին՝ բնիկ և տեղական համայնքների նախնական հիմնավորված համաձայնությունը կամ հավանությունն ստանալու և անհրաժեշտության դեպքում ներգրավվածությունն ապահովելու և փոխհամաձայնեցված պայմաններ սահմանելու ընթացակարգերի, այդ թվում՝ օգուտների համօգտագործման վերաբերյալ տեղեկատվություն, իրավասու ազգային մարմինների, համապատասխան բնիկ և տեղական համայնքների և համապատասխան շահագրգիռ կողմերի վերաբերյալ տեղեկատվություն (հոդված 13, կետ 1),

10.22. նշանակել հասանելիության և օգուտների համօգտագործման հարցերով մեկ կամ մի քանի իրավասու ազգային մարմիններ, որոնք պատասխանատու են հասանելիություն ապահովելու, գրավոր ապացույցներ տրամադրելու, ինչպես նաև նախնական հիմնավորված համաձայնություն ստանալու և փոխհամաձայնեցված պայմաններ սահմանելու նպատակով կիրառելի ընթացակարգերի և պահանջների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու համար (հոդված 13, կետ 2),

10.23. Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ ծանուցել Քարտուղարությանը ՀՀ ազգային համակարգող կենտրոնի և ՀՀ իրավասու ազգային մարմնի կամ մարմինների կոնտակտային տվյալների մասին՝ պարզաբանելով, թե որ իրավասու մարմինն է պատասխանատու պահանջվող գենետիկական պաշարների համար, ինչպես նաև Քարտուղարությանն անհապաղ տեղեկացնել ՀՀ ազգային համակարգող կենտրոնի նշանակման կամ ՀՀ իրավասու ազգային մարմնի կամ մարմինների կոնտակտային տվյալների կամ պարտականությունների ցանկացած փոփոխության մասին (հոդված 13, կետ 4),

10.24. ձեռնարկել պատշաճ, արդյունավետ և համաչափ օրենսդրական, վարչական կամ քաղաքական միջոցներ՝ ապահովելու, որ ՀՀ իրավասության սահմաններում օգտագործվող գենետիկական պաշարները հասանելի լինեն նախնական հիմնավորված համաձայնությանը համապատասխան, և սահմանվեն փոխհամաձայնեցված պայմաններ, ինչպես պահանջվում է մյուս Կողմի հասանելիության և օգուտների համօգտագործման վերաբերյալ ներպետական օրենսդրությամբ կամ նորմատիվ պահանջներով (հոդված 15, կետ 1),

10.25. ձեռնարկել պատշաճ, արդյունավետ և համաչափ միջոցներ՝ Արձանագրության 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ընդունված միջոցների անհամապատասխանության հետ կապված իրավիճակները կարգավորելու համար (հոդված 15, կետ 2),

10.26. Կողմերի հետ համագործակցել Արձանագրության 15-րդ հոդվածի 1-ին կետում նշված՝ հասանելիության և օգուտների համօգտագործման վերաբերյալ ներպետական օրենսդրության կամ նորմատիվ պահանջների ենթադրյալ խախտման դեպքերում (հոդված 15, կետ, 3),

10.27. հարկ եղած դեպքում ձեռնարկել պատշաճ, արդյունավետ և համաչափ օրենսդրական, վարչական կամ քաղաքական միջոցներ՝ ապահովելու, որ ՀՀ իրավասության սահմաններում օգտագործվող գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքները հասանելի լինեն բնիկ և տեղական համայնքների նախնական հիմնավորված համաձայնությանը կամ հավանությանը և ներգրավվածությանը համապատասխան, և որ սահմանվեն փոխհամաձայնեցված պայմաններ, ինչպես պահանջվում է այն մյուս Կողմի գենետիկական պաշարների հասանելիության և օգուտների համօգտագործման վերաբերյալ ներպետական

օրենսդրությամբ կամ նորմատիվ պահանջներով, որտեղ գտնվում են այդ բնիկ և տեղական համայնքները (հոդված 16, կետ 1),

10.28. հարկ եղած դեպքում և հնարավորինս համագործակցել հասանելիության և օգուտների համօգտագործման վերաբերյալ ներպետական օրենսդրության կամ նորմատիվ պահանջների ենթադրյալ խախտման դեպքերում (հոդված 16, կետ 3),

10.29. համապատասխանությունն ապահովելու նպատակով ձեռնարկել համապատասխան միջոցներ գենետիկական պաշարների օգտագործման մոնիթորինգի իրականացման և թափանցիկության բարձրացման համար, որոնք ներառում են Արձանագրության 17-րդ հոդվածի 1-ին կետում սահմանված գործողությունները (հոդված 17, կետ 1),

10.30. Արձանագրության 6-րդ հոդվածի 3-րդ կետի «է» (i) ենթակետը և 7-րդ հոդվածն իրականացնելիս խրախուսել գենետիկական պաշարների և (կամ) գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների մատակարարներին և օգտագործողներին փոխհամաձայնեցված պայմաններում անհրաժեշտության դեպքում ընդգրկելու վեճերի լուծմանն առնչվող դրույթներ, այդ թվում՝ այն իրավազորությունը, որին կփոխանցվի վեճերի լուծման ցանկացած գործընթացը, կիրառելի օրենսդրությունը, և (կամ) վեճերի այլընտրանքային լուծման տարբերակներ, ինչպիսիք են միջնորդությունը կամ արբիտրաժը (հոդված 18, կետ 1),

10.31. ըստ անհրաժեշտության՝ խրախուսել կամավոր վարքագծի կանոնների, ուղեցույցների և լավագույն գործելակերպերի և (կամ) ստանդարտների մշակումը, թարմացումը և օգտագործումը հասանելիության և օգուտների համօգտագործման առնչությամբ (հոդված 20, կետ 1),

10.32. միջոցներ ձեռնարկել գենետիկական պաշարների և գենետիկական պաշարներին առնչվող ավանդական գիտելիքների, ինչպես նաև հասանելիության և օգուտների համօգտագործմանն առնչվող հարցերի կարևորության վերաբերյալ իրազեկության բարձրացման համար (հոդված 21),

10.33. Կողմերի հետ համագործակցել կարողությունների ստեղծման, կարողությունների զարգացման և մարդկային ռեսուրսների ու ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդման ուղղությամբ՝ զարգացող երկրներ հանդիսացող Կողմերում, մասնավորապես՝ առավել թույլ զարգացած երկրներում և դրանց շարքին դասվող զարգացող փոքր կղզի-պետություններում և անցումային տնտեսությամբ Կողմերում Արձանագրությունն արդյունավետ իրականացնելու նպատակով, այդ թվում՝ առկա համաշխարհային, տարածաշրջանային, ենթատարածաշրջանային և ազգային հաստատությունների և կազմակերպությունների միջոցով, և այս համատեքստում նպաստել բնիկ և տեղական համայնքների և համապատասխան

շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների և մասնավոր հատվածի ներգրավմանը (հոդված 22, կետ 1),

10.34. Կոնվենցիայի 15, 16, 18 և 19-րդ հոդվածներին համապատասխան՝ մյուս Կողմերի հետ փոխգործակցել և համագործակցել տեխնիկական և գիտական հետազոտությունների և զարգացման ծրագրերի շրջանակներում, ներառյալ կենսատեխնոլոգիական հետազոտական գործունեությունը՝ որպես Արձանագրության նպատակին հասնելու միջոց, ինչպես նաև խթանել և խրախուսել տեխնոլոգիաների հասանելիությունը և տեխնոլոգիաների փոխանցումը զարգացող երկրներ հանդիսացող Կողմերին, մասնավորապես՝ առավել թույլ զարգացած երկրներին և դրանց շարքին դասվող զարգացող փոքր կղզի-պետություններին, ինչպես նաև անցումային տնտեսությամբ Կողմերին՝ Կոնվենցիայի և Արձանագրության նպատակներին հասնելու համար հուսալի և կենսունակ գիտատեխնոլոգիական բազայի զարգացման և ամրապնդման մասով հնարավորություններ ստեղծելու նպատակով (հոդված 23),

10.35. խրախուսել Կողմ չհանդիսացող երկրներին՝ միանալու Արձանագրությանը, և համապատասխան տեղեկատվություն տրամադրել Հասանելիության և օգուտների համօգտագործման հարցերով տեղեկատվական կենտրոնին (հոդված 24),

10.36. Արձանագրության իրականացման համար ֆինանսական ռեսուրսները քննարկելիս հաշվի առնել Կոնվենցիայի 20-րդ հոդվածի դրույթները. Կոնվենցիայի ֆինանսական մեխանիզմը Արձանագրության ֆինանսական մեխանիզմն է (հոդված 25, կետեր 1 և 2),

10.37. փոխհատուցել Արձանագրության համար քարտուղարության ծառայությունների դիմաց ծախսերն այն չափով, որքանով դրանք տարբերակվում են մյուս ծախսերից (հոդված 28, կետ 3),

10.38. իրականացնել Արձանագրությամբ ստանձնած ՀՀ պարտավորությունների կատարման մոնիթորինգ և Կողմերի համաժողովի կողմից սահմանվող պարբերականությամբ և ձևաչափով ներկայացնել Արձանագրության իրականացման համար ՀՀ կողմից ձեռնարկված միջոցների մասին հաշվետվություն (հոդված 29):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիային կից «Գենետիկական պաշարների հասանելիության և դրանց օգտագործումից ստացվող

օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործման մասին» Նագոյայի արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

24 փետրվարի 2026 թվականի
ՍԴՈ-1817

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ

«ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՕՄԱՆԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ, ԿԱՏԱՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ, ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ ԵՎ ՈՒԶԲԵԿՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱՆՑԻԿ ՄԻՋԱՆՑՔ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ ԿԱԶՄՈՂ «ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՕՄԱՆԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ, ԿԱՏԱՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ, ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ ԵՎ ՈՒԶԲԵԿՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱՆՑԻԿ ՄԻՋԱՆՑՔ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ (ԱԾԳԱԲԱԹԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ) ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 24 փետրվարի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի,

դատավորներ՝ Արտակ Զեյնալյանի,
Դավիթ Խաչատուրյանի (զեկուցող),
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◊ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◊ 1(122) 2026

Կառավարության ներկայացուցիչ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Իրանի Իսլամական Հանրապետության, Օմանի Սուլթանության, Կատարի Պետության, Թուրքմենստանի և Ուզբեկստանի Հանրապետության կառավարությունների միջև միջազգային տրանսպորտային և տարանցիկ միջանցք ստեղծելու մասին» համաձայնագրում և դրա անբաժանելի մասը կազմող «Իրանի Իսլամական Հանրապետության, Օմանի Սուլթանության, Կատարի Պետության, Թուրքմենստանի և Ուզբեկստանի Հանրապետության կառավարությունների միջև միջազգային տրանսպորտային և տարանցիկ միջանցք ստեղծելու մասին» համաձայնագրի (Աշգաբաթի համաձայնագիր) իրագործման վերաբերյալ փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի մայիսի 8-ի N 538-Ա որոշմամբ հավանություն է տվել «Իրանի Իսլամական Հանրապետության, Օմանի Սուլթանության, Կատարի Պետության, Թուրքմենստանի և Ուզբեկստանի Հանրապետության կառավարությունների միջև միջազգային տրանսպորտային և տարանցիկ միջանցք ստեղծելու մասին» համաձայնագրում և դրա անբաժանելի մասը կազմող «Իրանի Իսլամական Հանրապետության, Օմանի Սուլթանության, Կատարի Պետության, Թուրքմենստանի և Ուզբեկստանի Հանրապետության կառավարությունների միջև միջազգային տրանսպորտային և տարանցիկ միջանցք ստեղծելու մասին» համաձայնագրի (Աշգաբաթի համաձայնագիր) իրագործման վերաբերյալ փոխըմբռնման հուշագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված հուշագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի մայիսի 12-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանի 2025 թվականի հուլիսի 29-ի ՍԴԱՈ-118 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը կասեցվել է մինչև վերոնշյալ որոշման մեջ նշված կասեցման հիմքերը վերանալը:

2026 թվականի փետրվարի 13-ի ՍԴԱՈ-20 աշխատակարգային որոշման համաձայն՝ Սահմանադրական դատարանը, ավարտելով գործով պահանջված և ստացված լրացուցիչ ապացույցների ուսումնասիրությունը, դրանց վերլուծության և

ուսումնասիրության արդյունքում արձանագրել է, որ գործի վարույթը կասեցնելու մասին՝ 2025 թվականի հուլիսի 29-ի ՍԴԱՈ-118 աշխատակարգային որոշմամբ սահմանված հիմքերը վերացել են:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը և դրա անբաժանելի մասը կազմող հուշագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Իրանի Իսլամական Հանրապետության, Օմանի Սուլթանության, Կատարի Պետության, Թուրքմենստանի և Ուզբեկստանի Հանրապետության կառավարությունների միջև միջազգային տրանսպորտային և տարանցիկ միջանցք ստեղծելու մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2011 թվականի ապրիլի 25-ին Աշգաբաթ քաղաքում՝ Միջին Ասիայի երկրների և Պարսից ծոցի ու Օմանի ծովի նավահանգիստների միջև արտահանվող և ներմուծվող ապրանքների անխափան տեղափոխման համար հուսալի տրանսպորտային միջանցք ստեղծելու նպատակով:

2. Համաձայնագրի անբաժան մասը կազմող «Իրանի Իսլամական Հանրապետության, Օմանի Սուլթանության, Կատարի Պետության, Թուրքմենստանի և Ուզբեկստանի Հանրապետության կառավարությունների միջև միջազգային տրանսպորտային և տարանցիկ միջանցք ստեղծելու մասին» համաձայնագրի (Աշգաբաթի համաձայնագիր) իրագործման վերաբերյալ փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) ստորագրվել է 2014 թվականի օգոստոսի 6-ին Մասկատ քաղաքում:

3. Արտաքին գործերի նախարարության՝ Համաձայնագրի և Հուշագրի վավերացման կամ հաստատման արտաքին քաղաքական նպատակահարմարության վերաբերյալ եզրակացության համաձայն՝ «Համաձայնագրին ՀՀ միանալը կնպաստի համաձայնագրի մասնակից պետությունների հետ տրանսպորտային կարգավորումների ներդաշնակեցմանը, հնարավորություն կընձեռի բազմազանեցնել գործընկերային կապերը տրանսպորտային հաղորդակցությունների ոլորտում Կենտրոնական Ասիայի և Պարսից ծովի երկրների հետ՝ բարձրացնելով ՀՀ տարանցիկ հնարավորությունները:

Համաձայնագրի նպատակները համահունչ են ՀՀ վարած արտաքին քաղաքականությանը, տրանսպորտային հաղորդակցությունների ոլորտում ՀՀ գերակայություններին և ՀՀ կառավարության կողմից առաջ քաշված «Խաղաղության խաչմերուկ» ծրագրին»:

4. Արտաքին գործերի նախարարության՝ Համաձայնագրի և Հուշագրի ուժի մեջ

մտնելու կարգի վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ Համաձայնագիրն ստորագրվել է ութ պետությունների կողմից (Պայմանավորվող կողմեր):

5. Դիմումին կից ներկայացված՝ միջազգային պայմանագրի կատարման համար պատասխանատու մարմինների վերաբերյալ տեղեկատվության համաձայն՝ Համաձայնագրի և Հուշագրի կատարման համար պատասխանատու մարմիններն են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությունը և ՀՀ պետական եկամուտների կոմիտեն:

6. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

6.1. Պայմանավորվող կողմերի հետ ստեղծել հուսալի տրանսպորտային միջանցք՝ Միջին Ասիայի երկրների և Պարսից ծոցի ու Օմանի ծովի նավահանգիստների միջև ապրանքների և ուղևորների անխափան փոխադրման ու տարանցման, Միջազգային տրանսպորտային և տարանցիկ միջանցքով արտահանվող ու ներմուծվող ապրանքների փոխադրման համար (հոդված 3, մաս 1),

6.2. Պայմանավորվող կողմերի հետ ավելացնել բեռների և ուղևորների փոխադրման արագությունը՝ տրանսպորտային ծախսերի օպտիմալացման նպատակով (հոդված 3, մաս 2),

6.3. բարձրացնել Պայմանավորվող կողմերի տրանսպորտային և տարանցման ներուժի օգտագործման արդյունավետությունը (հոդված 3, մաս 3),

6.4. միջազգային տրանսպորտային և տարանցիկ միջանցք ներգրավել մյուս պետությունների տարանցիկ բեռները (հոդված 3, մաս 4),

6.5. բարձրացնել տրանսպորտային կապերի արդյունավետությունը՝ Պայմանավորվող կողմերի տարածքներով բեռների և ուղևորների փոխադրումն ու տարանցումը կարգավորելու համար (հոդված 3, մաս 5),

6.6. աջակցել միջազգային շուկաներ մուտք գործելու հարցում՝ օգտագործելով Միջազգային տրանսպորտային և տարանցիկ միջանցքով տրանսպորտային փոխադրման վերգետնյա և ջրային տեսակները (հոդված 3, մաս 6),

6.7. ապահովել ուղևորությունների անվտանգությունը, բեռների և ուղևորների փոխադրման ու տարանցման առնչությամբ անվտանգության միջազգային ստանդարտների կիրառումը, ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանությունը՝ միջազգային ստանդարտներին համապատասխան (հոդված 3, մաս 7),

6.8. ստեղծել հավասար և ոչ խտրական պայմաններ՝ Պայմանավորվող կողմերի տարածքներում տրանսպորտային ծառայությունների բոլոր տեսակների մատակարարների համար (հոդված 3, մաս 8),

6.9. պարզեցնել և ներդաշնակեցնել այն պաշտոնական փաստաթղթերն ու

ընթացակարգերը, որոնցով կարգավորվում են բեռների և ուղևորների միջազգային փոխադրումները՝ առկա միջազգային ստանդարտներին և պայմանագրերին համապատասխան (հոդված 3, մաս 9),

6.10. Պայմանավորվող կողմերի հետ որոշել Միջազգային տրանսպորտային և տարանցիկ միջանցքի երթուղիները և նախանշել այն ենթակառուցվածքն ու տրանսպորտային փոխադրման տեսակները, որոնք պետք է օգտագործվեն բեռների և ուղևորների փոխադրման համար (հոդված 4, մաս 2),

6.11. Պայմանավորվող կողմերի հետ ձեռնարկել միմյանց օժանդակելուն ուղղված բոլոր անհրաժեշտ միջոցները՝ Միջազգային տրանսպորտային և տարանցիկ միջանցքի համար տրանսպորտային ենթակառուցվածքի զարգացման ծրագրերում ներդրումներ կատարելու միջոցով (հոդված 4, մաս 3),

6.12. Համաձայնագիրն իրագործելիս ապահովել ՀՀ տարածքով բեռների և ուղևորների միջազգային փոխադրման և տարանցման արդյունավետ պայմաններ՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան (հոդված 5, մաս 1),

6.13. աջակցել մյուս Պայմանավորվող կողմի այն քաղաքացիներին վիզաների տրամադրման հարցում, որոնք իրենց ազգային օրենսդրությանը համապատասխան մասնակցում են բեռների և ուղևորների միջազգային փոխադրմանն ու տարանցմանը (հոդված 5, մաս 2),

6.14. օժանդակություն ցուցաբերել և արագացնել արագ փչացող ապրանքների տարանցումը ՀՀ պետական սահմանները հատելիս և ձեռնպահ մնալ չհիմնավորված հապաղումներ կիրառելուց (հոդված 7),

6.15. ջանքեր գործադրել հարկերի, տուրքերի և այլ վճարումների օպտիմալացման համար՝ անկախ դրանց անվանումից և նշանակությունից, ներառյալ՝ բեռների տարանցման ժամանակ ծառայություններ տրամադրելու հետ կապված վճարները (հոդված 8, մաս 1),

6.16. Համաձայնագրի իրագործման նպատակով Պայմանավորվող կողմերի հետ ստեղծել Համաձայնագրի 9-րդ հոդվածում սահմանված լիազորություններով օժտված Համակարգող խորհուրդ (հոդված 9, մաս 1),

6.17. Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, Պայմանավորվող կողմերի հետ ձևավորել Աշխատանքային կոմիտե՝ իրենց ներկայացուցիչների կազմով (հոդված 10, մաս 1):

7. Համաձայնագրի նպատակներով Պայմանավորվող կողմերն ստեղծում են Միջին Ասիայի պետությունները Պարսից ծոցի և Օմանի ծովի նավահանգիստների հետ կապող Միջազգային տրանսպորտային և տարանցիկ միջանցք, որը կոչվում է «Միջազգային տրանսպորտային և տարանցիկ միջանցք» (հոդված 4, կետ 1):

8. Համաձայնագրի 2-րդ հոդվածի համաձայն՝ Համաձայնագրի դրույթներով կարգավորվում են Պայմանավորվող կողմերի պետությունների տարածքներով բեռների և ուղևորների միջազգային փոխադրումն ու տարանցումը, որոնք իրականացվում են ցանկացած տեսակի տրանսպորտով (վերգետնյա ու ջրային)՝ Համակարգող խորհրդի կողմից հաստատվող երթուղիներով:

9. Համաձայնագրի 9-րդ հոդվածի համաձայն՝ Համաձայնագրի իրագործման նպատակով ստեղծված Համակարգող խորհուրդն առնվազն տարին մեկ անգամ իր նիստերը հաջորդաբար անցկացնում է Պայմանավորվող կողմերի տարածքներում՝ անգլերեն այբբենական կարգով կամ Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի խնդրանքով:

10. Համաձայնագրին համապատասխան՝ արգելվում է առանց տվյալ Պայմանավորվող կողմի նախնական համաձայնության՝ մյուս Պայմանավորվող կողմի տարածքով վտանգավոր, արգելված բեռների ու երկակի նշանակության ապրանքների փոխադրումն ու տարանցումը: Պայմանավորվող կողմերը սահմանում են տվյալ բեռները, որոնք լրացուցիչ արձանագրության մեջ կամփոփվեն Համաձայնագրի 10-րդ հոդվածին համապատասխան ստեղծված Աշխատանքային կոմիտեի կողմից և կտարածվեն Համակարգող խորհրդի կողմից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Իրանի Իսլամական Հանրապետության, Օմանի Սուլթանության, Կատարի Պետության, Թուրքմենստանի և Ուզբեկստանի Հանրապետության կառավարությունների միջև միջազգային տրանսպորտային և տարանցիկ միջանցք ստեղծելու մասին» համաձայնագրում և դրա անբաժանելի մասը կազմող «Իրանի Իսլամական Հանրապետության, Օմանի Սուլթանության, Կատարի Պետության, Թուրքմենստանի և Ուզբեկստանի Հանրապետության կառավարությունների միջև միջազգային տրանսպորտային և տարանցիկ միջանցք ստեղծելու մասին» համաձայնագրի (Աշգաբաթի համաձայնագիր) իրագործման վերաբերյալ փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

24 փետրվարի 2026 թվականի
ՍԴՈ-1818

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2025 Թ. ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ

Հրապարակվել է Սահմանադրական դատարանի 2025 թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդումը:

Հաղորդումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://concourt.am/pdf/uploads/-699445200b245_Տարեկան%20հաղորդում%202025.pdf

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

2026 թվականի հունվարի 17-ին և 18-ին Սահմանադրական դատարանի նախաձեռնությամբ տեղի է ունեցել «Պետական իշխանության մարմինների և քաղաքացիական հասարակության դերը Սահմանադրական դատարանի որոշումների կատարման հարցում» խորագրով աշխատաժողովը, որին մասնակցել են դատական իշխանության, օրենսդիր, գործադիր մարմինների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Միջոցառումն իրականացվել է Հայաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան աջակցությամբ՝ համագործակցելով «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության հետ:

Աշխատաժողովի մեկնարկին մասնակիցներին ողջունել է Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը: Բացման խոսքով ելույթ են ունեցել Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանը, ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը, ՀՀ Ազգային ժողովի պետահրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը, Հայաստանում

Նիդերլանդների Թագավորության դեսպան Ն.Գ. Մարիկե Մոնրոյ-Վինթերը, «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ նախագահ Լուսինե Հակոբյանը:

Երկօրյա աշխատաժողովի ընթացքում քննարկվել են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրավաքաղաքական նշանակությունը և դրանց կատարումն օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների կողմից, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներն իր և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների կատարման վերաբերյալ, ՍԴ և ՄԻԵԴ որոշումների կատարումը ՀՀ դատական իշխանության մարմինների կողմից, քաղհասարակության նախաձեռնած ստրատեգիական դատավարությունների դերը Սահմանադրական դատարանի որոշումների կատարման գործում, ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումների կատարման քաղաքացիական վերահսկողության ինստիտուտը, օրենսդիր-քաղհասարակություն, դատական իշխանություն-քաղհասարակություն համագործակցությունը՝ ՍԴ որոշումների կատարման ոլորտում:

Վերոնշյալ թեմաների շուրջ բանախոսությամբ են հանդես եկել ՀՀ Սահմանադրական դատարանի փոխնախագահ Էդգար Շաթիրյանը, ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորներ Սեդա Սաֆարյանը, Դավիթ Խաչատուրյանը և Արտակ Զեյնալյանը, ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի անդամ Կարեն Թումանյանը, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի դատավոր Գևորգ Գյոզալյանը, ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը, ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը, ՀՀ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը, ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնակատար Ռուստամ Բաքոյանը, «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ նախագահ Արթուր Սաքունցը, Միջազգային և անվտանգային հարցերի հայկական ինստիտուտի նախագահ Ստյոպա Սաֆարյանը, «Ազատ քաղաքացի» ՀԿ նախագահ Հովսեփ Խուրշուդյանը, «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ ավագ իրավախորհրդատու Տիգրան Եգորյանը, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը:

ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ ՍՏՐԱՍԲՈՒՐԳՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՄԻԵԴ ԴԱՏԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԲԱՑՄԱՆԸ

Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախագահ Մաթիաս Գույոմարի հրավերով 2026 թվականի հունվարի 30-ին Ստրասբուրգում մասնակցել է ՄԻԵԴ դատական տարվա բացման հանդիսավոր նիստին: Ամենամյա պաշտոնական միջոցառմանը ներկա են եղել Եվրոպայի խորհրդի (ԵԽ) 46 անդամ պետությունների բարձրագույն դատարանների նախագահներ, ԵԽ բարձրաստիճան ներկայացուցիչներ, ինչպես նաև ՄԻԵԴ նախկին դատավորներ, դեսպաններ, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ:

Դատական տարվա բացման պաշտոնական նիստին հաջորդել է **«Լրատվամիջոցների բազմակարծությունը և ժողովրդավարական գործընթացների պաշտպանությունը մարտահրավերներով լի ժամանակներում»** վերտառությամբ դատական սեմինարը: Մասնակիցները քննարկել են չորս հիմնական թեմա՝ «Լրատվամիջոցների բազմակարծությունը և տեղեկատվության իրավունքը», «Տեղեկատվության ազատությունը և Եվրոպական միության լիազորությունները. սահմանափակող միջոցների կիրառման դեպքը», «Ժողովրդավարական գործընթացի ամբողջականությունը և դատական վերահսկողությունը», ինչպես նաև «Ժողովրդի կամքի ազատ արտահայտումը՝ որպես ժողովրդավարական պետական կարգի պաշտպանության նախապայման»:

ՍՏՐԱՍԲՈՒՐԳՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ՀՀ ՍԴ ԵՎ ՄԻԵԴ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

2026 թվականի հունվարի 29-31-ը Ստրասբուրգ կատարած աշխատանքային այցի շրջանակներում ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը հանդիպում է ունեցել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախագահ Մաթիաս Գույոմարի հետ: Հանդիպմանը ներկա են եղել Հայաստանի կողմից ընտրված ՄԻԵԴ դատավոր Վահե Գրիգորյանը և ՄԻԵԴ փոխքարտուղար Աբել Կամպոսը:

Հանդիպման ընթացքում բարձր են գնահատվել Եվրոպական դատարանի և ՀՀ Սահմանադրական դատարանի, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի միջև ձևավորված հարաբերությունները, կարևորվել է փոխադարձ արդյունավետ համագործակցությունը:

ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԵԽ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏՆՕՐԵՆԻ ՀԵՏ

Հունվարի 30-ին ՀՀ ՍԴ նախագահ Արման Դիլանյանը Ստրասբուրգում հանդիպում է ունեցել Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների պաշտպանության տնօրեն Քլեր Օվեյի հետ:

Հանդիպման ընթացքում երկուստեք կարևորվել է հավատարմությունը ժողովրդավարության սկզբունքներին, մարդու իրավունքների պաշտպանությանը և օրենքի գերակայությանը: ՍԴ նախագահ Արման Դիլանյանն անդրադարձել է Սահմանադրական դատարանի և Եվրոպայի Խորհրդի համագործակցությամբ «Աջակցություն Հայաստանում սահմանադրական արդարադատության զարգացմանը՝ համապատասխան եվրոպական չափանիշներին» ծրագրի շրջանակներում իրականացված համատեղ նախագծերին՝ ընդգծելով, որ դրանք ինչպես տեխնիկական, այնպես էլ բովանդակային առումով նպաստում են Բարձր դատարանում ընթացող ինստիտուցիոնալ բարեփոխումների գործընթացին:

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների պաշտպանության տնօրեն Քլեր Օվեյը բարձր է գնահատել Սահմանադրական դատարանի հետ համագործակցությունը՝ այն համարելով օրինակելի: Քլեր Օվեյը նշել է, որ ԵԽ առաջիկա ծրագրերում առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու սահմանադրական վերահսկողության մեխանիզմների խորացման հարցերին: Հանդիպմանը ներկա են եղել նաև ԵԽ ծրագրերի համագործակցության բաժնի պետ Ջիովանի Բատիստա Չելիենտոն և ԵԽ Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության Արդարադատության բարեփոխումների հարցերով խորհրդական Լիլիթ Դանեղյանը:

ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

Հունվարի 30-ին ՀՀ ՍԴ նախագահ Արման Դիլանյանը Ստրասբուրգում հանդիպում է ունեցել Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) նախագահ Մարթա Կանտաբրիայի և Վենետիկի հանձնաժողովի քարտուղար Սիմոնա Գրանատա-Մենգղինիի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են դատահիրավական ոլորտի արդի խնդիրները, մասնավորապես՝ անդրադարձ է կատարվել արդարադատության իրականացման գործընթացում արհեստական բանականության գործիքների կիրառմանը, կիբերանվտանգությանը, և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ ի հայտ եկող մարտահրավերներին ու դրանց հաղթահարման հնարավորություններին: Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը բարձր է գնահատել Վենետիկի հանձնաժողովի հետ արդյունավետ և շարունակական համագործակցությունը՝ ընդգծելով Վենետիկի հանձնաժողովի խորհրդատվական կարծիքների կարևորությունը ներպետական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար:

Վենետիկի հանձնաժողովի նախագահ Մարթա Կանտաբրիան շնորհակալություն է հայտնել ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահին բովանդակալից քննարկման համար՝ ընդգծելով, որ Վենետիկի հանձնաժողովն ի դեմս ՀՀ Սահմանադրական դատարանի ունի ուժեղ, ժողովրդավարական արժեքներին և օրենքի գերակայության սկզբունքին հավատարիմ գործընկեր և դաշնակից:

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ, Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Հ. ՆԱԶԱՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ, Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝
ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

Խմբագրության հասցե՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81 (189)
E-mail: armlaw@concourt.am
https://www.concourt.am

Вестник Конституционного Суда Республики Армения N 1(122)2026
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 1(122)2026
Bulletin de l a Cour constitutionnelle de la République d'Arménie N 1(122)2026

Խմբագրության հասցե՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)
E-mail: armlaw@concourt.am
www.concourt.am